

ՎԱՀԱՆ ԲԱՅՐՈՒՐԴՅԱՆ

ԻՍԼԱՄ

ԵՐԵՎԱՆ 2016

Տեղայութ ՀՀ ԱՆ Գ. Ա. Հ.
Քաղաքացիական Գրք պատճենի
Հ. Այսունչուց

ՎԱՀԱՆ ԲԱՅՐՈՒՐՅԱՆ

ԻՍԼԱՄ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
INSTITUTE OF HISTORY

VAHAN BAIBOURTIAN

ISLAM

YEREVAN 2016

12396-2 297 ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒԻՏ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒԻՏ

Հայ 393

ԿԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՒՂԱՄ

ՍԵՄՐՈՊ ԱՌՋ. ԱԾԱԽԱՆ
ՍԱՏԵՆԱԾԱՐ

137




ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

137

Տարբերակ

ԵՐԵՎԱՆ 2016



ՀՏԴ 28

ԳՄԴ 86.38

Բ 260

Հրատարակում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ

**Բ 260 ԻՎԼԱՍՍ/Վ. Բայբուրդյան.-Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտ, 2016.- 404 էջ:**

Աշխատությունն առաջին փորձն է մայրենի լեզվով հայ ընթերցողին ներկայացնելու համաշխարհային կրոններից մեկի՝ խլամի պատմությունը. ընդհանուր զաղափար տալու այդ կրոնի մեջ եղած տարրեր հոսանքների, ուղղությունների, պաշտամունքի, դավանաբանության, ծեսերի, իրավական համակարգի հետ կապված հարցերի մասին և այլն: Աշխատությունն ունի ճանաչողական նշանակություն:

Գիրքը հասցեագրված է արևելագետներին, պատմաբաններին, միջազգայնագետներին, խլամական տարրեր երկրներում աշխատող հայ դիվանագետներին, կրոնների պատմությամբ հետաքրքրվողներին, ուսանողությանը, առհասարակ հետաքրքրասեր ու պրատուն միտք ունեցող երիտասարդությանը և ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԴ 28

ԳՄԴ 86.38

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խալամը համաշխարհային կրոններից մեկն է, ընդ որում ամենաերիտասարդ կրոնը բուդդայականությունից ու քրիստոնեությունից հետո: Միաստվածություն դավանող այդ կրոնի հայրենիքը Արարիան է, կամ Արաբական թերակղզին, իսկ նրան ծնունդ տվող ժողովուրդը՝ արաբները: VII դարում իր ձևավորումից հետո կարճ ժամանակ անց դրւս գալով Արաբական թերակղզու սահմաններից, նորաստեղծ արաբական աշխարհակալ պետության՝ խալիֆայության միջոցով խալամի հաղթական երթը տարածվեց արևմուտքում՝ մինչև Խապանիա և Ատլանտյան օվկիանոս, իսկ արևելքում՝ մինչև Հնդկաստան, Չինաստան, Հարավ-Արևելյան Ասիայի երկրներ, ընդհուպ մինչև Խաղաղ օվկիանոս: Ներկայումս գործնականում խալամը քափանցել է երկրագնդի բոլոր մայրցամաքները: Այսօր խալամ է դավանում աշխարհի ավելի քան մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն բնակչություն: Ըստ հետևորդների թվաքանակի, այդ կրոնը զբաղեցնում է երկրորդ տեղը քրիստոնեությունից հետո: Հիրավի, ներկայումս խալամական աշխարհը իր չափերով ու բնակչության թվաքանակով մի վիթխարի տարածք ու զանգված է: Ենթադրվում է, որ XXI դարի ընթացքում խալամը շարունակելու է տարածվել, հարածուն կերպով ընդլայնելով իր ազդեցության շրջանակները: Այս ենթադրության հիմքում ընկած է այն իրողությունը, որ ներկայումս մուսուլմանական աշխարհը կազմում է ամենաբարձր ծննդարերության գոտին և նրանում բնակչության աճի ցուցանիշը աշխարհում ամենաբարձր է: Այստեղից հետևում է, որ հօգուտ մուսուլմանների գոյություն ունեցող ժողովրդագրական հաշվեկշիռը ոչ հեռու ապագայում անխուսափելիորեն կատեղծի նոր քաղաքա-

կան իրավիճակ: Արդեն մեր օրերում նկատելիորեն շափազանց մեծ է իսլամի խաղացած դերը համաշխարհային քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, իսկ տեսանելի ապագայի շրջանակներում այդ դերը զնալով մեծանալու է, եւկան ազդեցություն ունենալով աշխարհի շատ երկրների կյանքի տարրեր կողմերի վրա:

Արդ, ո՞րն է իսլամի ներքին ուժը: Նախ այդ կրոնը աչքի է ընկնում իր «ունիվերսալ» բնույթով: Ըստ էության որպես կրոն այն ավելին է, քան պարզապես հավատը: Իսլամը ոչ միայն կրոն է, այլև տնտեսական ու սոցիալական բարդ կառույց, կառավարման համակարգ, մշակութային երևույթ և նույնիսկ կենցաղ ու ապրելակերպ: Այդ կրոնի մեջ բացակայում է ազգային պարփակվածությունը: Իսլամը կանոնակարգում է մահմետականի կյանքի բոլոր բնագավառները, որոշում է ոչ միայն մշակութային, սոցիալական և իրավական հարցերը, այլև մտնում է մուսուլմանական համայնքի անդամների անհատական հարաբերությունների մեջ: Այդ մեծ ներքին լիցք պարունակող կրոնական զաղափարախոսությունը ներգործության մեծ ուժ ունի զանգվածային գիտակցության վրա, քանի որ այդ գիտակցության իսլամական ստերեոտիպները ընդունվում են ոչ միայն բարոյա-էթիկական բնագավառը, այլև անձի ողջ վարքագիծը ընտանիքում և հասարակության մեջ: Զափականց մեծ են նաև այդ կրոնի արագորեն հարմարվելու հնարավորությունները հարափոփոխ հասարակական հարաբերություններին:

XX դարի 60-70-ական թվականները նշանավորվեցին իսլամի բուռն «վերածննդի» գործընթացով: Դրան հետևեց իսլամի արագ քաղաքականացումը: Ըստ էության այն դարձավ մեր ժամանակների ամենաքաղաքականացված կրոնը: «Իսլամը,- ասել է ի-

մաս Խոմեյնին,- իշխանություն ունեցող քաղաքական կրոն է: Իսլամի մեջ քաղաքական պահանջներն ավելի պակաս չեն, քան կրոնականները»:

Հայտնի իրողություն է, որ մահմեդականության մեջ քաղաքականությունն ու կրոնը իրարից տարաբաժանված չեն: Նրանք կազմում են մեկ միասնություն: Իսլամի գաղափարախոսները գտնում են, որ չքաղաքականացված իսլամը անկենդան ու անշարժ է: Թերևս իսլամական կրոնի նշված հատկանիշի շնորհիվ մահմեդական արևելքի երկրներում քաղաքական իրադարձությունները մարդկանց կողմից ընկալվում են հիմնականում կրոնի պրիզմայի միջոցով:

Ներկա ժամանակներում աննախընթաց կերպով ուժեղացել են նաև քաղաքականության «խսլամականացման» միտումները: Մի շարք պետություններում կառավարող վարչակարգերը լայնորեն իսլամն ընդգրկել են իրենց պաշտոնական գաղափարախոսությունների ու քաղաքական կառույցների մեջ: Այդ բոլորի անխուսափելի հետևանքը հանդիսացավ նաև մահմեդականների զիտակցության քաղաքականացումը: Ըստ այնմ հստակորեն ձևավորվեցին արևմտյան կենսակերպի, մշակույթի ու առհասարակ արժեքային համակարգի դեմ ուղղված տրամադրությունները: Իսլամական աշխարհի շատ վայրերում արևմուտքը սկսեց գուգակցվել (ասոցացվել) շահագործման, կյութապաշտության, «անաստված ապրելակերպի», հոգևոր արժեքների բացակայության, բարոյական կործանման, սեքսուալ սանձարձակության և այլ արատների հետ: Ուստի իսլամը սկսեց եռանդուն կերպով հակադիմել այդ կրոնի տարածման ավանդական շրջաններում արևմուտքի քաղաքակրթական արժեքների արմատավորմանը:

Գաղտնիք չէ, որ մեր օրերում իսլամի տարածման գոտու տարրեր մասերում ձևավորվել է անընդհատ աճող բազմամակարդակ անկայունության գոտի, ապակայունացնող գործընթացներում իսլամիստական կազմակերպությունների, շարժումների, խմբավորումների ակտիվ ներգրավմամբ: Այդ երևոյթը սնուցող պատճառները բազմաթիվ ու բազմապիսի են. հավաքականությունից անհատի օտարման ու անպաշտվածության բարդույթի ձևավորումը, աղքատությունը, ազրարային գերբեռնվածությունը, իշխանությունների կոռումպացվածությունը, հաճախ նաև անիրազեկ կառավարումը, հակաարևմտյան տրամադրությունները և այլն: Նման պայմաններում մահմեդական երկրների բնակչության բավական պատկառելի զանգվածներ ոչ միայն ապավինեցին կրոնին որպես միսիթարանքի ու պաշտպանվածության ապաստարանների, այլև կրոնի մեջ սկսեցին որոնել իրենց երկրների զարգացման հեռանկարները: Առաջ քաշելով «իսլամն է լուծումը» բանաձեռ, մահմեդական երկրներում ձևավորված արմատական ծայրահեղական ուժերը փորձում են խլամական աշխարհը հակադրել մնացած աշխարհին, դրանով իսկ մարտահրավեր նետելով ամբողջ տարածաշրջանների կայունությանն ու անվտանգությանը: Նրանք իրենց պայքարի վերջնական նպատակ են հոչակում իսլամական աշխարհի վերածումը «ֆինքնուրույն համաշխարհային համակարգի», ռազմաշունչ հակումներով տարված նոր խալիֆայության ստեղծման, ինչպես նաև աշխարհում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցության փոփոխության հօգուտ իսլամի: Իսլամական ծայրահեղականության գաղափարախոսությունը առաջ է քաշում աշխարհը վերափոխելու ու վերակառուցելու վերաբերյալ նմուշածե ծայրահեղ արմատական մեթոդներով: Այդ ուժերի գործունեության ձևերն ու եղանակները

բազմազան են. ահարեկչական ակտեր, խոռվություններ, անջատողական շարժումներ, ռազմական հակամարտություններ և այլն: Դրանք դեկավարող կենտրոնների նպատակն է վերակառուցել միջազգային հարաբերություններն ըստ իսլամական ծայրահեղականության դեկավարների հայացքներին համապատասխանող սկզբունքների:

Կասկածից վեր է, որ ներկայում մահմեդական արևելքի երկրներում «իսլամական աշխարհակարգ» ստեղծելու գաղափարը և նրա իրականացման համար ծավալվող իրադարձությունները կարող են հանգեցնել անկանխատեսելի հետևանքների, մասնավորապես Արևելքի ու Արևմուտքի միջև խորը դիմակայության ու առճակատման, մանավանդ որ դրա համար առանց այն էլ գոյություն ունի պարարտ հոդ: Գաղտնիք չէ, որ արևմտյան և իսլամական քաղաքակրթությունների միջև միմյանց նկատմամբ անվստահություն ու վախ առաջացանող զգացումները հիմնված են դարերից եկող հիշողության վրա: Դարերի ընթացքում արևմուտքը արևելքի ժողովուրդների մոտ խթանել է թերաքիրության զգացում: Իսկ այսօր արևմուտքի առանձին գործիչների կողմից իսլամը դիտվում է ոչ միայն որպես քաղաքական, ռազմավարական, այլև քաղաքակրթական և ժողովրդագրական սպառնալիք: Ավելին, շատերը մոռայլ կանխատեսումներ են անում կրոնական պատերազմների հավանականության մասին: Նման մոտածողություն ունեցող մարդիկ իսլամական երկրների և արևմուտքի միջև հարաբերությունները տեսնում են ատելության, մոլեզնության ու բռնության իռացիոնալ լույսի ներքո: Դրանց կարծիքով իսլամական և արևմտյան երկրների բախումը անխուսափելի է:

Սակայն ժամանակակից աշխարհում կրոնական ինքնազիտակցության վերելքը չի կարելի միանշանակորեն դիտարկել որ-

պես բախումներ ծնող և առճակատման աղբյուր: Չի կարելի նաև իսլամական կրոնը համարել ահարեկշական, կամ նրան հախուռն կերպով վերագրել ահարեկշական հատկանիշներ, ուազմաշունչ ոգով տողորված պատերազմի կրոն: Այլ բան է, որ այդ կրոնը ինչինչ ուժերի կողմից օգտագործվում է ահարեկշական նպատակներով, առավել ևս, որ իսլամի մեջ առկա են դրույթներ, որոնք կարող են օգտագործվել և օգտագործվում են իսլամական ծայրահեղականների և ահարեկշական կազմակերպությունների շահերի օգտին: Այդ նույն ուժերը ոչ առանց հաջողության փորձում են իսլամական կրոնին հաղորդել նաև ազգայնամոլական հակումներ: Միալ է նաև իսլամը դիտել որպես միաձույլ երևույթ: Ինչպես քաղաքակրթությունները, այնպես էլ կրոնները բարդ երևույթներ են, ունեն ներքին բազմազանություն, նրանցում առկա են հակասական ուժեր, արժեքներ և այլն: Բացի այդ, ամեն մի քաղաքակրթության ներսում, լինի դա իսլամական, քրիստոնեական, բուդդիական, կոնֆուցիոնական և այլն, թաքնված են և գործում են տարբեր շահեր:

Մեր ժամանակներում հետաքրքրությունը իսլամի նկատմամբ որպես զաղափարախոսության, մշակութային և հասարակական երևույթի հսկայական է: Ամենայն հավանականությամբ այդ հետաքրքրությունը գնալով մեծանալու է: Հայ իրականության մեջ ևս բոլոր ժամանակներում մեծ է եղել հետաքրքրությունը այդ կրոնի նկատմամբ: Դա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը բազմաբնույթ շփումներ ու առնչություններ է ունեցել իսլամական աշխարհի հետ: Իսկ այսօր, Հայաստանում իսլամի նկատմամբ հետաքրքրությունն ունի ոչ միայն գուտ ակադեմիական, այլև քաղաքական, տնտեսական, ուազմական և ուազմավարական նշանակություն, որը պայմանա-

վորված է մեր անմիջական հարեւանությամբ մուսուլմանական երկրների հետ: Ներկայումս բացառությամբ Հայաստանի Հանրապետության հյուսիսային հարեւան Վրաստանի, մյուս բոլոր սահմանակից պետությունները խլամադավան են: Իսկ դա մի իրողություն է, որը պարտադրում է մշտապես ունենալ համակեցության արդյունավետ ձևեր նրանց հետ:

Վերջին երկու հարյուրամայակների ընթացքում համաշխարհային խլամազիտությունն ունեցել է մեծ ձեռքբերումներ: Այդ կրոնի մասին տարբեր լեզուներով հրատարակվել են հարյուրավոր աշխատություններ: Եվ թեև հայ արևելագետները ևս այս կամ այն չափով անդրադարձել են այդ թեմային, սակայն դժբախտաբար առ այսօր հայ իրականության մեջ գոյություն չուներ որևէ աշխատություն, որը համակարգված ձևով, խլամազիտական լայն գրականության ընդգրկմամբ և բավարար մանրամասնությամբ հայ ընթերցողին ներկայացներ խլամական կրոնի ծագման և նրա հետագա զարգացման պատմությունը, կարողանար ընդհանուր զաղափար տալ խլամի մեջ եղած տարբեր հոսանքների, ուղղությունների, աղանդների, պաշտամունքի, դավանաբանության, ծեսերի, իրավական համակարգի հետ կապված հարցերի, խլամի Սուրբ Գրքի՝ Դուրանի մասին և այլն:

Աշխատանքը շարադրելիս հեղինակը իր առջև չի դրել խլամը համապարփակ ձևով ներկայացնելու, խլամի կրոնա-փիլիսոփայական հարցերի ըննություն կատարելու, խլամազիտական քնութիւնների նրբությունների մեջ խորամուխ լինելու նպատակ: Սույն աշխատությամբ պարզապես փորձել ենք մեր նպաստը քերել երկու մեծ քաղաքակրթությունների՝ բրիտանական և խլամական քաղաքակրթությունների երկխոսությանը, որի անհրաժեշտությունը մեր անհանգիստ ժամանակներում դարձել է մի-

ջազբային հույժ կարենոր խնդիր, մարդկությանը դնելով համաձայնության ու փոխադարձ հասկացողության նոր միջոցների որոնումների առջև:

Մեր առջև դրված կարենորագույն խնդիր է եղել նաև հայ հասարակայնությանը հնարավորին չափով լայն պատկերացում տալու համաշխարհային նշանակություն ունեցող կրոնա-զաղափարական մի ուսմունքի մասին, որի հետևորդ ազգերի ու ժողովուրդների հետ բազմաբնույթ առնչությունները հայ ժողովրդի պատմական ճակատագրում մեր օրերում ևս շարունակելու է ունենալ բախտորոշ նշանակություն:

Ըստ էության, սույն աշխատանքը ունենալու է զուտ ճանաչողական նշանակություն: Ըստ այնմ, նյութի մատչելիությունը լայն շրջանակների համար ապահովելու միտումով, հեղինակը նախնընտրել է շարադրանքի գիտահանրամատչելի ձևը, միաժամանակ փորձելով այն ներկայացնել հնարավորինս աշխուժ լեզվով և ազատ շարադրանքով:

Հեղինակը բնավ այն կարծիքին չէ, որ ընթերցողի դատին է ներկայացվում բոլորովին մի անթերի աշխատանք: Սակայն այն բանի գիտակցումը, որ իր կատարած գործը իր դրական նպաստը կարող է բերել համաշխարհային կրոններից մեկի հետ ծանոթությանը, հագուրտ տալով նաև ընթերցող լայն հասարակայնության հետաքրքրասիրությանը, լիովին հոգեկան բավարարություն կպատճառի հեղինակին:

Գրքի հեղինակը իր խորին շնորհակալությունն է հայտնում ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին սույն գրքի հրատարակությունն իրագործելու համար:

Իր երախտագիտությունն է հայտնում նաև «Գուրգեն Մելքյանի Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին», որը սիրահոժար իր նպաստն է բերել գրքի ծնունդ առնելուն:

ԱՐԱԲԱԿԱՆ ԹԵՐԱԿՂՋԻՆ ԻՍԼԱՄԻ ՀԱՅՐԵՆԻՔ:

ՆՐԱ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամի հայրենիքը Արաբական թերակղջին է. կամ ինչպես հաճախ շրջանառվում է զրականության մեջ՝ Արաբիան: Իրենք արաբներն այն անվանում են «Զազիրաթ ալ-արաբ», այսինքն արաբների թերակղջի, կրծատ «ալ-Զազիրա», իսկ պարսիկներն ու թուրքերը այն անվանել են «Արաբստան»: Դա ցամաքի մի հսկայական տարածք է (3 մլն. քառ. կմ), որն իր չափերով կազմում է Եվրոպայի մոտ քառորդ մասը: Ըստ բնական պայմանների Արաբիան բաժանում են երկու մասի. Թիհամու կամ Թիհասի (արևմուտքում Կարմիր ծովի ծովափնյա հարթավայրային շրջաններ) և ան-Նաջդ (կենտրոնական քարքարոտ, չոր, կիսաանապատային և մարդու կողմից հիմնականում չյուրացված անապատներով շրջապատված մի տարածք, որը ձգվում է մինչև Պարսից ծոցի ափերը և Եփրատի հովիտները):

Կարմիր ծովի երկայնքով ձգվում են Հիջազի բարձրավանդակային շրջանները, որոնց շարունակությունն է կազմում ալ-Ասիրի լեռնային գոտին, իր առջև թողնելով ցամաքի մի նեղ շերտ: Հիջազը ձգվում է Սինայի թերակղուց մինչև Մեքքայից հարավ ընկած շրջանը: Տես Հիջազի արաբների շրջանում է ծագել իսլամը:

Արաբիայի հարավային մասում է զտնվում Եմենը, որը բոլոր ժամանակներում աշքի է ընկել իր հարստությամբ և հողերի բերրիությամբ: Այդ պատճառով հնում այն անվանել են «Երջանիկ

Արաբիա» (*Arabia felix*): Այստեղ մշակվող հիմնական կուլտուրան սուրճն էր: Եմենի անհամար ավերակները նրա փայլուն պատմական անցյալի խոսուն վկայություններն են:

Արաբիայի հարավը կամ Հայրամառութը կոչվել է նաև «խնկի ափ»: Այստեղ են գտնվում այնպիսի ծառեր, որից ստանում են խունկ: Դա մի լեռնոտ երկրամաս է, որն ակոսատված է հովիտներով: Այդ ընդարձակ երկրամասը շրջապատված է անապատներով, որոնց ավազը օվկիանոսային ջրի նման խորն է և հոսող, որտեղ կարող են ավազների մեջ կորչել ուղտերի քարավաններ: Իգուր չէ, որ այդ ավազութներն անվանել են «շարժվող մահ»: Հայրամառութում ևս, ինչպես Եմենում, հանդիպում են բազմաթիվ հնագույն ավերակներ:

Արաբական թերակղզու արևելքում գտնվում է Մահրա երկրամասը, որը հնուց անտի հայտնի էր իր «մեհարի» կոչված ուղտերով: Առհասարակ Արաբիան իրենից ներկայացնում է աղքատ ու չոր անապատների ու կիսաանապատների մի բարձրահարթ, որի տարածքի մեկ վեցերորդ մասը անմարդաբնակ է: Թերակղզու հարավ-արևելյան մասում է գտնվում չոր, անկենդան և կանաչազուրկ Ռուբ ալ-Խալիք («Դատարկ քառորդ») անապատը, որն ամենամեծն ու ընդարձակն է Արաբիայում: Սյուս անապատներից են ան-Նաֆուդը կամ Նուֆուդը, որն իրենից ներկայացնում է սպիտակագույն և կարմրագույն ավազաթմբերի մի անծայրածիր ծով: Մեկ այլ անապատ, որը կրում է Դահնա անվանումը, հաճախ կոչում են «Կարմիր անապատ» իր կարմրավուն ավազների պատճառով: Հյուսիսում սկիզբ առնելով ան-Նաֆուդից, հարավում նա հասնում է մինչև Ռուբ ալ- Խալիք: Թերակղզու հյուսիսում է գտնվում սիրիական անապատի մի մասը, որը ձգվում է մինչև Եփրատ գետը: Նրա որոշ շրջաններ ևս բացարձակապես անպ-

տույ ու անկենդան են: Այսպիսով անապատներն ու կիսաանապատները կազմում են Արաբական թերակղու տարածքի կեսից ավելին: Թերակղու անապատներում ջուր բոլորովին գոյություն չունի: Զկան նաև մշտական գետեր: Անապատում տեղացող հազվագյուտ անձրեներից հետո չորացած գետահուներով (Վաղիներ) հոսում են անձրևաջրեր և անհետանում ափազուտներում: Չմեռային անձրեներից հետո անապատում հայտնվում է կանաչ բուսականություն: Այդ ժամանակ անապատաբնակ քոչվոր բեղվիները իրենց անասնահոտերով երեր-չորս ամսով բնակություն են հաստատում անապատում: Եթի անձրեների դադարից հետո ծարավը ստիպում է նրանց հեռանալ այդ վայրերից, նրանք վերադառնում են իրենց բնակության սովորական տեղերը: Անապատում գոյատելու համար անհրաժեշտ է անընդհատ շարժվել: Իսկ դա հարկադրում է քոչվոր արարին որպես կացարան օգտագործել այծի բրդից պատրաստված թաղիք վրան, որը կարելի է հեշտությամբ հավաքել: Բեղվինի հազուտը նույնպես չափազանց հարմար էր տեղաշարժվելու համար. այն ցերեկը նրան պաշտպանում էր այրող արևից, իսկ զիշերը անապատային ցրտից:

Թեև անապատը վաշկատուն-բեղվինի համար հարազատ վայր էր, սակայն այն լի էր նաև բազում վտանգներով: Մահաշունչ ավազախառն քամիները՝ սամումները, խամսինները, անապատի զիշերային ցրտերը, զազանները և այլն իրենցից ներկայացնում էին մշտական վտանգ: Իզուր չէ, որ արարի վառ երևակայությունը անապատը լցրել էր մեծ թվով չար ողիններով՝ ջիններով, շայթաններով և այլն:

Արարիայի կենսատու վայրերը ողջ թերակղու ցրված օազիսներն էին, որոնք ջուր էին հայթայթում շնորհիվ անձրևաջրե-

թից գոյացող ստորգետնյա աղբյուրների: Այդ օազիսները իրենց փարթամ բուսականությամբ, արմավենիներով, մշակված այզիներով, զմրուխտի նման փայլվլում էին անապատների անծայր ավագուտների և լերկ սարերի ու լեռների արանքում: Արաբիայում հողագործությունը որպես կանոն կրում էր օազիսային բնույթ: Աճեցնում էին զարի, փյունիկյան արմավ, խաղող, նարինջ, ձիթապտուղ և այլեայլ պտղատու ծառեր: Արոտավայրերը գտնվում էին համայնքի կամ ցեղի ընդհանուր տնօրինության ներքո, իսկ անսունները, հողակտորները և ստրուկները հանդիսանում էին անձնական օգտագործման առարկաներ:

Չնայած այն հանգամանքին, որ Արաբական թերակղին չորային կլիմա ունեցող, անջուր անապատներով և լերկ սարերով ու լեռներով լի մի երկրամաս է, սակայն նա երեք կողմից ողողվում է ծովային ջրերով. արևմուտքից՝ Կարմիր ծովի, արևելքից՝ Պարսից ծոցի, հարավից՝ Շնդկական օվկիանոսի ավազանի մաս կազմող Արաբական ծովի ջրերով:


Արաբական թերակղին արաբների պատմական հայրենիքն է, նրանց բնօրրանը: Այստեղ է ծնունդ առել նրանց քաղաքակրթությունը: Արաբիան միաժամանակ համարվում է սեմական ճյուղին պատկանող արաբների հնագույն օրրանը: Ինչպես հայտնի է, սեմական ճյուղի կազմի մեջ մտնում էին Սերծավոր Արևելքի հնագույն լեզուները՝ բաբելոներենը, ասորերենը, փյունիկերենը, հրեերենը, արամեերենը, ինչպես նաև ահմարերենն ու Եթովպիայի մի շարք այլ լեզուներ: Դրանցից արաբերենին առավել մոտ է հին հրեերենը և նրա ժամանակակից տարբերակը՝ իվրիթը:

Աստվածաշնչի ավանդույթի համաձայն, արաբները սերում են Աբրահամից (Իբրահիմ՝ ինչպես արաբներն են նրան անվա-

նում): Ընդ որում հյուսիսում քնակվող արաբները համարվում են Արրահասի սերունդները, հարավում ապրողները՝ առասպելական Կախթանի:

Արաբական թերակղզին ունեցել է վերին աստիճանի հարմար աշխարհագրական դիրք: Նա գտնվել է հին աշխարհի այնպիսի երկրների հարևանությամբ, ինչպիսիք են հին Եգիպտոսը, Բաբելոնական թագավորությունը, Պաղեստինը, խեթերի երկիրը, հելլենական պետությունները և Պարսկաստանը: Դա հինավոր հնարավորություններ էր ստեղծում առևտրի համար: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ արաբները հնուց անտի աչքի են ընկել որպես ցամաքային քարավանային և ծովային առևտրով գրադպող հմուտ և ձարպիկ վաճառականներ: Արաբիայի վրայով են անցնում Հնդկաստանի, Իրանի, Պաղեստինի, Սիրիայի (Ասորիքի) և Եթովպիայի հետ կապող առևտրական ճանապարհները, այդ թվում նաև Մետարսի մեծ ճանապարհը: Հարուստ Եմենից Հիջազի վրայով Սիրիա էր գնում քարավանային ճանապարհը, որի վրայով բյուզանդական շրջանները (Սիրիան, Պաղեստինը և Եգիպտոսը) տարանցիկ առևտուրը էին անում Եթովպիայի և այլ երկրների հետ: Հնդկական ապրանքների տարանցիկ առևտուրը Հռոմի վրայով դեպի Բյուզանդիա ուղղելու նպատակով 572 թ. Սասանյան Իրանը նվաճեց Եմենը:

Միջմայրցամաքային առևտրով գրադպող վաճառականները Աֆրիկայից բերում էին ստրուկներ, ոսկի և փղոսկը, Սիրիայից զենք, ցորեն և յուղեր, Զինաստանից՝ մետարս, Հարավային Արաբիայից՝ խոնկ և կտորեղեն: Ծովային առևտուրը զլիսավորապես կատարվում էր Կարմիր ծովի և Հնդկական օվկիանոսի միջև: Դեռևս խորը հնության շրջանում Արաբիայի ծովափնյա շրջաններում ծնունդ էին առել Աղեն, Օման, Սայխութ և այլ նավահան-



Հ 1021393

զիստները: Արաբական ծովի ափերին գտնվող նավահանգիստները, մասնավորապես Աղենը և Օմանը, խիզախ ու անվեհեր նավաստիների հայրենիքն էր: Ծովով իրականացվում էր նաև խոշոր առևտուր Միջազգետքի և Աֆրիկայի միջև:

Հարեւանությունը զարգացած պետությունների հետ Արաբիայի համար ունեցել է նաև բացասական նշանակություն, քանի որ այդ պետությունները ժամանակ առ ժամանակ ունեցություններ են կատարել թերակղզու նկատմամբ, ձգտելով այն նվաճել, կամ ծայրահետ դեպքում օգտվել նրա հարստություններից: Մերձավոր և Միջին Արևելյում իրենց քաղաքական տիրապետությունը հաստատելու համար վիճարկող երկու հզոր կայսրությունները՝ Բյուզանդիան և Սասանյան Իրանը ի թիվս տարածաշրջանի այլ երկրների, թեժ պայքար էին ծավալել նաև Արաբիայի շրջանը: Ըստ որում, եթե թերակղզու հարավային շրջանների արաբները հարկադրված են եղել անցնել այդ մարտնչող պետություններից մերթ մեկի, մերթ մյուսի կողմը, ապա, Կենտրոնական Արաբիայի ցեղերը կարողացել են մշտապես պահպանել իրենց անկախությունը:

Պատմության ասպարեզ դուրս գալուց առաջ Արաբիայի ազգաբնակչությունը բաժանված էր բազմաթիվ մանր ու խոշոր ցեղերի, որոնք ապրում էին իրենց առանձնահատուկ կյանքով, սեփական ավանդույթներով, անկախ և ինքնազլուխ: VI-VII դարերի միջև ընկած շրջանում Արաբիայի բնակչության մեծամասնությունը կազմում էին քոչվոր-անասնապահները: Նրանք հայտնի են որպես քեղվիններ («բաղաուին, ահլ բաղվ»): «Անասպատների մարդիկ»: Ըստ եռթյան հենց նրանց էլ անվանում էին արաբ: Միայն VII դարից հետո այդ եթոննիմը տարածվեց նաև այն երկր-

Ների նստակյաց բնակչության վրա, որոնք ընդունեցին խալամբ և դրա հետ աստիճանաբար նաև արաբերեն լեզուն:

Վաշկատուն այդ ցեղերի մոտ տիրապետող էին նահապետական, տոհմատիրական հարաբերությունները: Արաբ բեղվինները վրանաբնակ էին: Յուրաքանչյուր վրան համարվում էր մի ընտանիք: Այդ ցեղերի հիմնական կորիզը, այսպիսով ընտանիքն էր, արու զավակների մեծ թվով: Մի քանի ընտանիքների միավորումից առաջանում էր տոհմը, իսկ արյունակից տոհմերից՝ ցեղը կամ «կաբիլան»: Ամենամեծաթիվ, հետեաբար նաև ամենահզոր տոհմի ղեկավարը շեյխն էր կամ սեյխը: Վերջինս, խորհրդակցելով ցեղի ավագների հետ, լուծում էր տալիս առօրյա կյանքում առաջ եկած հարցերին, իսկ եթե ցեղը մտնում էր պատերազմի մեջ, ապա շեյխը, որը նույնակես մասնակցում էր պատերազմին, ստանում էր ռազմական ավարի քառորդ մասը: Առհասարակ ցեղի առաջնորդը հոգ էր տանում իր ցեղի մասին, ղեկավարում էր քոչը մի վայրից մյուսը և այլն: Շեյխը կամ սեյխը ղեկավարության իր գործառույթը, սակայն, իրականացնում էր ավելի շուտ շնորհիվ իր հեղինակության, ազդեցության ու դիրքի, քան ուժի և իշխանության: Ցեղի առաջնորդի ժառանգական իրավունք գոյություն չուներ, սակայն շեյխերը, սեյխները և զափմները (առաջնորդները), սովորաբար, սերում էին առավելապես մեծ, ազդեցիկ տոհմերից: Ցեղերը մեկը մյուսի նկատմամբ հարաբերություններում ինքնավար էին, եթե չասենք ինքնիշխան:

Ցեղն, անկասկած, հանդիսանում էր արյունավետ կերպով գործող մի միություն, սակայն այն իրենից մեկ միասնական մարմին չէր ներկայացնում: Անընդհատ գոյանում էին ժամանակավոր քաղաքական դաշինքներ: Այդ դաշինքները նույնքան հեշտությամբ էին կազմակերպվում, որքան և նույն հեշտությամբ քայլայ-

վում: Մանր ցեղերը, ձգտելով ուժեղանալ, հաճախ ձուլվում էին մեկը մյուսի հետ, իսկ խոշոր և հզոր ցեղերը, ընդհակառակը, մասնատվում ու բաժանվում էին միմյանցից: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ մեծաթիվ մարդկանց խմբերի դժվար էր անապատում սնունդ հայթայթել: Չնայած այն հանգամանքին, որ ցեղի ներսում տիրապետում էին նախնադարյան կարգերի դաժան օրենքները, սակայն ինչ-որ տեղ դա յուրահատուկ «ժողովրդավարություն» էր: Ոչ շեյխը, և ոչ էլ որևէ մեկը անձամբ չէր կարող արաբ-քեղվինին հրամայել կատարելու ինչ-որ բան: Ամեն մի քոչվոր-արաբ բացարձակապես ազատ էր: Բնականաբար ոչ մի տեսակի հարկ կամ տուրք գոյություն չուներ, այն ժամանակների արաբի հասկացողությամբ հարկեր վճարում են միայն պարտվածները: Ազատ մարդը պետք է իր ազատությունը պաշտպանի գենքը ձեռքին:

Ցեղերի մոտ գոյություն ուներ անհատական և ընդհանուր՝ համայնքային սեփականություն: Բեղվինի վրանը, նրա զենքերը, տնային օգտագործման իրերը և այլն անհատական սեփականություն էին, իսկ արոտավայրերը, ջրի աղբյուրները և այլն՝ համայնական սեփականություն: Անապատային շրջաններում քոչվորական համայնքը սովորաբար չէր գերազանցում վեց հարյուր մարդուց: Քաղաքները և քաղաքատիպ բնակավայրերը բնականաբար ավելի մեծ էին: Նրանց բնակիչներն իրենց գոյությունը պահպանում էին առևտրով և ուխտագնացներից ստացվող եկամուտներով, եթե չունեին Յասրիբի, Թայիֆի և այլ քաղաքների նման բնակլիմայական բարենպաստ պայմաններ:

Ինչպես տոհմերի, այնպես էլ ցեղերի միջև վեճերը, գույքային հարցերը, արյան վիճառության, ամուսնության և ամուսնալուծության, բոլոր տեսակի առօրյա խնդիրները կարգավորվում

Էին սովորութական իրավունքի՝ «աղաթի» հիման վրա: Վաշկատուն-բեղվինների շրջանում վեճեր ծագելիս դրանք լուծում էր դատավորի (հարամ) պաշտոնը ստանձնած տվյալ ցեղի հեղինակավոր անձերից մեկը՝ շեյխը, սեյխը և այլն: Ըստ որում, դատավորը կարող էր հենվել լոկ իր անձնական հեղինակության և դարերի ընթացքում ձեավորված սովորութային իրավունքի՝ «աղաթի» վրա, քանի որ գրված օրենքներ գոյություն չունեին:

Յուրաքանչյուր անհատ ինչպես օազիսներում, այնպես էլ անապատում, առաջին հերթին և զյլավորապես իրեն գգում էր որպես իր տոհմի և ցեղի անդամ: Միայն տոհմի և ցեղի մեջ և նրանց օգնությամբ նա կարող էր գոյություն ունենալ և նրա համար կարող էր ապահովված լինել նվազագույն անձնական ապահովություն: Եթե տոհմի անդամներից մեկը սպանություն էր կատարել տոհմի ներսում, ապա նրան ոչ ոք, անզամ իր հարազատները՝ հայրը, եղբայրը և այլն, չեր կարող պաշտպանել: Փախչելու դեպքում մարդասապանը կհայտարարվեր օրենքից դուրս, որը մահվան հավասար դատավճիռ էր: Ցեղից վտարված մարդը (այս կամ այն հանցանք կատարելու դեպքում) հայտնվում էր համարյա անելանելի վիճակում, եթե մի որեւէ ցեղ չընդուներ նրան: Այդպիսի մարդը դառնում էր «խալի» և ըստ եռթյան դադարում էր մարդ լինելուց: Ամեն մի անձ, ով նրանից ուժեղ էր, կարող էր կողոպտել, սպանել նրան կամ ստրկացնել:

Անշուշտ Արարիայում կար նաև նստակյաց բնակչություն, որոնք կոչվում էին «խաղարա»: Սակայն քոչվոր-բեղվինները ոչ միայն կազմում էին մեծամասնություն, այլև հանդիսանում էին տիրապետող ուժ: Նրանց տնօրինության տակ էին գտնվում Արարիայի տարածքների մեծ մասը:

Վաշկատուն-բեղվինների մոտ առկա էր արյան վրիժառության («վենդետտայի») ինստիտուտը: Հեթանոս-բեղվինները արյան վրիժառությունը համարում էին իրենց կրոնական պարտը: Այն միանգամայն բնական երեսոյց էր նահապետական կարգերում զտելող հասարակության համար, որում առկա էր ցեղի յուրաքանչյուր անդամի արարքների համար հավաքական պատասխանատվություն կրելու սկզբունքը: Արյան վրիժառության առկայության դեպքում ամեն մի ցեղակցի կյանք արաբ-բեղվինը շատ թանկ էր գնահատում: Այն զիտակցությունը, որ վրիժառության զոհ դառնալու դեպքում քո արյունը անպատճի չի մնա, արաբին հաղորդում էր ինքնավստահություն և պատասխանատվության զգացում, որ ցեղի ամեն մի անդամ անձամբ իր զիսով պատասխանատու է ցեղակցի կյանքի և մահվան համար:

Եթե մարդասպանությունը կատարվել էր տվյալ տոհմից կամ ցեղից դուրս, այսինքն սպանվել էր մեկ այլ տոհմի անդամ, գործողության մեջ էր մտնում արյան վրիժառությունը, երբ սպանվածի տոհմակիցները կամ ցեղակիցները իրավասու էին սպանել սպանողի տոհմի կամ ցեղի անդամներից յուրաքանչյուրին: Ընդ որում, արյան վրեժի իրավունքը անժամկետ էր, այն կարող էր ուժի մեջ մնալ տասնյակ տարիներ և նույնիսկ մի քանի սերունդների կյանքի ընթացքում, մինչև արյան վրեժն իրազործվեր:

Սակայն պետք է նշել, որ ցեղերի շրջանում արյան վրիժառությունը խաղում էր նաև որոշակի դրական դեր այն առումով, որ միայն նա էր կարողանում զսպել այն սանձարձակ բռնությունները, որոնք գոյություն ունեին ցեղերի հարաբերություններում:

Ավելի ուշ, Արաբիայում խլամի ընդունումից հետո, արյան վրիժառությունը փոխարինելու եկալ արյան փրկագինը:

Բեղվինների հիմնական գրադմունքներից եր քոչվորական անասնապահությունը: Նրանք պահում էին ուղտեր, այծեր և ոչ խարներ: Զին պերճանքի առարկա էր: Նա կարիք ուներ գարու և ջրի, որոնց սուր կարիքը զգում էին նաև մարդիկ: Սակայն Նաջդում և Եմենում ածեցնում էին ձիեր, այդ թվում նաև հայտնի ազնվագեղ արաբական նժոյզներ: Ավանակների նկատմամբ բեղվինները վերաբերում էին արհամարհանքով, ուստի նրանց թիվը խիստ սահմանափակ էր:

Արար-բեղվինների համար ամենահարգի կենդանին ուղտն էր: Այդ կենդանին երկրագնդի տաք շրջաններում, որոնք համարյա գուրկ են խոնավություննից, մարդու կենսապահովման ունիվերսալ միջոց է: Ուղտը հնարավոր դարձրեց մարդկանց երթեկությունը անծայրածիր անապատներում: Իգուր չէ, որ եվրոպացիները նրան անվանել են «անապատի նավ», իսկ իսլամի սուրբ գրքում՝ Ղուրանում, ուղտը համարվում է Աստծո կողմից մարդկանց ուղարկված հատուկ պարզե: Այդ կենդանին իր վրա կարող է տանել մինչև 200 կգ բեռ: Նա անապատի կիզիչ արևի տակ և ավագների միջով ընդունակ է օրեկան անձնել 120-130 կիլոմետր: Ըստ որում, առանց ջուր խմելու կարող է դիմանալ 4-5 օր գրոյից քարձր 57 աստիճան շերմաստիճանի պայմաններում: Ուղտի այդ հատկանիշները հենց հնարավորություն էին տալիս արաբների միզրացիայի, քարավանային առևտուր կատարելու և անապատում ասպատակություններ կազմակերպելու համար: Ուղտը մեծ դեր է խաղացել նաև ռազմական գործում, որպես հեծելազորային կենդանի: Իրենց տրամադրության տակ այդպիսի ունիվերսալ կենդանու առկայությունն, անկասկած, իր ժամանակին հեշտացրեց արաբների հնարավորությունը դուրս գալու Արաբական բե-

բակդղու սահմաններից և իրազործելու հաղթական պատերազմներ և ծավալուն նվաճողական քաղաքականություն:

Անկասկած ուղտը անփոխարիննելի ծառայություններ էր մատուցում նաև նստակյաց կյանքով ապրող արարներին, որոնք այդ կենդանուն օգտագործում էին զյուղատնտեսական աշխատանքների մեջ, ջրհորներից ջուր քաշելու և այլ նպատակներով։ Ուղտը արար-բեղվինի համար ապահովում էր սնունդ (միս), անջուր անապատում նրա կաթը հագեցնում էր ծարավը, ուղտի բուրդը և կաշին օգտագործվում էր հազուստ պատրաստելու համար և այլն։ Բնավ, պատահական չէ, որ նախախլամական շրջանի արար բանաստեղծները սրտառուշ տողեր են նվիրել ուղտին։

Անտարակույս անասնապահությունը բոչվոր-բեղվինների միակ գրադարձնը չէր։ Նրանք գրադվում էին նաև որսորդությամբ, առևտրափոխանակությամբ, իսկ ավելի հաճախ ասպատակությունները տեղի էին ունենում ինչպես հարևան ցեղերի, այնպես էլ նստակյաց կյանք վարող և հողագործությամբ գրադվող օազիսների բնակչության նկատմամբ։ Հանրահայտ իրողություն է, որ անապատի բոչվորները իրենց տնտեսական վիճակի բարելավումը նշանակալից շափով ապահովում էին քաղաքակիրք հողագործական շրջաններ ներխուժումներ կատարելու ճանապարհով։ Առհասարակ բեղվինների ավար ձեռք բերելու հակումը նրանց դարձնում էր շափազանց վտանգավոր օազիսներում և անապատի հարակից հողերի վրա բնակվող նստակյաց երկրագործ բնակչության համար։ Ասպատակությունների ժամանակ բեղվինների կողմից շատ արագ թշվում տարվում էին թշնամու ցեղի անասունները, նրանց կանայք և երեխաները։ Գերվածներին վաճառում էին իբրև ստրուկներ, փոխանակում էին իրենց ցեղից գերվածների

հետ և կամ նրանց համար վերցնում էին փրկազին: Անասունների հոտերը անցնում էին ձեռքից ձեռք: Բնականաբար ցեղերի ընդհանուր հարստությունը այդ ասպատակությունների հետևանքով չեր ավելանում և սկզբունքորեն ամեն ինչ մնում էր նախկինի պես, որովհետև այսօր հաղթանակ տարած ցեղի ձեռքում կարող էր լինել հսկայական հոտ, իսկ վաղը նա կարող էր գրկվել դրանից:

Ասպատակությունների ժամանակ բեղվինները ամեն կերպ աշխատում էին որ հնարավորինս արյուն չքափվի, որովհետև արյունահեղությունը լի էր վտանգավոր հետևանքներով՝ «վենդետտայի»՝ արյան վրիժառության ինստիտուտի առկայության պատճառով:

Ասպատակություններից բացի բոչվոր-բեղվինների համար եկամտի հիմնական աղբյուրներից մեկը «հովանավորությունն» էր, այսինքն առևտրական քարավանների տեղաշարժը անվտանգ դարձնելու ծառայությունը: Քարավաններին զինված ուղեկցության համար զանձվում էր որոշակի տուրք: Ըստ որում, քարավանատերերը պարտավոր էին հատուկ հարկ վճարել նաև բեղվինների տվյալ ցեղին պատկանող տարածքից անցնելու համար: Քաղաքանակ արաբները ևս պարտավոր էին վճարել բեղվինական ցեղին պատկանող տարածքով անցնելու համար: Դա կոչվում էր «եղբայրության իրավունք»: Բոչվորների համար եկամտի կարևոր աղբյուր էր հանդիսանում նաև քարավանատերերին վարձով ուղտեր տրամադրելը:

Որպես կանոն աստիճանաբար իրենց ժամանակավոր բնակության վայր ընտրելով քարավանային ճանապարհները, բեղվինները վերահսկում էին այդ ողջ առևտրական-քարավանային բիզնեսը: Դրա հետ մեկտեղ, իրենք ևս գրադվում էին առևտրափոխանակությամբ, վաճառում էին ուղտեր և իրենց անասնապահական

արտադրության զանազան ապրանքներ՝ կաշի, բուրդ, անասուններ, տնայնագործական արտադրության զանազան ապրանքներ և այլն:

Քոչվորական կյանքի պայմաններում քաղաքակրթության մակարդակը հին Արաբիայում բնականաբար բարձր չէր: Վաշկատուն կենսաձեր մշակութային կյանքը դնում էր խիստ նեղ շրջանակների մեջ: Այդ շրջանակները կարելի էր հաղթահարել միայն նստակեցության անցնելու դեպքում: Ամենուրեք ցածր մակարդակի վրա էր գտնվում նաև բեղվինների մշակութային կյանքը: Նրանք անօգնական էին կյիմայի քմահաճույքների նկատմամբ: Թեև իրենք ունեին մեծ քանակությամբ անասուններ, սակայն նրանց կյանքի պայմանները անհնարին էր դարձնում սննդի պահեստավորումը: Վստահաբար կարելի է ասել, որ բեղվինները ավելի շատ տառապում էին ապազայի նկատմամբ անվստահությունից, քան աղքատությունից:

Բեղվինների մոտ կարգապահության բացակայությունը, նրանց անընդունակությունը մշակելու երկարատև ժամանակների համար ծրագրեր, սրանք զծեր են, որոնք, խանգարում էին արաբներին թևակիությունը դեպի փոփոխությունների նախադուսը:

Քոչվոր արաբների կյանքը հեշտ չէր: Ցեղերի միջև գոյություն ուներ խորը թշնամանք: Զգացվում էր արոտավայրերի խիստ պակաս: Դա իր հետ բերում էր քաղց, հիվանդություններ և մարդկանց ոչնչացում: Արոտավայրային սովը բռչվոր-բեղվինին դուրս էր մղում Արաբիայից դեպի բարերեր հովիտները: Բեղվինի առջև կանգնած էր երկրներանք կամ պատերազմել և արյուն թափել արոտավայրերի համար և կամ հեռանալ Արաբիայի սահմաններից: Արաբիայում հաճախակի կրկնվող երաշտի պատճառով ևս բեղվինները ստիպված էին տեղափոխվել տեղից տեղ, անընդհատ

շարժվել, որոնելով ջրի աղբյուրներ և հազվագյուտ արոտավայրեր: Ուստի պատահական չէ, որ քոչվորները պարբերաբար ասպատակում և ավերում էին մոտակա պետությունների տարածքները: Օազիսները, քարավանային ճանապարհները ևս հանդիսանում էին միջցեղային արյունախանձ կոիվների պատճառ, որոնք կրում էին մշտական բնույթ: Հաշտության պայմանագրերը գործում էին այնքան ժամանակ, քանի ուետ ուժերը հավասար էին, սակայն այդ հավասարությունը հնարավոր չէր, կամ շատ դժվար էր երկար ժամանակ պահպանել:

Հիրավի, բեղվինների կյանքը մշտական պայքար էր իրենց գոյատևման համար: Սովոր հաճախ «մողեսներ, օձեր և մորեխներ» ուտող այդ մարդկանց մղում էր դաժանությունների: Օրինակ, նրանք աշխատում էին ազատվել «ավելորդ բերաններից՝ աղջիկներից: Նորածին աղջիկներից «ազատվում» էին նրանց կենդանի թաղելով, իսկ մի մասին զոհ մատուցելով իրենց կուռքերին: Ըստանիքում աղջիկ ծնվելը համարվում էր դժբախտություն: Կանայք համարվում էին երկրորդական էակներ, որոնք օգուտ չեն բերում, թեև եթե նրանց գերի էին տանում, ամոթի ու խայտառակության բիծը ընկնում էր ողջ ցեղի վրա:

Ավանդության համաձայն, երբ արաբ-բեղվինը ի վիճակի չէր լինում իր համար սնունդ հայթայթել, նա գնում էր անապատ, այնտեղ վրան խփում և մտնելով վրանը սովոր միջոցով իրեն մասնում էր մահվան ճիրաններին:

Տեթանոս-բեղվինն ուներ բարոյականության իր հասկացնությունը, որի մեջ կողք-կողքի գտնվում էին խիզախությունն ու մեծահոգությունը թշնամիների նկատմամբ, եթե իհարկե խոսքը չէր վերաբերում արյան վրիժառությանը: Բեղվինի վրան մտած թշնամին անզամ համարվում էր իյուր և օգտվում էր անձի ան-

ձեռնմխելիությունից և տանտիրոջ հյուրասիրությունից: Բեղվինը նույնիսկ իր կյանքի գնով հավատարիմ էր իր տված խոսքին: Այդ բոչվորների մոտ առկա էր «մուրուվվա» հասկացությունը, որ նշանակում էր «տղամարդու հատկանիշներ» ունենալը: Այն ներառում էր այնպիսի արժանիքներ, ինչպիսիք էին ռազմական խիզախությունն ու անվեհերությունը, առատաձեռնությունը և հավատարմությունը ցեղային ավանդույթներին:

Հենց այդ տոհմացեղային վարքի կանոնները, անսահման, ոչնչով չսահմանափակվող ազատության զգացումը, ըստ Էության, ձեսվորում էր արաբ-բեղվինի բնավորությունն ու աշխարհայացքը: Նա համոզված էր, որ առաքինի մարդը կարող է աճել միայն առաքինի արմատներից: Տականքներից միայն կարող է ծնվել տականք: Ուստի արաբները շատ ուշադիր վերաբերմունք ունեին իրենց տոհմաբանական ծագման նկատմամբ և այն հիշում էին նվազագույնը մինչև ութը պորտ:

Արաբների մոտ տիրապետող էր նաև ճակատագրապաշտությունը (Փատալիզմ): «Նախորշումի հավատը շատ հին մարդկային մի մոլորություն էր, արդյունք մտքի տհասության,- գրում է Լեռն: Ֆատալիզմով տողորված մարդը ամենայն պաղարյունությամբ էր վերաբերում ամեն մի վտանգի, ամեն մի դժբախտության: Համոզված, որ եթե ճակատագիրը վաղօրոր չի տնօրինել մեկի համար այս կամ այն տեսակ մահ, նա չի մեռնի և պատերազմական փոթորիկների մեջ»:

Ցեղի մեջ ապրող կանայք ավելի մեծ ազատությունից էին օգտվում, քան քաղաքաբնակ կանայք, սակայն նրանց վրա էր ընկած ողջ տնային աշխատանքի ծանրությունը: Ինչպես ցանկացած բոչվորական ցեղի մեջ, արաբների մոտ ևս կնոջ դերը համայնքում և ընտանիքում չնշին էր: Ցանկացած բոչվոր-ռազմիկ անհրաժեշ-

տուրքյան դեպքում կարող էր հարևան ցեղից փախցնել կամ գերի վերցնել կանանց: Ստրկուհուց ծնված զավակը համարվում էր ցեղի լիարժեք անդամ և նույնիսկ ստանում էր իր հոր գույքի մի մասը: Ընդ որում, նրա մայրը այդպես էլ շարունակում էր մնալ ստրկական վիճակում: Կին արարածի կյանքը սկզբում տնօրինում էր իր հայրը, այնուհետև ամուսինը, իսկ եթե վերջինս մահանում էր կամ զոհվում պատերազմի մեջ, տվյալ կինը ժառանգաբար անցնում էր մահացած ամուսնու մերձավոր ազգականներից մեկին:

Տվյալ ցեղի անդամը կարող էր ամուսնանալ իր ցեղային խմբից դուրս, թեև այլ ցեղից բերված կինը երբեք չէր դառնում իր ամուսնու ցեղի լիիրավ անդամ: Իսկ նրանից ծնված երեխաները հայտնվում էին դժվարին վիճակում:

Քոչվոր արաբների մոտ պոլիգամիան կամ բազմակնությունը սովորական երևույթ էր: Ցանկացած տղամարդ կարող էր ունենալ անսահմանափակ թվով կանանց: Ամուսնալուծությունները կատարվում էին հեշտությամբ: Ամուսնալուծվելու համար բավական էր, որ տղամարդը այդ մասին պարզապես հրապարակավ հայտարարի: Ընդ որում, նույնիսկ կնոջ բերած օժիտը մնում էր ամուսնու մոտ: Շատ հաճախ հենց այդ պատճառով տղամարդը տալիս էր ապահարզան: Սակայն ուրիշի ունեցվածքին տիրանալու այդ եղանակը միշտ չէ, որ ունենում էր հեշտ ու խաղաղ ելք: Եթե ամուսնալուծության ենթարկված կնոջ ազգականները համարեին, որ ամուսնու կողմից ապահարզան տալու պատճառները անհիմն են, ապա ամուսինը կարող էր լուրջ խնդիրներ ունենալ կնոջ ազգականների հետ:

Որոշ ցեղերում, սակայն, որտեղ դեռևս իշխում էին մայրիշխանության մնացուկները, կանայք իրավական հարցերում, այդ

թվում նաև ժառանգությանը վերաբերող խնդիրներում, ունեին ավելի մեծ իրավունքներ, քան տղամարդիկ: Այդ դեպքում ցեղի շարունակակությունը ևս ընդունվում էր ոչ թե տղամարդու, այլ կանանց գծով:

Կնոջ կողմից տղաներ ծնելը համարվում էր օրինություն, իսկ աղջիկ ծնելը՝ անեծք: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ երեխայի հորը անհրաժեշտ էր ունենալ կովող մարդիկ, իսկ կին ձեռք բերելու խնդիրը նրա համար դժվար չէր:

Մինչև ամուսնանալը քոչվող կանայք պետք է պահպանեին իրենց կուսական մաքրությունը, մի բան, որ տղամարդուց չէր պահանջվում:

Արաբական թերակղու նստակյաց բնակչությունը, որի զբաղմունքը հիմնականում հողագործությունն էր, ինչպես նաև անասնապահությունը, արհեստագործությունը և առևտուրը, տեղաբաշխված էր ոչ անապատային գոտիներում, հատկապես հարավում՝ Եմենում, Հայրամաութում, ինչպես նաև Կենտրոնական ու Հյուսիսային Արաբիայի բնակության համար հարմար ու բարեբեր վայրերում և օազիսներում: Նստակյաց վայրերում առկա էին նաև քաղաքներ և քաղաքատիպ բնակավայրեր: Նստակյաց բնակչության շրջանում գոյություն ունեին ինքնավար համայնքային մարմիններ, որոնք կոչվում էին շաբաններ:

Թվում էր, թե Արաբիայում քոչվորները շնորհիվ իրենց ազատ ու «ինքնավար» կենսաձևի թույլ կապերի մեջ էին նստակյաց բնակչության հետ և տնտեսապես միանգամայն ինքնուրույն էին, սակայն դա այդպես չէր: Իրականում նրանք որոշակի կախում ունեին զյուղացիներից և քաղաքացիներից, որոնց թեև արհամարհում էին: Վերջիններս, տառապելով քոչվորների ավագակային ասպատակություններից, ոչ պակաս չափով ատում էին նրանց:

Դեռ հնագույն ժամանակներում երկրագործական ընդարձակ տարածքներում կառուցվել էին վիթխարակերտ ոռոգման համակարգեր, որոնց մնացուկները պահպանվել են մինչև մեր օրերը:

Քոչվորների անսանձ ու հաճախակի կրկնվող ասպատակություններից պաշտպանվելու համար նստակյաց բնակչությունը կամ պետք է զենքը ձեռքին մաքարեր, և կամ ձեռք բերեր որևէ ուժեղ քոչվոր ցեղի այսպես կոչված «հովանավորությունը», որա համար վճարելով համապատասխան զին: Աղբյուրների վկայությամբ, քոչվոր-արաբների կողմից իրականացվող ասպատակությունները և կողոպուտները ստիպում էին նստակյաց արաք բնակչությանը միշտ պատրաստ լինել պաշտպանության համար: Տես այդ նպատակով, վաշկատուն-բեղվինների օրինակով նստակյաց արաբները ստեղծում էին հետախուզական և լրտեսական ծառայություն: Դա կենսական անհրաժեշտություն էր նրանց համար: Որպեսզի իրենց քարավանները պաշտպանեն կողոպտիչներից, վաճառականներն օգտագործում էին իրենց լրտեսներին, որոնք նախւրզգուշացնում էին վերահաս վտանգի մասին: Ցեղերը միմյանց մոտ հետախուզներ էին ուղարկում հակառակորդների մասին տեղեկություններ ձեռք բերելու համար: Գերիները ևս հանդիսանում էին տեղեկություններ հայրայթելու աղբյուրներ: Նրանք տեղեկատվություն էին հաղորդում ցեղերի տեղաբաշխման, նրանց քոչավայրերի, պաշտպանական հետափորությունների մասին և այլն: Այդ տեղեկությունները հնարավորություն էին տալիս թշնամու համար ստեղծել տհաճ անակնակալներ: Արաբները լայնորեն օգտվում էին նաև դավաճանների ծառայություններից, որոնք դավաճանելով յուրայիններին, փախել և ապաստան էին գտել իրենց մոտ:

Մինչխամական Արաբիայի լրտեսներն ու հետախույզները լայնորեն օգտագործում էին սիմվոլիկայի տարրեր ձևերը հակառակորդի վերաբերյալ յուրայիններին տեղեկություններ հաղորդելու համար: Օրինակ, մի քուտ ավազը նշանակում էր, որ փաստն ակնառու է, կարմիր ուղտը նշանակում էր լեռ. սովորական ուղտը՝ անապատ. տերեններով փշերը՝ որ թշնամին զենք է վեցրել ձեռքը. կաթը խորհրդանշում էր թույլ թշնամուն. կարմիր թիկնոցը՝ նշանակում էր, որ թշնամու մոտ առկա է հայտնի մարդ. սև քարը՝ գիշեր և այլն:

Սուսուլմանական պատմագրության մեջ արաբների պատմության մինչխամական շրջանը ստացել է «Զահիլիյա» անվանումը: Այն օգտագործվում է նաև Ղուրանում: Խսլամազիտության մեջ սովորաբար այդ տերմինը մեկնաբանվում է: «Հեթանոսություն» իմաստով: Խսկ մուսուլմանական աստվածաբանները այն մեկնաբանում են որպես «անզիտության» շրջան: Ազելի ստույգ, զահիլիյայի տակ հասկացվում է մարդկանց կյանքի մի շրջան առանց մարգարեի ներկայության: Զահիլիյան ներկայացվում է որպես կոպտության, դաժանության, մարդկանց իրենց կրքերին ու ցանկություններին ենթարկելու, կյանքի անկանոնության մի շրջան: Այդ նույն շրջանը եվրոպացիներն անվանել են «Քարբարության», «Քոնության» շրջան: Խսլամի մարգարեի՝ Սուհամմադի համար ևս զահիլիյան նշանակում էր վայրենություն, բարբարոսական սովորույթներ, որոնք ինքը ցանկանում էր ոչնչացնել նոր կրոնի քարոզությամբ և դրանով իսկ հաղթահարել ցեղային տրոհվածությունն ու արյունոտ երկպառակությունները, ձգտելով իսլամի շնորհիվ սահմանել համարաբական միասնություն:

Գերմանացի խսլամագետ Ավգուստ Մյուլերը նշում է, որ ինքը Սուհամմադը ևս չկարողացավ իր մեջ հաղթահարել զահի-

լիյայի որոշ արատները, մասնավորապես անողորմ դաժանությունը, որն ինքը հաճախ դրսնորում էր թշնամիներին ոչնչացնելիս:

Անկասկած նախախլամական Արաբիայի քաղաքակրթությունը ջահիլյայի շրջանում չէր կարող շատ բարձր լինել, թեև հետազոյում իալամի հիմնադիր Մուհամմադ մարզարեն ասել է, թե արաբները ոչնչով չեն գիշում հարեւան բարձր զարգացած ժողովուրդներին, որ պարզապես նրանք «ուշացումով են բացվել»: Հիրավի, մի շարք փաստեր գալիս են վկայելու, որ հենց այդ շրջանում անապատի քոչվորները հանդիսացան արաբական գրականության հիմնադիրները: Նախախլամական շրջանում Արաբիայում գրականությունը ներկայացված էր միայն պոեզիայի ժանրով, որի լոկ առանձին պատառիկներն են հասել մեզ: Այն աչքի էր ընկնում իր հարուստ բազմազանությամբ, բանաստեղծական չափերով, ճոխ լեզվով, փայլուն երանգավորումներով և նուրբ զգայունությամբ: Արաբ բանաստեղծների հորինած ոտանավորներում երգվում էր սեր, հերոսական գործողություններ, պատերազմական խիզախություններ: Արտառուշ տողեր են նվիրված արաբների ամենամտերիմ եակին՝ ուղտին, նժույզներին, նկարագրվում են բնության սրանչելի տեսարաններ, տրվում են փիլիսոփայական խոհեր: Կրոնական բնույթի բանաստեղծություններ գործնականում չեն եղել, թեև հանդիպում են ակնարկներ բարձրագույն աստծո մասին:

Ընդհանուր առմամբ ջահիլյայի շրջանում հեթանոսական և բազմաստվածություն դավանող Արաբիան կարծես մի կղզյակ էր մոնոքեխստական կրոնների միջավայրում, որոնք լայնորեն տարածված էին հարեւան երկրամասերում: Արդեն բրիստոննեությունը տիրապետում էր բյուզանդական նահանգներում՝ Եզիդոսու-

սում, Սիրիայում, Պաղեստինում, Փոքր Ասիայում, ինչպես նաև Եթովպիայում։ Այդ կրոնը լայնորեն ներքափանցել էր նաև Իրան։ Ավելին, հենց բուն Արաբիայում հայտնվել էին քրիստոնեական և հուդայական համայնքներ։ Նույնիսկ որոշ արաբական քոչվորական ցեղեր (օրինակ, թաղլիբ ցեղը) ամբողջապես ընդունել էին քրիստոնեությունը։ Առանձին նստակյաց ցեղեր, օրինակ, կայնութա, նադիր, կուրայզա, որոնք բնակություն էին հաստատել Յասրիբում (Մադինայում) դավանում էին հուդայականությունը։

Նշված իրողությունը վկայում է այն մասին, որ հնուց անտի Արաբիան չի ապրել բացարձակ մեկուսացվածության պայմաններում, որ այն միշտ բաց է եղել արտաքին ազդեցությունների համար։ Անկասկած հուդայականության և քրիստոնեության հետ ծանոթությունը արաբների մտավոր-մշակութային զարգացման վրա մեծ ներգործություն է ունեցել։ Այդ կրոնները արաբների շրջանում իրականացնում էին միսիոներական աշխատանք։ Սակայն նրանց գործունեությունն ունեցավ միայն մասնակի հաջողություն։ Արաբիայում զիսավոր կրոնը շարունակում էր մնալ հեթանոսությունը։

Նախախլամական շրջանում Արաբիայի բեղվինները չստեղծեցին ոչ մի աշբի ընկնող պետական միավորում։ Արաբական թերակղզու ընդարձակ տարածքներում առկա էր բաղարական վակուում։ Գոյություն չուներ ոչ միայն ուժեղ համարաբական պետական իշխանություն, այլև թիշ թե շատ աշքի ընկնող տարածաշրջանային իշխանություն, որն ի վիճակի լիներ վերածվելու միասնական պետության ձևավորման և գոյության կենտրոնի։ Ճիշտ է, Արաբիայում V-VI դարերում և VII դ. սկզբին գոյութ-

* Արաբները քրիստոնյաներին անվանում են «Նասարա»։

յուն են ունեցել պետական կազմավորումներ (Հասանիների, Լահ-միների պետությունները և այլն), սակայն դրանցից ոչ մեկը չկա-րողացավ ստիպել բեղվիններին հրաժարվելու իրենց անիշխա-նական հակումներից: Պետական, քաղաքական միասնության բացակայությունը անխուսափելիորեն հանգեցնելու էր ցեղերի փոխհարաբերություններում քառսի առաջացմանը: Առանձին ցե-ղերի և ամբողջ ցեղային միությունների միջև տեղի ունեցող ան-վերջ միջցեղային երկպառակությունները վեր էին ածվում դաժան ու անզիջում արյունահեղ պատերազմների, որոնք հաճախ տևում էին տասնամյակներ: Իսկ դա իր հերթին խոչընդոտում ու խան-գարում էր համարաբական քաղաքական, պետական իշխա-նության ձևավորմանը:

Քացարձակ ազատության մեջ ապրող բեղվինները չեին ցանկանում ճանաչել որևէ իշխանավորի իշխանություն: Եվ ոչ ոք չէր կարողանում բեղվիններին ստիպել հրաժարվելու դեպի ա-նիշխանությունն ունեցած իրենց հակումից: Առհասարակ քոչվո-րական կյանքը, կրօնական պատկերացումների բազմազանութ-յունը, ցեղերի անհավասար վիճակը, արոտավայրերի ու ջրի հա-մար արյունախանձ կրիվները, ցեղերի միջև արյունայի երկպա-ռակությունները և այլն, այդ բոլորը արգելք էին հանդիսանում ա-րաբների միավորմանը որպես միասնական ժողովուրդ: Վերջա-պես, պետականություն չունենալու պատճառներից մեկն էլ այն էր, որ քաղաքական ասպարեզում առաջ չէր քաշվել որևէ միավո-րիչ զաղափար: Ուստի իսլամի ծնունդից ու քարձրացումից առաջ հարյուրամյակների ընթացքում ցեղերը իրենց եռանդը ծախսում էին բոլորը բոլորի դեմ մանր պատերազմներում: Առանձին ցեղե-րի քաղաքական դաշինքները և ժամանակավոր համադաշնային (կոնֆեղերատիվ) միավորումները այսպես կոչված «եղբայրաց-

ման» («թախալութ») հիմքի վրա, այդպես էլ ի վիճակի չեղան վերածվելու ռեալ բաղարական ուժի և պետականության կորիգի:

Անկասկած ցեղային տրոհվածությունն ու ցեղերի միջև թշնամանքը հաղթահարելու համար անհրաժեշտ էր ստեղծել համարաբական պետություն: Այսպիսով, VI-VII դարերում Արաբիան միարձվել էր բաղարական, սոցիալական և զաղափարական ճգնաժամի մեջ: Գոյություն չուներ համընդհանուր ճանաչում գտած արաբական քաղաքական որևէ կենտրոն: Բազմազան ցեղային կուլտերը և հավատալիքներն արգելակում էին ցեղերի միավորմանը:

Աղբյուրները վկայում են, որ ստեղծված այդ վիճակի անելանելիությունը գիտակցել են մտածող արաբներից շատերը: Հետևաբար, միասնության զաղափարը սավառնել է օդում, սակայն այն կյանքի կոչելու ուղին ոչ ոք չգիտեր: Իրականում այդ ճգնաժամին կարելի էր լուծում տալ միայն նոր զաղափարների, ավելի ճիշտ նոր զաղափարախոսության ստեղծման ճանապարհով: Այդպիսի զաղափարախոսություն կարող էր հանդիսանալ նոր կրոնը, որովհետև միջնադարում գոյություն ուներ զաղափարախոսության միայն մեկ ձև՝ կրոնը: Ընդ որում, նոր կրոնական զաղափարախոսությունը անպայման պետք է հիմնված լիներ միաստվածության սկզբունքի վրա, որովհետև միայն այդ դեպում կարելի էր վերջ տալ ցեղային երկպառակություններին և սահմանել կրոնի վրա հիմնված «եղբայրություն», ասել է թե կրոնական և քաղաքական միասնություն:

Հետևաբար, պատմությունը սպասում էր նրան, ով այդ բեռը կվերցներ իր վրա, վերջ կտար արաբների տարանջատվածությանը և անվերջ պայքարին, հիմք դնելով նրանց միասնությանն ու պետական գոյությանը:

ԱՐԱԲՆԵՐԻ ԿՐՈՆԱ ՄԻՆՉԵՎ ԽՍԼԱՍԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Մինչև իալամի ընդունումը (VII դ.) արաբական թերակղզու բնակչությունը միասնական կրոն չուներ: Արաբները հերանու կուայշտներ էին և հետևում էին բազմաստվածությանը: Յուրաքանչյուր ցեղ ուներ իր սեփական աստվածների մի ամբողջ հավաքածու: Արաբների պաշտամունքի առարկաներն էին առանձին քարերը (օրինակ, Մերրայի «Սև քարը»), քարակերտ կուորերը, որոնք կոչվում էին «բեյթ-իլ» կամ «բեթիլներ», որ նշանակում էր «աստծո կացարան»: Բեթիլները հաճախ հանդիպում էին գույզերով (Խսաֆ-Նայիլա և այլն), որ իրենով նշանավորում էր դուալիզմի գաղափարը, մի բան, որին հետազայում իսլամը հակադրեց խստիվ միաստվածությունը: Կային բեթիլներ, որոնք մշտապես գտնվում էին որոշակի վայրում, կային նաև շարժական բեթիլներ, որոնք ցեղերին ուղեկցում էին նրանց տեղաշարժերի ժամանակ, իսկ պատերազմների դեպքում, հովանավորում ու աջակցում տվյալ ցեղին:

Քոչվոր արաբների պաշտամունքի առարկա էին նաև երկնային լուսատուները՝ արեր, լուսինը, աստղերը: Ընդ որում, լուսինը հանդիսանում էր արական սեոփի աստվածություն, իսկ արեր՝ իզական սեոփ: Աստղերը ևս խորհրդանշում էին կամ արական, կամ իզական սեոր: Դուրանում առկա է հիշատակում արաբների մինչիսամական հավատալիքների մասին. «Մի երկրպագէք արեգակին եւ ոչ լուսնին, եւ երկրպագէք Աստուծուն, որ նրանց ստեղծել է, եթէ դուք նրան էք պաշտում» (Դուրան, 41:37):

* Գրքում մենք օգտագործել ենք Ա. Ամիրխանեանցի կողմից թարգմանված Դուրանը, Վառնա, 1909: Համարակալվածների առաջին

Արարական մինչխամական պանթեոնում կային նաև բազմաթիվ այլ աստվածություններ, օրինակ աստվածուհիներ, «բարձրագույն աստվածուհի» Ալ-Լաթը (կամ Իլաթը), «չափազանց ուժեղ» Ալ-Ուզզան, Մանաթը, որը մկրատով կտրում է մարդկանց ճակատազրի թելը, աստվածներ՝ բարեկամության աստված Վաղդը, անասունների հովանավոր Սուլվան, Յազուսը, Հա՛ուկը և այլն: Առանձին ցեղերի մոտ պաշտամունքի առարկա էր ջուրը: Տարածում ուներ մահացած նախնիների կուլտը, որոնց գերեզմաններին գոհարերում էին ուղտեր և այլ կենդանիներ:

Ցեղային աստվածներից բացի, արաքների կրոնական պատկերացումներում մեծ դեր էին խաղում առանձնահատուկ հոգիները շինները, որոնք բաժանվում էին չար և բարի ոգիների: Ամենաղաժան և չար շիննը կոչվում էր շայթան: Մերքացիները շիններին հավասարապես պաշտում էին իրենց աստվածների հետ և դիմում էին նրանց աղոթքներով: Այդ առթիվ Ղուրանում ասվում է. «Մարդկանցից էլ կային ոմանք, որոնք դևերից ումանց մոտ ապաստան էին պնտրում, եւ միմիայն իրենց յիմարութիւնն էին շատացնում» (72:6): Ղուրանը չի ծխտում այդ ոգիների գոյությունը, սակայն ըմբռութանում է նրանց հավասարեցման դեմ Ալլահի հետ. «Բայց նրանք դևերին Աստուծոյ ընկերներ են շինել, որ նա է նրանց ստեղծել» (6:100): Ամենահզոր շինները կոչվում էին իֆրիթներ, որը արարական բանահյուսության մեջ հանդես է գալիս որպես հանգուցյալների հոգիներ:

մասը Ղուրանի սուրան է, երկրորդ մասը՝ այաթը: Մահմեդականների Սուլթ Գիրը ընդունված է անվանել Կորան, սակայն մենք նպատակահարմար ենք համարել օգտագործել մեզանում ընդունված Ղուրան ձևը:

Արաբների պատկերացմամբ աստվածների մի մասը ապրում էր անապատում, պաշտպանելով այս կամ այն ցեղի տարածքները: Անկասկած բազմաստվածությունը ևս արաբներին տարաբաժանող և մեկ ցեղը մյուսին թշնամի դարձնող գործոն էր, քանի որ այդ աստվածությունները, որոնք հանդես էին զալիս որպես ցեղերի հովանավորներ, մրցակցում էին միմյանց հետ և թշնամաբար էին տրամադրված միմյանց նկատմամբ, ինչպես և այն ցեղերը, որոնց իրենք հովանավորում էին: Հետևաբար, ինչպես նշվել է, բազմաստվածությունը հանդիսանում էր զլխավոր զաղափարական արգելքը ցեղերի միավորման ու միաձուլման ճանապարհին մեկ միասնական էթնոսի մեջ:

Արաբների համար հին ժամանակներից սկսած համազգային սրբավայր էր դարձել Մերրայում գտնվող Քաաբա կոչվող ուխուատեղին: Դա խորանարդած մի շինություն էր, որի բարձրությունը 12.5 մետր էր, ընդհանուր տարածքը՝ 191 քառ. մետր, իսկ ներքին տարածքը՝ կազմում էր 13x9 մետր: Քաաբա բառը արաբերեն լեզվում իմաստային առումով նշանակում էր «քարձր տեղ, շրջապատված հարգանքով ու մեծարանքով»: Արաբները այն կոչել են նաև «Աստծո տուն»: Քաաբայի ծագման վերաբերյալ հարցը անհայտ է: Մուսուլմանական ավանդույթի համաձայն, երկրի վրա առաջին մարդը՝ Աղամս է կառուցել այդ սրբավայրը ի նշան իր վերամիավորման Աստծո հետ: Նա այդ տաճարը կառուցել է: Աստծո կողմից Գաբրիել հրեշտակապետի միջոցով իրեն ուղարկված «ներման քարի» շուրջը, որը սկզբում իրը եղել է սպիտակ գույնի, սակայն ժամանակի ընթացքում ներծծելով մարդկանց մեղքերը սեացել է, ինչպես անլուսին խավար գիշեր: Ներկայում այդ սե քարը, որն արաբերեն կոչվում է ալ-Ճաջար ալ-Ճայ և իրականում իրենից ներկայացնում է երկնարար, տեղադր-

ված է Քաաբայի պատի մեջ մեկ և կես մետր բարձրության վրա և շրջանակված է արծաթյա շրջանակով: Ի դեպ, որոշ գիտնականներ համարում են, որ այդ քարն ունի արհեստական ծագում և ստեղծված է շիկացած ավազից զանազան նյութերի խառնուրդով: Որպես այդ վարկածի կովան բերվում է այն փաստը, որ Սև քարը շրասույզ չի լինում: Եթե 930 թ. քարմաքների աղանդի հետևորդները գողացել էին այդ քարը, այն գտել ու ճանաչել են իր այդ հատկանիշի շնորհիվ:

Ըստ ավանդության, Աղամի որդի Շիսը (Սիֆ) Քաաբայի փայտյա սրբավայրը փոխել է քարակերտ շինությամբ: Նուի (Նոյ) մարգարեի ժամանակ, երբ տեղի է ունեցել համաշխարհային ջրհեղեղ, Քաաբան համբարձվել է երկինք և ապա կրկին վերադարձվել երկրի վրա: Սակայն նախկինում նրա եղած տեղը մոռացվել է և շենքն էլ քանդվել: Տեսազայում Իբրահիմ (Աբրահամ) մարգարեն Ալլահի հրամանով վերստին կառուցել է Քաաբան նախկինում եղած իր խսկ վայրում:

Հայտնի է, որ արդեն մեր թվարկությունից առաջ երրորդ դարում Քաաբան հանդիսանում էր արարական ցեղերի պանթեոն: Որոշ տվյալներով, նրա կենտրոնում գտնվում էր Խուրալա կոչվող կուռքը, որը կուրայշ (կուրեյշ) ցեղի աստվածությունն էր մարդու կերպարանքով, որն ուներ ոսկյա ձեռք: Նրա շուրջը շարված էին մյուս բոլոր աստվածությունների կուռքերը, որոնց երկրպագում էին թերակղու տարբեր վայրերի արաք հեթանոսները: Մինչև իսլամի ծնունդը Քաաբան իրենից ներկայացնում էր մի յուրահատուկ կուռքերի տաճար, որտեղ կենտրոնացված էին 360 մեծ ու փոքր կուռք-աստվածություններ, որոնք ունեին իրենց անունները. Իլ, Բիլ, Շամե, Աթթոր, Սին, Սամղոն, Նասր և այլն:

Մերքայի բնակիչները արգելք չեն հանդիսանում, ինչպես և ին հոռմեացիները, որ ուրիշների աստվածները բերվեն իրենց տաճարը, այլ ընդհակառակը, ամեն կերպ խրախուսում էին դա, իրենց քաղաքը վերածելով տարբեր կուռքերի ու աստվածությունների կենտրոնի, որոնց մոտ արաբները զոհ էին մատուցում և գուշակություններ անում: Առհասարակ, Մերքայի բնակիչները չափազանց հանդուժողական վերաբերմունք էին դրսորում տարբեր կուլտերի նկատմամբ: Նրանք հնարավորություն էին տալիս, որ յուրաքանչյուր օտարերկրացի երկրպագի իր սեփական աստվածներին և որպեսզի ողջ Արաբիան Մերքան համարի ուխտագնացության՝ հաջի նշանավոր վայր:

Քաարան ուխտավորների մեծամեծ բազմություններ էր գրավում Արաբիայի զանազան կողմերից և այդ պատճառով եկամուտների հարուստ աղբյուր էր: Ս. թ. V դարի կեսերից կուրայշ ցեղը իր ձեռքը զցեց Քաարան և այն իր մշտական հսկողության տակ պահելու համար բնակվեց նրա շուրջը: Քաարքային տիրելը ազնվազարմ կուրեյշյան տոհմերին տրամադրում էր նաև նշանակալից կրոնական հեղինակություն:

Բնականաբար, ուխտագնացներից մեծամեծ եկամուտներ ապահովող այդ ուխտատեղին պետք է հանդիսանար տարբեր ցեղերի միջև արյունախանձ կոխվների պատճառ: Ուստի և ընդհարումները կուրայշ և մյուս ցեղերի միջև հանդիսանում էին սովորական երևույթ:

Արաբական թերակղում բացի հուղայականությունից ու քրիստոնեությունից, որոշակի տարածում էր զտել նաև զրադաշտականությունը, որն այնտեղ էին բերել պարսկի վաճառականները: Ավելի նվազ չափով տարածված էին նաև մանիքեականությունն ու գնոստիցիզմը:

Բնականաբար հարց է առաջանում, ինչո՞ւ արարները չընդունեցին իրենց բնակության վայրերում արդեն տարածում գտած կրոններից մեկը: Այդ հարցին Լեռն տալիս է հետևյալ բացարձութունը. «Նայելով թերակղզում հուղայականության և քրիստոնեության ունեցած ազդեցությանը, կարելի էր եղրակացնել, որ կրոնական պաշտամունք որոնող Արարիան կամ հրեական կղառնա, կամ քրիստոնեական: Բայց այդպես չեղավ և այդ բանն արգելողը արաք ժողովրդի ուժեղ հոգեբանությունն էր: Արարը չէր կարող ոչ հրեա դառնալ, ոչ քրիստոնյա»: Լեռյի կարծիքով արարները քրիստոնեությունն ընկալում էին ոչ այնպես, ինչպես նա կա, այլ հրապուրվում էին լոկ նրա ծեսերով ու արտաքին փայլով: Նրա կարծիքով պարզ ու նախնական մտածողություն ունեցող արարի համար միանգամայն անմատչելի էին աստվածաբանական այն բարյ ու մանվածապատ տեսությունները, որոնք հուզում էին, օրինակ, քրիստոնեական աշխարհը:

Ուշագրավ է նշել, որ արդեն VI դարում մինչխլամական Արարիայում կային նաև միաստվածություն դավանող ոչ մեծ թվով մարդիկ, որոնք ոչ հուղայական էին, ոչ էլ քրիստոնյա: Նրանց անվանում էին հանիֆներ (արաք. հանիֆ, հոգն. հունաֆա): Ամենայն հավանականությամբ կրոնական այդ ուսմունքը առաջ էր եկել քրիստոնեության ու հուղայականության ազդեցության ներք: Մունք Արարիայում հայտնի էին «Ճշմարտություն որոնողների» անվան տակ: Նրանց կրոնի մասին մեզ հասած տեղեկությունները շափազանց աղքատիկ են ու կցկոտոր: Ենթադրվում է, որ հանիֆների ուսմունքը ձևավորվել է հուղայականության և քրիստոնեության տարրերից և խարսխված է եղել ընդհանուր սեմական (սեմիթական) ավանդույթների վրա: Հուղայականությունից և քրիստոնեությունից հանիֆներն ընդօրինակել էին մի շարք սկզբունքներ, օրինակ, հավատը միասնական աստծո նկատմամբ,

բազմաստվածության և կռապաշտության մերժումը և այլն: Սակայն միննույն ժամանակ, նրանք ամբողջությամբ չեն ընդունել ո՞չ հուղայականությունը և ո՞չ էլ քրիստոնեությունը, ձգտելով հետևել ավելի հասարակ ու պարզ մի կրոնի, որը լինելու էր ավելի մատչելի, հետևաբար, և ընդունելի շարքային արար-քեղվինի համար: Հանիֆները մեծ հակում են ունեցել դեպի ասկետիզմը և զգնավորությունը: Նրա հետևորդները պայքարում էին հին ցեղային կուլտերի դեմ, չին ընդունում հրեական և քրիստոնեական աստվածներին, միաժամանակ, սակայն, քարոզելով միաստվածություն (թաուիհիդ):

Հանիֆների շրջանում առկա էին քաղաքական իշխանության տիրապետող մարզարեներ, որոնք միաստվածության «Ճշմարիտ» լինելու քարոզության հետ միաժամանակ հանդիսանում էին արաբական ցեղերի քաղաքական միավորման զաղափարի շատագով քարոզիչներ:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ ինչպես արաբալեզու հուղայականները և քրիստոնյաները, այնպէս էլ հանիֆները, պատկերացում ունեին գերազույն աստծո մասին, որին անվանում էին Ալլահ: Սակայն նրա վերաբերյալ պատկերացումները չափազանց ընդհանուր էին ու մշուշապատ: Հետևաբար, Ալլահ անվան մեջ ոչ մի առանձնահատուկ մուսուլմանական բան չէր պարունակվում: Ի դեմս հանիֆների Մուհամմադը տեսնում էր Արքահամի հին կրոնի հետևորդների:

Ի տարբերություն երկրային և երկնային աստվածների, որոնք բոլորն էլ անձնավորված էին և ունեին իրենց անունները, խառնվածքի առանձնահատկությունները և այլն, հանիֆների գերազույն աստվածը՝ Ռահիմանը, անձնավորված չէր: Մի քանի հին աստվածների անունները վերածվեցին Ալլահի մակղիրի: Այսպէս, Ալլահին մերթ կոչեցին «քարեզութ»՝ Ռահիման աստծո անու-

նով, մերթ «աստվածների տիրակալ», մերթ «մարդկանց տիրակալ» և այլն:

Արաբների շրջանում հանիֆների գերազույն աստվածը առանձին ժողովրդականություն ու հանրաճանաչություն չէր վայելում, քանի որ նա համակիր չէր առանձին կոնկրետ ցեղի, այլ պաշտպանում ու հովանափորում էր «բոլորին», որն ընկալվում էր տվյալ աստվածության ոչ գործնականության իմաստով: Քոչվորաբարը ենթադրում էր, որ «իր» աստծուն հասցեազրկած աղոթքը ավելի շուտ տեղ կհասնի:

Հանիֆները հավատում էին հոգու անմահությանը: Նրանք գտնում էին, որ մարդու երկրային կյանքից հետո սկսվում է մեկ այլ կյանք, ուստի և այս կյանքում մարդը պետք է իրեն դրսենորի լավ կողմերով, կատարի բարի գործեր, որպեսզի արժանանա այդ նոր կյանքին: Այդպիսի մարդը մահվանից հետո կունենա պատշաճ վարձատրություն: Հանիֆները պահում էին ավանդական ծոմերը, պահպանում ծիսական մաքրությունը և գտնում էին, որ մեծ մեղք է կեղտոտ մարմնով երեալ աստծո հայացքի առջև, ուստի մտցրին աղոթքից առաջ կրոնական լվացումների կարգը:

Ուշագրավ է նշել, որ իսլամի ապագա հիմնադիր Մուհամմադը ծանոթ է եղել հանիֆների կրոնին և նրա հետևորդներին համարել է «մարուր և ճշմարիտ հավատի հետևորդներ»: Հենց այդ իմաստով հանիֆները հիշատակվում են իսլամի սուրբ գրքում՝ Ղուրանում: Հանձինս հանիֆների իսլամի մարզարեն տեսնում էր Աբրահամի հին կրոնի հետևորդների: Իր քարոզական գործունեության սկզբում Մուհամմադը շատ թիշ էր տարբերվում հանիֆներից: Նա հանիֆների միասնական Ռահիման աստծո անունը դարձրեց Ալլահի մակղիբներից մեկը և իր քարոզները սկսում էր հետեւյալ քառերով. «Բիսմիլլահի ռահիմանի ռահիմ» (Հանուն զբանաւ, զբասիրտ Ալլահի»):

ՄԵԶՔԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԻՍԼԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Մերքան իսլամի հիմնադիր Մուհամմադի ծննդավայրն է, ուստի համարվում է մահմեդականների սրբազն քաղաք: Այն արաբների հնագույյ կուլտային կենտրոնն է: Ըստ մահմեդական ավանդագրույցների (լեզենդների), Մերքայում մի որոշ ժամանակ ապրել են Աղամը և Եվան, Շիար, Բբրահիմը, Խսմայիլը և Խաջարը: Համարվում է, որ Մերքան հիմնադրել է Բբրահիմի որդի Խսմայիլը: Ավանդույթի համաձայն, սկզբում Մերքային տիրապետել ու այնտեղ բնակություն է հաստատել ջուրհում ցեղը, այնուհետև նրան փոխարինել է հարավից եկած հուզաա ցեղը, որը IV դարի վերջին որուս է մրցել կուրայշ (կուրեյշ) ցեղի կողմից, որը բռչվորական կյանք էր վարում Մերքայի շրջակայրում: Այդ ցեղի անդամներից մեկը՝ Կուսայ անունով, իր ցեղի ցրկած անդամներին համախմբել է մի միասնական ցեղային կազմակերպության մեջ և վերականգնել նախկինում անկում ապրած այդ ցեղի կուլտը: Հենց նա ել սկսել է իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք դարձել են կուրայշիների մենաշնորհը և նրանց հարստության հիմքը: Խոսքը վերաբերում է ուխտավորներին սննդով, ջրով և հագուստով ապահովելուն, ցեղի ուազմական դրոշի պահպանաման, արշավանքների ժամանակ հրամանատարական գործառույթների իրագործմանը և այլն: Մի խոսքով՝ Մերքան կառավարում էր կուրայշ ցեղի ընտրանին, որը կարգավորում էր հարաբերությունները նաև տարբեր ցեղերի միջև: Այդ ցեղը ևս բաղկացած էր բազմաթիվ տոհմերից, որոնք բնակվում էին Մերքայի տարբեր թաղամասերում: Նրանց մեջ կային մեծահարուստ, միջին կարո-

դության և աղքատ տոհմեր: Կուրայշ ցեղի մեջ տիրապետող դիրքեր էր զրավում մեծահարուստ և ազդեցիկ ուժայա (օմեյա) տոհմը, որը հարստացել էր առևտրի և վաշխառության ճանապարհով: Այդ տոհմը կարողացել էր իր ձեռքբերում կենտրոնացնել մեծ հարստություններ՝ անասնահոտեր, հողեր, ստրուկներ և այլն: Միջին կարողության, գուցե և աղքատ տոհմերի թվին էր պատկանում հաշիմյանների տոհմը (բանու հաշիմ): Հենց այս տոհմից էր սերում իսլամի ապագա մարզարե Սուլամմադը:

Անշուշտ Մերքան բնակեցված չէր միայն կուրայշ ցեղի անդամներով: Այնտեղ բնակվում էին նաև այլ ցեղեր, ինչպես նաև մեծ թվով օտարերկրացիներ, որոնց մեծ մասը ստրուկներ էին:

Մերքան գտնվում էր Արաբական թերակղզու արևմտյան մասում, Հիջազի շրջանում, մի լեռնային անպտուղ և արևակեզ վայրում: Քաղաքի անմիջական շրջակայրում հողագործությամբ զբաղվելը անհնար էր, ուստի և նրա բնակիչները զիխավորապես զբաղվում էին առևտրով, արհեստներով և նստակյաց անասնապահությամբ: Սակայն Մերքայից ոչ մեծ հեռավորության վրա գտնվում էր Թայիֆ անունով քարեթեր մի օազիս, որն ուներ ընդարձակ այգիներ և բնակվեցված էր սարիֆ ցեղով: Աստեղ, ինչպես նաև շատ ուրիշ օազիսներում, հարուստ մերքացիները տիրապետում էին ընդարձակ մշակելի հողերի և այգիների: Իսկզբանե Մերքան կարող էր գոյություն ունենալ միայն Զեմզեմ կոչված աղբյուրի շրերի շնորհիվ, որը հետագայում մահմեդականների համար դարձավ «սրբազն աղբյուր»:

Մերքան Արաբական թերակղզու ամենախոշոր քաղաքն էր: Միաժամանակ, արդեն V դարում այն հանդիսանում էր առևտրական ճանապարհների կարևոր խաչմերուկ, ինչպես նաև փոխաբեռնան և ապրանքների պահեստավորման կենտրոն Սիրիայից

Եմեն գնացող քարավանային ճանապարհների վրա: Մերքայի վրայով էին անցնում Հարավային Արաբիան Հյուսիսային Արաբիայի, ինչպես նաև Բյուզանդական Պաղեստինի, Սիրիայի, Եգիպտոսի և Միջազգետքի հետ կատարվող ցամաքային քարավանային առևտությունները:

VI դարի վերջին, եթե Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև հարաբերությունները հասել էին ծայրահեղ սրության և քարավանային առևտություն գրաղվող վաճառականները, չցանկանալով պատահաբար հայտնվել ռազմական զործողությունների կենտրոնում, սկսեցին իրենց քարավանների համար որոնել նոր, անվտանգ ճանապարհներ, Մերքայի նշանակությունը սկսեց էլ ավելի մեծանալ: Փաստորեն այն դարձավ Ասիայի ցամաքային շրջանները Արաբիայի հարավի և Աֆրիկայի ափերի հետ կապող համարյա միակ կետը:

Մերքայի վրայով Սիրիա էին արտահանվում հում և մշակված կաշիներ, Արաբիայի հանքերից հանված արծաթ, թայիֆ օազիսի քիշմիշ, արմավի տարրեր տեսակներ և այլն: Տարանցիկ առևտություններ էին. Եմենից՝ խունկ, սանդալի փայտ, հալվե (ալոե), մշակված կաշվեղեն, Աֆրիկայից՝ ոսկի, սևամորք ստրուկներ ու ստրկուիիներ, Հնդկաստանից՝ դարչին, պղպեղ, զանազան համեմունքներ ու անուշահոտ նյութեր, փղոսկը, թանկարժեք կտորեղեն և այլն: Մերքայի վաճառականները Սիրիայից բերում էին Բյուզանդական մետաքսյա և բրդյա կտորեղեն, մահույ, ապակյա ամանեղեն, երկաթյա իրեր, գենք, պերճանքի առարկաներ, ձիթապտղի և այլ բուսական յուղեր, ցորեն և բազմապիսի այլ ապրանքներ:

Քարավանների անցման անվտանգությունը դեպի Սիրիա, Իրաք և Եմեն ապահովվում էր շրջակա բեղվինական ցեղերի հետ

կնքված պայմանագրերի շնորհիվ: Այդ ցեղերը որոշակի բաժին էին ստանում մեծ թափով կատարվող քարավանային առևտրից: VII դարի սկզբին Մերքայում առկա էին մի քանի տասնյակ ընտանիքներ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին խոշոր կապիտալներ:

Կուրայշ ցեղի եկամտի կարևորագույն աղբյուրներից մեկը նույնպես առևտուրն էր, վաշխառությունը, ուղտերը վաճառականներին վարձով տալը, առևտրական քարավանների զինված պաշտպանությունը և այլն: Նրանք իրենց վրա էին վերցրել նաև տոնավաճառների կազմակերպման եկամտաբեր գործը, որոնք տեղի էին ունենում տարեկան երկու անգամ՝ գարնանը և աշնանը: Այդ տոնավաճառների օրերին ցեղերի միջև պատերազմները դադարում էին, դադարեցվում էր նաև արյան վրիժառության կարգը: Կնքվում էին խոշոր առևտրական գործարքներ: Կուրայշիները իրենց պաշտպանության տակ վերցրին նաև Քարայի սրբավայրից ոչ հեռու գտնվող հեթանոսական կուռքերը: Ուխտագնացությունը դեպի այդ վայրը նրանց նույնպես բերում էր քավականին մեծ եկամուտներ:

Կուրայշ ցեղը փաստորեն մենաշնորհացրել էր ողջ տարածաշրջանային առևտուրը, որի հետևանքով Եմենի և առևտրաշատ այլ կենտրոնների միջազգային առևտրով զբաղվող վաճառականները կրում էին մեծ վնասներ: Զրկվելով ինքնուրույն առևտուր անելու հնարավորությունից, նրանք ստիպված էին օգտվել Մերքացիների միջնորդական ծառայություններից: Դրա հետևանքով առևտրից ձեռք բերվող եկամուտների առյուծի բաժինը մտնում էր կուրայշ ցեղի վաճառականների գրպանը: Բնականաբար, Եմենը չէր կարող հանդուրծել այդ քանը, քանի որ արագորեն գնում էր դեպի աղքատացում ու սնանկացում: Ուստի ձգտելով վերականգ-

նել առևտրի բնագավառում Եմենի գրադեցրած երբեմնի կարևոր դիրքերը և տարածաշրջանի առևտրի նկատմամբ սահմանել հսկողություն, իսկ ամենակարևորը՝ միջազգային առևտրի կենտրոնը տեղափոխել Եմեն, Սանայում Եթովպահայի թագավորի փոխանորդ Արքահան որոշում է հարձակվել Մերքայի վրա և այն կործանել: Իր այդ մտադրությամբ նա ոչ միայն պատրաստվում էր «կարգի հրավիրել» մերքացիներին և չափավորել նրանց ախորժակը, այլև ավերել ու կործանել նրանց սրբավայրը՝ Քարան, իսկ նրա սրբությունները տեղափոխել իր մայրաքաղաք Սանա, այն վերածելով շրջակա վայրերի բնակիչների ուխտագնացության կենտրոնի: Արքաի ենթադրությամբ, զրկվելով իրենց սրբավայրից, արարները ստիպված կլինեին այսուհետև ուխտագնացության մեջնել ոչ թե Մերքա, այլ Եմենի քրիստոնեական տաճարը: Այսպիսով, նա իր մայրաքաղաքը մտադիր էր դարձնել շրջակա վայրերի ոչ միայն առևտրական-տնտեսական, այլև հոգևոր-կրոնական կենտրոն:

Ընդգրկման ծավալով իր այդ վիթխարի ծրագիրը կյանքի կոչելու համար Եթովպահայի քրիստոնյա թագավորի փոխանորդը մ.թ. 569-570 թթ. մի հսկա բանակ է գորաշարժ կատարում դեպի Մերքա: Այդ արշավանքի ժամանակ Եմենցիներն օգտագործել են նաև մարտական փղեր, որոնց իրենց կյանքում առաջին անգամ տեսնելով մերքացիները մատնել են սարսափի և փախուստի դիմել քաղաքից: Հենց այդ փղերի պատճառով Մերքայի վրա արշավանքի տարին արաբական տարեգրության մեջ մտել է որպես «փղի տարի»: Այդ իրադարձությունը արտացոլված է Ղուրանի «Փղո» կոչված սուրայում:

Սակայն Արքահան այդպես էլ չի հաջողվել գրավել և ամրանալ Մերքայում: Այդ առթիվ հյուսված լեզնդում պատմվում է, որ

Երբ Արքահի զորքերը մոտեցան Մերքայի պատերին, հայտնվեց փոքրիկ թռչնակների մի հսկայական երամ: Նրանց թիվը այնքան մեծ էր, որ նրանք խավարեցրին արևը: Յուրաքանչյուր թռչնակի թաթերի մեջ կար մի փոքրիկ քար և երբ նրանք հայտնվեցին թշնամու բանակի զլսավերնում, այդ քարերը սկսեցին շպրտել ներքեւ: Ստացած վերքերից զավթիչները հազարներով մեռնում էին և ի վերջո ստիպված են լինում բռնել հետդարձի ճանապարհը: Դրան անմիջապես հետևեցին ուժեղ ջրհեղեղները, որի հետևանքով թշնամու բանակի մնացորդները քշվեցին ու լցվեցին Կարմիր ծովը:

Սակայն պատմական աղբյուրների վկայությամբ, Արքահի բանակը ոչնչացվել է ոչ թե թռչնակների կողմից, այլ նրան հնձել է ծաղիկ հիվանդությունը, որը հենց այդ ժամանակներում առաջին անգամ թափանցել էր արաքական թերակղզի: Ի դեպ, հենց այդ նույն ժամանակ, 570 թ., Սասանյան Իրանը մեծ զորաշարժ կատարեց դեպի Եմեն: Սասանյան ռազմական նավատորմը խոշոր դեսանտ է տանում և գրավում այդ երկրամասը: Դրանից հետո մի քանի տասնամյակ շարունակ Հարավային Արաբիան գտնվում էր Իրանի տիրապետության ներքո:

Թեև կուրայշ ցեղը մենաշնորհացրել էր Մերքայի առևտուրը, սակայն նա թույլատրում էր, որ օտարենքրացիները, և հատկապես հրեաներն ու քրիստոնյաները ևս գրադարձն առևտրով, իհարկե, իրենց անմիջական հսկողության ներքո: Որպեսզի որևէ դրսեկ իրավունք ունենար հաստատվելու Մերքայում, նա անպայման պետք է ունենար քաղաքի ազդեցիկ տոկմերից մեկի աջակցությունն ու հովանավորությունը, այլապես օտարներին չէր թույլատրվում հաստատվել քաղաքում, առավել ևս գրադարձն առևտրական գործունեությամբ:

Մերքայի մասնակցությունը ներքին և արտաքին առևտորին հանգեցրել էր քաղաքում մեծ հարստությունների կուտակմանը, դրա հետ մեկտեղ նաև գույքային մեծ անհավասարության գոյացմանը: Արդեն VI դարի վերջին այդ քաղաքում սոցիալական շերտավորումը գնալով խորանում էր: Գոյություն ունեին խոշոր վաճառականներ և մեծ թվով աղքատներ, որոնց թիվը հարածուն կերպով մեծանում էր: Մերքայի հարուստ վաճառականներն ունեին մեծ թվով ստրուկներ, որոնք նախկինում բեղվիններ էին: Նրանք իրենց ունեցած պարտքերի պատճառով վեր էին ածվել ստրուկների: Կային նաև դրսից, հատկապես Եթովպիայից և Աֆրիկայի այլ վայրերից բերված սեամորթ ստրուկներ, որոնք արածացնում էին իրենց տերերի անասնահոտերը, մշակում մոտակա օազիսներում գտնվող նրանց դաշտերն ու այգիները, ինչպես նաև օգտագործվում էին տնային տնտեսության մեջ: Քիչ չեին նաև դրսից բերված օտարերկրյա ծագում ունեցող արհեստավորները, ապրուստի միջոցներից գորկ անօթևան մարդիկ, ծնողազորկ որբերը և այլն: Բեղվինական կենսաձևի հիմքերի քայլայումը քաղաքում առաջ էր բերում խորը անկայունություն: Թույլ տոհմերը ոչ միայն գնալով ավելի ու ավելի էին աղքատանում, այլև նվաստացվում էին հարուստ և ուժեղ տոհմերի կողմից: Ներցեղային կոնֆլիկտների հետևանքով ցեղերից հեռացած մեծ թվով մարդիկ և առհասարակ մինչև հուսահատության դուրը հասած ընչազորկ տարրերը կազմում էին ավագակախմբեր և հարձակումներ գործում հարուստների ունեցվածքի, նստակյաց բնակչություն ունեցող բնակավայրերի և նույնիսկ հակառակ ցեղային ավանդույթների, կողոպուտի ենթարկում իրենց իսկ ցեղակիցներին: Սակայն թիչ չեր նաև այն մարդկանց թիվը, որոնք մեծ հույսերով սպասում էին փոփոխությունների:

Մերքայում գոյություն ունեին պոլիսի (ինքնակառավարվող քաղաք-պետության) և պետական իշխանության միայն սահմերը: Յուրաքանչյուր ցեղ կառավարվում էր ինքնուրույն կերպով: Զեյթին պետական իշխանության մարմիններ՝ դատարաններ, ոստիկանություն, բանտեր և այլն: Քաղաքի պաշտպանությունը դրված էր այսպես կոչված «ահաբիշների» վրա, որոնք սկզբնապես հանդիսանում էին եթովպացի վարձկաններ, սակայն հետագայում այդ ռազմական կազմակերպությունը համալրվում էր բեղվինական փոքր ու աննշան ցեղերի անդամներով:

Ժամանակ առ ժամանակ Մերքայի հրապարակում գտնվող մի հատուկ տան մեջ, որը կոչվում էր «դար-ան-նադվա» («Ժողովների տուն») հավաքվում էր ցեղի ավագանին՝ շեյխները, ցեղերին վերաբերող զանազան հարցեր լուծելու համար: Սակայն այդ խորհուրդն իր տրամադրության տակ չուներ հարկադրման միջոցներ, որպեսզի անհնազանդներին ստիպեր ենթարկվելու իր որոշումներին:

Մերքայում տարվա մեջ սահմանվել էին չորս այսպես կոչված «սրբազան ամիսներ», երբ դադարում էին պատերազմական գործողությունները և ազգաքնակցությունը կարողանում էր մի տեղ համախմբել, կատարել առևտրափոխանակություն, զվարճանալ և այլն: Այդ «սրբազան խաղաղությունների» ընթացքում ստեղծվում էին շուկաներ և տոնավաճառներ, որտեղ բեղվինները կատարում էին ապրանքափոխանակություն: Առավել հայտնի էր Մերքայից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ուկկազ կոչված վայրի շուկան, որտեղ աշխույժ առևտրի հետ միաժամանակ ամեն տարի տեղի ունեցող տունավաճառում բանաստեղծները կարդում էին իրենց ստեղծագործությունները: Բանաստեղծական այդ մրցույթը («մուֆակիարա») հաղթողին պարզեցում

Եր մեծ համբավ, միաժամանակ փառքի արժանացնելով այն ցեղին, որին պատկանում էր մրցույթում հաղթանակ տարած բանաստեղծը: Հաղթողների քասիդները զրվում էին սև մետարսյա կտորի վրա ոսկե տառերով և մեկ տարի շարունակ դրանք կախում էին Քաարայի տաճարի ներսում, որպեսզի բոլորը վայելեն այդ բանաստեղծությունների հմայրը: Ավանդությունը պատմում է, որ հենց Ուկկազի տոնավաճառում Մուհամմադը հասկացել էր, որ արաբների համար խոսքը ոսկուց ավելի թանկ արձել:

Մերքայում տները որպես կանոն կավաշեն էին հարթ տանիքներով: Կային նաև հարուստներին պատկանող քարաշեն տներ, որոնք կառուցվում էին քաղաքից ոչ հեռու գտնվող քարհանքից բերված քարից: Քաղաքի գլխավոր փողոցը, որը միևնույն ժամանակ քարավանային ճանապարհ էր, անցնում էր ողջ քաղաքի միջով: Օրվա բոլոր ժամերին այդ ճանապարհով երթևեկում էին առևտրական քարավանները: VII դարի սկզբին Մերքայում հաշվում էր մի քանի տասնյակ ընտանիք: Այդ ժամանակ քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 6-7 հազար մարդ:

Ահա այդ քաղաքում էր ծնվելու և գործելու համաշխարհային նոր կրոնի՝ իսլամի հիմնադիր Մուհամմադը:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵՆ

Պատմությունն իր տրամադրության տակ չունի նոր համաշխարհային կրոնը ստեղծած Մուհամմադի մասին ժամանակակիցների թողած գրավոր հավաստի տեղեկություններ: Իսկ մահմեդական ավանդույթի կողմից հաղորդած տեղեկությունները վերաբերում են առասպելների բնագավառին: Իսլամի մարզարեի առաջին համակարգված և կանոնակարգված կենսագրությունը՝ այսպես կոչված «սիրան» («Սիրաթ ռասուլ Ալլահ» - «Վարք Ալլահի մարզարեի») ավելի ուշ ժամանակաշրջանի աղբյուր է: Այդ կենսագրականի հեղինակները VIII դարում ապրած Մադինացի Իբն Խոհակն է (մահացել 767 թ.), ինչպես նաև Իբն Խիջամը (մահացել է 834 թ.), Իբն Սա'ադը և ուրիշներ: IX դարում Մուհամմադի կենսագրությունը հարստացվել է արաբ պատմիչների, մասնավորապես աթ-Թաքարի (մահացել է 923 թ.) հաղորդած նոր տվյալներով: Մուհամմադի կյանքի մասին որոշակի նյութ է հայրայթում նաև մուտուլմանների սուրբ Գիրքը՝ Ղուրանը, որը սակայն չի կարելի համարել կարևորագույն աղբյուր հիշյալ հարցի կապակցությամբ:

Տարաբնույթ աղբյուրներից քաղված տեղեկությունները վկայում են, որ Ալլահի մարզարեն եղել է ոչ թե մտացածին, երևակայական, այլ ռեալ կերպով գոյություն ունեցած պատմական անձնավորություն: Ինքը՝ Մուհամմադը և քազմից հայտարարել է, որ ինքը ամենասովորական մարդ է, օժտված մարդկային թուլություններով: Սակայն հետազայում ավանդությունը նրա մասին հյուսել է քազմաթիվ առասպելներ և առասպելախառն պատմութ-

յուններ, որոնցից դժվար է տարաբաժանել ճշմարիտը ստից և իրականը մտացածինից:

Սստիճանաբար մուսուլմանական ավանդույթը մշակել ու ձևավորել է Մուհամմադի կենսագրության վերաբերյալ մի վարկած, որն ընդունելի էր դարձել բոլոր մուսուլմանների կողմից:

Ի՞նչ առարելությամբ էր այդ մարդը զայխ աշխարհ: Միանգամայն հասկանալի ու բնական է, որ արաբական հասարակության մեջ տեղ գտած ճգնաժամային երեսույթները, որոնք ցայտուն կերպով նշմարվում էին արդեն VI դարից սկսած, չէին կարող հավերծ շարունակվել: Արաբիան կենսականորեն կարիք ուներ փոփոխությունների: Եվ ահա VII դարի 20-կան թվականների սկզբներին արաբների բնօրրանում հանդես է զայխ մի արտասովոր անձնավորություն Մուհամմադ անունով (արաբերեն այդ անունը նշանակում է «փառապանծ»), որը և հանդիսացավ իսլամի մարգարենարի, համաշխարհային այդ նոր կրոնի հիմնադիր ու ստեղծող, միաժամանակ դառնալով միմյանցից ցրված ու տարանջատված արաբական ցեղերի միավորողն ու արաբական միասնական կենտրոնացված պետության հիմնադիրը:

Համաձայն ավանդույթի Մուհամմադը (Մուհամմադ իբն Աբդալլահ) ծնվել 570 թ. օգոստոսի 29-ին (մուսուլմանական ուարքի ալ-ավվալ ամսի 8-րդ օրը) Մերքայում (մեկ այլ վարկածի համաձայն 571 թ.): Մահացել է 632 թ.: Նա սերում էր կուրայշ (նշանակում է «Չնաձուկ», որը հանդիսանում էր հիշյալ ցեղի տուտեմը) ցեղի Հաշիմի (Հաշիմյան) տոհմից: Կուրայշ ցեղի մեջ մտնում էին տասնյակ տոհմեր, որոնցից հաշիմյանների տոհմը ամենանշանավորներից էր: Այդ ժամանակ Մերքայում տիրապետող դիրքեր ուներ կուրայշ ցեղի Ռումմայա (Օմայա) տոհմը, իսկ հաշիմյանները չնայած իրենց ազնվազարմ ծագմանը, աշքի չէին ընկնում ոչ ի-

թենց հարստությամբ ու ունեցվածքով, և ոչ էլ իրենց ունեցած դիրքով:

Մուհամմադի ծննդյան վերը նշված թվականի համաստիությունը զիտնական-իսլամագետների կողմից ապացուցված չէ: Առհասարակ, մինչև Սահինա տեղափոխվելու ժամանակաշրջանը (հիջրան, որը կատարվել է 622 թ.) նրա կյանքի վերաբերյալ որևէ անվիճելի տվյալ գոյություն չունի: Ինը՝ մարգարեն ասել է, որ «ես ծնվել եմ արդար թագավորի օրոր», նկատի ունենալով Սասանյան արքա Խոսրով I Անուշիրվանին (531-579 թթ.): Մեկ այլ ավանդության համաձայն, Մուհամմադը ծնվել է «փողի տարում», այսինքն Եմենում եթովպական թագավորի տեղապահ Աբրահի Մերքայի դեմ անհաջող արշավանքի ժամանակ, որի ընթացքում, ինչպես նշվել է վերևում, նրա բանակում եղել են փողեր:

Նոյն ավանդության համաձայն այն գիշերը, երբ ծնվեց իսլամի մարգարեն, տեղի են ունեցել արտասովոր իրադարձություններ: Իրանի բոլոր զրադաշտական տաճարներում իր հանգել է զրադաշտականների «անմահ կրակը», որ ծննդյան գիշերը լուսավորված է եղել այնպիսի պայծառ լույսով, որ Մուհամմադի մայրը կարողացել է Դամասկոսի շուկաները նշմարել ցերեկվալույսի նման, որ Խոսրով Անուշիրվան թագավորի զահը ճոճվել է և այլն: Մեկ այլ ավանդույթի համաձայն, Մուհամմադի հայրը, Շեյքայի որդի Արդալլահը, որն առևտրական գործերով մեկնել էր Սիրիա, հետդարձի ճանապարհին մահացել է, այդպես էլ չտեսնելով իր բացակայության ժամանակ ծնված զավակին:

Մուհամմադի պապի՝ Արդ ալ-Մութալիբի և հոր՝ Արդալլահի մասին տեղեկությունները համարյա բացառապես առասպելական բնույթի են: Սակայն հավաստի հայտնի է, որ Արդ ալ-Մութալիբի տոհմի ձեռքում է եղել ուխտավորներին ջրով մատակա-

րարելու վերին աստիճանի պատվավոր ու եկամտաբեր իրավունքը, որը վկայում է այդ ընտանիքի ազդեցության ու կշռի մասին:

Ավանդություններից մեկի համաձայն, Արդ ալ-Սուլայիֆ Շեյխան երկար ժամանակ արու զավակներ չի ունեցել, իսկ արարների մոտ արու զավակ չունենալը ընկալվում էր որպես մեծ դժբախտություն, ուստի ուխտել է, որ ունենալու դեպքում նրանցից մեկին զոհ է մատուցելու իր աստծուն: Ի վերջո նա ունենում է տասնմեկ որդիներ և հավատարիմ մնալով իր երդմանը, որոշում է նրանցից մեկին զոհ մատուցել: Սակայն «աստծո կամոր» վիճակահանությունը ընկնում է 100 ուղտերի վրա, որի հետևանքով էլ զոհաբերվում են այդ կենդանիները, իսկ սիրեցյալ զավակը փրկվում է:

Չնայած իր ազնվագարմ ծագմանը, մարզարեի մանկությունը երջանիկ չի եղել: Նա բոլորովին չի տեսել իր հորը, որը մեռնելիս իր այրուն՝ Ամինային, քողել է միայն հինգ ուղտեր, մի քանի ոչխար և մեկ հաբեշ-ստրկուիի: Հետևելով արաբների մոտ ընդունված կարգին, Սուհամմադի մայրը վեց ամսական երեխային տալիս է քոչվորական Բանու Սաադ ցեղից Խալիֆա անունով մի ծծմոր, որը բնակվում էր Մեքքայից հարավ-արևելքում, 90 կմ հեռավորության վրա գտնվող Թայիֆ օազիսից ոչ հեռու մի վայրում:

Այդ քոչվորների ընտանիքում մանուկ Սուհամմադի վերաբերյալ տեղեկություններ չեն հասել մեզ, ի բացառյալ հետևյալ առասպելի, որը հետազոյում որպես իրողություն բազմիցս պատմվել է հենց իր Սուհամմադի կողմից: Համաձայն այդ առասպելի, իրենց վրանից ոչ հեռու խաղացող երեք տարեկան Սուհամմադին և նրա կաթնեղոր առջև հայտնվել են սպիտակ հագուստով երկու տղամարդ: Նրանցից մեկի ձեռքին գտնվել է ձյունով լի ոսկե մի լազան: Սուհամմադին պառկեցնելով մեջքի վրա, նրանք ձեղում

են նրա կուրծքը, դուրս քաշում սիրտը և նրանից հանում մի սև կաթիլ: Այնուհետև բացված կրծքի ներսը մաքրում են ձյունով և սիրտը կրկին դնելով կրծքի մեջ՝ հեռանում: Վախեցած կաթնեղբայրը վազում է ծնողների մոտ և պատմում ամբողջ եղելությունը: Վերջիններս մոտենալով դալկացած ու գունատ դեմքով Սուհամադին, նրան հարցնում են տեղի ունեցածի մասին: Վերջինս ճշտիվ պատմում է այն, ինչ նրանց պատմել էր իր կաթնեղբայրը: Վախեցած ծծմայրը համոզում է իր ամուսնուն Սուհամմադին վերադարձնել իր ընտանիքը: Հետազոյում մեկնաբանելով վերոհիշյալ իրադարձությունը, Սուհամմադն ասել է, որ այդ անծանոթները եղել են աստծո կողմից ուղարկված հրեշտակներ, որպեսզի իրեն մաքրեն արատներից:

Եթե լրանում է Սուհամմադի վեց տարին, մայրը վերցնելով իր որդուն և հաբեշ-ստրկուհուն մեկնում է Յասրիք իր ազգականների մոտ: Հետդարձի ճանապարհին նա հիվանդանում է և մահանում: Նրան թաղում են Սերքա տանող ճանապարհից ոչ հեռու գտնվող Արվա կոչվող վայրում:

Այդ առթիվ Դուրանում ասվում է. «Շուտով քո Տերը քեզ կը տայ եւ դու գոհ կլինես: Միթէ նա քեզ որք չըգտաւ եւ պատսպարեց, իսկ քեզ մոլորւած գտաւ եւ առաջնորդեց, եւ քեզ գտաւ աղքատ և հարստացրեց: Դու ել որքին մի՛ անարգի՛ք: Սուրացողին ել դուրս մի անիր» (93:5-8):

Ումմ-Այման անունով ստրկուհին երեխային բերում է Սերքա, որտեղ նրա դաստիարակությամբ սկզբնական շրջանում զբաղվում է իր հորական պապը՝ Արդ ալ-Սութալիք Շեյքան: Պապը շերմորեն սիրում էր իր թոռանը և նրան շրջապատում գուրգուրանքով, քանի որ նա իրեն հիշեցնում էր իր կորցրած սիրեցյալ որդուն: Ամբողջ օրեր Շեյքան անց էր կացնում Քաարայում, Սու-

համմադին վերցնելով իր հետ: Հավանաբար դա նպաստել էր նրան, որ դեռևս վաղ մանկության հասակում երեխայի մոտ արք-նանա հետաքրքրությունը կրոնի նկատմամբ:

Սակայն փոքրիկ Մուհամմադը շարունակում էր ենթարկվել ճակատագրի անողոք հարվածներին: Եթի լրացավ նրա ութ տարին, սիրելի պապը մահացավ: Վերջինս ինչ-որ դիվանագիտական առարելությամբ մեկնել էր Եմենի մայրաքաղաք Սանա, քանակցելու համար այնուեղ հաստատված պարսկամետ կառավարության հետ կարգավորելու համար նրա հետ Մերքայի հարաբերությունները: Ճանապարհին նա հիվանդանում է և վերադառնալով Մերքա, նրա համար պարզ է դառնում, որ հասել է իր կյանքի ավարտին: Նա իր բոլոր գործերը հանձնելով ավագ որդուն՝ Աբու Թալիբին, նրանից խնդրում է, որ հոգ տանի Մուհամմադի նկատմամբ: Այնուհետև իր մոտ կանչելով իր բոլոր զավակներին, տալիս է իր վերջին հրաժեշտը և կնքում իր մահկանացուն: Սիրեցյալ պապի մահը ցնցող ազդեցություն է բռնել Մուհամմադի վրա: Եթի կրկնակի որբանալով նա անցավ հորեղբոր խնամքի տակ, արդեն բոլորել էր իր կյանքի ութ տարին:

Ապագա մարզարեն հնարավորություն չի ունեցել կրթություն ստանալու համար: Ըստ երևույթին հորեղբայրը՝ Աբու Թալիբը չէր ցանկացել ավելորդ ծախսերի տակ ընկնել: Թեև Մուհամմադը երբեք վատ չի արտահայտվել իր հորեղբոր մասին, սակայն, ըստ երևույթին, նրա ընտանիքում ապրելով մշտապես իր վրա զգացել է որբության դրոշմը:

Հորեղբոր՝ Աբու Թալիբի տանը Մուհամմադը զբաղվել է շարքաշ աշխատանքով, որի մասին վկայություններ ենք գտնում Ղուրանում: Նրա հիմնական զբաղմունքն է եղել հորեղբոր այծերը, ոչխարներն ու ուղտերը արածեցնելը: Սակայն ազատ ժամե-

թին սիրել է խաղալ իր տարեկիցների հետ: Մերքայի մանուկների շրջանում ամենատարածված խաղը եղել է պատերազմը: Տղաները պետք է իրենց պատրաստեին հասուն կյանքի համար, ուստի այդ խաղը մեծերի կողմից խրախուսվել է:

Մուհամմադը վաղ մանկության տարիներից դրսեւրել է աշխույժ հետաքրքրասիրություն, սիրել է ներկա լինել մեծերի խոսակցություններին, տարբեր հարցերի վերաբերյալ քննարկումներին և այլն: Իր հորեղբորը օգնելով առևտրական գործերի մեջ, երեխան շատ արագ ձեռք էր բերում նաև առևտրական ունակություններ:

Չնայած իր հորեղբոր ընտանիքի անդամների չերմ վերաբերմունքին դեպի մանուկը, ավելի ուշ նրան տրված այն հարցին, թե ինչպիսին է եղել նրա մանկությունը, Մուհամմադը միանշանակ պատասխանել է. «Ես որք էի, և դրանով ամեն ինչ ասված ե»:

Մանուկ Մուհամմադի մոտ առկա է եղել անզուսազ հետաքրքրություն դեպի հեռավոր եզերքները և նա միշտ խնդրել է հորեղբորը իր առևտրական գործերով ճանապարհորդությունների ժամանակ իրեն վերցնել հետը: Սակայն հորեղբայրը մշտապես մերժել է, պատճառաբանելով, որ անջուր անապատներով, կիզիչ արևի տակ ճանապարհորդությունը երեխաների համար չէ: Վերջապես, եթիւ Մուհամմադը 12 տարեկան էր, Արու Թալիբը համաձայնվել է նրան իր հետ վերցնել Սիրիա կատարած իր ճամփորդության ժամանակ: Ուղտերի քարավանը օրեկան կտրում անցնում էր 30-40 կիլոմետր ճանապարհ և մինչև Սիրիա ուղևորությունը տեսել է մոտ երկու ամիս:

Անկասկած այդ ճանապարհորդությունը վերին աստիճանի տպավորիչ է եղել երեխայի համար: Նա ոչ միայն տեսնում է հայունների երկրի բնությունը, այլև ծանոթանում նրա բնակչության, ինչ-

պես նաև հարևան երկրների մարդկանց կյանքի պայմանների հետ: Ավանդության համաձայն, Սիրիայի Բուստ քաղաքում Սուհամմադը հանդիպում է Բահիրա անունով մի քրիստոնյա ճգնավորի հետ, որը հանձինս պատահի Սուհամմադի գուշակում է ապագա մարզարեի երևան զալը: Արաբական վարկածի համաձայն ճգնավորի ազգությունն անհայտ է: Մեկ այլ վարկածի համաձայն, նա եղել է ասորի, հետևելով քրիստոնեության նեստորական ուղղությանը: Շրջանառվել է նաև մի վարկած, ըստ որի ճգնավորը հայ է եղել: Այս վարկածին հանդիպում ենք հայ մատենագրության մեջ (Կիրակոս Գանձակեցու, Մովսես Կաղանկատվացու, Թովմա Արծրունու և Անանուն կոչվող պատմիչի գործերում):

14 տարեկան հասակում 584 թ. Սուհամմադը առաջին անգամ դառնում է պատերազմի մասնակից: Հայտարարված սրբազն ամիսների ժամանակ, երբ արգելված էր պատերազմներ մղելը, կինանա ցեղը, խախտելով այդ օրենքը, հարձակում է գործում Եմենից դեպի Եփրատ գետի ափերը ուղևորվող քարավանի վրա, որի անվտանգությունն ապահովելու համար ուղեկցում էին Քայս այլան ցեղի մարդիկ: Կուրայշիները, որոնք հանդիսանում էին կինան ցեղի հավատարիմ դաշնակիցները, անմիջապես հանդես են գալիս զորակցելով նրանց: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Թայիֆի և Մեքքայի միջև ընկած մի օազիսի մոտ: Այդ ընդհարման ժամանակ Սուհամմադը լոկ հանդիսանում էր իր հորեղբոր զինակիրը և նրա զիսավոր պարտականությունն էր հավաքել նետերը, և տալ հորեղբորը: Դրանով հանդերձ, նա ականատես է լինում արյունոտ ու կատաղի մի ճակատամարտի, որն անկատակած, մեծապես ազդելու էր նրա ողջ աշխարհայացքի վրա: Ճակատամարտը տևել է մի ամրող օր և ավարտվել մեքքացիների հաղ-

բանակով: Ըստմավարը տեղնուտեղը բաժանվել է հաղթողների միջև, իսկ գերիներին տարել են Մեքքա, սպասելով, որ նրանց ազատության համար պարտվածները կվճարեն փրկազին: Մի քանի օր անց եմենցիների հետ կնքվեց պայմանագիր, որն արգելում էր նրանց անցումը Կայս Այլան ցեղի տարածքով, իսկ նրանք ստորագրեցին համաձայնագիր Մեքքայի հետ համագործակցելու վերաբերյալ: Դրանից հետո մեքքացիները կատարելապես մենաշնորհացրին առևտուրն Իրաքի հետ:

Այդ պայմանագիրը հետազայում մեծ դեր էր կը խաղալու Մուհամմադի կյանքում:

590 թ. քսանամյա Սուհամմադը մասնակից է դառնում նաև Ուկկազա վայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտին և Խիլմ ալ-Ֆուդուլ ցեղի հետ հաշիմիների կնքած դաշինքին:

Քսան տարեկան դառնալուց հետո Սուհամմադը սկսում է աշխատել որպես առևտրական քարավաններին ուղեկցող: Քարավանատեր-վաճառականները նրան հաճույքով վերցնում էին աշխատանքի, քանի որ առևտրի և դրա հետ կապված բոլոր բնագավառների վերաբերյալ նա արդեն կուտակել էր բավականին մեծ փորձ: Բացի այդ, տարիների ընթացքում նա ձեռք էր բերել անբասիր վարք ունեցող և կարգապահ մարդու համբավ: Նոյնիսկ նրան կնքել էին «Ճշմարտասեր», «Վստահության արժանի» («ալ-ասմին») մակողիրները:

Հասունության տարիքի հասած Սուհամմադը որոշում է ամուսնանալ և ընտանիք կազմել: Բեղլինական հասարակության մեջ լայնորեն ընդունված էին ազգականների միջև ամուսնությունները: Ուստի նա խնդրում է իր հորեղբոր՝ Աբու Թալիբի աղջկա՝ Ումմ Հանիի ձեռքը, սակայն ստանում է մերժում: 595 թ. այդ ընդունակ ու ազնիվ երիտասարդի վրա ուշադրություն է դարձ-

նում եռանդուն, խելացի, գործունյա և հարուստ մի այրի կին՝ Խաղիշա բինտ Խուվայլիդը (Խուվայլիդի աղջիկ Խաղիշան), որը զբաղվում էր Սիրիայի հետ քարավանային առևտրով և սեփական առևտրական տան դեկավարն էր: Կորցնելով իր երկու ամուսիններին, նա հարկադրված էր իր առևտրական գործերը առաջ տանելու համար իր մոտ ծառայության վերցնել գիտակ ու ձեռներեց գործավարների ու վաճառականների:

Իր ստրուկ Մայսուրի միջոցով Խաղիշան Մուհամմադին առաջարկում է ապրանքներով թեռնավորված իր քարավանը տանել Սիրիա և այնտեղ գնելով հունական ու պարսկական ապրանքներ, հետ վերադառնալ: Մուհամմադը տալիս է իր համաձայնությունը և իր կյանքում երկրորդ անգամ քարավանով մեկնում Սիրիա: Զեռնտու գներով վաճառելով Խաղիշայի ապրանքները, նա այնուհետև գնում է իրեն հանձնարարված ապրանքները և հետ վերադառնում Մերքա:

Մեկ ամիս շարունակ Սիրիայում մնալը վերին աստիճանի հետաքրքիր ու օգտակար էր Մուհամմադի համար: Այնտեղ թեև ինքը ճշտիվ կատարում էր կուրայշ ցեղի դավանած բոլոր կրոնական ծիսակատարությունները, սակայն արդեն վաղուց իրեն համարում էր հանիֆների ուսմունքի հետևորդ: Սիրիայում Մուհամմադին հիացմունք էր պատճառել հանիֆների բարեկեցիկ և մարդակենցաղ կյանքը, նրանց շեշտված արժանապատվության զգացումը: Մտորելով իր տեսածների մասին, Մուհամմադը հանիֆների բարեկեցիկ կյանքը համեմատում էր իր ցեղի մարդկանց ապրելակերպի ու կենցաղի հետ, հանգելով այն համոզման, որ այդ ամենի պատճառը հանիֆների կողմից միաստվածությանը հետեւն է:

Նոր տպավորություններով ու մտքերով հարստացած, Սուհամմադը վերադառնում է Մերքա և Խաղիջային ներկայացնում հաշվետվություն իր կատարած աշխատանքի մասին, միաժամանակ նրան հանձնելով իր հետ բերած ապրանքը: Քանի որ այն բարձր որակի էր, Մերքայում վաճառվում է բարձր գներով: Սիանգամայն զոհ իր աշխատակցի կատարած զործից, Խաղիջան երան վճարում է կրկնակի անգամ ավել, քան նախատեսված էր պայմանավորվածությամբ: Դրանից հետո նա մշտապես Սուհամմադին հանձնարարում էր վարել իր գործերը:

Որքան շատ էր Խաղիջան շփում իր երիտասարդ աշխատակցի հետ, այնքան ավելի էր նա դուր զալիս իրեն: Նրա ազնվությունը, աշխատասիրությունը, խելացիությունը և առևտրական տաղանդը ուղղակի հմայել էին այդ կնոջը: Մտորելով իր կյանքի հետագա ընթացքի մասին, ի վերջո Խաղիջան հանգում է այն եզրակացության, որ Սուհամմադը կարող է լինել ոչ միայն իր առևտրական գործակատարը, այլև հավատարիմ ամուսինը: Իր ապագա կողակցի աղքատությունը չէր մտահոգում նրան, քանի որ ինքը չափազանց հարուստ էր: Նրա կարծիքով Սուհամմադի աղքատությունը հենց նրա առավելությունն էր այն առուսով, որ նա իրենից մշտապես կգտնվեր կախման մեջ և չէր ամուսնանա ուրիշ կանանց հետ: Դժվար է ասել, թե Խաղիջայի որոշումը կառուցված էր նմանատիպ հաշիվների վրա, թե նա անկեղծորեն ու անշահախնդիր կերպով սիրահարվել էր Սուհամմադին: Բոլոր դեպքերում, երբ Խաղիջան իր ձեռքն առաջարկեց նրան, վերջինս առանց որևէ երկմտանքի ընդունեց այն: Այսպիսով 25-ամյա Սուհամմադը ամուսնանում է իրենից 15 տարի մեծ կնոջ հետ: Զեայած տարիքային այդ տարբերությանը, դա երջանիկ ամուսնություն էր: Ավանդության համաձայն, Սուհամմադը իր ողջ կյանքի

ընթացքում պահպանել է իր կապվածությունը Խաղիջայի հետ, հավատարիմ է մսացել նրան: Նրա կենդանության օրոր չի ամուսնացել ուրիշ կանանց հետ, իսկ նրա մահվանից հետո ի հիշատակ նրա՝ ժամանակ առ ժամանակ կազմակերպել է հյուրասիրություն աղքատների համար: Դա անշուշտ, վկայում է այն մասին, որ այդ կինը մեծ հեղինակություն էր վայելում իր ամուսնու մոտ: Իր հերթին Խաղիջան, որը նախկինում իրեն միշտ զգացել է որպես ընտանիքի զլիավոր, հեզ ու հնազանդ է եղել ամուսնուն:

Չույցերի ամուսնությունը տեղի ունեցավ 595 թ.: Հարուստ Խաղիջայի հետ ամուսնությունը Մուհամմադին տվեց նյութական ապահովություն, նրան ազատելով մի կտոր հաց վաստակելու տանջալից հոգսերից, հետևաբար, նաև լայն հնարավորություններ մտավոր զարգացման համար:

Ծնայած իր առաջացած տարիքին, Խաղիջան Մուհամմադին պարզեց մի քանի զավակներ: Առաջինը ծնվեց մի տղա, որին տվեցին ալ-Խասիմ անունը: Սակայն ծնողների ուրախությանը վիճակված չէր երկար տևելու. երկու տարեկան հասակում որդին մահացավ: Այնուհետև Խաղիջան իրար հետևից ծնեց չորս աղջկ-ների՝ Զայնաբին, Շուրայային, Ռում-Քուլսումին և Ֆարիմային: Վերջինս հետազայում դարձավ մարզարեի սերնդի մեծարիվ ճյուղավորումների հիմնադիր և միաժամանակ Մուհամմադի ցեղի միակ շարունակողը:

Խաղիջան կրկին երջանկացրեց Մուհամմադին, ծնելով արու զավակ, որին ի պատիվ պապի (Մուհամմադի հոր) անվանկոչեցին Աբդալլահ: Սակայն վերջինս ապրեց ավելի քիչ, քան նախորդ տղան: Երբորդ որդին, որի անունը դրեցին աթ-Թահիր, իր մահկանացուն կնքեց ծնունդից շատ քիչ ժամանակ անց: Դրանից հետո Խաղիջան այլև զավակներ չունեցավ:

Ամբողջ կյանքում իսլամի մարգարեն տվայտանքներ է ունեցել արու զավակ չունենալու պատճառով: Արաբների մոտ մեծ ամոթանք էր արու զավակ ժառանգորդ չունենալը: Սովորույթը թույլ էր տալիս ունենալու անսահմանափակ թվով կանայք: Առավել ևս, որ հարուստ մարդը հեշտությամբ կարող էր գնել երիտասարդ գեղեցիկ ստրկուիու: Սակայն քանի որ Մուհամմադը նվիրական կերպով կապված էր Խաղիջայի հետ, նա չգնաց այդ քայլին: Փոխանակ ուրիշ կին վերցնելու, նա որոշեց որդեգրել երկու տղաների, իր հորեղբայր Աբու Թալիֆի որդի Ալիին և Խաղիջայի կողմից իրեն նվիրած ստրուկ Զայդին:

Ավանդության համաձայն, Մուհամմադը ոչ միայն հավատարիմ ամուսին էր, խոհական անձնավորություն, կարեկցող ու աղքատախնամ, այլև իր կյանքում ու կենցաղում հասարակ մարդ: «Ահա այսպիսի մի անշուր արտաքինի մեջ էր թաքնված այն քնական հանճարը, որը բարձրացրեց նրան արաբական առօրեության մակերևույթից և կանգնեցրեց համամարդկային մեծությունների շարքում», - գրում է Լեռն:

ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՐԳԱՐԵՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԽՍԼԱՍԻ ԾԱԳՈՒՄԸ

Ըստանեկան երջանկությունը չէր խանգարում Մուհամմադին զբաղվելու կրոնական հայեցողություններով: Եթե հավատալու լինենք ավանդությանը, ապա նա Մեքքայի շրջակայրում, հայուկապես Հիրա սարի քարանձավում, առանձնանալով ու մեկուսանալով, խորասուզվում էր մտքերի մեջ և մտորում իրեն հուզող հարցերի մասին: Այդ ստվորությունը նրա մոտ հայտնվել էր կամ տարերային կերպով, կամ քրիստոնյա ճգնավորների ազդեցության ներքո: Ժամանակ առ ժամանակ Խաղջան ևս գնում էր նրա հետ և նրանք առանձնանալով՝ աղոթում էին միասին: «Միշտ մտածող, զգայուն, տպավորվող մի բնավորություն,- զրում է Լեռն,- նա որոնում էր առանձնություն և քաշվելով իր քաղաքի մոտ գտնվող լեռները, օրերով անձնատուր էր լինում բնության ազդած տպավորություններին, լոիկ մտածողություններին, անհանգիստ որոնումներին: Այդ ժամանակներում, այն միջավայրում այդպիսի մի բնավորություն կարող էր լոկ կրոնական կերպարանավորումների մեջ գտնել իր որոնածը»:

Մուհամմադը շատ ժամանակ էր հատկացնում ինքնահայեցմանը (մեղիտացիային), ինքնասենումանը և կրոնական ներշնչանքին: Միաժամանակ լինելով դեպի միստիցիզմը հակում ունեցող մարդ, նա մեծ նշանակություն էր տալիս իր երազներին: Իր տեսած երազների ու նրանց պարունակած խորհրդի մասին Մուհամմադը կիսվում էր Խաղջայի և առանձնապես նրա հորեղորդի Վարաքա իրն Նաուֆայի հետ, որը հարում էր հանիֆների կամ «աստվածորոնողների» աղանդին: Ըստ երևոյթին հավատակամ «աստվածորոնողների» աղանդին:

լով իր առանձնահատուկ առաքելությանը և ի վերուստ իրեն սահմանված կոչմանը, Սուհամմադն աշխատում էր հասկանալ, թե ինչ են ուզում իրեն ասել աստվածները իր քնի ժամանակ:

Համաձայն ավանդության Սուհամմադը սիրում էր կրոնական հարցերի վերաբերյալ զրուցել իրեաների և քրիստոնյաների հետ: Այդ զրուցների շնորհիվ նա ընդհանուր բնույթի տեղեկություններ էր քաղում հուդայականության և քրիստոնեության մասին: Ակզրնական շրջանում նա հստակորեն չի պատկերացրել, թե ինչ տարբերություններ կան այդ երկու կրոնների միջև: Սակայն իր համար կարևորն այն էր, որ նրանցում առկա էր իրեն ոգեշնչող միաստվածության զաղափարը և այն, որ նրանց հետեւրդները մարգարեների միջոցով աստծուց ստացել են հայտնություններ: Կասկածից վեր է, որ քրիստոնեության ու հուդայականության մասին տեղեկությունները Սուհամմադը ձեռք է բերել ոչ թե զրեթից, այլ բանավոր զրուցների միջոցով:

Իր ավագ որդու մահվանից հետո Սուհամմադը ունենում էր ընկնավորության նոպաներ, որոնց ժամանակ նրա մարմինը դողում էր և դեմքը գունատվում ու դալկանում: Դրանից հետո նրան համակում էր անասելի տիբրություն և չեր ցանկանում ոչ որի հետ շփվել: Չնայած Խաղիջայի համար պնդումներին, նա չցանկացավ դիմել ոչ բժիշկներին և ոչ էլ կախարդությամբ զբաղվող մարդկանց, համարելով, որ իր հետ տեղի ունեցածը ոչ թե հիվանդություն է, այլ ինչ որ այլ, մեծ բան, որն ինքը դեռևս չի կարող հասկանալ: Միառժամանակ անց նա սկսեց ասել, որ զիշերային իր տեսիքներից զատ ցերեկը ևս իր առջև հայտնվում է աստծո կողմից ուղարկված ինչ որ «ողի»:

Սուհամմադը հաճախ ջերմեռանդորեն աղոթում էր, դրա համար օգտագործելով իր տան դատարկ սենյակը, մի բան, որ

այդ ժամանակներում դիտվում էր որպես արտառոց ու տարօրինակ: Այն ժամանակ աղոթում էին աստծոն մարմնավորող որևէ կուռքի առջև: Սակայն Սուհամմադը զարմանք արտահայտողներին ասում էր, որ աստված ամենուրեք է, ուստի կարևոր չէ, թե որտեղ ես աղոթում և աղոթքի ժամանակ որ կողմն ես շրջում դեմք:

Մի քանի տարվա հոգեկան խոռվից հետո, երբ նա 40 տարեկան էր, 610 թ. Ռամադան ամսի 24-ի գիշերը, Հիրա լեռան (այդ լեռը կամ բլուրը, որը գտնվում էր Մեքքայի հյուսիս-արևելյանում, կոչվում էր նաև Զարալ նուր (Լույսի լեռ) քարանձավում քնած ժամանակ նրա առջև հայտնվում է լույսերի մեջ շոշողացող, ամպերի մեջ ճախրող և մետաքսյա կտորի մեջ փաթաթված մի եակ, ձեռքին ունենալով մի գիրը.

- Կարդա՝, հրամայում է այդ ոգին: Ես կարդալ չգիտեմ, պատասխանում է Սուհամմադը: Կարդա հանուն քո Տիրոջ, որ ստեղծել է մարդուն քանձրացած արյունից, կարդա՝ և քո Տերը զքառատ է, որ ստվորեցրել է մարդուն այն, ինչ որ չգիտեր (96:1-5), - ասում է: ոգին և հեռանում:

Այնուամենայնիվ այդ տեսիլքը հոգեկան խոռվը է պատճառում Սուհամմադին և նա այդ մասին պատմում է Խադիջային: Նա իր տուն է հրավիրում նաև Վարաքա իրն Նաուֆալին և խնդրում նրան կարծիք հայտնել տեսիլքի վերաբերյալ: «Եթինս լսելով եղելությունը ասում է. «Եթե դա ճիշտ է, ապա դա նշանակում է, որ Սուհամմադի վրա իջել է մեծ օրենքը, որը ժամանակին իջել էր Սովեսի վրա: Հետևաբար տեսիլքի խորհուրդն այն է, որ Սուհամմադը մեր ժողովրդի մարզարևն է»:

Խադիջայի ներշնչումների ներքո Սուհամմադը աստիճանաբար հանգստանում է և վերագտնում իր հոգեկան անդորրը: Դրանից հետո նա տևական ժամանակի ընթացքում այլևս չէր ստա-

նում որևէ հայտնություն, որը նրա մոտ առաջ է բերում խորը տվյալտանքներ և կասկածներ իր առաքելության և ի վերուստ իր համար սահմանված կոչման վերաբերյալ: Սակայն երկու տարի անց ողին կրկին հառնում է Մուհամմադի առջև և արտաքերում հետևյալ խոսքերը. «Դու, Մուհամմադ, Աստծո մարզարեն ես (օասուլ), իսկ ես նրա պատգամաբեր Զիբրիլն եմ (Զիբրայելը, այսինքն Գաբրիել հրեշտակապետը – Վ. Բ.):

Շուտով Մուհամմադի մոտ առաջ է գալիս այն համոզումը, որ ինքն ընտրված է մարզարե լինելու, այսինքն Աստծո ավետարեր, մի միջնորդ, որի միջոցով Աստված ցանկանում է մարդկանց փոխանցել իր ցանկությունները: Իր հայտնությունների մասին երկար ժամանակ Մուհամմադը ոչ ոքի չէր պատմում, բացի Խաղաղայից և նրա ազգական Վարարայից: Խաղաղան եղել է առաջինը, որ հավատացել է Մուհամմադի մարզարեական առաքելությանը և ընդունել է նրա ստեղծած նոր կրոնը՝ իսլամը: Այդ կրոնի մեջ Աստված և նրա մարզարեն անխօնիորեն կապված են միմյանց: Եթե մեկը հավատում է Աստծուն, ապա պետք է ընդունի նաև, որ Մուհամմադը նրա մարզարեն է:

Խաղաղայից հետո նոր կրոնն ընդունեց Մուհամմադի հորեղբորորդի, նրա որդեգիր զավակ Ալին, որն այդ ժամանակ բոլորել էր իր կյանքի 15 տարին: Նրանից հետո նոր հավատն ընդունեց Մուհամմադի երկրորդ որդեգիր զավակ Զայդը (Զայդ իբն Հարիս), որն ինչպես նշվել է վերևում, նախկինում եղել էր Խաղաղայի ստրուկը, որին հետագայում նա նվիրել են Մուհամմադին, իսկ վերջինս նրան ազտելով ստրկությունից որդեգրել էր: Խալամն ընդունեցին նաև Մուհամմադի աղջիկները՝ Ռուբայան, Ռում Քուլսումը և Ֆաթիման:

Չնայած այն հանգամանքին, որ մարզարեի հարազատները նոր կրոնն ընդունում էին գաղտնապես, սակայն այդ կրոնի մասին սկսում էին իմանալ ավելի ու ավելի շատ մարդիկ: Մի անգամ Մուհամմադի հորեղբայր Աբրու Թալիբը Մերքայից դուրս անապատում գտնվելիս պատահմամբ հանդիպում է իր որդուն և եղբարորդուն, որոնք բարձրածայն աղոթում էին: Զարմացած նա հարցնում է, թե այդ ամայի անապատային վայրում նրանք ում են երկրպագում: Մուհամմադը ազնվորեն պատմում է ամեն ինչ և կրոստ կերպով սկսում է համոզել հաշիմյանների տոհմի առաջնորդին ընդունելու միասնական Աստծուն: Հորեղբայրը պատասխանում է, որ ինքը պատրաստ չէ հրաժարվելու իրենց հայրերի կրոնից, բայց և միաժամանակ ավելացնում է, որ ոչ մի վատ բան չի տեսնում այդ նոր կրոնի մեջ և չի արգելի իր որդուն հետևել նոր մարզարեին: Միաժամանակ գիտակցելով, որ նոր կրոնը անխուսափելի իրունք գտնելու է անհաշտ հակառակորդներ, խոստանում է, որ եթե հարցեր առաջանան, ապա հաշիմյանները պատրաստ են թիկունք կանգնելու և պաշտպանելու Մուհամմադին:

Ստանալով աջակցության ու պաշտպանության երաշխիք, Մուհամմադը որոշում է հետևելով ի վերուստ տրված հրամանին քարոզել երկնքի պատզամները: Այդ քարոզները ունկնդիրներին ներկայացվում էին որպես ոգու միջոցով աստծուց ստացված «հայտնություններ»: Այդ քարոզի հետևանքով մի շաբթ անձինք ընդունեցին նոր հավատը: Դրանցից մեկն էր Թայմ կոչված տոհմի առաջնորդ Աբրու Բարբը: Նա ավանդությունների և տոհմաբանության հիանալի գիտակ էր, սիրում էր խելացի գրույցները և հայտնի էր որպես անբասիր վարքի տեր ու ազնիվ վաճառական: Ոգեշնչվելով Մուհամմադի քարոզներով, Աբրու Բարբը սկսեց ամեն կերպ աջակցել նրան, իր հերթին խսլամ քարոզելով իր ընկերների և բո-

լոր նրանց շրջանում, ովքեր հարգանքով էին վերաբերվում իր նկատմամբ, կամ ենթարկվում էին իրեն: Շուտով որոշեց իսլամն ընդունել նաև Արու Բաքրի ընկերը՝ Օսման իրն Աֆֆանը, որն Արդ Շամս հզոր տոհմից էր: Իսլամն ընդունեցին նաև Ասաղ տոհմից Ազ Զուբեյրը, Զուհրա տոհմից ազդեցիկ Արդ ար-Շահման իրն Առիքը, որն առևտրի միջոցով կուտակել էր խոշոր հարստություն, Սա՛ադ իրն Վաքքասը (հետազայում հայտնի զորահրամանատար, որը 637 թ. Կաղիսիի ճակատամարտում հաղթանակ էր տարել պարսիկների նկատմամբ): Վաղ շրջանում իսլամն ընդունածների քվում էր նաև հովիվ Աբդալլահ իրն Մասուդը, որը նախկինում եղել էր ստրուկ, իսկ հետազայում դարձավ Մուհամմադի ամենաաչքի ընկենող զինակիցներից մեկը: Տեղեկանալով այն մասին, որ հիշյալ մարդիկ ընդունել են ինչ որ նոր կրոն, Մեքքայի վերնախավը հայտարարեց, որ նրանք բոլորը խելագարվել են:

Մեքքայի ազնվականական վերնախավը, որը բաղկացած էր վաճառականներից, վաշխառուներից ու ստրկատերերից, Մուհամմադի քարոզչության նկատմամբ վերաբերվեց բացահայտ թշնամանքով: Այդ թշնամանքի պատճառը լոկ կրոնական մոլեունանդությունը չէր: Նոր մարզարի քարոզչությունը, որն ուրդված էր կոայաշտության դեմ, նրանց համար թվում էր վտանգավոր Մեքքայի առևտրական ու քաղաքական շահերի համար: Այդ քարոզչությունը կարող էր հանգեցնել Քաքքայի կուլտի անկմանը, որն անխուսափելիորեն առաջ կրերեր ոչ միայն ուխտագնացության կտրուկ նվազում, այլև Մեքքայի առևտրական կապերի թուլացում: Իսկ ամենակարևորը այդ սրբավայրի քաղաքական կշռի անկում:

Ահա թե ինչու, կուրայշ ցեղի վերնախավը Մուհամմադի քարոզչությունը համարեց իր շահերի համար ծայրահեղ վտան-

զանոր և թունոտ ատելությամբ լցվեց նրա հանդեպ: Սակայն նրանք չէին համարձակվում սպանել նրան, քանի որ դա անխուսափելիորեն առաջ կբերեր հաշիմյան տոհմի կողմից արյան վրիժարության իրագործում: Արաբական հին սովորութային իրավունքի համաձայն, տոհմի յուրաքանչյուր անդամ պարտավոր էր պաշտպանել իր տոհմը, իսկ տոհմը իր հերթին իր յուրաքանչյուր անդամին, թեկուզ նա լիներ ոչ իրավացի կամ մեղավոր: Բայց և առիթը բաց չէին թողնում հալածանքների ենթարկելու համար Մուհամմադին, նրան ենթարկելու ծաղր ու ծանակի և այլն:

Թեև իսլամը արդեն դուրս էր եկել Մուհամմադի տան շրջանակներից, բայց նրա քարոզչությունը շարունակում էր կատարվել գաղտնիության պայմաններում: Նոր մարգարեի հետևորդներ ձեռք բերելու հունձը, սակայն, այնքան էլ մեծ չէր: Երեք տարվա ընթացքում նոր կրոնի հետևորդների թիվը Մեքքայում ավելացավ ընդամենը 50 մարդով: Հիմնականում դրանք մարդիկ էին, որոնք կյանքում չէին կարողացել հասնել հաջողությունների, նյութապես ապահովված չէին, հետևաբար և կորցնելու առանձնապես բան չունեին: Իսլամն ընդունողների մեջ կային նաև ստրուկներ, որոնք հանձինս Մուհամմադի տեսնում էին անարդարության դեմ մարտնչողի և իրենց պաշտպանի: Մարգարեի կողմից քարոզվող «Ահեղ դատաստանի» օրվա վերաբերյալ սպառնալից նախազգուշացումները ստրուկների կողմից ընկալվում և նրանց երեսակայության մեջ ուրվագծվում էր որպես իրենց հարստահարող ու ճնշող տերերի նկատմամբ արդար հատուցման ու պատժի օր:

Ի՞նչն էր իրապուրում մարդկանց հրաժարվելու իրենց հայրերի ու նախնիների դավանանքից և ընդունելու նոր կրոնը: Մեր օրերում, հետին թվով իհարկե դժվար է հստակ պատասխան տալ այդ հարցին: Սակայն միանգամայն հավաստի է, որ Մուհամմադը

բոլոր տառապյալներին, ընշագուրկներին, կյանքում մերժվածներին, անհաջողակներին և առհասարակ բոլորին, բոլորին խոստանում էր մի ապահով ու շողջողուն ոսկեղար, մի աշխարհ, որտեղ բոլորը հավասար են, բոլոր մարդիկ պատրաստակամ են աշխակցելու և օգնելու միմյանց և որտեղ բոլորը Աստծո առջև կրում են հավասար պատասխանատվություն:

Նա ասում էր, որ չի կարող ճշմարիտ հավատացյալ լինել նա, ով չի սիրում իր եղբայր մահմեդականին և պատրաստակամ չէ նրան հասնելու օգնության, թե Աստծուն երկրպագելուց հետո ամենալավագույն գործը միմյանց սիրելն է: Մարդը չի կարող իրականացնել իր պարտականություններն Աստծո առջև, քանի դեռ նա չի սիրում իր մերձավորին: Սուհամմադն ասում էր, որ սերը սկսվիմ է ընտանիքից, որտեղ ամուսինը սիրում է իր կնոջը և հոգ է տանում նրա նկատմամբ, իսկ նա բարեպաշտ է և նվիրված իր ամուսնուն: Ծնողները պետք է սիրեն իրենց զավակներին, իսկ զավակները՝ ծնողներին: Որ ընտանիքում երեխաները նույնիսկ մտովի, իրավունք չունեն հանդիմանելու և կշտամբելու իրենց ծնողներին՝ նրանց այս կամ այն արարքի համար:

Սուհամմադը խոստանում էր իր հետևորդների կյանքը առավելագույնս դարձնել երջանիկ ու հանգստավետ հենց այս կյանքում, միաժամանակ «արդարներին» խոստանալով «հավետ երանություն» հանդերձյալ կյանքում: Նա համոզում էր, որ նոր կրոնը կոչված է միավորել մարդկանց, այլ ոչ թե նրանց բաժանել իրարից: Նա դատապարտում էր մարդկային անտեղի դաժանությունը: Օրինակ, նա խստիվ մերժում էր նորածին աղջիկներին սպանելու բռչվոր-արարների մոտ տարածված դաժան սովորությը: Իսկապես, ընդամենը մի քանի տասնամյակ հետո այդ բարոսական սովորությը գործնականում մոռացության մատնվեց:

Մարգարեն հանդես էր գալիս նաև արյան վրիժառության սովորույթի դեմ, արգելելով սպանել «ամեն մի կենդանի արարածի, որին աստված թույլ չի տվել սպանելու, ի բացառյալ այն դեպքերի, եթե դա տեղի է ունենում համաձայն օրենքի ու իրավունքի»:

Մուհամմադը չեր դատապարտում ստրկատիրությունը: Նա գտնում էր, որ պատերազմի գերիներին ստրկացնելը օրինական է: Սակայն ստրկատերերին խորհուրդ էր տալիս մեղմ վերաբերմունք դրսենք հանդեպ նրանց, «որոնց տիրել է ձեր բազուկը»: Նա ասում էր, որ մուտքմանը չի կարող մեկ այլ մուտքմանի մոտ ստրկական վիճակում լինել, իսկ այլ դավանանքի պատկանող իրենց ստրուկներին ազատություն պարզենելը նա համարում էր աստվածահածո գործ, քանի որ բոլոր մարդիկ, եթե նույնիսկ նրանք այլազգի են և այլազավան, Աստծո արարշագործության արդյունք են: Ուրիշներին օրինակ ծառայելու համար Մուհամմադը ազատություն շնորհեց իր ստրուկներին, որոնք հետազայում որպես ազատ մարդիկ ընդունեցին իսլամը և դարձան իրենց նախկին տիրոջ հավատարիմ ու անդավաճան կողմնակիցները:

Իր ժամանակակիցներին, որոնք սիրում էին աշխարհիկ բարիքները, Մուհամմադը սպառնում էր ահեղ պատիճներով հանդերձալ աշխարհում: Նա ասում էր, որ վերջին դատաստանը անխուսափելի է: Առհասարակ միասնական արարչի և ահեղ դատաստանի զաղափարները հանդիսանում էին Մուհամմադի ուսմունքի անկյունաբարը: Ալլահի անունից Ղուրանում ասվում էր, որ «մենք մարդս ստեղծել ենք տառապանքի համար» (90:4): Իր «հայտնություններում» նա խարազանում էր «թերակշռողներին» («ալ-մութաֆֆիֆին»), այսինքն Մերքայի վաճառականներին: «Կայ ծուռ չափողներին, որ իրանց համար չափելիս կատարեալ չափ են պահանջում, բայց եթք ուրիշների համար են չափում կամ

կշուում, պակասեցնում են» (83:1-3): Դատապարտում էր հարստությամբ տարվելը, հարստությունը բազմապատկելու մարմաքը (արար. «թաքասուր»), քանի որ այն մարդկանց ստիպում է մոռանալ աստծուն: «Վայ ամեն մի բամբասող հայիոյողի, որ ստացածք է հաւաքում և հաշիւներ անում, նա կարծում է, թէ նրա ստացւածքը նրան անմահ կը շինեն», - ասվում է Ղուրանում (104:1-3): «Իսկ երբ փողի սաստիկ հնչումը կը գայ, նույն օրը մարդս իր եղբօրիցը կը փախչէ, նաև իր մօրիցը եւ հօրիցը, ու իր կնկանիցը և որդկանցիցը» (80:33-36): Նա նաև ասում էր, որ ինչպես Մերքայում, այնպես էլ մյուս քաղաքներում հարուստ ու ազնվազարմ մարդիկ մեղավորներ են: Ընդ որում, նա դատապարտում էր անազնիվ ճանապարհով ձեռք բերված հարստությունը և ոչ թէ հարստությունն ընդհանրապես: Մուհամմադի քարոզները անհասկանալի էին մնում կուապաշտ հեթանոսների համար: «Եւ երբ նրանց ասում է, թէ «հաւատացէք այն քանին որ Աստուած իշեցրել է» ասում են «մենք հաւատում ենք այն քանին, որ Աստուած մեզ համար է իշեցրել» եւ նրանից զատ մնացեալն ուրանում են» (-Ղուրան, 2:85):

Ի՞նչ է անհրաժեշտ, որ մարդն ապահովի իր փրկությունը. երկրպագել միայն միասնական աստծուն, այն էլ անկեղծորեն ու ջերմեռանդորեն, աղոթել և տալ ողորմություն: Ով առատաձեռն է ու աստվածավախ, նրա համար կբացվի հեշտ ճանապարհ դեպի արքայություն:

Մուհամմադի կողմից առաջ քաշված ողորմություն տալու սկզբունքը կոչված էր համահարթել նոր-նոր ձեավորվող մահմեդական համայնքում սոցիալական անհավասարությունը: Ով չի տալիս ողորմություն, նա չի կարող համարվել մահմեդական, այսպիսին էր մարզարեի սկզբունքը: Ողորմության չափը կանո-

նակարգված չեր, սակայն ինքը՝ Մուհամմադը օրինակ էր ցույց տալիս, իր և Խաղիջայի ունեցվածքից բաժին հանելով համայնքի աղքատ մարդկանց: Դրա հետևանքով նրա ունեցվածքը կարձ ժամանակամիջոցի ընթացքում հալվեց և ինքը ևս ըստ էության դարձավ համայնքի աղքատ անդամներից մեկը: Ըստ որում, ողորմությունը Մուհամմադի կողմից բաժանվում էր հավասար, նա տարբերություն չէր դնում իր ազգականների ու մերձավորների և համայնքի շարքային անդամների միջև:

Քարոզելով չափավորություն և հրաժարում հարստությունից և պերճանքից, միաժամանակ Մուհամմադն ասում էր, որ իշխանությունը գտնվում է «Ճանտ ու դաժան մարդկանց ձեռքերուն»: Աշխարհը, ըստ նրա, շատ ավելի բարդ երևույթ է, քան կարող է թվալ հասարակ մարդկանց. այնտեղ ապրում են ինչպես հրեշտակներ, այնպես էլ դեեր և որպեսզի մարդը հարմարվի այդ աշխարհի հետ, հարկադրված է ընդունել բազում դժվարին որոշումներ: Մուհամմադի բերանով Դուրանում խոսվում է նաև մարդկանց հավասարության մասին. «Ո՛վ հաւատացեալներ, մի ազգ չը պիտի ծաղրէ միւս ազգին, թէեւ ինքը նրանցից լաւ էլ լինի. եւ ոչ էլ մի կնիկ ծաղրէ ուրիշ կնկան թէեւ ինքը նրանցից աւելի լաւ էլ լինի. եւ միմէանց մի՛ բամբասէք եւ իրար մի՛ վատարանէք գէշ մականուններով» (49:11):

Իսլամի մարգարեի բարոզում վերոհիշյալ զաղափարները դյուրությամբ էին ընկալվում Մերքայի բնակչության որոշակի խավերի կողմից, քանի որ այդ ժամանակներում սոցիալական շերտավորումը այդ բաղադրում հասել էր զազաթնակետին և զգացվում էր նոր մարգարեի և նոր հավատի կարիք, որն ի վիճակի լիներ հավասարեցնել բոլորին: Նրա բարոզչությունը հեշտությամբ տեղ էր հասնում մարդկանց մտքերին, քանի որ, ինչպես

նշում է իսլամագետ Գ. Ե. Ֆոն-Գրյունեբաումը, Սուհամմադը խոսում էր ոչ միայն աստծո անունից, այլև արաբների անունից, այլ կերպ ասած նա իր ժողովրդի առջև հանդես էր զայխ որպես հարազատ «արաբական մարզարե»:

Կար նաև հարցի մի այլ կողմ. «Սուհամմադը,- նշում է Լեռն,- ինչպես և յուրաքանչյուր կրոնի հիմնադիր, իմացավ, թե ինչպես պետք է բոի մեջ հավաքել տգետ ու մութ, հետևաբար և վախեցող ու հավատացող զանգվածները»: Դուրանը ապստամբ-ներին, անհնազանդներին սպառնում է գեհենի կրակներով (89:10): «Եւ ով ապստամբի Աստուծոյ եւ նրա մարզարէի դէմ, նրա համար կայ դժոխքի կրակը, որի մեջ կը մնան այդպիսիները յափ-տեան» (72:24):

Իսլամական համայնքը համարյա ամեն օր հերթով հավաքվում էր այս կամ այն անդամի տանը աղոթելու: Սակայն խիտ ընակեցված Մերքայում չափազանց դժվար էր կատարել աղոթքի արարողություններ, առանց կողմնակի մարդկանց կողմից նկատելի դառնալու: Ուստի համայնքը զիշերները գնում էր անապատ առանձնության մեջ հանգիստ աղոթելու: Այդ ընթացքում աստիճանաբար իսլամական համայնքը վերածվում էր կուռ ու համախմբված իսկական եղբայրության: Սակայն չնայած դրան, Սուհամմադն ապրում էր ներքին տագնապ և անհանգստություն: Ըստ երեսութին նրա զյլավոր մտահոգությունն այն էր, որ մուտքամբական համայնքը չէր մեծանում և վտանգ կար, որ նա այդպես էլ կմնար մի աննշան աղանդ, որոնցով լիբն էր շրջապատը: Մերքայի ազնվագարմ ու ազդեցիկ մարդիկ ոչ միայն չեին ու զում ընդունել իսլամը, այլև հակառակ էին այդ նոր կրոնին: Այս ամենը Սուհամմադին պատճառել էր խորը հուսալքություն ու վհատություն: Տանջալից մտորումները և խորը թախիծը նրան

հասցրել էին մինչև հուսահատության եզրը: Ավանդության համաձայն, մարգարեն նույնիսկ սկսում էր խորհրդածել ինքնասպանության մասին: Սակայն թերևս նրան այդ ծայրահեղ քայլից հետ էր պահում այն, որ խոլամը դատապարտում է ինքնասպաններին, ինչպես և այն մարդկանց, ովքեր ընկել են հուսահատության ու վհատության գիրկը:

Մուհամմադի դրության ծանրությունը կայանում էր նրանում, որ հրեշտակի տեսիլքները դադարել էին և ինքը չէր ստանում նոր հայտնություններ իր հետազա անելիքները որոշելու համար: Այլ կերպ ասած, նրա համար ստեղծվել էր մի տեսակ փակուղային վիճակ:

Ընկնելով այս ծանր մտորումների մեջ, Մուհամմադը մենակ գնում էր անապատը և օրեք շարունակ շրջում այնտեղ, չխմանալով, թե այսուհետև ինչ պետք է անի: Հաճախ կանգում էր անդունդների եզրին և մտածում, արդյոք շարժե մեկ թռիչքով մարդել հաշիվները կյանքի հետ:

Պատմվում է, որ մի անգամ, երբ կատարյալ հուսալքության մեջ Մուհամմադը կանգնած էր մի խորը անդունդի եզրին, հայտնվում է Զաքրայիլը և արտաքերում հետևյալ բառերը. «Մի մոռացիր, որ դու Աստծո Մարգարեն ես»: Այդ տեսիլքը օգնեց Մուհամմադին ձերքազատվելու սուր ընկճվածության նոպայից, սակայն դրանից հետո ևս նրա տրամադրության մեջ արմատական փոփխություններ տեղի չունեցան, մանավանդ որ համայնքի անդամների աճի մեջ ոչ մի դրական տեղաշարժ չէր նկատվում:

Մուհամմադը շարունակում էր իր մենավոր բափառումներն անապատում, երբ մի օր, հանկարծ զլուխը բարձրացնելով, չիրա լեռան վրա նկատեց իրեն այցելած հրեշտակին: Նա բազմեց մի հսկայական զահի վրա: Տեսարանը սահմոկեցուցիչ էր:

Հայտնի արևելագետ ակադեմիկոս Վ. Վ. Բարտողյան գտնում է, որ Մուհամմադը իսկապես կարող էր երկնքում տեսնել մի պատկեր, սակայն դա ընդամենք իր իսկ անդրադարձն էր: Գիտության մեջ այդ երևույթը կոչվում է «Բրոկենյան ուրվական»: Այդ երևույթը հաճախ է դիտվում Գերմանիայում Հարց կոչված լեռնային զանգվածում: Օպտիկայի վերաբերյալ բազմաթիվ գրքերում այդ երևույթի վերաբերյալ կան նաև լուսանկարներ, երբ հարյուրապատիկ անգամ մեծացած մարդու ստվերն ընկնում է առավոտյան մշուշի մեջ և որոշակի հեռավորության վրա ձևավորվում է մարդկային կերպարանքով պատկեր:

Հրեշտակի շրանալուն պես Մուհամմադն անմիջապես զնում է տուն, տեսածի մասին պատմում կնոշը և ըստ իր սովորության փաթաթվելով թիկնոցի մեջ լսում է մի ձայն: Այդ ձայնը այնքան հզոր էր, որը կարող էր պատկանել միայն Աստծուն: Զայնը հրամայում է. «Վեր կաց և հանուն քո Տիրոջ համբերիր»:

Մուհամմադը հասկանում է, որ դա փաստորեն հրաման է հրապարակային քարոզ սկսելու համար և որ իրեն հրամայում են դուրս զալ ստվերից դեպի լույս: Քառասուն տարեկան հասակում Մուհամմադը սկիզբ է դնում իր հրապարակային քարոզներին: Մերքայում ընդունված կարգի համաձայն, որեւէ կարևոր իրադարձության դեպքում, որը պահանջում էր քաղաքի բնակիչների միշտամուրյունը, մերքացիներին կարող էր հավաքել ցանկացած մարդ: Օգտվելով այդ կարգից, վաղ առավոտյան Մուհամմադը քարձրացավ Մերքայի կենտրոնում գտնվող աս-Սաֆա բլուրը և հականե-հանվանե թվարկելով բոլոր տոհմերի ներկայացուցիչների անունները, հորդորեց նրանց հավաքվել «Ծողովների տանը»:

Այդ կոչը քաղաքում առաջ բերեց իսկական խուճապ, քանի որ սովորաբար ընդհանուր հավաք էր հայտարարվում քաղաքի

վրա այլ ցեղերի ասպատակության, կամ նման կարգի այլ տհած դեպքերում: Ուստի շատ մերքացիներ հավաքին ներկայացան իրենց զենքերով: Սակայն ի զարմանս բոլորի, Մուհամմադը սկսեց խոսել միասնական աստծո, մահվանից հետո հանդերձալ կյանքի, աղոթելու և բարի գործեր անելու անհրաժեշտության մասին: Նա մերքացիների աստվածներին անվանեց անկենդան կուռքեր, իսկ նրանց, ովքեր երկրպագում են այդ բարե արձաններին՝ խավար ու տգետ մարդիկ:

Մի պահ ժողովների տանը տիրում է բար լուսություն: Նախապես տրամադրված լինելով, որ տեղի է ունեցել ինչ-որ արտասովոր բան, ներկաները ամեն ինչ սպասում էին, բացի կրոնական քարոզից: Բայց երբ վերջում Մուհամմադը հայտարարեց, որ ինքը մարզարե է, աստծո ավետաբերը, ինչպես որ եղել են Եբրահիմը (Աբրահամը), Մուսան (Մովսեսը) և Իսան (Հիսուս Քրիստոսը), ներկաների անհանգստությունն ու տագնապը փոխարինվեց ծիծաղով ու հոհոտցով: Նրանք սկսեցին սուլցներով ու անպատվարեր խոսքերով ծաղրել Մուհամմադին:

Նորընծա մարզարեի հորեղբայր Մուհամմադ Աբու ալ-Ուզգան առաջիններից մեկն էր, որ սկսեց բարձրաձայն հայինյել ու լուսանքներ թափել նրա զլյսին: Մուհամմադը չդադարող աղմուկ-աղաղակի պայմաններում սպառնաց հորեղբորը, որ նրան սպասում են դժոխքի կրակները, իսկ նրա կինը՝ Ումմ Զամիլը փայտեր պետք է դնի կրակների վրա: Հենց այդ օրվանից Աբու ալ-Ուզգայի մականունը դրեցին Աբու Լահար, որ նշանակում է «նա, ում դժոխքում տեղ է պատրաստված»:

Իր առաջին քարոզի կատարյալ ձախողումը Մուհամմադին կրկին նետեց խորը հուսահատության ու վիատության զիրկը:

Սակայն ի վերուստ նրա ականջին հասավ մի ձայն. «Վեր կաց և քարոզի՝ ր, խորհուրդ եմ տալիս սկսել քո հարազատներից»:

Մուհամմադը հրավերը ուղարկեց հաշիմյանների տոհմին, որն արդեն վաղուց կորցրել էր իր նշանակությունը Մերքայում, ուստի և հարմար ատաղձ էր մահմեդականությունն ընդունելու համար: Այդ տոհմի մոտ քառասուն անձինք հավաքվեցին Մուհամմադի տանը: Ներկաների մեջ էին նաև նրա հորեղբայրները՝ Աբու Թալիբը, Աբբասը, Համզան և նույնիսկ Մուհամմադի զլխին լուտանքներ թափած Աբու Լահարը, որն եկել էր լսելու, թե ինչ նոր բան պետք է ասի «մարզարեն»:

Սկզբում հյուրերը սկսեցին խոսել գործերից, այնուհետև նստեցին խնջույքի: Առատ հյուրախրությունից հետո, եթե Մուհամմադը փորձեց քարոզել, Աբու Լահարը քացականչեց. «Մեր տանտերը կկախարդի մեզ»: Այդ լսելով, հաշիմյանները տեղն ու տեղը լրեցին ու հեռացան Մուհամմադի տնից:

Սակայն որոշ ժամանակ անց Մուհամմադը կրկին հավաքեց հաշիմյաններին և այս անգամ հնարավորություն ունեցավ ասելու իր ասելիքը: Ընդ որում, նա հատուկ շեշտադրումներ էր անում այն բանի վրա, որ հաշիմյանների տոհմի բախտը բերել է, որ մարզարեն հենց իրենց տոհմից է:

Նրա այս ասույթը մեծագույն հաճույքով ընդունվեց կյանքի բարձրունքներից զահավիժած և իր նախկին բարեկեցությունը կորցրած հաշիմյանների կողմից: Անշուշտ ներկաները Մուհամմադի ասածները հալած յուղի տեղ չընդունեցին, առավել ևս, նրանցից ոչ մեկը դժվար թե հավատար, որ Մուհամմադը իսկապես մարզարէ է: Սակայն նրանք սկսեցին կոահել, որ նոր կրոնը իրենց տոհմին կարող է օգտակար լինել: Բայց խորամանկ ու զգույշ այդ մարդիկ չէին շտապում պաշտոնապես ընդունելու իս-

լամը, մտածելով, որ եթե այդ կրոնը պարտություն կրի, ապա ի-
րենց տոհմի վրա առհասարակ կարելի կլինի խաչ քաշել:

Իր քարոզի վերջում Մուհամմադը հայտարարեց. «Ո՞վ է զա-
լու իմ հետևից և դառնալու իմ եղբայրը, իմ կտակակատարը, իմ
ժառանգորդը»: Սակայն պատասխանը քար լուրջունն էր: Այս-
ժամ նրա որդեգիր զավակ Ալին, որը մատուցում էր սեղանը, քա-
ցականչեց. «Օ՛ Աստծօն մարզարե, ես կլինեմ քո օգնականը»: Գրկե-
լով տղային Մուհամմադն ասաց. «Ահա իմ եղբայրը: Լսեցեր ու
հնազանդվեցեր նրան»:

Դրանից հետո ծաղրելով Արու Թալիբին, որ նա այսուհետև
ենքարկվելու է սեփական որդուն, հյուրերը ցրվեցին:

Թեև այս հանդիպման ընթացքում ևս Մուհամմադի քարոզը
նախորդի նման հաջողություն չունեցավ, սակայն այնուամենայ-
նիվ ձեռք բերվեց շոշափելի մի նվաճում. հաշվարկելով, որ իսլա-
մը կարող է օգնել իրենց ձեռք բերելու նախկին հզորությունը, հա-
շիմյանները խոստացան Մուհամմադին, որ եթե նրան նեղացնեն,
կամ իրադարձություններն ունենան տագնապալից զարգացում,
իրենք կկանգնեն ազգակցի կողքին:

Մարզարեն սկսեց զալ այն համոզման, որ իր քարոզների
հաջողությունը մեծապես կարող է կախված լինել իր պերճախո-
սությունից: Ուստի նա գրագետ ու գիտակ մարդկանց օգնությամբ
սկսեց յուրացնել արաբական հին ավանդությունները, ծանոթա-
նալ Հին Կոտակարանի և քրիստոնեական ավանդագրույցների,
պարսկական ասքերի հետ և այլն և իր խոսքը համեմել պերճ ու
գեղեցիկ դարձվածքներով: Նրա քարոզները սկսեցին հնչել ավելի
գրագետ, բազմազան և բանաստեղծական ներշնչանքով համակ-
ված հարուստ լեզվական արտահայտություններով:

Մուհամմադը անդուլ կերպով համոզում էր իր ունկնդիրներին, որ իր առաջարկած նոր կրոնը կատարելապես համապատասխանում է արաբների շահերին, որ այն նրանց կրերի հանգստություն, բարեկեցություն և հավատ ապագայի նկատմամբ: Մինչդեռ Մերրայի հարուստ վաճառականները, ապահով ու ազդեցիկ կուրայշ ցեղի անդամներից շատերը, հատկապես ումայյա տոհմի մարդիկ, լրջորեն անհանգստացած էին, որ եթե կոռապաշտությունը փոխարինվի մեկ այլ կրոնով, իրենք կարող են գրկվել հարստությունից, դիրքից և ուխտազնացներին ուտելիքով, խմիչքով, հազնելիքով ու տանիքով ապահովելու իրենց եկամտաքեր արտոնությունից: Նրանք վախենում էին նաև, որ նոր կրոնի զաղափարների քարոզը կարող է հանգեցնել Քարայի կուլտի անկմանը, որը կարող էր նվազեցնել ուխտազնացությունը, հետևաբար և նրանից ստացվող եկամուտները, սահմանափակել առևտուրը, և վերջապես նպաստել Մերրայի՝ բոլոր բոշվորական ցեղերի այդ ձգողության կենտրոնի քաղաքական հեղինակության անկմանը:

Բացի այդ, նրանց բնավ դուր չեր զալիս, որ իր վաղ շրջանի քարոզներում Ալլահի մարզարեն դատապարտում էր չափից ավելի մեծ հարստությունը, կոչ անելով նրանից բաժին հանել աղքատներին ու ընշագուրկներին, զեկենի կրակներով էր սպառնում վաշխառուներին, որոնք իրենցից ստրկական կախման մեջ էին դրել ամբողջ բեղվինական ցեղերի: Ահա թե ինչու կուրայշ ցեղի վերնախավը Մուհամմադի քարոզությունը հենց սկզբից համարեց իր շահերի համար խիստ վտանգավոր, ուստի և նրա նկատմամբ որդեգրեց թշնամանքով ու ատելությամբ լի դիրքորոշում:

Բոլոր նրանք, ովքեր չեին հավատում, որ Մուհամմադը աստծո ընտրյալն է, կամ պարզապես ցանկանում էին դիմակագերծել

ու վարկաբեկել նրան, Մուհամմադից պահանջում էին կատարել որևէ հրաշագործություն, օրինակ, հայտնաբերել մարուր ջրի նոր աղբյուր, այնպես անել, որ Մեքքայի մոտակայքում գետ հոսի, սարերը հետ տանի քաղաքի սահմաններից, լուսինը երկու կես անի ինչպես կիսում են հացը, կամ թեկուզ հարություն տա իրենց ցեղի նախապապ Կուրայշին: Նրանք պնդում էին, որ միայն այդ դեպում կհավատան նրան և կճանաչն որպես մարզարե:

Իրեն «պատին դեմ տալու» ցանկություն ունեցողներից ոչ պակաս ճարպկությամբ մարզարեն պատասխանում էր, որ նախ ինքը չի համարձակվի աստծուց հրաշագործություն խնդրել և ապա ինքը այստեղ է ուղարկված բոլորովին այլ նպատակներով: Սակայն երբ հրաշագործության պահանջ ներկայացնողների պնդումները դարձան ավելի համառ, Մուհամմադի կողմնակիցներն ու հետևորդները ևս, որոնց նույնպես բաժին էր հասնում հակառակորդների թունոտ ծաղրերից, իրենց մարզարեից սկսեցին խնդրել որևէ հրաշագործություն այդ հակառակորդների «քերանը փակելու» համար: Մուհամմադը սրանց համար ևս ուներ պատրաստի պատասխան, այն է. «Մի՞թե զոյություն ունի ավելի մեծ հրաշք, քան Ղուրանը: Այդ գիրը որպես հայտնություն ուղարկված է Ալլահի կողմից: Մի՞թե կարող է ավելի մեծ հրաշք լինել, քան դա»:

Հարց է առաջանում, այդ բարբարոսական ժամանակներում, երբ մարդու կյանքը առանձնապես մեծ զին չուներ, ինչն և Մուհամմադի թշնամիները չղիմեցին նրա հետ ֆիզիկական հաշվեհարդար տեսնելու քայլին: Դրա պատասխանը մեկն է՝ որովհետև ողջ հաշիմյանների տոհմը, որից սերել էր մարզարեն, նրան սպանելու դեպում դրան կպատասխաներ արյան վրիժառությամբ:

Սուհամմաղի «բաց» քարոզները սկսելուց մեկ տարի անց ևս նոր հետևորդներ ձեռք բերելու հունձքը դարձյալ մեծ չէր: Դրանց թիվը Մերքայում թեև կրկնապատկվեց, սակայն չէր գերազանցում մեկ հարյուրակը: Մարզարեն հասկացավ, որ անհրաժեշտ է փոխել մարտավարությունը և սովորական քարոզների հետ միաժամանակ դիմել ավելի կտրուկ քայլերի: Հստ այսմ, նա հարձակումների կրակը կենտրոնացրեց Քաարբայում երկրպագվող հեթանոսական աստվածների վրա: Դա համարելով ոչ քավարար, նա նաև արգելեց իսլամն ընդունած իր կողմնակիցներին աղոթել իրենց հեթանոս նախնիների համար: Որպես դրա հիմնավորում, իր քարոզների ժամանակ Մուհամմաղն անդադրում կերպով կրկնում էր, որ կուրայշ ցեղի անդամների բոլոր երկրպագվող հեթանոս նախնիները այժմ ապրում են դժոխրում և նրանց հոգու հանգստության համար մուտումանի կողմից աստծուն դիմելը մեծ մեղք է: Սա, անշուտ, վերին աստիճանի համարձակ և արմատական բնույթի քայլ էր, քանի որ արաբական միջավայրում իրենց արմատների պաշտամունքը սրբազործված երևույթ էր:

Մարզարեի այդ հանդուզն քայլերի դեմ մեծ աղմուկը Մերքայում իրեն երկար սպասել չտվեց: Սակայն աղմկողներից զատ կուրայշ ցեղի զյւավորների մեջ զտնվեցին նաև խոհեմ ու հեռատես մարդիկ, որոնք սկսել էին կոռահել, որ Մուհամմաղը նոր կրոնի հետ միաժամանակ կյանքի է կոչում նոր կլան, որը ոչիշով կապված չէր լինելու հին տոհմի հետ: Բացի այդ, եթե իրենք նրան ընդունեն որպես աստծո մարզարե, պետք է նրան ճանաչեն նաև որպես առաջնորդ: Դա անընդունելի էր նրանց համար: Բացի այդ, գործնական մտքի տեր այդ մարդիկ անմիտ էին համարում, որ այդքան աննշան մի մարդու աստված ընտրեր որպես իր մարզա-

բեի: Ուստի նրանք բացարձակապես հավատ չեն ընծայում մարդարեի այն պնդմանը, որ ինքը իրեշտակների միջոցով ստանում է Աստծո պատգամները: Դա նրանց համար թվում էր անմիտ ու անհավանական նաև այն պատճառով, որ Սուհամմաղը ծնվել ու մեծացել էր իրենց աշքի առջև և տարեցները նրան հիշում են դեռևս մանկության տարիներից, երբ նա արածացնում էր ոչխարներ ու այծեր: Ուստի երկուսից մեկը՝ կամ Սուհամմաղը խելազար է (մաջնուն), կամ վերին աստիճանի վտանգավոր մի մարդ: Մեծամասնության կարծիքով, նա առողջ բանականության տեր մարդ էր, որի վարքագիծը պայմանավորված էր իշխանություն ու շահ ձեռք բերելու ցանկությամբ: Եվ եթե դրա դեմքը չառնվի, Սուհամմաղը կարող է Մերքայում ողջ իշխանությունը հավաքել իր բուռք:

Ինչպես բոլոր խելացի ու խոհեմ մարդիկ, Մերքայի իշխանական վերնախավի ներկայացուցիչները ևս որոշեցին նախ փորձել հարցին լուծում տալ բանակցությունների ճանապարհով: Նրանց թվում էր, որ եթե նույնիսկ իրենց շհաջողվի հետ կանգնեցնել այդ վտանգավոր մարդուն իր ընտրած ճանապարհից, գեթ կհաջողվի չափավորել շատ հեռուն զնացող նրա ծրագրերը: Կողմերի միջև հանդիպումը տեղի ունեցավ Քաարայի հետին պատի մոտ: Քաղաքի անվանի մարդկանց և մեծաթիվ ամբոխի ներկայությամբ Սուհամմաղին հարց տրվեց, թե վերջին հաշվով ի՞նչ է նրա ուզածք: Դրան ավելացվեց նաև զործարքի առաջարկ: որպեսզի Սուհամմաղը դադարեցնի իր հարձակումներն ու պարսավանքը իրենց աստվածների ու նախնիների պաշտամունքի նկատմամբ, առաջարկվեց ընտրություն կատարել հարստության և իշխանության միջև: Անկասկած դա շատ վտանգավոր հարցադրում էր: Կարելի է նույնիսկ անվարան ասել, որ ավելի շուտ այդ

առաջարկի նպատակը Մուհամմադին վարկաբեկելն էր կամ նրա դիմակը պատռելը: Եթե նա համաձայնվեր այդ առաջարկի հետ, ամբոխին պարզ կդառնար, որ նորաքուս մարգարեի համար նոր կրոնը՝ իսլամը՝ այնքան էլ կարևոր չէ: Հանդիպման ժամանակ բանակցողները Սուհամմադին դիմեցին ասելով. «Մենք գիտենք, որ դու խոհեմ մարդ ես: Կարիք չկա քեզ ասելու, թե քաղաքում ինչ-պիսի խառնակություն և անկարգություններ կարող է առաջ բերել քո քարոզչությունը: Ո՞րն է քո նպատակը: Դու դրա՞մ ես ուզում: Մենք քեզ կտանք: Դու ցանկանում ես դառնալ քաղաքի գլուխ: Մենք պատրաստ ենք քեզ ընտրել որպես քաղաքի գլուխ: Բայց քարի եղիք և այլս մի ասա, որ նրանք, ովքեր երկրպագում են մեր աստվածություններին, իրենց դատապարտում են դժոխի հավիտենական կրակներին: Եթե դու հիվանդ ես, մենք քեզ համար կգտնենք մարմնի և հոգու լավագույն բժիշկներին»:

Սակայն ճկուն ու խելացի այդ մարդուն հնարավոր չեր «մերկ ձեռքերով» բռնել: Նա ի լուր ամենքի հայտարարեց, որ իր ուզածը ոչ հարստություն է և ոչ էլ իշխանություն, որ իրեն պետք է միայն մեկ բան, դա նա է, որ արաբներն ընդունեն ամենազոր ու գթառատ Ալլահին որպես միասնական աստծո և խզեն իրենց բոլոր կապերը Քաաքայի, այլևայլ կուլտերի և հեթանոս աստվածների հետ, որոնք հնարված են իրենց պապերի կողմից և բացի այդ աղոթեն ու ողորմություն բաշխեն: Պետք է ենթադրել, որ «բաց բանակցությունների հետ միաժամանակ կողմերի միջև տեղի են ունեցել նաև «փակ» կամ զադոնի բանակցություններ, որոնք նույնպես որևէ արդյունքի չեն հանգեցրել: Բանակցությունները փակութի մտնելուց հետո որոշվեց անկոտրում ու համար մարգարեի վրա ազդել իր իսկ տոհմի անդամների միջոցով: Ըստ այսմ, կուրայշ ցեղի զիսավորներից բաղկացած մի պատվիրակություն

զնաց Մուհամմադի հորեղբայր Աբու Թալիբի տուն: Նրանք ասացին, որ նրա եղբոր տղան հայիոյում է իրենց հավատն ու աստվածներին և անհարգալից վերաբերմունք է դրսնորում դեպի իրենց նախնիները, իրահրում է խոռվություն և վտանգի տակ է դնում ողջ քաղաքի հանգստությունն ու նրա բնակչների բարեկեցությունը: Առաջարկությունը հետևյալն էր. կամ ինքը պետք է սանձահարի Մուհամմադին, կամ շխանգարի, որ դա անեն ուրիշները: Այլ կերպ ասած, պահանջվում էր, որ երկրորդ դեպքում հորեղբայրը հանի Մուհամմադի անձի նկատմամբ արյան վրիժառության արգելը և համաձայնվի, որ նա հայտարարվի տոհմից ու ցեղից վտարված անձ («խալի»), որը փաստորեն հավասարազոր էր կործանման վճռի:

Աբու Թալիբը պատասխանեց, որ անձամբ ինքը հավանություն չի տալիս իր եղբորորդու վարրազգին և նույնիսկ համարում է, որ նա կամ հիվանդ է, կամ դիվահար: Իսկ իրենց պապերի սահմանած օրենքով չի կարելի հոգեկան հիվանդներին սպանել: Բնչ վերաբերում է նրանց խնդրանքին, որ ինքը շխանգարի, որ Մուհամմադին «խոր հասկացնեն», ապա հայտնի բան է, որ ոչ ոք և ոչ մի ժամանակ իրավունք չունի մարդկանց օրենքից դուրս հայտարարել հիվանդության կամ մոլազար լինելու պատճառով: Հետևաբար ինքը ևս չի կարող դա թույլ տալ:

Բնականաբար այդ պատասխանը չէր բավարարելու Մեքրայի ավագների պատվիրակությանը, ուստի, որոշ ժամանակ անց նրանք կրկնեցին իրենց այցելությունը Աբու Թալիբին: Այս անգամ նույն առաջարկը համեմված էր թունդ սպառնալիքներով ամբողջ հաշիմյանների տոհմի հասցեին: Նրանք հայտարարեցին, որ եթե Աբու Թալիբը չկարողացավ ստիպել Մուհամմադին որ լոի, ապա թող նա իմանա, որ այսուհետև լինելու է այլ կերպ և

կարող է արյուն թափվել: Դա նշանակում էր, որ եթե հաշիմյանները չիրաժարվեն Մուհամմադից, այդ տոհմից բոլոր նրանք, որոնք աջակցում ու պաշտպանում են նրան, կոչնշացվեն նրա հետ միասին:

Սպառնալիքներից մտահոգված Արու Թալիբը իր մոտ է կանչում Մուհամմադին և նրան բացատրելով իրադրությունը թախանձում՝ ասելով. «խողա և ինձ և քեզ: Ինձ վրա մի դնի այն բեռը, որ ես չեմ կարող տանել»:

Սակայն Մուհամմադը անդրդվելի էր: Նա պատասխանում է հորեղբորը, որ եթե իրեն քարոզները դադարեցնելու առաջարկով նույնիսկ խոստանային արևն ու լուսինը, մինենույնն է, ինքը կիրաժարվեր: Որ ավելի շատ մաղրիբն ու մաշրիբը (արեմուտքն ու արենելքը) կփոխեն իրենց տեղերը, քան մարդիկ կարող են ստիպել իրեն, որ ինքը փոխվի: Քանի դեռ Ալլահը իրեն մահ չի ուղարկել, ինքը շարունակելու է կատարել իր պարտականությունը Բարձրյալի առջև: Այնուհետև իր խոսքը եզրափակում է հետևյալ արտահայտությամբ. «ինձ վրա դրված է խալամը տարածելու առաքելությունը և ես երբեք չեմ հրաժարվելու այդ առաքելությունից, քանի որ զիտեմ, որ Ալլահը օգնելու է ինձ»:

Երբ խոսակցությունը ավարտված համարելով Մուհամմադը վեր է կենում, որ զնա, հորեղբայրը կանգնեցնում է նրան և ասում. «Դու զիտես իմ վերաբերմունքը քո քարոզների նկատմամբ, բայց ես քեզ նրանց ձեռքը չեմ տա»:

Ըստ երևույթին կուրայշ ցեղի վերնախավը որոշում է առայժմ ձեռնպահ մնալ տոհմերի միջև բացահայտ առճակատման գնալուց: Ուստի փորձում է ևս մեկ անգամ համաձայնության գալ Արու Թալիբի հետ: Նրանք նոյն կազմով կրկին գալիս են նրա մոտ նոր առաջարկով. Մուհամմադին փոխանակել Վալիդ իրն

ալ-Մուտիրի որդի Ամմարի հետ, որը համարվում էր ցեղի ամենաառաջնական ու ամենագեղեցիկ պատանին: Ընդ որում, նրանք չեն խորշում բացահայտ հայտարարելու այդ փոխանակման իմաստը՝ այն է սպանել Սուլհամմադին, քանի որ նա վիրավորել է իրենց բոլոր սրբություններին, ստորացրել է իրենց հավատը և փորձում է պառակտում մտցնել իրենց ժողովրդի մեջ:

Սակայն զայրացած Աբու Թալիֆը նրանց առաջարկած գործարքն անվանում է «կեղտոտ», դրան ավելացնելով, որ ստացվում է, որ ինքը պետք է կերակրի ու մեծացնի ինչ-որ մեկի զավակին, իսկ իր հարազատին ուղարկի դեպի հաստատ մահ: Հունից դուրս եկած այդ մարդը իր այցելուներին դուռն է ցույց տալիս, զայրացած բացականչելով. «արեք այն, ինչ որ ցանկանում եք»:

Դրանից հետո Մերքայի ավագները որոշում են Սուլհամմադի և նրա հետևորդների նկատմամբ կիրառել պատժամիջոցներ: Որպես առաջին քայլ խալամի հետևորդներին գրկեցին Քաարայում աղոթելու իրավունքից: Սակայն նորաթուխ մուսուլմանները, արհամարելով այդ արգելքը, շարունակում էին իրենց այցելությունները Քաարա, թեև այնտեղ նրանց բուռն կերպով ծաղրում և հայինում էին: Այդ նույն կերպ նրանց հետ վարվում էին նաև Մերքայի փողոցներում: Ամբոխը Սուլհամմադին համարում էր կախարդ, շատերը մեղադրում էին նրան, որ կաշառված է Մերքայում բնակվող քրիստոնյաների ու հուդայականների կողմից: Իսկ որոշները նրան խաբերայության մեջ մեղադրելու նպատակով պահանջում էին, որ եթե նա խսկալես մարգարե, թող ասի: որ օրն է տեղի ունենալու իր հայտարարած ահեղ դատաստանը: Այդ հալածանքներին միանում էին նաև քաղաքի բանաստեղծները, որոնք ծաղրալից ուսանավորներ էին արտասանում Սուլհամ-

մաղի հասցեին: Բնականաբար այդ բոլորը լրջորեն դժվարացնում էր նոր կրոնի հետևորդնրի թիվն ավելացնելու գործը:

Գնալով հալածանքները ավելի ու ավելի էին ուժեղանում: Կատաղի մոլուցքով տարված ամրոխը նույնիսկ հիշեցնում էր, որ Սուհամմաղի բոլոր որդիները մանուկ հասակում մահացել են, իսկ դա նշանակում է, որ աստվածները նրան արհամարհում են:

Այն, որ Ալլահի մարգարեն նման դառն նախատինքներն ու ծաղրերը թողնում էր անպատճախան, իր ժամանակների համար վերին աստիճանի տարօրինակ ու օտարոտի երեսույթ էր: Քոչվորբեղվինների հոգեբանությամբ Սուհամմաղը մի մարդ էր, որը չէր կարողանում պաշտպանել ոչ իրեն և ոչ էլ իր տոհմը: Այդպիսի մարդը բեղվինական օրենքների համաձայն չէր կարող հարգանքի արժանանալ:

Մարգարեի հալածիչները թիրախ դարձրին նաև Սուհամմաղի ինքնասիրությունն ու նրա անձնական պատիվը: Նրա աղջկներից մեկը՝ Ռուքայան, որն ընդունել էր իսլամը, իր ամուսնու՝ Աբու Լահաբի որդու կողմից հետ ուղարկվեց հոր տունը: Ճիշտ է, քիչ ժամանակ անց Սուհամմաղը նրան ամուսնացրեց ապագա երրորդ «քարեպաշտ» խալիֆ Օսման իրն ալ-Աֆֆանի հետ, սակայն ամենայն հավանականությամբ իրեն հասցված վիրավորանքը դրոշմվել էր մարգարեի սրտում:

Մի անգամ, երբ մուսուլմանների փոքրիկ համայնքը հավաքվել էր մի կիրճում հավաքական աղոթք կատարելու համար, միանգամայն անսպասելի կերպով հայտնվում են մի քանի հեթանոսներ և սկսում են ծաղրել նրանց հավատքը: Սկսված տաք վեճը վեր է ածվում ծեծկոտուրի, որի ժամանակ Աբու Վաքքասի որդի Սաադը իր ձեռքը վերցնելով մոտակայքում ընկած ուղտի ծնոտը նրանով հարվածում է հեթանոսներից մեկին և պատում նրա

դեմքը: Այսպիսով, Սաաղը դարձավ այն առաջին մարդը, որն արյուն հեղեց հանուն իսլամի:

Հիշյալ դեպքից հետո Մերքայում մուսուլմանների նկատմամբ վերաբերմունքն էլ ավելի վատացավ: Օդում արդեն սավանում էր մոտակա հալածանքների ստվերը: Մուհամմադի առավել եռանդուն ու վտանգավոր թշնամիներ դարձան Օմայանների տոհմի ներկայացուցիչ, հարուստ վաճառական Արու Սուֆյանը, Ամր իբն Խիշամը, որին Մուհամմադի կողմնակիցները կնքեցին Արու Զահի («Տզիտուրյան հայր», այսինքն հեթանոս) մականունը, մարզարեի հարազատ հորեղբայր Արդ ալ-Ուզզա իբն Արդ ալ-Սութալիբը կամ ինչպես նրան անվանում էին Արու Լահաբը և ուրիշներ: Փողոցներով անցնող Մուհամմադի նկատմամբ տեղում էր ոչ միայն հայինյանքների տարափ, այլև ցեխի կույտեր, իսկ նրա դրան շեմին հարեանները զիշերները լցնում էին կեղտաջուր: Մուսուլմանների, առավել ևս Մուհամմադի վիճակը Մերքայում այն աստիճանի վատացավ, որ նա 614 թ. սկզբին ստիպված էր տեղափոխվել իր կողմնակցի՝ Մահգում տոհմից երիտասարդ Արքամ իբն Արդ Մանաֆի տունը, որտեղ նա ժամանակավոր ապաստան էր գտել իրեն և վիրված մարդկանց պաշտպանության ներքո:

Ծայր էր առնում իսլամի նկատմամբ հալածանքների շրջանը: Ուշագրավ է նշել, որ ալ-Աքքամի տունը տեղափոխվելուց հետո Մուհամմադի ընտանիքի անդամների նկատմամբ հալածանքների ալիքը չէր տարածվում: Մասնավորապես Խաղիջային ոչ ոք թշնամի չէր համարում: Բեղվինների շրջանում գործող «աղաթը» իրավունք չէր տալիս կանանց նկատմամբ հալածանքներ գործադրել: Առավել ևս, որ բոլորին հասկանալի էր, որ կինը պետք է ամեն ինչում հետևի իր ամուսնուն:

Քանի որ արյան վրիժառության կարգը թույլ չէր տալիս ֆիզիկական հաշվեհարդար տեսնել իսլամն ընդունածների հետ, ուստի կուրայշ ցեղի ավագները որոշեցին նրանց նեղը զցել տնտեսական լծակների օգնությամբ։ Որոշվեց նախազգուշացնել զնումների համար Մերքա եկող բոլոր ցեղերի անդամներին, որ Մուհամմադը և նրա հետևորդները անարգում են իրենց աստվածներին, ուստի պետք չէ նրանցից որևէ բան գնել և ոչ ել որևէ բան վաճառել։ Բոլոր բարավանային ճանապարհների վրա նշանակվեցին մարդիկ, որոնք վերոհիշյալ ոգով գրույցներ էին անց կացնում Մերքա ժամանողների հետ։ Շուկայում ևս կարգվեցին դիտորդներ, որոնք զրի էին առնում մուսուլմանների հետ գործ ունեցող կարգազանց մարդկանց, նրանց հետ «առանձին» խոսելու համար։

Այդ բոլորը տհաճ իրողություն էր Մուհամմադի համար, բանի որ բոլոր առաջին մահմեդականները նույն սոցիալական դասից էին, այսինքն հանդիսանում էին մանր առևտրականներ և որոնց սպառնում էր սնանկացումն ու ապրուստի միջոցներից զրկվելը։ Մուհամմադի ընտանիքը ևս անմիջապես իր վրա զցաց տնտեսական բոյկոտի ողջ ծանրությունը։ Խաղիջայի առևտուրը սկսեց կտրուկ անկում ապրել։ Թեև տնտեսական հարվածը որոշ չափով թերթանում էր շնորհիվ այն բանի, որ տոհմերի միջև առաջ եկան տարածայնություններ այն հարցի շուրջը, որ բոյկոտը ձեռնոտու չէ իրենց, բանի որ դրանից շահում են միայն նրանք, ովքեր այն հայտարարել են, սակայն բոլոր դեպքերում այն ուժգին հարված հասցրեց մահմեդականների համայնքին։ Հետեանքը եղավ այն, որ սնանկացման եղբին հասած մի շարք նորաքուս մահմեդականներ լրեցին Մուհամմադին և կրկին սկսեցին երկրպագել Քաարայի կուտքերին։ Դրությունը մարզարեի կողմանակից-

ների համար գնալով ավելի ու ավելի էր վատանում: Հայածանք-ներն այն աստիճանի ուժին և կտանզավոր էին դարձել, որ Մուհամադի խորհրդով 615 թ. առաջին դավանափոխների մի ոչ մեծ խումբ, որոնց թվում նաև կանայք ու մանկահասակ երեխաներ, Օսման իրն ալ-Աֆֆանի զիսավորությամբ հեռացան Մերքայից և շարժվեցին Կարսիր ծովի կողմը: Զիդդայի մոտ նստելով նավ, նրանք ուղևորվեցին դեպի Եթովպիա: Որոշ ժամանակ անց այդ նույն ճանապարհով մեկնեց երկրորդ խումբ, այնուհետև երրորդը: Մուսուլմանների այդ զաղթը ստացել է «առաջին հիջրա» (զաղթ) կամ «Եթովպական հիջրա» անվանումը: Եթովպիա զաղթեց 83 մարդ, Մերքայում մնացին ընդամենը 52 մահմեղականներ:

Գաղթի դիմածները Եթովպիայի քրիստոնյա թագավորի՝ Նեգուսի կողմից թույլտվություն ստացան հիմնավորվել այդ երկրում և զբաղվել առևտրով: Կարճ ժամանակ անց Եթովպիայից Արաբիա սկսեցին ժամանել ապրանքներով քեռնավորված քարավաններ, որոնք պատկանում էին մահմեղականներին: Այդ եղանակով Մուհամմադը աշխատում էր խափանել Մերքայի ավագանու կողմից կազմակերպված տնտեսական բոյկոտի քաղաքականությունը և միաժամանակ կործանիչ հարված հասցնել կուրայշ ցեղի իր հակառակողըների առևտրական մենաշնորհին: Մուհամմադը կրկին ապացուցեց, որ ինքը մարզաք լինելուց քացի նաև հիանալի վաճառական է: Որպես պատասխան քայլ, նեղն ընկած նրա հակառակորդները որոշեցին Եթովպիա՝ Նեգուսի մոտ ուղարկել մի պատվիրակություն հարուստ նվերներով, թագավորից խնդրելու համար, որ իրենց հանձնի տոհմերի «աստվածութացներին ու դավաճաններին»: Նախնադարյան համայնական այն օրենքը, ըստ որի մարդու տերը իր տոհմն է, Եթովպիայում անըն-

դունելի էր համարվում, ուստի պատվիրակությունը ձեռնունայն վերադարձավ Մերքա: Այդ ձախողման հետևանքը հանդիսացավ այն, որ մուսուլմանների նկատմամբ հալածանքներն ել ավելի ուժեղացան: Սակայն միևնույն ժամանակ մուսուլմանների ու քրիստոնյաների միջև ծնունդ առավ փոխադարձ համակրալից վերաբերմունք: Ինքը՝ Մուհամմադը խորհուրդ էր տվել Մերքայից տեղափոխվածներին, դառնալ հարեշների բարեկամ:

Այդ դժվարին օրերին միանգամայն անսպասելի կերպով իսլամն ընդունեց Մուհամմադի զիխավոր թշնամի Արու Զահի եղբորորդի Օմար իրն ալ-Խաթթաբը: Այդ երիտասարդ, եռանդուն, ազդեցիկ ու խիզախ մարդու կողմից նոր կրոնի ընդունումը մեծ ազդեցություն գործեց իսլամի հետագա ճակատագրի վրա (ի դեպ, Օմարը հետագայում դարձավ երկրորդ «քարեպաշտ» խալիֆը): Այդ նույն ժամանակ իսլամն ընդունեց նաև Մուհամմադի հորեղբայր Համզա իրն Արդ ալ-Մութալիբը, որը թեև աղքատ ու դյուրագրգիր մարդ էր և հակված էր զինեմոլության, սակայն ուներ խիզախ զինվորի համբավ (հետագայում նա ստացավ «Ալլահի և նրա մարգարեի առյուծ» մականունը): Կրոնին վերաբերող հարցերի և Մուհամմադի քարոզներին անտարբերությամբ վերաբերող այդ մարդը տարված էր իր ցեղի ու տոհմի պատվասիրության ուժեղ զգացումով: Նա գտնում էր, որ ով դիպչում է իր տոհմի առանձին անդամներին, նա ունաճություն է կատարում ողջ տոհմի նկատմամբ: Այսպիսով, Համզան Մուհամմադի նկատմամբ հալածանքներին արձագանքում էր իբրև բեղվին, դրսերելով ցեղային համերաշխություն: Արդ ալ-Մութալիբի կողմից իսլամի ընդունումը նշանակալից չափով նպաստեց կուրայշիների կուսակցության և նոր զաղափարախտության հետևորդների միջև վերջնական պառակտման առաջացմանը, քանի որ առաջինները տես-

նում էին, որ իրենց շարքերը գնալով նոսրանում են: Պատասխան հարվածը իրեն երկար սպասեցնել չուվեց: Հալածանքները «հայրենական աստվածներին» դավաճանողների նկատմամբ դարձան ավելի կտրուկ ու դաժան: Մարդկանց շրջայակապ նետում էին մուշ նկուղները, սովորաբար ստրուկների վիճակը: Ստրկատերերը նրանց պարտադրում էին ուժից վեր ծանր աշխատանք, որ պեսզի նրանք «խելքները գլուխները հավաքեն»: Ավանդության համաձայն, իսլամն ընդունած մի քանի ստրուկներ և ստրկուիիներ դարձան նոր կրոնի առաջին նահատակները:

616 թ. մեծահարուստ ազդեցիկ Աբու Զահիլ եռանդուն ջանքեր սկսեց գործադրել իսլամականների շարքերը պառակտելու համար: Խոստանալով որոշակի շահեր առևտրական գործունեության բնազավառում, նրան հաջողվեց իր կողմը զրավել հաշիմյաններին աջակցող Զուհրա, Թայմ և Աղի տոհմերին: Որպես հաշիմյանների կողմանակից մնաց միայն թույլ և փոքրաթիվ ալ-Սութալիբ տոհմը:

Դրանից անմիջապես հետո Մեքքայի ավագանու ներկայացուցիչները կրկին այցելեցին Աբու Թալիբին, պահանջելով կամ «հանգստացնել» Սուհամմադին և կամ նրան հանձնել իրենց: Սպառնալով, որ հաշիմյաններն այլևս ընտրություն կատարելու հնարավորություն չունեն և պետք է կատարեն իրենց պահանջը, միաժամանակ նրանք հայտարարեցին, որ մերժմանը կհետևի անողոր պատերազմը այդ տոհմի դեմ:

Աբու Թալիբը այս անգամ ևս կտրականապես հանդես եկավ իր ազգականի պաշտպանի դերում: Դրան 616 թ. հետեւց հաշիմյանների տոհմի դեմ «պատերազմը», որն առաջմ իրականացվում էր բոյկոտի ձևով: Մեքքայի բնակիչներին արգելվեց որևէ քան վա-

ձառել նրանց, կամ նրանցից գնել, կնության վերցնել նրանց աղ-
ջիկներին, կամ իրենց աղջիկներին հարս ուղարկել հաշիմյաննե-
րի մոտ: Որոշվեց մարզարեի վրա փորձել նաև կաշառի գայթակ-
դությունը: Կուրայշ ցեղի հեղինակավոր անձացից մեկին՝ Աբու
ալ-Վալիդին ուղարկեցին Սուլհամմադի մոտ, նրան առաջարկելու
համար մի շարք պայմաններ, որոնց հիմքի վրա հնարավոր լիներ
կնքելու խաղաղության դաշինք: Գալով մարզարեի մոտ, Աբու ալ
Վալիդը նրան ասում է. «Օ՛, իմ եղբոր զավակ: Դու հայտնի ես որ-
պես մեր ցեղի հարզարժան անդամ: Սակայն այն, ինչ որ դու ես
անում, հանգեցնում է մեր համայնքի պառակտմանը: Դու վիրա-
վորում ես մեր աստվածներին ու վարկարեկում մեր հավատքը: Լ-
սիր ինձ, ես ուզում եմ քեզ անել մի քանի առաջարկներ, որանց
մասին լավ մտածիր»: Այսուհետև նա ասում է, որ եթե Սուլհամմա-
դի իսկական նպատակը հարստությունն է, ապա իրենք իրենց ու-
նեցվածքից կհավաքեն այնքան, որ նա դառնա հարուստ մարդ: Ե-
թե նա ցանկանում է Մերքայում լավ դիրքերի տեր դառնալ, ապա
իրենք պատրաստ են նրան ընտրելու իրենց առաջնորդ և այսու-
հետև ոչ մի հարց չլուծել առանց նրա համաձայնության ու թույլտ-
վության: Եթե նա փափագում է իշխանություն, ապա իրենք պատ-
րաստ են նրա համար ապահովելու մեծ իշխանություն:

Սակայն մարզարեն մնում է անդրդվելի: Ավելին, նրա հետ
շփումը ուղղակի կերպարանափոխում է կուրայշ ցեղի ավագների
պատվիրակին, որը Սուլհամմադի հետ հանդիպումից հետո վե-
րադառնալով իրեն ուղարկածների մոտ փորձում է համոգել
նրանց, որ «Եթե Սուլհամմադը հաղթի, ապա այն իշխանությունը,
որը նա կունենա, կլինի նաև ձեր իշխանությունը: Եվ դուք այդ իշ-
խանության պայմաններում կլինեք ամենաերջանիկ մարդիկ»:

Հալածանքները մարգարեի նկատմամբ զնալով ավելի ու ավելի էին խստանում: Նրա համար ստեղծվել էր ծայրահեղ դժվարին ու վտանգավոր վիճակ: Նա սկսեց հազվագյուտ դուրս զալ տնից որպեսզի չենթարկվի նվաստացուցիչ վիրավորանքների և ավելին, կյանքը վտանգի չենթարկի: Ի վերջո նա եկավ այն համոզման, որ Մերքայում մնալը իր համար այլևս անհնար է: Սակայն չգիտեր ուր փախչել: Իհարկե կար Եթովպիայի տարբերակը: Սակայն նա վստահ չէր, որ այնտեղ իրեն չեն համարի կեղծ մարգարե: Իսկ Եթովպիայի քրիստոնյա թագավորը շատ արագ և փութացանորեն մահվան էր դատապարտում թե սեփական և թե դրսեկ մարգարեներին: Կար նաև հարցի մեկ այլ կողմը. դա այն էր, որ Մուհամմադը լեզուներ չգիտեր, և ուրիշ երկիր փախուստի դեաբրում հարկադրված էր լինելու մոռանալ իր մարգարեական առաքելության մասին և դառնալու պարզապես իսլամականների ոչ մեծ համայնքի սովորական դեկավարը:

Ի վերջո Մուհամմադը որոշում է մնալ Մերքայում և մուսուլմանական համայնքի ընտանիքների հետ տեղափոխվել Արու Թալիբի տունը, որը գտնվում էր հաշիմյանների լավ ամրացված թաղամասում: Այս անգամ նրա թշնամիները որոշում են դադարեցնել ամեն տեսակի հարաբերությունները հաշիմյանների և Արդ ալ-Մութալիբի տոհմի հետ: Մահմեդական համայնքը հայտնվեց կուռ շրջափակման օդակում: Եթե պաշարվածների ազգականներն իրենց կյանքը վտանգի ենթարկելով, զադունի ձանապարհով նրանց ուտեստ շհացնեին, ապա հավանական է որ սովահարության պատճառով նրանք բոլորը կմեռնեին:

Այդ դժվարին օրերին մահմեդականներին օգնության հասան հեթանոսական օրենքները: Մրբազան ամիսների ժամանակ, երբ հայտարարվում էր համընդհանուր խաղաղություն և նույ-

նիսկ դադարում էր գործելուց արյան վրիժառության օրենքը, շրջափակման ենթարկվածները շուկաներում աներկյուղ առևտուր էին անում Մերքայի բնակչության և դրսից եկած ուխտավորների հետ, նրանցից ձեռք բերելով սննդամթերք և դրանք կուտակելով Աբու-Թալիբի տանը: Ի դեպ, բոյկոտը չէր խանգարում հաշիմյաններին նաև քարավաններ ուղարկելու Սիրիա, որտեղ նրանք կատարելապես ազատ առևտուր էին անում:

Այդ նույն սրբազն ամիսները մարզարեի համար դառնում էին եռանդուն քարոզների ժամանակաշրջան:

Դժվարին պահին իրենց հավատակից եղբայրներին օգնելու համար Եթովպահայից վերադարձան թվով երեսուներեք մահմեդականներ, այդ թվում նաև Սուհամմադի փեսա Օսման իրն ալ-Աֆֆանը իր կողոց Ռուրայայի հետ: Մերքա վերադարձ մահմեդականները դիմում էին իրենց մոտիկ ազգականներից որևէ մեկին, որպեսզի նա իրենց վերցնի պաշտպանության տակ: Այդ ազգականները վերադարձածներին տանում էին Քաաքա և ի լուր բոլորի բարձրածայն հայտարարում, որ տվյալ անձը գտնվում է իր հովանավորության ներքո և նրան վնաս հասցնելու դեպքում գործ կունենան իր հետ: Ուշագրավ է նշել, որ մահմեդականներին պաշտպան կանգնածների թվում կային նաև Սուհամմադի ոխերիմ թշնամիներից, որոնք տվյալ դեպքում առաջնորդվում էին արյան վրիժառության օրենքներով:

Բոյկոտի տարիներին մարզարեի համար ստեղծվել էր դժվարին վիճակ նաև այն պատճառով, որ նա մուսուլմաններին խոստանում էր բարեկեցություն և հանգիստ ու ապահով վիճակ հենց այս, երկրային կյանքում, մինչեւ այդ մարդիկ հարստության ու վայելքների փոխարեն կրում էին լոկ գրկանքներ: Համայնքում այդ առթիվ ծայր էին առել 22ուկներ և մարզարեն ստիպված

Եր բացատրել,թե այնուամենայնիվ ինչու Ալլահի աշքի առջև նրա նվիրյալները հեթանոսների կողմից ենթարկվում են հալածանք-ների և ինչպես է Ամենաբարձրյալը վերաբերում դրան: Տիած նո-րություն էր նաև այն, որ մուսուլմաններից ոմանք լրեցին մահմե-դականների համայնքը և հրաժարվելով խալամից հեռացան և կամ մասամբ հասարակական կարծիքի, մասամբ էլ բոյկոտի բերած զրկանքների պատճառով շփումների մեջ մտան հեթանոսների հետ և մնալով մուսուլման, գաղտնապես երկրպագում էին Քա-րայի կուռքերին:

Առաջ եկած այդ բոլոր հարցերը կարիք ունեին լուծման: Եվ ահա հրեշտակի միջոցով մարզարեին է հասնում Ալլահի հրամա-նը. Մուհամմադը չպետք է զբաղվի երկրային առօրյա գործերով:

Երեք տարի տևած բոյկոտը ի վերջո 619 թ. հասավ իր տրա-մաբանական ավարտին: Կուրայշ ցեղի ավագանին այդպես էլ ի վիճակի չեղավ կոտրելու ոչ հաշիմյանների տոհմին և ոչ էլ իս-լամ՝ ընդունածներին: Մինչդեռ այդ ընթացքում միջտոհմական հակասություններից ծվատվող Մեքքան առևտրի կրծատման պատճառով խոշոր նյութական կորուստներ էր ունենում:

Բնականաբար բոյկոտի դադարեցումը հալածանքների թի-րախ դարձած մուսուլմանների համար վերին աստիճանի ուրա-խալի իրադարձություն էր: Սակայն չնայած դրան, 619 թվականը մուսուլմանական տարեգրության մեջ մտել է «Սզո տարի» անվա-նումով: 65 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց Մու-համմադի սիրեցյալ կինը՝ Խաղիջան: Մարզարեի հետ համատեղ կյանքի 25 տարիների ընթացքում նա հանդիսանում էր իր ամուս-նու խորհրդատուն, նրա կյանքի հավատարիմ ընկերուիին, նրա ֆինանսական նեցուկը և նոր կրոնի առաջին հետևորդը:

Անդառնալի կորստի պատճառով մարգարեի վիշտը անսփոփելի էր, չնայած նրան, որ իրեն հայտնված Զարրայիլ իրեշտակը տեղեկացրեց, որ երկնքում Խաղիջայի համար պատրաստված է ամբողջությամբ մարգարիտներից սարքված մի շրեղ տուն: Խաղիջայի մահվանից անմիջապես հետո Սուհամմադին վիճակված էր տանելու երկրորդ ծանր հարվածը: Լրացել էր հաշիմյանների տոհմի ավագ Աբու Թալիֆի 90 տարին և բնականաբար պարզ էր, որ նրա կյանքի երկարատև ճանապարհը այնուամենայնիվ հասել է իր ավարտին: Խսկապես, նա շուտով մահացավ: Սուհամմադը զրկվում էր իր հուսալի և անդավաճան պաշտպանից, առավել ևս, որ հաշիմյանների տոհմի ղեկավար դարձավ մարգարեի ոխերիմ թշնամի Աբու Լահաբը, որը ժառանգեց իր մեռած եղբոր պաշտոնը: Դուրանում Աբու Լահաբը նզովվում է ամենասաստիկ ձեռվ. «Կորչե՛ն Աբու Լահաբի ձեռքերը, եւ կորչի՛ ինքը. նրան չօգնե՛ նրա ստացւածքը եւ վաստակածը: Նա բոցավառ կրակի մէջն ընկնի՛, նրա կինն էլ փայտ շալակի՛ ու իրան վզումը մի չուան լինի՛ արմաւենու մանրաթելերից» (111:1-5): Կասկածից վեր է, որ իր պաշտպանից զրկվելը ունենալու էր ծանր հետևանքներ Ալլահի մարգարեի համար, ել ավելի բարդացնելով նրա վիճակը:

Սակայն չնայած իր խորը ատելությանը նոր կրոնի և նրա հետևորդների նկատմամբ, Աբու Լահաբն այնուամենայնիվ չէր կարող անմիջապես Սուհամմադին հանձնել նրա թշնամինների ձեռքը, քանի որ դա կդիտվեր որպես արյան վրիժառության օրենքների կոպիտ ուժնահարում, որի համար հասարակությունը կարող էր նրան խստիվ դատապարտել: Ուստի նա որոշեց սպասել մի հարմար պահի, որպեսզի Սուհամմադի մի որեւէ անզգույշ արարք պատճառ բռնելով, նրանից հանի հաշիմյանների տոհմի պաշտպանությունը: Շուտով այդպիսի պատրվակ գտնվեց: Աբու

Զահիլի խորհրդով Աբու Լահաբը Սուհամմադին մեղադրեց «հաշիմյաների տոհմի պատիվը վիրավորելու» մեջ: Այդ ծանր մեղադրանքը հիմնավորելու նպատակով վկաների ներկայությամբ Սուհամմադին հարց տրվեց: Մահվանից հետո ո՞ւր է ընկնելու Աբու ալ-Սուլամիիը, դրա խոտ, թե դժոխը: Դրան անմիջապես հետևեց մարզարեի պատասխանը: «անկասկած դժոխը»: Հաշիմյանների տոհմի նահապետի հասցեին նման անարգանքը անմիջապես օգտագրություն Աբու Լահաբի կողմից: Առանց մեծ դժվարության նակարողացավ համոզել տոհմի ավագներին, որ Սուհամմադին վրոնդէն տոհմի կազմից: Քարարայի պատերի մոտ, խուռներամբագրության ներկայությամբ հայտարարվեց այդ մասին և այդպիսով իսլամի մարզարեն դարձավ «խալի», այսինքն մի մարդ, որը ոչ ցեղ ունի և ոչ էլ տոհմ, որի հետ կարելի է վարվել ցանկացած ձևով: անպատճ կերպով վիրավորել, ծեծի ենթարկել, կողոպտել և այլի: Բերդվիճական օրենքներով, սակայն նման մարդուն սպանել ցանկալի չէր համարվում, քանի որ ուժի մեջ կմտներ արյան վրիժառության օրենքը:

Մերքայում ծայր առավ Սուհամմադի նկատմամբ անողոք ու դաժան հալածանք: Մոլեգնած ամբոխը նրա վրա շպրտում էր քարեր, ցեխախառն կեղտ, նրա աղոթքի վայրերում լցնում էր կեղտացրեր: Ավելի հանդուզն և մոլեռանդ մարդիկ սպանում էին սպանել նրան: Սուհամմադը հասկացավ, որ Մերքայում մնալը այլս անհնարին է: Ոչ որի ոչինչ չասելով, մեն-մենակ, 619 թ. հունիսի 15-ին (շավկալ ամսի 26-ին) նա ճանապարհ ընկավ դեպի սարիփ ցեղին պատկանող Թայիֆ օսպիսը, որը գտնվում էր Մերքայից արևելք մոտավորապես երկու օրվա ճանապարհի վրա: Այդ հարուստ ու բարեբեր օազիսում Մերքայի հարուստներն ունեին հողային կալվածքներ: Նախկինում սարիփ ցեղի վերահսկողութ-

յան տակ էր գտնվել Եմենի և Պարսից ծոցի ափերի բնակչության միջն կատարվող ողջ առևտուրը: Սակայն կլանային պատերազմ-ներից մեկի հետևանքով կրելով պարտություն, այդ ցեղը ստիպված է եղել ամեն ինչ հանձնել կուրայշ ցեղի հսկողությանը: Այդ ժամանակներից սկսած, օազիսում առկա էր Մերքայի կուրայշիների թշնամի մի հավաքականություն, որը թեև բացահայտ կերպով չէր դրսնորում իր ատելությունը, սակայն ոխը պահում էր իր սրտում: Ենթադրվում է, որ տեղյակ լինելով այդ բոլորին, Մուհամմադը որոշել էր խաղալ այդ հակասությունների վրա և գեթ ժամանակավորապես ապաստան գտնել Թայիֆում: Այստեղ նա բնակություն հաստատեց տեղական ազդեցիկ մարդկանցից մեկի: Աբդ Զալայլա իրն Ամրայի տանը: Մի քանի օր շարունակ նա գրուցում էր տանտիրոց և նրա եղբայրների հետ, փորձելով նրանց համոզել, որ իրենց մոտ ընդունեն իսլամն ընդունած համայնքի ներկայացուցիչներին: Անշուշտ մարզարեի ներկայությունը օազիսում զայտնի էր, սակայն շուտով այդ լուրը տարածվեց: Կուրայշիների կողմանակից ամբոխը հավաքվեց իրն Ամրայի տան մոտ, նրանից պահանջելով վրնելի իր տոհմից ու ցեղից վտարված մարդուն: Մուհամմադը ստիպված էր հեռանալ հյուրընկալ տնից: Անեծքներ ու լուտանքներ թափելով և քարեր շարտելով կատաղած ամբոխը հալածեց մարզարեին մինչև Թայիֆի սահմանները: Մուհամմադը զգուշացավ մուտք գործել Մերքա և թարնվեց Հիրա լեռան ծերպերում: Այդտեղից նա սկսեց բանակցել քաղաքի ազդեցիկ հեթանոսների հետ, որպեսզի նրանք հովանավորեն իրեն, մի քան, որ համարյա անհնարին էր: Սակայն միանգամայն անսպասելի կերպով Նաուֆալ տոհմի առաջնորդ ալ-Մութիմ իրն Աղին իր համաձայնությունը տվեց Մուհամմադին վերցնելու իր պաշտպանության տակ: Մինչև ատամները զինված իր ազգականների

հետ իրն-Աղին գնաց Քաաբա և մարդկանց ներկայությամբ հայտարարեց, որ Սուհամմադը գտնվում է իր պաշտպանության տակ: Դրանից հետո միայն մարզարեն ալ-Մութիմ տոհմի պահակախմբի ուղեկցությամբ մուտք գործեց Մեքքա:

619 թ. ողջ երկրորդ կեսին Սուհամմադը եռանդուն կերպով բանակցում էր քոչվոր-բեղվինների հետ, փորձելով նրանց համոզել, որ իրենց մոտ ընդունեն մուսուլմանական համայնքին: Սակայն ոչ մի ցեղ կամ տոհմ չցանկացավ նման քայլով վտանգավոր առճակատման մեջ մտնել Մեքքայի հետ: Բանակցությունները լրիվ անարդյունք չավարտվեցին, քանի որ այդ ընթացքում ոչ մեծ թվով քոչվորներ ընդունեցին իսլամը: Դա նշանակում էր, որ միաստվածության վրա հիմնված նոր կրոնը դուրս է գալիս Մեքքայի շրջանակներից: Այդ լուրը կայծակի արագությամբ տարածվեց անծայրածիր անապատում: Դրանից հետո Սուհամմադը սկսեց իսլամը ներկայացնել ոչ թե որպես մեկ ցեղի՝ կուրայշիների կրոն, այլ որպես համայն արաբների դավանանք

Ինչպիսի՝ հունով էր ընթանում մարզարեի անձնական կյանքը իսլամի սկզբնավորման այդ նախնական շրջանում: Քանի դեռ Խաղիջան կենդանի էր, Սուհամմադը որևէ մեկին կնության չեր վերցնում: Սակայն 619 թ. նրա մահվանից հետո մի քանի ամիս անց, նա ամուսնացավ Եթովպիայում քրիստոնեություն ընդունած մի հավատորաց մահմեդականի՝ Սավդեի (Սաուդ) հետ: Մեկ այլ վարկածով նրա ամուսինը մահացել էր Հարեւստանում: Այդ կինը ոչ հարստության տեր էր, և ոչ էլ ուներ հարուստ ազգականներ: Սակայն հայտնի էր իր հեզությամբ ու առաքինությամբ: Վերադառնալով Մեքքա, նա զուրկ էր ապրուստի նվազագույն միջոցներից: Ուստի Սուհամմադի ամուսնությունը նրա հետ դիտվեց որպես զովեստի արժանի քայլ, մի տեսակ մահմե-

դականների համերաշխության ցուցադրում: Այդ քայլով մարզարեկի հեղինակությունը իսլամական համայնքում էլ ավելի մեծացավ: Սակայն այդ ամուսնական դաշինքը երկար կյանք չունեցավ և մի քանի տարուց հետո Ալլահի մարզարեն առաջարկեց Սավդեկին ապահարզան տալ, խոստանալով նյութապես ապահովել նրան: Սակայն այդ կինը, հրաժարվելով ամեն տեսակի ամուսնական իրավունքներից, համոզեց նրան չհայտարարել ապահարզանի մասին: Հստ երևույթին Սավդեն ցանկանում էր գեթ ձեալանորեն մնալ որպես մարզարեի կողակից, կամ գուցե մտահոգված էր, որ ապահարզանը կարող է ազդել Մուհամմադի վարկի վրա:

Այս անգամ Մուհամմադը իրեն կնության վերցրեց Արու Բարրի յոթնամյա աղջնակին, Այիշային, որը մինչ այդ նշանված էր իսլամն ընդունած իրն Մութիմի հետ: Աղջկա նշանադրությունը արագ քանդվեց և նոր փեսացուն սկսեց սպասել, թե անշափահաս իր հարսնացուն երբ կհասնի հասունության տարիքին, որն այդ ժամանակներում արաբների մոտ տաս-տասնմեկ տարեկանն էր: Միջնադարյան Արաբիայում ամուսինների միջև տարիքային մեծ տարբերությունները չին համարվում արտասովոր ինչ որ բան: Երբ Այիշան դառնար տաս տարեկան, նա պետք է կնության գնար մի տղամարդու մոտ, որի հիսուն տարին արդեն լրացել էր:

Արու Բարրը շատ ուրախ էր, որ ինքը ազգակցական կապի մեջ է մտնում Մուհամմադի հետ, մանավանդ որ իսլամին և նրա մարզարեին հավատարմորեն նվիրված այդ մարդուն դաշնություն էր պատճառում այն հանգամանքը, որ ինքը և Մուհամմադը տարբեր տոհմերից են: Ուստի նա սկսեց մարզարեի համար պատրաստել արժանավոր կին, նրան տալով ժամանակի համեմատ լսվագույն կրթություն:

Այիշայի հետ ամուսնական դաշինք կնքելուց հետո շատ չանցած մարզարեի անձնական կյանքում տեղի ունեցավ նաև մեկ այլ կարևոր իրադարձություն: Նրա որդեգիր զավակ Ալին ամուսնացավ Մուհամմադի կրտսեր աղջկա՝ Ֆաթիմայի հետ: Դա կրկնակի արյունակցական կապ էր, քանի որ Ալին մարզարեի հորեղբորդին էր: Ալիի և Ֆաթիմայի ամուսնությունից ծնվեցին Հասանը և Հուսեյինը, որոնք հետազոյում հանդիսացան քսան շիական իմամներից առավել հարգարժանն ու պատվելին: Նրանց սերունդներից էին սերում մարզարեի ընտանիքի բազմաթիվ ներկայացուցիչներ՝ սեյիդներ և շարիֆներ:

ՄԱՐԳԱՐԵՒ ՀԻԶՐԱՆ

620 թ. ամունը Մերքայում տեղի ունեցած հերթական տոնավաճառի ժամանակ մեծ թվով ուխտավորներ էին ժամանել Քաաբայում գտնվող իրենց աստվածներին երկրպագելու և զոհ մատուցելու համար: Նրանց թվում կային նաև հազրաջ և առև ցեղերին պատկանող մարդիկ Յասրիք քաղաքից, որը գտնվում էր Մերքայից 350 կմ հյուսիս-արևմուտք ընկած մի խոշոր ու բարեբեր օազիսում: VI դ. կեսերին 55 քառ. կմ տարածք ունեցող այդ օազիսը ընկավ Հարավային Արաբիայից սերած բանու կայլա ցեղի տիրապետության տակ, որի երկու՝ առև և հազրաջ ճյուղերը մի քանի սերունդների կյանքի ընթացքում անընդհատ պատերազմում էին միմյանց դեմ:

Յասրիքի բնակչությունը կրոնական համոզմունքների առումով ևս միատարր չէր: Օազիսում բնակվող տարբեր ցեղերի պատկանող արաբները հեթանոս-կոռապաշտներ էին, իսկ հրեաները դավանում էին հուղայականությունը:

Պատահեց այնպես, որ տոնավաճառում Մուհամմադը գրույցի բոնվեց նաև թվով վեց յասրիբցիների հետ, նպատակ ունենալով հանձինս նրանց իր համար գտնել նոր հետևորդներ: Այդ գրույցի ժամանակ մարզարեն նրանց պատմում է նոր կրոնի մասին և առաջարկում հրամարվել հեթանոսությունից և «իրենց սիրտը բացել իսլամի առջև»: Մարզարեի ցանած սերմերը գտել էին պարարտ հոդ: Յասրիբցիների վրա նախ ցնցող տպավորություն է գործում Մուհամմադի հոգեկան կորովը: Այնուհետև, նրանց շատ դուր էր եկել ումմայի՝ հավատացյալների ընկերակցության գաղափարը, որի մեջ երկպառակություններն ու գժությունները

իբր տեղ չունեն: Իսկ յասրիցիների համար միջցեղային ու միջկլանային երկպառակությունները ամենացավոտ հարցն եք: Բանք նրանումն է, որ տարիներ շարունակ առւս և հազրաջ ցեղերը բազմից փորձել էին բանակցությունների ճանապարհով լուծել իրենց հակասությունները և վերջ տալ փոխադարձ թշնամանքին, սակայն արդյունքի չէին հասնել: Ըստ երեսույթին բոլորի համար պարզ էր դարձել, որ կարիք կա հեղինակավոր միջնորդի, որն ի վհճակի լինի կատարելու արդար դատաստան:

Հանդիպման ժամանակ նրանք պատմում են Սուհամմադին, որ իրենց քաղաքում նույն արմատներից սերած ցեղերը ոչ մի կերպ չեն կարողանում իրար հետ գտնել ընդհանուր լեզու, անընդհատ զժուվում ու պայքարում են միմյանց դեմ: Նոր կրոնի մասին Սուհամմադի պատմածներից նրանք հանգում են այն եղբակացության, որ եթե իրենց պառակտված ու միմյանց նկատմամբ խորը թշնամանքով տրամադրված ցեղերն ընդունեն մի միասնական ու ընդհանուր հավատք՝ իսլամը, միգուցե Ալլահը իր զքասրտությամբ միավորեր նրանց և վերջ տար նրանց թշնամանքին:

Յասրիցիները անմիջապես կռահեցին, որ նոր կրոնը իրենց ձեռնտու է նաև հետևյալ առումով. նրանք Մեքքայի նկատմամբ տածում էին թշնամական տրամադրություններ: Դրա պատճառը մասամբ հինավորց ցեղային թշնամանքն էր, մասամբ էլ այն իրողությունը, որ բազմաթիվ յասրիցի հողագործներ պարտքերի մեջ խճճված էին Մեքքայի վաշխառուների ու վաճառականների մոտ: Ուստի նկատի ունենալով, որ Սուհամմադը հանդիսանում էր Մեքքայի տոհմիկ ազնվականության թշնամի, յասրիցիները նրան ընկալեցին որպես իրենց բնական դաշնակից: Բացի այդ, Յասրիբը ավելի շուտ հողագործական կենտրոն էր, քան

առևտրական, ուստի այդ օազիսի վրա հաճախակի կատարվում էին անապատային բեղվինների ասպատակություններ: Մի խոսքով ներքին հակասություններից ծվատվող և մշտական հարձակումների թիրախ դարձած այդ օազիսի բնակչության կյանքը գնալով դառնում էր անտանելի: Եվ բնակ պատահական չէ, որ նրանք իրենց երկրամասում խաղաղությունը վերականգնելու հույսերը կապեցին նոր կրոնի հետ: Այդ մարդիկ հույս ունեին, որ Սուհամմադը կօգնի իրենց քաղաքին ձեռք բերելու ոչ միայն քաղալի խաղաղություն, այլև կայունություն ու քարգավաճում:

Վերջապես առկա էր նաև հարցի զգացմունքային կողմը: Սուհամմադը Յասրիբի համար բոլորովին էլ օտար մարդ չէր, քանի որ նրա մեծ տատը՝ Աբդ ալ-Սութալիբի մայրը և նրա նախնիները ծնունդով Յասրիբի օազիսից էին:

Սարգարեի հետ գրույցի ավարտին յասրիբցիները հայտարարում են, որ իրենք պատրաստ են անհապաղ ընդունելու խլամը և վերադառնալով իրենց բնակավայրը կանեն ամեն հնարավորը, որ նոր կրոնն ընդունեն նաև իրենց համերկրացիները: Նրանք հավաստիացնում են նաև, որ եթե իրենց երազանքն իրականացվի և Ալլահը միավորի Յասրիբի պառակտված ժողովողին, ապա Սուհամմադը իրենց համար կդառնա ամբողջ աշխարհում ամենաթանկագին մարդը:

Վերադառնալով Յասրիբ, իսկապես այդ մարդիկ ծավալեցին հզոր քարոզություն, իրենց համերկրացիներին համոզելով ընդունել խլամը և դառնալ մարգարեի օգնականներ՝ անսարներ: 621 թ. Մերքա ժամանեցին 12 յասրիբցիներ, որոնք նպատակադրվել էին Սուհամմադի հետ վարելու լուրջ բանակցություններ: Հանրագումարում մի ամայի վայրում, Ակաբա կոչվող բլրի լանջին, 620 թ. տեղի ունեցած հանդիպման ժամանակ յասրիբցիները

հանդիսավոր երդում տվին Սուհամմադին խլամն ընդունելու և Ալլահի բոլոր պատվիրանները կատարելու վերաբերյալ: Այդ իրադարձությունը ստացել է «Ակաբայի մոտ առաջին երդում» անվանումը: Այդ երդման մեջ դեռևս ոչ մի խոսք չկար զենքը ձեռքին մարզարեին և խլամը պաշտպանելու վերաբերյալ: Այդ հասկացությունը կյանքի կոչվեց ավելի ուշ: Ակաբայի մոտ երդման կարեռագույն խորհուրդն այն էր, որ Սուհամմադը փաստորեն կամավոր կերպով խօսում էր կապերը իր «ընտանիքի» տոհմի ու ցեղի հետ, դրանով իսկ հավաստելով, որ կլանի օրենքը հնացել է և որ կարենոր են ոչ թե արյունակցական կապերը, այլ միասնության կապերը՝ խարսխված ընդհանուր զաղափարի վրա: Ցեղի հասկացությունը պետք է իր տեղը զիջի համայնք՝ ումմա հասկացությանը:

Տասներկու նորադարձ մուսուլմանների հետ Սուհամմադը որպես հավատի ուսուցիչ Յասրիք ուղարկեց իր հեռավոր ազգական Սուսար իրն Ումայրային: Վերջինս հիանալի գլուխ բերեց իրեն վստահված հանձնարարությունը: Դրա արդյունքը եղավ այն, որ գործնականում Յասրիքի բոլոր տոհմերում արդեն կային խլամն ընդունածներ: Բացառություն կազմեց միայն Աուս-Մանաթ տոհմը: Սակայն տեղական մուսուլմաններին առանձնապես դուր չեր զալիս, որ իրենց աղոթքները դեկավարում է դրսեկ մեկը: Ուստի որոշ ժամանակ անց Սուսարն իր լիազորությունները հանձնեց Ազադ իրն-Զուրաբին:

Յասրիքում գտնվելու օրերին Սուսարը Սուհամմադից ստացել էր նաև զաղտնի հրահանգ, որպեսզի նա այդ քաղաքում հոդ նախապատրաստի մուսուլմանական համայնքը Մերքայից այնտեղ տեղափոխելու համար: Իր հերթին Մերքայում մարզարեն ևս մուսուլմանական համայնքի անդամներին ներշնչում էր, որ ի-

թենք հետազա վտանգներից ազատվելու և զարգացում ձեռք բերելու համար պետք է լրեն իրենց քաղաքը: Սակայն բացի մի շարք այլ հանգամանքներից, այդ զաղափարի իրազործման դժվարությունը կայանում էր նաև նրանում, որ Մերքայում խլամն ընդունածների մեծ մասը զբաղվում էր առևտրով, մինչդեռ Յասրիբում, ի բացառյալ երկրագործության, գործնականում այլ զբաղմունք գոյություն չուներ: Դրան ավելացրած, Քաարան մուսուլմանների կողմից ընկալվում էր որպես աշխարհի կենտրոնի նման մի քան, որին լրելն ու հեռանալը թվում էր անկարելի: Հետևաբար Մուհամմադի առջև կանգնած դժվարին, բայց և առաջնահերթ խնդիրներից մեկն էլ այն էր, որ նա պետք է կարողանար համոզել իր հետևորդներին, որ Քաարան լրելն ու հեռանալը անհրաժեշտություն է:

Երբ նշված հարցերի կապակցությամբ մարզարեն գտնվում էր խորք տվայտանքների մեջ, մի քանի ժամ տևած աղոթքից հետո ընի մեջ տեսավ մարզարեական մի երազ: Երազը տեսնելու այդ զիշերը մուսուլմանների կողմից ստացել է «Լեյյաթ աթ-Միրաջ» («Համբարձման զիշեր») անվանումը: Պարզ չէ, թե դա հայտնություն էր, երազ, թե հոգեկան բնույթի մի երևույթ: Մարզարեն իրեն տեսավ Քաարայում քնած վիճակում: Արթնացնելով Զարրայիլը հրամայում է նրան դուրս գալ տաճարից: Կատարելով այդ հրամանը, Մուհամմադը նկատում է Բուրակին (բուրակ՝ արաբերեն բարակա բառից՝ «փայլել», «շողշողալ»), որը կիսով չափ ջորի էր և կիսով չափ սպիտակ գույնի ավանակ, մարդկային դեմքով և հսկայական թեշտով: Հրեշտակը Մուհամմադին նստեցնում է Բուրակի մեջքին և շուտով նրանք հայտնվում են Երուսաղեմի տաճարում (ալ-մասջիդ ալ-Աքսա), որտեղ նրանց սպասում էին մարզարեներ Աբրահամը (Իբրահիմը), Մովսեսը (Մուսան), Քրիստոսը

(Բասն) և այլ մարզաբների: Մարզաբների համատեղ աղոթքից հետո Սուհամմադին մատուցում են ջրով, կաթով, զինխով լի երեք զավաթներ: Սուհամմադն ընտրում է կաթով լի զավաթը: Տեսնելով այդ, Զարրայիլը բացականչում է. «Հիրավի, դու ճիշտ ճանապարհի վրա ես՝ դու և քո ժողովուրդը: Գինին արգելվում է ձեզ համար»: Երանից հետո Երուսաղեմի տաճարի դրան մոտ եղած աստիճաններով Սուհամմադը բարձրանում է յոթերորդ երկինք: Ճանապարհին, առաջին երկնրում նրան ողջունում է արարների նախահայր Իսմայիլ մարզարեն: Աստիճանաբար անցնելով բոլոր յոթ երկինքները, վերջին երկնրում Սուհամմադը նկատում է մի հիանալի գահի վրա բազմած Իբրահիմին: Վերջինս նրան ուղեկցում է դեպի դրախտ և հանկարծ Սուհամմադը հայտնվում է Ալլահի հայացքի առջև: Նա հրամայում է Սուհամմադին, որ նրա հոտը օրական հիսուն անգամ պետք է աղոթի: Սակայն Իսա մարզարեի (Հիսուս Քրիստոսի) ներկայությամբ տեղի ունեցած տևական բանակցություններից հետո աղոթքների թիվը իշեցվում է մինչև հինգի: Այդ բոլորից հետո Սուհամմադը աստիճաններով իջնում է հետ, դեպի Երուսաղեմի տաճար, որտեղից նա տարվում է Սերբա: Հետազայում VII և VIII դարերի սահմանազդին խալիֆ Աբրամ ալ-Մալիքի օրոք այդ նույն վայրում կառուցվել է մուսուլմանական տաճարային մի համալիր Հարամ աշ-շարիֆ անունով, ինչպես նաև ալ-Արսա մզկիթը, որը հանդիսանում է մուսուլմանական կարևորագույն սրբավայրերից մեկը:

Այդ գիշերը տեղի ունեցած հայտնության արդյունքը հանդիսավ մուսուլմանական աղոթքի կանոնների սահմանումը:

Ճանապարհորդությունը տևել է վայրկյանների ընթացքում: Պատմվում է, որ իբր Զարրայիլը կուժը ձեռքից զցել էր քնած Սուհամմադի անկողնու մոտ և երբ վերջինս վերադարձավ իր երկնա-

յին ճանապարհորդությունից, հասցրեց բոնել ընկնող կուժը և նրանից ոչ մի կաթիլ ջուր չքափվեց:

Մուհամմադի երազի և նրա միստիկական հայտնության լուրջ վայրկյանապես տարածվեց Մերքայում, առաջ բերելով ոչ միայն կրապաշտ-հեթանոսների ծաղրը, այլև նվիրյալ մուսուլմանների: Նույնիսկ Մուհամմադի հավատարիմ զինակիցը՝ Աքու Բարբը, ինչ որ մեկից լսելով այդ պատմությունը, բացականչել է, թե մարգարեն չէր կարող նման բան պատմել, դա զրապարտություն է: Բայց տեղեկանալով, որ դա ճշմարիտ է, Աքու Բարբը փոխել է իր տեսակետն ասելով, որ «ինչ որ նա ասել է, ուրեմն եղել է»: Ավելին, նա դառնում է մարգարեի երկնային ճանապարհորդության ճշմարտացիության շերմեռանդ պաշտպան, որի համար Մուհամմադի կողմից արժանացել է «Սիդդիկ», այսինքն «ճշմարտացիության վկա» անվանակոչմանը:

Խորհրդավոր ճանապարհորդությունից հետո Մուհամմադը փոխեց դիբլան, այսինքն աղոթքի ուղղությունը: Այսուհետև աղոթելիս մուսուլմանները դեմքով պետք է շրջվեին ոչ թե դեպի Քարայի կողմը, այլ դեպի Երուսաղեմ:

622 թ. սկզբին ուխտագնացության համար կրկին Մերքա ժամանեցին մի խումբ հեթանոս և խլամն ընդունած յասրիցիներ: Մուսուլմանների թիվը 75 մարդ էր, որը վկայում էր այն մասին, որ Յասրիբում խլամն ընդունողների թիվը, ի տարբերություն Մերքայի, արագորեն աճում է: Ըստ երևույթին, այդ իրողությունը մեկ անգամ ևս զայխ էր համոզելու Մուհամմադին, որ անհրաժեշտ է Մերքայից տեղափոխվել Յասրի: Իրենց հերթին յասրիցիները համոզում էին մարգարեին հեռանալ Մերքայից և տեղափոխվել իրենց քաղաքը, որտեղ նրա նկատմամբ կցուցաբերվի

հարգալից ու պատվավոր ընդունելություն և նրան կճանաչեն որպես առաջնորդ ու դատավոր:

Ուխտագնաց մուսուլմանների Մեքքա ժամանելու հենց առաջին օրվա զիշերը Ակաբա բլրի անմարդաբնակ ու վայրի խորը ձորակում յասրիցի 75 ուխտավորներ՝ 73-ը տղամարդ և 2 կին բանակցություններ սկսեցին Սուհամմադի հետ:

Ալլահի մարգարեն յասրիցիներին ասում է, որ ինքը նրանց հետ պայմանագիր կկնքի այն պայմանով, որ նրանք իրեն կպաշտպանեն ճիշտ այնպես, ինչպես պաշտպանում են իրենց կանանց ու երեխաներին: Յասրիցիները միահամուտ համաձայն վում են կատարել մարգարեի այդ, և առհասարակ բոլոր պահանջները: Հենց այդտեղ նրանք Սուհամմադին հայտարարում են մուսուլմանական համայնքի՝ ումմայի առաջնորդ և «շարիաթի ուսուցիչ» և հավատարմության երդում են տալիս նրան: Կողմերի միջև կնքվում է պայմանագիր առ այն, որ ինչպես ինքը՝ Սուհամմադը, այնպես էլ Մեքքայի մահմեդական համայնքի անդամները ցանկության դեպքում կարող են տեղափոխվել Յասրիք, որտեղ նրանք կարող են բնակություն հաստատել առանձին համայնքի իրավունքով: Պայմանագրում խոսվում էր զենքի ուժով իսլամը պաշտպանելու անհրաժեշտության մասին, ուստի և այդ պայմանագիրը ստացավ Ակաբայի մոտ երկրորդ երդում կամ «պատրազմի երդում» անվանումը: Որոշ իսլամագետներ գտնում են, որ այդ պայմանագիրը վավերացվել է արյամբ:

Թեև բանակցություններն ընթանում էին բացարձակ զաղտնիության պայմաններում, սակայն այդ մասին կուրայշ ցեղի ավագանու լրտեսը, որին հանձնարարված էր ամեն բայլափոխում հետևել Սուհամմադին, տեղեկացավ և հայտնեց իր զլսավորներին: Սակայն այդ ավագանուն այդպես էլ չհաջողվեց պարզել, թե

կողմերի միջև կնքված պայմանագրում ինչի մասին է խոսքը գնում: Նոյնիսկ ոչինչ չտվեց հափշտակված յասրիցու հարցաքննությունը:

Մինչեո, Մոլհամմադը սկսեց պատրաստվել հիջրայի, այսինքն տեղափոխման համար, ձգտելով Յասրիբում ստեղծել միասնական ժողովուրդ՝ մարզարեի և աստծո պատգամաբերի ումմա: Անկասկած մարզարեի կողմից այդ վճռի ընդունման պատճառն այն էր, որ իր հարազատ քաղաքում տարիներ շարունակ վարած քարոզչությունը անհաջողության էր մատնվել: Մերքայի սահմաններից դուրս նոր կրոնի հետևորդների որոնումները հենց պատճառ հանդիսացան, որ նա համաձայնության զա յասրիցիների հետ:

Փաստորեն Ակաբայում տեղի ունեցած իրադարձությունը շրջադարձային նշանակություն էր ունենալու իսլամական համայնքի համար: Դա նաև նշանակում էր, որ մարզարեն կամավոր կերպով խօսում է իր կապերը սեփական տոհմի հետ, դրանով իսկ հաստատելով, որ տոհմական օրենքները հնացել են և որ կարևոր են ոչ թե արյունակցական կապերը, այլ ընդհանուր գաղափարի վրա խարսխված միասնությունը: Այլ կերպ ասած, ցեղային պատկանելություն հասկացությունը պետք է իր տեղը զիջեր համայնք ումմա հասկացությանը:

Մարզարեի հորդորով սկսվեց Մեքքայից մուտքմանների հիջրան, այսինքն տեղափոխումը Յասրիք: Արդեն մինչև Ակաբայի մոտ երկրորդ երդումը որոշ թվով մահմեղականներ տեղափոխվել էին այդ քաղաքը: Տեղափոխվածներին անվանեցին մուհաջիրներ (բառացի նշանակում է «տեղափոխված»): Առաջին տեղափոխվածների խմբում էր նաև Մոլհամմադի մերձավորագույն զինակիցներից մեկը՝ Օմարը: Այդ ժամանակ Մեքքայում կար ընդամե-

Նը 150 մուսուլման, չհաշված Եթովպիա տեղափոխվածներին և իսլամն ընդունած ստրուկներին։ Ուստի փոքր խմբերով նրանց կազմակերպված տեղափոխությունը Յասրիբ, մեծ դժվարությունների հետ կապված չէր։

Ինքը՝ մարզարեն, որոշեց Միառժամանակ մնալ Մերքայում, որպեսզի առաջ չբերի ավելորդ կասկածներ։ Մուհամմադն անշուշտ գիտակցում էր, որ Արու Թալիբի մահվանից հետո ավելի մեծ համարձակություն ձեռք բերած կուրայշիները հանգիստ կարող էին հարձակվել իր վրա և նույնիսկ սպանել իրեն։ Նա եկել էր այն հաստատ համոզմանը, որ Մերքայում մնալու դեպքում վաղ թե ուշ դա տեղի կունենա։ Իրողություն էր նաև այն, որ մուսուլմանների հեռանալը Մերքայից այնքան էլ չէր մտահոգում կուրայշ ցեղի իշխանական վերնախավին, առավել ևս, որ գոյություն ուներ մուսուլմանների տեղափոխման նախադեպը դեպի Եթովպիա, որտեղից նրանք չկարողացան որևէ վնաս պատճառել իրենց։ Նրանց հիմնական մտահոգության առարկան ինքը՝ Մուհամմադն էր։ Նրա հեռանալը Մերքայից ձեռնտու չէր իրենց նախ այն պատճառով, որ դրա անխուսափելի հետևանքը կլիներ նոր հավաքականությունների կողմից իսլամի ընդունումը և ապա, Մերքայում Մուհամմադի մնալու դեպքում իրենք գոնե կկարողանային վերահսկել նրա բոլոր գործողությունները։ Վերջապես Մերքայից դուրս մուսուլմանական համայնքի կենտրոնացումը և նրա աստիճանական հզորացումը անխուսափելիորեն տեղիք կտար այդ երկու ուժային կենտրոնների միջև խորը առճակատման, որն ի վերջո կարող էր հանգեցնել զինված դիմակայության։ Այլ կերպ ասած, բոլորը գիտակցում էին, որ այդ բոլորի վերջը պատերազմն է։

Որոշվեց Մերքայում գումարել արտակարգ ժողով՝ որին վճիռ կայացնելու համար: Ժողովում այն հարցադրմանը, թե ինչ պես վարվել Մուհամմադի հետ, տրվեցին ծայրահեղ կոշտ ու կտրուկ պատասխաններ: Ինչ որ մեկն առաջարկեց ձերբակալել նրան և ձեռքբերն ու ոտքերը շղթայակապ թողնել մի ինչ որ անմարդաբնակ տեղ, որ տանջալից մահով մահանա: Սակայն այդ առաջարկը չընդունվեց, որովհետև մտահոգություն հայտնեցին, որ եթե Մուհամմադի մարդիկ գտնեն նրան և ազատեն իրենց մարզարեին, դա կնշանակի ոչ թե պատերազմի առիթ, այլ ուղղակի պատերազմ: Մեկ ուրիշն առաջարկեց նրան վիճակը քաղաքից, որպեսզի գնա ուր ուզում է: Սակայն այդ առաջարկությունը ևս հավանության չարժանացավ այն հիմնավորմամբ, որ եթե նա վտարվի, ի՞նչ երաշխիք կա, որ նա կհանգստանա: Առաջարկությամբ հանդես եկավ նաև Աբու Զահելը: Նա հայտարարեց, որ Մուհամմադից ազատվելու միակ միջոցը նրան սպանելն է: Տեսական վիճաբանությունից հետո այդ առաջարկն ընդունվեց: Արյան վրիժառությունից խուսափելու համար Մերքայի յոթ տարբեր տոհմերից ընտրվեցին յոթ երիտասարդներ, որոնք զիշերով մտնելով Մուհամմադի տունը պետք է միաժամանակ իրենց սրերը միսրածեին նրա մարմնի մեջ: Այդ դեպքում դժվար կլիներ ասել, թե տոհմերից որ մեկի վրա կընկներ նրա արյունը, ուստի արյան վրիժառության մասին չէր կարող խոսք լինել: Իսկ Մուհամմադի արյան զինը ժողովին ներկա տոհմերի ավագները որոշեցին վճարել համատեղ կերպով: Գաղափարն արժանացավ համընդհանուր հավանության:

Դավադրության նախօրյակին Մուհամմադն, ավանդության համաձայն, ունենում է հայտնություն: Նրա մոտ է զախս Զիրքայի (Զիբրիլ) հրեշտակը և խորհուրդ տալիս չգիշերել սովորական

վայրում: Բոլոր դեպքերում հրեշտակի թե իր կողմնակիցների կողմից դավադրության մասին նախազգուշացկած մարզարեն Աբու Բարբի հետ միասին հեռանում է Սերբայից: Ընդ որում, դրսերելով զգուշություն ու խոհեմություն, նրանք շարժվում են ոչ թե դեպի Յասրիք, որի ճանապարհին մարդասպանները կարող են հասնել իրենց և իրենց գործն անել, այլ մեկնում են հակառակ ուղղությամբ, դեպի հարավ Եմեն տանող ճանապարհով, թարնվելով Սաուր լեռան փեշերին գտնվող քարանձավի մեջ: Մուտումանական ավանդության համաձայն, Ալլահը մի սարդ է ուղարկում քարանձավի մուտքը սարդոստայնով հյուսելու համար, որպեսզի հետապնդողները չխուզարկեն քարանձավը:

Իրենց մտահղացման մեջ ձախողված ու զայրացած կուրայշիները Մուհամմադի զիլի համար խոստանում են պարզեցնելու ուղղությունը: Այդ ժամանակներում դա առասպելական թիվ էր: Համեմատության համար նշենք, որ այդ նույն ժամանակ սպանված մարդու արյան զինը ընդամենը 20 ուղտի արժեք ուներ:

Փախստականները անորսալի էին, քանի որ Աբու Բարբի աղջիկը՝ Ասման և որդին՝ Արդալլահը ժամանակին նրանց տեղեկացնում էին թշնամիների մտադրությունների և գործողությունների մասին: Ընդ որում, լինելով հեթանոսներ, նրանք իրենց այդ գործողությունների վերաբերյալ կուրայշ ցեղի ավագանու մոտ կասկածներ չեին հարուցում:

Երբ երեք օրից հետո որոնումները թուլացան, շրջանցելով քարավանային ճանապարհը, Կարմիր ծովի ափով Մուհամմադը և Աբու Բարբը ուղղություն վերցրին դեպի Յասրիք: 622 թ. սեպտեմբերի 24-ին նրանք հասնում են օազիսի հարավային ծայրամասում գտնվող Կուրա կոչված վայրը: Այնտեղ չորս օր անցկացնելուց հետո հիգերորդ օրն իրեն ուղեկցող հավատակիցների հետ

մարգարեն մեկնում է Յասրիք, որտեղ նրան ողջունում են որպես Ալլահի մարգարե: Մուսուլմանների և մարգարեի տեղափոխությունը Մեքքայից Յասրիք ստացել է «հիջրա» (տեղափոխում) անվանումը: Հիջրան դա իսլամի պատմության մեջ դարակազմիկ իրադարձություն էր: Նրա սկզբ է համարվում 622 թ. հուլիսի 16-ը: Տասնյոթ տարի անց խալիֆ Օմարի օրոք (637 կամ 639 թթ.), հենց այդ օրը դարձավ մուսուլմանական օրացույցի առաջին օրը:

Այսպիսով, մարգարեի տառապանքների շրջանն ավարտվեց: Նրա Յասրիք ժամանումից հետո քաղաքը ստացավ նոր անվանում՝ Մաղինաք ան-Նարի (մարգարեի քաղաք), որը կրճատ հնչում էր որպես ալ-Մաղինա, Մեղինա: Իսկ այն մուսուլմանները, որոնք հետեւելով մարգարեի օրինակին Մեքքայից տեղափոխվեցին Մաղինա, կոչվեցին «մուհաջիրներ» («հիջրա կատարածներ», «տեղափոխվածներ»): Մաղինայում իսլամն ընդունած բնակիչները անվանվեցին «անսարներ» (արաբ. «անսար», եզակի թիվ «նասիր», այսինքն օգնական):

Հիջրան վճռական դեր խաղաց իսլամի ձևավորման ու տարածման գործում, տոհմական կապերի խզումը մահմեդական համայնքը դուրս քերեց մեկ առանձին ցեղի նեղ շրջանակներից, պայմաններ ստեղծելով պետության ստեղծման համար:

Մաղինայում Մուհամմադի առաջնահերթ խնդիրն էր իր շուրջը համախմբել այլազան տարրերին, լինեին դրանք մուսուլմաններ, հեթանոսներ, հուդայականներ թե քրիստոնյաներ: Դա բավականին բարդ խնդիր էր, քանի որ Մաղինայի օազիսում միջեղային լարվածությունը շարունակվում էր: Սակայն դրանով հանդերձ, Մաղինայում Մուհամմադը և նրա կողմնակիցները գտան իսլամը տարածելու ավելի բարենպաստ պայմաններ: Նախ Մաղինայի բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում այն մարդիկ,

որոնք անբարյացակամորեն էին վերաբերվում Մերքայի ազնվականության նկատմամբ: Բացի այդ, Մուհամմադի մայրը՝ Ամինան ծնվել էր Մաղինայում, հետևաբար կարելի է նեխադրել, որ այդ քաղաքում մարգարեն ուներ նաև ազգականներ, որոնք նեցուկ էին հանդիսանում նրան: Մաղինայում Մուհամմադին հարեցին նաև հանիֆները, որոնք իրենց կրոնական համոզմունքների պատճառով վտարված էին Մերքայից: Այսպիսով Մաղինայում աստիճանաբար Մուհամմադի կողմանակիցների թիվը սկսեց աճել: Դրան նպաստում էր նաև այն, որ մարգարեի կողմից միասնական աստծոն և «Ճշմարիտ հավատի» ընդունման քարոզը միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված ցեղերի կողմից ընկալվում էր իբրև խաղաղություն հաստատելու կոչ:

Մաղինայում Մուհամմադը երկու որք տղաներից գնեց մի հողակտոր և նրա վրա կառուցեց աշխարհի առաջին աղոթավայր-մզկիթը («մասջիդ»), որն ի պատիվ Ալլահի մարգարեի կոչվեց «մարգարեի մզկիթ» («մասջիդ ան-նարի»): Ուշագրավ է նշել որ այդ «երկրպագության վայրում» աղոթում էին դեմքները դարձնելով ոչ թե Երուսաղեմի կողմը, որը գտնվում էր հյուսիսում, այլ դեպի արևելք: Այդ մզկիթը ոչ միայն աղոթատուն էր, այլև հասրակական ժողովների վայր, ընդունելությունների տուն և այլն: Որոշվեցին ամենօրյա աղոթքների ժամերը: Իմամի, այսինքն աղոթքը դեկավարողի (աղոթարարի) պարտականությունը կատարում էր ինքը՝ Մուհամմադը, Աբու Բաքրը կամ Օմարը: Նշանակվեց նաև առաջին մուեզզինը, որը դարձավ նախկին ստրուկ, եթովպացի Բիլալը: Նրա պարտականությունն էր ազան կանչել, այսինքն հավատացյալներին հրավիրել աղոթքի: Սահմանվեցին նաև ծիսական լվացումների և պահրի կանոնները:

Շուտով Յասրիբի կենտրոնում սկսվեց հիմնական մզկիթի շինարարությունը, որի շուրջը սկսեցին կառուցել նաև մուսուլմանների տները: Սուհամմադը մյուսներին հավասար մասնակցում էր շինարարությանը: Մի քանի ամսից հետո մզկիթի շինարարությունն ավարտվեց և 623 թ. նրան կից կառուցվեց նաև մի կավաշեն տուն Սուհամմադի համար: Հենց այդ տանն էլ նշվեց նրա հարսանիքը տասնամյա Այիշայի հետ: Վերջնս հարս եկավ Սուհամմադի տունը, իր հետ բերելով իր խաղալիքները, այդ թվում նաև փայտե մի ձի, որը նա անվանում էր Սուլեյմանի ձի: Այիշան դարձավ մարզարեի սիրեցյալ կինը: Նրանց միջև եղած սերն ու ջերմ հարաբերությունները պահպանվեցին մինչև իրենց կյանքի վերջը: Մի անգամ Այիշայի այն հարցին, թե ինքը նրա համար արդյոք փոխարինել է Խաղիջային, Սուհամմադը պատասխանել է, որ Խաղիջային փոխարինելը անհնար է:

Սուհամմադի հարսանիքից քիչ անց կատարվեց նաև Ալիի և Ֆաթիմայի հարսանիքը: Յասրիբում մուսուլմաններն աւորում էին շատ աղքատ: Ինքը՝ Սուհամմադը, դառնալով քաղաք-պետության կառավարիչ և ձեռք բերելով հսկայական իշխանություն, շարունակում էր ապրել կավաշեն խրճիթում համեստ կենցաղով: Նա ազատորեն շփվում էր մարդկանց հետ, մեծագույն հարգանքով էր վերաբերվում տարիքավոր ու արժանավոր մարդկանց նկատմամբ: Նա մի առիթով ասել է. «Ես մեծ հարգանք ունեմ քաղաքավարի և քարեկիրք մարդկանց նկատմամբ և խորապես ատում եմ տխուր ու շատախոս մարդկանց»: Ավանդությունը պատմում է, որ մարզարեն իր առօրյա հարաբերություններում երբեք իրեն բարձր չէր դասում հասարակ մահկանացուներից, միշտ պատրաստակամ էր օգնել չունենորներին, որքերին և առհասարակ օգնության կարոտ մարդկանց:

Յասրիբում երբեմնի մեծահարուստ Աբու Բարբը ևս դարձել էր համարյա հետին աղքատ: Նա իր ունեցվածքը ծախսել էր իպահական համայնքին նյութապես աջակցելու և հեթանոսներից մուսուլման-ստրուկներին հետ գնելու վրա, որոնց այնուհետև ազատություն պարզեցված թույլատրում էր, որ գնան ուր ցանկանում էն:

Մուսուլմանների վիճակը գերբնակեցված օազիսում դժվարանում էր նրանով, որ նրանց տրամադրության տակ բավարար չափով մշակելի հողեր չկային, բացի այն հողերից, որոնք նրանք սեփական միջոցներով գնել էին: Առևտուրը ևս, որ այդ վայրերում թույլ էր զարգացած, գտնվում էր ուժեղների ձեռքերում: Մարզարեի որդեգիր զավակ Ալին, օրինակ, իր ապրուստը հոգում էր նրանով, որ ջրհորից ջուր էր կրում այսուս պատրաստելու համար: Յուրաքանչյուր փայտյա դրոյլի համար ստանալով մեկ արմավ, ամբողջ օրվա ընթացքում նա վաստակում էր ընդամենը 16 հատ պտուղ, որը նա կիսում էր Մուհամմադի հետ: Դա նրանց ամբողջ օրվա սննդի շափարաժինն էր:

Շուտով Ֆաթիման Ալիին պարզեց երկու զավակներ՝ Հասանին և Հուսեյնին: Իսկ Մուհամմադը Մադինայում շարունակում էր իր քարոզները, միաժամանակ եռանդուն աշխատանքներ տանելով քաղաքում իշխանությունը զավթելու համար: Հայտնություններից մեկի ժամանակ նրան ասված էր, որ կրոնը առանց իշխանության չի կարող գոյություն ունենալ և եթե Ալլահը մարդկանց մի խմբին չզսպեր մյուսների միջոցով, ապա և՝ տաճարները, և՝ սինազողները և՝ մզկիթները կրանդվեին ու կավերվեին: Միաժամանակ մարզարեն ցասումնալից ուղերձներ էր հղում Մերքայի հեթանոսներին: Մադինացիները, որոնք հանձինս Մերքայի տես-

նում էին իրենց մշտական մրցակցին, համախմբվեցին մարզարեի շուրջը:

Շուտով Մադինա սկսեցին տեղափոխվել նաև այն մուսուլ-մաններից շատերը, որոնք մինչ այդ ապրում էին Եթովպիայում: Ուշագրավ է նշել, որ Մեքքայից ոչ բոլոր մահմեդականներն էին, որոնք տեղափոխվեցին Մադինա: Դրա պատճառը ըստ երեսութին կայանում էր նրանում, որ ոմանք չցանկացան ենթարկվել Սու-համմադի հրամաններին, իսկ ոմանց պարզապես արգելեցին կու-րայշիները: Ընդամենը Մադինայում հավաքվեց մի քանի հարյուր իսլամն ընդունած մարդ, որոնցից մոտ հարյուր տղամարդ պատ-րաստ էր «իր ձեռքը վերցնել նիզակը»:

Համայնքը շարունակում էր նաև մահմեդական-ստրուկնե-րի հետզնումը: Օրինակ, հայտնի է, որ հետզնվածների թվում էր նաև Սալման Պարսիկ (Սալման ալ-Ֆարիսի) անունով մի ստրուկ, որը որոշել էր ընդունել իսլամը: Եթե նրա տիրոջը բերեցին ազատություն պարզելու համար պահանջված գումարը, նա հրաժարվեց ազատ արձակել իր ստրուկին, ասելով, որ եթե նա մինչև վերջ չկատարի իրեն հանձնարարված գործը, հողը չփորի և չտնկի փյունիկյան արմավենիների տնկիների պահանջված քա-նակը, ազատություն չի տեսնի: Ողջ մուսուլմանական համայնքը վերցրեց քահերը և մի քանի օրվա ընթացքում աշխատանքը հա-սավ իր ավարտին: Իսկ Սալմանը դառնալով ազատ մարդ և ըն-դունելով իսլամը, մինչև իր կյանքի վերջը մնաց Սուհամմադին նվիրված ընկեր ու գինակից:

Ընդհանրապես իսլամը Մադինայում ընդունում էին հեշ-տությամբ: Այստեղ չկային այն հալածանքները, որոնք ուժին թա-փով ծավալվում էին Մեքքայում և իսլամը ոչ այնքան կրոն էր, որ-քան «քաղաքական շարժում», որը կոչված էր միավորել ու հա-

մախմբել յասրիբցիներին: Եթե Մերքայում մուսուլման էին դառնում «մանր ու աննշան մարդիկ», ապա այստեղ նոր կրոն ընդունում էին բոլորը՝ աղքատներից մինչև հարուստները: Դրանով հանդերձ, օազիսում մի քանի ցեղեր այդպես էլ չընդունեցին իսլամը, մնալով հեթանոսներ: Առայժմ դա մտահոգություն չեր պատճառում մարզարեին, մանավանդ որ Յասրիք մտնելու հենց առաջին օրը նա հայտարարել էր, որ «հավատի մեջ հարկադրանք չկա»:

Մաղինա տեղափոխվելուց հետո Մուհամմադի առջև սկզբնական շրջանում հառնեցին նաև մի շարք այլ կարգի դժվարություններ: Չնայած նրա ժողովրդականությանը, ամբողջ իշխանությունը դեռևս գտնվում էր տեղական համայնքների առաջնորդների ձեռքերում: Բացի այդ, ինչպես նշվել է, մարզարեի կողմանակիցների թիվը այնքան էլ մեծ չեր: Ամենափոքր անզգությունն անզամ կարող էր հանգեցնել տեղական ցեղերի հետ պայմանավորվածության խախտմանը: Ուստի մարզարեն դրսնում էր վերին աստիճանի զգուշություն, ամեն կերպ աշխատելով բարյացակամ հարաբերություններ հաստատել մուհաջիրների և տեղական բնակչության միջև: Մաղինայում իր առաջին հանրային աղոթքի ժամանակ Մուհամմադը մաղինացիներին դիմում է կոչով՝ միմյանց հետ հարաբերությունները կառուցել եղբայրության ու բարեկամության հիմքի վրա:

Մաղինայում մուսուլմանական կրոնական համայնքում, որ բաղկացած էր մերքացի մուհաջիրներից ու իսլամն ընդունած մարինացիներից՝ անսարներից, արյունակցական կապի վրա հիմնված բոլոր տեսակի կապերը մերժվում էին հետևյալ սկզբունքով՝ «իսլամի մեջ բոլոր մարդիկ եղբայրներ են»: Իհարկե, բոլոր մահմեդականների եղբայրության գաղափարը ոչ մի կերպ չեր

նշանակում իրական սոցիալական հավասարություն: Մարզարեի քարոզներում ևս սոցիալական հավասարության մասին կոչերը խսպառ բացակայում էին: Սակայն մահմեղականների «հավասարության» իսլամական գաղափարը անկախ ծագումից և տոհմացեղային պատկանելությունից, կարենոր նախապայման էր սկզբում Մադինայի արաբների, իսկ ապա նաև բոլոր արաբների քաղաքական միավորման համար: Կասկածից վեր է, որ կրոնական ընդհանրության գաղափարը նպաստելու էր ցեղային տարանջատվածության և ցեղային անջատողականության հաղթահարմանը:

Անվարան կարելի է ասել, որ Մադինայում դրվեցին համարաբական իսլամական պետության հիմքերը և Յասրիի օազիսի քաղաքական միավորումը հանդիսացավ այդ պետության սահմը: Իսլամն այժմ ոչ միայն կրոնական հոսանք էր, այլև վերածվել էր քաղաքական գործոնի:

Սակայն մարզարեի համար ամեն ինչ չէր, որ հեշտ հունով էր ընթանում: Թեև Մադինայում զգալի թիվ էին կազմում Սուհամմադին անվերապահորեն նվիրված նորադարձ մահմեղականները («մու’մինան») և «սովորական» մահմեղականները («մուսլիման»), սակայն այնտեղ ձևավորվել էր անսարների մի կուսակցություն իբն Ուրայի զիսավորությամբ, որի հետևորդները արտաքուստ ընդունելով իսլամը, զադունաբար գործում էին մարզարեի դեմ և ձգտում էին ներսից քայրայել մահմեղական համայնքը, կամ պարզապես դեռ տատանվում էին և համայնքի գործերին ակտիվ մասնակցություն չէին ցուցաբերում: Այլ կերպ ասած, Մադինայում պայքարն ընթանում էր ոչ թե արտարին, այլ ներքին ճակատում: Սուհամմադին այդ մարդկանց անվանում էր մունաֆիրուն («երկերեսանիներ», «անվճռական», «տատանվող»):

Դրանք հիմնականում խլամն ընդունած տեղական ազնվականության ներկայացուցիչներ էին, որոնք փորձում էին իրենց ձեռքից բաց շքողնել իշխանությունը: Մինչդեռ Սուհամմադը պնդում էր, որ որոշումներ կայացնողը պետք է լինի միայն ինքը: Կողմերի միջև գործը չէր հասնում ուղղակի առճակատման ու ընդհարումների, թեև մի քանի առավել մոլեոնանդ երիտասարդ մահմեդականներ, որոնք դասվում էին «հավատարիմների» շարքը, «երկերեսանիների» մորուքներից քաշելով նրանց դուրս էին հանում մզկիթից, թույլ չտալով, որ աղոթեն: Վերջիններս ստիպված եղան կառուցել իրենց սեփական՝ ալ-Դիրաք մզկիթը, որը Սուհամմադն անվանեց «պիղծ»: Սակայն դա չխանգարեց, որ այդ մզկիթը տարիներ շարունակ մնա կանգուն: Այս տիած պատմությունը Սուհամմադին բերեց այն համոզման, որ թերևս խլամը կարող է գոյություն ունենալ նաև առանց մարզարեի: Առկա էր նաև մեկ այլ մտահոգիչ խնդիր: Մադինայում Սուհամմադի իշխանության աստիճանական ամրապնդումը ուղեկցվում էր նրա դեմ տեղի հրեաների թշնամական տրամադրությունների ուժեղացմամբ:

Սկզբնական շրջանում քրիստոնյաներին և հուդայականներին համարելով «Գրքի մարդիկ» («ահլ ալ-քիթար», «Սուրք Գիրք ունեցող ժողովուրդ»), Սուհամմադն աշխատում էր նրանց ներգրավել իր կողմը: Ըստ էության «Գրքի մարդկանց» գաղափարը նրա կողմից առաջ էր քաշվել զուտ գործնական նպատակներով: Ըստ երեսույթին նա հույս է ունեցել նաև, որ հանձինս իրեն քրիստոնյաներն ու հուդայականները կճանաչեն աստծո մարզարեին: Սակայն նրա այդ ձգտումները ոչ միայն արձագանք չզտան հրեաների մոտ, այլև արժանացան թշնամական վերաբերմունքի: Դա պայմանավորված էր նրանով, որ հրեաները չեին ցանկանում հոգաց կամքով իրենց իրավունքները զիջել նորահայտ մուսուլմա-

նական համայնքին: Նրանք նաև կտրականապես Սուհամմադին չընդունեցին որպես մարգարե, դա զիշավորապես հիմնավորելով նրանով, որ «մարգարեները չեն գալիս սրով ու մարտակառքերով»: Համոզված լինելով, որ մարգարենություն անելու շնորհը պատկանում է միայն հրեաներին ու Իսրայելին, Սադինայի հրեաները ծաղրում էին Սուհամմադին և նրա քարոզած կրօնը: Անկասկած դա լուրջ սպառնալիք էր մարգարեի հեղինակության համար: Ղուրանում մենք գտնում ենք այդ իրողությունների արձագանքը. «Եւ նրանք ասում են, թէ քնար մեկը դրախտը չի մտնի, եթէ չի լինի Ճրեայ կամ Քրիստոնեայ: Այդ նրանց բաղձանքներն են: Ասա՝ «բերէք ձեր ապացոյցները, եթէ ճշմարիտ էք» (2:105):

Ուստի Սուհամմադը խզեց իր կապերը հրեաների հետ, նրանց ևս անվանելով «երկերեսանիներ» և իր թշնամիները: Սիածամանակ նա որոշեց սպասել հարմար պահի նրանց շեշտակի հարված հասցնելու համար:

Խզելով ամեն տեսակի կապերը հրեաների հետ, Սուհամմադը դեռ մի որոշ ժամանակ շարունակում էր հույսեր փայփայել, որ իրեն կհաջողվի զեթ մերձենալ քրիստոնյաների հետ և նրանց հետ կնքել դաշինք: Ղուրանի մեջ մի տեղ ասվում է, որ մուսուլմանների ամենահամառ թշնամիները հրեաներն են ու բազմաստվածության հետևորդները, իսկ անկեղծ բարեկամները՝ նազարյանները (քրիստոնյաները): Սակայն մադինական շրջանի վերջում Սուհամմադը խզեց իր կապերը նաև քրիստոնյաների հետ: Ըստ երևույթին դա այն շրջանում էր, եթք սկսվեցին առաջին սահմանային բախումները բյուզանդական գորքերի հետ: Ճրեաների և քրիստոնյաների հետ կապերի խզումը ոչ այնքան պայմանավորված էր կրոնական տարածայնություններով, որքան նրանով, որ նրանք հրաժարվում էին Սուհամմադին ճանաչել որպես մարգարե:

Փաստորեն Մուհամմադը հրեաների ու քրիստոնյաների դեմ սանձագերծեց պատերազմ։ Դատափետելով միաստվածություն դավանող այդ կրոնները, նա սկսեց պնդել, որ նրանց սուրբ գրերը աղավաղված են, աղոթում են ոչ Ճիշտ, խախտում են աստծո պատվիրանները և այլն։ Այդ պատերազմը միայն հոգեոր ենթատերստ չուներ։ Մուսուլմանները ցանկանում էին նաև վերացնել իրենց տնտեսական մրցակիցներին և տեր դառնալ նրանց հարուստ շարժական և անշարժ ունեցվածքին։ Գաղափարական առումով Մուհամմադը դա արդարացնում էր նրանով, որ նրանք երկուսն էլ հեռացել են միաստվածությունից։

Որպես պատասխան, տեղացի հրեա և քրիստոնյա բանաստեղծները սկսեցին Մուհամմադի հասցեին ծաղրական ոտանա-վորներ հորինել, ինչպես մի ժամանակ անում էին Մերքայի բանաստեղծները։

Ի նշան հուղայականությունից ու քրիստոնեությունից կատարյալ ձերբագատման, Մուհամմադը կրկին փոխեց դիրքայի՝ աղոթքի ուղղությունը։ Այսուհետև իալամը դավանողները աղոթքի ժամանակ դեմքով պետք է շրջվեին ոչ թե Երուսաղեմի, այլ Քաարքայի, այսինքն Մերքայի կողմը։ Այսպիսով արարական եին ավանդույթը հաղթանակ տարավ հուղայականության անցողիկ ազդեցության նկատմամբ։ Ըստ որում, աղոթքի դեմքի ուղղության այդ փոփոխությունը միանգամայն համապատասխանում էր հրեաների նկատմամբ Մուհամմադի քաղաքականության շրջադարձին, ինչպես նաև ապագա քաղաքական ծրագրերին, այն է Մերքայի գրավման անհրաժեշտությունը, որը պետք է դառնար իսլամի կրոնական մայրաքաղաքը։

624 թ. սկզբին (այլ տվյալներով 622-623 թթ.) Մուհամմադը կազմեց Մադինայի մահմեդական համայնքի մի կանոնադրություն, որը եվրոպական իսլամագետների կողմից անվանվել է «

Մադինայի սահմանադրություն»: Նրանում վառ կերպով դրսնորդում է ոչ միայն մարզարեի քաղաքական իմաստությունը, այլև կրոնական ոգին: Դրանով նա իրեն դրսեորեց որպես տաղանդավոր քաղաքազետ: Այդ փաստաթղթում հայտարարվում էր, որ այսուհետև մուհաջիրներն ու անսարները կազմում են մեկ միասնական համայնք: Այդ համայնքի մեջ մտնում են նաև հրեաներն ու հեթանոսները, պահպանելով իրենց կրոնը: Մադինայում պետք է տիրապետեր կատարյալ կրոնական հանդուրժողականությունը, համաձայն Սուհամմադի հոչակած «կրոնի մեջ հարկադրանք չկա» սկզբունքի: Կանոնադրության մեջ Սուհամմադը արաբներին ու հրեաներին համարում էր մեկ միասնական քաղաքական ամբողջություն, ելելով այն զաղափարից, որ ինքը քարոզում է մի ուսմունք, որը ժամանակին քարոզել են Սովուսը և Աբրահամը:

Վերոհիշյալ փաստաթղթում առաջին անգամ գրավոր կերպով ճանաչվում էր Սուհամմադի մարզարե լինելու հանգամանքը: Միաժամանակ այնտեղ խնամքով գրառված էին ինչպես մուսուլմանների, այնպես էլ առանձին ցեղերի պարտականություններն ու իրավունքները: Բոլորը պետք է օգտվեին հավասար իրավունքներից, անկախ իրենց կրոնից և այս կամ այն ցեղի պատկանելությունից: Եթե որևէ մեկը կատարեր սպանություն, նա չպետք է պաշտպանություն գտներ ցեղերից որևէ մեկի մոտ: Ցեղերի միջև չպետք է լիներ թշնամություն և չպետք է գործեր արյան վրիժառության սկզբունքը: Միջցեղային վեճերը լուծելու իրավասությունը պետք է պատկաներ Սուհամմադին: Պահպանելով իրենց ինքնավար գոյությունը, յուրաքանչյուր ցեղ իր ընտրությամբ իրավասու էր շփումներ ունենալու և համաձայնազրեր կնքելու Մադինայի օազիսից դուրս գտնվող ցանկացած այլ ցեղերի հետ, քացի Մեքքայի կուրայշ ցեղից, որը դիտվում էր իբրև թշնամի: Հատուկ

նշվում էր, որ Մադինայի մուսուլմանական համայնքը օժտված է լինելու այն նույն իրավունքներով, ինչ իրավունքներ որ ունեն օազգի բոլոր ցեղերը:

Ըստ փաստաթղթի, դաշինքի մեջ մտնող բոլոր ցեղերը կազմելով մի համադաշնություն, պարտավոր էին մեկը մյուսին պաշտպանել և միմյանց երաշխավորել փոխադարձ անվտանգություն: Բոլոր նրանք, ովքեր կիրաժարվեին ենթարկվել գործող իշխանությանը, հայտարարվում էին անհավատ («քաֆիր»), իսկ նոր կրոնի կողմնակիցները կոչվելու էին մուսլիմ կամ մուսուլմաններ: Մադինայում պետք է տիրապետեր կատարյալ կրոնական հանդուրժողականություն:

Տրեանները իրավունք ունեին միանալու համաձայնագրին: Նրանում պարունակվում էր հատուկ հոդված, որտեղ ասվում էր. «Եթե հրեաններից որևէ մեկը միանա մեզ, ապա նա իրավունք կունենա ստանալու այն օգնությունն ու աջակցությունը, որը ստանում են մուսուլմանները, պայմանով, որ նրանք վերջիններիս նկատմամբ հանցանքներ չզործեն»: Մադինայի հեթանոսները և այդ քաղաքի հրեանները պետք է շփումներ չունենան Սերքայի հեթանոսների հետ: Տրեանները պարտավորվում էին ֆինանսապես աջակցել մուսուլմաններին: Մադինա քաղաքի պաշտպանության պարտականությունը հավասարապես դրվում էր մուսուլմանների, հեթանոսների և հրեանների վրա: Բոլոր ծագող խնդիրները պետք է լուծվեին Ալլահի և նրա մարգարե Մուհամմադի կողմից:

Հիշյալ փաստաթղթից ակնհայտորեն երևում է, որ հանդիսանալով մահմեդական համայնքի կրոնական ղեկավար (հմամ), միաժամանակ Մուհամմադը իրեն վերագրում էր Մադինայի կառավարչի, գերազույն դատավորի, քաղաքական առաջնորդի և գլխավոր հրամանատարի դեր:

Այդ բոլոր պաշտոնները կենտրոնացնելով իր ձեռքերում Մուհամմադը պարզապես ընդօրինակում էր տոհմացեղային ավանդույթների սկզբունքները, երբ ցեղի առաջնորդ սայյիդը իրականացնում էր հասարակական բոլոր գործերը, բանակցություններ էր վարում այլ ցեղերի հետ, դատում էր իր ցեղակիցներին, պատերազմների ժամանակ զիսավորում էր աշխարհազորայիններին, երբեմն դեկավարում էր նաև կրոնական կուլտի արարողությունները: Այդ բոլոր գործառույթները Մուհամմադը կենտրոնացրեց իր ձեռքերում: Ըստ Էության նա դարձավ ոչ թե մեկ ցեղի, այլ ողջ մուսուլմանական համայնքի սայյիդ: Այսպիսով, ի սկզբանե մուսուլմանների զիտակցության մեջ համայնքը և պետությունը, կրոնը և քաղաքականությունը, հոգեոր և աշխարհիկ իշխանությունն ընկալվեցին որպես մի անբաժանելի միասնություն: Անկասկած Մատինայի շրջանում որպեցին համապարական խւլամական պետության հիմքերը: Իսկ խւլամը այսուհետև բացի կրոնից, վեր էր ածվում նաև քաղաքական գործոնի: Կրոնական ընդհանրության գաղափարը զայլու էր հաղթահարելու ցեղային տարանջատվածությունն ու անջատողականությունը:

Ումմայի անդամների հետ անձնական հարաբերություններում ևս Մուհամմադը իրեն պահում էր ինչպես սայյիդ, որը համաձայն ցեղային ավանդույթի պետք է լինի առատաձեռն, հյուրասեր, օգնի որբերին, որբեվայրի կանանց և այլն:

Մահմեդական համայնքի կանոնադրության համաձայն, արաբների և իրեաների նախկին ցեղային օրենքները փոխարինվում էին «արդարադատություն բոլորի համար» սկզբունքով, անկախ սոցիալական դիրքից, մաշկի գույնից ու դավանանքից: Այլ կերպ ասած, Մուհամմադը ձգտում էր հիմնել մի եղբայրակցություն ոչ թե արյան, այլ կրոնական կապերի հիմքի վրա:

Այսպիսով Մադինան փաստորեն վեր էր ածվում քաղաք-պետության, իսկ Սուհամմադը դառնում էր նրա լիիրավ դեկա-վարը: Ծնունդ էր առնում մարդկանց մի նոր հավաքականություն, որի կապող օղակ էր հանդիսանում ոչ թե ցեղակցությունը արյու-նակցական կապի հիմքի վրա, այլ հավատն առ միասնական աստվածը: Դա մուտքմանական համայնք էր՝ ումմա:

Վերոհիշյալ փաստաթղթի համաձայն, թեև Սուհամմադը ճանաչվում էր Մադինայի դեկավարը, սակայն այնուամենայնիվ նա դեռ իրավունք չուներ լուծելու պատերազմի ու խաղաղության հարցերը, հավաքելու հարկեր կամ տնօրինելու ումմայի դրամա-կան միջոցները: Հետևաբար այսուհետև նրա խնդիրն էր մեացած իշխանությունը ևս վերցնել իր ձեռքը: Սակայն դա այնքան էլ հեշտ գործ չէր. մուսուլմանների դեմ միավորվել էին և՝ քրիստոն-յաններն ու հուդայականները, և՝ հեթանոսները, և նոյնիսկ «երկե-րեսանիները», որոնք դավանում էին իսլամը: Հանգստություն գո-յություն չուներ նաև մուսուլմանական ճամբարում. հակասութ-յունները աղքատների ու հարուստների միջև շարունակվում էին: Մադինայում ծաղկում էր վաշխառությունը: Գույքային ու սոցիա-լական անհավասարությունը պահպանվում էր ինչպես մուհա-ջիրների, այնպես էլ անսարների շրջանում: Զմոանք չոր ու անա-պատային շրջաններից և Մերքայից Մադինա եկած եկվորները տառապում էին սառը խոնավությունից, որին նրանք սովոր չէին: Շատերը հիվանդանում էին դողկրոցքով, որից շխուսափեց նաև Աբու Բարը: Մադինայում տեղի էին ունենում միջցեղային երկ-պառակություններ: Դժգոհության ալիքը ավելի էր մեծանում սար-սափելի աղքատության պատճառով: Մարդիկ, հատկապես եկ-վորները, սնվում էին հիմնականում արմավով ու ջրով, թեև Սու-համմադն արդեն այս աշխարհում նրանց խոստացել էր հարս-տություն և բարեկեցիկ կյանք: Մուհաջիրները տազնապով զի-

տակցում էին, որ իրենց հետ Մեքքայից բերած միջոցները սպառվելուց հետո իրենք հայտնվելու են աղետալի վիճակում, եթե շգտնեն իրենց համար որևէ եկամտաբեր զրադարձությունը: Ճիշտ է, անսարների մեջ կային մարդիկ, որոնք անհատույց օգնության ձեռք էին մեկնել մուհաչիրներին, նրանց տրամադրելով իրենց տները, հարակից շինությունները, սննդամթերք և այլն: Սակայն որքա՞ն երկար կարող էր տնել նման բարեգործությունը: Մի խորով, Մադինայում ձևավորվել էր ներքին ընդդիմություն մարզաբեի նկատմամբ: Նման պայմաններում Մուհամմադը հարկադրված էր ընդունել ինչ որ վճռական որոշում: Նա որոշում է գործել իբրև բեղվին, այսինքն իր առջև ծառացած դժվարին մարտահրավերներին որոշում է լուծում տալ ասպատակությունների միջոցով: Այդ ասպատակությունները հնարավորություն էին տալու ձեռք բերելու սնունդ, եղջերավոր անասուններ և ուղտեր: Վերջիններս անհրաժեշտ էին նաև կազմավորվող բանակի համար: Հատկապես ասպատակությունների թիրախ դարձան մեքքացիների առևտրական քարավանները:

623 թ. դեկտեմբերին մուհաչիրները կողոպտեցին մի հրուստ քարավան և մեծ ավարով ու գերիներով վերադարձան Մադինա: Այդ ասպատակության ժամանակ Մուհամմադի մարդկանցից մեկը սպանվել էր, որը ճնշող տպավորություն էր բողել մուսուլմանական համայնքի վրա, մանավանդ որ այդ սպանությունը տեղի էր ունեցել ուսղար սրբազն ամսում, որի ժամանակ արգելված էր արյուն հեղեղը: Սակայն այդ ճնշող տրամադրությունը փարատվեց, երբ Մուհամմադն ունեցավ հայտնություն, որի ժամանակ ի վերուստ ասվում էր, որ մեքքացիների կողմից գործած մեղքերը գերազանցում են սպանության այն մեղքը, որ կատարվել է սրբազն ամսվա ընթացքում:

ՄԵԶՔԱՅԻ ՀԵՏ ԱՌԱԿԱՏՄԱՆ ՄՐՈՒՄԸ ԵՎ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԱՎԱԼՈՒՄԸ: ԲԱԴՐ ՀՈՎՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ:

Սուհամմադը հասկացել էր, որ մինչ այդ պահը իր վարած պաշտպանողական մարտավարությունը մերքացիների նկատմամբ այլևս չի արդարացնում իրեն: Որ անհրաժեշտ է անցնել եռանդուն հարձակողական քաղաքականության: Մարզարեն, որ միշտ քարոզում էր խաղաղություն, Ալլահից ստացավ նոր հայտնություններ, որոնք թույլատրում էին իրեն վրեժ լրիծել Մերքայից իրենց վռնդելու պատճառով: «Պատերազմեցեք նրանց դեմ, ովքեր չեն ընդունում Աստծուն, պատերազմեցեք այնքան, մինչև որ նրանք իրենց կյանքի համար չվճարեն փրկագին, մինչև որ ուժասպառ չլինեն ու չոչնչանան», - ասվում է Ղուրանում: Մարզարեն նոր հայտնություն է ստանում, որ մուտքմաններին թույլատրվում է ինքնապաշտպանության նպատակով հայտարարել սրբազն պատերազմ՝ ջիհադ:

623 թ. գարնանից սկսվեց Մերքայի նկատմամբ ասպատակությունների շրջանը, որոնք ոչնչով չեին տարբերվում հեթանոսական շրջանի ասպատակություններից: Խսկական արարի պես Սուհամմադը հարձակումներ էր գործում առևտրական քարավանների վրա և հափշտակած ավարք բաժանում արշավանքի մասնակիցների միջև, ժամանակի սովորության համաձայն: Մերքացիների համար առավել խոցելի տեղը նրանց քարավաններն էին, ուստի Սուհամմադը իր առջև խնդիր էր դրել կաթվածահար

անել նրանց առևտուրը, հատկապես կտրելով Մեքքայից Սիրիա տանող քարավանային ճանապարհը, որն անցնում էր Սադինայի մոտով: Ինչպես կարելի է դատել Ղուրանից, Սադինայի երկրագործ բնակչությունը հակված չէր մասնակից դառնալու մուտքումանների կազմակերպած ասպատակություններին: Նրանց դիմադրության արձագանքները մենք գտնում ենք Ղուրանի 2-րդ սուրայում, որը կոչվում է «Կով» («ալ-Բաքարա») «Ձեզ պատուիրած է պատերազմը, բայց նա զգելի է ձեզ համար: Սակայն կարելի է դուք մի բանից զգվում եք, որ նա ձեզ օգտակար է եւ մեկ բան սիրում եք, որ նա ձեզ վնաս է: Եւ աստուած է, որ զիտէ, բայց դուք զգիտեք», - ասվում է Ղուրանում (2:212-213):

Առհասարակ Սադինայում բնակություն հաստատելու օրվանից սկսած, Սուհամմադը իր հետեւրդների հետ միասին չէր պատրաստվում դադարեցնելու պայքարը Մեքքայի հեթանոսազնվականության դեմ: Ասպատակություններն ու քարավաններ կտրելը մի միջոց էր նաև իսլամական համայնքը ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու համար: Կասկածից վեր էր նաև, որ ռազմական ավարի ձեռք բերման ձգտումը ընդունակ էր համախմբել ու ոգեշնչել իր կողմնակիցների շարքերը:

Ավանդությունների համաձայն, մարզարեի բանակը բաղկացած էր մի բանի հարյուր մարդուց: Ընդ որում, որոշ ասպատակությունների նա բերում էր իր անմիջական մասնակցությունը, դեկավարելով ռազմական գործողությունները: Ընդհարումներից մեկի ժամանակ Սուհամմադը նոյնիսկ վիրավորվել էր: Այդ պատերազմների ժամանակ մարզարեն իր հայտնությունների ճանապարհով սահմանեց մի շարք նոր օրենքներ՝ գրաված հողերը, ռազմական ավարը, մահացածների գույքը բաժանելու վերաբեր-

յալ և այլն: Օրինակ, այդ օրենքների համաձայն, ռազմական ավարի հինգերորդ մասը պատկանելու էր մարզարեին:

Այսպիսով դառնալով միաժամանակ և հավատացյալների և Մաղինայի դեկավար, որպեսզի հարգեն իր իշխանությունը, Մուհամմադ դարձավ զինված մարզարե: Տասներեք տարի շարունակ քարոզություն վարելուց հետո նա հասկացել էր, որ արաբների մոտ խորը արմատացած հեթանոսական աշխարհայցքի պայմաններում նրանց «Ճշմարտության ուղու» վրա հանելը միայն հասարակ քարոզների միջոցով այնքան էլ հեշտ չէ: Ուստի, եթե նրա կողմնակիցների թիվը հասավ թիվ թե շատ ընդունելի չափերի, մարզարեն որոշում է դիմել այլ մեթոդների: Ըստ այնմ, նա հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Ալլահը մարդկանց մոտ է ուղարկել տարբեր խառնվածքի և հակումների տեր մարզարեների, որպեսզի մարդկանց տանեն դեպի ճշմարիտ հավատը: Մուսային (Մովսեսին) նա պարզել է զթարտություն, փափկություն և նախախնամության շնորհ, Սուլեյմանին՝ իմաստություն և վեհապաննություն, իսկ Իսային՝ (Քրիստոսին) ճշմարտացիություն, խորիմաստություն և հզորություն: Իր հզորությունն ու ուժը Իսան ցուցադրեց կարդալով մարդկային սրտերը և գործելով հրաշքներ: Եվ չնայած Ալլահի կողմից ուղարկված մարզարեների այդ հատկանիշներին, ցանկալի արդյունքներ ձեռք չբերվեցին: Ուստի ես, լինելով մարզարեներից վերջինը, աշխարհ եմ ուղարկվել սուրբ ձեռքիս»:

Իր այդ ասույթով մարզարեն հիմնավորում էր հեթանոսության դեմ զինված պայքարի անհրաժեշտությունը: Ընդ որում, նա հատուկ շեշտում էր, որ այն մարդիկ, որոնք չեն ընդունել իսլամը, բայց կանոնավոր կերպով իսլամական համայնքին վճարում են իրենց վրա դրված հարկերը, չեն հետապնդվի:

Հանուն հավատի զինված պայքարում իր կողմնակիցներին ոգեշնչելու և մարտի դաշտը խիզախորեն նետվելու համար մարգարեն խոսում էր մարդկանց ճակատազրի կանխորոշված լինելու մասին: Մուհամմադի բերանով Ալլահն ասում էր, որ ոչ ոք չի կարող մեռնել իր համար նախանշված ժամանակից ոչ շուտ և ոչ ել ուշ: Մարդու համար որոշված մահվան ժամը վրա է հասնում ամենուրեք՝ լինի դա սեփական անկողնում, թե ճակատամարտի դաշտում: Մարգարեն իր ուազմիկներին հավաստիացնում էր, որ սպանելով նա իրազործում է բարձրագույն էակի՝ Ալլահի կամքը, որը նախօրոք նախատեսել ու կանխատեսել է ամեն ինչ և նրա մասին հոգ տարել նաև այն դեպքի համար, եթե նա զոհվի մարտի դաշտում:

Հանուն հավատի մեռնելը դա մուսուլմանի համար պատիվ է: Այդ առթիվ Ղուրանում ասվում է, որ սպանվածը հարկադրված չի լինի սպասելու ոչ մեռածների հարություն առնելու օրվան և ոչ ել ահեղ դատաստանին: Նա միանգամից կհայտնվի դրախտում (3:163-165):

Իբն Խոհակի-իբն Խոհամի «Գիրք Ալլահի մարգարեի վարք» գրվածքից մենք տեղեկանում ենք, որ Բաղրի ճակատամարտից առաջ, երբ մարգարեն խրախուսում ու ոգեշնչում էր իր ուազմիկներին, ասել է. «Երդվում եմ նրանով, ում ձեռքերում որ գտնվում է Մուհամմադի ոգին, որ այսօր ամեն ոք, որ դուրս կզա թշնամու դեմ և հանուն Ալլահի նկատմամբ տածած սիրո ճակատամարտի ժամանակ կսպանվի, անմիջապես դրախտ կրկնի»: Օմար իբն Ալ-Խուումում անունով ուազմիկներից մեկը, որն այդ ժամանակ ուսում էր արմավի պտուղներ, բացականչում է. «Ուրեմն իմ ու դրախտի միջև գտնվում է միայն այդ մարդկանց կողմից հասցվող մա՞հը»:

Դա ասելով նա շպրտում է արմավի պտուղները, վերցնում իր սուրբ և նետվում թշնամու դեմ ու կովում մինչև իր ապանվելը:

Մարգարեի ռազմական ու քաղաքական ծրագրերի կարևորագույն թիրախը Մերքան էր: 624 թ. Մուհամմադը մուսուլմանների մի փոքր ջոկատ ուղարկեց Մերքա հետախուզության համար: Ճանապարհին Նահլ կոչված վայրում այդ ջոկատը հանդիպեց Թայիֆից եկող մերքացիներին պատկանող մի քարավանի, որը բեռնված էր համեմունքներով, բիշմիշով և այլ ապրանքներով: Հետախուզները գրոհեցին քարավանի վրա, ումանց սպանեցին, ումանց գերի վերցրին: Միայն մեկին հաջողվեց փախչել և լուրը հասցնել մերքացիներին:

Երեք ամիս անց, 624 թ. մարտի 15-ին կամ 17-ին Մադինայից հարավ-արևմուտքում գտնվող Բաղր կոչված վայրի մոտ մարգարեն խոշոր հարձակում կազմակերպեց մերքացիներին պատկանող մի մեծ քարավանի վրա, որը զլիսավորում էր Կուրայշ ցեղի Օմայա տոհմի ներկայացուցիչ Աբու Սուֆյանը, որը ոչ միայն անվանի ու հարուստ վաճառական էր, այլև մուսուլմանների դեմ Մերքայի թշնամական ուժերի խմբավորման պարագլուխը:

Այդ քարավանը բաղկացած էր հազար ուղտերից և 100 ձիերից: Քարավանին ուղեկցում էր 950 հոգուց բաղկացած զինված պահակախումբը: Մուսուլմանների 313 հոգուց բաղկացած ջոկատը, որին զլիսավորում էր անձամբ ինքը՝ մարգարեն, անկասելի գրոհով գրոհեց քարավանի վրա: Տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, որի ընթացքում մուսուլմանները տարան ջախչախիչ հաղթանակ: Ճակատամարտի ելքը որոշեց մահմեդականների ռազմավարական արվեստը, նրանց կարգապահությունը և կրոնական ներշնչանքը:

Սպանվածների մեջ էին գտնվում իսլամի ոխերիմ թշնամի Աբու Զահիլը, Աբու Սուֆյանի որդի Խանզալան և ուրիշներ: Գերվածներից իսլամի համար թշնամիների զգալի մասը սրի քաշվեց, մնացած գերիները կամ ընդունեցին իսլամը, կամ փրկագնով ազատ արձակվեցին: Այդ ճակատամարտում Սուհամմադի հորեղբայր Աբբասը կովում էր Մերքայի հեթանոսների շարքերում և զերի ընկավ մուսուլմանների մոտ: Նրան բույլատրեցին Վերադառնալ Մերքա ըստ երևոյթին այն բանի համար, որպեսզի նա դառնա Սուհամմադի զաղտնի գործակալը:

Գերվածներից նրանք, որոնք ժամանակին Մերքայում մասնակցել էին Սուհամմադի նկատմամբ կազմակերպվող հալածանքներին, մահափորձերին և այլն, կամ անձնական վիրավորանք էին հասցրել նրան, մարգարեն հրամայեց տեղնուտեղը սպանել: Դրանց թվում էր նաև Ան-Նադր անունով մեկը, որը ժամանակին հայտարարել էր, թե Սուհամմադը իր արտասանած բառերը Ալլահից չի ստանում, այլ պարզապես պատմում է հին պարսկական հերիաքներ:

Ճակատամարտում ձեռք բերված ուազմական ավարը, որը զնահատվել էր 50 հազար դինար, Սուհամմադը պետք է բաժաներ արշավանքի մասնակիցների միջև: Սակայն սկսվեցին տար վեճեր այն հարցի շուրջը, թե ում ինչքան պետք է հասնի: Անհրաժեշտ էր շտապ ելք գտնել այդ վտանգավոր վեճերին վերջ տալու համար: Եվ ահա մարգարեն ստանում է հայտնություն, որտեղ ավարի բաժանումը հանձնարարվում է իրեն: Դրան է նվիրված Ղուրանի 8-րդ սուրան, որը կոչվում է «Ավար» (ալ-Անֆալ, 8:1,42):

Բաղրի մոտ տեղի ունեցած ճակատամարտը մարգարեի առաջին խոշոր հաղթանակն էր: Դա իսլամի հետագա ճակատագրի համար ունեցավ կարևորագույն նշանակություն: Բարձրացավ

մուսուլմանների բարոյական ոգին, նրանք հավատացին իրենց ուժերին: Այն բարձրացրեց նաև Մուհամմադի քաղաքական և կրոնական հեղինակությունը: Բաղրի ճակատամարտը մարզարեի կողմից զնահատվեց որպես մի հաղթանակ, որը ձեռք էր բերվել երեք հազար հրեշտակների բանակի օգնությամբ, որոնց զիսավորում էին Զաքրայիլ և Սիրել հրեշտակները: Դրանով նա ներշնչեց իր զինվորներին, որ իրենք աստծո ընտրյալներ են և Ալլահը իրենց կողմից է: Մուհամմադը մեծ վարպետությամբ օգտվեց իր հետեւրդների խանդավառության այդ վերելքից, ինչպես նաև իր հարսւածուն մեծացող հեղինակությունից: Ի դեպ, հենց այդ ժամանակվանից սկսած շրջանառության մեջ մտավ «ջիհադ» («սրբագու պատերազմ») հասկացությունը ընդդեմ Ալլահի թշնամիների: Այն մահմեդականները, որոնք զոհվեցին Բաղրի ճակատարմարտում, կոչվեցին շահիդներ՝ նահատակներ, որոնք անհավատների դեմ պատերազմում իրենց մահվամբ «հաստատեցին իրենց հավատքը»: Հետևաբար այդ նահատակներին սպասում էր հավետ երանությունը:

Անկասկած Բաղրի ճակատամարտը դա սովորական ռազմական բախում չէր: Նախ առաջին անգամ իսլամը հաղթանակ էր տանում զենքի ուժով: Այդ ճակատամարտն այնուհետև փորձություն էր երկու կրոնական զաղափարախոսությունների և հոգեոր աշխարհների միջև: Դա ոչ միայն արյունավի բախում էր տարբեր ցեղերի միջև, այլև պատերազմ արյունակցական կապերի մեջ զտնվող հարազատների միջև. հայրը զնում էր որդու դեմ, եղայրը՝ եղբոր: Օրինակ, այդ ճակատամարտում Արու Բարբը և նրա որդիներից մեկը՝ Աբդալլահը կովում էին մուսուլմանների կողմից, իսկ նրա մյուս որդին՝ Արդ ար-Ռահմանը՝ հեթանոսների կողմից: Եթե մարզարեի հորեղբայրներից մեկը՝ Շամզան, կովում

էր հանուն Ալլահի, ապա մյուս հորեղբայրը՝ ալ-Արբասը, սուր էր բարձրացրել իր կուռքերին պաշտպանելու համար: Ալի իրն Արի Թալիբը մուսուլմանների կողմից էր, իսկ նրա եղբայր Արխիլը՝ մերքացինների կողմից: Հիրավի, Բաղրի ճակատամարտը աննախընթաց կերպով մեծացրեց Մուհամմադի հեղինակությունը թե՝ իր կողմնակիցների, և թե՝ թշնամինների շրջանում: Մերքայի վաճառականները ստիպված էին խոստովանել, որ մարզարեն քաջ ու խիզախ է, նրա հետևորդները ուժեղ են իրենց համոզմունքով: Իսկ իրենց՝ մերքացիններին և նրանց առևտրին սպառնում է ռեալ վտանգը:

Բաղրի մոտ տեղի ունեցած ճակատամարտի օրերին մարզարեն ունեցավ նաև անձնական կորուստ. մահացավ նրա դուստր Ռուբայան, որը մեծ դառնություն պատճառեց հորը: Նրա ամուսինը, ապագա երրորդ «բարեպաշտ» խալիֆ Օսմանը, ևս շատ ծանր տարավ այդ կորուստը: Իր այդ զինակցի վիշտը սփոփելու համար Մուհամմադը նրան կնության տվեց իր մյուս աղջկան՝ Ումմ-Քուլսումին:

Բաղրի ճակատամարտից մոտ մեկ ամիս անց, Մուհամմադը հալածեց ու վրնեց Մաղինայի երեք հրեական ցեղերից մեկին՝ բանու կայսուկա ցեղին, որը հրաժարվում էր Մուհամմադին ճանաչել որպես մարզարե, հետևաբար և ենթարկվել նրա իշխանությանը: Այդ հալածվածները ստիված էին Մաղինայում թողնել իրենց անշարժ ունեցվածքը, որն ամբողջովին բռնազրավվեց հօգուտ մուսուլմանների:

Թեև Բաղրի ճակատամարտից հետո ասպատակությունները մերքացինների դեմ ժամանակ առ ժամանակ շարունակվում էին, սակայն այս անգամ պայքարը մուսուլմանների առջև ավելի բարձր նպատակներ: Ե՛վ Մերքան, և՛ Մաղինան, սակայն,

դեռ պատրաստ չէին վճռական ճակատամարտի, հակառակորդին մահացու հարված հասցնելու համար: Երկու կողմերն էլ կուտակում էին ուժեր:

Ի դեպ, Սաղինայում ոչ բոլորն էին համաձայն Սուհամմաղի զավթողական ծրագրերի հետ: Օրինակ, մի քանի քանաստեղծներ, որոնց հետ Սուհամմաղն ուներ վաղեմի թշնամանք, իրենց քանաստեղծություններով բազմաթիվ մարդկանց շեղում էին մարգարեի գծած ճանապարհից: Լսելով, որ Սաղինայում մեծ հոչակ վայելող, հարյուր տարեկան քանաստեղծ Աբու Աֆարը դատապարտել է Սուհամմաղի կողմից իր թշնամիներից մեկի սպանությունը, մարգարեն իր մարդկանց հարցրել է.- ո՞վ կսպանի սրիկային հանուն ինձ: Զառամյալ քանաստեղծի ազգականներից մեկը տվեց իր համաձայնությունը և զնալով ծերունու տուն նրան սրախողիսող արեց: Քիչ ժամանակ անց սպանվեց նաև Սաղինայի քանաստեղծուիկ Մարվանի դուստր Ասմուն: Այդ սպանությունը ևս կատարեց իսլամն ընդունած նրա ազգականներից մեկը, ուստի ընտանիքի ներսում կատարված սպանությունը արյան վրիժառության պահանջ չառաջադրեց:

Նման դաժան միջոցներով Սուհամմաղը աստիճանաբար Սաղինան հավաքում էր իր բուռը:

Մինչդեռ մեքրացիների քարավանների որսը շարունակվում էր: Սովորաբար ասպատակությունները զիսավորում էր Սուհամմաղը: Նրա քանակը ևս զնալով ավելանում էր, հասնելով 450 մարդու: Այդ քանակի զինվորները, որոնք ներշնչված և մոլեռանդ մահմեղականներ էին, ձեռք էին բերում մարտական մեծ փորձ: Սաղինայի շրջակայրում այդ քանակը սարսափի մեջ էր պահում բոլորին:

Դասեր քաղելով Բաղրի ճակատամարտի դառը փորձից, մերքացիները իրենց առևտուրը շարունակելու համար որոնում էին այնպիսի ճանապարհներ, որոնցով քարավանները աննկատ կարող էին անցնել: Նրանք կազմում են արծաթով բեռնավորված մի քարավան, որը մեկնում է դեպի հյուսիս խոլ և անջուր տեղանքով: Տեղեկանալով այդ մասին, մարզարեն կարգադրում է Զայդ իրն Հարիսին զրավել այդ քարավանը: Իր հետ վերցնելով 100 հեծյալներ, նա կատարում է մարզարեի հրամանը: Որպես ռազմական ավար ձեռք բերելով 100 հազար դիրիեմ և երեք գերիների, Զայդի ջոկատը վերադառնում է Մաղինա: Ավարի հինգերորդ մասը անցնում է բեյթ ալ-մալին (պետական զանձարանին), իսկ մնացած մասը բաժանվում է մուհաջիրներին:

ԱՌՃԱՎԱՏՈՒՄԸ ՄԵՔՔԱՅԻ ԵՎ ՄԱԴԻՍԱՅԻ ՄԻՋԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

625 թ. գարնանը մուսուլմանները հերթական անգամ կողոպտեցին մեքքացիների քարավանը: Այդ իրադարձությունը վերջնականապես համոզեց մեքքացիներին, որ այլևս արշավանքը Մադինայի դեմ հետաձգել չի կարելի: Կուրայշիների ազդեցիկ դեմքերից մեկի՝ Աբու Սուֆյանի զլխավորությամբ երեք հազար հոգուց բաղկացած մի զորախումք, որի կազմում երկու հարյուրը հեծյալներ էին, 625 թ. մայիսի 11-ին դուրս եկան արշավանքի Մադինայի մուսուլմանների դեմ: Այդ արաշավանքին իրենց մասնակցությունն էին քերում նաև Կինանա, Թիխիանա և մի շարք այլ քոչվորական ցեղեր: Այն ժամանակների համար դա մի հսկայական բանակ էր: Արշավանքին մասնակցում էր նաև հետազայում փառաբանված արարական զորավար Խալիլ իրն ալ-Վալիլը: Արշավանքի նպատակներից մեկը Բաղրի մոտ տեղի ունեցածի վրիժառության լուծումն էր: Զորքերին ուղեկցում էին հիսուն կանայք, որոնց ազգականները զոհվել էին այդ ճակատամարտում: Նրանք իրենց աղմկալից ողբով զինվորներից պահանջում էին վրեժիննիր լինել և անխնա սրի քաշել մուսուլմաններին: Թշնամու դեմ դուրս եկած հազար մուսուլմաններից մոտ երեք հարյուր մարդ, որոնք մունաֆիքներ էին («երկերեսանի»), դիմեցին դասալքության և լրելով մարզարեին հետ վերադարձան Մադինա:

Ճակատակորդները միմյանց հանդիպեցին Մադինայի մատուցներում, Ուխուղ լեռան մոտ, որտեղ մարտի 23-ին տեղի ունեցալ կատաղի ճակատամարտ: Այն ավատվեց մուսուլմանների պարտությամբ: Ճակատամարտին մասնակցում էր նաև Սուհամ-

մաղթ, որը մարտում վիրավորվեց և թիշ էր մնում գերի ընկներ: Զինվորները նրան զտան մեռածների մեջ: Ճակատմարտում սպանված շահիդների թվում էր նաև մարզարեի հորեղբայր, «Ալլահի առյուծ» պատվանունը կրող Համզան: Վերջինս Բաղրի ճակատամարտում սպանել էր Աբու Սուֆյանի կնոջ՝ Հինդի (Հինդա) հորը: Ուստի այդ կինը դաշույնով ճեղքեց Համզայի կուրծքը, որպեսզի հանի նրա յարդը և ուտի, դրանով հազեցնելու համար իր վրիժառության այրող զգացումը: Այդ նույն կերպ գերյալների հետ վարվեցին նաև մերքացիներին ուղեկցող մյուս կանայք: Կտրելով մեռած մուսուլմանների քթներն ու ականջները, նրանցից շատերը դրանք շարում էին թելը և կախում իրենց վզից:

Մերքացիները չզարգացրին իրենց հաջողությունը և նույնիսկ ասպատակ չսփռեցին Մադինայի վրա, թերևս նպատակ ունենալով ցույց տալ, որ իրենց գործողություններն ուղղված են բացառապես Սուհամմադի և Մերքայից տեղափոխված մուսուլմանների դեմ, այլ ոչ թե բոլոր մադինացիների դեմ: Սակայն ավելի հավանականը այն է, որ նրանք չհամարձակվեցին հարձակվելու Մադինայի վրա, վախենալով, որ մուսուլմանները թիկունքից կհարվածեն իրենց:

Մերքացիների բանակը հապճեապ հեռացավ ճակատամարտի վայրից: Հավանական է նաև, որ դրա պատճառը ճակատամարտում կրած մեծ կորուստներ էին և զորքի շափից ավելի հոգնածությունը:

Մարզարեն իր կրած պարտությունը մեկնաբանեց այն առումով, որ մուսուլմանների շարքերում բացակայում էր կարզապահությունը և որ մունաֆիքները դիմեցին դավաճանության: Դրանում առկա էր ծշմարտության հատիկ: Իսկապես, ճակատամարտի սկզբում մերքացիները համարյա պարտություն էին

կրում, սակայն Սուհամմաղի կողմնակիցները անտեսելով նրա հրամանները, մոտակա հաղթանակով արբեցած, նետվեցին ավար ձեռք բերելու: Թշնամին անմիջապես օգտվեց դրանից և սրընթաց հարձակմամբ ջախչախնեց մադինացիներին:

Այդ պարտությունից հետո մարզարեի հեղինակությունը Սադինայում լրջորեն սասանվեց: Նրա վիճակը ուղղակի դարձավ տագնապալից: Հրեաները, հեթանոսները և «երկերեսանիները» անմիջապես գլուխ բարձրացրին: Միայն Սուհամմաղի կողմնակիցների համախմբվածությունը նրան հնարավորություն տվեց վերստին տիրապետելու իրադրությանը:

Իր խաթարված հեղինակությունը վերականգնելու և իրադարձությունների մեջ բեկում մտցնելու նպատակով, ճակատամարտի հենց հաջորդ օրը, մարտի 24-ին, մարզարեն հրաման արձակեց, որ իրեն նվիրված բոլոր զինվորները պատրաստվեն Մերքայի վրա արշավանքի: Սակայն այդ արշավանքը սկսվելուց հետո, երբ Սուհամմաղի զինված ջոկատները Սադինայից 20 կմ հեռանալուց հետո այդպէս էլ չհանդիպեցին թշնամու ուժերին, վերադարձան հետ: Սուհամմաղը հայտարարեց, որ այդ արշավանքը կրոնական հերոսություն էր:

Մինչդեռ Սադինայի շրջակայրում բնակվող ցեղերը, որոնք վախինում էին Սուհամմաղից և մուսուլմաններից, ուստի և հակված չէին համագործակցելու նրանց հետ, տեղեկանալով մարզարեի կողմից տանուլ տրված ճակատամարտի մասին, սկսեցին անթարույց ձևով նրա և մուսուլմանների նկատմամբ դրսեռել թշնամական տրամադրություններ: Այդ թշնամիների թվում էին նաև Սադինայում և նրա մերձակա վայրերում բնակվող երեք հրեական ցեղերը՝ Բանու-Կայնուրան, Բանու-Նադիրը և Բանու-Կուրայզան, որոնք Սուհամմաղի դեմ դաշինքի մեջ մտան մերքա-

ցիների և արաբական մի շարք ցեղերի հետ: Մարզարեն որոշեց, որ ճիշտ ժամանակն է հաշվեհարդար տեսնելու հուղայականների հետ: Հաշվեհարդարը վերին աստիճանի անողոք էր. տղամարդկանց մեծ մասի գլուխները կտրեցին, իսկ կանանց ու երեխաներին վաճառեցին ստրկության: Հրեաների այդ ջախչախումը նպատակ էր հետապնդում նաև տիրանալ նրանց հարստություններին: Հրեաները զրկվեցին իրենց իսկ հողերի նկատմամբ սեփականատիրական իրավունքներից և ընդհուպ մինչև խալիֆ Օմարի օրոք իրենց վտարումը Արաբիայից նրանք հանդիսանում էին լոկ հաղթողների կողմից իրենցից զավթված հողերի վարձակալներ: Հրեաներից բռնազրավված տները, արմավենու պուրակները և այլն նույնպես մարզարեի որոշմամբ անցան մուսուլմանական համայնքին:

Որպես կանոն պատերազմների և ասպատակությունների ժամանակ ձեռք բերված ռազմական ավարը Մուհամմադը հավասարաշափ բաժանում էր մուսուլմանական համայնքի անդամներին, այդ թվում նաև պատերազմներում զոհված զինվորների այրիներին ու որբացած երեխաներին: Հաճախ նա այդպես էր վարվում նաև իրեն հասանելիք ռազմական ավարի հինգերորդ մասի («խումա») հետ: Անկասկած առաջնորդի այդ վարմունքը բարձրացնում էր նրա հեղինակությունը, որի հետևանքներից մեկը հանդիսացավ այն, որ մուսուլմանական բանակին սկսեցին զինվորազրվել ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ: Մարզարեի այդ շոայլ առատաձեռնությունն անշուշտ պարունակում էր նաև քաղաքական կարևոր ենթատեսատ: Նման ճանապարհով նա իր շուրջն էր համախմբում մահմեդական համայնքը՝ ումման: Այդ բոլորով հանդերձ, թիշ չեին նաև մարզարեի բացահայտ և բանքված թշնամիները: Ուխուղի ճակատամարտից հետո չորս ամիս

անց նրա կյանքի դեմ կրկին կազմակերպվեց մահափորձ, որը սակայն այս անգամ ևս ձախողվել էր շնորհիվ այն բանի, որ իբր մարզարեն ի վերուստ ստացել էր նախազգուշացման վերաբերյալ հայտնություն:

Իր դիրքերն ամրապնդելու համար մարզարեն օգտագործում էր բոլոր միջոցները: Նա նույնիսկ իր ամուսնությունների մի մասը օգտագործել է քաղաքական նպատակներով: Խաղիջայի մահվանից հետո Մուհամմադը սկսեց պահել հարեւմ:

Արեւազես Վ. Բարտողը ենթադրում է, որ քազմաթիվ կանայք պահելու Մուհամմադի այդ վարմունքի պատճառը ոչ այնքան նրա ուշ արթնացած ցանկասիրությունն էր, որքան ինն արաբական հասկացությունները, ըստ որոնց հարեւմն անհրաժեշտ էր քաղաքական դեկալվարի վարկն ու արժանապատվությունը պահպանելու համար: Սակայն անժխտելի է նաև այն իրողությունը, որ ամուսնությունների միջոցով մարզարեն աշխատել է ամրապնդել իր անձնական կապերը իր գինակիցների, կամ իրեն պիտանի մարդկանց հետ: Օրինակ, քաղաքական ամուսնություններ էին ապագա խալիֆներ Աբու Բարրի աղջկա՝ Այխայի, Օմարի աղջկա՝ Խաֆսայի, Մերքայի ազդեցիկ ցեղապետերից մեկի՝ Աբու Սուֆյանի աղջկա՝ Ումմ Հաբիբայի, Մերքայի կուրայշ ցեղի հայտնի տոհմերից մեկի՝ Մահզում տոհմից սերած Հինդայի և այլոց հետ ամուսնությունները: Մուհամմադը կնության էր վերցրել նաև Բանու Մուսթալիք ցեղի առաջնորդի աղջկան՝ Զուվարիին, որը գերի էր ընկել մուսուլմանների մոտ: Աղջկա համաձայնությամբ մարզարեն նրան հետ էր զնել իր գինվորներից, դարձնելով իր կինը: Այդ ամուսնությունը ևս հաջող դիվանագիտական քայլ էր, քանի որ Բանու Մուսթալիքը ցեղը իր հսկողության տակ էր պահում դեպի Միջերկրական ծով տանող կարենուազույն քարավանային

ճանապարհներից մեկը և մուսուլմանները, մարզարեի ազգակցական կապերի շնորհիվ դառնալով հիշյալ ցեղի դաշնակիցը, տնտեսական առումով մեծապես շահեցին: Մարզարեն հայտարարել էր, որ Ալլահը իրեն որպես մարզարեի թույլատրել է առանց սահմանափակումների ունենալ անսահմանափակ թվով օրինական կանանց, չհաշված հարձերին և բոլոր նրանց, ովքեր «իրենք էին իրենց հանձնում մարզարեին»: Դժվար է ասել, թե որքան կին ուներ Մուհամմադը: Վարկած կա այն մասին, որ նրա կանանց թիվը հասնում էր 14-ի: Հետազայում անթույլատրելի է համարվել Մուհամմադի կանանց և հարձերի թիվը հաշվելը և այդ մասին տարեգրություններից բոլոր տեղեկություններն անհետացել են:

Առհասարակ պետք է նշել, որ մարզարեի օրինաստեղծ գործունեության շրջանակից կանանց հարցը դուրս չէր մնացել: Մարզարեն բոլոր մահմեդականների համար ամուսնությունը սահմանափակել էր չորս օրինական կանանցով, որոնց կարելի էր ունենալ միաժամանակյա ձևով: Նա սահմանել էր հատուկ կարգ, ըստ որի արգելվում էր կնության վերցնել այնպիսի կանանց, որոնք նախկինում ամուսնացած են եղել մարզարեի հետ: Մարզարեի կանայք կողմնակի անձանց հետ կարող էին շփվել միայն միջնորդի միջոցով: Առհասարակ Մուհամմադի ընտանեկան կյանքը խստիվ կանոնակարգված էր. իր կանանցից յուրաքանչյուրին նա հերթականությամբ հատկացնում էր մեկ օր: Երբ մեկնում էր արշավանքների, վիճակահանությամբ որոշվում էր, թե իր կանանցից որ մեկը փակ պատզարակով պետք է ուղեկցի իրեն:

Արաբ-քոչվորների մոտ կնոց կողմից ամուսնական դավաճանությունը պատժվում էր անօրինակ դամանությամբ, առանց դատ ու դատաստանի: Մարզարեի սահմանած օրենքի համա-

ձայն, եթե որևէ մեկը ամուսնական դավաճանության մեջ մեղադրեր ազնիվ ու անրիծ վարքի տեր կնոջ և այդ առթիվ չկարողանար ներկայացնել փաստը հաստատող չորս վկաների, նա կծանաչվեր որպես զրպարտիչ և կենթարկվեր մտրակի 80 հարվածի: Մարգարեի սահմանած այդ օրենքն, անշուշտ, կոչված էր պաշտպանել կանանց սանձարձակ և հանիրավի բռնություններից:

Անշուշտ այդ բոլոր օրենքները հասարակությանն էին մատուցվում Ալլահից ստացված հայտնությունների ձևով: Առհասարակ վկայակոչելով ի վերուստ ստացած հրամանները, Մուհամմադը կանոնակարգեց մուտուլմանների ընտանեկան կյանքը, արգելեց ազգականների միջև ամուսնությունները և ըստ որոշ տվյալների նաև ժամանակավոր ամուսնությունները, երբ վաճառականը առևտրական գործերով մեկնելով հեռավոր վայրեր, միքանի ամսվա համար իր հետ վերցնում էր կանանց:

Այսպիսով, մարգարեն կարողանում էր հարմարեցնել երկնքի հայտնությունները կյանքի առօրյա դեպքերին: Ի դեպ, նրա այդ քաղաքականությունը Դուրանի մեջ առաջացնում էր հակասություններ ու խառնակություններ, որոնց բացատրությունը մեծամեծ շաներ են պահանջել իսլամական աշխարհի իրավագետներից:

Մինչդեռ առճակատումը Սեքրայի և Մադինայի միջև շարունակվում էր: 627 թ. մարտի կեսերին մեքրացիները կարողացան հավաքել մի մեծ աշխարհազոր (որն իր բաղկացած էր 10 հազար մարդուց, այլ տվյալներով յոթ և կես հազար զինվորներից), որի մեջ բացի 4 հազար մեքրացիներից ու դաշնակից ցեղերի կովորներից գտնվում էին նաև վարձկան եթովպացիներ: Այդ հակառակությունը պահպանվել է մինչ մահացած Մադինայի վրա: Քաղաքի վրա կախվեց մեծ վտանգ: Մուհամմադը հասկացավ, որ հեծելազորի բացակայության պայմաններում իրեն սպա-

սում է պարտությունը, առավել ևս, որ հաջողվեց հավաքել ընդամենը երեք հազար մարտիկների: Երկար մտորումներից հետո մահմեղականությունն ընդունած նախկին ստրուկ պարսիկի՝ Սալման ալ-Ֆարիսիի խորհրդով նա որոշեց Մադինայի շուրջը փորել լայն ու խոր պաշտպանական խանդակ (խրամ), որն անհաղթահարելի էր լինելու մեքքացիների հեծելազորի համար: 60 օրվա ընթացքում խանդակը փորվեց և նրա շրջագծով խրամատների մեջ տեղափորկեցին նետաձիգները: Ինքը՝ Սուհամմադը ևս անձամբ մասնակցում էր խանդակի փորման աշխատանքներին:

Ուշազրավ է նշել, որ չնայած քաղաքական և կրոնական տարածայնություններին, քաղաքի պաշտպանության գործին իր մասնակցությունը բերեց Մադինայի ողջ բնակչությունը: Միայն հուդայականությունը դավանող Բանու Կուրայզա ցեղը հայտարեց, որ ինքը պահպանելու է չեզոքություն: Սակայն ճակատամարտը սկսվելուց հետո խախտելով այդ չեզոքությունը, հրեաները ոչ միայն սկսեցին օգնել խսլամի թշնամիներին, այլև իրենց անմիջական մասնակցությունը բերեցին ռազմական գործողություններին:

Մարտի 31-ին, երբ թշնամին մոտեցավ քաղաքին, մեծ խորությամբ փորված չորս կիլոմետրանոց խանդակը արդեն պատրաստ էր: Տեսնելով այդ խորը փոսը և տեղյակ լինելով, որ Սուհամմադի գորքերը աշքի են ընկնում իրենց բարձր կազմակերպվածությամբ, մեքքացիները չհամարձակվեցին զրոհելու քաղաքի վրա, այլ այն պաշարեցին: Մադինայի շրջապատումը, սակայն ձգձգվում էր: Պատրաստ չլինելով նման պատերազմի, պաշարողները մնացին առանց սննդամթերքի: Հսկայական բանակը կարիք ուներ սնվելու և ուղտերի հոտերը կերակրելու: Իսկ դաշտերում այլևս բերք չկար: Այդ բոլորին ավելացավ նաև այն, որ չնայած

ապրիլ ամիսն էր, սկսեց ցրտել, ծայր առան ուժեղ անձրևներ: Խսկ կուրայշիների բանակը կացարան չուներ և գտնվում էր բաց երկնքի տակ: Պաշարումից հետո 15 օր անց սկսվեց ուժեղ փոթորիկ, որի հետևանքով մերքացիների վրանները պոկվում էին տեղից. հանգչում խարույկները, քամին ցրում էր ուղտերին ու ձիերին: Եղանակի փոփոխությունը մարզաքեն վերագրեց հրեշտակների աջակցությանը և դա ավելացրեց իր զորքերի վստահությունը ճակատամարտի բարենպաստ ելքի նկատմամբ: Մինչդեռ հարձակվողների շարքերում կուր համախմբվածություն գոյություն չուներ: Զանազան բեղվինական ցեղերից ու եթովպացիներից բաղկացած բանակում առկա չեր նաև շահերի միասնություն: Շուտով այդ բանակի շարքերում սկսվեցին երկպառակություններ:

Այդ բոլորի հետևանքով, ընդամենը երեք շաբաթից հետո Արու Սուլֆյանը ստիպված էր հանել բաղարի պաշարումը և հեռանալ: Սուլհամմադի համար դա հաղթանակ էր: Անշափի մեծ էր նաև «Խանդակի մոտ տեղի ունեցած ճակատամարտի» բարոյական նշանակությունը: Մինչդեռ մերքացիները կրել էին պարտություն. որի անխուսափելի հետևանքը հանդիսացավ այն, որ քոչվորների հետ նրանց դաշնակցային կապերը ստացան ուժգին հարված: Ողջ Արարիան, որը շունչը պահած հետևում էր Մադինայի մոտ ծավալվող իրադարձություններին, համոզվեց, որ նույնիսկ ունենալով այդպիսի մեծ բանակ հնարավոր չէ հաղթել Սուլհամմադին: Խանդակի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, երբ թշնամական ուժերի վերջին ջոկատը հեռացավ Մադինայից. մարզաքեն դիմելով իր մարդկանց ասում է. «Նրանք այսուհետև այլևս չեն զա մեր դեմ: Այժմ հերթը մերն ե»: Ճակատամարտից հետո բեղվինները ավելի ուժգին կերպով զգացին մարզաքեի իշխանության հզորությունը:

Ճակատամարտից հետո Սուհամմադը սկսեց մեկ առ մեկ հաշվեհարդար տեսնել ներքին թշնամու՝ «դպրանների» հետ, որոնք ճակատամարտի ընթացքում կամ օգնել էին մերքացիներին, կամ իրենց ձևացնելով մահմեղականների կողմնակիցներ պահպանել էին չեզորություն։ Բանու Կուրայքա ցեղի դաշնակից Առւս ցեղի ավագները միջնորդում են Սուհամմադի առջև, որպեսզի նա իրեն դպրանած այդ ցեղին բույլ տա, ինչպես մինչ այդ բույլատրել էր Բանու նադիր ցեղին, որ իրենց ընտանիքներով ու ինչքով հեռանան, առանց նրանց նկատմամբ բոնություն գործադրելու։ Այդ հարցի օրինական լուծման համար մարզարեն բույլ է տալիս ընտրել մի հաշտարար դատավոր։ Որպես դատավորի թեկնածու առաջարկվում է Ասադ իրն Սուլավի թեկնածությունը։ Բանու Կուրայքա ցեղի հրեաները համաձայնվում են այդ թեկնածության հետ։ Սուսուլման դատավորը վախենալով, որ իր մեղմ վճիռը կարող է առաջ բերել մարզարեի զայրույթը, կայացնում է հետևյալ վճիռը. մեղավորները պետք է պատժվեն իրենց իսկ հին օրենքների համաձայն։ Ըստ այնմ դատավորը վկայակոչում է Ասուլածաշունչը, որտեղ ասվում է, որ չպետք է խնայել դպրաններին։ Դատավորի վճիռը անողոք ու դաժան էր. բոլոր դպրան տղամարդկանց սրի քաշել, նրանց կանանց ու երեխաներին մատնել ստրկության, իսկ պատժվածների ունեցվածքը բոնազրավել ու բաժանել մուսուլմանների միջև։ Վճիռը ի կատար ածելու համար շուկայի հրապարակի մոտ փորեցին խորը փոսեր, որոնց մոտ բերեցին կապկապված հրեա տղամարդկանց և հերթով կտրելով նրանց գլուխները, նետեցին փոսերի մեջ։ Իսկ նրանց կանայք և երեխաները ստրկության վաճառվեցին Նեղդի բեղվիններին։ Սուսուլմանները հիմնահատակ կործանեցին նաև հրեական այդ ցեղի բնակավայրը, իսկ նրանց հողերը զավթեցին։ Բանու

Կուրայզա ցեղը ամբողջապէս ոչնչացվեց: Այսպիսով, 627 թ. տեղի ունեցավ այսպէս կոչված «ներքին թշնամու»՝ հրեաների մաքրագործումը: Այսուհետև Մադինան փաստորեն դարձավ մուսուլմանական ուժմայի համածին քաղաք:

Այդ դաժան հաշվեհարդարների լուրը կայծակի արագությամբ տարածվեց ողջ Արաբիայում: Տեսնելով, որ բոլոր այն ցեղերը, որոնք կամովին հանձնվել են մարզարեին և ընդունել նրա իշխանությունը վնասներ չեն կրել, բեղվինական մի շարք ցեղեր որոշեցին հետևել այդ օրինակին: Իր հերթին, իրադարձությունների տրամաբանության հետ կատարյալ համապատասխան, 628 թ. Սուհամմադը սկսեց պահանջել, որ ցանկացած խմբավորում, որը ցանկանում է միանալ իրեն, նախրան իր հետ համապատասխան դաշինքի կնքումը պարտավոր է ընդունել իսլամը:

«Խանդակի» ճակատամարտում ձեռք բերած հաղթանակից հետո Սուհամմադը որոշեց իր ուշադրությունը կրկին սեղող Մերքայի վրա: Հստ այնմ ուժեղացան մերքացիների քարավանների վրա հարձակումները: Դրա հետ մեկտեղ, մարզարեն ծրագրել էր արմատական քայլեր կատարել իր թշնամուն ծնկի բերելու համար՝ Մերքան ենթարկել «Հացի շրջափակման»: Սուհամմադի խնդրանքով երկրագործական Յեմամ շրջանից, որտեղ գործում էր Սուսեյխիմա մարզարեն, դադարեցվեց ցորենի մատակարարումը Մերքային:

Քաղաքական թոհուրոիդ պայմաններում մարզարեն չէր մոռանում նաև իր անձնական կյանքն ու գործերը դասավորելու մասին: Նա կանոնավոր կերպով ստանում էր ռազմական ավարի հինգերորդ մասը: Միաժամանակ նա ցանկություն հայտնեց ամուսնանալու կուրայշիների շեյխի կնոջ՝ հրեուիի Ռայխանայի հետ: Բայց վերջինս ցանկացավ ընդունել իսլամը, ուստի և դար-

ձավ սուլ մարգարեի հարճը և ապրում էր նրա մյուս կանանցից առանձին: Մի քանի ամիս անց Սուհամմադը որպես հյուր այցելում է իր որդեգրած հոգեզավակ Զայդին և նրա տանը տեսնում նրա կնոջը՝ Զայնաբին թեթև տնային հագուստով: Շփոթահար լինելով, նա դուրս է զայիս տնից և հեռանում: Սակայն Զայնաբը նկատում է, որ իրեն տեսնելով մարգարեի աշքերը փայլատակել են և այդ մասին նա պատմում է իր ամուսնուն՝ Զայդին: Վերջինս գնում է Մուհամմադի մոտ և նրան խնդրում, որ օրինություն տա իր ապահարզանին, որպեսզի մարգարեն Զայնաբին վերցնի կնության: Մարգարեն արգելում է Զայդին դիմելու այդ քայլին: Սակայն Զայդը այնուամենայնիվ որոշում է բաժանվել կնոցից, գուցե աշքի առաջ ունենալով հեռահար հնարավոր վտանգը: Բոլոր դեպքերում այդ պատմությունը ավարտվում է Զայնաբի հետ Մուհամմադի ամուսնությամբ: Այդ առթիվ Ղուրանում ասվում է. «Եւ երբ դու նրան, որին Աստուծ ողորմել է եւ դու կ ես ողորմել ասացիր, «կնկանդ պահի ը մոտդ, և վախի ը Աստուածանից» եւ դու (ով Մուհամմեդ) ծածկում էիր իր սրտումը, ինչ որ Աստուծ արդէն յայտնել էր, եւ վախում էիր մարդկանցից, թեեւ աւելի է վայելում որ Աստուածանից վախես,- եւ երբ Զեյդը պետք եղածը իր կնոց համար վճարեց, մենք քեզ նրա հետ ամուսնացրեցինք, որ հայտացեալների համար նեղութիւն չը լինի իրանց որդեգրածների կնիկներն առնելու, երբ նրանց ապահարզանը նրանք կը վճռեն Աստուծոյ պատերը պետք է կատարի» (33:37):

Մադինայում անմիջապես սկսեցին խոսակցություններ գնալ, որ մարգարեն ինքն է խախտում պատվիրանները, քանի որ ամուսնացել է հարսի հետ: Ինչքան էլ որ Մուհամմադը բացարում էր, որ Զայդը իր հարազատ որդին չէ, այլ որդեգրած զավակ, միևնույնն է, անօգուտ էր: Ուստի նա ստիպված եղավ իրապարա-

կայնորեն չեղյալ հայտարարել որդեզրման վերաբերյալ պայմանագիրը:

Իր հասցեին ամբոխի այդ մեղադրանքները զայրացրին ու հունից հանեցին մարզարեին: Այդ զայրույթը նա տարածեց նաև իր կողմնակիցների վրա: Օրինակ, հայտարարվեց, որ այսուհետև մուսուլմաններին չի թույլատրվում առանց հիմնավոր պատճառի, հենց այնպէս, մտնել մարզարեի տունը: Որ իր տան այցելուները այսուհետև իր կանանց հետ կարող են խոսել միայն վարագույրի հետևից: Օրենքի ուժ ստացավ նաև այն սովորույթը, որ մարզարեի կանայք կողմնակի մարդկանց ներկայությամբ պետք է ծածկեն իրենց դեմքերը: Մինչ այդ արար կանայք իրենց դեմքերը ծածկում են կիզիչ արևի ճառագայթներից պաշտպանվելու համար, իսկ այժմ մարզարեի կանայք պարտավոր են իրենց դեմքը ծածկել բոլոր կողմնակի տղամարդկանցից: Աստիճանաբար այդ սովորույթը տարածվեց բոլոր մահմեդական կանանց վրա:

Մուհամմադի անձնական կյանքում տեղի ունեցավ նաև մեկ այլ տհաճ միջադեպ, որը հանդիսանում էր վարկաբեկիչ սպառնալիք: Այս անգամ պատմությունը կապված էր իր սիրեցյալ կնոջ՝ Այիշայի հետ: Ուղտերի քարավանով ինչ որ վայր մեկնելիս Այիշան ճանապարհին անսպասելի կերպով անհետացել էր: Գտնվել էր հաջորդ օրը, երբ զինվորներից մեկը ուղտի վրա նստած նրան հետ էր բերել: Քարավանից հետ մնալու պատճառը նա մեկնաբանել էր հետևյալ կերպ: Նստելով իրեն տեղափոխող պատզարակի մեջ, հանկարծ հիշում է, որ վրանում թողել է մարզարտյա մանյակը և անմիջապէս վերադարձել է հետ այն վերցնելու: Իսկ պատզարակը տանող մարդիկ, որոնք կանգնած են եղել քիչ հեռու, երբ մարզարեի կինը նստում էր նրա մեջ, չեն նկատել, որ նա դուրս է եկել պատզարակից և շարունակել են իրենց ճա-

նապարիք: Եվ Այիշային պատահմամբ հանդիպել է այդ կողմերից անցնող Սալֆան անունով զինվորը, որը մարզարեի կնոջը բերել ու հանձնել է իր ամուսնուն:

Ողջ Մադինայում սկսում են պտտվել շշուկներ, որ մարզարեի կինը դավաճանել է: Նույնիսկ տեղական բանաստեղծները հորինում են ոտանավորներ սիրային մանյակի մասին: Ոչ ոք չէր հավատում մանյակի վերաբերյալ վարկածին, համարելով, որ դա նրբին ձևով պլանավորված սիրային հանդիպում է եղել: Մուհամ-մադը շատ էր սիրում Այիշային և չէր ուզում հավատալ նրա դա-վաճանությանը: Բայց և հասկանում էր, որ եթե ներեր նրա այդ վարմունքը, ապա վերջնականապես Մադինայի բնակչության շրջանում կկորցներ իր հեղինակությունը:

Տեական ժամանակ նա աղերսագին աղոթքներով դիմում է Ալլահին, որպեսզի բարձրյալն իր համար բացահայտի ճշմար-տությունը և ահա այդպիսի աղոթքներից մեկի ժամանակ ստա-նում է հայտնություն, որ կնոջը դավաճանության մեջ մեղադրելու համար անհրաժեշտ է չորս վկաների վկայություններ, իսկ քանի որ վկաներ չկան, հետևաբար Այիշան մարուր է: Իսկ բոլոր նրանք, որոնք առանց որևէ հիմքի մարզարեի կնոջ նկատմամբ ներկա-յացնում են այդպիսի ծանր մեղադրանք, ենթակա են պատճի մտրակահարության միջոցով: Մի քանի այդպիսի մարդիկ հրա-պարակավ պատժվեցին, իսկ մյուսները այլևս փակեցին իրենց բերանները: Հարցը փակվեց: Կուրանում այդ մասին ասվում է: «Ահա՝ նրանք, որ զրպարտութիւն են անում, նրանք ձեզ ազգական են, նրանց վնասակար մի՝ համարեք ձեզ համար, այլ նրանք ձեզ օգուտ են. նրանցից ամեն մի մարդու կը վայելէ այն պատիժը, ինչ հանցանք որ գործել է, եւ նա որ նրանցից մեծ սուտն է ասել, նրա համար մեծ պատիժ կայ» (Ղուրան, 24:11):

Մինչդեռ գնալով, մարզարեն ավելի վճռականորեն էր տրամադրվում իր նոր կրոնը տարածելու և նորանոր հավաքականություններ իր իշխանությանը ենթարկելու համար: Նա սկսեց տարբեր ուղղություններով ուղարկել զինված ջոկատներ, քոչվոր հեթանոսներին ստիպելու համար, որ ընդունեն խալամբ: Այդ դժվարին գործը զլուս բերելու համար քաղաքական կամքի հետ միաժամանակ անհրաժեշտ էին միջոցներ, շատ միջոցներ, մարտոնակ բանակ պահելու և զինվորներին վարձատրելու համար: Ուստի մարզարեն ձեռնամուս եղավ իր սեփական քարավանային առևտրի կազմակերպմանը:

Այդ բոլոր համալիր միջոցառումների իրականացման արդյունքները իրենց երկար սպասեցնել չտվեցին: Շուտով քոչվորները ևս հասկացան, թե ով է անապատում իրական տեր ու տիրականը և իրար հետևից սկսեցին Սադինա ժամանել քեռնավորված քարավաններ, իրենց հետ բերելով հարուստ նվերներ մարզարեի համար: Սուհամմադին այցելության էին զայխ նաև ցեղերի առաջնորդների դեսպանություններ, աշխատելով կանխել մյուսներին և իրենց համար կորզել ավելի ձեռնտու պայմաններ:

Այս բոլորի տրամաբանական հետևանքը հանդիսացավ այն, որ 627 թվականին ստեղծվեց համադաշնություն հեթանոսաբանությունների, խալամ ընդունած քոչվորների միջև:

628 թ. Սուհամմադը հայտարարեց, որ ինքը նոր հայտնություն է ստացել, որի ժամանակ Ալլահը իրամայել է իրեն «փոքր ուխտագնացություն» (ումրա) կատարել Մեքքա Քաաբային երկրպագելու համար: Երբ նա իր հայտնության մասին պատմեց մուտքամաններին, նրանք որոշեցին արշավանք կազմակերպել Մեքքա մտնելու համար, քանի որ այլապես մարզարեին չէին թույ-

լատրի մտնելու այդ քաղաքը, որտեղից նա վտարված էր: Մուհամմադին այդ ուխտագնացության ժամանակ ուղեկցեց յոթ հարյուր մարդ (այլ տվյալներով մինչև 1500):

Մադինայից ուխտագնացները շարժվեցին ոտից զլուխ զինված, սակայն առաջին իսկ հանգստի ժամանակ, մարզարեն իր վրայից հանեց զրահը և հազնվեց ուխտագնացի սպիտակ զգեստ, համենայն դեպք սուրբ կապելով իր կողքին: Նույն կերպ վարվեցին նաև մյուսները: Շուտով հետախուզությունը տեղեկություն բերեց, որ մեքքացիները ուխտագնացների դեմ ուղարկել են հեծյալ մի ջոկատ և իրենց աստվածների անուններով երդել են մուսուլմաններին թույլ չտալ մտնելու քաղաք: Իր առջև հարուցված այդ արգելքը հաղթահարելու նպատակով, Մուհամմադը գտավ տեղանքը լավ իմացող ուղեկցորդների, որոնց օգնությամբ լուսային արահետներով ինքը և իր մարդիկ մոտեցան Մեքքային և ճամբար դրեցին քաղաքի մատուցներում գտնվող Խուդայիրիյա կոչված վայրում: Ի դեպք, մարզարեն նախազգուշացրեց բոլորին, որ առաջիկա մարտերը մղվելու են հանուն հավատի և հորդորեց քիչ մտածել ավարի մասին: Նա իր փեսա Օսման իրն ալ-Աֆֆանին ուղարկեց քաղաք կուրայշիների հետ քանակցություններ վարելու: Օսմանը նրանց առաջարկեց, որ թույլ տան մուսուլմաններին խաղաղ, առանց հետին մտքերի մտնելու քաղաք Քաարայում իրենց աղոթքը աստծո ականջին հասցնելու համար, խոստանալով, որ իրենց այդ խնդրանքին ընդառաջ գնալու դեպքում մուսուլմաններն այլևս հարձակումներ չեն գործի մեքքացիների քարավանների վրա:

Մինչեռ քաղաքում կրքերը եռում էին. բոլորի համար պարզ էր, որ չի կարելի թողնել, որ մարզարեն մտնի քաղաք, քանի որ դա կդիտվեր որպես մեքքացիների պարտություն: Մյուս կող-

մից, սակայն շթողնել ևս չէր կարելի, որովհետև դա կլիներ սրբապղծություն, եթք մարդկանց արգելվում է երկրապագել աստծուն:

Մազարեի այդ փոքր ուխտագնացության թաքնված իմաստը կայանում էր հետևյալը: Բանը նրանումն էր, որ Մերքայում գոյություն ուներ ծառված մուսուլմանամետ մարդկանց մի ուժեղ կուսակցություն և մարզարեն հույս ուներ, որ իր գորքերի քաղաք մտնելուն պես այնտեղ տեղի կունենա հեղաշրջում: Սակայն նրա այդ սպասելիքները չիրականացան: Ավելին, քոչվորները լուր բերեցին, որ մարզարեի բանագնաց փեսան՝ Օսմանը, սպանված է: Այդ լուրը ուղղակի հունից հանեց Սուհամմադին և նա հայտարարեց, որ հետ չի վերադառնա, մինչև որ կործանիչ հարված չհասցնի իր թշնամիներին: Բոլոր մահմեդականները մեկ մարդու պես մոտենալով նրան, երդվեցին, որ մինչ ի մահ կովելու են:

Սակայն շուտով բանագնացի մեռնելու մասին լուրը հերքվեց և հայտնի դարձավ, որ նա ընդամենը պատանդ է վերցվել: Քիչ ավելի ուշ Սուհամմադի ռազմական ճամբարը ժամանեց կուրայշիների պատվիրակությունը Սուխայլ իրն Ամրի զլսավորությամբ, որն իր հետ բերեց նաև մարզարեի փեսային: Պատվիրակության դեկավարը հայտնեց, որ Մերքայի ավագանին պատրաստ է տաս տարի ժամկետով Սուհամմադի հետ կնքել խաղաղության պայմանագիր: Առաջարկը ծանր ու թեք անելուց հետո մարզարեն տվեց իր համաձայնությունը և 628 թ. մարտի 13-ին կողմերի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որը հայտնի է Խուղայիրի պայմանագիր անունով: Հատ եռյան դա մի գրավոր երդում էր (արար. բայ' ա), որը ներառում էր հետևյալ պայմանները, կողմերի միջև 10 տարի ժամկետով հաստատվում է խաղաղություն. մահմեդականներին թույլատրվում է ուխտագնացութ-

յան մեկնել Մեքքա, սակայն առանց գենք կրելու (թույլատրվում էր ունենալ միայն սուր՝ ինքնապաշտպանության համար): Սուհամմադը պարտավորվում էր հարձակումներ չգործել Մեքքայի քարավանների վրա: Պայմանագրում Սուհամմադը չէր ընդունվում որպես մարզարե, ուստի և նրա անունը հիշատակելիս այդ բառը բացակայում էր: Պայմանագրում նաև նշվում էր, որ եթե մեքքացիներից որևէ մեկը, որն առանց այն մարդկանց համաձայնության, որոնք նրա նկատմամբ ունեն օրինական իշխանություն, անցնի Սուհամմադի կողմը, նա պետք է վերադարձվի մեքքացիներին, իսկ եթե Սուհամմադի կողմից որևէ մեկը անցնի մեքքացիների կողմը, նա չպետք է վերադարձվի: Եթե որևէ ցեղի մարդիկ ցանկանում են Սուհամմադի հետ մտնել դաշինքի մեջ, ապա նրանք կատարելապես ազատ են այդ կերպ վարվելու, իսկ նրանք, որոնք ցանկանում են դաշինքի մեջ մտնել մեքքացիների հետ, նույնպես ունեն դրա իրավունքը: Պայմանագրում այնուհետև ասվում էր, որ ուղիղ մեկ տարի Սուհամմադն ու իր կողմնակիցները իրավունք չունեն մտնելու Մեքքա և պարտավոր են հեռանալ նրա շրջակայթից: Իսկ մեկ տարի հետո կուրայշիները պարտավորվում են երեք օրով հեռանալ Մեքքայից, որի ընթացքում Սուհամմադն իրավունք ունի իր զինված զոկատներով մտնել քաղաք, այդ երեք օրերի ընթացքում մնալ այնտեղ և Քաարայում աղոթել ու կատարել ուխտավորի իրենց պարտականությունը:

Սուհամմադը և մուսուլմանական վերնախավը այդ պայմանագիրը գնահատեցին որպես դիվանագիտական հաղթանակ, նկատի ունենալով, որ առաջին անգամ կուրայշյան ազնվականությունը Սուհամմադին ճանաչեց որպես հավասար կողմ: Սակայն շարքային մուսուլմանների գանգվածը, որն ատում էր Մեքքայի հարուստների օլիգարխիային և երազում էր այդ քաղաքը

հաղթական մուտքի մասին, ծայրահեղորեն դժգոհ էր: Առանձնակի դժգոհություն էին դրսերում Մուհամմադի զինվորները, որոնք տրամադրվել էին արյունահեղ ճակատարմատի համար, իուս ունենալով ձեռք բերել հարուստ ավար: Նրանք գտնում էին, որ ոչ մի դեպքում հեթանոսների հետ չգետր է կնքվի պայմանագիր: Դժգոհությունն ավելի մեծացավ այն բանից հետո, եթե մարդարեն հայտարարեց, որ Քարաքայի փոխարեն աղոթքը և զոհերի մատուցումը պետք է տեղի ունենա հենց իրենց ճամբարում: Զնայած տրտունջներին, ոչ որ սակայն շհամարձակվեց առարկել Մուհամմադի այդ որդշմանը: Զնայած այդ դժգոհությանը, Մուհամմադի քաղաքական հեղինակությունը Խուղայիրի պայմանագրի կնքումից հետո էլ ավելի բարձրացավ: Արաքական մի շարք ցեղեր, հատկապես նրանք, որոնք թշնամաբար էին տրամադրված Մեքքայի նկատմամբ, ճանաչեցին և ընդունեցին Մուհամմադի քաղաքական իշխանությունը: Նրանց հետ կնքելով պայմանագրեր, մարզարեն ոչ միշտ էր նրանցից պահանջում ընդունել իսլամը: Խույնիսկ կուրայշիների առանձին ներկայացուցիչներ, որոնք նախկինում հանդիսանում էին իսլամի թշնամիներ, այժմ անցնում էին մարզարեի ճամբարը և դառնում մահմեդականներ:

Այդ կերպ վարվեցին, օրինակ, Խալիդի իրն ալ-Վալիդը, Ասրի իրն ալ-Ասր և ուրիշներ, որոնք հետագայում դարձան արաքական խալիֆայության փառաբանված զորավարներ ու պետական գործիչներ: Այդ մարդիկ, որոնք որպես կանոն անտարբեր էին կրոնի նկատմամբ, սակայն այժմ տեսնում էին, որ իսլամը վեր է ածվել լուրջ քաղաքական ուժի, որին միանալը իրենց խոստանում է մի շարք առավելություններ ու օգուտներ:

Խուղայիրի պայմանագրի ստորագրումը միաժամանակ նշանակում էր, որ ճանաչվում է իսլամական ումմայի քաղաքա-

կան ստատուսը որպես իր նշանակությամբ հավասար Մեքքայի գործընկեր: Դա միաժամանակ նշանակում էր, որ Մեքքայի իշխանությունները վերջապես հասկացել են, որ խաղը տանուլ է տրված և քանի դեռ դա հնարավոր է, իրենք պետք է աշխատեն պահպանել քաղաքի առկա վիճակը մահմեղական համայնքի հետ ինտեգրվելու ճանապարհով: Ակնառու կերպով տեսնելով, որ քանակում առկա է դժգոհություն, Սուհամմադը հայտարարեց, որ Մեքքա մեկնելը և այնտեղից Սադինա վերադառնալու հրամանը իրեն տրված է Ալլահի կողմից և ինքը միայն կատարել է նրա կամքը: Նրա ասելով, ամենազոր Ալլահը միշտ առատաձեռն կերպով պարզեցում է նրանց, ովքեր հավատարմորեն կատարում են նրա կամքը: Դրան նա ավելացնում է, որ հետդարձի ճանապարհին գորքերին սպասում է հարուստ ավարը: Ի դեպ, նրա այդ խոստումը անհիմն չէր: Բանը նրանումն է, որ մեքքացիներն առաջարկել էին Սուհամմադին քաղաքի մոտերքից իր մարդկանց հեռացնելու դիմաց, որպես փրկազին իրավունք տալ կողոստելու Մեքքայից հյուսիս գտնվող Խայբար հարուստ օազիսի հրեաներին, որոնք հանդիսանում էին մեքքացիների դաշնակիցները և միաժամանակ իսլամի անհաշտ թշնամիներ: Այդ օազիսում ապաստան էին գտել նաև հրեական կայնուկա և ան-Նադիր ցեղերի մարդիկ, որոնք մարզարեի գործադրած հալածանքների հետևանքով Խանդակի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո փախել էին և հիմնավորվել Խայբարում:

Սադինայում մի որոշ ժամանակ հանգստանալուց հետո, 628 թ. մայիսին Սուհամմադը հավաքեց մի ուժեղ ջոկատ և շարժվեց դեպի Խայբարի օազիսը, որը հիմնականում բնակեցված էր հրեաներով: Նրա հետ մեկնեցին միայն նրանք, ովքեր եղել էին Մեքքայի պատերի մոտ: Դա մի տեսակ պարզեատրում էր հավա-

տարմության, ինչպես նաև զինվորների դժգոհության ալիքը մարելու համար: Իր զինվորների հարվածների տակ օազիսի մանր ամրոցները մեկը մյուսի հետևից ընկան: Իսկ հրեա հողազորները, որոնք կազմում էին Խայբարի հիմնական մասը, նույնիսկ դիմադրություն ցույց չտվեցին: Մուսուլմանները համառ դիմադրության հանդիպեցին միայն օազիսի կենտրոնական մասում գտնվող ամրոցների զինվորների կողմից, որի հետևանքով տվեցին 25 զոհեր: Խայբարում գործն ավարտելուց հետո, մարզարեի զորքերը այնուհետև շարժվեցին ոչ հեռու գտնվող Ֆուդաք (Ֆադաք) օազիսը, որը հանձնվեց առանց դիմադրության, համաձայնվելով, որ իրենց բնակավայրերում բնակիչները մնան որպես իրենց իսկ հողերի վարձակալ և դառնան հարկատու, Մուհամմադին հանձնելով իրենց բերքի կեսը: Օգտվելով բարեպատեհ առիթից, մարզարեն ջախչախեց նաև Վադի ալ-Քուրա, Ֆաթաք և Թայմէ օազիսների հրեական գաղութները: Հրեաներից նրանք, ովքեր դիմադրություն չեն ցուցաբերում մարզարեի զորքերին, նրանց թույլատրվում էր հեռանալ Արաբիայի սահմաններից:

Հրեական վերոհիշյալ գաղութներից, հատկապես Խայբարից ձեռք բերված ավարը ուղղակի առասպելական էր. ուկի, արծաթ, մեծ թվով ստրուկներ և այլն: Խայբարի հրեաների հետ Մուհամմադը կնքեց հաշտության պայմանագիր՝ տրված «Մովսեսի օգնական և Եղբայր, մարզարեների ճիշտ վկայություն» Մուհամմադից Հին Կտակարանի հետևորդների խմբին: Խայբար օազիսը Մուհամմադը բաժանեց առանձին կտորների, յուրաքանչյուր հետևակ զինվորին հատկացնելով մեկ բաժին, իսկ հեծյալին՝ երկու բաժին: Մուհամմադին հասանելիք ավարի թվում էր նաև տասնյոթամյա մի զեղեցկուի հրեա Սաֆիա անունվ, որի հետ

մարզարեն ամուսնացավ, նախապես հրամայելով սպանել նրա ամուսնուն:

Այնուհետև իրար հետևից Մուհամմադը ընկճեց ու իր իշխանությանը ենթարկեց Վաղի ալկուրա, Թայմա վայրերի ցլեղերին, որոնք պարտավորվեցին իրենց բերքի որոշ մասը տրամադրել մարզարեին և վճարել զլխահարկ՝ գտնվելու համար իսլամի հովանավորության տակ:

Խայրարի անկուսից հետո մարզարեի նկատմամբ վրիժառությամբ լցված հրեաները փորձում էին մահափորձ կատարել նրա կյանքի դեմ: Ավանդությունը պատմում է, որ մի ստրկուիի, ենթադրաբար հրեուիի, որը կորցրել էր իր բոլոր հարազատներին, որոշում է Մուհամմադից լուծել իր ցեղի և անձամբ իր վրեժը: Չնացնելով, թե ինքը հակված է խալամն ընդունելու, նա որպես նվեր մարզարեին մատուցում է մի եփված ոչխար, որի վրա քաված էր ուժեղ ներզործող թույն: Մի քանի հյուրերի ներկայաւթյամբ պատրաստվելով ընթրիքի, Մուհամմադը կարգադրում է մատուցել այդ ոչխարը: Մի պատառ վերցնելով իր բերանը, նա զգում է տհած համ և դուրս քրում բերանի պարունակությունը: Հյուրերից մեկը, որն արդեն կուլ էր տվել մսի մի կտոր, տեղնուտեղը մահանում է: Սակայն Մուհամմադը ևս էժան չի պրծնում: Դրանից հետո, ինչպես ինքն է ասել, այլևս երբեք իրեն լիարժեք առողջ չի զգացել: Իր կյանքի մայրամուտին ձեռք բերված հիվանդությունը և նրան հաջորդած մահը ևս մարզարեն վերազրել է այդ թունավորմանը: Սակայն վարկած կա այն մասին, որ մարզարեի անառողջ լինելու պատճառը պարբերաբար կրկնվող դողերոցն էր (մալարիա), որը տարածված հիվանդություն էր Խայրարի և Մադինայի կողմերում:

Չորս տարի տևած անընդմեջ զինված արշավանքների հետևանքով մուսուլմանների բանակը դարձավ հիխանալի կազմակերպված, կարգապահ և մարտունակ մի ուժ: Այդ բանակի զինվորները հասկացել էին, որ ոչ մի այլ զրադարձներ, այդ թվում նաև առևտուրը, հախուտն ու անկազմակերպ ասպատակությունները և այլն ի վիճակի չեն իրենց բերելու այնպիսի մեծ շահույթ, ինչպիսին բերում էին կազմակերպված ուսումնական արշավանքները:

Բանակում և պետական կառավարման մեջ իրենց հավատարիմ մարդկանց թիվն ավելացնելու նպատակով Սուլհամմադի կարգադրությամբ Եթովպիայից վերադարձան այնտեղ դեռ մնացած առաջին մուսուլմանները: Դրանց թվում էին նաև մարզարեի հորեղբորորդի Զաֆար իբն Աբու Թալիբը, ինչպես նաև Աբու Սուլյանի հարազատ դուստր Ումմ Հաբիբան, որը շուտով դարձավ Սուլհամմադի հերթական կինը: Այդ ամուսնությամբ մարզարեն իրեն կապեց Օմայանների հարուստ և ազդեցիկ տոհմի հետ:

Մերքա կատարած ուխտագնացությունից հետո Սուլհամմադը սկսեց նամակներ հղել շրջակա պետությունների տիրակալներին՝ Բյուզանդիայի կայսր Հերակլին, պարսից շահնշահ Խոսրով Բ Փարվեզին, Սիրիայի բյուզանդական տեղապահին, Հարբեշտանի նեցուսին, հարավ-արևելյան Արաբիայի բանու հանիֆա ցեղի առաջնորդին, Հասանիների իշխանության թագավոր Հարիդ VII-ին, Եգիպտոսի կառավարիչ ալ-Սուլիկաուկիսին, դասանյան իշխանին, Օմանի, Եմենի թագավորներին, Բահրեյնի, Յամանայի կառավարիչներին և այլն: Այդ նամակները սկսվում էին հետևյալ բառերով. «Սուլհամմադի, Ալլահի մարզարեի կողմից»: Այդ ուղերձներում նա կոչ էր անում բոլորին ընդունել խլամը որպես միակ ծշմարիտ կրոն, ճանաչել Ալլահին և Մադինայի հետ կնքել խաղաղության պայմանագիր: Այդ ժամանակվա աշ-

խարիի տիրակալների մոտ այդ նամակները առաջ էին բերում ոչ միանշանակ արձագանք: Օրինակ, Եզիպտոսի տեղապահը նամակով պատասխանեց մարզարեին և որպես նվեր նրան ուղարկեց երկու ստրկուհիների, որոնցից մեկի հետ, որը դպտի քրիստոնյա էր Մարիամ անունով, Մուհամմադն ամուսնացավ: Ի դեպ, նրանց ամուսնությունից ծնվեց մի տղա Իբրահիմ անունով, որը սակայն վաղ մանկության հասակում մահացավ: Իսկ Իրանի շահ Խոսրով Փարվեզը զայրանալով, որ նամակում իր անունը զրկած է Մուհամմադի անունից հետո, պատում է այն և նույն օրը Եմենում իր տեղապահին ուղարկում է նամակ հետևյալ բռվանդակությամբ. «Յասրիբում հայտնվել է մի խելազար, որն իրեն երեակայում է որպես մարզարե: Ինձ ուղարկիր կամ նրան, կամ նրա զլուխը»: Ավանդության համաձայն, եթե մարզարեին տեղեկացնում են, որ շահը պատառուտել է իր նամակը, նա ասել է. «Ինչի որ վերածեց նա իմ նամակը, նույնի կվերածվի նրա թագավորությունը Ալլահի կողմից»:

Սանր իշխանավորներին գրած նամակներում Մուհամմադը խոստանում էր, որ եթե նրանք դառնան մահմեղական և հնագանդվեն Ալլահին ու նրա մարզարեին և որպես տուրք վճարեն ստացվող բերքի տասներորդ մասը, ապա նրանք կգտնվեն Ալլահի և Մուհամմադի պաշտպանության ու հովանավորության ներքո:

Սակայն իսլամի հաղթարշավն ապահովելու համար խաղաղ հորդորներից առավել մարզարեն օգտագործում էր զենքի ուժը: 628 թ. երկրորդ կեսին և 629 թ. սկզբին նա շարունակում էր ընկճել ու իրեն ենթարկել նորանոր քոչվորական ցեղերի, ջոկատ ջոկատի հետևից ուղարկելով անսպատ: Ըստ որում, նա ինչպես պարտավորվել էր Խուդայի խաղաղության պայմանագրով, չեր

անհանգստացնում ոչ Սեբրայի կուրայշիներին և ոչ էլ նրանց դաշնակիցներին: 629 թ. մարտին մոտ երկու հազար մուսուլմաններ մարգարեի զիխավորությամբ շարժվեցին դեպի Սեբրա ուխտագնացության՝ Քաքաբային երկրպագելու համար: Դա նախատեսված էր Խուղայրիի պայմանագրով: Սակայն կուրայշիները խախտեցին պայմանավորվածությունը և Սեբրայից երեք օրով չհեռացան, ինչպես որ խոստացել էին: Սակայն այնուամենայնիվ թույլատրեցին, որ ուխտավորները մտնեն քաղաք և երեք օր կատարեն իրենց ուխտը: Այդ ուխտագնացության ժամանակ Սուհամմադին իր հարեմը համալրում է ևս մեկ նոր անդամով, կնության վերցնելով Մայմուն անունով մի կնոջ, որը այրի մահմեդական էր: Այդ կինը ազգակցական կապերով կապված էր Սեբրայի բազմաթիվ աշքի ընկնող ընտանիքների հետ, հետևաբար այդ ամուսնությունը նույնպես ուներ քաղաքական ենթատերատ:

Երբ լրացավ ուխտագնացների Սեբրայում գտնվելու երրորդ օրը, կուրայշիները Սուհամմադին հիշեցնում են Խուղայրիի պայմանագրի համապատասխան կետը և առաջարկում անմիջապես հեռանալ քաղաքից: Սուհամմադը նրանց պատասխանում է, որ ինքը կնության է վերցրել կուրայշիներից մի կին և նրանց հրավիրում է հարսանիքի: Հատ երսույթին մարգարեի հաշվարկը կառուցված էր նրա վրա, որ այդ հրավերը կարող էր հաշտեցնել թշնամիներին: Սակայն մերքացիները կտրականապես մերժեցին Սուհամմադի առաջարկը և վերցինս ստիպված եղավ իր հարսանիքը նշել քաղաքային դարպասներից դուրս:

Մարգարեի հերթական փորձը խաղաղ ճանապարհով նվաճելու Սեբրան այս անգամ ևս ավարտվեց անհաջողությամբ: Նա իր մարդկանցով վերադարձավ Մադինա: Նրա հետ մեկնեց նաև մերքացիների մի խումբ, որը գաղտնապես ընդունել էր խլամը:

Չնայած ձախողմանը, Սուհամմադի «ուխտագնացությունը» Մերքա այնուամենայնիվ ունեցավ շրջադարձային նշանակություն: Նախ բոլորը համոզվեցին, որ Մերքայի օրերը հաշված են: Այնուհետև, հեթանոսության միջնաբերդ հանդիսացող այդ քաղաքի ամենաակտիվ և ուներ մարդիկ զանգվածորեն սկսեցին ընդունել իսլամը և փախչել Մադինա: Կուրայշիների հետ կնքված պայմանագրում Սուհամմադը խոստացել էր փախստականներին չընդունել իր մոտ և սկզբում իսկապես կատարում էր իր այդ խոստումը: Սակայն այն փախստականները, որոնց թույլ չտրվեց մտնելու Մադինա, համախմբվեցին և կազմեցին մի ոչ մեծարիկ բանակ և սկսեցին կողոպուտի մատնել կուրայշիների քարավանները: Վերջիններս դիմեցին Մուհամմադին, խնդրելով սանձել այդ մուսուլմաններին: Բայց մարզաքն պատասխանեց, որ իր քաղաքում ինքը չի ընդունել նրանց, համաձայն պայմանագրի, հետևաբար նրանց արարքների համար պատասխանատու չէ:

Ի վերջո, համարելով չարյաց փոքրագույնը, և մտավախություն ունենալով, որ նորադարձ մահմեդականները Մերքայում կդառնան «հինգերորդ զորայուն» և կկազմակերպեն ներքին խռովություններ, կուրայշիները համաձայնվեցին, որ Սուհամմադը ընդունի փախստականներին: Իսկ դրա անխուսափելի հետևանքը եղավ այն, որ նորադարձ մահմեդականների հոսքը Մերքայից Մադինա աննախընթաց չափով ուժեղացավ: Սկսեցին Մադինա տեղափոխվել նաև Մերքայի ազնվազարմ ծագում ունեցող և մեծ հեղինակություն վայելող անձինք, ինչպիսիք էին, օրինակ, Եղիպտոսի ապագա նվաճող Ամր իբն ալ-Ասը և հետագայում մեծ զորավար Խալիդ իբն ալ-Վալիդը, որոնք հավաստիացրին Սուհամմադին, որ իրենք այսուհետև նրա հետ են: Մարզաբերի կողմն անցավ նաև նրա հորեղբայր ալ-Աբբասը, որը հետա-

գայում հանդիսացավ Աբբասյանների արքայատան նախահայրը: Այդ մարդը Մեքքայում հանդիսանում էր վերին աստիճանի աշխի ընկնող և մեծ ազդեցություն ունեցող դեմք:

Խալիդ իրն ալ-Վալիդին և Ամր իրն ալ-Ասին, որոնք ոչ շատ վաղուց հեթանոսներ էին, Սուհամմադը նշանակեց մուսուլմանական ջոկատների հրամանատարներ: Թեև դա «հին» մուսուլմանների շրջանում առաջ բերեց դժգոհություն, բայց Մեքքայի շատ հեթանոսներ, տեսնելով, որ խլամն ընդունելով կարելի է արժանանալ դիրքի ու պաշտոնի, շտապեցին դառնալ մահմեդականներ: Վերոհիշյալ նշանակումները Սուհամմադի կողմից կատարված միայն դիվանագիտական քայլ չէին: Իր սուր աշքով մարզարեն այդ մարդկանց մեջ նկատել էր զորավարական անուրանալի տաղանդ և բնավ չէր սխալվել: Հետազոյում այդ զորավարներն աշխի ընկան իրենց տարած բազմաթիվ փառահեղ հաղթանակներով:

Վերադառնալով Մեքքայից, Սուհամմադը սկսեց նախապատրաստել նոր արշավանք դեպի հյուսիս, այս անգամ Բյուզանդիայի սահմանները: Հավանաբար նա այդ ժամանակ եկել էր այն համոզման, որ մուսուլմանական համայնքը պահպանելու և մահմեդականների միջև կոնֆլիկտներն ու պատերազմները կանխարգելելու միակ միջոցը անընդհատ նվաճողական արշավանքներ կազմակերպելն է: Բացի այդ, պատերազմները կարող եին հանդիսանալ հարուստ ռազմական ավարի աղբյուր:

Բյուզանդիական արշավանքի պատրվակ հանդիսացավ այն, որ Բյուզանդիայի դաշնակից հասանիները սպանել էին մարզարեի դեսպանին: Արդեն վաղուցվանից Սուհամմադը ումմայի բյուջեի հինգերորդ մասը հատկացնում էր նոր զինատեսակների ձեռք բերմանը, սակայն նախապատրաստվելով նոր մեծ արշավանքի,

նա ռազմական ծախսերի վրա օգտագործեց վերջին արշավանք-ների ընթացքում ձեռք բերված ողջ ռազմավարը: Այդ բոլորի հետևանքով արդեն աշխանը նրա տրամադրության տակ կար մարտերում կոփիված և լավ զինված երեք հազարանոց բանակ: Սակայն ծանր հիվանդությամբ տառապող Մուհամմադը այլևս չէր կարող անձամբ զիսավորել իր բանակը: Նա մնաց Մադինայում, իսկ արշավանքի ընթացքում գորքերը զիսավորելու պարտականությունը դրեց Զայդի վրա, նրա տեղակալներ նշանակելով մարզաքելի հորեղորորդի Զաֆար իբն Աբու Թալիբին և Աբդալլահ իբն Ռավախին: Միայն այս երեք անձինք էին տեղյակ արշավանքի իրական նպատակների և հիմնական խնդիրների մասին:

Մեղյալ ծովի հարավային ափերի մոտ, Մուտ կոչված հովտում, մուսուլմանների արշավող գորքերը 629 թ. սեպտեմբերին հանդիպեցին թվաքանակով մի քանի անգամ իրենց գերազանցող բյուզանդական կանոնավոր բանակի և բյուզանդացիների դաշնակից արար հասանիների գորաջոկատների հետ: Ճակատամարտը դաժան էր և արյունահեղ: Առաջին իսկ ընդհարման ժամանակ մուսուլմանական գորքերի հրամանատարներից երկուսը սպանվեցին: Մեծ էր նաև նրանց կենդանի ուժերի կորուսը: Մարզաքելի բանակը ցիր ու ցան եղավ և միայն Խալիֆ իբն Վալիդի անդուլ ջանքերի շնորհիվ հաջողվեց գորքերի մնացուկները հավաքել ու համախմբելով բերել Մադինա: Քաղաքի բնակիչները պարտվածներին դիմավորեցին վիրավորական արտահայտություններով: Սակայն դրսորելով ճշմարիտ առաքինություն, Մուհամմադը շնորհակալություն հայտնեց Խալիֆին բանակը փրկելու համար: Միաժամանակ նա հրապարակավ երդվեց վրեժ լուծել իր մերձավորների արյան համար:

ՄԱՐԳԱՐԵՒԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՏՔԸ ՄԵԶՔԸ

Մերքայի հետ կնքված Խուղայրիի պայմանագիրը թեև ձեռնուու էր մարզարեին, սակայն այն չէր բավարարում նրան, քանի որ նրա նվիրական նպատակը իր ժողովրդին Մերքա վերադարձնելն էր: Սուհամմադի առջև կանգնած կրոնական ու քաղաքական խնդիրներից կարևորագույնը Մերքայի ազատագրումն էր բազմաստվածության հետևորդներից և ալ-Քաաքայի մաքրումը հեթանոսական կուրքերից: Ուստի նա պատրվակներ էր որոնում զինադադարի վերաբերյալ պայմանագիրը խախտելու համար: Ստացվեց այնպես, որ կուրայշիների դաշնակից բանու բարը ցեղի մարդիկ սպանեցին Սուհամմադի հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող բանու խուզաա ցեղի մի քանի անդամների: Սա սովորական արյան վրիժառության հատուցման դեպք էր:

Տեղեկանալով այդ մասին, Աբու Սուֆյանը, որը շահագրգոված չէր կոնֆիկտի մեջ մտնելու Սուհամմադի հետ, անմիջապես մեկնեց Մաղինա վեճը հարթելու համար: Սակայն մարզարեն նույնիսկ հրաժարվեց ընդունել նրան: Դրան անմիջապես հետևեց Մադինայում զինված բոշվորների հոծ զանգվածների կենտրոնացումը: Բայց ոչ որի հայտնի չէր, թե ինչ ծրագրեր է փայփայում Սուհամմադը: Ժամանակը զնում էր, շուտով սկսվեց ռամադանը և մեծ պատճ, երբ սովորաբար այդ օրերին մուսուլմանները ոչ մի եական ու կարևոր միջոցառում չեն ձեռնարկում, առավել ևս ռազմական արշավանքի իրականացում: Սակայն ռամադանի տասներորդ օրը, 630 թ. հունվարի 1-ին, զորքը դուրս բերվեց արշավանքի: Այդ օրը մարզարեի առաջին կնոջ՝ Խաղիջայի մահվան

տարելիցն էր, և զուցե հենց այդ պատճառով Սուհամմաղը հենց այդ նկատառումով էր ընտրել արաշավանքի օրը: Ռամադան ամսի 19-րդ օրը (630 թ. հունվարի 10-ին) Սուհամմաղի բանակը Մերքայից 20 կմ հեռավորության վրա, Մարր-ալ-Զահրան վայրում ճամբար դրեց: Մարզարեն ինքն էր ղեկավարում արշավանքը: Չորրորդ շարունակում էր պահել պասը (բոլոր զինվորները արևածագից մինչև արեամուտ ոչինչ չեն ուտում, իսկ դա կարող էր ազդել զինվորների ֆիզիկական տոկունության վրա): Ուստի մարզարեն հրամայեց դադարեցնել պասը: Մինչև Մերքա մնացել էր երկու օրվա ճանապարհ: Քաղաքում սկսվել էր աներևակայելի խուճապ: Բազմաթիվ ծպտված մահմեդականներ, լրելով քաղաքը, եկան Սուհամմաղի ճամբարը: Բոլոր այն մերքացիներին, ովքեր արգելք չեն հանդիսանում մուտումանների մուտքին քաղաք, մարզարեն տվեց կյանքի և զույրի ապահովություն ու անձեռնմխելիության երաշխիք:

Աբու Սուֆյանը Մերքայի ավագանու կողմից հանձնարարություն ստացավ այցելել Սուհամմաղի ռազմական ճամբարը՝ նրա հետ բանակցելու նպատակով: Եվ ի նշան անկեղծության ու հետին մտքի բացակայության, նա իր հետ վերցրեց իր պատանի որդուն: Անցնելով մուտումանների ռազմական ճամբարի միջով, որտեղ շատերը մի անհաջող շարժման դեպքում պատրաստ էին սպանել նրան, Աբու Սուֆյանը ծնկի չորեց Սուհամմաղի առջև և արտասանելով իսլամի հավատող հանգանակը, հայտարարեց, որ ինքը ընդունում է միասնական աստծուն և նոր կրոնը և իր տոհմակիցները ևս պատրաստ են ընդունելու իսլամը: Որպես պատասխան, մարզարեն ասում է. «վերադարձիր Մերքա և հայտնիր կուրայշիներին, որ բոլոր նրանք, ովքեր կինազանդվեն, կարծանանան ներման: Քո տանը ապաստանողներին երաշխավորում

եմ անվտանգություն, Քաարայում ապաստանածներին, ինչպես նաև իրենց տների դռների հետևում թաքնվողներին շնորհում են անվտանգություն: Բայց Ալլահի թշնամիները ոչնչացվելու են նույնիսկ Քաարայում»:

Անշուշտ Աբու Սուֆյանի դարձի գալու պատմությունը զալիս էր ապացուցելու, որ Մեքքայի կուրայշիների կողմից փոխվել էր վերաբերմունքը իսլամի նկատմամբ: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ նրանք հանկարծակի սկսեցին ընդունելու երկրպագել միասնական աստծուն և ճանաչել Սուհամմադի մարգարեական առաջելությունը, այլ այն պատճառով, որ իսլամը ցուցադրել էր իր բաղադրական ուժը և Արաբիան միավորելու ընդունակությունը: Հենց այդ պատճառով նախկինում մարզարեի ոխերիմ թշնամի Աբու Սուֆյանը ոչ միայն դադարեց Սուհամմադի նկատմամբ թշնամանք տածելուց, այլև նույնիսկ իր աղջկան կնության տվեց նրան: Մեքքայի առևտրական ազնվականությունը սկսել էր զիտակցել, որ կարելի է իսլամն օգտագործել սեփական շահերի օգտին: Ենթադրվում է նաև, որ Աբու Սուֆյանը և Մեքքայի մեծատոհիմիկ ազնվականության այլ ներկայացուցիչներ, այդ ժամանակ արդեն հաշվի էին առնում այն հնարավորությունը, որ միավորելով Արաբիան, հնարավոր կլինի կազմակերպել նվաճողական արշավանքներ արաբական հողերից դուրս տարածքներում, որոնց վրայով անցնում էին միջերկածովյան-ասիսկան քարավանային-ծովային առևտրի ճանապարհները: Հավանաբար այդ մարդիկ հանգել էին նաև այն եզրակացության, որ նման նվաճողական արշավանքների կազմակերպումը նպատակահարմար է իրականացնել իսլամի դրոշի ներքո:

Իր պատանդ որդուն թողնելով Սուհամմադի ճամբարում, Աբու Սուֆյանը վերադարձավ Մեքքա: Մինչդեռ 630 թ. հունվարի

սկզբին մաղինացիներից և դաշնակից ցեղերից կազմված 10 հազարանոց բանակի գլուխ անցած Մուհամմադը մոտեցավ Մերքային և շրջապատեց քաղաքը: Մարզաքն չէր ցանկանում, որ այդ քաղաքը գրավելիս լինի արյունահեղություն: Ուստի այն բոշվոր զինվորներին, որոնց կարգապահության նկատմամբ հավատ չէր ընծայում, նա առանձնացրեց ընդհանուր բանակից և նրանց հրամանատար նշանակեց Խալիլի իբն Վալիդին, իսկ անսարների ու մուհաչիրների զինավոր կարգեց Սաադ իբն Ուբայդին: Սակայն երբ վերջինս հայտարարեց, որ «Ճակատամարտի օրը սրբավայրեր գոյություն չունեն», նրան փոխարինեց Ալիով:

Մերքան պատրաստվում էր դիմադրության: Մուհամմադի ճամբարում հայտնվեց ոչ շատ վաղուց իսլամն ընդունած Արքասը: Վերջինս կազմակերպեց Մուհամմադի և նրա շրջապատի մարդկանց հանդիպումը Աբու Սուֆյանի հետ, որը և մարզաքի հետ կնքեց նոր պայմանագիր Մերքան հանձնելու մասին: Այդ պայմանագիրը պարունակում էր հետևյալ կետերը.

1. Մերքան ճանաչում է Մուհամմադ մարզաքի իշխանության գերակայությունը:

2. Մերքայի զինված ուժերը դառնում են մարզաքի բանակի մի մասը:

3. Այսուհետև այդ քաղաքը ստանալու է մուսուլմաններին հավասար ռազմական ավարի բաժինը:

4. Երաշխավորվում է բոլոր այն մերքացիների անվտանգությունը, որոնք դուրս չեն գա իրենց տներից, կամ ապաստան կգտնեն Քաաբայի սրբավայրի պատերի ներսում և կամ Աբու Սուֆյանի դաստակերտում: Միայն մեկ տասնյակի հասնող առանձնապես իսլամի համար հակառակորդների վրա չէր տարածվելու ներումը: Մերքացի-հեթանոսները պարտավորվում էին ըն-

դունելու խլամը: Անկասկած, հիշյալ պայմանագրի կնքումը խլամականների համար ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական հաղթանակ էր: Դա միաժամանակ քաղաքական և կրոնական կոմպրոմիս էր:

Ռամադան ամսի 19-ին, հիջրայի ութերրորդ տարում (630 թ. հունվարի 11-ին) Մուհամմադի բանակը երկու ուղղություններով մուտք գործեց Մերքա համարյա առանց արյունահեղության: Բացի մի բանի աննշան բախումներից, ճակատամարտ տեղի չունեցավ: Մուհամմադի կարգապահ բանակը կողոպուտի չենթարկեց խաղաղ բնակչությանը:

Մերքայի անկումը մուտքմանների կատարյալ հաղթանակն էր, որն ունեցավ համաշխարհային պատմական նշանակություն:

Քաղաքի բնակչությունը առանց հարկադրանքի անցավ հաղթողների կողմը և խուսներամ կերպով ընդունեց խլամը: Մուհամմադը սրբությամբ կատարում էր Ալլահի այն պատվիրանը, որ մարզարեի շրթներից առաջին անգամ արտաքերվել էին Մադինա զալու ժամանակ: «Հավատի մեջ հարկադրանք գոյություն չունի»: Ուստի երբ մի բանի հարուստ կուրայշիներ կտրականապես հրաժարվեցին ընդունելու խլամը, նրանց նկատմամբ ոչ մի պատժամիջոց չկիրառվեց և նրանք խաղաղությամբ հեռացան: Մերքայի ազնվականությունը և առևտրական վերնախավը ոչնչով չտուժեցին: Նրանք հասկացել էին, որ Մերքայի վերածումը նոր, վերելք ապրող կրոնի կենտրոնի և արագորեն տարածվող հավատը Ալլահի նկատմամբ ոչ միայն չեն ոտնահարում իրենց իրավունքները, այլ բաց են անում նոր հնարավորություններ իրենց եկամուտները ավելացնելու հարցում:

Տեղյակ լինելով մարգարեի ազնվությանը և տված խոսքի կայունությանը Մերքայի հարուստները մարգարեին խոշոր գումարներ տվեցին հետազայում դրանք վերադարձնելու պայմանով։ Այդ փողը բաժանվեց զինվորներին նրանց ռազմաշունչ ավյունը հանգստացնելու և կողոպուտի կիրքը կանխարգելելու համար։

Քիչ ժամանակ անց, Սուհամմադը հրամայեց Քաաբան մաքրել կուորերից։ Այդ սրբավայրը վերածվեց մուսուլմանական զինավոր տաճարի՝ «Նվիրական մզկիթի» («Մասջիդ ալ-հարամ»)։ Մարգարեն ուղտի վրա նստած յոթ անգամ պտտվեց Քաաբայի շուրջը՝ իր զավագանով շոշափելով տաճարի «սև քարը»։

Քաաբայի քարակերտ կուորերը ջարդ ու փշուր արվեցին, իսկ փայտից շինվածները՝ կրակի մատնվեցին։ Սուհամմադի փեսան՝ Ալին շատ էր ցանկանում, որ Քաաբայի բանալիները հանձնվեն իրեն, սակայն մարգարեն դրանք վստահեց Արդ աղ-Դար տոհմին, իսկ ուխտագնացներին ջուր մատակարարելու եկամտաբեր գործը նախկինի պես մնաց Աբբասի և նրա տոհմի ձեռքերում։ Իսլամի թշնամիները Սուհամմադի կողմից սրի չքաշվեցին։ Կազմակերպելով հանրային դատ, նա մեծահոգաբար ներեց նրանց։ Պատժի ենթարկվեցին միայն երկու մահմեդականներ, որոնք հրապարակայնորեն հրաժարվել էին իսլամից և Մաղինայից փախել էին Մերքա։ Նրանք մահվան դատապարտվեցին հավատուրացության մեղադրանքով։ Մահվան դատապարտվեցին նաև Ալ-Խուլայիրիս և Հաբբար իրն ալ-Ասվադ անունով երկու մերքացիներ, որոնց նկատմամբ Սուհամմադը իին ոխ ուներ։ Այդ տղամարդիկ տարիներ առաջ ծեծի էին ենթարկել մարգարեի երկու աղջիկներին։ Չինայեցին նաև Սուհամմադի քարտուղար Սաադին, որը նույնպես Մաղինայից փախուստի դիմելով Մերքա, բոլորին պատմում էր, թե ինչպես էր ինքը «զրում» Ղուրանը, դրանով

իսկ հերքելով այն վարկածը, որ մահմեղականների սուրբ գիրը մարդու կողմից ստեղծված չէ, այլ երկնառաք գործ է: Եթե Սաադին բերեցին Սուհամմադի մոտ և նա ընկնելով մարզարեի ոտքերը և արցունքն աշքերին ներում էր խնդրում, Ալլահի մարզարեն սևացած դեմքով ընդունեց նրա նվաստացուցիչ մեղայականն ու ներողությունը: Սակայն եթե Սաադին թույլ տվեցին հեռանալ, Սուհամմադը իր մերձավորներին ասաց. «որպես մարզարե ես չեի կարող նրան չներել, բայց ինչո՞ւ ձեզանից ոչ մեկը չկտրեց նրա զլուխը»:

Ներում ստացավ նաև Համզային սպանած Վահշին, սակայն Սուհամմադը հրամայեց նրան այսուհետև ոչ մի անգամ իր աշքին չերեալ: Վահշին, որը հետագայում դարձավ Սուհամմադի բանակի բաջ ու անվեհեր զինվորներից մեկը, միշտ հիշելով մարզարեի խոսքերը, մինչև նրա կյանքի վերջը, աշխատում էր չերեալ նրա աշքին:

Սուհամմադը Մեքքայի բնակչության առջև հանդես եկավ ճառով, որտեղ հորդորում էր նրանց հրաժարվել իրենց կուտքերից և ընդունել «Ճշմարիտ կրոնը»՝ իսլամը: Այդ ճառում նա տվեց բազմապիսի բնույթի ցուցումներ: Այսպես, արգելում էր արյան վրիժառնությունն այն փոխարինելով արյան փրկազնով: Այսինքն սպանվածի ընտանիքին և մերձակա ազգականներին մարդասպանը կամ նրա հարազատները պետք է վճարեին արյան զին՝ հարյուր ուղտերի չափով: Այսուհետև մարզարեն կուրայշիներին զրկում էր բազմապիսի արտոնություններից և իրավունքներից, ի բացառյալ Քաաբայի պահպանության և Զամզամ ջրհորից ուխտավորներին ջուր մատակարարելու իրավունքից: Իր ճառի վերջում մարզարեն խորհուրդ էր տալիս կուրայշիներին, չպարձենալ իրենց ազնվազարմ ծագումով: Նա հայտարարեց, որ Ալլահը մեկ

անգամ ընդմիշտ ոչնչացրել է մարդկանց բաժանումը ազնվագարսմների և ոչ ազնվազարմների, քանի որ նրանք բոլորը ծագում են մեկ արմատից՝ Աղամից: Մարդկանցից ով բարեպաշտ ու առարինի է, նա էլ ազնվազարմ է:

Մարգարեի ճառից հետո ողջ Մեքքայով մեկ մուսնետիկները բարձրածայն հրապարակեցին մուսուլմանական իրավունքի և բարոյականության այն բոլոր սկզբունքները, որոնք ձևավորվել են մահմեդական համայնքի գոյության ութ տարիների ընթացքում և որոնք իր ճառում մեկ առ մեկ շարադրեց Մուհամմադը: Բոլոր մուսուլմանները եղբայրներ են անկախ իրենց տարիքից և ծեր ու երիտասարդ լինելուց իսլամի բոլոր հետեւորդները մեկը մյուսի համար կրում են պատասխանատվություն. չի կարելի սպանել այն բրիստոնյաններին ու հուղարականներին, որոնք օգնում են մուսուլմաններին. Ժառանգության իրավունքը կախված չէ կտակի բովանդակությունից. տարբեր դավանանքների պատկանող մարդիկ չեն կարող ժառանգել մեկը մյուսին. օրինական ամուսնությունից ծնված երեխայի նկատմամբ իրավունքը պատկանում է նրա հորը. ամուսնական անհավատարմություն կատարածները պետք է մահապատժի ենթարկվեն քարկոծվելու միջոցով. կինը չի կարող առանց ամուսնու համաձայնության նրան պատկանող իրերը, գույքն ու կայքը նվիրել ուրիշների. մերձավորագույն ազգական ասելով հասկացվում է այն անձը, որի հետ արգելված է ամուսնությունը. առավոտյան և երեկոյան նամազը (աղոթքը) պետք է կատարվի ճիշտ նշանակված ժամին:

Նոյն օրը Մուհամմադը բարձրանում է Մեքքայի շրջակայքում գտնվող աս-Սաֆա բլրի զագաթը և այնտեղ ընդունում մեքքացիների հավատարմության երդումը: Երդում տվածները ընդունում են Ալլահի միակ ու եզակի լինելը, և մարգարեին խոստա-

նում գողություն ու շնորհյուն չանել, սուտ չխռուել և նորածին աղջկեներին չսպանել:

Մերքայի նվաճումը հնարավորություն տվեց ուժեղացնելու պայքարը հեթանոսության դեմ, որը դեռևս տարածում ուներ ոչ միայն այդ քաղաքում, այլև հարևան տարածքներում: Անկասկած այդ քաղաքի նվաճումը նաև արագացրեց ու հեշտացրեց Արաբիայի իսլամականացումը:

Մերքայի անկումից քան օր անց սկսեցին լուրեր պտտվել, որ հավազին ու սարիֆ կոչված ցեղերը միավորվելով Հիջազի քոչվորների, Թայիֆ օազիսի բնակչության և մի շարք այլ ցեղերի հետ, կազմել են մի հզոր դաշինք և ցանկանում են վերականգնել իրենց անկախությունը: Կարևոր է նշել, որ այդ շրջանում բեղվիների քաղաքական ենթարկումը Մուհամմադին ոչ միշտ էր նշանակում, որ այդ հնազանդեցված ցեղերը ընդունում են հաղթողի հավատը: Ստացվում էր, որ առաջին անգամ բեղվիները միավորվում են ընդհանուր թշնամու դեմ: Ըստ Մերքա հասած լուրերի, հավաքվել էր քան հազարանոց բանակ: Ըստ որում, օազիսների նստալյաց բնակչության պնդմամբ դաշինքի մասնակից քոչվորները հավաքատեղի ներկայացան իրենց ընտանիքներով ու անասնահոտերով, որոնք երաշխիք էին ծառայելու այն բանի համար, որ այդ ցեղերի զինվորները վճռական պահին փախուստի չեն դիմի:

Տեղեկանալով այդ բոլորի մասին, Մուհամմադը շտապ կազմակերպեց զորահավաք, պատժիշտ արաշավանք իրականացնելու նպատակով: Նրա բանակին միացան երկու հազար մեքքացիներ, որոնք հենց նոր էին ընդունել իսլամը: Երեք օր անց մարգարեի տասներկու հազարանոց բանակը սրբնթաց շարժվելով առաջ հասակ Հիջազի նախալեռնային շրջանները և 630 թ. հունվա-

թի 30-ին հանդիպեց թշնամուն: Խալիդի իրն Վալիդի կողմից գլխավորվող վերջապահ ջոկատը, որը բաղկացած էր քոչվոր-քեղվիններից, ընկավ դարանի մեջ: Անկարգապահ քոչվորները, տեսնելով, որ հակառակորդը իր թվաքանակով երկու անգամ զերազանցում է մարզարեի զորքերին, փախուստի դիմեցին, ոտնատակ անելով անսարներին ու մուհաջիրներին: Խուճապն ընդգրկեց ամբողջ բանակը, որը հակառակ Մուհամմադի հորդորների, դիմեց խուճապահար ու անկանոն փախուստի: Մարզարեի կողքին մնացին միայն տասը հավատարիմ մարդիկ, այդ թվում նաև Աբրասը, որը մի քանի անգամ օգնել էր մարզարեին նրա դժվարին վիճակներում: Այդ օրը ևս, եթե չլիներ նրա օգնությունը, մահմեդականների համար կլիներ ճակատազրական: Սուրբ ձերքին բարձրածայն բղավելով, նա կարողացավ զինվորների մի մասին հետ վերադարձնել: Կարգի բերելով իր ուժերը, Մուհամմադը դիմեց սրբնթաց գրոհի և արդեն մեկ ժամ անց գտնվում էր թշնամու ճամբարի մոտ: Այս անգամ սարսափի մատնված հակառակորդը լրելով իրենց ընտանիքներին ու մոռանալով անասնահոտերի մասին, խուճապահար փախուստի դիմեց:

Հայրանակ տարած մուսուլմանների ռազմական ավարը հսկայական էր. թշնամու ճամբարում մնացել էին ավելի քան վեց հազար կանայք և երեխաններ, 24 հազար ուղտեր, 40 հազար մանր եղջերավոր անասուններ, 160 հազար դիրիկեմ ընդհանուր արժողությամբ արծաթ, զենքի ու թանկարժեք իրերի սարեր: Ռազմական ավարը թողնելով պահակախմբի հսկողության տակ, Մուհամմադը սկսեց հետապնդել դեպի Թայիֆ փախչող սարիֆ ցեղին: Ցեղի անդամները հաջտապ լրելով իրենց տները շտապեցին դեպի ամրոցը, որը նախորոք պատրաստված էր վտանգի

դեսպում պատսպարվելու համար: Այդ ամրոցը գրավելու փորձերի ժամանակ մահմեղականներն ունեցան խոշոր կորուստներ:

Սուհամմադը ի լուր ամենքի հայտարարեց, որ Թայիֆի բոլոր ստրուկներին, որոնք կընդունեն իսլամը, կշնորհվի ազատություն: Նա առատ նվերներ խոստացավ նաև այն շեյխերին, որոնք կանցնեն իր հովանու տակ: Այս խոստումների հետևանքով շատերը միացան մուսուլմանների բանակին: Սակայն դիմադրությունը շարունակվում էր: Լեռներում ցրված քոչվորները հասկացել էին, որ Սուհամմադի դիրքերը խարիսուլ են և նա կարող է տանուլ տալ նոր ճակատամարտը: Ուստի նրանք կրկին սկսեցին հավաքվել ու բանակ կազմել: Իսկ մարզարեի կողմից կովող քոչվորները սկսեցին պահանջել, որ ռազմական ավարը անհապաղ բաժանվի: Վախենալով խոռովությունից, Սուհամմադը ստիպված էր ընդառաջ գնալ այդ պահանջին: Սակայն ավարը բաժանելու ժամանակ, եթե իսլամը նոր ընդունած մուսուլմանները ստացան ավելի շատ, քան անսարները, վերջիններս սկսեցին բուռն կերպով բողոքել ասելով, որ իրենք են հանդիսանում իսլամի իսկական զավակները, մինչդեռ բարիքներից օգտվում են ուրիշները: Ըստ ավանդության, բանաստեղծ Աբբաս իրն Սիրդասը նույնիսկ բանաստեղծություն է գրում այդ անարդարության թեմայով: Տեղեկանալով այդ մասին, մարզարեն պոետին կանչում է իր մոտ և նրան նվիրում 60 ուղտ: Դրանից հետո Իրն Սիրդասը մինչև իր կյանքի վերջը խոսում ու գրում էր միայն Սուհամմադի առատաձեռնության մասին:

Մարզարեին հաջողվում է մեղմել նաև անսարների դժողովությունը: Դիմելով նրանց, մարզարեն ասում է. «Մաղինացիներ, մի՞թե ես չեի, որ ձեզ ազատեցի ներքին երկապառակություննրից: Մի՞թե ես ձեզ չտարա ճիշտ ճանապարհով: Ես լավ հիշում եմ, որ

Երբ ինձ վոնդեցին Մերքայից, այդ դուք էիք, որ ընդունեցիք ինձ, այդ դուք էիք, որ հավատացիք ինձ և ինձ վերցրիք ձեր հովանավորության տակ: Դուք կարծում եք, որ ես դա մոռացե՞լ եմ: Դուք դժգոհ եք, որ ես նրանց ավելի շատ ավար տվեցի, քան ձեզ: Դա ճիշտ է: Ես նրանց կապում եմ ինձ հետ երկրային բարիքներով, իսկ ձեզ ես տալիս եմ ինքս ինձ: Վերցնելով ոչխարներ և ուղտեր, նրանք հապշտապ հեռանում են, իսկ դուք գնում եք Ալլահի մարգարեի հետ: Ասացե՞ք, դուք ում հետ եք ուզում զնալ՝ ոչխարների ու ուղտերի, թե՞ Ալլահի մարգարեի հետ»:

Այնունամենայնիվ հասկանալով իր վիճակի անկայությունը, Մուհամմադը հակառակորդին առաջարկեց առանց որևէ փրկազնի վերադարձնել գերի ընկած նրանց կանանց ու երեխաներին, խաղաղություն խստանալու դիմաց:

Քսաններորդ օրը Մուհամմադը հրամայեց հանել ամրոցի պաշարումը: Դա մուսուլմանների բանակում առաջ բերեց դժգոհություն և ինչ որ մեկը նույնիսկ քաշեց ու շպրտեց մարգարեի վրայի թիկնոցը: Դժգոհության ալիքը գնալով ծավալվեց: Զինվորները ինքնազլուխ հափշտակեցին ոազմավարի կեսից ավելին: Մուհամմադը կարողացավ զինվորներին կարգի հրավիրել միայն այն բանից հետո, երբ հայտարարեց, որ նրանցից յուրաքանչյորին ով կամովին չի վերադարձնի իր կողմից հափշտակված ավարը, նրան սպասում են դժոխային կրակներ, իսկ նրանց, որոնք կվերադարձնեն այն, ավարի ազնիվ բաժանումից կստանան իրենց հասանելիք բաժինը: Արդյունքում ճակատամարտին մասնակցած յուրաքանչյուր հետևակ զինվոր ստացավ չորս ուղտ, իսկ յուրաքանչյուր հեծյալ՝ 12 ուղտ: Զենքը, սպառազինությունը, զգեստները և հանդերձանքը որպես պարզ բաժանվեցին առավել խիզախ զինվորներին:

Անձամբ Մուհամմադը որպես ռազմական ավար ստացավ մի բաժին, որը գնահատվում էր 10 հազար ուղղի գին: Դա հերիաթային հարստություն էր: Իր այդ բաժինը մարզարեն, ըստ ավանդության, ամբողջությամբ բաժանեց իր հավատարիմ դաշնակիցներին: 630 թ. իսլամի պատմության մեջ ստացել է «պատգամավորությունների տարի» կամ «դեսպանությունների տարի» անվանումը: Արաբիայում բոլոր ծայրերից Մուհամմադի մոտ էին գալիս իսլամի ընդունելու ցանկություն ունեցող քոչվորների ու օազիսների նստակյաց բնակչության ներկայացուցիչները: Իսլամի գիրկն անցան Կենտրոնական Արաբիայի բազմաթիվ ցեղեր: Արևմտյան Արաբիայի ողջ տարածքը Բյուզանդիայի սահմաններից մինչև Եմեն մաքրվեցին հեթանոսության բոլոր տեսակի խորհրդանիշներից: Հարավային Արաբիայի մի շարք վայրերի քրիստոնեական օազիսների կրոնական և քաղաքացիական առաջնորդները ստորագրեցին պայմանագիր, որով նախատեսվում էր, որ այդ վայրերի քրիստոնյաները գտնվելու են մուսուլմանների պաշտպանության ներքո և պետք է նրանց հարկատու լինեն: Հյուսիսում ևս Մուհամմադը աջակցություն գտավ Բյուզանդիայի սահմանների մոտ բնակվող քրիստոնյա ցեղերից: Մարզարեի հզորությունը օրեցօր ամրապնդվում էր:

Այսպիսով, 630-631 թվականներին Թայիֆի օազիսը և Արաբական թերակղզու մեծ մասն անցավ Մուհամմադի իշխանության տակ: Հիշյալ վայրերի բնակչության հետաքննությունը մեծ մասսամբ ուղեկցվում էր նրանց կողմից իսլամի ընդունմամբ և կուռքերի ոչնչացումով: Բավարարվելով սկզբնական շրջանում իսլամի ձևական ընդունումով, Մուհամմադը ենթադրում էր, որ իսկական հավատը այդ մարդկանց մոտ կզա ավելի ուշ, եթե ոչ առաջին, սուպա հետազա սերունդների օրոք:

Բանակը վերադարձավ Մադինա, որտեղ մարզարեխն սպասում էր ուրախ լուր. նրա կանանցից (գուցե հարձերից) մեկը՝ դպտի քրիստոնյա Մարիամը (Միրիամը), որին անցյալում Մուհամմադին էր նվիրել Եզիզտոսի կառավարիչը, ծնել էր արու զավակ: Մարզարեխ ուրախությանը չափ չկար, քանի որ այդ արու զավակի ծնունդը հույս էր տալիս, որ իր տոհմը կշարունակվի: Երբ զավակի ծնվելուց հետո յոթերորդ օրը նորածնի համար անուն էին ընտրում, ընտրությունը կանգ առավ Իբրահիմ անվան վրա:

Այդ երջանիկ իրադարձությունը մարդկանց կողմից մեկնաբանվեց այն առումով, որ Ալլահը օրինում է իր մարզարեխի գործողությունները: Սակայն որդու ծնունդը, քացի իրենից՝ մարզարեխից, ուրիշներին ուրախություն չպատճառեց, քանի որ դա խախտում էր Մուհամմադի մերձակոր գինակիցների միջև իշխանության համար ստեղծված հավասարակշռությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերելքներով ու վայրէջքներով իսլամի մարզարեխ անցած ճանապարհը մինչև հեթանոսության միջնաբերդի՝ Մեքքայի զրավումն ու ընկճումը, պետք է արձանագրել հետևյալը. 630 թ. համարյա ողջ Արաբիան ճանաչեց Մուհամմադի իշխանությունը: Վերջիվերջո, մեքքացիները ևս ընդունեցին նոր կրոնը: Նրանց գնահատանքին արժանացավ մարզարեխ ընդունակությունը իրարից տարաբաժանված և միմյանց նկատմամբ թշնամանքով լցված ցեղերին միավորելու ուղղությամբ: Ընդդիմադիր հիմնական ուժը՝ ողջ կուրայշ ցեղը մտավ իսլամական ումմայի կազմի մեջ և իր հնագանդությունը հայտնեց նրա զյսավորին, նրան ընդունելով որպես հոգևոր ու քաղաքական առաջնորդ: Որոշ հարցերում մարզարեխն ևս գնաց կոմպրոմիսի մեքքացիների հետ: Հաշվի առնելով Մեքքայի տնտեսական ու

կրոնական նշանակությունը, Ալլահի մարգարեն այն դարձրեց իր աստվածապետական պետության հոգևոր կենտրոնը: Միաժամանակ նա Քանաքան հոչակեց որպես մուսուլմանական սրբավայր, ուր ուղղաղավանները, ինչպես նախկինում հեթանոսները, պետք է կատարեին ուխտազնացություն: Քանաքան անվանվեց «Ալլահի տուն» («Բայթուլլահ»): Միաստվածությունը որպես արաբների միասնության խորհրդանիշ եկավ փոխարինելու բազմաստվածությանը: Արաբիայի բնակչիների երնիկական և լեզվական ընդհանրությունը ամրակայվեց նաև կրոնական ընդհանրությամբ: Այդ առթիվ Դուրանում ասվում է. «Դուք բոլորդ բռնեցեք Ալլահի մեկնած պարանից և միք բաժանվի իրարից և հիշեցեք, որ Աստծո շնորհը ձեր վրա էր, երբ թշնամիներ էիր և նա ձեր սրտերը հաշտեցրեց իրար հետ և դուք նրա շնորհովը եղբայրներ դարձաք» (3:98):

Միաժամանակ իսլամը ստեղծեց նաև շահագործման նահապետական-ֆեոդալական տիպի իր համակարգը, որի պայմաններում «անհավատները» կամ ոչ մահմեղականները սկզբում Արաբիայում, իսկ ապա նաև Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի նվաճված երկրներում ենթակա էին լինելու անլուր ու դաժան շահագործման և նրանց աշխատանքի պտուղները յուրացնելուն:

Մերքան վերցնելուց հետո ևս Մուհամմադի նստավայրը շարունակում էր մնալ Սահինան: Ըստ ավանդության, վերադառնալով Սահինա, մարգարեն որոշում է այցելել մոր գերեզմանին, թեև մուսուլմանական օրենքներով հեթանոսների գերեզմաններին այցելելը արգելված էր: Ուստի Ալլահից թույլտվություն խնդրելով, նա կատարում է իր ուխտը և աղիողորմ լաց լինում:

Բայց քանի որ կար Ալլահի արգելքը, նա գերեզմանի վրա չի աղոթում:

Մերքան ընկճելուց և մեծ թվով ցեղերի դարձի բերելուց հետո, մուսուլմանական համայնքը սկսում է ձեռք բերել իսկական պիտության հատկանիշներ: Ոչնչացնելով կամ մահմեդական դարձնելով իր թշնամիներին, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին, զինվոր-մարզարեն դարձավ մարզարե-պիտական գործիք: Այսուհետև Սուհամմադի խնդիրն էր ստեղծել իրավական համակարգ և սահմանել օրենքներ, որոնցով պետք է ապրեր մուսուլմանական համայնքը: Այս նոր իրադրության պայմաններում Սուհամմադի հայտնությունները շարունակվում էին, սակայն դրանք ավելի շատ վերաբերում էին մուսուլմանական համայնքի կազմակերպման հարցերին: Օրինակ, մարզարեն արգելեց վաշխառությունը, այնուհետև թեև նա պահպանեց «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» սկզբունքը, սակայն նրա հայտնությամբ ասվում էր, որ վրիժառությունը չպետք է ծնի նոր վրիժառություն: Այլ կերպ ասած, նա դատապարտում էր արյան վրիժառության սկզբունքը, սակայն այնքանով, որ այն չհանգեցներ վրիժառության անվերջանալի շղթայի: Այսպիսով, փաստորեն արյան վրիժառության հին համակարգը պահպանվում էր, սակայն առանց ծայրահեղությունների:

Օրենսդրության հետ գուգահեռ աստիճանաբար ձևավորվում էր նաև սովորույթների կողերսը՝ աղաթը: Սուհամմադը դատական վճիռները միանձնյա ձեռվ կայացնում էր հենվելով բեղվինական սովորական սովորութական իրավունքի վրա: Սակայն հարկ է նշել, որ Սուհամմադի կենդանության օրոր իրավական համակարգը դեռևս գտնվում էր սաղմսային վիճակում: Պահանջ-

վեց համարյա մեկ դար, որ մշակվեն մուսուլմանական իրավունքի նորմերը:

Մուհամմադը մշակեց և գործողության մեջ դրեց նաև հարկային համակարգի հիմնական սկզբունքները: Մասնավորապես մազարեն արմատավորեց զարյաթ և սաղարա հարկատեսակների վճարման պարտավորությունը, որոնց նպատակն էր համայնքի աղքատ անդամներին, որքերին, ամուսիններին կորցրած այրիներին, հիվանդներին և այլն նյութական օգնություն ցուցաբերելը: Այդ նոր կարգի համաձայն, իրենց եկամուտների մի մասը մուսուլմանները պետք է մտցնեին հասարակական գանձարանը: Նշված համակարգի նպատակն էր նաև ինչ որ չափով հարթեցնել խստական համայնքի ներսում առկա սոցիալական հակասությունները: Մուսուլմանները վճարելու էին միայն զարյաթ և սաղարա հարկատեսակները, իսկ ոչ մուսուլմանները պարտավոր էին վճարելու շնչահարկ կամ ջիզյա, ինչպես նաև հողային հարկ (խարաց): Սովորաբար ջիզյան որոշվում էր «հաշտություն» կնքելու պահին և միջին հաշվով հավասար էր տարեկան մեկ դիրհեմի: Այդ հարկը կարելի էր մուծել նաև բնամթերով. ցորենով, արմավի (խուրմայի) պտուղներով, անասուններով, կամ արհեստագործության զանազան արտադրանքներով: Ի դեպ, քոչվորների մեծ մասը հարկեր չէր վճարում, քանի որ նրանք երբեք էլ հարկեր չեին մուծել, ուստի պարզապես քոչվորների շեյխերից Մուհամմադը ընդունում էր «նվերներ»:

Սակայն անսպասելիորեն պարզ դարձավ, որ խստամի հայունուն տարածման հետևանքով իրերի ստեղծված վիճակը մուսուլմաններին շահույթներ չի բերում. դաշտերի բերքը շշատացավ, առևտուրը չաճեց և այլն: Մադինայի հարուստ մուսուլմանները, որոնք արդեն սովորել էին իրենց ոչ մի բանից չգրկելու,

հասկացան, որ հարկերը չեն ծածկում իրենց աճող կարիքները: Զանգվածաբար Մուհամմադի մոտ էին զալիս ոչ շատ վաղուց իւլամն ընդունած աղքատներ, մինչդեռ մարզարեն ի վիճակի չեր բավարարել այդպիսի մեծ թվով մարդկանց նյութական պահանջները: Այդ ընչազուրկ մարդիկ ձգտում ունեին պատերազմել և ձեռք բերել ռազմական ավար, սակայն Մուհամմադն ի վիճակի չեր զինել այդպիսի մեծ թվով մարդկանց: Ուստի ռազմական բյուջեն լցնելու համար նա ստիպված էր մտցնել նորանոր հարկեր, իսկ դա պատճառ էր հանդիսանում աճող դժգոհության համար: Այս ու այն տեղերից սկսեցին լսվել տրտունջներ, նույնիսկ մեղադրանքներ ու վիրավորական արտահայտություններ մարզարեի հասցեին: Դրությունը շտկելու համար շտապ կարիք կար նոր հայտնության: Եվ ահա երկնքից իջնում է հերթական հայտնությունը, որտեղ ասվում էր, որ Ալլահը պահանջում է հարզալից վերաբերմունք ունենալ իր մարզարեի նկատմամբ: Այսուհետև Ալլահի հրամանով բոլորը պարտավոր էին ճանապարհը զիջել մարզարեին, նրան անունով շանվանել, երբ քարոզը վերջանում է ոչ թե հավարվել ու ինչ-ինչ հարցեր քննարկել, այլ քաշվել իրենց տները:

630 թ. ամռանը Սիրիայից Մադինա ժամանած վաճառականների միջոցով Մուհամմադը տեղեկություն է ստանում, որ Բյուզանդիայի կայսր Հերակլի բանակը պատրաստություններ է տեսնում Արաբիա ներխուժելու համար: Որ իբր այդ արշավանքին մասնակցելու պատրաստակամություն են հայտնել նաև Հորդանանի երկու արաբական ցեղեր:

Ուստի 631 թ. սեպտեմբերին մարզարեն կոչով դիմում է հավատացյալներին Բյուզանդիայի դեմ արշավանք սկսելու վերաբերյալ: Այդ արշավանքի համար ժամանակը ճիշտ էր ընտրված:

Հոռմեական կայսրության արևմտյան մասը գրավված էր բարբարոսների կողմից, արևելքում Բյուզանդիան միրճվել էր ներքին երկպառակությունների մեջ: Սասանյան Իրանի դեմ պատերազմներում բյուզանդական կայսրությունը ծայրահեղորեն թուլացել էր: Այդ բոլորը խալամի զինվորներին հնարավորություն էր ընձեռում լավագույնս օտարազործել հակառակորդի համար ստեղծված քաղաքական անբարենպաստ վիճակը:

Պատերազմի կոչը վախեցրեց շատ մահմեդականների: Նրանցից ոմանք նույնիսկ հրաժարվեցին արշավանքին մասնակցելուց, պատրվակ բռնելով մերք չափից ավելի շոգ ամառը, մերք հասունացած արմավի պտուղները քաղելու անհրաժեշտությունը, մերք իրենց հիվանդությունը, մերք աղքատությունը և այլն: Մահմեդականներից մեկը նույնիսկ իր հրաժարումը պատճառաբանեց նրանով, որ ինքը ոչ չափավոր կիրք է տածում կանանց նկատմամբ և երբ տեսնի Բյուզանդիայի կանանց, տեղնուտեղը գետին կը լինի, հետևաբար ավելի լավ է մնա իր տանը: Մուհամմադը շատ չէր խորանում նման անհեթեթ պատճառաբանությունների մեջ, հավանաբար ենթադրելով, որ ավելի լավ է նման մարդիկ մնան տանը, քան ճակատամարտի ժամանակ դիմեն դասալքության:

Վերոհիշյալ և այլ կարգի դժվարությունները հաղթահարելու համար մարզարեն կարիք ուներ նոր հայտնության և այն չուշացավ: Դուրանի «Աթ-Թաուրա» («Ապաշխարհանք») սուրայի շատ այաթներ նվիրված են այդ հայտնությանը: Նրանցում մասնավորապես ասվում է. «Պատերազմի գնացքը թեթեւ եւ ծանր եւ պատերազմեցք ձեր ստացվածքով եւ ձեր անձերով Աստծո ճանապարհում. սա լաւ է ձեզ համար, եթէ հասկանաք»: «Ետ մնացողները ուրախացան իրանց տեղը աստուծոյ մարզարէի դեմ, եւ զգվում էին որ իրանց ստացւածքով եւ անձերով Աստուծոյ ճա-

նապարհում պատերազմեն եւ ասում էին, «այս տաքութիւնում դուրս մի՛ զնար պատերազմի»: «Դու ասա՛, «դժոխքի կրակը աւելի շատ տաք է եթէ հասկանան» (9:41, 82):

Չնայած վերոհիշյալ կարգի բազում դժվարություններին ու խոշընդուներին, Սուհամմաղին հաջողվեց արագ զորահավաք կատարել: Աղբյուրների վկայությամբ, մարզարեի դրոշի ներքո հավաքվեցին 30 հազար մարտիկներ, այդ թվում նաև 10 հազարանոց հեծելազոր: Այդպիսի խոշոր բանակը զինելու համար պահանջվում էին խոշոր միջոցներ: Մարզարեն այլ ելք չուներ, բացի օգնության խնդրանքով ժողովրդին դիմելուց: Սուհամմաղի այդ կոչին առաջինը արձազանքեցին նրա մերձավորազոյն զինակիցները: Աբու Բաքրը, օրինակ, զոհաբերեց իր ողջ ունեցվածքը: Պատմվում է, որ երբ նա Սուհամմաղին է հանձնում այն ամենը, ինչ ինքն ունի, չցանկանալով ընդունել այդ ողջ ունեցվածքը, մարզարեն հարցնում է. իսկ քեզ ի՞նչ մնաց. հետեւում է պատասխանը՝ Ալլահը և նրա մարզարեն:

Հօգուտ պատերազմական ֆոնի հատկացվեցին նաև սադակա հարկատեսակից զանձվող գումարները: Իր հերթին ողջ մուսուլմանական համանքը ևս ընդհանուր գործի մեջ զնելով իր լուման, տալիս է, ով ինչքան կարող է:

Արշավանքը անձամբ զիսավորում էր ինքը՝ Սուհամմաղը: Սեկնելուց առաջ մարզարեն հրամայեց Ալի իբն Աբու Թալիբին մնալ Սահինայում և կառավարել մինչև իր վերադարձը:

Զորքերը արշավանքի մեկնեցին ոչ լրիվ կազմով և արդեն ճանապարհին տեղի ունեցան դասալրության դեպքեր: Այդ ուղղությամբ առաջին օրինակը ցույց տվեցին «Երկերեսանիները», որոնք գորքի առաջին իսկ հանգստի վայրում շրջեցին իրենց ուղ-

տերի գլուխը դեպի հետ: Այնուհետև դասալրությունը ձեռք բերեց զանգվածային բնույթ:

Անցնելով 350 կիլոմետր, Մուհամմադի քանակը կանգ առավ Սիրիայի սահմանների մոտ գտնվող Թեքրուք (Թաքրուք) կոչված վայրում: Այստեղ իր հետախույզների միջոցով Մուհամմադը տեղիկանում է, որ սիրիական վաճառականների հաղորդած տեղեկությունը բյուզանդացիների մեծ արշավանքի մասին կեղծ է: Ուստի նա հրամայում է Թեքրուքի շրջակայրում ճամբար դնել: Հսկայական քանակի ներկայությունը սարսափի է մատում քաղաքի բնակչությունը: Չհամարձակվելով դիմադրություն ցույց տալ, նրանք մահմեդականներին առաջարկում են փրկազին: Այդ հեշտ հաղթանակը Մուհամմադին ոգեսրություն է պատճառում և նա որոշում է առիթն օգտագործել նոր տարածքների նվաճման համար: Այդ նպատակով նա ջոկատներ է ուղարկում մոտակա օազիսները: Դրանցում ապրող ցեղերն ու տոհմերը ևս որոշակի պայմաններով նույնպես համաձայնվում են անցնել Ալլահի և նրա մարզարեկի հովանավորության տակ:

Քանակում սկսված տարածայնությունների և տարբեր բնույթի դժգոհությունների պատճառով Մուհամմադը չհամարձակվեց շարունակել ուզմարշավը և չանցավ Բյուզանդիային ենթակա տարածքների սահմանը: Նա սահմանափակվեց լոկ դեպի Կարմիր ծովի ափերը մի քանի արշավանքներ կազմակերպելով:

Ի վերջո 631 թ. դեկտեմբերին իսլամական քանակը հարուստ ավարով վերադարձավ Մադինա: Քաղաքում մնացած վախկոտներին, որոնք չմասնակցեցին արշավանքին, հայտարվեց բոյկոտ: Վերջիններս սարսափահար Մուհամմադից աղերսեցին ներել իրենց: Ալլահը հերթական հայտնության ժամանակ տեղեկացրեց մարզարեկին, որ ներման կարող են արժանանալ միայն

աղքատները, որբերը, այրի կանայք, հիվանդները և այլն ողորմություն տալով: Այդ մարդիկ ապաշխարելով իրենց մեղքը վճարեցին պահանջվող ողորմությունը, որը երբեմն կազմում էր նրանց ողջ ունեցվածքի երրորդ մասը: «Երկերեսանիների» առաջնորդ Արդալլահ իբն Ուբայյան, ի դեպ, խուսափեց պատժից. Ճանապարհին նա ծանր հիվանդացավ և հրաժեշտ տվեց լյանքին: Կորցնելով իրենց դեկավարին, «Երկերեսանիները» այսուհետև դադարեցին կազմակերպված ուժ լինելուց, իսկ նրանց ալ-Դիրաք մզկիթը շուտով Մուհամմադի կողմից հողին հավասարեցվեց:

Թերութիւն վերադառնալուց հետո մարզարեն որոշեց մեկնել Մեքքա ուխտագնացության: Ալլահի ավետարերին անհրաժեշտ էր այդ ուխտագնացության միջոցով ցուցադրել խւամի ողջ հզորությունը: Նա Աբու Բարբին հանձնարարեց զլխավորել այդ հաջը: 632 թ. մարտին ուխտավորները դուրս եկան Մադինայից և ուղևորվեցին դեպի Մեքքա Քաաքային Երկրպագելու համար: Հիվանդությունից նվազած Մուհամմադը մնաց Մադինայում և Ալ-Ղահից ստացավ նոր հայտնություններ: Դրանք այն աստիճանի կարևոր էին, որ ուխտագնացների հետևից մարզարեն ուղարկեց Ալիին, որը հանձնարարություն ուներ ուխտավորների կողմից Քաաքայում զոհ մատուցելուց հետո հրապարակելու Ալլահի նոր կամքը: Բարձրյալը հրամայում էր, որ զոհաբերության օրվանից հետո առաջիկա չորս ամիսների ընթացքում հեթանոսները պետք է զտնվեն անվտանգության մեջ: Այդ ժամկետի ավարտից հետո բոլոր աստվածամերժներին, որոնց հետ խաղաղության պայմանագիր կնքված չէ, մուտուլմանները պետք է առաջարկեն ընդունել խւամը: Ովքեր կիրաժարվեն, նրանց դեմ կիայտարարվի պատեռազմ, բացի այդ, հաջորդ տարվանից չի թույլատրվելու, որ որևէ հեթանոս մոտենա Քաաքային:

Երբ մարգարեի նոր հայտնությունը հաղորդվեց ժողովրդին, բոլորի համար պարզ դարձավ, որ Ալլահը հրամայել է իր ավետարերին հեթանոսների դեմ սկսել սրբազան պատերազմ՝ ջիհադ։ Ըստ էության հարցը դրվում էր հետևյալ կերպ. բազմաստվածության հետևորդները կամ պետք է ընդունեն իսլամը, կամ մեռնեն՝ այլ ընտրություն նրանք չունեն։ Այդ առթիվ Դուրանում ասվում է. «Արդ երկրիս վրայ չորս ամիս ազատ ման եկէ՝ ք. և իմացե՝ ք դուք չեք կարող Աստուծուն տկարացնել. բայց Աստուծած անհաւատներին խայտառակող է» (9:2): «Բացի այն կռապաշտներից, որոնց հետ դուք դաշինք էք դրել եւ նրանք ձեզ դեմ ոչ մի բան չեն դրժել եւ ոչ մեկին էլ չեն օգնել ձեզ դեմ։ Ուրեմն կատարեցէք նրանց համար իրանց դաշինքը մինչեւ իրանց ժամանակը, որովհետև Աստուծած սիրում է երկիւղածներին» (9:4): «Բայց երբ սուրբ ամիսները վերջացան, այն ժամանակ սպանեցէք կռապաշտներին որտեղ էլ նրանց գտնեք, եւ բռնեցէք նրանց եւ պաշարեցէք եւ նրանց համար ամեն անցրերում դարան մտեք» (9:5):

Ալլահի պատվիրանում ասվում էր, որ ջիհադը պետք է վերջանա միայն այն ժամանակ, երբ անհավատությունը խսպառ արմատախիլ կլինի։

Այդ նույն օրերին հաստատվեց նաև մարգարեի կողմից հակարիստոնեական դիրքորոշումը։ Ալլահի հրամանով, որը որպես հայտնություն հաղորդվել էր մարգարեին, «Գրքի մարդիկ» ևս ենթակա էին ջիհադի, մինչև որ «ստորացված լինելով» իրենց ձեռքով չտան փրկազին և զլիսահարկ՝ ջիզի։ Այս հայտնությունը պարունակում էր քաղաքական ենթատեքստ, քանի որ Մուհամմադը ծրագրել էր ծավալել լայն նվաճողական քաղաքականություն քրիստոնյա Բյուզանդիայի հյուսիսային նահանգների նկատմամբ։

Այսպիսով, դավանանքի ազատությունը, որը նախկինում քարոզվում էր մարգարեի կողմից, վերացվում էր:

Իսլամն ընդունելու համար հեթանոսներին հատկացված չորս ամիս ժամանակը լրիվ բավարար եղավ այն բանի համար, որ ընկճած ցեղերի շեյխերը զան Մուհամմադի մոտ և հնագանդորեն ընդունեն նրա կրոնը:

Այս ամենի ընթացքում իսլամական համայնքի ներսում ներքին խմորումները չեն դադարում: Նույնիսկ Մուհամմադի մերձակա զինակիցների շրջանում զնալով ավելի ու ավելի հաճախ էին տեղի ունենում կատաղի վեճեր: Պատճառը իշխանության տիրանալու անհազ ձգտումն էր: Մուհամմադը զգում էր, որ զնալով ավելի ու ավելի է նվազում իր ազդեցությունը այդ մարդկանց նկատմամբ: Միաժամանակ նա սկսում էր զիտակցել, որ բոլոր այդ մարդիկ հիանալի զիտեն Ղուրանը և հիանալի կարողանում են այն մեկնաբանել: Հետևաբար իր մարգարեկան առաքելությունը արդեն մոտենում է ավարտին:

Հարկ է նշել, որ դառնալով համարյա ողջ Արաբիայի բաղադրական առաջնորդը, Մուհամմադը թագավորական տիտղոս (մալիք) շընդունեց: Նրա կյանքը և կենցաղը շարունակում էր մնալ շատ հասարակ, չտարբերվելով ունենոր բաղաքարնակների կյանքից: Նա չէր ձգտում հարստության և պերճանքի, սակայն իր ընտանիքը և իր տոհմի անդամներին նա նյութապես ապահովեց, որոշելով, որ ուղմական ավարի հինգերորդ մասը (խումս) իրենից հետո պետք է հատկացվի մարգարեի ազգականներին ու սերունդներին, ինչպես նաև «սրբազն պատերազմում» զոհված զինվորների այրիներին ու նրանց որբացած զավակներին:

ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՄԱՀԸ

632 թ. հունվարին Մուհամմադի որդին՝ Իբրահիմը անսպասելի կերպով հիվանդացավ դողերոցը։ Չնայած նրան, որ հայրը քժիշկ չմնաց, որ չկանչեր և զիշեր-ցերեկ աղոթում էր, որ Ալլահը փրկի իր միակ որդուն, բայց անօգուտ։ 632 թ. հունվարի 27-ին Իբրահիմը մահացավ։ Մուհամմադը աղջողորմ ու անդադար լաց էր լինում և ողբում որդու կորուստը։ Այդ ողբը դատապարտվեց մուսուլմանների կողմից, որոնք հիշեցրին մարգարեին, որ ն' կյանքը և՛ մահը՝ Ալլահի ձեռքերում է։ Որդու մահը խիստ փոխեց Մուհամմադին։ Երբ նա դադարեց լաց լինելուց, դարձավ բացարձակապես հանգիստ։ Որոշ ժամանակ անց, առանց որևէ պատճառի, նա հանգիստ ու անվրդով ասաց իր աղջկան՝ Ֆաթիմային, որ շուտով կմեռնի։ Վերջինս սկսեց լաց լինել, բայց Մուհամմադը ժպտալով ասաց. «Լաց մի լինի։ Ինձ առաջարկվեց կատարել ընտրություն և ես ընտրեցի մահը»։

Ոչ միայն իր դառն նախատրամադրվածությունը, այլև չդադարող ու հյուծիչ հիվանդությունը օրըստօքն նրան հասցնում էին մահվան դուռը։ Նա ավելի ու ավելի հաճախակի էր տառապում զիսացավերից, սկսեց իր տան պատերի հետևում ավելի շատ թաքնվել մարդկանցից։

632 թ. մարտ ամսին սկսվեց ուխտագնացության ժամանակը, Մուհամմադը մեկնեց Մեքքա։ Մարգարեի այդ ուխտագնացությունը ստացել է «հրաժեշտի ուխտագնացություն» («Հաջ ալ-Վադա») անվանումը։ Մարգարեի հաջը հավատացյալների մոտ առաջ բերեց մեծ խանդակարություն և համաձայն արաք պատմիչների, նրա հետ ուխտագնացության մեկնեցին մոտ 60 հազար

հավատացյալներ: Մարգարեն իրեն զգում էր շատ հոգնած ու նվադած և այլս ուժ չուներ ճշտիվ կատարելու կրոնական ծիսակատարությունները: Նրա փոխարեն դա անում էր Աբով Բաջրը:

Այդ վերջին ուխտազնացության ժամանակ ի վերուստ մարգարեին ուղարկվեցին հայտնություններ հաջի կանոնների մասին, որոնց առ այսօր հետևում են բոլոր մուսուլմանները:

Մի փոքր հանգստանալուց հետո Մուհամմադը որոշեց Մինի և Մուգդալիֆի հովիտները, ինչպես նաև Արաֆաթ լեռը մարրեկ հեթանոսական «անմարրություններից»: Հազարավոր հավատացյաներ գնում էին նրա հետևից և ջարդ ու փշուր անում հեթանոսական կուոքերը: Այնուհետև Մինի հովտում Մուհամմադը իր ժողովրդին դիմեց ճառով, որը կարելի է անվանել «հրամեցտի

ճառ»: Իր ճառում նա մեկ անգամ ևս կրկնեց Ալլահի պատվիրանները և ասաց, որ մահմեղականները տարեցտարի պետք է կատարեն ուխտազնացություն: Նա ասաց նաև, որ մուսուլմանները պետք է ապրեն խաղաղության ու միասնության մեջ, օգնեն մեկը մյուսին, արդարացի կերպով վերաբերվեն իրենց կանանց ու ստրուկների հետ և մոռանան արյան վրիժառությունը, որ յուրաքանչյուր մահմեղականի կյանքն ու սեփականությունը անձեռնմխելի ու սրբազն է: Հավատացյալներին կոչ էր արվում ուրիշներին վեաս չպատճռել, անարդարություններ չգործել և չհանդուրժել անարդարությունները: Նա ասում էր, որ կանանց նկատմամբ ձեզ տրված են իրավունքներ, բայց և նշում էր, որ նրանք ևս ձեր նկատմամբ ունեն իրավունքներ: Հորդորում էր լավ վերաբերվել սեփական կնոջ նկատմամբ, հիշեցնելով, որ նրանք «ձեր կողմնակիցներն են և հավատարիմ օգնականները»: Կոչ էր անում աղոթել, ծում պահել, իրենց ունեցվածքից զարյաթ վճարել հօգուս չուներների: Որ վաշխառությունը հաճո չէ Ալլահին, հետևաբար

արգելվում է: Նա ասում էր, որ «արաբը առավելություն չունի ոչ արաբի նկատմամբ, սպիտակը սեի նկատմամբ և ոչ ել սեր սպիտակի նկատմամբ: Մուսուլմանը պետք է լինի մուսուլմանի եղբայր»: «Ինձանից հետո,- շարունակում էր Մուհամմադը,- այլևս չի լինելու ոչ մարզարե, ոչ Աստծո ավետարեր, չի լինելու նաև այլ հավատք: Ես ձեզ թողնում են երկու քան. Դուրանը և Սուննան, հետևեցեք դրանց և դուք երբեք չեք ընկնի մոլորության ու խարխափումների մեջ»: Մարգարեն իր ճառն ավարտում է հետևյալ խոսքերով. «Հիրավի, ես կատարեցի այն, ինչ ինձ հանձնարարված եր»:

Ուխտագնացությունից Մաղինա վերադարձի ճանապարհին մարզարեն մի փոքր դադար է տալիս ուխտավորներին Ղաղիի Խում կոչված վայրում, որտեղ դիմելով նրանց ասում է. «Ես ցանկանում եմ ձեզ տալ երկու պատվիրան: Եթե դրանք կատարեք, ապա մինչև Ահեղ դատաստանը ոչ մի դժվարության չեք հանդիպի. դրանցից առաջինը Ալլահի խոսքին հետևելն է, այն թելին հետևելը, որը Բարձրյալը երկնքից իշեցրել է երկրի վրա: Երկրորդը ինձանից հետո իմ ընտանիքի նկատմամբ հոգ տանելն է»: Ուխտագնացները միահամուռ խոստանում են սրբորեն կատարել մարզարեի այդ պատվիրանները:

Վերադառնալով Մաղինա, անխոնջ ու անհանգիստ խառնվածքի տեր մուսուլմանական համայնքի առաջնորդը սկսեց իր ժողովրդին նախապատրաստել նոր արշավանքի դեպի հյուսիս, Բյուզանդիայի սահմանամերձ Անդրիորդանանի հողերը: Այդ արշավանքը զլխավորելու պարտականությունը նա դրեց Զայդի որդու՝ Օսամի վրա, որն ընդամենը քսան տարեկան էր: Եթե մարզարեն ճանապարհում էր քանակին, բոլորի համար պարզ դարձավ, որ նրա օրերը հաշված են:

Անցնելով մեկ օրվա ճանապարհ, զորքերը ճամբար դրեցին և սկսեցին լուրի սպասել Մուհամմադի առողջության, ավելի ճիշտ մահվան մասին: Բանակում գտնվող ազդեցիկ մարդիկ պատրաստվում էին մարզարեի մահվան գույժը լսելուն պես անմիջապես վերադառնալ Մեքքա և մասնակցել իշխանության բաժանմանը:

Այդ նույն գիշերը Մուհամմադը արթնացավ իր ականջների մեջ լսվող ձայներից, ինչ որ մեռելներ խնդրում էին իրենց համար աղոթել: Մուհամմադը հասկացավ, որ ինքը միշտ աղոթել է իր ումմայում բոլոր մեռածների համար, սակայն մոռացության է մատնել նրանց, որոնք մահացել են ռազմի դաշտում, իր արշավանքների ժամանակ: Հենց գիշերով, մի ստրուկի ուղեկցությամբ նա մեկնում է գերեզմանասուն, որտեղ դիմելով հանգուցյալներին ասում է. «Օ՛, հողում հանգստացողներ: Բացվող արշալույսը ձեզ համար ավելի հանգիստ է, քան կենդանի մարդկանց համար: Դուք նրանցից երջանիկ եք: Ի տարբերություն կենդանի մարդկանց, Ալլահը ձեզ ազատել է զալիք օրերի դժբախսություններից»: Այնուհետև դիմելով ստրուկին, նա ասում է. «Այստեղ ինձ առաջարկում են ընտրություն կատարել երկու ճանապարհների միջև. կամ մնալ այս աշխարհում, կամ գնալ Ալլահի մոտ: Ես ընտրում եմ երկրորդը»:

Առավոտյան Մուհամմադի վիճակը դառնում է չափազանց վատ: Նա խնդրում է իրեն տանել Այիշայի տունը: Այլևս նա քայլել չէր կարողանում: Հաջորդ օրը նոյնիսկ չկարողացավ վեր կենալ իր մահճից աղոթելու համար: Եթե նրան բարձրացրին, նա կորցրեց գիտակցությունը: Հանկարծ ուշիքի գալով, Մուհամմադը խնդրեց բերել թուլք ու գրիչ, որպեսզի գրի իր վերջին ցանկությունները: Սակայն այդ խնդրանքը չկատարվեց. ոչ մեկին պետք չէր մարզարեի կողմից նշանակված ժառանգորդ: Նրա գինակից-

ների նեղ շրջանը, փոխադարձ համաձայնության ճանապարհով ցանկանում էր ինքը որոշել այն մարդուն, որը մարզարեի մահվանից հետո կդառնար զիսավոր դեմքը: Անձամբ մարզարեի կողմից որպես ժառանգորդ առաջադրված մարդը ոչ մեկին ձեռնուու չէր, ավելին՝ ոչ ոք չէր ցանկանում, որ հենց ինքը լինի այդ մարդը: Միանզամայն պարզ էր, որ այդ ընտրյալին սպասում էր մահը:

Մադինայում սկսեցին պտտվել լուրեր, որ մարզարեն արդեն մահացել է, սակայն այդ իրողությունը թարցնում են ժողովրդից: Մուհամմադի մերձավորագույն զինակիցները փորձում էին հաշտացնել, որ դա այդպես չէ, որ հիվանդությունը շուտով կնահանջի, բայց նրանց ոչ ոք չէր հավատում: Հունիսի 8-ին Այիշայի տան դռները բացվեցին, վերջինս հետ տարավ վարագույրը և դռների մեջ երևաց Մուհամմադը: Նրան կողքից բռնել էին, բայց կանգնած էր ինքը և նույնիսկ ձեռքով թափահարեց հավատացյալների կողմը: Ժողովուրդը հանգստացավ, բայց բարացիորեն մի քանի ժամից հետո մարզարեն մահացավ (632 թ. հունիսի 8-ին կամ Ռաբի ալ-ավվալ ամսի 13-ին), Մադինա տեղափոխվելու 11-րդ տարում, 63 տարեկան հասակում:

Այիշան կանչում է Մուհամմադի մյուս կանանց և նրանք սկսում են բարձրաձայն ողբը: Ժողովուրդը խառնվել էր իրար: Մարդիկ իրար հարց էին տալիս, թե մի՞ թե մարզարեն կարող է մեռնել, ինչպես սովորական մարդ: Սակայն Արու Բարրը նրանց հիշեցրեց Ռւյսուդ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո մարզարեի նոր հայտնությունը. «Մուհամմադը միմիայն մի ուղարկած է. նրանից առաջ էլ ուղարկածներ կային: Արդ եթէ նա մեռնի կամ սպանի, դուք արդեօք ձեր հետքերին ետ կը դառնաք: Հիմայ ով որ իրան հետքերին ետ դառնայ, նա աստուծուն ոչինչ չի վնասի. սակայն Աստուած անպատճառ վարձատրելու է երախտագիտներին» (3:138): Այդ տագնապալից օրերին Մեքքայի փո-

իսանորդ Աթթար իրն Ասիդը, վախենալով հուզումներից, տնից դուրս չեր գալիս: Բոլորին հուզում էր մի հարց. ի՞նչ է այսուհետև լինելու: Անմիջապես հայտնվում են կեղծ մարզարեներ: Շատերի մոտ կասկածներ են առաջանում իսլամի ճշմարտացիության վերաբերյալ և ցանկություն վերադառնալու իրենց նախնիների կրոնին: Բոլորին հուզում էր նաև հետևյալ հարցը. ո՞վ կփոխարինի մարզարենին: Այդ հարցի պարատասխանը չկար, քանի որ, ինչպես նշվեց, իր կենդանության օրոր մարզարեն ժառանգորդի անուն չեր տվել:

Սուհամմադին միշտ համատարիմ Օմարը փորձում էր բոլորին հանգստացնել, ասելով, որ մարզարեն չի մահացել, այլ պարզապես մեկնել է Ալլահի մոտ և շուտով կվերադառնա, իսկ ով կասկածում է դրանում, ինքը կկտրի նրա զլուխը:

Սակայն շուտով Այիշայի տան մոտ հայտնված Աբու Բարրը խուռներամ բազմության ներկայությամբ հայտարարեց, որ Սուհամմադը այլևս ոչ ևս է, նա մահացել է: Դիմելով հավաքվածներին նա ասում է. «Սարդիկ, Եթե դուք երկրպագում եք միայն Սուհամմադին, ապա նա մահացավ: Եթե դուք երկրպագում եք Ալլահին, ապա նա չի կարող մեռնել: Սուհամմադը Ալլահի մարզարեն է: Ինչպես և իրենից առաջ եղած բոլոր մարզարեները, նա ևս մահացավ: Ինքը Ալլահը ևս իր Դուրանում ասել է, որ Սուհամմադը լոկ նրա մարզարեն է և նա անպայման կմեռնի: Եվ ի՞նչ, այն քանի համար, որ մարզարեն մահացավ, դուք երես կթեք ՞ նրա հավատքից»:

«Նախկին աղքատ, վարձկան հովիվը,՝ զրում է Լեռն,՝ մեռնում էր իբրև մի ամբողջ երկրի տեր, իբրև մի թագավոր, որ մարմնացնում էր իր մեջ աստծո փոխանորդությունը: Նա միայն կրոնական զործիչ չեր: Կրոնի միջոցով նա ստեղծել էր մի ամբողջ քաղաքական կազմակերպություն, մի պետություն, որ միացնում էր

ամբողջ արարական աշխարհը և իրականացնում էր հին դարերի կրոնական իդեալը՝ աստվածապետություն, այն դրությունը, երբ աստված ինքն է պետության գլուխն ու կառավարիչը: Իր Դուրանով նա տվել էր այդ պետությանը ոչ միայն կրոնական կանոններ, քաղաքական կազմակերպության հիմունքներ, այլև օրենքներ՝ ներքին քաղաքացիական կյանքը կանոնավորելու համար»:

Համաշխարհային մեծ կրոններից մեկը ստեղծած մարզարեն թաղվեց ճիշտ այն նույն տեղում, որտեղ մահացել էր, Այիշայի սենյակում: Նրա մահիճը կողդի քաշեցին և նրա տակ փորեցին գերեզման: Այդ նույն տեղում հետազայում կառուցվեց մեծ դամբարան, որը ներկայումս Մադինայում հանդիսանում է խլամի կարևորագույն սրբավայրերից մեկը:

Հանրագումարի բերելով մարզարեի կյանքի անցած ճանապարհը, խլամագետ Ա. Մասսեն գրում է. «Ընորհիվ Մուհամմադի կրոնական և քաղաքական հանճարի, որն ընդունակ էր միավորել ու համախմբել մարդկանց, արաբները, ճանաչելով իրենք իրենց, դուրս եկան տղիտության ու անիշխանության վիճակից և պատրաստ էին նրան, որ վճռականորեն գրավեն իրենց տեղը քաղաքակրթության պատմության մեջ:

Քանի որ մարզարեն չէր թողել արական սեոի ժառանգորդ, ուստի նրա ժառանգորդի հարցի շուրջը անմիջապես բորբոքվեց սուր քաղաքական ձգնաժամ: Սկսվեց իշխանության բաժանման շուրջը տենտազին պայքար: Հատկապես թեծ պայքար ծավալվեց մերքացիների ու մադինացիների միջև: Ծնունդ առան բազմաթիվ կուսակցություններ ու քաղաքական խմբավորումներ: Մուհամմադի փեսա Ալին, որին աջակցում էին ազ-Զուրայրը և Թալյան, իր կողմնակիցներին հավաքեց Ֆաթիմայի տանը: Սաադ իրն Ուրայդան անսարների հետ միասին հավաքվեցին Բանու Սայդա քաղամասում: Մուհաջիրների մեծ մասը Օմարի (Ումար) գլխա-

Վորությամբ բոլորին կոչ էին անում հավատարմության երդում տալ Արու Բարրին որպես Սուհամմաղի տեղակալ (խալիֆ), սակայն անսարները պահանջում էին խալիֆ ընտրել իրենց մարդկանցից մեկին: Արու Բարրը հրաժարվում էր դառնալ Սուհամմաղին հաջորդող, առաջարկելով Օմարի և Արու Ուրայդայի թեկնածությունները: Ստեղծվեց ներքին «քաղաքացիական» պատերազմի լուրջ սպառնալիք: Հասկանալով դա, Օմարն անհապաղ մեկնեց Արու Բարրի մոտ և նրանք միավորվեցին: Միաժամանակ առևս ցեղի անսարները, մտավախություն ունենալով, որ իրենց հակառակորդ հազրաց ցեղը կարող է բարձրանալ, համաձայնվեցին հավատարմության երդում տալ Արու Բարրին: Իր հերթին Օմարը ևս հավատարմության երդում տվեց Արու Բարրին, նրա կողմը շրջեց մեծամասնությանը և սանձեց բոլորի կրքերը: Այսպիսով, վերացվեց պառակտման վտանգը: 632 թ. հունիսի 9-ին Արու Բարրը հոչակվեց խալիֆա («խալիֆա ուստու Ալլահ»), այսինքն մարզարեի տեղապահ (արաբ. խալիֆա, հոգն. խուլաֆա): Նա դարձավ ոչ միայն մահմեդական համայնքի ղեկավար, այլ նաև միաժամանակ արաբական պետության ղեկավար, քանի որ կրոնական համայնքի և պետության հասկացությունները չէին բաժանվում միմյանցից:

Տեղեկանալով այդ մասին, Ալին հասկացավ, որ ինքը ի վիճակի չէ ընդիմանալ դրան և նույնպես հավատարմության երդում տվեց Արու Բարրին: Անշուշտ Սուհամմաղի ազգական և փեսա Ալին, որ առաջիններից մեկն էր, որ ընդունել էր նրա ուսմունքը, կարող էր օգտագործել իր ունեցած այդ առավելությունները: Սակայն նա դրսնորեց անվճռականություն և չկարողացավ կազմակերպել իր կողմնակիցներին:

Հաջորդ օրը առավոտյան առաջին խալիֆին հավատարմության երդում տվին նաև ուսմայի մուսուլմանները:

ԲԱՐԵՊԱՇՏԻ ԽԱԼԻՖՆԵՐԸ

Չորս «բարեպաշտ» («ռաշիդուն») խալիֆներից առաջինը, այսպիսով դարձավ Արու Բարր ալ-Սիդիկը, որը կառավարել է ընդամենը երկու տարի (632-634 թթ.): Աս-Սիդիկ մականունը նշանակում էր «Ճշմարտացի», «Ճշմարտության վկա»: Նա Մերքարի հարուստ վաճառականներից էր և իբր եղել է տղամարդկանցից առաջինը, որն ընդունել էր խալամը (այդ նույնը ասվում է նաև մարզարեի մի քանի մերձավորագույն գինակիցների մասին): Նրա ծառայությունները խալամի հաղթանակի գործում չափազանց մեծ էին: Մինչև Մադինա տեղափոխվելը Արու Բարրը մշտապես ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում մուսուլմանական համայնքին: Նա Մուհամմադին ուղեկցել էր հիջրայի ժամանակ, երբ հեռանալով Մերքարից, նրանք երկուտով Մադինա տանող ճանապարհին թաքնվել էին քարանձավում: Այդ առթիվ Ղուրանում ասվում է. «... Երբ անհավատները նրան դուրս արեցին, և նա երկուսիցը երկրորդն էր, երբ նրանք քարայրում էին...» (9:40): Առհասարակ Արու Բարրը եղել էր մարզարեի մշտական ուղեկիցը, նրա բոլոր ուղենորությունների և ռազմական արշավանքների ժամանակ, սակայն անձամբ ինքը չէր զիսավորել և ոչ մի նշանակալից քաղաքական կամ ռազմական գործողություն, չհաշված 631 թ. հաջը: Մուսուլմանական աղբյուրները նրան ներկայացնում են մեղմ ու հանգիստ խառնվածքի տեր մարդ, բոլորովին գուրկ իշխանատենչությունից: Նրա աղջիկը՝ Այիշան, Մուհամմադի սիրեցյալ կինն էր: Մարզարեն իր փեսային վատահում էր կարևոր գործեր:

Իր ընտրության (632 թ.) հաջորդ օրը Աբու Բաքրը արդեն որպես խալիֆ, ժողովրդի առջև հանդես եկավ քարոզով, որը սկսեց հետևյալ բառերով. «Մարդիկ: Թեև ես ձեզանից լավագույնը չեմ, բայց ես ընտրվել եմ որպես ձեր խալիֆ: Իմ երդումը ես կատարեցի շատ հապճեպ, քանի որ վախենում էի անկարգություններից: Երդում եմ Ալլահով, որ ոչ ցերեկը և ոչ ել զիշերը ես չեմ երազել իշխանության մասին: Եթե ես դառնամ լավ կառավարիչ, ապա դուք աջակցեք ինձ: Իսկ եթե ես թույլ տամ անարդարություն, ապա դուք ինձ ցույց տվեք ճիշտ ճանապարհը: Ճշմարտացիությունը դա հավատարմություն է, կեղծիքը՝ դավաճանություն: Դուք չեք լրի հանուն հավատի պայքարի դաշտը, քանի որ այն ժողովուրդը, որը լրում է այն, կենքարկվի դժբախտությունների: Ինչպես որ ես էի հնազանդվում Ալլահի մարզարեին, այնպես էլ դուք հնազանդվեցեք ինձ: Եթե ես գնամ ճշմարտության դեմ, դուք կարող եք ինձ չինազանդվել»:

Զքաղեցնելով պատասխանատու և բարձր պաշտոն, սկզբնական շրջանում Աբու Բաքրը նույնիսկ չփոխեց իր ապրելակերպը. նա շարունակում էր արածացնել իր ոչխարները և շուկայում գրադարձել շորեղենի առևտրով: Սակայն շատ արագ նա հասկացավ, որ իր առօրյա զբաղմունքների և համայնքի կենսական նշանակություն ունեցող հարցերի լուծման համատեղումը անհնարին է, ուստի ամբողջապես կենտրոնացավ խալիֆի զբաղմունքների վրա: Մադինա տեղափոխվելուց հետո լինելով հավատին բոլորանվեր նվիրված տիպար, նա իր ունեցած 40 հազար դիրիեմ կապիտալը ամբողջապես օգտագործեց աղքատներին օգնելու և մահմեդական համայնքի կարիքների վրա: Դադարեցնելով առևտրով զբաղվելը, խալիֆը համայնքից պահանջեց փոխհատուցում: Նրա ապրուստի և այլ ծախսերը հոգալու համար հա-

մայնքը նրան հատկացրեց տարեկան երկու հազար դիրհեմ: Արու Բարբը այդ գումարը համարեց ոչ բավարար, ուստի հիշյալ գումարի վրա ավելացվեց ևս հինգ հարյուր դիրհեմ: Այդ ժամանակներում որակյալ արհեստավորի տարեկան եկամուտը կազմում էր 250-300 դիրհեմ: Չպետք է նաև մոռանալ, որ խալիֆը ռազմական ավարից ստանում էր նաև իրեն հասանելիք հինգերորդ մասը, թեև ըստ մեզ հասած տեղեկությունների, այդ փողերը Արու Բարբը մինչև վերջին դիրհեմը բաժանում էր համայնքի անդամներին:

Գլխավորելով մուսուլմանական ումման, Արու Բարբը շարունակում էր վարել վերին աստիճանի համեստ կյանք, բոլոր առիթներով շեշտելով, որ ինքը հանդիսանում է լոկ Մուհամմադի պատվիրանների պարզ իրազործողը:

Սարգարեի մահվանից հետո մուսուլմանական համայնքում ստեղծվել էր ճգնաժամային վիճակ: Այդ համայնքի կառավարումը, որն ամբողջապես խարսխված էր մարզարեի անձնական հեղինակության վրա, նրա մահվանից հետո հայտնվեց պառակտման վիճակում: Բեղվինների մի մասը վճռականորեն մերժեց իսլամը, մյուսները հրաժարվում էին հարկեր վճարել, երրորդները տատանվում էին և նրանց վարրազդից պարզ երևում էր, որ նրանք անվատահելի տարրեր են: Համարյա ողջ Արարիան, բացի Մերքայից, Սաղինայից և Թայիֆից, տեղեկանալով մարզարեի մահվան մասին հեռացան իսլամից:

Առհասարակ, Մուհամմադի մահվանից հետո նրա ստեղծած քաղաքական համակարգը ամենուրեք ճեղքվածքներ տվեց ու խարսխվեց: Բազմաթիվ կարևորագույն ցեղեր իրենց ազագին պայմանագրային պարտավորություններից, վոնդեցին հարկահավաքներին և վերադարձան նախկին կյանքին: Ազատասեր

բեղվինները միակողմանի կերպով պատռեցին ու ոչնչացրին այն դաշինքը, որը մաղինացիների համար ապահովում էր նրանց տիրապետությունը Արաբական թերակղզու մեծ մասի նկատմամբ: Մուհամմադի ստեղծած պետությունը զրկվեց քաղաքական միասնությունից: Ինչպես ստվորաբար լինում է խոշոր քարոզչի մահվանից հետո, ողջ Արաբիայով մեկ հայտնվեցին քազմաթիվ կեղծ մարգարեններ, որոնցից մեկը նույնիսկ կին էր: Այդ մարդիկ ընդօրինակելով Մուհամմադին, սկսեցին ստեղծել իրենց համայնքները, նրանց մեջ հրապուրելով մահմեղականներին, ինչպես նաև աշխատելով, որ հեթանոսներն ընդունեն իրենց դավանած կրոնը:

632-633 թվականների շրջանը Արաբիայի պատմության մեջ ստացել է ար-Ռիդա կամ «ոլիդանների պատերազմ» անվանումը, որ նշանակում է հավատուրացների դեմ պայքարի շրջան:

Միայն մաղինացիների և մերքացիների հզոր ռազմական ու ֆինանսական աջակցության շնորհիվ Աբու Բաքրին հաջողվեց տարանջատված ու պառակտված Արաբիան վերստին վերադարձնել խլամի գիրկը: Ըստ որում, կրոնուրացների դեմ նա դրսենորում էր անհաջո վերաբերունք: Այն ցեղերը, որոնք հեռացել են Մուհամմադի հետևորդ լինելուց, ալ-Արաբայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրեցին ջախջախիչ պարտություն: Ջախջախվեցին և ընկճվեցին նաև ամենաազդեցիկ կեղծ մարզարեներից մեկի՝ Մուսեյլիմի հետևորդները: 633 թ. Աքրաբի մոտ տեղի ունեցած այսպես կոչված «մահվան պարսպի» ճակատամարտում Խալիդը ջախջախեց Մուսեյլիմ մարզարեի քազմահազար հետևորդներին:

Աբու Բաքրի կողմից խալիֆի պաշտոնը զբաղեցնելուց հետո ընդամենը մեկ տարի անց ար-Ռիդան հաղթահարվեց: Ցեղա-

յին անջատողականությունը որպես պետականության սկզբունք պարտություն կրեց: Խսլամը կայունացավ Արաբիայում:

Աբու Բաքրը սկիզբ դրեց խսլամականացմանը որպես պետական քաղաքականություն: Նրա օրոր սկսեցին ձևավորվել պետականության գլխավոր հասլկանիշները, սկսվեց տիրապետող մահմետական վերնախավի ձևավորումը: Քանի որ բնականարար Աբու Բաքրը չուներ այն հեղինակությունը, ինչ Սուհամմադը, ուստի նա ընտրեց կառավարման խորհրդակցական ոճը: Հենց Աբու Բաքրի կառավարման շրջանում էր, որ աստիճանարար սկսեց ձևավորվել վաղ ֆեոդալական տիպի արարական աստվածապետական պետությունը՝ խալիֆայությունը (խալիֆաթ), որի գաղափարախոսությունը դարձավ խսլամը: Խալիֆները իրենցից ներկայացնում էին ինչպես քարձրագույն հոգնոր իշխանությունը՝ իմամությունը (իմամաթ), այնպես էլ աշխարհիկ, այդ բարեկան նաև քաղաքական ու ռազմական իշխանությունը՝ էմիրությունը (էմիրաթ):

Սլրազան պատերազմի դեկավարումը և նվաճված տարածքների կառավարումը հանդիսանում էր խալիֆի պարտականությունը: Խալիֆը անսահմանափակ տիրակալ էր: Նրա դեմ ապստամբելը նշանակում էր ապստամբել Ալլահի դեմ: Նա համարվում էր մարզարեի ներկայացուցիչը (նայիրը) և օրենքի (շարիաթի) պահապանը: Խալիֆը հանդիսանում էր բանակի գերագույն գլխավոր հրամանատարը (ամիր ալ-մումինին), հասարակական, աղոթքի դեկավարը (իմամ): Սկզբում խալիֆը հանդես էր գալիս նաև որպես դատավոր: Հետազայում նա իր այդ գործառույթը հանձնեց կաղիին:

Խալիֆի պաշտոնում Աբու Բաքրի կատարած կարևոր գործերից մեկը հանդիսացավ այն, որ նա կարգադրեց կազմել Ղուրա-

Նի տերստերի առաջին ցուցակը: Նա հանձնարարեց մարզարեի որդեգիր զավակ և նրա գրագիր Զայդ իրն Սաբիթին՝ հալարել Ղուրանի բոլոր տերստերը ասելով. «Դու, Զայդ, խելոք երիտասարդ ես, և մենք կասկածներ չունենք քո նկատմամբ»: Զայդի զիշավորությամբ ստեղծվում է Ղուրանի լավագույն գիտակների և այսպես կոչված հաֆիզների (Ղուրանն անգիր իմացող մարդկանց) մի խումբ: Ողջ երկրով մեկ ուղարկվում են կոչեր, խնդրանքով, որ ում մոտ որ կա Ղուրանի որևէ այաթ, այն տանի Մերրա: Բոլոր ուղղադավանները պատրաստակամությամբ արձագանքում են այդ կոչին և այսպիսով տեղի է ունենում խլամի սուրբ գրի առաջին խմբագրումը: Ինչպես կտեսնենք ստորև, նրա վերջնական խմբագրումը տեղի ունեցավ ավելի ուշ, երբորդ բարեպաշտ խալիֆ Օսման (Ուսման) իրն Աֆֆանի օրոր:

Աբու Բաքրը շարունակեց խլամի հաղթական երթը: Այդ կրոնը դարձավ արարական նվաճողականության դրոշը: Առաջին հարվածը որոշվեց հասցնել Բյուզանդիային: Արշավանքի ժամանակը ճիշտ էր ընտրված. անընդհատ պատերազմներն Իրանի դեմ հյուծել էին երեմնի այդ հզոր պետության նյութական ռեսուրսները: Սահմանամերձ բյուզանդական ամրոցները գտնվում էին ծայրահեղ վատ վիճակում, իսկ սահմանակից արարական ցեղերը, որոնք ավանդաբար կայսերական զանձարանից նպաստ էին ստանում, գտնվում էին կիսաքաղ վիճակում, բոլորից լրված և թողնված իրենց ճակատազրին, նրանք չէին պատրաստվում հենց այնպես, ձրի կովել մուսուլմանների դեմ:

Պատերազմի վերաբերյալ Աբու Բաքրի մտքերը այնքան էլ ոգևորությամբ չընդունվեցին արարական ավազանու կողմից, սակայն արժանացան Օմարի և Ալիիի ջերմ հավանությանը: Երբ արշավանքի հարցը դրվեց ընդհանուր քննարկման, պարզվեց, որ

հակառակորդները մեծ թիվ են կազմում: Վիճաբանությունը համարյա վերածվեց մեկը մյուսի նկատմամբ անձնական վիրավորանքների և ծեծկոտուրի, երբ անսպասելիորեն Արու Բարբին պաշտպանեց Խալիդի իրն Սայիդը, ասելով, որ կենթարկվի խալիֆի ցանկացած որոշմանը: Արու Բարբը Խալիդին նշանակեց գործերի գլխավոր հրամանատար (ամիր) և հրամայեց նրան հանձնել իշխանության խորհրդանիշ հանդիսացող դրոշը: Ավելի ճիշտ դա դեռ դրոշ չէր, այլ մի սպիտակ կտոր, որն ամրացված էր նիզակի ծայրին:

Խալիդը իր մարդկանց հետ Զուրֆայում ձամբար դրեց և սկսեց կամավիրներ հավաքել արշավանքի մեկնելու համար: Միայն Օմարը համաձայն չէր գլխավոր հրամանատարի ընտրության հարցում: Նա գտնում էր, որ այդ մարդը նման գործի համար հարմար չէ և Արու Բարբին անընդհատ համոզում էր, որ Խալիդը չափազանց զոռող և ամելարտավան է և նրա համար դժվար կլինի այդովանց հետ աշխատելը: Ի վերջո Խալիդին փոխեցին և նրա տեղը նշանակեցին միանգամից երեք հոգու՝ Յազիդ իրն Արու Սուֆյանին, Շուրահիլ իրն Հասանին և Արու Ուրայդ իրն ալ-Զարրահին: Սուսուլմանական բանակի ընդհանուր թիվը 15 հազար մարդ էր, յուրաքանչյուր ամիրին հատկացվեց 5 հազարական զինվոր:

Արու Բարբը հրամայեց արշավանքը սկսել: Յազիդի խմբավորումը բյուզանդյական զորքերին հանդիպեց Ղամբար ալ-Արաբ վայրի մոտ և զախչւիսելով նրանց, շարժվեց դեպի Գազզա: Նրա մատուցներում, Յասյն օյուղի մոտ մոտուլմանական բանակի դեմ դուրս եկավ Կեսարիայից ժամանած բյուզանդյական երեք հազարանոց ջոկատը պատրիցիա Աերգիլի գլխավորությամբ: Արյունալի ճակատամարտում բյուզանդացիները կրկին պարտութ-

յուն կրեցին, տալով մոտ երեք հարյուր սպանվածներ, այդ թվում նաև գլխավոր հրամանատար Սերգիին: Շարունակելով մարտերը բյուզանդական զորքերի խմբավորումների դեմ, մուսուլմանները սպանեցին ևս չորս հազար բյուզանդական զինվորների: Սակայն Յազիդին այդպես էլ չհաջողվեց Գազզան զրավել:

Ինչ վերաբերում է Աբու Ուբայդի խմբավորման զործունեությանը, ապա ևս խաղաղության պայմանագիր կնքեց Մաարայի բնակիչների հետ և առանց կորուստների անցավ նրանց տարածքներով, սակայն Զիզայի մոտ հանդիպեց Անդրհորդանանի քրիստոնյա արաբների ուժերին և պարտություն կրելով նահանջեց Հարավային Սիրիա:

Տեսնելով, որ իր զորքերը հայտնվել են աղետալի վիճակում, Աբու Բարրը Խալիդի իրն ալ-Վալիդին, որը մի քանի ճակատամարտերում իրեն դրսեորել էր որպես կարող և ունակ զրավար, ուղարկեց Սիրիա, հրամայելով ընդունել բանակի գլխավոր հրամանատարությունը: Իր հետ վերցնելով թվով 850 լավագույն մարտիկների, իինք օրվա ընթացքում սիրիական անապատի վրայով Խալիդը անցում կատարեց դեպի նպատակակետը: Դա իսկապես մեծ զրավարի քայլ էր: Հընթաց գրավելով Թաղմորը, նա այնուհետև Սարջ ար-Ռախիդի վրայով շարժվեց դեպի Բասրա, որտեղ գտնվում էին իիմսական ուժերը: Մուսուլմանական բանակը զրոհով վերցրեց Բասրան և քաղաքի բնակիչները դարձան մահմեդականների հարկատուն: Վախիենալով մուսուլմանական բանակի վրիժառությունից, հարեան քաղաքներն ու բնակավայրերը նույնպես հնագանդության մասին պայմանագրեր կնքեցին Խալիդի հետ: Այնուհետև վերջինս Աբու Ուբայդի հետ միասին, Շուրահիդին թողնելով Բասրայի մոտ, շարժվեցին դեպի Դամասկոս և պաշարեցին այդ քաղաքը:

Բյուզանդական Հերակլ կայսրը մուսուլմանական արշավանքի սկզբում գտնվում էր Եղեսչիայում և կարևոր նշանակություն չտվեց դրան, ենթադրելով, որ դա քոչվորների սովորական ասպատակություն է: Սակայն Բասրայի անկումը և Դամասկոսի պաշարումը ստիպեցին նրան գիտակցել դրա լրջությունը, ուստի կազմելով մի խոշոր բանակ, նա այն շարժեց թշնամու դեմ: 634 թ. հուլիսի 30-ին հակառակորդները հանդիպեցին Միմյանց: Ճակատամարտը դաժան էր և արյունահեղ: Այն ավարտվեց մահմենդականների հաղթանակով: Որպես ռազմական ավար ձեռք բերված բյուզանդական զենքերով վերազինելով իր բանակը, Խալիդը վերադարձավ Դամասկոս և կրկին այն ենթարկեց պաշարման: Նա դեռ չզիտեր, որ օգոստոսի 23-ին խալիֆ Աբու Բաքրը մահացել է: Նա իր մահկանացուն կնքել էր 63 տարեկան հասակում, ճիշտ այն նույն տարիքում, ինչ և Մուհամմադը: Մուսուլմանները դրա մեջ տեսան առաջին խալիֆի մեծությունը և բարեպաշտությունը շեշտող Ալլահի հասուլ նշանը: Աբու Բաքրի խալիֆայության երկու տարիների ընթացքում (632-634 թթ.), խալամական զորքերը գրավեցին նաև իրանական պետությանը ենթակա Բահրեյնը, նվաճեցին Հարավային Արաբիան (Օման, Հայրամաութ): Խալամը կայունացավ Արաբիայում և սկսվեց Սիրիայի և Իրաքի նվաճումը:

Մահվանից առաջ Աբու Բաքրը երկար և լրջորեն մտորել էր այն մասին, թե ով է լինելու խալիֆը իր մահվանից հետո: Ի վերջո նա կանգ է առել իր հավատարիմ զինակից ու խորհրդական Օմար իրն ալ-Խաթթարի թեկնածության վրա, որն արժանացավ շատերի հավանությանը:

Աբու Բաքրի թաղման արարողությունը համեստ էր, առանց որևէ պատիվների: Նրան թաղեցին Մուհամմադի կողքին: Խալիֆի կանայք ու կին ազգականները փորձեցին հին ավանդույթների

համաձայն ողբ ու կոծ անել, սակայն Օմարը կտրականապես արգելեց, հետևելով Սուհամմադի կողմից սահմանված հեթանոսական ողբի արգելքին:

Հաջորդ օրը 634 թ., երկրորդ «բարեպաշտ» խալիֆ Օմարին ալ Խաթթար ալ-Ֆարուքը (մոտ. 585-644) հավատարմության երդում տվեց: Ծագումով նա կուրայշ ցեղի բանու ալ-ադի իրն Քաք երկրորդական տոհմից էր: Զբաղվել էր կտորեղենի առևտուվ: Խւլամն ընդունել էր 616 թ.: Միայն Մադինայում նա ընդգրկվեց Սուհամմադի մերձակա շրջապատի մեջ և մարզարեին կնության տվեց իր աղջկան: Օմարը (Ումարը) մասնակցել էր մարզարեի բոլոր արշավանքներին, սակայն աչքի չեր ընկել որպես ռազմիկ: Նա Սուհամմադի և նոր հավատի անկեղծ և նվիրյալ կողմնակիցներից էր: Օմարը Աբու Բարից երիտասարդ էր, ոչ շատ վաղուց լրացել էր նրա հիսուն տարին: Անկասկած նա հանդիսանում էր իր ժամանակի խոշոր պետական գործիչներից և առհասարակ անհատականություններից մեկը: Նա իր խալիֆի տիտղոսին ավելացրեց «ամիր ալ-մումինին» («ուղղադավանների առաջնորդ») տիտղոսը: Օմարին հաջողվեց ստեղծել իսկական աստվածապետական պետություն: Նրա օրոք արաքական մուսուլմանական պետությունը վերածվեց կայսրության: Ծնունդ առան բոլոր իսլամիստական քաղաքական ինստիտուտները:

Արևմուտքում համարել են, որ Օմարը իսլամի տարածման ու զարգացման մեջ համարյա նույնքան խոշոր դեր է կատարել, որքան Պողոս Առաքյալը՝ քրիստոնեական եկեղեցու կազմակերպման մեջ: Օմարի ժամանակ էր, որ իսլամը դուրս եկավ Արաբիայի սահմաններից և իր տիրապետությունը հրով ու սրով տարածեց ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում: 636 թ. Յարմուկ գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո արաբները

նվաճեցին ողջ Սիրիան, երկու տարի անց նրանք իրենց խալիֆայությանը միացրին քրիստոնեական խոշոր կենտրոն Անտիոք քաղաքը, 638 թ. գրավեցին Երուսաղեմը, 640 թ. սկսեցին նվաճել Եգիպտոսը, 639 թ. հյուսիսում մուսուլմանական բանակը մտավ Հայաստան: Դարձալ Օմարի ժամանակ նվաճելով Իրանի հարավ-արևելքում գտնվող Բալուչեսթանը, արաբները դուրս եկան Հնդկաստանի սահմանների մոտ:

Քանի որ մուսուլմանական բանակը չուներ լավ ամրացված քաղաքներ գրավելու փորձ, ուստի որպես կանոն արաբներն օգտագործում էին հետևյալ մարտավարությունը. պաշարելով քաղաքը, նրանք փակում էին դեպի քաղաք տանող բոլոր ճանապարհները և հանրագումարում քաղաքի կամ ամրոցի պաշտպաններին ծնկի էին բերում սովոր օգնությամբ: Դամասկոսում, ըստ երևոյթին, կային սննդամբերքի խոշոր պաշարներ և երկար ժամանակ քաղաքը չէր հանձնվում: Սակայն ի վերջո, չղիմանալով երկարատև պաշարմանը, 635 թ. օգոստոսին այդ քաղաքը ևս հանձնվեց:

Առհասարակ Օմարի տասնամյա կառավարումը դա խալամբի հաղթական նվաճողականության և կայուն կազմակերպման ժամանակաշրջան էր:

Արաբների գարմանալի հաղթանակներին նպաստեցին մի քանի գործոններ. զորքերի շարժունակությունը (ուղտերի օգտագործումը հնարավորություն էր տալիս զորքերը արագ տեղափոխել ցանկացած վայրը), հակառակորդների միջև եղած երկպառակությունների վարպետ օգտագործումը, յուրաքանչյուր քոչվորմահմեղական պատրաստի գինվոր էր, որը հնարավորություն էր տալիս ստեղծելու հսկայական բանակներ: Կարևոր գործոն էր նաև այն, որ Բյուզանդիայի բնակչությունը, որի վրա ծանրացած

Էր ֆեռդալական ծանր լուծը, արաբներին դիմավորում էր որպես ազատարարներ, քանի որ կյանքը համոզիչ փաստերով ցույց էր տվել, որ արաբական տիրապետությունը ավելի տանելի էր:

Չափազանց մեծ էր Օմարի ղերը նաև իշխանության նոր համակարգ ստեղծելու գործում, որը կարելի է բնութագրել որպես արարա-մուսուլմանական աստվածապետություն: Հիրավի, նվաճողական ընդունակության հետ միասին, նա դրսերեց նաև նվաճված երկրները և առհասարակ իսլամական պետությունը կառավարելու մեծ կարողություն: Նա Մուհամմադից հետո առաջին օրենսդիրն էր: Նա օրենսդրեց նաև այն հարաբերությունները, որ իսլամական պետությունը պետք է ունենար մյուս, ոչ իսլամ ժողովուրդների ու կրոնների նկատմամբ: Խալիֆ Օմարի կառավարման շրջանում Արաբական խալիֆայությունում ավարտվեց պետականության, վարչական ու հարկային համակարգի ձևավորումը:

Արարիայի սահմաններից դուրս մուսուլմանական տիրույթների արագ ընդարձակումը (Եզիզտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբիայի, Իրանի արևմտյան մասի նվաճումը), դավանակից-արաբների համայնքի վերածումը բազմազգ պետության, գերակշիռ այլադավան բնակչությամբ և վիթխարի ռեսուրսներով, հրամայողաբար Օմարից պահանջում էին ձևնարկել անհետաձգելի միջոցառումներ վարչական-հարկային համակարգ ստեղծելու և հսկայական եկամուտները բաշխելու սկզբունքներ մշակելու համար: Դրանցից կարենրագույնը նվաճված հողերի բաժանման վրա արգելք դնելն էր և դրա փոխարեն բոլոր ասխաբներին և զինվորներին աշխատավարձի (ա՛թա) և բնամթերքի (ոփղկ) վճարումն էր, ըստ նախապես կազմված հաշվեմատյանների (ոլիվանների): Այս բարեփոխումն իրականացնելու համար 638 թ. սկզբին

Օմարը մեկնեց Սիրիա և այցելեց իր գորքերի կողմից գրաված Երուսաղեմ: Ի դեպ, Երուսաղեմում նա հրապարակում է հրովարտակ, որով հաստատում է Սուհամմադ մարզարեի կողմից տրված ֆեթվան հայ առաքելական եկեղեցուն հատկացված իրավունքների, ինչպես նաև այդ քաղաքում բնակվող հայերի կյանքի և ունեցվածքի ապահովությունն ու անվտանգությունը երաշխավորելու մասին: Դրա հետ միաժամանակ Իրաքում իրականացվեց հողային կաղաստրների հաշվառում և որոշվեցին խարաց և ջիգիե հարկատեսակների չափերը: Եզիզոտոսը նվաճելուց հետո Օմարը կարգադրեց, որ այնտեղից ցորեն մատակարարվի Մերքային և Մադինային:

Օմարի կառավարումն իրականացվում էր Մադինայից, որը շարունակում էր մենալ որպես արաքական պետության հոգենոր և վարչական կենտրոնը: Խալիֆի կարևորագույն միջոցառումներից մեկը հանդիսացավ այն, որ նա մտցրեց խլամական օրացույցը, որում թվարկությունը սկսվում էր 622 թվականից, այսինքն՝ Մուհամմադի հիջրայի տարեթվից: Այդ նոր օրացույցը գործողության մեջ մտավ 637 թ. ապրիլի 16-ից (ուարիի 1-ից): Մուսուլմանական ավանդույթը Օմարի անվան հետ է կապում նաև քաջմարթիվ կրոնա-իրավական սկզբունքների արմատավորումը. ամենամյա ուխտանքությունը, ամուսնական դավաճանության համար քարձեւ անելը, ճիպոտահարումը, արյան գնի (դիյա) չափի որոշումը և այլն:

Սակայն Օմարի կառավարման շրջանում նկատվեցին նաև երևույթներ, որոնք ավելի ուշ լուրջ անդրադարձներ էին ունենալու արաքական խալիֆայության ճակատագրի վրա: Բանք նրանումն է, որ եթե մուսուլմանական խալիֆայությունը իրենից ներկայացնում էր միևնույն ժողովրդի համադաշականներից բաղկացած

մի միավորում, բայց հետագայում, եթե խալիքայությունը վերածվեց կայսրության, բուն Արքիայի ժողովուրդը կազմում էր այդ պետության բնակչության ոչ ավել քան քառորդ մասը: Ընդ որում, նահանգները հաճախ ավելի զարգացած էին, քան ինքը մետրոպոլիան: Մշտապես տեղի էր ունենում նաև մուսուլմանների արտագաղթ դեպի նվաճված հողերը: Ծնունդ առավ հսկա պետության տրոհման վտանգ, զորահրամանատարներն ավելի ու ավելի էին ձգտում ինքնազլության ու անկախության և այլն:

Օմարը մահացավ 644 թ. նոյեմբերի 7-ին ոչ իր բնական մահով: Մադինայի մզկիթում նրան դաշույնի վեց հարված հասցրեց Արու Լալա Ֆայրուզ անունով մի պարսիկ, որը 642 թ. Նեհավենի ճակատամարտում գերի էր ընկել արաբների մոտ և ստրկացվել: Ենթադրվում է, որ նա դավանում էր քրիստոնեությունը: Երեք օր տեսած մահվան գալարումներից հետո խալիքը կնքեց իր մահկանացուն: Նույնքան հասարակ ու խիստ, ինչպես Մուհամմադն ու Արու Բաքրը, Օմարն իր փայլուն հաղթանակներից հետո ևս մնում էր այդպիսին: Իր մեջ ունենալով նվաճողի և կառավարչի գծերը, նրան բնորոշ էր ոչ միայն վիթխարի եռանդը, այլև նպատակոր հանգամանքները, մարդկանց և նրանց կրոնական խանդակառությունը օգտագործելու ունակությունը: Նրա հիմնական անվիճելի ծառայություններից մեկը կայանում էր նրանում, որ նա թույլ չտվեց, որ անջատողականները հղորանան և թելադրեն իրենց կամքը: Նա դրեց կայուն պետական կյանքի հիմքերը և կարողացավ տնտեսապես ու քաղաքականապես յուրացնել նվաճված երկրները:

Երկրորդ խալիքի կառավարման շրջանում պետությունը առավել արդյունավետ կառավարելու նպատակով իրականացվեց խլամի ազդեցության գոտում գտնվող տարածքների վարչական

բաժանում: Այսպէս, Իրաքը և Սիրիան վերածվում էին Բասրայի, Քուֆայի, Զազիրի և Սիրիայի նահանգների: Եզիպտոսը բաժանվում էր 30, իսկ Պաղեստինը 10 նահանգների: Իրանը բաժանվեց երեք վարչական տարածքների՝ Խորասան, Ֆարս և Ադրբեջան (Ատրպատական): Վարչական այդ բարեփոխումներին հետևեց կառավարման մարմինների ստեղծումը: Նահանգների կառավարումն իրականացնելու համար նշանակվեցին նահանգապետեր կամ խալիֆի փոխանորդներ, որոնց տեղակալը որպես կանոն տնօրինում էր ռազմական գործի ղեկավարումը: Ստեղծվում էին դատական մարմիններ, որոշվում էին բյուջետային եկամուտների աղբյուրները, կարգավորվում էր հարկային համակարգը և այլն:

Խալիֆ Օմարը մահմեդականների շրջանում սահմանեց երկաթյա կարգապահություն: Նրան հաջողվեց արաբներին ներշնչել անձնուրաց հավատ, որ պայքարի ընթացքում զոհված մարտիկի՝ շահիդի մահը յուրաքանչյուր մահմեդականի սրբազն պարուն է, նրա կյանքի ողջ իմաստը:

Մահվանից առաջ Օմարը հասցրեց Մուհամմադի հին զինակիցներից կազմել վեց հոգուց բաղկացած մի խորհուրդ («Շուրա»), նոր խալիֆ ընտրելու համար: Այդ խորհրդի կողմից մարզարեի փեսա Ալիի թեկնածությունը մերժվեց նրա անհաշտ խառնվածքի և կտրուկ վարքագծի պատճառով: Ալին ցանկանում էր խլամը վերականգնել այն տեսքով, ինչպես որ գոյություն ուներ Մուհամմադ մարզարեի ժամանակ, հաշվի չառնելով այն իրողությունը, որ այն ժամանակներից հետո տեղի էին ունեցել որոշակի փոփոխություններ: Ուստի ընտրությունը կանգ առավ Մուհամմադի մյուս փեսայի և զինակցի, Օսման (Ուսման) իրն Աֆֆանի վրա (մոտ. 644-656), որը 644 թվականին 70 տարեկան հասակում դարձավ երրորդ «բարեպաշտ» խալիֆը:

Օսմանը հարուստ մեքրացի վաճառական էր: Նա սերում էր ումայյա (օմեյյա) տոհմից: Առաջիններից մեկն էր, որ ընդունել էր իսլամը: Նա նաև մարզարեի ազգականն էր՝ Մուհամմադի «կրկնակի» փեսան: Սկզբում նա մարզարեի Ռուրայա դստեր ամուսինն էր, ըստ որոշ տվյալների նրա այդ ամուսնությունը տեղի էր ունեցել դեռևս մինչև Մուհամմադի մարզարեկան առաքելության սկիզբը: Ռուրայայի մահվանից հետո Օսմանն ամուսնացել էր Մուհամմադի մյուս դստեր՝ Ումմ-Քուլսումի հետ, այդ պատճառով մահմեդականները նրան անվանել են Զուլ-Նուրայն, այսինքն «երկու լուսատունների տիրապետող»:

Հալածանքների ժամանակ Օսմանը մի խումբ մահմեդականների հետ արտազարդել էր Եվրովայիա, այնուհետև վերադառնալով Մեքրա, մյուսների հետ կատարեց հիշրա դեպի Մեքրա և հաստատվեց այդ քաղաքում: Ի դեպ, Մեքրայում տեղի ունեցավ նաև Մուհամմադի ամուսնությունը Օսմանի աղջկա հետ:

Մուհամմադի կենդանության և առաջին երկու խալիֆների օրոք Օսմանը իրեն չէր դրսերել որպես ռազմական ու քաղաքական աշքի ընկնող գործիչ, գերադասելով օգտվել կյանքի բարիքներից, որոնք մատչելի էին իրեն որպես հարուստ մարդու: Օսմանը մտել էր խալիֆի ընտրության համար ստեղծված այն խորհրդի (շուրա) կազմի մեջ, որը ստեղծվել էր Օմարի հանձնարարությամբ, որպես մահվանից առաջ նրա վերջին ցանկություն և խալիֆ էր ընտրվել, հավանաբար, այն պատճառով, որ այդ շուրայի միմյանց հետ մրցակցող անդամները նրան համարել էին առավել քիչ վտանգավոր անձնավորություն:

Իր հայացքներով Օսմանը նշանակալից չափով տարբերվում էր իրեն նախորդող խալիֆից: Եթե Օմարը խալիֆի հիմնական պարտականությունն էր համարում ումմայի նկատմամբ հո-

վանավորությունը և այն տեսակետին էր, որ խալիֆը պետք է ապրի համեստ կյանքով, բավարարվելով միայն պետական ռոճիկով, ապա Օսմանը հարստության ու ճոխության մեջ վատ բան չէր տեսնում:

Խալիֆի պարտականությունը ստանձնելու պահին Օսմանը արդեն բավականին տարեց և եռանդից գուրկ մարդ էր և ընդունակ չէր նույն թափով շարունակելու Օմարի գործը: Սակայն վերջինիս կողմից սկսած գործի իներցիան այն աստիճանի ուժեղ էր, որ պետության գործերը բնականոն հունով առաջ էին ընթանում: Բնկապես, Օմարը Օսմանին ժառանգություն էր թողել «լավ յուղված» պետական մերենա, որի կառավարումը առանձնապես մեծ դժվարություն չէր ներկայացնում:

Օսմանի կառավարման շրջանում շարունակվում էին լայնամասշտար ռազմական գործողությունները նոր տարածքներ նվաճելու համար: Իր ավարտին հասավ Սասանյան պետության նվաճումը: Նվաճվեց Հյուսիսային Աֆրիկան մինչև Մարոկկո: Պարբերաբար տեղի էին ունենում արշավանքներ դեպի Փոքր Ասիա և Էգեյան ծովի կղզիները: 648-649 թթ. արաբները նվաճեցին Կիպրոսը, որի բնակչությունը պարտավորվեց վճարել զլիահարկ՝ շիզիե: 651 թ. խոշոր ծովային գործողության հետևանքով խալիֆայությունը մեծ հաղթանակ տարավ բյուզանդացիների նկատմամբ, որի հետևանքով նրա հսկողության տակ անցան Մալթա, Կրետե և Ռոդոս կղզիները: Սկսվել էր Հայաստանի աստիճանական նվաճումը, ռազմարշավներ էին կազմակերպվում դեպի Հյուսիսային Աֆրիկա: 650-652 թթ. հաղթական արաբական գործերը նվաճեցին Հերաթը և Քաբուլը: Արևելքում խալամի ազդեցության գոտին ընդլայնվեց մինչև Ամու-Դարյա գետը, մինչև Չինաստանի սահմանները և Հինդոս գետի հովիտը, իսկ հյուսիսում

կայունացավ արարների դրությունը Հարավային Կովկասում: Այդ նվաճումների տարիներին Եգիպտոսի և Սիրիայի նավահանգիստներում կառուցվում և ջրարկվում էր հզոր մուտուլմանական մի նավատորմ, որը խալիֆայությանը հնարավորություն էր տալիս ծավալելու իր նվաճողական քաղաքականության շրջանակ-ները:

Սակայն այդ բոլորով հանդերձ, խալիֆ Օսմանի առջև աստիճանաբար սկսեցին հառնել մի շարք դժվարություններ: Խալիֆայության հեռավոր արշավանքները դառնում էին ավելի ու ավելի դժվար, իսկ ավարը ոչ այնքան առատ, որքան նախկինում: Նվաճված ժողովուրդները խսլամն ընդունում էին ոչ թե կրոնական համոզմունքով, այլ որպեսզի վճարեն ավելի քիչ հարկեր: Արարների մոտ հայտնվել էր հակում դեպի ճոխ ու շքեղ կյանքը, որը նրանք տեսել էին նվաճված երկրներում: Այդ բոլորը ստեղծում էր ծայրահեղ դժվարին ֆինանսական վիճակ: Պայթյունավտանգ խնդիր էր նվաճված երկրներում հողերի բաժանման հարցը, որի վրա, սակայն, խալիֆը բավարար ուշադրություն չէր դարձնում: Ճետևանքը եղավ այն, որ պետության մեջ ծայր առան ներքին երկպառակություններ:

Եթե Օսմանի կառավարման առաջին վեց տարիներն անցան ներքին կայունության պայմաններում, ապա դրանից հետո ումմայի մեջ սկսեցին հասունանալ ներքին կոնֆլիկտները: Մի շարք արար պատմիչներ դա բացատրում են նրանով, որ Օսմանը չկատարեց այն խոստումները, որոնք ինքը տվել էր խալիֆ ընտրվելու ժամանակ: Սակայն ավելի հավանական է, որ ներքին կոնֆլիկտների աղբյուրը տնտեսական պատճառներն էին. պետությունը, որը կառուցված էր ռազմական սկզբունքների վրա, այդ նույն

սկզբունքների հիման վրա չէր կարող գոյություն ունենալ խաղաղ ժամանակ:

Պատահական չէ, որ Օսմանի կառավարման վերջին տարիներին առաջին անգամ ծնունդ առավ ընդդիմություն, նահանգներում սկսեցին բռնկել քաղաքական բնույթի հուզումներ, որոնք գուգակցված էին կրոնական երկպառակությունների հետ: Հենց պետության կենտրոնում՝ Մասդինայում, ձևավորվել էր ներքին ընդդիմություն: Նոյնիսկ Սուհամմադի դեռևս երիտասարդ այրի Այիշան սկսել էր գրադարձ քաղաքական խաղերով, մտադիր լինելով պետության մեջ խաղալ եական դեր:

Սահմեդական վերնախավի ներկայացուցիչները, որոնք գրադադարում էին կարևոր պաշտոններ և ստանում բարձր աշխատավարձ, տենդագին կերպով նահանգներում տեղական հողատերերից գնում էին խոշոր հողային կալվածքներ և օրեցօր հարստանում: Մինչդեռ շարքային զինվորները խաղաղ պայմաններում քարշ էին տալիս կիսաքաղց գոյություն: Դա ևս բնականաբար ծնում էր պառակտում երբեմնի միասնական պետության մեջ: Սոցիալական առումով միասնական ումման շերտավորվում էր աղքատների և հարուստների:

Պետության համար վտանգի աղբյուր էր հանդիսանում նաև այն, որ զնալով աճում էր այնպիսի նոր կենտրոնների նշանակությունը, ինչպիսիք էին Քուֆան, Բասրան և Ֆուսթարը: Օսմանը փորձում էր ուժեղացնել հսկողությունը նրանց նկատմամբ, այնտեղ որպես իր տեղապահներ նշանակելով իր ազգականներին, որոնք որպես շնորհ ստանում էին ոչ միայն հողեր, այլև նշանակալից շափերի հասնող ֆինանսական միջոցներ: Առհասարակ այն հանգամանքը, որ խալիֆը իր ընտանեկան շահերը բարձր էր դասում համախամական պետական շահերից հանդիսանում էր

նրա մեծագույն սխալներից մեկը: Օսմանն իրեն շրջապատել էր Օմայանների տոհմի անդամներով և պետության բոլոր հանգուցային պաշտոնները (հրամանատարական, նահանգների կառավարիչների և այլն) տալիս էր իր ազգականներին կամ նրանց կողմանակիցներին, որոնցից շատերը բացահայտ ցինիզմով դա օգտագործում էին իրենց անձնական շահերի համար, հատկապես հողեր զավթելու և հարստություն կուտակելու համար: Օրինակ, Մուավիա իբն Աբի Սուֆյանը ստացավ ողջ Սիրիայի կառավարչի պաշտոնը: Այդ բոլորի հետևանքով խալիֆին մեղադրեցին նեպոտիզմի (լատ. ծառայողական հովանավորչություն) մեջ:

Բացի այդ, Օսմանը առաջին խալիֆն էր, որին սկսեցին մեղադրել նրանում, որ իշխանությունը օգտագործում է կյանքից հաճույքներ վայելելու համար և իրեն հեռացրել է հասարակ ժողովրդից: Հիրավի, Օսմանը խալիֆներից առաջինն էր, որ իր համար կառուցեց մի մեծ քարաշեն տուն: Նա անշարժ գույք էր ձեռք բերում նաև Արաբիայի սահմաններից դուրս: Նրա օրինակին հետևեցին նաև խլամական մեծատոհմիկ ազնվականության ներկայացուցիչները. Մադինայում սկսեցին հայտնվել շրեղ տներ և այլն: Արաբների մոտ հայտնվեց ճաշակ պերճանքի ու շքեղության նկատմամբ, որի հետ նրանք ծանոթացան նվաճված երկրներում: Այդ բոլորը ստեղծեց ծայրահեղ դժվարին ֆինանսական վիճակ: Սոցիալական անհավասարության աճը և Օսմանի ազնվականական կուրսը առաջ բերեցին արաբական զանգվածների ուժգին դժգոհությունը: Նրա դեմ տրամադրված էին նաև ազնվականության մի շարք ներկայացուցիչներ, իին մուհաջիրներ, որոնք դժգոհ էին նրանից, քանի որ փաստորեն դուրս էին մղվել կառավարման կառույցներից: Լարվածությունը պետության մեջ զնալով աճում էր: Խալիֆի և նրա ազգական-քարեկամների հարստանալը

հավանության չեր արժանանում հատկապես անապատական-ձգնավորական հակումներ ունեցող մուսուլմանների կողմից, որոնք խալիֆին մեղադրում էին Մուհամմադի և առաջին խալիֆների ապրելակերպից շեղվելու մեջ: Միաժամանակ նահանգներում ծայր առան անկարգություններ ու խոռվություններ: Ընդ որում, քաղաքական հուգումները զուգակցվում էին կրոնական պառակտումների հետ:

656 թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբին Քուֆայից, Բասրայից և Եգիպտոսից փոքր ուխտագնացություն (ումրա) անելու պատրվակի տակ Մադինա ժամանեցին երեք պատվիրակություններ, որոնք ճամբար դրեցին քաղաքի դարպասների մոտ: «Ուխտափրները» մեծ հույսեր էին կապում Մուհամմադի փեսա Ալիի աջակցության հետ Օսմանին իշխանությունից հեռացնելու հարցում, սակայն Ալին դրսորում էր անվճռականություն:

Քուֆայի և Ֆուսթաթի (քաղաք Եգիպտոսում – Վ. Բ.) պատվիրակները փորձեցին ութսունամյա Օսմանին համոզել հրաժարվելու իշխանությունից: Սակայն վերջինս նրանց դեմ հանդես եկավ զայրազին մի ելույթով, որը լի էր սպառնալիքներով: Ակսվեց թեծ վեճ, որի ընթացքում պատվիրակներից մեկը սուր բարձրացրեց խալիֆի վրա: Վերջինիս կանանցից մեկը՝ Նայլա անունով, փորձելով պաշտպանել իր ամուսնուն, ձեռքբրով բռնեց սուրը, որի հետևանքով զրկվեց մատներից:

Ի վերջո Օսմանը հարկադրված եղավ բանակցությունների մեջ մտնել դժգոհ տարրերի հետ, խոստանալով բավարարել նրանց պահանջները և պաշտոնազուրկ անել իրենց շարաշահումներով աչքի ընկած նահանգների տեղապահներին: Սակայն նա նամակ է գրում Եգիպտոսում իր տեղապահ Եբս արքի Սարիխին, որտեղ վերջինիս կարգադրվում էր Եգիպտոս վերադառնա-

լուն պես ձերբակալել խոռվություն հրահրողներին և կտրել նրանց ձեռքերն ու ոտքերը: Այդ նամակը Եգիպտոս մեկնելու ճանապարհին ինչ-ինչ ձևով ընկնում է Եգիպտական պատվիրակության ձեռքը և խալիֆի նենգությունից զայրացած նրանք վերադառնում են Մադինա և մյուս դժգոհողների հետ պաշարում Օսմանի տունը, նրանից պահանջելով, որ հեռանա իշխանությունից: Խոռվարարները որոշեցին պաշարման միջոցով խալիֆին և նրա ընտանիքի անդամներին ծարավի ու սովի մատնել: Երբ Օսմանը իր տան տանիքից դիմեց պաշարողներին, խնդրելով ջուր, նրանք մերժեցին: Պաշարումը տևեց մոտ 40 օր: Այդ ընթացքում Մադինայի վերնախավի մեծամասնությունը որդեգրել էր թշնամական չեղորություն, իսկ քաղաքի բնակչությունը լրիվ անտարբերությամբ էր վերաբերվում խալիֆի ճակատազրի նկատմամբ:

Խոռվարարներից ինչ-որ մեկը փորձեց ներխուժել Օսմանի տունը, սակայն նրա մարդկանց կողմից սրախողիսող արվեց: Պարզվեց, որ սպանվածը Մուհամմադ մարգարեի մերձավորներից է: Երբ խալիֆը հրաժարվեց հանձնել մարդասպանին, այլևս պաշարողների համբերության բաժակը լցվեց: Հենց այդ նոյն օրեւին Մադինայում լուր տարածվեց, որ Օսմանին օգնության են զալիս Բասրայի և Դամասկոսի տեղապահների կողմից ուղարկված շոկատներ: Այլևս դանդաղել չէր կարելի: Անցնելով հարեան տների տափակ տանիքների վրայով, մի քանի խիզախ մարդիկ թափանցեցին խալիֆի տունը: Անմիջապես զազազած ամբոխը խալիֆ Աբու Բաքրի որդի Աբդալլահի զլխավորությամբ ներխուժեց տուն և սպանեց երրորդ խալիֆին: Դա տեղի ունեցավ 656 թ. հունիսի 17-ին: Մարդասպանի ստույգ անունը հայտնի չէ: Ըստ ավանդության, սպանված խալիֆի արյամբ ողողվեց նրա կողքին դրված Ղուրանը: Այդպիսի «օսմանական» Ղուրանները որպես

սրբազն մասունք, հետազայում պահվում էին բազմաթիվ մզկիթներում:

Օսմանի մահվանից հետո միասնական ումման, որն իր մեջ ներառում էր նաև Իրանի (մինչև Ամու Դարյա կամ Օրսուս գետը), Կիպրոս կղզու և Թունիսի նորանված հողերը, զործնականում հայտնվեցին քաղաքացիական պատերազմի շեմին:

Օսմանի խալիֆայության շրջանը դա Օմայանների տոհմի՝ որից որ սերել էր նա, լիակատար հաղթանակի շրջան էր: Այլ կերպ ասած, դա Մերրայի ազնվականական կուսակցության հաղթանակի նշանավորումն էր, մի կուսակցության, որն խւամն ընդունել էր լոկ որպես քաղաքական անհրաժեշտություն:

Խսլամի պատմության մեջ Օսմանը թողել է անջնջելի հետք նրանով, որ նրա կարգադրությամբ մարդկանց մի հատուկ խումբ հավաքելով հրապարակում եղած Ղուրանի բոլոր գրառումները, կազմեց մի համահավաք կամ «Ճիշտ» գրավոր տեքստ: Նրա պատճենները ուղարկվեցին պետության խոշոր կենտրոնները, որպես խսկական Ղուրան, իսկ նախկինում եղած բոլոր օրինակները հրամայվեց ոչնչանցնել: Ղուրանի այդ պաշտոնական գրավոր տեքստը խալիֆը հայտարարեց միակ հավաստի և բոլոր մուտքմանների համար պարտադիր տեքստ:

Օսմանի մահվանից հետո մեկ շաբաթ շարունակ Մադինան եռում էր: Այդ օրերին խսլամական աշխարհը մնացել էր առանց խսլիֆի: Ոչ որ փողոց դուրս չէր գալիս առանց զենքի և նույնիսկ սպանված խալիֆին թաղեցին մեծ դժվարություններով: Պնդելով, որ Օսմանը ուղիղ գնում է դժոխք, նրա հակառակորդները թույլ չեն տալիս, որ հանգույցայի վրա աղոթք կարդացվի, քացիներով խփում էին նրա դիակին և ի վերջո Օսմանը թաղվեց ոչ թե ըն-

դունված իսլամական կարգի համաձայն, այլ պարզապես նյան դրեցին մի փոսի մեջ և վրան հող լցրեցին:

Օսմանի մահվանից հետո մեկ շաբաթ անց եզլիպտացիների առաջարկով, որոնց միացան նաև քուֆացիներն ու բասրացիները, խալիֆ ընտրվեց Սուլհամմադի հորեղբորորդի, նրա որդեգիր զավակ և փեսա Ալի իր Աբի (Աբու) Թալիբը (656-661 թթ.), դառնալով չորրորդ «քարեպաշտ» խալիֆը: Նրա անվան հետ է կապված իսլամի մեջ շիական շարժման ծնունդը: Ալին հանդիսանում էր Սուլհամմադի վեց ամենանվիրյալ զինակիցներից մեկը: Ժամանակակիցների կարծիքով նա անմնացորդ կերպով նվիրված էր իսլամի գործին և լինելով հավատավոր, մոլեռանդ բարեպաշտ և խանդավառ կրօնասեր մարդ, միաժամանակ եղել է անմիջական ու ազնիվ: Օժտված է եղել հուսորական ունակություններով: Անկասկած եղել է նաև քաջ ու խիզախ մարտիկ, որի համար ստացել է Ասաղուլլա («Տիրոջ առյուծ») պատվանունը: Ալին մասնակցել է Սուլհամմադի համարյա բոլոր ռազմական արշավանքներին: Նրա ռազմական սխրանքները հետազայում պարուրվել են առասպելական բնույթի եղելություններով: Լինելով զինվոր և միաժամանակ բանաստեղծ, նրան վերագրված են այնպիսի հատկանիշներ, որոնք հարիր են սրբերին (իզուր չեն, որ առասպելները նրան վերագրում են բազմաթիվ հրաշագործություններ՝ «քարամաթ»): Ալին եղել է մարզարեի տասը սահաբներից մեկը, որին նա դեռևս իր կենդանության օրոք խոստացել էր դրախտ:

Խալիֆ ընտրվելու ժամանակ Ալին մոտ 57 տարեկան էր: Արար պատմիչները նրան ներկայացնում են ճաղատ զլխով, ոչ բարձր հասակ ունեցող, հաստամարմին, չափազանց մուգ մաշկի տեր, երկար սպիտակ մորուրով, խոշոր աչքերով և ծանր հայացք ունեցող մի անձնավորության: Ալին իր ութ կանանցից ուներ ինը

տղաներ, ևս երեք տղաների որդեգրել էր: Նրա աղջկների թիվը, ըստ որոշ տվյալների, հասնում էր 15-ի:

Իր դրական հատկանիշների պատճառով Ալին շատերին թվում էր, որ նա կարող է դառնալ իդեալական կառավարիչ: Սակայն նա ուներ նաև խառնվածքի թույլ կողմեր. բոլորովին գուրկ էր պետական գործչի հատկանիշներից: Լինելով խորապես կրոնական ոգու տեր մարդ, նա մշտապես ունեցել է աստծո առջև պատասխանատվության սուր զգացողություն: Դրան գումարած մահմեդականների արյունը թափելու ներքին երկյուղածությունը և նմանատիպ այլ գործոններ նրան դարձնում էին ծայրահեղ նրբանկատ ու անվճռական, անհարկի համաձայնությունների զնալու հակում ունեցող մարդ:

Դեռևս Օսմանի կենդանության օրոր մարզարեի ամենահեղինակավոր մերձավորներից մեկը՝ Արու Զարրը, որն առաջիններից մեկն էր, որ ընդունել էր իսլամը, սկսեց քարոզել բարբերի անկման դեմ, իսկ ապա նաև Օսմանի դեմ և հայտարարեց, որ միայն Ալին ու նրա որդիներն ունեն մարզարեի ժառանգորդ լինելու իրավունքը:

Ալին ընտրվեց խալիֆ, սակայն ոչ միաձայն: Մադինայի շատ ազդեցիկ մարդիկ, այդ թվում նաև մարզարեի հին զինակիցներից շատերը հրաժարվեցին հավատարմության երդում տալ նրան: Նորընտիր խալիֆի դեմ հանդես եկան նաև ազդեցիկ Թալիան և ազ-Զուրայրը, որը Խաղիջայի ազգականն էր: Ալին նրանց կանչեց իր մոտ և հիշեցրեց, որ նրանք տվել են հավատարմության երդում: Վերջիններս փորձեցին խալիֆից կորզել նահանգների տեղապահների պաշտոններ, սակայն Ալին մերժեց, մտավախություն ունենալով, որ գտնվելով իր աշքից հեռու, նրանք ձեռք կրեն չափից ավելի մեծ ինքնուրույնություն և կդառնան ավելի

վտանգավոր: Ուստի այդ հանդիպումը ավարտվեց կատարելապես անարդյունք: Շուտով Թալիսան և ազ-Զուբայրը Ալիից թույլտվություն խնդրեցին կատարելու փոքր հաջ, սակայն հիանալի հասկանալով հանդերձ, որ իր հակառակորդները մտադիր են մեկնել Մեքքա ընդդիմության շարքերը համալրելու համար, այնուամենայնիվ Ալին նրանց «բաց թողեց»:

Զուբայրին և Թալիսային միացավ նաև Մուհամմադի այրին՝ Այխան, որը Զուբայրի քենին էր: Ալիի նկատմամբ Այխայի ընդդիմադիր դիրքորոշում ընդունելու դրդապատճառը զուտ կանացի վրիժառության զգացումն էր. ժամանակին Ալին խորհուրդ էր տվել մարզարեին բաժանվել նրանից, նրան կասկածելով ամուսնական անհավատարմության մեջ:

Օսմանի սպանությունից հետո նրա տնից բռնազրավկած փողերը Ալին հավասարապես բաժանել էր ումմայի անդամների միջև: Դա առաջ էր բերել մեծ թվով աշբի ընկնող մուհաջիրների դժգոհությունը, որոնք իրենց վիրավորված էին զգում այն բանի համար, որ Ալին հանիրավի իրենց հավասարեցնում է նախկին ստրուկների հետ: Այդ մարդիկ ևս համալրեցին ընդդիմադիրների շարքերը:

Խոռվության ու անհնազանդության մեկ այլ աղբյուր հանդիսացավ Աբդալլահ իբն Օմարը, որը հրաժարվեց խալիֆին հավատարմության երդում տալուց, համարելով, որ Ալիի ընտրությունը կատարվել է ոչ ճիշտ ձևով: Նոր խալիֆի հետ կրակոտ վեճի բռնվելուց հետո իին խալիֆի՝ Օմարի որդին որոշեց Մահինայից հեռանալ և հաստատվել Մեքքայում, հալածանքներից խուսափելու համար: Շուտով Մեքքան վերածվեց ընդդիմության մի տևակ մայրաքաղաքի, որտեղ սկսեցին հավաքվել Ալիից դժգոհ բոլոր

տարրերը, ինչպէս նաև նրանք, որոնք անպատճ էին մնացել Օսմանի սպանության պատճառով:

Նոր խալիֆի վտանգավոր թշնամիների թվում էր նաև Սիրիայի տեղապահ Մուավիան, որը սպանված խալիֆի ազգականն էր: Վերջինս Դամասկոսի մզկիթում ցուցադրեց Օսմանի արյունաթարախ զգեստները: Նա հայտարարեց, որ Ալիին չի ճանաչի խալիֆ, քանի դեռ նա դատարանի առջև չի կանգնեցնի Օսմանի սպանողներին: Մուավիան Ալիին մեղադրում էր մարդասպաններին հովանավորելու մեջ:

Մուավիայի կողմնակիցները նրանից պահանջում էին վրեժ լուծել Օսմանի ուխտադրուժ սպանության համար: Համամիտ լինելով այդ տեսակետի հետ, Սիրիայի տեղապահը պատրաստվում էր արշավանք կազմակերպել դեպի Մադինա:

Ի պատասխան Ալիի կոչին իրեն տալ հավատարմության երդում, Մուավիան Ալիին ուղարկեց մի նամակ, նամակատար սուրհանդակին հրամայելով, որ Մադինա հասնելուց հետո նամակի թղթափաթերը պահել այնպէս, որ մարդիկ կարողանան այն հեշտությամբ կարդալ: Նամակը սկսվում էր հետևյալ բառերով. «Մուավիա իրն Աբու Սուֆյանից Ալի իրն Աբու Թալիբին»: Արդեն դիմումի այդ ձևը իր մեջ պարունակում էր վիրավորանք խալիֆի հասցեին, քանի որ սկզբում հիշատակվում էր Մուավիայի անունը, դրանով իսկ շեշտելով, որ նա իրեն բարձր է դասում Ալիից: Բացի այդ, նամակի վերնազրի այդ ձևը նպատակ ուներ շեշտել, որ Մուավիան Ալիին չի ընդունում որպես խալիֆ: Եթե նամակը հասավ Ալիին և նա կոտրեց կնիքը, ապա նկատեց, որ նրանում որևէ տերստ գոյություն չունի և առկա է միայն գրությունների սկզբի ավանդական դարձվածքը. «Ճանուն գթասիրտ և գթառատ Ալլահի»: Սա արդեն խալիֆին հասցված երկրորդ վիրավո-

բանքն էր: Նա ցանկացավ անհապաղ զորքեր ուղարկել Սիրիա, սակայն նրա շրջապատի ազդեցիկ մարդիկ հավանություն չտվեցին նրա այդ որոշմանը: Թեև Ալին փորձում էր համոզել նրանց, որ «խռովությունը կրակի նման է և այն պետք է ոչնչացնել հենց սկզբում», սակայն նրա ընդդիմախոսները մնացին անդրդպելի:

Խալիֆի հակառակորդների մեջ ևս կատարյալ միասնություն և համախոհություն գոյություն չուներ. ումանք գտնում էին, որ անհրաժեշտ է իրենց ուժերով մեկնել Սիրիա Մուավիայի հետ միանալու համար, իսկ ումանք էլ պնդում էին, որ հեռավոր արշավանքը կարող է լինել վտանգավոր ու անարդյունավետ, ուստի առաջարկում էին անմիջապես շարժվել Մաղիսայի վրա: Այդ վերջիններին հարեց նաև «հավատացյալների մայր» հորջորված Մուհամմադի սիրեցյալ այրին, Այիշան, որը ինչպես նշվել է հնուց ի վեր համակրանք չէր տածում իր ամուսնու որդիկիր զավակ և փեսա Ալիի նկատմամբ: Այդ անհանգիստ և եռանդով լցուն կինը, որն այրիացել էր 18 տարեկան հասակում, իրեն անքննիառ նետում էր քաղաքական իրադարձությունների հորձանուտը: Եվ երբ որոշվեց, որ կազմակերպվում է արշավանք դեպի Մարինա, Այիշան որոշեց տղամարդկանց հետ միասին մասնակցել այդ արշավանքին: Այդ ժամանակների համար, հատկապես նկատի ունենալով մուսուլմանական հասարակության մեջ կանանց վիճակը, Այիշայի վարմունքը վերին աստիճանի անսովոր և համարձակ քայլ էր: Ըստ իսլամի մեջ ընդունված կարգի, որևէ տեղ մեկնելու դեպքում կինը պետք է անպայման ունենա իրեն ուղեկցող: Սկզբում Այիշան առաջարկեց մարզարեի այրիններից Ռամ Սալամին ուղեկցելու իրեն: Մտանալով մերժում, նա դիմեց Մուհամմադի մյուս այրիացած կնոջը՝ Խաֆսային: Նրա կողմից նս մերժում

ստանալուց հետո Այիշան որոշեց արշավանքի գնալ մենակ, առանց ուղեկցողի, տղամարդկանց շրջապատում:

Այդ իրադարձությունների ընթացքում, անշուշտ, նորընտիր խալիֆը և ձեռքերը ծալած չէր նստել: Ընտրվելուց հետո նրան հաջողվեց մեծ ջանքերի գնով Մադինայում հաստատել կարգ ու կանոն: Նա կարողացավ անհնազանդ բռչվորներից շատերին հեռացնել քաղաքից: Ձեռնամուխ եղավ նաև Օսմանի սպանության հետաքննությանը: Սակայն ուսալ սպանողին գտնելը դժվար թէ հնարավոր լիներ: Բացի այդ, դա խիստ վտանգավոր գործ էր նաև հետաքննության հրամանը տվողի համար:

Այնուհետև Ալին սկսեց գրադվել նահանգների, հատկապես Քուֆայի հետ հարաբերությունների կարգավորման հարցով: Սակայն երբ նա Քուֆա ուղարկեց իր մարդուն տեղապահի պաշտոնով, վերջինս կես ճանապարհից հետ վերադարձավ Մադինա, որովհետև տեղեկություն էր ձեռք բերել, որ Քուֆայի բնակչությունը անհնազանդություն հայտնելով նոր խալիֆի նկատմամբ, գերադասում է մնալ հին տեղապահի իշխանության ներքո:

Շուտով լուրը հասավ Ալիին, որ Մերքան պատրաստվում է արշավանք կազմակերպել իր դեմ: Հենց այդ նույն օրերին Բասրայում բռնկեց խալիֆի դեմ ուղղված խոռվության նոր օջախ: Անհրաժեշտ էր գործել արագ և վճռական: Սակայն Ալիի դանդաղկոտությունը խոռվության պարագլուխներին՝ Թալխային և ազ-Զուրայյին հնարավորություն տվեց գրավել Բասրան: Վերջիններս միացել էին Այիշայի հետ և Ալիի դեմ կազմել ընդհանուր ճակատ: Խալիֆին անհրաժեշտ էր ձգմել խոռվության այդ վտանգավոր օջախը, այլապես այն կտարածվեր նաև այլ վայրերում:

Իր զորքերը շարժելով Բասրայի կողմը, Ալին փորձեց բանակցությունների մեջ մտնել խոռվարարների հետ, սակայն

դրանք ավարտվեցին ձախողմամբ: 636 թ. դեկտեմբերի 9-ին Բարձրայի մոտակայրում տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, որը պատմության մեջ մտել է «ուղտի ճակատամարտ» անունով, քանի որ ճակատամարտի դաշտում սպիտակ ուղտի վրա երկարյա պատգարակի մեջ նստած էր «հավատացյալների մայր» Այիշան: Ի դեպ, այդ իին հեթանոսական սովորություն, ինչպես նշում է բեղուացի իսլամազետ Լամմենսը, պահպանվել էր մինչև XX դարի սկզբները: «Մրբազան» ուղտի վրա նստում է ցեղի ամենաանվանի երիտասարդ աղջիկը, թույլ տալ, որ նա ընկնի թշնամիները ձեռքը՝ անպատվության ամենաբարձր աստիճանն է: Բարացիները պաշտպանում էին Այիշային, իսկ Ալիի կողմնակիցները աշխատում էին նրան զերի վերցնել: Տվյալ դեպքում մարզարեի կինը հանդես էր գալիս որպես խոռվարարների պայքարի դրոշ, նրանց պատվի ու արժանապատվության խորհրդանիշ: Նա իր կողմնակիցների կողմից ընկալվում էր նաև որպես թալիսման:

Ալիին հաջողվեց ջախջախել բարացիների բազմամարդ զորքերին: Ճակատամարտում Թալիսան մահացու վիրավկորվեց, իսկ ազ-Զուրայրը փախուստի ժամանակ սպանվեց: Այիշան ընկավ հակառակորդի ձեռքը, սակայն Ալին նրա հետ չվարվեց ինչպես թշնամու հետ, նկատի ունենալով, որ նա եղել է մարզարեի կինը: Նա բավարարվեց միայն նրանով, որ հանդիմանեց իր «խորթ մորը», որ նա խառնվել է տղամարդկանց գործերին և հրամայեց նրան տանել Բարա և ազատ արձակել: Դրանից հետո Այիշան մենության մեջ ապրեց մինչև 678 թվականը:

Հրամայելով հետապնդել փախուստի դիմած հակառակորդին, Ալին իր զորքերին կարգադրեց չսպանել նրանց, ովքեր դիմադրություն ցույց չեն տալիս, իսկ Բարան չենթարկել կողոպուտի և ավերածության:

«Ուղտի ճակատամարտում» հաղթանակ տանելուց հետո Ալին զորքերը շարժեց դեպի Քուֆա պատմելու համար այդ քաղաքի տեղապահին, որը թեև իրենից հրաման էր ստացել զորքերը շարժելու Բասրա, իրեն օգնություն ցուցաբերելու համար, բայց չեր կատարել այդ հրամանը: Ինչ-ինչ պատճառներով խալիֆը նրան պատժի չի ենթարկում: Զորքերի հետ մուտք գործելով Քուֆա, Ալին տեղապահի նկատմամբ իր դժգոհությունն արտահայտելու նպատակով չապաստանեց նրա պալատում, այլ որպես բնակության վայր ընտրեց իր բրոջ որդու՝ Զադ իրն Խուրայրի տունը: Անմիջապես Քուֆայի ազնվագարմ ընտանիքների ներկայացուցիչները եկան «խալիֆի ոտքը», իրենց հարզանքի տուրքը մատուցելու և հնազանդություն հայտնելու համար: Ալին նրանց բոլորին ընդունեց և բոլորի հետ գոտավ ընդհանուր լեզու:

Իր դիրքերն ամրապնդելու նպատակով Ալին սկսեց իրար հետնից փոխել նահանգների տեղապահներին, այդ հանգուցային պաշտոններում նշանակելով իրեն մոտիկ ու հավատարիմ մարդկանց:

Սակայն այնուհանդերձ խալիֆին չհաջողվեց կատարելապես իր իշխանությունը հաստատել խալիֆայության ողջ տարածքի նկատմամբ: Շարունակվում էր դժգոհությունը նաև բանակում. բանի որ խալիֆը թույլ չեր տալիս նվաճված հողերը բաժանել զինվորների միջն:

«Ուղտի ճակատամարտից» հետո Ալին իր մայրաքաղաք դարձեց Քուֆան, որտեղից նա իրականացնում էր իր հսկողությունը ողջ «փալամական հողերի» նկատմամբ, ի բացառյալ Սիրիայի, որի կառավարիչ Մուավիա իրն Աբու Սուֆյանը, որը 636 թ. խալիֆ Օմարի կողմից նշանակվել էր այդ պաշտոնին, հրաժարվեց ճանաչել նոր խալիֆին:

Սուտավիան հավաքեց մի պատկառազդու բանակ և այն շարժեց Իրարում Ալիի դիրքերի վրա: Այսպիսով, քաղաքացիական պատերազմը շարունակվում էր: Դավանակիցների երկու բանակները շուտով՝ 657 թ. հուլիսին Եփրատի աջ ափին, Ռաքքայից հարավ ընկած շրջանում, Սիֆֆին կոչված վայրի մոտ բռնվեցին ճակատամարտի: Ճակատամարտում որպես Մուտավիայի դաշնակից հանդես էր զալիս Ալիի վագեմի թշնամի, Եզիայտոսը նվաճած զորահրամանատար Ամր իբն ալ-Ասր: Ճակատամարտի երկրորդ օրը Ալիի զորքերը կործանիչ հարված հասցրին հակառակորդին: Մուտավիային կատարյալ ջախչախումից վրեկց Իրն ալ-Ասի խորամանկությունը: Նա իրամայեց Մուտավիայի զինվորների նիզակների վրա ամրացնել Ղուրանի թերթիկներ, որպեսզի ցույց տան, որ պահանջում են աստծո և նրա սուրբ զրբի դատաստան: Ալիի կողմնակիցները, որոնցից մի քանիսը, ինչպես օրինակ, ալ-Աշաս իբն Քայսը և Աբու Մուսա ալ-Աշարին, հանդիսանում էին խալիֆի ծպտյալ թշնամիները, համոզեցին նրան համաձայնություն տալ հարցը լուծելու հաշտարար դատարանով: Առհասարակ Ալիի կողմնակիցների թվում կային մեծ թվով մարդիկ, որոնք չեին ցանկանում, որ ումմայի կամ ջամաայի ներսում արյուն բափվի: Ալին անմիջապես դադարեցրեց ճակատամարտը և համաձայնվեց բանակցություններ սկսել, մի հանգամանք, որը կործանեց նրան: Նրա այդ քայլը մեծագույն դժողոհությամբ ընդունվեց իր կողմնակիցների մի զգալի մասի կողմից, որոնք առաջ բաշեցին հետևյալ կարգախոսը. «Գոյություն չունի այլ դատաստան, բացի «աստվածային դատաստանից»: Նրանք գտնում էին, որ «աստծո դատաստանը» արդեն տեղի է ունեցել, բանի որ Ալին հաղթանակ է տարել Մուտավիայի նկատմամբ: Նրանց կարծիքով

դրանից հետո թշնամու հետ քանակցություններ սկսելը նշանակում է: «զնալ աստծո դատաստանի դեմ»:

Ալիից, որպես առաջնորդից, հիասթափված 12 հազար զինվորներ, զիտակցելով, որ նա թույլ է տվել ճակատագրական սխալ, լրեցին նրա ռազմական ճամբարը և Իրաքում, Զագրոս լեռնան ստորոտների մոտ, Նահրավան քաղաքից ոչ հեռու, ստեղծեցին իրենց ճամբարը: Նրանք իրենց համար խայիֆ ընտրեցին շարքային զինվոր Արդալլահ իբն Վահրին:

Այսպիսով, Ալիի կողմանակիցների ճամբարում տեղի ունեցավ պառակտում: Խալամի մեջ ստեղծվեց նոր ինքնուրույն կրոնա-քաղաքական խմբավորում, որը կոչվեց խարիզիներ (արաբերեն «խարիջ» դուրս գալ բարից): Խարիզիները Ալիի նկատմամբ լցվեցին այնպիսի անհաջող ու կրրու ատելությամբ, ինչպիսի կրրով որ նրանք նախկինում նվիրված էին նրան: Ինչպես և շխաները, խարիզիները սկզբնական շրջանում հանդիսանում էին զուտ քաղաքական խմբավորում կամ կուսակցություն, և միայն հետագայում վերածվեցին առանձին կրոնական ուղղության: Խարիզիները պայքար ծավալեցին ինչպես Սուավիայի, այնպես էլ Ալիի դեմ: Նրանց կարգախոսը դարձավ հետեւյալը. «դատելու իրավունք ունի միայն աստված»:

Խարիզիները գտնում էին, որ բոլոր մուսուլմանները հավասար են, որ խալամական համայնքի ներսում պետք է կատարյալ հավասարություն լինի:

Այսպիսով, խորամանկությամբ կորզելով խաղաղություն կամ զինադադար, Սուավիան վերադարձավ Սիրիա և 660 թ. Երուսաղեմում իրեն հայտարարեց խայիֆ: Ալիին չհաջողվեց դա խափսնել, քանի որ նա արդեն իր տրամադրության տակ չուներ քավարար թվով զորքեր հակառակորդի հետ բաց առճակատման

մեջ մտնելու համար: Խսկ Մուավիայի իշխանության զլսավոր հենարանն էին հանդիսանում Սիրիայի արաբական ցեղերը:

Այսպիսով մեկ թշնամու փոխարեն Ալիի առջև հայտնվեցին երկու անգիծում և ուժեղ թշնամիներ: Իրաքում և Արաբիայում բռնկեցին հզոր խարիչիական ապստամբություններ: 658 թ. հուլիսի 18-ին Տիգրիսի ձախ ափին, Նահրավանի մոտ Ալին կործանիչ հարված հասցրեց խարիչիներին: Այդ ճակատամարտի մասնակից խարիչիներից կենդանի մնաց միայն 8 մարդ: Այնուհետև Ալին փորձեց ողջ խալիֆայության տարածքում կազմակերպել խարիչիների հետապնդումը, որը սակայն հաջողություն չունեցավ, քանի որ նրանք արդեն ունեին մեծ թվով կողմնակիցներ ու համակիրներ:

Մինչդեռ Ալիի հեղինակությունն ու կշիռը գնալով սրընթաց անկում էր ապրում: Գնալով ավելանում էին նաև նրա կորուստները: Նրան լրեցին Քուֆայի բնակիչները, իսկ Եգիպտոսն անցավ Մուավիային: Խալիֆայության մեջ խոռվարարներն անզուսպ կերպարանք ընդունեցին. ծագեցին արյունահեղ պատերազմներ: Շուտով Մուավիայի կողմնակից Ալիի հակառակորդների կողմից գումարված հաշտարար դատարանը որոշում կայացրեց, որ Ալին իրավունք չունի խալիֆ լինելու: Նրան մեղադրեցին նաև խալիֆ Օսմանին սպանելու մեղակցության մեջ: Դատարանը նրան հայտարարեց իշխանազրկված ու զահընկեց եղած: Ընկնելով երկու կրակի արանքը, իրոք Ալիի վիճակը դառնում էր ողբերգական: Նրա զլիավերնում սկսեց սավառնել մահվան ուրվականը:

661 թ. հունվարի 22-ի գիշերը, Քուֆայի մզկիթից դուրս գալու պահին ունեն Արդարրահման իրն Մուլջամ ալ-Մուրադի իր երկու խարիչի համախոհների հետ հարձակվեցին Ալիի վրա, բացականչելով. «Դատելու իրավունքը պատկանում է Ալլահին, և ոչ թե

քեզ, Ալի, և ոչ կը սրեր ունեցող քո մարդկանց»: Ահաբեկիչները սկսեցին սրերով հարվածներ հասցնել Ալիին: Հավատացյալները կարողացան ձերբակալել ու վնասազերծել Աբդարրահմանին, իսկ նրա երկու հանցակիցներին հաջողվեց փախուստի դիմել: Ավելի ուշ նրանցից մեկը հենց իր տան մեջ սպանվեց հարազատ հորեղբորորդու կողմից, որպես մարդասպանի, որը ձեռք էր բարձրացրել խալիքի վրա:

Եթե Իբն Մուլջամին քերեցին արյունաթաթախ Ալիի մոտ, խալիքը ուշադիր գննելով իր ահաբեկչին արտաքերեց. «Ինզին հոգու դեմ: Եթե ես մեռնեմ, անմիջապես սպանեցեք նրան, իսկ եթե կենդանի մնամ, ինքո կորոշեմ»: Սակայն 661 թ. հունվարի 23-ի երեկոյան Ալին ավանդեց իր հոգին: Ըստ ավանդության, նա քաղված է Քուֆայի մոտ, որտեղ հետազայում ծնունդ առավ Նաջաֆ քաղաքը, որը դարձավ համայն աշխարհի շիաների սրբավայր: Ալիի կտակի համաձայն, իր գերեզմանի վայրը պետք է լիներ անհայտ, որպեսզի խարիզիները չպղծեին այն: Մինչև օրս նրա գերեզմանի տեղը մնում է անհայտ:

Եթե վիրավոր խալիքին, որը մի պահ եկել էր զիտակցության, հարցրեցին, թե ով է լինելու իր ժառանգորդը, արդյոք նրա ավագ որդի Հասանը, ապա Ալին պատասխանեց. «Ես դա չեմ հրամայում ձեզ և չեմ ել արգելում, դուք զիտեք»:

Ալիի մահվանից հետո խարիզիները որոշել եին ահաբեկչական գործողությունների միջոցով վերջ տալ խալիքայությունում ծայր առած անկայունությանը, սպանելով դրա զիխավորներին: Ալիից հետո հերթը Մուավիայինն էր, սակայն նրա նկատմամբ մահափորձն ավարտվեց անհաջողությամբ: Եթե մզկիթում ահաբեկիչը ինքնակոչ խալիքի հետևից սուրբ իշեցրեց նրա վրա, վերջինս հենց այդ պահին կատարեց ծնրադրություն և հարվածը

զլիսի փոխարեն հասավ հետույքին: Ահաբեկիչը շհասցրեց երկրորդ հարվածը հասցնել, նրան տեղնուտեղը սրախողիսող արեցին:

Այսպիսով, իր ավարտին հասավ Ալիի խալիֆայության կարձ շրջանը (656-661): Իսլամի պատմության մեջ նա մտել է որպես ողբերգական և հակասական կերպարներից մեկը: Սուննիմահմեղականները երկրպագել և երկրպագում են նրան որպես «քարեպաշտ» խալիֆներից մեկը, որպես բարեպաշտության և առաքինության տիպար: Իսկ շիաները ուղղակի իդեալականացնում են նրա կերպարը: Նրանց գիտակցության մեջ նույնիսկ Ալիի կերպարը երկրորդ պլան է մղել Սուհամմադի կերպարը: Իսկ ծայրահեղ շիաները նրան դասում են սրբերի դասին և նույնիսկ աստվածացնում են նրան, մերժում են նրա մահը, համարելով, որ ամայրոպը նրա ձայնն է, կայծակը՝ նրա ժպիտը: Ավանդույթը Ալիին վերագրում է ասպետի կերպար, խիզախ ու վեհանձն:

Անկասկած Ալիին կործանեց նրա խաղաղափրությունը: Նա նաև իր ոչ զործնական բնավորությամբ թույլ տվեց, որ ըստ էության իրեն հեռացնեն զործերից: Ընդհանրապես Ալիի իշխանության դեկի մոտ գտնվելու շրջանում երկրում տիրում էր հուսախարություն և բարոյական կասկածներ:

Զարմանք է առաջացնում այն հանգամանքը, թե Ալիի կառավարման շրջանում առաջացած պառակտումը որքան վատ օգտագործեցին նվաճված ժողովուրդները, որպեսզի ազատազրվեն արաբական տիրապետությունից: Հուզումներ ծագեցին միայն Իրանում և Բահրեյնում:

Եթե մենք հետեւելու լինենք խալիֆայության զարգացման ընթացքին, նրա առաջին չորս խալիֆների ժամանակաշրջանում, ապա կտեսնենք, որ Աբու Բաքրի ժամանակ Արաբիան կայունա-

ցավ և հող նախապատրաստվեց լայն նվաճումներ կատարելու համար. Օմարի օրոր տեղի ունեցավ հաղթական նվաճողականություն. Օսմանի ժամանակ՝ հաղթական նվաճումների ամրապնդում, պերճանքի ու շքեղության տարածում և խալիֆի իշխանության բուլացում: Խսկ Ալիի կառավարման շրջանը բնորոշվում է իշխանության հետագա բուլացմամբ, բաղարացիական պատերազմի բորբոքմամբ, որը ծնեց կրոնական պառակտում: Այդ շրջանում ըստ էության դադարեց արտաքին նվաճողականությունը և խլամի մեջ հաստատվեց դինաստիական գաղափարը:

Հոր մահվանից հետո հաջորդ առավոտյան Ալիի ավագ որդին Հասանը, մայր մզկիթում ղեկավարեց աղոթքը, որից հետո մուսուլմանները որպես խալիֆի նրան տվեցին հավատարմության երդում: Խալիֆայության մյուս վայրերում ևս հավատարմության երդման արարողություններն անցան համեմատաբար հանգիստ պայմաններում: Դա նշանակում էր, որ Հասանի թեկնածությունը ձեռնտու է բոլորին:

Հասանի մասին տեղեկություններ գործնականում մեզ չեն հասել, գոյություն չունի նույնիսկ նրան նվիրված առանձին հաղիս: Վարկած կա, որ նա եղել է մի բույշ, կրոնամոլ և կնամոլ մարդ:

Իր խալիֆայության առաջին երկու ամիսները Հասանը նվիրեց Մուավիայի հետ բանակցություններին: Վերջինս նրան առաջարկեց իրեն հանձնել խալիֆի լիազորությունները, խոստանալով դարձնել իր ժառանգորդը: Բնականաբար Հասանը հրաժարվեց և Մուավիան սկսեց նրա դեմ արշավանքի նախապատրաստություններ տեսնել: Անցնելով Եփրատը, Մուավիայի գորքերը սրընթաց սկսեցին շարժվել դեպի Քուֆա:

Երբ Հասանը գտնվում էր Սաբաթում, նրա զորքերը խոռվություն բարձրացրին: Հարձակվելով խալիֆի վրա, խոռվարաները սրով վիրավորեցին նրան: Խալիֆը ստիպված էր ապաստան գտնել Մադինայի տեղապահի նստավայրում և զբաղվել իր վերքերը բուժելով: Այդ ընթացքում նրա զորքերը սկսեցին արագորեն ցիր ու ցան լինել: Մուավիան սկսեց խոշոր կաշառքներ բաժանել Հասանի կողմնակիցներին, որոնցից շատերը լրելով խալիֆին փախուստի դիմեցին հակառակորդի կողմը: Անելանելի դրության մատնված Հասանը ստիպված էր բանակցությունների մեջ մտնել Մուավիայի հետ: Վերջինս հրամայեց բերել չգրված մաքուր թուղթ, իր ստորագրությունը դրեց նրա վրա և այն կնքելով հանձնեց իր ներկայացուցչին, նրան պատվիրելով հետևյալը. «Թուղթը հանձնիր Հասանին և նա թող գրի այն ամենը, ինչ ինքը ցանկանում է»: Այս պատմությունը իրողություն է թե ավանդություն, դժվար է ասել: Սակայն ավանդության համաձայն Հասանի և Մուավիայի միջև տեղի ունեցած բանակցությունների հետևանքով ծնունդ է առնում հինգ կետից բաղկացած մի փաստաթուղթ, որտեղ ասվում էր. 1. Մուավիան կհետևի Ղուրանին ու մարզարեի ավանդույթներին: 2. Մուավիան չի նշանակում իր ժառանգորդին, այլ այդ հարցը թողնում է շուրայի որոշմանը: 3. Բոլորին և ամենուրեք երաշխավորվում է անձեռնմխելիություն: 4. Ալիի բոլոր կողմնակիցներին, նրանց կանանց ու երեխաներին, նրանց պատկանող ունեցվածքին ոչ ոք չի կարող ոտնազություն կատարել, քանի որ նրանց երաշխավորվում է անձի և ունեցվածքի անձեռնմխելիություն, 5. Հասանին, նրա եղբայր Հուսեյնին և մարզարեի ողջ ընտանիքին վեաս չի հասցվի ոչ բացահայտ և ոչ էլ թաքնված ձևով, որտեղ էլ որ նրանք գտնվելու լինեն:

Միաժամանակ Սուավիան Հասանին տվեց մի հսկայական գումար և խոշոր կալվածքներ (որոշ տվյալներով 2 միլիոն դիրհեմի արժողությամբ), փոխարենը պահանջելով, որ նա բնակություն հաստատի Մադինայում և հրաժարվի խալիֆի իր իրավունքներից: Այդ թույլ և պայքարի հատկանիշներից զուրկ մարդը տվեց իր համաձայնությունը և այդպիսով հեռացավ քաղաքական կյանքից: Հասանի այդ վարմունքը Մերքայում և Մադինայում ընդունվեց մեծ ռժգոհությամբ: Սակայն գործը արդեն կատարված էր: Իսկ խալիֆայությունն անցավ Սուավիային, որը Դամասկոսում հիմնեց Օմայան հարստությունը: Խալիֆայության բոլոր նահանգներում նա ճանաչվեց որպես խալիֆ: Մոտ 19 տարի (661-680 թթ.) Սուավիան կառավարեց ինչպես բացարձակ տիրակալ, վերականգնելով արաբական աշխարհի բարոյական միասնությունը:

Օմայանների արքայատան ողջ կառավարման շրջանում (661-750 թթ.) շիաններն ու խարիզինները շարունակում էին մնալ որպես ամենավտանգավոր հակառակորդներ:

669 թ. Հասանը անսպասելիորեն մահացավ: Ավելի ուշ շրջանի շիա պատմիչները գտնում են, որ նա Սուավիայի հրամանով թունավորվել էր: Մուսավիան անմիջապես իր ժառանգորդ նշանակեց իր որդի Յազիդին: Խալիֆի ընտրովիություն այևս գոյություն չուներ: Սակայն Յազիդի զահ բարձրանալը առանց արյունահեղության տեղի չունեցավ:

Սուավիան իր քաղաքական կտակում արաբական աշխարհին բատվիրում էր Հուսեյին իրն Ալիին (մարզարեի թոռանը) և Արդալլահ իրն ազ-Զուլֆեյրին շանաշել իբրև խալիֆ: Վերջիններս ել իրենց հերթին խուսափեցին Յազիդին հավատարմության երդում տալուց և թաքնվեցին Մերքայում:

Իր ավագ եղբոր մահվանից հետո Ալիի կրտսեր որդի Հուսեյնը (626-680) դարձավ ալիների տոհմի ավազը և Քուֆայից վերադարձավ Մեքքա: Սակայն տևական ժամանակ քաղաքական կյանքում չէր խաղում աշքի ընկնող դեր: 680 թ. Մուավիայի մահվանից հետո, եթե Իրաքում հակաօմայան ընդդիմությունը սկսեց ակտիվանալ, Քուֆայի շիաները, որոնք Հուսեյնին ընդունում էին որպես իրենց երրորդ իմամ, (իր եղբոր երկրորդ իմամ Հասանից հետո) պատվիրակություն ուղարկեցին Հուսեյնին մոտ, նրան հրավիրելով ժամանանել Քուֆա, որպեսզի նա այնտեղից դեկավարի ապստամբությունը խալիֆ Յազիդ Ա-ի դեմ, նրան խոստանալով լայն աջակցություն: Քուֆայի շիաները գտնում էին, որ օրինական խալիֆ պետք է լինի մարզարեի թոռը՝ Հուսեյնին:

Արձագանքելով քուֆացիների կոչին, Հուսեյնին մի ոչ մեծ ջոկատի ուղեկցությամբ դուրս եկավ Մեքքայից, նախապես Քուֆա ուղարկելով իր հորեղբորորդի Մուսլիմ Արիլին, որպեսզի նա կազմակերպի ապստամբություն: Քուֆայի հազարավոր բնակիչներ Մուսլիմին, որպես Հուսեյնի ներկայացուցչի, հավաստիացրեցին, որ իրենք հավատարիմ են լինելու մարզարեի թոռանը և պատրաստ են զենքով պաշտպանելու նրա իրավունքները: Այդ մասին Մուսլիմը անմիջապես նամակով տեղեկացնում է Հուսեյնին: Սակայն Քուֆայի տեղապահ Ուլեյդուլլահ իրն Զիյադը հենց սաղմում ոչնչացրեց քուֆացիների ելույթը, իսկ Մուսլիմը կախադան բարձրացվեց: Այդ տիսուր լուրը Հուսեյնինը ստացավ ճանապարհին, սակայն նա չցանկացավ լսել իր ազգականների խորհուրդը՝ հետ կանգնել այդ աղետալի ձեռնարկությունից:

Ուլեյդուլլահ իրն Զիյադը Հիջազից Իրաք տանող բոլոր ճանապարհներին, որտեղով որ անցնելու էր Հուսեյնինը, դրեց զինված պահակակետեր: Ճանապարհին Հուսեյնին զինվորների մի մասը

լրեց իրեն: Իրեն հավատարիմ մնացած մարտիկների հետ նա ճամբար դրեց Քուֆայից ոչ հեռու, Նինավա կոչված անջուր վայրում, որտեղ հետազայում ծնունդ առավ Քերքելա քաղաքը: Նրա մոտ ընդամենը մնացել էին 40 հետևակ և 72 հեծելազորային զինվորներ, որոնց մեծ մասը նրա ազգականներն ու մերձավորներն էին, իրենց կանանցով ու երեխաներով:

Հուստով Հուսեյինի ճամբարին է մոտենում իր 4 հազարանոց զորաբանակով Օմար իրն Սա՛ադ իրն Արի Վարքասը և շրջապատում ճամբարը: Հուսեյինը անպատասխան է թողնում Օմարի պահանջը հանձնվել խալիֆ Յազիդի ողորմածությանը: Խալիֆի զորքերի հրամանատարը պատասխանի համար Հուսեյինին տվեց 10 օր ժամանակ: Սակայն այդ ժամկետը լրանալուց հետո ևս վերջինս հրաժարվեց հանձնվել:

10 օր շարունակ Հուսեյինի մարդիկ տառապում էին ծարավից: 680 թ. հոկտեմբերի 9-ի երեկոյան Հուսեյինը կազմում է իր կտակը և անում վերջին կարգադրությունները, իսկ զիշերվա մնացած մասը անց է կացնում աղոթելով: Առավոտյան աղոթքից հետո 680 թ. հոկտեմբերի 10-ին լացող ու ողբացող կանանց ու երեխաների աշքի առջև Հուսեյինը իր մարտիկների հետ դուրս է գալիս թշնամու դեմ և մտնում անհավասար մարտի մեջ:

Սկզբում խալիֆի զինվորներից ոչ ոք չէր հարձակվում նրա վրա, չցանկանալով վաստակել մարզարեի թոռան սպանողի տիսուր համբաւ: Սակայն այնուհետև զինվորներից մեկը Շումր անունով սրով հարվածեց նրա զլսին, որից հետո բոլորը միասին հարձակվեցին Հուսեյինի վրա, որպեսզի սպանության պատասխանատվությունը կրեն միասին: Անհավասար մարտում ստանալով սրերի ու նիզակների բազմաթիվ հարվածներ, Հուսեյինը սպանվեց: Մի քաշվեցին նաև նրա մարդիկ:

Սպանված Հուսեյինի և նրա զինակիցների գլուխները ուղարկում են Դամասկոս խալիֆին, իսկ Հուսեյինի անզլուխ մարմինը թաղվում է Քերբալայում: Յազիդը հրապարակավ հայտարարում է, թե ինքը հրաման չի տվել սպանելու Հուսեյինին և տեսր է անում, թե իբր խիստ վշտացած է տեղի ունեցածի հետևանքով: Յազիդը ազատ արձակեց Հուսեյինի և նրա ազգականների գերված կանանց ու երեխաններին և նրանց թույլ տվեց մեկնելու ուր որ ցանկանում են:

Քերբելայում տեղի ունեցած իրադարձությունը ունեցավ շափազանց մեծ քաղաքական ու կրոնական հետևանքներ: Այն շիաների և Օմայանների միջև առաջ բերեց մի խորը վիճ: Հուսեյինը ճանաչվեց որպես «մեծագույն նահատակ», իսկ Քերբելան դարձավ շիաների զյլավոր սրբավայրերից և ուխտազնացության վայրերից մեկը: Հուսեյինի կործանման օրը բոլոր շիաների կողմից նշվում է որպես սգո օր (աշուրա): Այդ օրը զգացմունքային մեծ վերելքով մինչև օրս նշվում է շիաների կողմից: Վերջիններիս մոտ ձևավորվեց երրորդ իմամ Հուսեյինի իսկական կուլտ: Շիաները նրան վերագրեցին առասպեկտական հատկանիշներ, որ իբր նա օժտված էր ապագան գուշակելու գերբնական հատկանիշներով, կարող էր հրաշագործություններ գործել և այլն:

Հուսեյինի սպանությունը ողջ իսլամական աշխարհը պառակտեց ու քածանեց երկու՝ իրար հակառակ, իրար հետ անհաշտ մասերի:

Հուսեյինի կործանումը միաժամանակ նպաստեց Ալիի տոհմի կողմնակիցների կրոնական ու քաղաքական միավորմանը:

«Ալիի երկրորդ որդի Հուսեյինը,- գրում է Լեռն,- ժառանգել էր հոր դրական և բացասական հատկությունները - ազնվություն,

բաջություն, բայց և անընդունակություն ըմբռնելու քաղաքական հանգամանքները»:

Հուսեյինի սպանությունից հետո Մերքայում, Մադինայում և Քուֆայում սկսվում են հուզումներ: Յազիդի համար առավել վտանգավոր էր Զուբեյրի որդի՝ Աբդալլահի շարժումը, որը Մերքայում իրեն հոչակել էր խալիֆ և շուտով ողջ Հիջազը ճանաչել էր նրան որպես այդպիսին: Ուստի Յազիդը իր զորքերը շարժեց Մերքայի դեմ և այն շրջապատման ենթարկեց, որի ընթացքում օգտագործվում էին այրվող նետեր: Դրանք կրակի ճարակ դարձրին Քաարան: Շրջապատումը տևեց ավելի քան երկու ամիս: Ներխուժելով քաղաք, քանակը սկսեց կողոպուտի ենթարկել բնակչությանը: Այն դադարեցվեց միայն այն ժամանակ, երբ լուր ստացվեց, որ խալիֆ Յազիդը մահացել է: Զորքերն անմիջապես դուրս հանվեցին քաղաքից և ուղարկվեցին Դամասկոս:

Հուսեյինի կործանումից հետո Քուֆայում կազմակերպվեց շիաների մի միություն, որոնց անդամներից ոչ մեկը 60 տարեկանից երիտասարդ չէր: Նրանց շեյխը դարձավ իին սահար Սուլեյման իրն Սուրադը: Նրանց կարգախոսն էր «Վրիժառություն Հուսեյինի մահվան համար»: Այդ միությունը կամ դաշինքը արագորեն մեծանում ու ծավալվում էր: 684 թ. նոյեմբերին դաշինքի անդամ 4 հազար ապստամբներ մուտք գործեցին Քերքելա, իսկ ապա անցնելով Եփրատ գետը շարժվեցին դեպի Ռեշայի: Սակայն շարժումը հետագա ծավալում չստացավ, քանի որ 685 թ. հունվարին նրա մասնակիցները ջախջախվեցին և համարյա զլխովին սրի բաշվեցին:

Արաբական նվաճումները շարունակվում էին: Արդեն VIII դ. սկզբին արաբական խալիֆայությունը նվաճել էր հսկայական տարածքներ, որոնք արևմուտքում Խսպանիայից և Մարոկկոյից ձգվում էին արևելքում մինչև Կենտրոնական Ասիա և Հնդկաստան: Երիտասարդ արաբական պետությունը, որն օժտված էր ուժեղ կենտրոնացված իշխանությամբ, իր անզուսազ նվաճողականությունն իրագործելիս, հանդիպում էր թույլ թշնամիների: Դրանվ էր պայմանավորված արաբական բանակների հաղթական շլացուցիչ հաջողությունների գաղտնիքը: Վաղ միջնադարի երկու ուժեղագույն պետությունները՝ Սասանյան Իրանը և Բյուզանդիան հյուծվել և ուժասպառ էին եղել ոչ միայն մեկը մյուսի հետ անվերջ պատերազմների հետևանքով, այլև ներքին երկպառակությունների և կազմալուծման պատճառով: Այդ երկու նախկին հզոր պետությունները ծվատվում ու անդամալուծվում էին նաև կատաղի ու անզիջում ներքին կրոնական երկպառակությունների պատճառով:

Արաբական բանակը, որը բաղկացած էր առավելապես քոչվորական ցեղերի աշխարհագորերից, որոնք համախմբված էին տոհմա-ցեղային ավանդական կարգապահությամբ, ոգեշնչվում էր նաև այլադավանների դեմ անողորմ պայքարի գաղափարով: Բենվիններին մարտի դաշտ էր տանում նաև Արևելքի հարուստ երկրներում ավար ձեռք բերելու ձգտումը: Խսլամը հայտարարել էր սրբազն պատերազմ՝ ջիհադ ոչ մահմեդականների դեմ: Սրբազն պատերազմին մասնակցությունը դիտվում էր որպես յուրաքանչյուր մահմեդականի պարտականությունը:

Նվաճված ժողովուրդներին նախ և առաջ խսլամը պարտադրվում էր թռնի միջոցներով, մահվան սպառնալիքի ներքո:

Սակայն դրա հետ միաժամանակ լայնորեն օգտագործվում էին նաև «բարոյական և նյութական» խթանները: Նվաճված երկրներում բնակչության մեծ մասը սովորաբար խլամն ընդունում էր այն պատճառով, որ այն նորադարձ մահմեղականին հատկացնում էր մի շարք իրավական և բարոյական առավելություններ, քանի որ միայն մահմեղականներն էին համարվում լիիրավ հպատակներ, իսկ այլակրոնները համարվում էին «հանդուրժվող անհավատներ», այսինքն «երկրորդ կարգի» մարդիկ: Բացի այդ, մահմեղականները վճարում էին շատ ավելի թերև հարկեր, քան ոչ մահմեղականները: Իսլամն ընդունած ստրուկները, իսկ նրանց թիվը այդ ժամանակներում նախկին հռոմեական նահանգներում և Իրանում դեռևս շատ էր, ազատվում էին ստրկությունից: Իսլամը հանդիս էր զայս նաև կաստայական սահմանափակումների դեմ, ուստի ցածր կաստաների մարդիկ հաճույքով դառնում էին մահմեղականներ: Այդ բոլորը նպաստում էր նվաճողների կրոնի ամրապնդմանը խալիֆայությունում, իսկ հետագայում նաև մյուս մուսուլմանական պետություններում՝ Սելջուկյան պետության մեջ, Օսմանյան կայսրությունում, Սեֆևյան և Ղաջարական Իրանում, Դելիի սուլթանությունում, Հնդկաստանի Մեծ Մողոլների պետության մեջ և այլն:

Մի շարք երկրներ իսլամը թափանցեց նաև խաղաղ ձախապարհով, շնորհիվ ուշ արարական միջնադարի բարձր զարգացած մշակույթի ազդեցության, որն իր մեջ ներծծել էր անտիկ բյուզանդական, իին իրանական քաղաքակրթությունների ձեռքբերումները, ինչպես նաև առևտրական և այլ կարգի կապերը: Մուսուլմանական քարոզիչները, ձանապարհորդները, փաճառականները խլամը բերեցին Չինաստան, Ճենկաչին, Ինդոնեզիա, Սահարայից հարավ-աֆրիկյան երկրներ և այլն:

ԻՍԼԱՄԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ,
ԴԱՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԵՍԸ
(ԾԻՍԱԿԱՐԳԸ)

Իսլամի պաշտամունքը (կուլտը) խարսխված է հինգ պարտադիր հիմնայուների վրա (արաբերեն «արքան աղ-դին», հոգն. «ոռուքն»), որոնք արտահայտում են իսլամական կրոնի բուն էությունը: Այդ հինգ հիմնայուներն են 1. հավատի խոստովանությունը («աշ-շահադ»), 2. աղոթքը («աս-սալյաթ»), 3. ծոմը («ասսաում»), 4. ողորմությունը («ազ-զարյաթ»), 5. ուխտազնացությունը («ալ-հաջ»): Որոշ մուսուլմանական աստվածաբաններ դրան ավելացնում են նաև ևս մեկ, վեցերորդ հիմնայունը՝ «ջիհադը» կամ «ղազավաթը» («սրբազն պատերազմ հանուն հավատի»):

Առաջին հիմնայունը՝ հավատի խոստովանությունը՝ կամ հավատն առ աստված բաղկացած է հետևյալ բանաձեի («շահադ») արտասանումից: «Ճկա աստվածություն Ալլահից բացի և Մուհամմադը Ալլահի մարգարեն է»: Այս բանաձի արտասանումը պարտադիր է յուրաքանչյուր մուսուլմանի համար նրա կյանքի բոլոր պահերին և նույնիսկ մահվան եզրին գտնվելիս: Ընդ որում, մեռնողը այն արտասանում է անձամբ, իսկ եթե նա ի վիճակի չի լինում դա անելու, թույլատրվում է, որ նրա համար, այն արտասանեն ուրիշները:

Վերոհիշյալ բանաձեն իր մեջ պարունակում է իսլամի երկու հիմնական դոգմաներ. ա. միաստվածության դավանում («արթառուիիդ») և բ. Մուհամմադի մարգարեական առաքելության ընդունում («ան-նուրավվա»): Միաստվածության սկզբունքը իսլամի մեջ ելակետային նշանակություն ունի, այն հակադրվում է բազ-

մաստվածությանը («շիրք»): Իսլամը սովորեցնում է, որ չկան ուրիշ աստվածներ Ալլահից բացի, այդ սկզբունքը շընդունելը նշանակում է մեծ մեղք գործել:

Առհասարակ պետք է նշել, որ մուսուլմանական մոնոթեիզմը (միաստվածության սկզբունքը) ավելի խիստ է, քան քրիստոնեականը: Այն, օրինակի համար, խստիվ մերժում ու չի ընդունում այնպիսի հասկացություն, ինչպիսին երրորդությունն է՝ միասնական աստծո տարաբաժանումը երեք խպոստասիաների՝ այսինքն երրորդությունից մեկի:

Իսլամի երկրորդ հիմնայունը աղոթքն է՝ (արաբերեն «ասսալյաթ»), հոգն. «սալավաթ», նրա պարսկերեն հոմանիշը «նամազն» է):

Աղոթքի ժամանակ հավատի խոստովանության բանաձեռ կրկնվում է մի քանի անգամ: Իսլամն ընդունելու հարցում Մուհամմադը մեծ նշանակություն էր տալիս աղոթքին: Դուրանը ևս պնդում է աղոթքի պարտադիր լինելու մասին: Աղոթքը պետք է կատարվի խստիվ որոշված ծեսի համաձայն: Այդ ծեսը անհրաժեշտ է կատարել սահմանված բանաձեռվ, արաբերեն լեզվով, օրվա որոշակի ժամերին, հնարավորության դեպքում մզկիթում: Աղոթքն ուղեկցվում է աղոթող անձի սահմանված դիրքերով ու ժեստերով (ձեռքերի կարկառում, զլիսի և մեջքի խոնարհումներ, ծնկաչոր անելը, բերանքսիվայր իջնելը և այլն): Աղոթքի դիրքերի և բանաձեռի յուրաքանչյուր որոշակի շրջանակ կոչվում է ոփք՝ աթ կամ ուաք՝ աթ: Յուրաքանչյուր աղոթք բաղկացած է 2-4 ուաք՝ աթ-ներից՝ կախված օրվա ժամանակից: Ընդ որում, աղոթողը պարտադիր կարգով դեմքով պետք է շրջվի դեպի Մեքքա: Աղոթքի այդ ուղղությունը կոչվում է կիբլա: Սովորաբար մուսուլմանները զիտեն կիբլայի ուղղությունը: Բայց եթե նրանք գտնվում են անձա-

նոր վայրում, հարցնում են մարդկանց, որոշում արևի դիրքով, կամ օգտվում են կողմնացույցից:

Ծիսական աղոթք կատարելու կարգը հետևյալն է. հավատացյալը գետնին է փոռում աղոթքի համար նախատեսված փորձիկ գորգը (սաշշաղա), որն իբր աղոթողին բաժանում է արտաքին աշխարհից: Ընդ որում, տարբերություն չկա, թե հավատացյալը որտեղ է աղոթում, մզկիթում, տանը թե բաց երկնքի տակ, միայն թե դա չինի կեղտու վայր (սպանդանոց, մահապատիճ իրականացնելու տեղ, զուգարանի մերձակա վայր և այլն): Նամազի ժամանակ մահմեդականը պետք է իր զիսխին կրի ֆես կամ չալմա:

Աղոթքից առաջ աղոթողը շշուկով կամ բարձրածայն արտահայտում է իր մտադրությունը (նիյա), կատարելու այս կամ այն աղոթքը (առավոտյան, կեսօրյա և այլն): Այնուհետև կանգնած վիճակում ձեռքերը վերև բարձրացնելով մինչև ուսերի մակարդակը, աղոթողը արտաքերում է հետևյալ բառերը «Ալլահ արքար» («Ալլահը մեծ է»), դա կոչվում է թարբիր ալ-իհրամ: Շարունակելով կանգնած մնալ և ձախ ձեռքը դնելով աջ ձեռքի վրա, աղոթողը կարդում է կամ արտասանում Ղուրանի առաջին «ալ-Ֆարթիհա» սուլրան: Այդ աղոթքը մուտքային մոտ գրավում է այն նույն տեղը, ինչ քրիստոնյաների մոտ «Հայր մերը»: Այնուհետև հավատացյալը կուանում է այնքան, որ ձեռքի ափերը դիավլեն ծնկներին: Ապա ուղղվում է (իթիղայ) և ձեռքերը վերև բարձրացնելով արտաքերում է. «Ալլահը ունկնդրում է իրեն փառաբանողներին»: Դրանից հետո կրկին ծնրադրելով, նա երկու ձեռքերով ու քթով հպվում է գետնին: Այդ ցգետին խոնարի ողջույնը կոչվում է սուզութ, որ նշանակում է «երկրպագել», և որից առաջացել են սաշշաղա և մասշիդ (մզկիթ) բառերը: Դա աղոթքի կուլմինացիոն պահն է: Այնուհետև հավատացյալը նստում է ծնկների վրա (ջու-

լուս կամ քուուղ), կրկին զլուխն իշեցնում է մինչև գետինը, կատարում ցգետին երկրպագություն, որը կոչվում է երկրորդ սուցութ: Երկրորդ սուցուղից հետո աղոթողը ծալապատիկ նստում է և իրար հետեւից կրկնում է հավատի խոստովանության բանաձեռ, որից հետո հատուկ աղոթք է կարդում մարգարեի համար և վերջապէս արտաքրում է հետեւյալ բանաձեռ. «Թող ձեզ վրա իշխի Ալլահի ողջույնները և զքասրտությունը», որը կրկնվում է երկու անգամ, սկզբում շրջվելով աջ կողմը, իսկ ապա ձախ (դա կոչվում է թասլիմ աթ-թահիլ): Դրանով աղոթքն ավարտվում է: Աղոթքի այդ ողջ շրջանակը կազմում է ռար ՚աթը: Հարկ է նշել, որ աղոթքը չի պարունակում աստծուց որևէ խնդրանք:

Ի դեպ, աղոթքի ժամանակ մարմնի դիրքերի փոփոխության հարցում սուննի-ուղղաղավանների և շիանների միջև կան տարբերություններ:

Յուրաքանչյուր մահմեդական պարտավոր է օրական հինգ անգամ ծիսական աղոթք կատարել: Ամենօրյա այդ աղոթքները հետեւյալներն են. 1. առավոտյան կամ լուսաբացի աղոթք (արար. սայյաթ աս-սուրի, կամ ալ-Փաջր, պարսկ. նամազ-ի բամդայ), որը կատարվում է մինչև արևածագը, 2. կեսօրյա աղոթք (արար. սալյաթ ազ-զուհիր, պարսկ. նամազ-ի փիշին). 3. աղոթք օրվա երկրորդ կեսին, կամ երեկոյան աղոթք (արար. սայյաթ ալ-ասր, պարսկ. նամազ-ի դիզար), այս աղոթքը կատարվում է կեսօրին և արևամուտի միջև ընկած շրջանում. 4. հետարևամուտի աղոթք (արար. սայյաթ ալ-մադրիբ, պարսկ. նամազ-ի շամ), կատարվում է արևամուտից անմիջապէս հետո և 5. զիշերային աղոթք քուն մտնելուց անմիջապէս առաջ (արար. սայյաթ ալ-իշա, պարսկ. նամազ-ի խուֆթան):

Հինգ ամենօրյա աղոթքները պարտադիր են ամեն մի շափահաս և առողջ դատողության տեր մահմեղականի համար: Ճանապարհներին գտնվելիս թույլատրվում է կրծատել հինգ պարտադիր աղոթքների թիվը: Հիվանդներն ազատվում են աղոթելու պարտականությունից, սակայն առողջանալուց հետո նրանք պետք է կատարեն իրենց պարտականությունը:

Բացի վերոհիշյալ կանոնական պարտադիր աղոթքներից, գոյություն ունեն նաև մի շաբթ ոչ պարտադիր կամ կամավոր աղոթքներ (մունաջաթ): Դրանցից ամենահայտնին զիշերային աղոթքն է (սայաթ ալ-Լեյլ): Զի կարելի այն շփոթել ամենօրյա հինգ աղոթքներից վերջինի՝ զիշերային աղոթքի հետ: Այդ աղոթքը հատկապես ընդունված է կատարել ուսմադան ամսվա ընթացքում: Ոչ պարտադիր աղոթքներից կարելի է հիշատակել նաև նրանք, որոնք սովորաբար կատարվում են առանձնահատուկ հանգամանքների կապակցությամբ. խավարումների ժամանակ (կուսուֆ, խուսուֆ), անձրեսի խնդրանքով (խրիսքա), աղոթք այս կամ այն ցանկության իրականացման համար (սայաթ ալ-հաջա), աղոթք որեւէ կարևոր որոշում ընդունելուց առաջ (խրիստար): Գոյություն ունի նաև հատուկ աղոթք հանգուցյալների հոգու հանգստության համար (սայաթ ալա-լ-մեյիր, սայաթ ալ-շինազա):

Ոչ պարտադիր, կամավոր աղոթքները տարբերվում են կանոնական աղոթքներից նրանով, որ դրանք կարելի է կատարել ցանկացած լեզվով, իսկ կանոնական աղոթքները պարտադիր կարգով պետք է կատարվեն արաբերենով: Թեև կամավոր աղոթքները ոչ պարտադիր են, սակայն համարվում են աստվածահաճո գործ: Ենթադրվում է, որ օրական հինգ անգամվա աղոթքի սովորությը մուսուլմաններին է անցել զրադաշտականներից, որոնք

նոյնպես իրենց ծիսական աղոթքները կատարել են օրական հինգ անգամ:

Յուրաքանչյուր աղոթքի ժամի մասին տեղեկացնում է մզկիթի մուազզինը (այստեղից արաք. ազան բառը, որ նշանակում է «աղոթքի հրավեր»): Եթե մզկիթում կա մինարեթ, ապա այնտեղ է բարձրանում մուազզինը և բարձրածայն հավատացյալներին հրավիրում է աղոթքի (ազան): Մեր օրերում ազանը որպես կանոն ձայնասփովում է ռադիոյով կամ հաղորդվում է հեռուստատեսությամբ:

Աղոթքից առաջ ծիսական լվացումները (մարրումները՝ «քահարաթ») պարտադիր են: Մուսուլմանները լվանում են դեմքը, ձեռքերը, արմունկները, ոտքերը և գլուխը: Այնուհետև լվանում են ձեռքերի դաստակները, բերանը, քրանցքները (քրանցքները երեք անգամ, քանի որ այնտեղ իբր հավաքվում են մեծ թվով շայթաններ): Մնացած ջրով լվանում են ականջները: Ակզրում լվացվում է մարմնի աջ մասը, ապա ձախը: Ձեռքերն ու ոտքերը լվանալիս սկսում են մատներից: Յուրաքանչյուր աղոթքի ժամանակ մահմեղականը պարբերաբար կրկնում է հետևյալ արտահայտությունները. «Ալլահը մեծ է», «Ալլահը գթառատ է», «Ալլահը ամենազոր է»:

Եթե աղոթքի ժամին մահմեղականը գտնվում է դրսում, և ոչ թե մզկիթում, ապա նա աղոթելու համար ընտրում է մի մաքուր տեղ: Տան յուրաքանչյուր անդամ ունի աղոթքի իր փոքրիկ գորգը. իսկ մզկիթում բոլորն աղոթում են ընդհանուր գորգի վրա: Նամազը կատարում են ցանկացած վայրում, որտեղ ազանի պահին գտնվում է հավատացյալը. զյուղացին դաշտում, պաշտոնյան իր աշխատատեղում և այլն: Նոյնիսկ օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում գոյություն ունեն աղոթատեղիներ:

Այն դեպքում, երբ լվացման համար ջուր չկա, թույլատրվում է «զվացումը» կատարել ավագով կամ հողով. դա կոչվում է «քայամմում», այսինքն մաքրում ինչ-որ սորուն բանով: Այդ առթիվ Ղուրանում ասվում է. «Եվ եթե պղծված է, մաքրվեց ՚ը, և եթե հիվանդ եք կամ ճանապարհորդությունում կամ ձեզանից մեկը հարկավորից է եկել կամ կնիկներին եք դպչել, եթե ջուր չեք գտնում, այն ժամանակ մաքուր հողով թաթախվեցեք և քսեց ՚ը նրանից ձեր երեսներին և ձեռքերին» (5:9):

Ուրբաթ օրերին, կեսօրվա ժամին կատարվում է հասարակական աղոթք (սայաթ ալ-ջամաա), որը հայտնի է նաև սայաթ աղ-ջումա անունով: Ուրբաթօրյա աղոթքը կատարվում է դրա համար հատուկ նախատեսված մզկիթում, որը կոչվում է մասշիդ-ի ջումա (ուրբաթօրյա մզկիթ), կամ մայր մզկիթ (արաբ.-պարսկ. մասշիդ-ի ջամի): Ի դեպ, մուսուլմանական մզկիթների ներքին հարդարանքը քրիստոնեական (հատկապես կաթոլիկ, ուղղափառ և այլն) եկեղեցիների համեմատությամբ, որպես կանոն, շատ պարզ ու հասարակ է. այնտեղ բացակայում է թանկարժեք կահկարասին, երածշտական գործիքները, քանի որ իսլամը թույլ չի տալիս, որ ժամերգությունն ուղղեցվի երածշտությամբ կամ երգչախմբի երգեցողությամբ:

Մզկիթների հատակը ծածկված է լինում գորգերով. իսկ պատերն ու առաստաղը, որպես կանոն, զարդարվում են հասարակ զարդարանդակներով կամ Ղուրանից բերված ասույթներով:

Իրանում կանայք մզկիթում ուրբաթօրյա աղոթքին ներկա են լինում տղամարդկանցից անջատ, կանանց համար նախատեսված մզկիթի մի առանձին բաժնում: Այդ սովորույթը գոյություն ունի միայն շիական Իրանում, մինչդեռ սուննիական երկրնե-

րում որպես կանոն կանայք ներկա չեն լինում նամազների ժամանակ և աղոթում են տանը:

Եթե որևէ մեկը ուրբաթօրյա աղոթքին չի մասնակցում երեք շաբաթից ավել ժամանակաշրջանում, ապա նա համարվում է խլամը լրած մարդ: Խոլամական երկրներում ուրբաթ օրը հանգստյան օր է, բոլոր խանութները, կրպակները, հիմնարկությունները և ձեռնարկությունները որպես կանոն փակ են:

Սզկիթներում աղոթքը վարող անձը, որը կանզնած է աղոթողների առջև, կոչվում է խմամ: Խմամի դերը կարող է կատարել ցանկացած անձ, որը կամավոր կերպով համաձայնվում է զյասվորել աղոթքը, սակայն նա անպայման պետք է լինի հարզված անձնավորություն և բավարար չափով տեղյակ լինի մահմեղական կյոնի սկզբունքներին: Մեր օրերում շատ մզկիթներ ունեն իրենց մշտական խմամները:

Եթե տղամադիկ և կանայք աղոթում են միասին, ապա աղոթքը միշտ դեկավարում է տղամարդը: Եթե աղոթում են միայն կանայք, ապա նրանցից մեկը հանդես է զայխ աղոթքի դեկավարի դերում:

Երբեմն աղոթքի ժամանակ մուսուլմաններն օգտագործում են տերողորմյա (համրիչ, վարդարան), որը բաղկացած է 99 հատիկներից: Նրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է Ղուրանում հիշատակված Ալլահի 99 եպիտետներին: Այդիսի համրիչները կոչվում են թասրիկ կամ սուրիա:

Իսլամի երրորդ հիմնայունը ծոմն է կամ պասը (արաք. աս-սաւում) կամ ուրազան: Խոլամի հիմնական ծոմը ուսմաղան ամսի ծոմն է, որը պարտադիր է բոլորի համար, բացի հիվանդներից և ճանապարհորդներից: Ծոմը սկսվում է մուսուլմանական

լուսնային օրացույցի 9-րդ Ռամադան ամսում՝ նորալուսնի հայտնվելուն պես, որը հաստատվում է նորալուսինը նկատած երկու վկաների կողմից: Ներկայում մուսուլմանական երկրներում ցերեկվա ավարտը և զիշերվա սկիզբը որոշվում է ամեն մի քաղաքի ու շրջանի համար առանձին, նկատի ունենալով նրանց աշխարհագրական կոորդինատները: Այդ տվյալները հրապարակվում են մամուլում, ուղիղոյն կամ հեռուստատեսությամբ: Սահմանագծային այդ ժամկետները (արաբերեն իմսաք կամ իմսաքիա) հրապարակվում են նաև լուսնային հիջրայի օրացույցներում:

Տարբեր երկրներում ծոմի սկիզբը ազդարարվում է տարբեր ձևով (օրինակ թնդանոթների կրակոցով, մինարեթի վրա բարձրացված դրոշով և այլն): Հավատացյալները պետք է ողջ ուսման ամսվա ընթացքում, այսինքն 30 օր ծոմ պահեն: Այդ 30 օրերի ընթացքում մուսուլմանները չեն լողանում, չեն ծխում, չեն խմում և ուտում և պետք է կարդան Ղուրան: Արգելված է նաև ձեռնպահ մնալ այն ամենից, ինչ կարող է մարդուն հաճույք պատճառել: Ծոմի օրերին տղամարդկանց արգելված է նաև մերձենալ կանանց:

Մուսուլմանական ծոմը տարբերվում է քրիստոնեականից նրանով, որ մուսուլմանական ծոմի ժամանակ ոչ թե պահանջվում է ձեռնպահ մնալ սննդի այս կամ այն տեսակն օգտագործելուց, այլ պահանջվում է ողջ օրվա ընթացքում, արևածագից մինչև մուրթի ընկնելը, երբ արդեն հնարավոր չեն սպիտակ թելը զանազանել սեից, ընդհանրապես ձեռնպահ մնալ սնունդ, հեղուկ օգտագործելուց և ցանկացած տիպի զվարճալիքներից: Գիշերը բոլոր

* Արաբական երկրներում այդ ամիսը կոչվում է Ռամադան, իսկ իրանում, Թուրքիայում, Աֆղանստանում, Պակիստանում և այլն Ռամազան:

ուտեստները դառնում են թույլատրելի և կարելի է ուտել ցանկացած ուտելիք, ջուր խմել ծխել և այլն: Այդ առթիվ Ղուրանում ասվում է. «Ծովապահության զիշերը ձեր կանանց հետ պղծությունը ձեզ թույլ է տրվում... ուրեմն հիմա գործադրեցն՝ ք և պահանջեցն՝ ք ինչ որ Աստված ձեզ թույլ է տալիս և կերեք ու խմեցներ մինչև արշալույսի ժամանակ զանազաներ սպիտակ թելը սև թելից. հետո պահեցնեք ծումը մինչև զիշեր» (2:183): Նման կարգը, ինչպես նշվել է, պահպանվում է ողջ մեկ ամսվա ընթացքում:

Եթե ծումը ընդհատված է հարգելի պատճառով (օրինակի համար «հանուն հավատի պատերազմի», ճանապարհորդության, հիվանդության, հղիության և այլն), ապա հետազայում հավատացյալը պարտավոր է լրացնել ծոմի բաց թողնված օրերը: Իսկ եթե ծումը ընդհատված է անհարգելի պատճառով, ապա հետազայում ծոմ պահելու հետ միաժամանակ ծումը խախտողը պետք է աղքատներին բաժանի ողորմություն: Հերի և ծծկեր երեխային կերակրող կանայք, երեխաները և պատանիները, տարեցները, անբուժելի հիվանդները և այլն կարող են ծումը փոխարինել աղքատներին ողորմություն բաժանելով ծոմի բաց թողնված յուրաքանչյուր օրվա համար, եթե իհարկե տվյալ անձի նյութական միջոցները տալիս են դրա հնարավորությունը: Այն անձինք, որոնց վիճակը կարող է վատքարանալ ծոմ պահելու պատճառով, նույնպես ազատվում են այդ պարտականությունից:

Այն դեպքում, եթք այս կամ այն անձը ծոմ պահելու շրջանում չի դիմացել և ցերեկային ժամերին կերել է, խմել, կամ կատարել շթույլատրված արարք, դրանով իսկ խախտելով ծումը, նա պարտավոր է այդ խախտումը փոխատուցել կրկնակի ծոմով (քաֆֆարա) 60 օրվա ընթացքում: Համաձայն շարիաթի, այդ քավիչ ծումը կարելի է փոխարինել բարեգործական որևէ արարքով,

կամ 60 օր կերակրելով որևէ աղքատի: Այլ կերպ ասած, քնակցության ունեոր խավերի համար նախատեսված էր փրկազնի միջոցով ծոմ պահելուց ազատվելու հնարավորությունը:

Առանձնապես հավատավոր և բարեպաշտ ծնողները հաճախ ստիպում էին, որ շատ վաղ հասակից երեխաները ծոմ պահեն: Սակայն որպես կանոն, իշլամական երկրներում տասներկու տարեկան հասակից սկսած երեխաները մեծերի հետ հավասար պահում են ծոմ:

Ծոմի ժամանակ մուսուլմանների կողմից սնունդ չընդունելը հավատացյալներին հնարավորություն է տալիս վարժվելու ինքնասահմանափակման, երբ մարդը տիրապետում է իր մարմնին և սանձահարում իր ցանկությունները: Ծոմ պահելու ժամանակաշրջանը բառացիորեն հագեցված է մարդկանց ընդիհանրականության զգացմամբ: Ծոմը մարդկանց հարկադրում է զնահատել այն, ինչ իրենք ունեն:

Գործնականում մուսուլմանական ծոմը հարուստների համար այնքան էլ ծանր չէ, քանի որ զիշերվա ընթացքում երկու անգամ սնվելով, նրանք կարող են ցերեկը հանգստանալ, քնել և այն: Սակայն ծոմը շատ ծանր է արհեստավորների, զյուղացիների, առհասարակ ֆիզիկական աշխատանքով զբաղվողների, աղքատների և այդ կարգի մարդկանց համար: Առանձնապես նրանք ծոմը ծանր են տանում այն ժամանակ, երբ ռամադանը ընկնում է ամռան ամիսներին. ամառային երկար օրերին, ստվերի տակ 30-40 աստիճան ջերմաստիճանի ներքո նրանք ստիպված են լինում քաղցած փորով, առանց մի կարիլ ջուր խմելու, հաճախ կիզիչ արևի տակ աշխատել:

Ծոմի ողջ ընթացքում մուսուլմանները կարդում են Ղուրանը, նրանցից շատերը գնում են մզկիթ զիշերային աղոթք անելու

համար, որը հայտնի է «թարավի» անունով: Դա կատարվում է կամավոր սկզբունքով:

Ծոմը համարվում է տարվա ընթացքում գործած մեղքերը քավելու լավագույն միջոցը: Նշանավոր աստվածաբան Ղազալին գտնում էր, որ ծոմը հիանալի միջոց է նաև կրթերը սանձահարելու համար:

Ծոմի շրջանում մուսուլմաններից պահանջվում է նաև դրսորել բարոյական զավկածություն: Հատկապես դատապարտելի է հայիոյելը, սուտ խոսելը, զրպարտելը, հոգևոր անձին վիրավորելը և այլն: Այդ արարքները չեղյալ են դարձնում ծոմը և պահանջում են կրկնակի փոխհատուցում: Մուսուլմանական աստվածաբանների պնդմամբ, ծոմը հավատացյալների մոտ ամրապնդում է հավատն առ Ալլահը: Յուրաքանչյուր ծոմապահության օրվա վերջին հավատացյալը պետք է երախտագիտության խոսքեր ասի Ալլահի հասցեին: Ռամադանի 26-ի լույս 27-ի գիշերը տեղի է ունենում ընդհանուր զիշերային աղոթք, որը կոչվում է «նախասահմանման» կամ «կանխորոշման զիշեր», երբ ավանդության համաձայն, երկնքից իջել է Ղուրանը:

Նա, ով ժխտում է ծոմի պարտադիր լինելը, համարվում է անհավատ: Իսկ նա, ով առանց հարգելի պատճառի ծոմ չի պահում, ենթակա է բանտարկության:

Ռամադան ամսվա ծոմը ավարտվում է իդ ալ-Ֆիթր («թարախունան պասի տոն») կոչված տոննակատարությամբ, որը մուսուլմանները նշում են մեծ հանդիսավորությամբ ու բերկրանքով ինչպես մզկիթներում, այնպես էլ տանը: Դա ամենամյա մուսուլմանական մեծ տոններից մեկն է:

Պարտադիր ծոմի հետ միաժամանակ իսլամը թույլ է տալիս նաև կամավոր ծոմեր տարվա ցանկացած ժամանակ:

Իսլամի չորրորդ հիմնայունը պարտադիր ողորմությունն է՝ զարյաթը («ազ-զարյաթ»), որը բառացի նշանակում է «մարդում»: Այն հիմնված է հետևյալ զաղափարի վրա. այս աշխարհի բարիքները մարուր չեն, դրանց ձեռքբերումը և օգտագործումը թույլատրվում է միայն մարրման ճանապարհով, որն է դրանց մասնակի վերադարձը աստծուն: Հենց այդ պատճառով սկզբնապես զարյաթն ունեցել է մարդում իմաստը: Հարուստը Ալլահի առջև մարրվում է չափից ավելի շատ հարստության մեղքից: Մուսուլմանները գտնում են, որ միայն աստված կարող է որոշել, թե ով պետք է ծնվի հարուստ և ով աղքատ, ուստի բոլորը մեկը մյուսի նկատմամբ ունեն որոշակի պարտականություններ: Աղքատներին օգնություն ցուցաբերելը հարուստների պարտականությունն է: Մուսուլմանները հավատում են, որ ողորմություն տալը մարդուն ազատում է մեղքերից և օգնում է, որ նա արժանանա դրախտի երանությանը:

Պարտադիր ողորմությունը գանձվում է հարուստներից և համեմատաբար ուներներից, լինեն նրանք վաճառականներ, արհեստավորներ, տնատերեր, գյուղացիներ և այլն: Այդ կարգի մարդկանց եկամուտներից կամ գույքից գանձված գումարները հատկացվում են աղքատներին, այրի և միայնակ կանանց, որբերին, հիվանդներին, պարտքերի մեջ գտնվողներին, կամ օգտագործվում են խլամական համայնքի (ումմայի) կարիքների բավարարման համար: Դուրանում մեկ առ մեկ հիշատակվում են մարդկանց այն խմբերը, որոնց անհրաժեշտ է օգնություն ցուցաբերել:

Զարյաթի վճարման չափը կարող է նվազեցվել, եթե եկամուտը ձեռք է բերվել ծանր աշխատանքի հետևանքով: Զարյաթը գանձվում է հարկահանների կողմից: Սկզբնական շրջանում զար-

յաթը գանձվում էր բնամթերքով, սակայն աստիճանաբար այն կորցնելով իր բարեգործական բնույթը վեր էր ածվել սովորական հարկատեսակի, որը գանձվում էր դրամով:

Ժամանակին անշարժ գույքից ստացվող բոլոր եկամուտները նախատեսված էին աստվածահաճությունների պահպանման կամ հասարակական շինությունների կառուցման համար: Այդ կառույցը կոչվում էր «Վարք»: Վարքերը մեծ ծառայություն են մատուցել իսլամին: Նրանցից ստացվող եկամուտների հաշվին կառուցվել են հասարակական շինություններ՝ հիվանդանոցներ, դպրոցներ, համալսարաններ և այլն:

Քանի որ Մադինայում մուսուլմանական համայնքի հիմնադրման օրվանից կրոնական համայնքի և պետության, հոգևոր և աշխարհիկ իշխանության հասկացությունները նույնական էին և չէին տարբերվում միմյանցից, ուստի մուսուլմաններից գանձվող զարյաթի գումարները փաստորեն անցնում էին արարա-մուսուլմանական պետության տրամադրության տակ: Օմայան արքայատոհմի կառավարման շրջանում (661-750 թթ.) ըստ Էռության զարյաթից հավաքված գումարների միայն աննշան մասը սկսեց հատկացվել բարեգործական նպատակներով՝ աղքատներին, հիվանդներին և այլն օգնություն ցուցաբերելու համար:

Իսլամական հասարակության մեջ զարյաթը պետական հարկատեսակ չի համարվում, այն դասվում է կրոնական հարկերի շարքը: Ներկայումս իսլամական մի շարք երկրներում զարյաթը արդեն դարձել է պետական հարկատեսակ: Այն գանձվում է միայն շափահաս, աշխատունակ մուսուլմաններից:

Պարտադիր զարյաթից բացի իսլամի մեջ առկա է նաև կամավոր ողորմությունը՝ սահարան (ավելի ստույգ «սահարաթ աթքաթավվու»), ըստ որի հարուստները ողորմություն են հատկաց-

նում աղքատներին, մզկիթներին, մեղրեսեներին (հոգևոր դպրոցներ), մանկապարտեզներին, թափառող դերվիշներին և այլն: Այդ ողորմությունը կարող է լինել ինչպես դրամով, այնպես էլ անշարժ գույքով՝ հողերով, զանազան կալվածքներով և այլն: Համարվում է, որ նման նվիրատվությունների շնորհիվ կարելի է մեղերը քավել և հոգին փրկել գեհենի տանջանքներից:

626 թվականից իւլամական իրականության մեջ ավելացվեց ևս մեկ պարտադիր հարկատեսակ հրեաների ու քրիստոնյաների համար. դա շնչահարկն էր կամ զլսահարկը, որը կոչվում էր շիզիե (ջիզյա):

Իսլամի հինգերորդ հիմնայունը դա հաջն է՝ ուխտագնացությունը իսլամի առաջին սրբավայր Մեքքա: Հաջը, թեկուց և կյանքում մեկ անգամ, պարտադիր է, սակայն միայն այն չափահաս մուսուլմանների համար, որոնք ի վիճակի են կատարելու նման հեռավոր ճանապարհորդություն: Եթե մահմեդականը ի վիճակի չէ վճարել ուխտագնացության հետ կապված ծախսերը, կամ ծանրաբեռնված է մեծ ընտանիքով, ապա նա ազատվում է հաջ կատարելու պարտականությունից: Որոշ մուսուլմաններ հաջ են կատարում մի քանի անգամ: Ցանկացած մահմեդական, որն այս կամ այն պատճառով ի վիճակի չէ կատարելու ուխտագնացություն (ծերության, հիվանդության և այլ պատճառներով), կարող է իր փոխարեն ուղարկել մեկ ուրիշի, նրան վճարելով հաջի հետ կապված բոլոր ծախսերը: Ուխտագնացությունից ազատվում են նաև տկարամիտները, ինչպես նաև այն կանայք, որոնք որևէ տղամարդ ազգական չունեն, որպեսզի ուղեկցի իրենց: Կանայք իրավունք ունեն մեկնելու ուխտագնացության միայն այն դեպքում, եթե նրանց ուղեկցում է ամուսինը, եղբայրը կամ որևէ այլ տղա-

մարդ ազգական: Ազգակցական կապը պետք է վկայված լինի համապատասխան փաստաթղթերով:

Եթե որևէ մեկը հաջ մեկնելու փոխարեն որոշել է այդ նպատակի համար կուտակած դրամը հանձնել խիստ կարիքի մեջ գտնվող կամ պարզապես դրամի կարիք ունեցող մարդու, ապա ուխտագնացության մեկնելու նրա մտադրությունը (նիյա) աստծու կողմից ընդունելի կլինի որպես կատարելապես իրականացված ուխտագնացություն:

Հաջ կատարողը պետք է լինի առողջ դատողության տեր և չափահաս անձնավորություն: Չափահաս անձինք իրենց հետ կարող են վերցնել երեխաների: Սակայն ոչ չափահասների համար դա չի դիտվի որպես ուխտագնացություն: Եթե հաջ կատարելու համար անհրաժեշտ գումարը ձեռք է բերվել անազնիվ ճանապարհով, ապա այդ ուխտագնացությունը ընդունելի չի լինի և կորցնում է իր նշանակությունը:

Գոյություն ունի հաջի երկու տեսակ: Առաջինը կոչվում է «փորք հաջ» (ալ-ումրա): Այդ ուխտագնացությունը կատարվում է տարվա ցանկացած ժամանակ և ոչ թե զոհարերության տոնի ժամանակ: Ընդ որում, ումրայի ժամանակ կատարվում են նույն ծիսակատարությունները, բացի զոհ մատուցելուց: Փոքր ուխտագնացությունը համարվում է աստվածահաճո գործ, սակայն այն չի ճանաչվում մեծ ուխտագնացության հետ համարժեք:

Երկրորդը կոչվում է «մեծ հաջ» («ալ-հաջ ալ-քաբիր»), որը կատարվում է տարին մեկ անգամ, մուսուլմանական օրացույցի տասներկուերրորդ ամսվա սկզբին կամ գուլ-հիջա ամսին (ապրիլին): Երկու դեպքում էլ Մերքա ուխտագնացության մեկնելիս հավատացյալները կատարում են հատուկ ծիսական լվացումներ, կտրում են մազերը, եղունգները և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ աղքատների, հիվանդների, կանանց և առհասարակ կախում ունեցող մարդկանց համար հաջը պարտադիր չէ, սակայն այդ կարգի մարդիկ որպես կանոն այնուամենայնիվ կատարում են ուխտագնացություն:

Հաջը պետք է զուգադիպի կամ հարմարեցվի զոհաբերության տոնի՝ (իդ ալ-ազհայի կամ իդ ալ-դուրքանի, թյուրքալեզու ժողովուրեների մոտ դուրքան-բայրամի), իսլամի երկու մեծ տոներից մեկի ժամանակին: Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս, սովորաբար ուխտագնացության մեկնելիս հավատացյալները կազմում են քարավան կամ ուխտագնացների խմբեր:

Մերքայում և Մաղինայում լինելու իրավունք ունեին միայն մուսուլմանները, այլադավաններին արգելված էր թափանցել այդ սրբազն քաղաքները: Մերքան համարվում էր «հարամ», որն արաբերեն երկիմաստ բառ է և նշանակում է ինչպես «սրբավայր», այնպես էլ «արգելված»: Մերքա տանող ճանապարհներին խստիվ ստուգվում են ճանապարհորդների փաստաթղթերը, պարզելու համար, թե նրանք իսկապես ուխտավոր-մահմեդականներ են, թե ընդամենը հետաքրքրասեր զբոսաշրջիկներ, մարսանենգներ և այլն: Մերքայի տարածքը համարվում է սրբազն և խստիվ արգելվում է այնտեղից իր հետ տանել թեկուզ մի պտղունց հող:

Միայն XIX դարում ոչ մեծ թվով եվրոպացի քրիստոնյաների (նրանցից առաջինը եղել է գերմանացի Բուրհարդը (1814 թ.), որին հաջողվել է մուսուլմանի զգեստներով ծավուզած թափանցել Մերքա: Դրանցից Մերքայի, Քաքարայի, ինչպես նաև հաջի ծիսակատարությունների լավագույն նկարագրությունը տվել է հոլանդացի արքաքետ, իսլամագետ Սնուր Հյուրզրոնյեն:

Սուտք գործելով «սրբազն հողը», ներկայումս Սաումյան Արաբիա, որի տարածքում են զտնվում Մերքան և Մաղինան,

ուխտագնաց-մահմեդականը հաջ կատարելիս պարտավոր է պահպանել երեք կարևոր պայմաններ. առաջին՝ նա պետք է հազ-նի հատուկ զգեստ, որը կոչվում է «իհրամ»: Իհրամի իմաստը կա-յանում է նրանում, որ բոլոր ուխտավորների մեջ հաստատվում է հավասարություն, նպատակի միասնություն, ինքնազոհաբերման պատրաստակամություն և հոգու մաքրություն: Հայտնի է, որ մարդու զգեստը հաճախ ցուցադրում է տվյալ անձի բարեկեցութ-յան աստիճանը, նրա պաշտոնը կամ էլիտար պատկանելությու-նը: Մինչդեռ իհրամ հագնելու պայմաններում բնակ նշանակութ-յուն չունի, թե այս կամ այն ուխտավորը ով է, ինչ պաշտոնի ու դիրքի, ինչպես նաև ինչ ունեցվածքի տեր է, քանի որ բոլորը հագնված են միատեսակ և աստծո առջև ներկայանում են կատա-րելապես հավասար վիճակում: Իհրամի կանոնների համաձայն, տղամարդիկ չպետք է իրենց վրա կրեն զանազան զարդեր և մա-տանիներ, իսկ կանանց թույլատրվում է կրել միայն ամուսնական մատանի: Իհրամի շրջանում չի կարելի կտրել մազերը, եղունգնե-րը, սափրիվել, օգտագործել օծանելիք:

Երկրորդ պայմանը հետևյալն է. ուխտավորը պետք է յոթ անգամ պտտվի Քարբայի շուրջը («թալաֆ»): Երրորդ՝ պետք է Ա-րաֆաթ կոչված հովտում կատարի հատուկ ծիսակարգ («վու-րուֆ»): Եվ չորրորդ՝ պետք է Արաֆաթ հովտից վերադառնալուց հետո Քարբայի շուրջը կատարի պտույտներ (ըստ հնարավո-րության ուխտագնացներն աշխատում են առաջին երեք պտույտը կատարել վազելով): Այդ պտույտները կարելի է կատարել ինչպես ժամանումից անմիջապես հետո, այնպես էլ ցերեկվա և զիշերվա ցանկացած ժամին: Եթե ուխտագնացներին հաջողվում է մոտե-նալ Սև քարին (ալ-Խուզը ալ-Ասվադ), որն ամրացված է Քարբայի պատի անլյուններից մեկում, նրանք համբուրում են այն կամ

ձեռքով շոշափում, իսկ նրանք, որոնց չի հաջողվում մոտենալ նրան, պարզապես հեռվից բարձրացնում են ձեռքը ի նշան ողջոյ-նի: Ծերերին և հիվանդներին տանում են հատուկ պատգարակներով:

Քաաբայի շուրջը պտույտներ կատարելուց հետո ուխտավորները մեկնում են Իբրահիմի կայանը (մաքրամ Իբրահիմ) և կատարում երկու ռաք՝ առաք: Այնուհետև կատարում են ծիսական վազք Սաֆա և Մարվա բլուրների միջև: Այդ ծիսակատարությունը կատարվում է ի հիշատակ Խսմայիլի մոր կողմից ջուր որոնելու հուսահատ փորձերի, որը երեխայի հետ թողնված էր Քաաբայի մոտերքում: Համաձայն ավանդության, մեռնող Խսմայիլի ոտքերի տակ դուրս է ժայթքում փրկարար ջուրը, որը կոչվում է Զամզամ: Այն իրենից խորհրդանշում է աստծո ամենուրեք ներկայությունը, որը հասնում է տառապյալներին և պարզեւում է կյանք: Ուխտավորները Զամզամի աղբյուրից ջուր են խմում, կամ լցնում են իրենց հատուկ փոքրիկ շնորհը:

Թավաֆը կատարելուց հետո մուտքմանը համարվում է փոքր ուխտագնացության (ումրայի) անհրաժեշտ պայմաններն իրագործած: Դրանից հետո տղամարդիկ սափրում են իրենց զլուխները: Կանայք նույնպես կտրում են իրենց մազերից մի փունչ և այն թաղում հողի մեջ: Ծիսական այդ արարուվ սկսվում է իհրամի վիճակից դուրս գալը: Այնուհետև նրանց թույլատրվում է հագնել իրենց սովորական օգեստները:

Հաջ կատարողի երրորդ պարտականությունն է Արաֆար կրչված հովտում հատուկ ծիսակարգ կատարելը, որը կոչվում է «վուրուֆ»: Այն կատարվում է հետևյալ կերպ: զուլ-հիշրայի ութերորդ օրը կատարելով լրիկ լվացում, ուխտագնացները կրկին հագնում են իրենց իհրամի օգեստը և շարժվում Մինա հովիտը, ո-

իր գտնվում է Քաաբայից 10 կմ հեռավորության վրա: Մինայում թեև կան մի քանի հյուրանոցներ, սակայն ուխտագնացների մեծ մասը գերադասում է տեղավորվել հսկայական չափերի հասնող վրանարարաբում: Իններորդ օրը բոլոր ուխտագնացները ժամանում են Արաֆաթ հովիտը (Մերքայից 24 կմ արևելք), որպեսզի Գթության Լեռան վրա կատարեն աստծուն ուղղված իրենց ուխտը: Դա իսկապես ուխտագնացության ամենակարևորագույն մասն է: Ուխտագնացները պետք է բաց զլխով (միայն տղամարդիկ) կանգնեն կիզիչ արևի ճառագայթների տակ, անընդհատ խորհրդածելով աստծու մասին և նրանից աղերսելով գթություն: Այնուհետև տեղի է ունենում քարերով սատանային հարվածելու արարողությունը: Ուխտավորները գնում են Մինայի հովիտը, որտեղ հնում գտնվել են հեթանոսական կուռքերը: Ըստ ավանդության, այդ վայրում սատանան (Իբլիս) փորձության է ենթարկել Իբրահիմին, որը կոչ էր անում ընդունել Միաստվածությունը: Մինա գնացող ճանապարհին հավաքելով քարերը, ուխտավորները դրանք նետում են այն տեղերը, որտեղ գտնվել են այդ կուռքերը: Դրանից հետո սկսվում է կենդանիների հանդիսավոր զոհաբերությունը:

Զուլ-հիջրայի իններորդ օրը, ունեոր ուխտավորները գնում են զոհաբերության կենդանիներ՝ ոչխար, այծ, ուղտ, ցուկ և Մինա հովտում զոհ մատուցում աստծուն ի հիշատակ Իբրահիմի պատրաստակամության զոհաբերելու իր սեփական որդուն, որի փոխարեն ամենավերջին պահին աստծո կամոր որդու փոխարեն զոհաբերվեց մի խոյ: Զոհաբերության այդ տոնակատարությունը կոչվում է Իդ ալ-Ադհա: Դա մոտույմանների զլխավոր տոնն է, որը նշում են ամբողջ աշխարհի մահմեդականները:

Վերադառնալով Մերք, ուխտավորները կատարում են հրաժեշտի թափաֆ, այսինքն յոթ անգամ պատվում են Քաաբայի շուրջը, որից հետո իհրամը հանվում է և ուխտագնացությունը համարվում է ավարտված:

Հաջի բոլոր անհրաժեշտ պայմանները կատարելուց հետո ուխտավորը ստանում է «հաջի» հարգալից ու պատվավոր կոչումը (կին ուխտավորը «հաջա»): Հաջին տալիս են կանաչ չալմա: Երբ ուխտագնաց հաջին վերադառնում է տուն, նրա ոտքերի առջև զոհաբերում են զանուկ և մեծ շուրով կազմակերպում հանդիսավոր ընդունելություն:

Հաջի ժամանակ արգելվում է առևտրով զբաղվել, սափրվել, օգտագործել օճանելիք և հոտավետ օճառներ: Կանայք ամբողջովին պետք է ծածկված լինեն, այնպես, որ երևա միայն դեմքը, ձևոքերը և ոտքերի մերկ ներքանները: Ուխտավորները ոտքերին կրում են սանդալներ, կամ պետք է լինեն ոտարոբիկ: Իրենց ազրեսիվությունը սանձահարելու և աստծո արարչազործած արարածների հետ իրենց միասնությունը զգալու համար, ուխտավորները չպետք է արյուն թափեն սպանելով կենդանիներին (թույլատրվում է սպանել միայն օձերին, կարիճներին, լվերին և փայտոջիւներին): Որպեսզի ուխտավորների մոտ զբարտությունը զարգացում ունենա, բացառվում է ամեն տեսակի որսը: Սերը դեպի բնությունը ամրապնդելու համար արգելվում է ոչնչացնել կանաչը, շարդել ծառերը և այլն:

Ներկայումս մուսուլմանական երկրներում գոյություն ունեն հատուկ գործակալություններ, որոնք զբաղվում են ուխտագնացություն կազմակերպելու հարցերով: Նախկինում այդպիսի ճանապարհորդությունը կապված էր մեծ դժվարությունների հետ: Սակայն ներկայումս ուխտագնացների մեծ մասը օգտվում է օդա-

յին տրանսպորտից, թեև կարելի է օգտվել նաև երկաթուղային և ծովային փոխադրամիջոցներից: Սառւյան Արաբիայի Զիրդա քաղաքում գոյություն ունի գերժամանակակից օդանավակայան: Զիդայից մինչև Մերքա 72 կիլոմետր է, որն անցնելու համար նույնպես կառուցված է արազընթաց ավտոմոբիլային ճանապարհ:

Ներկայումս միջին հաշվով միայն զու-լ-հիջջա ամսին աշխարհի տարբեր երկրներից Մերքա են ժամանում մեկ միլիոնից ավելի ուխտագնացներ, չհաշված նրանց, որոնք տարվա մնացած ամիսներին կատարում են «փոքր ուխտագնացություն»:

Պետք է սակայն նշել, որ մեր ժամանակներում իսլամի մեջ կուլտը ենթարկվել է որոշ փոփոխությունների: Այն ծիսակատարությունները, որոնք հակասում են ժամանակի ոգուն, ենթարկվում են փոփոխության: Հոգևորականությունը հարկադրված է հաշվի նստել այն փոփոխությունների հետ, որոնք կատարվում են հավատացյալների գիտակցության մեջ: Նրանք այլևս չեն պնդում, որ խստիվ պահպանվեն ծոմի կանոնները, պարտադիր կարգով տրվեն ողորմության տարբեր տեսակներ, կատարվի թլպատում և այլն: Ներկա պահանջների համաձայն զոհաբերությունը ևս իրականացվում է «ըստ հնարավորության»: Կամ անասունի զոհաբերումը կարելի է փոխարինել որևէ թոշունի զոհաբերությամբ: Թույլատրվում է նաև, որ հավատացյալների մի խումբ համատեղ կերպով գնեն զոհաբերության կենդանի, ծախսերի բեռք ավելի թեթև տանելու համար:

* * *

Բարի լայն իմաստով կրոնը («դին») ձևավորվում է հետևյալ երեք տարբերից հավատ («իման»), բարեպաշտություն («իհսան») և իսլամ (իրեն աստծուն հանձնելը, հնագանդություն աստծուն):

Այստեղից էլ բխում է մուալիմ, մուսուլման բառը, այսինքն աստծուն հնագանդ:

Նշված դոգմաները պաշտոնապես չեն ամրագրված իսլամի մեջ, ինչպես դա արվել է այլ կրոններում (օրինակ, քրիստոնեական հավատութանգանակը): Սակայն մուսուլմանական զիտնական-աստվածաբանները հատկապես XI դարից սկսած, փորձեր են կատարում շարադրելու մահմեդական հավատի հիմունքները:

Մահմեդական աստվածաբանների մոտ սուր վեճերի առարկա է հանդիսացել նաև հետևյալ հարցը. արդյոք հավատը կայո՞ւն կատեգորիա է, թե այն կարող է մեծանալ, աճել, կամ ընդհակառակը, նվազել, փոքրանալ: Այդ հարցը մնում է բաց, քանի որ ումանք համարում են, որ հավատն ըստ էության բաղկացած է ներքին խորը ընկալումից («թասդիմ»), որի պայմաններում հնարավոր չէ հավատի աստիճանի որևէ փոփոխություն: Մյուսները ենթադրում են, որ թասդիմի վրա խարսխված հավատը, եթե այն ամրակայված է բարի գործերով, մերթ կարող է լինել ավել, մերթ պակաս: Այս երկրորդ տեսակետի կողմնակիցները իրենց տեսակետը հիմնավորելու համար վկայակոչում են Ղուրանը, որտեղ երբեմն խոսվում է հավատի աճի մասին:

Իսլամը հավատացյալների վրա դնում է ևս մեկ կրոնական պարտավորություն, որը թեև չի մտնում հավատի հինգ սյուների թվի մեջ, սակայն գործնականում իսլամի պատմության մեջ այն ունեցել է ոչ պակաս կարևոր նշանակություն: Դա «պատերազմն է հանուն հավատի», «սրբազն պատերազմը»՝ ջիհադը կամ դաշտան (հոգն. դագավաթ):

Ավար ձեռք բերելու նպատակով ասպատակություններ կատարելու պրակտիկան («դագավաթ») լայն տարածում ունեցող եր-

ևույթ էր դեռևս մինչյալամական շրջանում: Խալամի ձեավորման սկզբնական շրջանում զիհադ հասկացությունը ընկալվում էր որպես պայքար խալամը պաշտպանելու և այն տարածելու համար: Զիհադը նախ և առաջ զինված պայքար էր «անհավատների» դեմ և առհասարակ բոլոր նրանց դեմ, որոնք Ալլահին չեն ճանաչում որպես իրենց միակ աստվածը:

Ձենքը ձեռքին խալամի տարածումը դիտվում էր որպես կրոնական պարտավորություն: Յուրաքանչյուր մահմեղական կամ պետք է անձամբ, զենքը ձեռքին մասնակցեր այդ պատերազմին, կամ օգնություն ցուցաբերեր խալամական բանակին իր ունեցվածքով և դրամով:

Դուրանի մեջ մենք զտնում ենք հրահանգներ այն մասին, որ մարդկանց պետք է աստծո ճանապարհին բերել «իմաստուն և բարի խրատներով»: Այստեղ ասվում է. «կանչի՛ նրանց քո Տիրոց ճանապարհի մեջ իմաստութիւնով եւ անուշ քարոզելով եւ վիճաբանութիւն արա՛ նրանց հետ անուշ կերպով» (16:126): Սակայն միենանույն ժամանակ խալամի սուրբ զիրքը պատվիրում է ոչնչացնել «անհավատներին»: «Ուրեմն երբ դուք հանդիպեք անհաւատներին, կտրեցէ՛ք նրանց վիզերը մինչեւ նրանց շարդեք, գերեալների կապերը պնդացրէ՛ք» (47:4): «Ո՛վ հավատացեալներ, ձեզ համար պաշտպան մի՛ ընտրեք ձեզանից առաջ զիրք ստացողներիցն եւ անհավատներիցն այնպիսի անձինք, որ ձեր կրոնքին ծաղրում ու ծիծաղում են, եւ վախեցէ՛ք Աստուածանից եթէ հաւատացեալ եք» (5:62): «Եւ դուք պատերազմեցէ՛ք նրանց հետ սպանելով մինչեւ որ հակառակութիւն չը լինի եւ բոլոր կրօնքը Աստուծունը լինի: Եւ եթէ զաղաքեն, ահա Աստուած տեսնում է նրանց արարքը» (8:40): «Եւ սպանեցէ՛ք նրանց որտեղ էլ նրանց պատահեք, եւ նրանց դո՛ւս արեք որտեղից նրանք ձեզ դուրս են արել... Եւ երբոր ձեզ

հետ պատերազմնեն, այն ժամանակ նրանց սպանեցէք: Այսպէս է անհաւատների հատուցումը (2:187): «Եւ սպանութիւններով պատերազմ արէք, Աստուծոյ ճանապարհումը, որովհետև նա լսող ամենազէտ է» (2:245):

Դուրանը հանում է այլադավանների սպանության մեղքը. «Եւ դուք չ'սպանեցիք նրանց, այլ Աստուած սպանեց նրանց» (8:17): Միաժամանակ իսլամի սուրբ գրքում խոսվում է նախահարձակ լինելու անթույլատրելիության մասին. «Եւ սպանելու աշխատեցէք նրանց որ աշխատում են ձեզ սպանել, բայց դուք մի սկսէք, որովհետև Աստուած սկսողներին չեւ սիրում» (2:186):

Ո՞ւմ դեմ կարող է ուղղված լինել սրբազն պատերազմը կամ ջիհադը: Վաղ մահմեդականների պատկերացմամբ ողջ աշխարհը բաժանվում էր երկու մասի. իսլամի աշխարհ («դար-ալ-իսլամ»), որտեղ ապրում և տիրապետում են մուսուլմանները և պատերազմի աշխարհ («դար-ալ-հարբ»), որտեղ ապրում են «անհավատները», որոնք ըստ ջիհադի օրենքների պետք է նվաճվեն, հնազանդեցվեն և ընդունեն իսլամը: Այդ երկու ծայրահեռ հասկացությունների միջև գոյություն ունի մի միջանկյալ գոտի. դա մի տարածք է, որն ունի այլադավան բնակչություն և իր գոյությունը իսլամական իշխանության ներքո պահպանելու համար պարտավոր է իսլամի զանձարանը մուծել հարկեր, համաձայն կնքված պայմանագրի: Այդ երրորդ տարածքը կոչվում էր «դար աս-սուլիս»:

«Դար ալ-իսլամում» դասական մահմեդականությունը ճանաչում է մարդու գոյության երեք կարգավիճակ. առաջին՝ «ուղղադավաններ», այսինքն մուսուլմաններ, «հովանավորյալ բնակչություն» («ահլ ազ-զիմմա» կամ «զիմմա»), «բազմաստվածության հետևորդներ, որոնք կամ պետք է դավանափոխ լինեն և ընդունեն իսլամը, կամ անհամաձայնության դեպքում ոչնչացվեն:

«Հովանավորյալների» կարգավիճակում գտնվողները դա այսպես կոչված Սուրբ զիրք ունեցող հավաքականություններն են կամ «Գրքի մարդիկ» («ահլ ալ-թիթար»), այսինքն հուղարականները և քրիստոնյանները, որոնց, ինչպես և մուսուլմաններին, ուղարկված էր հայտնություն և որոնք երկրպագում են միակ աստծուն: Այսպիսով իրեաների և քրիստոնյաների համար ճանաչվում էր նրանց գոյության իրավունքը որպես այլաղավանների առանձին համայնք, պայմանով, որ նրանք բոլոր հպատակների նման վճարեն հարկեր՝ հողային հարկ՝ «խարաջ» և այլաղավանների համար սահմանված հատուկ շնչահարկ կամ զիխահարկ («ջիղիե»), որն իրենով նշանափորում էր նրանց հպատակությունը մուսուլմանների նկատմամբ:

Զիհաղի սկզբունքն ուներ իր որոշակի կանոններն ու օրենքները: Այսպես, մինչև «անհավատների» դեմ պատերազմ հայտարարելը և ռազմական գործողություններ սկսելը անհրաժեշտ էր իրանց առաջարկել, որ ընտրեն «Ճշմարիտ հավատը»: Եթե նրանք կամովին տան իրենց համաձայնությունը, անմիջապես կընդունվեն իսլամական համայնքի ումմայի մեջ և կստանան այն նույն իրավունքներն ու արտոնությունները, ինչ ունեն մուսուլմանները: Հավատուրացության դեպքում, այսինքն եթե փորձեն հետազոտում իրաժարվել իսլամից, նրանց սպասում էր մահապատճեր: Այն դեպքում, եթե «անհավատները» հրաժարվեին իսլամն ընդունելուց, հնարավոր էր հարցի լուծման երկու ճանապարհ. կամ խնդիրը պետք է լուծում ստանար նրանց և մուսուլմանների միջև զինված պայքարով, կամ նրանք հարկադրված կլինեն վճարելու հարկեր մուսուլմանների հովանավորությունը ստանալու համար: Այդ դեպքում օրենքը թույլ էր տայիս, որ «անհավատները» պահեն իրենց կրոնն ու պաշտամունքը:

Այսպիսով, «պայմանագրի» կամ «պարտավորության» (ահլազգիմմա) կարգավիճակ ունեցող և մուսուլմանների հովանավորությունն ընդունած մարդիկ բացառապես կարող էին լինել «Գրքի մարդիկ»՝ հուղայականներն ու քրիստոնյաները: Ավելի ուշ այդ նույն կարգավիճակին արժանացան նաև զրադաշտականները, Պաղեստինի սամարացիները, Խարբանի սարիյացիները: Այդ առթիվ Ղուրանում ասվում է. «Իրավ նրանք որ հաւատում են, եւ նրանք որ իրեայ են և Նազովրեցիք (քրիստոնյաները՝ Վ. Բ.) և Սարէացիք, որ հաւատացել են Աստուծուն և վերջի օրւան եւ բարիք են գործում նրանց վարձքը իրանց Տիրոջ մօտ է, եւ նրանց վրայ վախ չըկայ եւ նրանք չեն տրտմի» (2:59):

Ինչ վերաբերում է բոլոր հեթանոս-կուապաշտներին, ապա նրանց տրվում էր ընտրություն կատարելու իրավունքը մահիւան և իսլամն ընդունելու միջև:

Սակայն այդ տարբերակումը «Գրքի մարդկանց» և կուապաշտների միջև շատ երկար չտևեց, քանի որ զիմմիների կարգավիճակը տարածվեց այն բոլոր հավաքականությունների վրա, որոնք կամովին պարտավորվում էին խսամի զանձարանին վճարել զիլահարկ կամ շնչահարկ՝ ջիզիե: Այդ առթիվ ևս Ղուրանը արձագանքում է հետևյալ կերպ. «Պատերազմեցէր նրանց հետ, որ չեն հաւատում Աստուծուն եւ ոչ էլ վերջին օրւան եւ պիհծ չեն համարում Աստուծոյ եւ նրա մարգարեկի պիհծ հրատարակածը եւ արդար դատաստան չեն անում նրանցից, որ Գիրք է տրված նրանց, մինչեւ որ ձեռքով հարկը տան եւ ինք նւաստած լինեն» (2:29):

«Հովանավորության» վերաբերյալ պայմանագրերում հստակ որոշված էր նաև, թե ովքեր են պարտավոր վճարելու հարկեր և ինչ չափով: Կանայք, երեխաները և ծերերը, որոնց հետ

չեր կարելի պատերազմել, առհասարակ ազատվում էին հարկեր վճարելու պարտավորությունից: Հարկերը թույլատրվում էր վճարել ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով, ի բացառյալ գինիով և սատկած կենդանու մսով: Նրանք, ովքեր չեին վճարում հարկեր, կամ ինչ-ինչ պատճառներով հրաժարվում էին վճարելու, ենթակա էին բանտարկության և ոչ թե մարմնական պատիճների:

Թեև զիմմիների կյանքն ու ունեցվածքը գտնվում էր օրենքի պաշտպանության տակ, սակայն այնուամենայնիվ նրանց իրավունքները որոշակիորեն սահմանափակվում էին: Այսպես, նրանք պարտավոր էին վճարել մի որոշակի գումար հօգուտ մուսուլմանական բանակի: Ընդ որում, այդ պարտավորությունը դիտվում էր որպես մի տեսակ «ռազմատուգանք»: Զիմմիները պարտավոր էին հազնել իրենց համար նախատեսված հատուկ զգեստ, նրանք իրավունք չունեին հազնել թանկարժեք կտորներից (մետաքսից և այլն) պատրաստված զգեստներ, պարտավոր էին կրել հատուկ տարրերանշաններ («զիյար»), նրանց արգելված էր ձի իեծնել, զենք կրել, կազմակերպել աղմկալից արարողություններ (հարսանիք, թաղում և այլն), եկեղեցու զանգակներ հնեցնել մուսուլմանների հանգիստը շխանգարելու համար, կառուցել եկեղեցական կուլտի նոր շենքեր, իրենց տները մուսուլմանների տներից ավելի բարձր ու շրեղ կառուցել, ցուցադրական կարգով շկատարել եկեղեցական արարողություններ, նրանց վկայությունները իրավական ուժ չունեին մուսուլմանական դատարաններում, զիմմիների սպանության դեպքում արյան վրիժառություն չեր նախատեսված, այլ միայն փոխհատուցվում էր դրամով, անձրևոտ օրերին զիմմիները տանից դուրս գալու իրավունք չունեին, որ իրենց վրայի ջրով «չպղեն» «ուղղադավաններին» և այլն:

Անկասկած այդ կարգի բոլոր սահմանափակումները կոչված էին շեշտադրել մուսուլմանների առավելությունը կամ գերակայությունը զիմմի հպատակների նկատմամբ:

Իսլամական օրենքը հանուն ջիհաղի մղված սրբազան պատերազմը դիտում էր որպես «աստծո ճանապարհ» («սարիի Ալլահ»): Որպես զինված պայքարի օբյեկտ, մուսուլմանական իրավունքի՝ «ֆիրհի» վերաբերյալ աշխատություններում տրվում են հետևյալ վեց տեսակները. 1. «Ալլահի թշնամիների դեմ» (նրանց դեմ, ովքեր սպառնում են մուսուլմանական համայնքի՝ ուժմայի գոյությանը, ովքեր հետապնդում են մուսուլմաններին, ինչպես նաև պայքար հեթանոսների դեմ), 2. նրանց դեմ, ովքեր ոտնձգություններ են կատարում սահմանների անձեռնմխելիության վրա, 3. հավատուրացների դեմ, 4. ճնշողների դեմ, 5. ավազակների դեմ, 6. ոչ մահմեդական մոնոթեիստների (միաստվածության դավանողների) դեմ, որոնք հրաժարվում են վճարել զիսահարկ՝ ջիզիե:

Զիհաղի մասնակիցը կոչվում է մոջահետ, իսկ «անհավատների» դեմ մարտերում զրիված մոջահեղները հայտարարվում են շահիդներ, այսինքն իր հավատը Ալլահի առջև վկայած մարդ, նաև հերոս: Շահիդին, ըստ Ղուրանի, դրախտում սպասում է հավետ երանությունը: «Եւ Աստուծոյ ճանապարհումը սպանողին մի՝ ասէք «մեռած», այլ «կենդանի» (2:149), «Եւ Աստուծոյ ճանապարհումը սպանածներին մեռած մի՝ համարէք, այլ կենդանի իրանց Տիրոց մօտ, որ կերակրվում են» (3:163):

Զիհաղի զաղափարը նոր նշանակություն ձեռք բերեց արաբական նվաճումների ժամանակաշրջանում (մոտավորապես 632-751 թթ.): Այն դարձավ խալիֆայության պետական զաղափարախոսության ամենակարևոր տարրերից մեկը, որը նորադարձ մահմեդականներին մղում էր աշխարհով մեկ տարածել իսլամը:

IX-X դարերից սկսած զիհաղ հասկացությունը համալրվեց նոր բովանդակությամբ, դա Ալլահի ճանաշման ճանապարհին ներքին հոգեկան կատարելագործումն է և ջանքերի գործադրումը: Ըստ որում, այդ իմաստով զիհաղը անպայման չի նշանակում պատեռազմել, քանի որ Ալլահի ճանապարհին ջանքերի գործադրումը կարող է իրականանալ ինչպես խաղաղ միջոցներով, այնպես էլ բռնություն գործադրելով: Զիհաղը հասկացվում էր նաև ջանքերի գործադրում հոգու փրկության համար:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս, ոչ մահմեդականների մեծ մասն այն կարծիքին է, որ զիհաղը նախ և առաջ նշանակում է ռազմական գործողություններ վարելը միակ նպատակով՝ մյուս ժողովուրդներին ստիպելու համար, որ ընդունեն իսլամը: Սակայն այդ մեկնաբանումը, ըստ խալամի տեսարանների, միակողմանի է, քանի որ նրանց կարծիքով զիհաղի հիմքում ընկած է անհատական ազատության պաշտպանությունը: Բացի այդ, ենելով Ղուրանի տեքստերից, ըստ նրանց, զիհաղ հասկացությունը հավասարապես կարելի է մեկնաբանել ոչ միայն որպես ռազմական գործողություններ, այլև որպես խաղաղ ջանքեր:

Գոյություն ունեն «մեծ զիհաղ» և «փորք զիհաղ» հասկացությունները: Մեծ զիհաղի տակ հասկացվում է հոգեոր ինքնակատարելագործումը, իսկ փորք զիհաղի տակ կոլեկտիվ պարտականությունը և ընդհանրական ջանքը: Այս վերջինը բազմիմաստ հասկացություն է: Օրինակ, կա «սրտի զիհաղ» հասկացությունը, որ նշանակում է պայքար սեփական վաստ հակումների դեմ, «ձեռքի զիհաղ»՝ կարգապահական միջոցառումների օգտագործում հանցագործների, կարգապահների և բարոյականության նորմերը խախտողների դեմ, «լեզվի զիհաղ»՝ անթույլատրելի և մերժելի արտահայտություններից խուսափելը, վերջապես «սրի զիհաղ»՝ զինված պայքար անհավատների դեմ:

Ավելի ուշ զիհաղը ձեռք բերեց նոր իմաստներ, մասնավորապես ուժերի առավելագույն ներդրում տնտեսական և ռազմական հզորության հասնելու, արտաքին ազրեսիային դիմագրավելու, ազգային անկախությունը ամրապնդելու, սոցիալ-տնտեսական տարրեր ծրագրեր իրագործելու, կոնկրետ խնդիրներ լուծելու համար ներդրված ջանքեր և այլն:

Միջազգային հարաբերությունների ժամանակակից փուլում իսլամի հարածուն քաղաքականացման հետևանքով զիհաղ հասկացությունը գտել է ավելի լայն տարածում: Մասնավորապես այն ընկալվում է հետևյալ իմաստներով. ջանքեր հանուն առաջադիմության, օտար զաղափարախոսությունների մերժում, որոնք հակասում են իսլամի ոգուն, պայքար արևմտյան իմպերիալիզմի և սիոնիզմի դեմ և այլն: Սակայն միևնույն ժամանակ զիհաղը դարձել է իսլամական ծայրահեղականության ու ահաբեկչության շարժիչ ուժը, նրա զաղափարական հիմքը:

Անկասկած միջնադարում զիհաղը համախմբում ու միավորում էր արաբական ցեղերին: Ըստ Լության այն սրբագրուծում էր հին բեդվինական ասպատակությունների (դազվ) պրակտիկան: Իսկ նոր ժամանակներում և արդի փուլում զիհաղը վերին աստիճանի հարմար միջոց է իսլամի կանաչ դրոշի ներքո հասարակությանը մորթիլիզացնելու համար:

Այսպիսով, մեր օրերում, երբ իսլամական գործոնը զնալով մեծանում է և միջազգային հարաբերություններում ձեռք է բերում կարևոր դերակատարություն, առաջնակարգ կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե ինչ բովանդակություն է տրվում զիհաղ հասկացությանը, ինչպես է մեկնարանվում այն, և ինչ նպատակներով է օգտագործվում:

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ՈՒՍՍԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ:
ՀԱՎԱՏՆ ԱՌ ԱԼՀԱՀԸ: ԻՍԼԱՄԻ ՄԵԶ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ,
ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱԽՏԻ ՈՒ
ԴԺՈՒԽՔԻ ՄԱՍԻՆ**

Ումմա հասկացությունը իսլամի մեջ ձևավորվել է դեռևս VII դարում, իսլամի հիմնադիր Մուհամմադ մարզարեի ժամանակներում: Նա մահմեղական հավատացյալների համայնքը անվանել էր ումմա: Օգտագործելով նախախսլամական շրջանում արաբների մոտ եղած տոհմացեղային համերաշխության սկզբունքը, որը հիմնված էր արյունակցական կապերի վրա, Մուհամմադը ստեղծեց «նոր եղայրություն», որը խարսխված էր լինելու ոչթե արյունակցական կապերի, այլ կրոնական միասնության վրա:

Արաբական նվաճումների շրջանում և արաբների կողմից նվաճված ժողովուրդների իսլամականացման ժամանակ ումմա հասկացությունը սկսեց նշանակել մուսուլմանների ողջ ընկերակցությունը: Նոյնիսկ արաբական խալիֆայության սահմաններից դուրս ապրող մուսուլմանները դիտվեցին որպես իսլամական ումմային պատկանող հավաքականություններ: Մուսուլմանական երկրներում ազգային քաղաքացիության մասին պատկերացումը ի հայտ է եկել միայն XIX դարի վերջին:

Մինչ այդ, տարբեր երկրների մահմեղականները իրավաբանորեն համարվում էին իսլամական մեկ համայնք՝ ումմայի անդամ:

Արդի ժամանակներում խլամը հանդիսանում է ոչ թե մեկ ազգի կամ ժողովրդի, այլ մահմեղականների համաշխարհային համայնքի կամ ումմայի կրոն, որի համար քաղաքական սահմաններ գոյություն չունեն: Ներկայումս մահմեղական ումմա հասկացության տակ նկատի է առնվում հետևյալը. աշխարհի բոլոր մահմեղականները, անկախ նրանից, թե որ պետության քաղաքացիներ են, ինչ ազգի կամ ուսայի են պատկանում, մաշկի ինչ գույն ունեն և այլն, հանդիսանում են մահմեղական մեկ միասնական համայնքի կամ ումմայի անդամ: Ըստ էության ումման բոլոր մահմեղականների եղբայրության և միասնության զաղափարն է անկախ նրանց ազգային, ուսայական և սոցիալական պատկանելությունից: Ըստ ումմայի վերաբերյալ տեսության, պետական սահմանների առկայությունը չի կարող խանգարել, որպեսզի մահմեղականները ընդունեն միմյանց ոչ թե որպես առանձին երկրների հպատակներ, այլ որպես միևնույն համայնքի ներկայացուցիչներ, ավելին եղբայրներ:

Ումմայի համերաշխության դրսերումներից է խլամական ամենամյա ուխտազնացությունը՝ հաջը և նրա ծիսակատարությունների ողջ փաթեթը:

Ումմայի զաղափարը հիմնավորված է Դուրանով, որտեղ ասվում է. «Եվ ամուր բռնեք այն պարանից, որն Ալլահը մեկնել է ձեզ և մի բաժանվեք իրարից»:

1981 թ. խլամական պետությունների Մերքայի զագարնաժողովը տվել է ումմայի հետևյալ սահմանումը «Բոլոր մահմեղականները, որոնք թեև տարբերվում են լեզվով, մաշկի գույնով, բնակության վայրով, մի ազգ են. նրանց միավորում է նույն հավատքը, նրանք շարժվում են նույն ուղղությամբ, ունեն մշակու-

թային ընդհանուր ժառանգություն, աշխարհում ունեն նույն առարկելությունը»:

Իսլամական Համագործակցության Կազմակերպությունը սահմանել է ումմայի պարտավորությունները, որոնք վերաբերում են իսլամի երբեմնի փառքի և քաղաքակրթության վերականգնմանը:

Տարբեր երկներում ապրող մահմեդական փոքրամասնությունները դիտվում են որպես իսլամական ումմայի անբաժան մասը: Այդ կապակցությամբ վկայակոչվում է հաղիսի հետևյալ հատվածը. «Մահմեդականները նման են մի մարմնի: Եթե մարմնի մի հատվածը ցավում է, ուրեմն ամբողջ մարմինը տկար է»:

Ումման դա այսպես կոչված «իսլամական ազգի» զաղափարն է: Այն կոչված է միավորելու տարբեր ժողովությների և երնիկական խմբերի իսլամադավանության հիմքի վրա: «Հայրենիք», «ազգ» հասկացությունները երկար ժամանակ մահմեդականների մոտ կապվում էին կրնկրետ կրոնական համայնքին՝ ումմային պատկանելու գիտակցության հետ, այլ ոչ թե իրենց բնակության վայրի եթնիկական խմբի կամ տարածքի հետ: Այլ կերպ ասած, մահմեդականի համար առաջնայինը կրոնն էր, ապա նոր ազգությունը: Միայն տեսական ձանապարհ անցնելուց հետո նրանց մոտ ձևավորվեց ազգային ինքնազիտակցություն:

Ի տարբերություն քրիստոնեության, որը չի անտեսում իր հետևորդների եթնիկական հատկանիշները, իսլամը հոչակում է մահմեդականությունը դավանող բոլոր եթնիկական խմբերի նույնությունը, որոնք այդ հիմամբ կազմում են մեկ ամբողջական համայնք:

Ումման՝ իսլամի այդ հիմնադրույթը և՝ ձևով և՝ բովանդակությամբ VII դարից մինչև մեր օրերը գրեթե մնացել է անփոփոխ:

Հիրավի, այսօր էլ ումնայի գաղափարը վերին աստիճանի կենտրոնակ է:

• • •

Հավատն առ Ալլահը՝ իսլամի հիմնական դոզման է, որում արտահայտված է միաստվածության մուսուլմանական սկզբունքը: Հավատն Ալլահի նկատմամբ իսլամի մեջ հանդիսանում է այն միջուկը, որի շուրջը կենտրոնացված են մնացած բոլոր կրոնական պատկերացումները: «Զկա աստվածություն Ալլահից բացի»՝ սա է իսլամի հավատող հանգանակը: Այլ աստվածների երկրպագությունը համարվում է մահացու մեղք:

Դուրանում հաճախ է կրկնվում, որ մուսուլմանական աստվածը միակն է, ոչ մեկի կողմից արարված չէ, հավերժ է, իր մեջ և իր համար գոյություն ունեցող: Նա եզակի է, չի կարող ունենալ ոչ մի «ընկերակից»: Ալլահը արարիչ է: Նա արարել է աշխարհի՝ երկինքը, երկիրը, աստղերը, լեռները, բույսերը և մարդկանց: Նա մարդկանց պարզել է սնվելու միջոցներ: Աշխարհում ամեն ինչ տեղի է ունենում Ալլահի կամքով: Նա է մարդկանց տալիս, հենց նա էլ վերցնում է նրանցից: Աշխարհում ամեն ինչ ստեղծված է մարդու համար:

Դուրանում մշտապես խոսվում է Ալլահի կատարելության, հզորության ու վեհության մասին: Աշխարհում ամեն ինչ նրան է ենթարկվում ու հնագանդվում: Ոչինչ չի կարող տեղի ունենալ առանց նրա կամքի և նրա զիտության: Նա իշխում է ամեն ինչի վրա և հովանափրում է իր կողմից արարչագործվածներին: Մարդիկ պետք է ամբողջապես հնագանդ լինեն նրան, լինեն աստվածավախ, բարեպաշտ և ամեն ինչում հավատան Ալլահին: Իր հսմար ցանկալի ժամանակ Ալլահը կոչնչացնի երկրի վրա եղած ամենն

ինչ, հարություն կտա մեռելներին և նրանց կհավաքի իր մոտ դատասուանի, որոնցից յուրաքանչյուրի համար համաձայն իր արարքների կորոշվի, թէ զահավիմելու է դժոխքը՝ ջհաննամը, թէ՝ վայելելու է դրախտի՝ ալ-ջաննայի վայելքները:

Ալլահը հատուցում է մարդկանց իրենց բարի և մեղավոր արարքների համար: Նա ժամանակ առ ժամանակ մարդկանցից ընտրում է իր մարզարեներին ու առարյաներին, որոնք կոչված են Ալլահի պատգամները փոխանցել մարդկանց: Ալլահը իր մարզարե է ընտրել Մուհամմադին:

Դուրանի մեջ հիշատակվում են Ալլահի բազմաթիվ մակղիրներ: Դրանց ընդհանուր թիվը 99-ն է: Աստված միասնական է (ալ-վահիդ), կենդանի (ալ-խայյի), հավերժական (աս-սամայ), նա առաջինն է և վերջինը, տեսանելին և թարնվածը, արտաքինն ու ներքինը, նա աշխարհների տիրակալ է (ուսք ալ-ալամին), սրբազնագույն թագավոր է (ալ-մալիք ալ-կուդրուս), նա ամենագետ է, վերջին դատաստանի օրվա տիրակալն է (մալիք յառու աղդին), դատավորներից լավագույնը (հայր ալ-հարիմին), նա լուս է (ան-նուր), բացարձակ ճշմարտություն (ալ-հարք), նա արարիչ է (ալ-խալիք), նա կյանք պարզեռող է (ալ-մուխիյի) և մահ տվող (ալ-մումիթ), նա ամենաներող է (ալ-զաֆֆար), պարզեռող (ալ-վահիհար), բարիքներ շնորհող (ար-ուազզար), նա ամենազորեղ է (ալ-կադիր), ուժեղ (ալ-կավի), զիտակ է (ալ-ալիմ), նա է մարդուն տվել զիտելիք, տեսնող է (ալ-բասիր), լսող է (աս-սամի) և այլն:

Մուսուլմանական հավատացյալները Ալլահին պատկերացնում են մարդու կերպարանքով: Դուրանի համաձայն Ալլահն ունի դեմք, ձեռքեր, աշքեր, նա նստում է զահի վրա (20:4, 40:15): Սակայն ժամանակակից աստվածաբանները ավելի են հակված այն մտքին, որ անհնար է ընկալել Ալլահի կերպարանքը, «քանի

որ երկրի վրա չկա ոչ մի բան, կամ ոչ մի էակ, որի հետ հնարավոր լիներ նրան համեմատել» և խորհուրդ են տալիս Ալլահի մասին Ղուրանի շատ արտահայտություններ հասկանալ ինչպես այլաբանություններ:

Իսլամի մեջ Ալլահը օժտված է հակասական գծերով: Ինչպես և քրիստոնեությունը, իսլամը աստծուն պատկերում է երկակի տեսանկյունից. մի կողմից նա ահեղ է, ոչ որի չներռո, աննշան զանցանքի համար մարդկանց դաժանորեն պատժող, խիստ, հզոր (ալ-ջաբբար), անհնազանդերին նա սպառնում է բոցավառվող կրակով, անհավատներին զեհենի հավերժական կրակով, նա «շեղում է ճանապարհից ում ցանկանում է»: Ոչ մեկին տրված չէ իմանալու, թե նա երբ և ինչ ձեռվ կդրսեռի իրեն, ինչպես կվերաբերվի մարդու այս կամ այն արարքի նկատմամբ: Համաձայն իսլամի ուսմունքի, ամեն մի կասկածանք Ալլահի նկատմամբ ծանր հանցանք է, որը ամենաբարձրյալը կարող է չներել: Մյուս կողմից, սակայն, ինչպես նշվեց, Ալլահը ողորմած է, զթառատ ու բարեգութ (ար-բահման ար-բահիմ), մեղքերը ներող (ալ-Գաֆիր, ալ-Ղաֆֆար), շնորհող ու պարզենող (ալ-Վահհաբ), սնուցող (ար-բազզար), սիրող (ալ-Վաղուու) և այլն: Ղուրանի բոլոր սուրահները սկսվում են Ալլահին որպես բարեգութ ու ողորմած արարածի դիմելու ձեռվ:

Ինչպես է տեղի ունեցել աստծոն արարչագործությունը: Ղուրանում մարդու արարումը գտնվում է բոլորից բարձր, երկրի վրա ամեն ինչ Ալլահի կողմից ստեղծված է մարդու համար: Աշխարհն արարվել է վեց օրվա ընթացքում: Մարդու արարումը հանդիսանում է Ալլահի հզորության և միաժամանակ նրա բարության արտահայտությունը: Մարդիկ մշտական էակներ չեն, նրանք անկայուն են. «Եւ կան մարդիկ, որ Աստծուն պաշտում են մեկ ծայրից,

Եւ եթէ նրան մի բարիք է պատահում, հաստատ մնում է, բայց եթէ մի վտանգ է պատահում, երեսը դարձնում է...» (22:11): Մարդիկ փոքրողի, թույլ և երախտամոռ ու ապերախտ էակներ են. «Եւ երբ ձեզ ծովումը մի վեաս է պատահում, մոլորւած էք դուք, որ նրանից բացի մի ուրիշին էք աղոթում, եւ երբ նա ձեզ ազատէ ու ցամաքը դուրս հանէ, դուք ես էք քաշում, եւ մարդս ապերախտ է» (17:69): Ակզրում մարդիկ մեկ միհասնական ժողովուրդ էին, «մեկ կրոնական համայնք», սակայն նախանձը նրանց մղեց փոխադարձ վեճերի և նրանք բաժանվեցին (2:209):

* * *

Մինչխամական շրջանի արաբների հավատը բնության տարերային ուժերի վերաբերյալ, տեղ է գտել նաև իսլամի մեջ: Արաբի երեսակայությունը անապատը լցրել է բազմաթիվ ոգիներով՝ դեմք, որոնց անվանում են տարբեր կերպ: Սակայն ամենատարածված ձևը ջինն է: Ջինները իսլամի մեջ ստեղծվել են զոլորշուց ու կրակից: Նրանք կարող են փոխել իրենց կերպարանքը: Ըստ արաբների պատկերացումների, ջինները կարող են շփման մեջ մտնել մարդկանց հետ, նրանց պատճառելով բարիք կամ չարիք, ազդել նրանց ճակատազրի վրա: Սովորաբար ժողովրդական հավատալիքները դեմքին վերագրում են չար գործեր: Ինչպես քրիստոնեական միջնադարի շրջանում, մահմեդական Արևելքում ևս դիվահարի («մաջնուն») միջից քշում են չար ոգուն: Հմայությունները, հմայիլներն ու թալիսմանները ծառայում են այն բանի համար, որ քշեն կամ սպանեն խավարի այդ ուժերին:

Զքադաշտականներից մուսուլմանները վեցցել են հավատը «դիվերի» (դեմքի) նկատմամբ, որոնք իրենցից ներկայացնում են սատանային ենթակա արարածներ և թշնամի են ինչպես աստծուն, այնպես էլ մարդկանց:

Իսլամն ընդունում է նաև հրեշտակների գոյությունը: Նրանք անմարմին արարածներ են, որոնք շարժվում են մեծ արագությամբ: Նրանց անմարմին լինելը, սակայն, չի խանգարում հավատացյալների երևակայությանը նրանց պատկերելու թևերով: Հրեշտակները ստեղծված են լույսից, սեռ չունեն և անվերապահորեն հնազանդվում են Ալլահին, կատարելով նրա բոլոր հրամանները:

Հրեշտակներից չորսին՝ Զաբրախիլին կամ Զիբրիլին, որը աստվածային հայտնությունները փոխանցում է մարզարեին, Միքայիլին (Միքայ), որը հետևում է տիեզերքի կարգ ու կանոնին և մուսուլմանների օգնականն է նրանց մղած ճակատամարտերում անհավատ հեթանոսների դեմ, Ազրայիլին (մահվան հրեշտակ) և Իսրաֆիլին (ահեղ դատաստանի օրը բոլոր մահացածների հարության օրվա հրեշտակ, որն ահեղ դատաստանի գալուստը ազդարարում է շեփորով) խսլամը համարում է հրեշտակապետներ կամ բարձրագույն հրեշտակներ: Այդ չորս հրեշտակները կոչվում են «մուքարրիբուն», այսինքն Ալլահի «մերձավորներ»: Այս չորս հրեական հրեշտակներն անցել են խսլամի մեջ: Յուրաքանչյուր մարդ ունի երկու պահապան հրեշտակ, որոնք գրանցում են մարդկանց լավ և վատ գործերը, որոնք հետազոյում կշռվում են հատուկ կշեռոյի վրա: Եթե կշեռոյի թարի ծանրությունը վատ արարքների կողմն է, մարդը ընկնում է դժոխք, իսկ եթե լավ՝ դրախտ:

Հրեշտակները հավերժական չեն, նրանք Ալլահի ստեղծած արարածներն են, նրա նվիրյալ ծառաները, աստծոն և մարդու միջև միջնորդներ: Հրեշտակները մարզարեին համեմատ ստորագուստ են: Նարիրը և Սուննարը գերեզմանների հրեշտակներն են, որոնք հարցարքնում են մեռածներին, նրանցից հաշիվ պահանջելով

Երկրային կյանքի իրենց արարքների համար: Ռիդվան հրեշտակը՝ դրախտի պահապանն է, Մալիքը՝ ղժոխքի: Կան նաև բազմաթիվ այլ հրեշտակներ, օրինակ, որոնք պահում են Ալլահի գահը:

Հրեշտակների արարումը նախորդել է Աղամի արարմանը: Երբ հայտնվել է Աղամը, Ալլահը հրամայել է հրեշտակներին երկրպագել նրան: Բոլոր հրեշտակները հնազանդվել են այդ հրամանին, բացի կրակից ստեղծված Իրիսից (սատանայից), որին մուսուլմաններն անվանում են նաև շայթան: Ըստ մահմեդականների հավատալիքների, Իրիսը դա անառակ հրեշտակն է, որը մերժված և անիծված է աստծո կողմից: Նա մարդկային բոլոր դժբախտությունների պատճառն է: Նա անտեսանելի է, սակայն կարող է վերածվել տեսանելի արարածի: Իրիսը հրամարվել է երկրպագել մարդուն՝ աստծո արարչագործած ամենակատարյալ էակին: Այդ առթիվ Դուրանում ասվում է. «Բայց արդեն մենք ենք ձեզ ստեղծել, յետոյ ձեզ կազմել, յետոյ հրեշտակներին ասել. «Աղամին երկրպագութիւն արէ՛ք: Եւ նրանք երկրպագութիւն արեցին բացի սատանայից: Նա երկրպագողներիցը չեղավ»: «Ասացի՞նչ արգիլեց քեզ, որ չերկրպագես երբ քեզ հրամայեցի: Նա էլ ասաց. ես նրանից լաւ եմ, դու ինձ ստեղծեցիր կրակից, իսկ նրան ստեղծեցիր ցեսից» (7:10,11):

Իրիսն էր, որ զայթակեցրեց Աղամին ու Եփային և շարունակում է զայթակեցնել մարդկանց ու տանել խոտորնակ ճանապարհներով: Բայց նրա համար ևս ժամանակը հավերժ չէ: Ժամանակների վերջում նա դների հետ միասին, որոնք ծառայում են նրան, նետվելու է ղժոխքը (զհաննամ): Նրա հետևից ղժոխք են գնալու մեղավորները: Ալլահը անիծել է սատանային, սակայն այդ անեծքի իրականացման ժամկետը հետաձգվել է մինչև ահեղ դատատառնի օրը: Իրիսն օգտագործում է հետաձգման այդ ժամ-

կետը, որպեսզի զայթակդեցնի մարդկանց, նրանց շեղի ճշմարիտ ուղղուց:

Դժվար չէ նկատել, որ իսլամի մեջ յուրահատուկ ձևով կրկնվում է սատանայի մասին քրիստոնեական առասպելը:

Իսլամն ընդունում է, որ մինչև Մուհամմադը եղել են նաև մեծ թվով այլ մարգարեներ: Գլխավոր մարգարեներն են Աղամը, Նոյր (արար. Նուհ), Աբրահամը (արար. Իբրահիմ), Սովսեսը (արար. Մուսա), Հիսուսը (արար. Իսա): Երկրորդական մարգարեներ են համարվում Դավիթը, Հակոբը, Հովսեփը և Եհովան: Արաքները Աստվածաշնչից վերցրել են նաև մի շարք այլ մարգարեների անուններ՝ Ահարոն (Հարուն), Դավիթ (Դաուդ), Սողոմոն (Սովեյման), Եղիա (Իյաս), Իսահակ (Իսիակ), Հակոբ (Յաղութ) և այլն: Մարգարեներից վերջինը Մուհամմադն է, նա «մարգարեների կնիքն է», նրանից հետո այլևս չեն կարող լինել մարգարեներ: Մարգարեներն օժտված են հրաշագործություն անելու շնորհով: Սակայն Մուհամմադն իրեն չեր համարում հրաշագործ: Նա գտնում էր, որ ինքը միայն մեկ հրաշագործություն է գործել՝ Ղուրանի հայտնությունը: Սակայն հետագա մուսուլմանական լեզենդները նրան վերագրել են նաև այլ հրաշագործություններ: Իսլամական սկզբունքների համաձայն, միայն մարգարեներին կարելի է համարել սրբեր:

Ղուրանից բոլորովին չի երեսում, որ Մուհամմադը իրեն բարձր դասեր նախկին մարգարեներից, որոնց, հատկապես Աբրահամին, Մովսեսին և Հիսուսին նա ընդունում էր որպես իր նախորդներ: Սակայն հետազայում մուսուլմանները սկսել են Մուհամմադին մեծարել որպես մարգարեներից բարձրագույնը և նախկին մարգարեների կուլտը իսլամում մղվել է հետին պլան Մուհամմադից հետո: Միաժամանակ Ղուրանում ասվում է, որ

Մուհամմադը մահկանացու է, որ նա օժտված է զուտ մարդկային հատկանիշներով։ Ինչո՞ւ աստված հենց Մուհամմադին ընտրեց որպես իր մարզարե հարցին խլամի զաղափարախոսները պատասխանում են, որ դա դատարկ և անիմաստ հարց է, քանի որ աստծո ընտրած ճանապարհները և գործերը անիմանալի, անըմբռնելի և անքննելի են։ Խլամի մեջ ևս առկա է դժոխքի (ջհանամ) և դրախտի (ֆիրդատու) վերաբերյալ զաղափարները։ Դժոխքի մասին պատկերացումները ըստ Էության չեն տարբերվում զրադաշտական-հրեական-քրիստոնեական պատկերացումներից։ Մուսուլմանների կողմից դժոխքի ջհանամ անվանումը հենց վերցված է հրեաներից։ Մուսուլմանական դժոխքը պատկերացվում է մի խորը փոս, որը բաղկացած է յոր բաժիններից կամ հարկերից, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է մեղավորների առանձին տեսակների համար։ Այդ հարկաբաժինները մեկը մյուսի վրա են և ամբողջությամբ կազմում են մի խորխորատ։ Ամբողջ գեհենի վրայով ձգված է մազի պես բարակ մի կամուրջ, որը կոչվում է Սիրաթ (արաբ. բառացիորեն «Ճանապարհ»)։ Գոյորդ մեռածները պետք է անցնեն այդ կամրջի վրայով։ արդարները կանցնեն հանգիստ, առանց դժվարության, իսկ մեղավորները կսայթաքեն և կզահավիժեն դեպի անդունդը։ Գեհենում տանջանքները շատ բազմազան են և տարբեր հանցանք կատարածների և մեղք գործածների համար նախատեսված են տարբեր բնույթի տանջանքներ, սակայն տանջանքների մեջ գլխավոր դերը խաղում է կրակը (մեղավորներին կրակէ զգեստներ հազցնելը, եռացրած ջրով տանջելը և այլն)։ Դժոխքում մեղավորները պետք է այրվեն հավիտյան։ Հենց որ կաշին այրվեց, իսկույն պիտի բռնի նոր կաշի, որը նույնապես պիտի այրվի։ Եվ այսպես հարատ։ Դժոխքի մարդիկ պիտի խմեն եռացող ջուր։ «Նրանց համար մի ուրիշ կերակուր չ-

կայ, բացի փուշից» (88:6): Բգուր չէ, որ Ղուրանում դժոխքը հիշատակվում է «նար» (կրակ) անվամբ: Զհաննամի տանջանքներից մեկն էլ սառնամանիքն է: Զհաննամը պահպանում է հրեշտակների պահակախումբը («զարանիյա»), որի գլխավորի անունը Մալիք է:

Ղուրանը հատուկ պատասխան չի տալիս այն հարցին, թե արդյոր դժոխային տանջանքները ժամանակավոր են, թե հավերժական: Որոշ պատկերացումների համաձայն, դժոխային տանջանքները, համենայն դեպք մուտուլմանների համար հավերժական չեն լինի: Բարեգութ Ալլահը, երբ մեղավորները մի կարգին «կայրվեն ու կմոխրանան», կների նրանց և դուրս կըերի դժոխրից:

Ինչպես նշվեց, դրախտի մասին մուտուլմանական պատկերացումները ընդհանուր առմամբ նույնպես իրենց ծագումն առնում են զրադաշտական-հրեական-քրիստոնեական աղբյուրներից: Դրախտի անվանումը «Փիրդառու» հենց վերցված է պարսիկներից: Խալամի մեջ, սակայն, դրախտի ամենատարածված անվանումն է «ալ-Զաննան» («այզի»): Օգտագործվում է նաև նրա հոգնակի թիվը «ջաննաթ» («այզիներ»):

Ղուրանում վառ և պատկերավոր կերպով նկարագրվում է մուտուլմանական դրախտը (47-րդ սուրա): Արարի պատկերացմամբ դրախտը մի հսկայական կանաչ օազիս է այգիներով, վճիռ ու սառը ջրերի աղբյուրներով, գետերով, կարկառող ջրերով, շատրվաններով ու ջրանցքներով: Դա ոչ այլ ինչ է, քան արաբի երազանքը, որը տառապում է անապատի շողից ու ջրազրկությունից: Առհասարակ անապատի դաժան պայմաններում ապրող արաբի համար դրախտը պատկերացվում է որպես գերազույն հաճույք պարզեսող մի վայր: Այնտեղ հոսում են նաև «կաթի ու մեղրի գետեր», «ախորժալի զինու գետեր», ամեն ինչի առատություն է և

Ճոխություն, կան համեղ կերակուրներ: Դրախտում կան արմավենիներ, նուան ծառեր և բազմապիսի քաղցրահամ պտուղներ: Կարծիք կա այն մասին, որ պատահական չէ, որ խլամի խորհրդանշչ է դարձել կանաչ գույնը: Ոչ մի բան անապատի բնակչի համար այնքան հաճելի չէր կարող լինել, որքան ծառերի կանաչը և դաշտերի խոտը: Այնտեղ չի լինում ոչ այրող տապ և ոչ էլ սառնամանիք: Դրախտի բնակիչներին սպասարկում են «հավերժ պատանի» տղաներ, այնտեղ կան սքանչելի «սևաչյա, մարզարտանման խոշոր աչքերով և թափանցիկ մաշկ ունեցող կույսեր, որոնց երբեմիցն չի դիմակ ոչ մարդը և ոչ էլ ջիններ»: Դրախտի արժանացածները պառկելու են մետարսեան անկողինների վրա: Գեղեցկատեսիլ պատանի կույսերը՝ հուրիները դրախտում վրանների մեջ «կանաչ բարձերի վրա պառկած» սպասում են ուղղադավաններին: Նրանք միշտ պատրաստ են իրենց քնքշանքները պարզենել ընտրյալներին:

Դրախտը բաժանված է մի բանի հարկի, որոնց վրա գտնվում է Ալլահի զահը: Այն լուսի ճաճանչների մեջ է, որոնք մարդկանց պարզենում են խաղաղություն և երանություն: Դրախտում է պահկում Ղուրանը, նաև այնպիսի գրքեր, որոնցում գրված են մարդկանց արարքները: Դրախտի գլխավորը Ռեդվան անունով հրեշտակն է:

Ղուրանում ասվում է, որ դրախտը ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար է: Արդար ամուսինները դրախտում կգտնեն միմյանց: Սակայն դրախտում Ղուրանը բոլոր հավատացյալներին չի խոստանում անմիջական շփում աստծո հետ: Դրախտում աստծո հետ շփումները միայն մարզարեների ու սրբերի համար է նախատեսված:

Հստ իսլամի, մեռյալների գտնվելու վայրը դժոխքում կամ դրախտում մինչև Հարության օրը հանդիսանում է ժամանակավոր և միայն Հարության օրը վերջնականապես կորոշվի նրանց ճակատազիրը: Դուրանը հավատացնում է, որ մարդու համար կարևոր ոչ թե «այս աշխարհն» է, այլ հանդերձյալ կյանքը. «Բայց դուք ընտրում եք այս աշխարհի կեանքը, սակայն միւս աշխարհն է բարի եւ տևաղը» (87:16-17):

Իսլամի մեջ առկա են նաև քավարանի և ահեղ դատաստանի հասկացությունները: Դուրանը լի է ահեղ դատաստանի օրվա ակնարկներով: Իսլամի սուրբ գրքում ահեղ դատաստանը վերաբերում է առանձին անհատներին և ոչ թե ողջ ժողովրդին, այսինքն ահեղ դատաստանը չի լինելու համընդհանուր:

Աշխարհի վերջը գումող առաջին նախանշանը կլինի մարդկանց շրջանում անօրենության հանկարծակի տարածումը. կանհետանա Մերքայի տաճարը, Դուրանը մոռացության կմատնվի, արևը կիանգչի, կսկսվի անթափանցելի խավար, ահավոր քամիներ, լեռները կշարժվեն իրենց տեղերից, գետերն ու ծովերը դուրս կցան իրենց ափերից: «Երբ արեգակը կը ծալի ու երբ աստղերը վար կը թափիին, ու երբ սարերը կը շարժիին, ու երբ տասնամուայ յի ուղտերը կարնից կը կտրուին. ու երբ վայրի անասունները միասին կը ժողվիին, ու երբ ծովերը կը վառին, ու երբ հոգիները կը միանան, ու երբ ողջ թաղուած աղջիկները կը հարցնին, թէ ինչ յանցանքի համար են սպանւել...»,՝ այսպես է ներկայացնում Դուրանը վերջին դատաստանի օրը (81:1-9): Աշխարհի վերջի գալուն կուղեկցի Ների (ηաջօալ) հայտնվելը, որը կգա մի հսկայական ավանակի վրա հեծած: Նրա թագավորությունը կտևի 40 օր, որի ընթացքում նա կամայացնի հողագունդը: Այնժամ երկներից Սրբազն հողի (իմա՝ Պաղեստինի – Վ. Բ.) վրա կիշնի Հիսուսը, ո-

թը նիգակի հարվածով կսպանի Նեռին և կզնա Երուսաղեմ աղոթելու: Այնուհետև մինչև նրա մահը քառասուն տարվա ընթացքում երկրի վրա կթագավորի սերն ու երջանկությունը, «զանոնուկներին կտեսնեն զայլերի կողքին, երեխաները կխաղան օձերի հետ»:

Իսլամի մեջ առկա են նաև ահեղ դատաստանի վերաբերյալ ավելի ուշ հորինված պատմություններ:

Մահմեդականների կրոնի մեջ տեղ է գտել նաև վաղ ծնունդ առած դոգմաններից ևս մեկը՝ նախասահմանման վերաբերյալ ուսմունքը (հայիսներում «կաղար», կամ «քարդիր»): Համաձայն այդ ուսմունքի, աստված ստեղծել է մարդկանց իրենց բարի և չար մտքերի հետ միասին: Ումանց համար նա նախանշել է փրկության ուղի, մյուսների համար՝ կործանում: Այս աշխարհում գոյություն չունի ոչ մի բան, որը կախում չունենա Ալլահի կամքից: Ասվում է, որ կա մի հատուկ զիրք, որի մեջ գրված է մարդու ողջ կյանքի ուղին, ընդհուպ մինչև իր մահը: Այլ կերպ ասած, ամեն ինչ կանխորշվում է ի վերուստ: Այդ դոգման շարադրվում է Ղուրանի բազմաթիվ այաքներում: Օրինակ, «Եւ ոչ մի մարդ չի մեռնի առանց Աստուծոյ հրամանին, որ գրած որոշած է» (3:139): Աստված միաժամանակ սպառնում է մեղավորներին և հատկապես անհավատներին գեհենում հավերժական պատիժներով: Ծագող հակասությունը (մարդու մոտ ազատ կամքի ժխտումը և միաժամանակ նրան ներկայացվող պահանջը պատասխանատվություն կրելու իր հավատքի ու գործերի վերաբերյալ) սկսեցին զիտակցել միայն ավելի ուշ, և այդ ժամանակ նախասահմանման դոգման խալամի մեջ առաջ բերեց վեճեր: Սակայն Մուհամմադի և առաջին խալիֆների ժամանակ այդ դոգման շատ հարմար գործիք էր նոր ծնունդ առնող արարա-մուսուլմանական պետության համար:

Մարդու մոտ հոգու անմահության պատկերացումը, որն ընդունակ է գոյություն ունենալ անկախ մարմնից, ինչպես հայտնի է ծագել է շատ վաղուց: Այն իր արտացոլումն էր գտել նաև արաբական ցեղերի հեթանոսական կուլտերի մեջ:

Դուրանք մարդու բնությունը բաժանում է երկու էությունների՝ մարմնական և հոգեկան: Այլահը մարդու մարմինը կերտել է կավից: Սակայն մարդը մնում էր հասարակ անկենդան արձան, մինչև որ բարձրյալը «նրա մեջ չփչեց իր ոգուց» (Դուրան, 32:8): «Աստվածացած» այդ ոգին համարվում է անմահ, իսկ մարմինը դիտվում է ժամանակավոր թաղանթ, կամ ոգու տեղափորման վայր:

Դուրանում բազմից շեշտվում է երկրային կյանքի ունայնության մասին: «Այստեղի կյանքը միայն խաղ է և զվարճալիք», - ասվում է իսլամի սուրբ գրում: Այն պնդում է, որ միայն ապագա անդրշիրիմյան կյանքում, հարություն առնելուց հետո, մարդը ձեռք է բերում «բնակության մշտական տուն»: Այստեղ, ինչպես տեսնում ենք, Դուրանը կրկնում է այն, ինչ քարոզում է քրիստոնեությունը, որ իբր երկրային կյանքը դա ընդամենը այն կողմնային աշխարհում հավերժական կյանքի նախադրուն:

Իսլամին բնորոշ է նաև ճակատագրապաշտությունը (ֆատալիզմ): Մարդու ճակատագիրը նախորշվում է ի վերուստ, Ալլահի կողմից: Նրա ծննդյան օրվանից մինչև մահը ամեն ինչ որոշված է, աստծո կողմից նախանշված, որից խուսափելը կամ փոփոխության ենթարկելը անհնարին է: Ճակատագրապաշտությունը խթանում էր «հավատի համար մարտնչող» զինվորների խիզախությունը, անվեհերությունն ու համարձակությունը, քանի որ եթե մահվան ժամը նախօրոք կանխորշված է աստծո կողմից, հետևաբար տվյալ ճակատամարտում ոչ մի վտանգ չի կարող երկյուղ առաջ բերել զինվորի մոտ:

ՍՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ՝ ՂՈՒՐԱՆԸ

Ղուրանը կամ Կորանը դա մուսուլմանների սուրբ գիրքն է և հավատի աղբյուրը, որն արաբերն անվանում են «Ալ-Կորան ալ-Քարիմ»: Կորան բառացի նշանակում է «կարդալ», կամ «այն ինչ կարդում են», երբեմն այն մեկնաբանում են որպես «ընթերցանություն»: Սակայն դա չի նշանակում «ընթերցում» բարի ուղղակի իմաստով: Իսկապես, Սուհամմադը «կարդում» էր իր բարողները ոչ թե զրված տեքստով, այլ հանպատրաստից կամ «արտասանելով»: Ուստի ժամանակակից հետազոտողների կարծիքով «Կորան» բառացի նշանակում է «արտասանել»: Ղուրանը անվանում են նաև «Քիրար» («Գիլր»):

Իսլամն ընդունում է, որ Ղուրանը մարդկային գործ չէ, անձեռակերտ է և իջել է երկնքից, երկնառար գիրը է: Այն գոյություն է ունեցել ի սկզբանե և գոյություն է ունենալու հավերժ, ինչպես ինքը՝ աստված: Նրանում զրվածը դա հենց իր՝ Ալլահի խոսքերն են ուղղված Սուհամմադին և վերջինս լոկ իր բարողներում կրկնում էր այդ խոսքերը: Որ Ղուրանի բնագիրը պահպում է Ալլահի զահի տակ և որպես «հայտնություն» աստծո կողմից մաս առ մաս փոխանցվել է Սուհամմադին Ջեբրայիլ հրեշտակի միջոցով:

Ղուրանում ասվում է, որ մինչև Սուհամմադ մարզարեն գոյություն են ունեցել բազմաթիվ մարզարեներ, սակայն վերջինը և ամենամեծը դա Սուհամմադ մարզարեն է, իսկ ամենավերջին սուրբ գիրը՝ Ղուրանը:

Իրականում Ղուրանը կազմվել է VII դարում, իսլամի որպես կրոն ձևավորվելու շրջանում: Լինելով անզրագետ, Սուհամմադը բնականարար գրի չի առել իր բարողները: Սակայն Ղուրա-

նի առանձին մասերը գրագետ մարդկանց կողմից գրի էին առնվում արմավենու տերևների, հարթ ոսկորների, կավե սալիկների, մազաղաթի, պղնձյա թիթեղների վրա և այլն: 632 թ. Սուհամմադի մահկանից հետո առաջին խալիֆ Աբու Բաքրը որոշում է հակաբել Ղուրանի բոլոր տեքստերը, քանի ոետ նրանք կորստյան չեն մատնվել, այդ գործի մեջ ներզրավելով կենդանի մնացած բոլոր հաֆիզներին (Ղուրանը անզիր իմացողներին): Նպատակը եղել է մեկը՝ կազմել Սուհամմադի քարոզների մի ժողովածու: Այդ գործը գլուխ է բերվում, որի հետևանքով ծնունդ է առնում գրավոր Ղուրանի առաջին տարբերակը, որը կոչվել է Սուխուֆ (բառացի «քերեր», «էջեր»): Ղուրանի երկրորդ և վերջնական խմբագրումը կազմվել է խալիֆ Օսմանի օրոք: Ղուրանի բոլոր մասնավոր գրառումները ոչնչացվել են, որպեսզի տեղի չունենան առանձին դրույթների մեկնաբանման տարբերցումներ, որոնք կարող էին տեղիք տալ տարբեր բնույթի բարդությունների, այդ թվում նաև քաղաքական, քանի որ հակամարտող կողմերը և իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված խմբագրումները որպես կանոն իրենց դիրքորոշումները հիմնավորելու համար վկայակոչում էին Ղուրանի համապատասխան դրույթները: Օրինակ, Ալիի կողմնակից շիաները պնդում էին, որ Ղուրանում արտահայտություններ կան այն մասին, որ Ալին Սուհամմադի իշխանության միակ օրինական ժառանգործն է, իսկ խալիֆներ Աբու Բաքրը, Օմարը և Օսմանը բռնատիրողներ են և անօրինական ճանապարհով են զավթել խալիֆի իշխանությունը: Ղուրանում ասվում է: «Սա այն գիրքն է, որի մեջ կասկած չըկայ, երկիւղածների համար ուղեցոյց է» (Ղուրան, 2:1): Խալամի սուրբ գիրքը շոշափում է մարդկային կյանքի բոլոր կարևոր կողմերը: Ղուրանի մեջ պարունակվող տեղեկությունները հետաքրքրություն են ներկայացնում իս-

լամի ծագման դարաշրջանում արաբների հասարակական կյանքի պայմանների հետ ծանոթանալու առումով:

Դուրանի մասերը բաժանված չեն ժամանակագրական, թե-մատիկ և որևէ այլ տրամաբանական կարգով: Նրա առանձին զլուխները կամ բաժինները կոչվում են սուրա (հայերենում օգտագործվում է նաև սուրա ձեր): Դուրանը բաղկացած է 114 սուրաներից: Սուրա բառը սկզբնապես արաբերենում նշանակում էր «շարվածքում քարերի շարը»: Եվ ինչպես որ հնում շենքի կառուցման ժամանակ հիմքում սկզբում դնում էին խոշոր քարերը, իսկ ապա ավելի փոքրերը, այդ սկզբունքով էլ կառուցված է Դուրանը: Սուրաները դասավորված են ըստ նրանց երկարության: Սկզբնամասում գտնվում են ամենաերկար սուրաները, իսկ ամենակարճերը վերջում: Միայն առաջին սուրան դուրս է մնում այդ սկզբունքից, քանի որ այն չափազանց կարճ է և կոչվում է «Ֆաթիհա»՝ այսինքն «բացող»: Այդ բացառության պատճառը այն է, որ այն պարունակում է մուսուլմանների զլսավոր աղոթքը, ուստի դրված է ամենասկզբում: Դա մի տեսակ մուտք է դեպի սուրբ գիրը:

Յուրաքանչյուր հավատացյալ մահմեդական «ալ-Ֆաթիհը» պետք է մանկությունից սկսած անզիր իմանա, ինչպես քրիստոնյաները «Հայր մերը»: Սուրաները իրենց հերթին բաժանվում են այաքների: Երբեմն այաթ բառը թարգմանում են որպես ոտանավոր, իսկ սուրան՝ որպես զլուխ: Որոշ սուրաներ իրենց անվանումը ստացել են որևէ նշանավոր դեպքի կապակցությամբ, որի վերաբերյալ նրանցում պատմվում է: Այդ սուրաների թվում հանդիպում են նաև բավականին տարօրինակ անվանումներ, օրինակ, ալ-Բարարա (Կով), ալ-Անբարութ (Սարդ) և այլն: Մյուսները անվան-

ված են Ալլահի մակղիրներով, օրինակ ան-Նուր (լույս), ալ-Մա-
ջիդ (փառավոր) և այլն:

Ղուրանի մեջ տեղ են գտել բազմաթիվ խրթին, անհասկա-
նալի ու դժվար բացատրելի արտահայտություններ, հակասութ-
յուններ և այլն: Համարվում է, որ Ղուրանում թաքնված են 70 հա-
զար իմաստներ, որոնք հասու են և կարող են մեկնաբանել միայն
Ալլահը կամ իմամները: Սակայն հակառակ դրա, ստեղծվել է Ղու-
րանի կամ նրա առանձին մասերի մեկնաբանման մի առանձին
ուղղություն կամ ժանր, որը կոչվում է «թափսիրներ»:

Ղուրանի 29 սուրաները, որոնք համարյա բոլորն ել վերաբե-
րում են հիշքային նախորդած շրջանին, սկսվում են առանձին
տառերով: Այդ տառերը մինչև այժմ շփոթության մեջ են զցում
Ղուրանը մեկնաբանողներին: Մահմեդական գիտնականները
սկզբում ենթադրում էին, որ դա ինչ որ բառերի հապավումներ են,
և նրանցում փնտրում էին իմաստ: Հետազայում նրանք դա համա-
րեցին ինչ որ զադոնիք, որը հայտնի է միայն Ալլահին: Երկնքի
հայտնությունները կյանքի առօրյա դեպքերին հարմարեցնելը
հենց պատճառ են հանդիսացել Ղուրանում տեղ գտած հակա-
սությունների համար: Այդ հակասական մտքերի, դատողություն-
ների և արտահայտությունների պարզաբանումն ու բացատրութ-
յունը մեծ ջանքեր են պատճառել իսլամական աշխարհի իրավա-
գետներին:

Մուսուլմանական երկրներում Ղուրանը կարդում էին ոչ
միայն մզկիթում, դպրոցում և այլն, այլև տանը՝ առօրյա կյանքում:
Ղուրանի լրիվ տեքստը անզիր իմացողները կոչվում էին «հաֆիզ-
ներ»: Ղուրանի տեքստը հեշտությամբ էր հիշվում, քանի որ նրա
դարձվածքները նման էին ոտանակորների: Հարուստ մահմեդա-
կանների տներում Ղուրանը պահվում է առանձին մաքուր սենյա-

կում, որը նախատեսված է աղոթքի և Սրբազն Գրքի ընթերցման համար: Ղուրանը կարդալուց հետո այն փաթաթում են կտորով, որպեսզի նրա վրա փոշի չնստի: Ընդունված չէ մեջքով շուր գալ դեպի Ղուրանը:

Այն սենյակում, որտեղ դրված է Ղուրանը, մուսուլմաններից պահանջնվում է վայելուց ու պարկեշտ փարքագիծ, չի կարելի վեճի բռնվել կամ թույլ տալ անվայել արարքներ: Չի կարելի Ղուրանը ձևորդ վերցնել առանց նախապես լվացում կատարելու: Ձեռքը վերցնելով, պետք է համբուրել Ղուրանը: Այն բարձրաձայն ընթերցելու ժամանակ չի թույլատրվում խոսել, ուտել, խմել և այլն: Ղուրանի ընթերցանության ժամանակ մահմեղական կանայք սովորաբար ծածկում են իրենց զլուխը, ինչպես աղոթքի ժամանակ:

Ընթերցելուց առաջ մահմեղականը մաքրում է իր սիրտը Ալլահի մասին խորհրդածություններ անելով, նրանից աղերսելով պաշտպանություն սատանայից: Այնուհետև զրավում է հատուկ ուժիք, որը կարգապահության է կոչում միտքն ու մարմինը. սովորաբար նստում են հատակին և Ղուրանը դնում հատուկ զգրոցի վրա, որը կոչվում է «ուեխլ» կամ «քուրսի»: Չի կարելի Ղուրանը դնել հատակին: Չի կարելի նաև այն տանել կեղտոտ տեղեր, ինչպես նաև այնպիսի վայրեր, որտեղ գինի են խմում, կամ խաղում են մոլեխաղեր:

Ղուրանի ընթերցումը սրտով, հոգով, խելքով ու ջերմեռանդորեն կոչվում է «թիլավա», իսկ ճիշտ արտասանության պրակտիկան (որը սովորաբար ուսումնասիրում են միջնակարգ մուսուլմանական կրոնական դպրոցներում՝ մեղքեսներում) կոչվում է «թաջվիթ»:

Որոշ մուսուլմաններ, որոնք չեն տիրապետում արաբերեն լեզվին, սովորում են Ղուրանը կարդալ, առանց հասկանալու նրա

իմաստն ու բովանդակությունը: Ղուրանի լեզուն անհասկանալի է նաև այն արաբների համար, որոնք չեն տիրապետում գրակալ արաբերնենին: Խոսակցական բարբառները, որոնցով խոսում է ժամանակակից արաբական երկրների բնակչության մեծամասնությունը, շատ հեռու է Ղուրանի լեզվից:

Ղուրանի թարգմանությունը այլ լեզուներով չի խրախուսվում: Մուսուլմանները համարում են, որ այն հնարավոր չէ թարգմանել: Սակայն հակառակ դրա, ներկայում Ղուրանը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Նրա առաջին թարգմանությունը և տպագրությունը հայերեն տեղի է ունեցել Վառնայում 1909 թ. Ա. Ամիրխանյանի կողմից:

Մինչև XII դարը Արևմտյան Եվրոպայի բրիստոնեական երկրներում ոչ մի գաղափար չունեին Ղուրանի բովանդակության և առհասարակ իսլամի մասին: Ղուրանի առաջին թարգմանությունը լատիներեն լեզվով, ի դեպ շատ անկատար, կատարվել է XII դարի առաջին կեսին Տոլեդոյում:

Գոյություն ունեն Ղուրանի տեքստը կարդալու տարրեր եղանակներ: Ըստ էության այն չեն կարդում, այլ երգեցիկ ոճով արտասանում են: Ղուրանի արտասանությունը դա մի արվեստ է, որը նման է երգեցողության արվեստին: Այն թողնում է խորը տպավորություն: Մահմեդական երկրներում որոշակի պարբերականությամբ կազմակերպվում են Ղուրանի ընթերցանության մրցումներ: Մուսուլմանական երկրներում բոլոր հասարակական միջոցառումները սկսվում են Ղուրանի ընթերցմամբ:

Արաբերնենը դարձավ Ղուրանի լեզու և շնորհիվ դրա, իսլամական երկրներում այդ լեզվին վիճակված էր ճիշտ այն դերը, ինչ լատիներենին Եվրոպայում: Մուսուլմանական երկրներում տարրական կրթությունը հիմնված է Ղուրանի վրա: Մանկության հա-

սակից Ղուրանը ծառայում է որպես հիմք մի շաբթ առարկաներ՝ լեզու, պատմություն, իրավունք, կրոն ուսումնասիրելու համար: Ղուրանում արտացոլված են մուսուլմանական համայնքի իրավական (գույքային, ժառանգական, քրեական և այլն) սկզբունքները: Իզուր չէ, որ հաճախ Ղուրանն անվանում են «արաքների դատաստանագիրը»:

Ղուրանի ոճը ուժգին ազդեցություն է ունեցել հետագա արաբական գրականության վրա, իսկ նրա բառապաշարը՝ մուսուլմանական իրավունքի, աստվածաբանության, միստիցիզմի և նույնիսկ արարա-պարսկական փիլիսոփայության վրա: Ղուրանը նաև անգերազանցելի աղբյուր է իսլամի պատմությունն ուսումնասիրելու համար:

Իսլամի սուրբ գիրքը գրված է շափածո արձակով: Նրա հնագույն մասերը մոտ են այն շափածո արձակ ստեղծագործություններին, որոնցից դեռևս իսլամի հանդես գալուց 150 տարի առաջ օգտվում էին արար «կահինները» (քրմերը): Առհասարակ Ղուրանում ոճի միասնականություն գոյություն չունի:

Ղուրանի մեջ գլխավոր զադափարը, որը կարմիր թելի պես անցնում է նրա միջով, պայքարն է բազմաստվածության դեմ և միսատվածության ընդունումը: Ղուրանը մուսուլմանների համար հանդիսանում է «զրբերի գիրը», աղոթքների հավաքածու, կրոնական պրակտիկայի, սոցիալական կյանքի, կենցաղի, ամենօրյա վարքագծի օրենսգիրը: Մուսուլմանները Ղուրանը համարում են «հրաշք» (արար. «ի ջազ»), այլ կերպ ասած մի անգերազանցելի գիրը, որն իր նմանը չունի, մի գիրը, որը չէին կարողանա ստեղծել, եթե նույնիսկ «բոլոր մարդիկ ու ջինները միանային իրար հետ»:

Ղուրանի դրույթներից շատերը մեր օրերում ևս ունեն իրավական նշանակություն այն երկրներում, որտեղ իսլամը պահպանել է պետական կրոնի իր դերը: Ղուրանի վրա տալիս են երդումներ, որոնց խախտումը համարվում է ծանր մեղք: Սնոտիհապաշտ մարդիկ Ղուրանը համարում են թայիսման, որն իբր ունի գերնական ուժ, ուստի օգտագործվում է կուլտային պրակտիկայում (ժողովրդական լեզվով «թուղթ ու զիր»): Ղուրանով անում են զուշակություններ («խսթիխարա»), հատկապես ճակատագրի զուշակում («ֆա՛լ»): Ղուրանը և նրա մեկնաբանությունը (թափսիր) հասդիսանում է մի շարք իսլամական երկրների ուսումնական հաստատությունների ծրագրի զլիավոր տարրերից մեկը:

ՄՈՒՍՈՒԼՄԱՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՄՈՒՆՆԱ, ՀԱԴԻՄՆԵՐ: ՄԱԶՀԱԲՆԵՐ: ՇԱՐԻԱԹ

Ակզբնական շրջանում իսլամական համայնքում միայն Ղուրանն էր համարվում դավանարանության հիմք և աղյուր, միաժամանակ և իրավունքի աղյուր: Քանի դեռ Մուհամմադը կենդանի էր և կառավարում էր մուսուլմանական համայնքը, նա ուսմայի իրավական հարցերը լուծում էր հիմնականում առաջնորդվերվ Ղուրանում պարունակվող դրույթներով: Սակայն երբ նա մահացավ պարզվեց, որ Ղուրանում եղած դրույթները բավարար չեն բոլոր պետական և հասարակական հարցերը լուծելու համար: Կյանքը հրամայողաբար խնդիր էր դնում սահմանել պետական, քրեական, գույքային, ընտանեկան իրավունքի նորմերը, որոնք չեին կարող հիմնավորվել լոկ Ղուրանի տեքստերով: Ուստի անհրաժեշտություն օգացվեց մտածելու այն մասին, թե ինչը կարող էր փոխարինել մարզարեական հայտնություններին, որոնք Մուհամմադի կենդանության օրոք ամեն անզամ հավելում ու լրացնում էին Ղուրանը, երբ օգացվում էր դրա անհրաժեշտությունը: Ակզբում կիրառում էին երեք եղանակներ կամ միջոցներ, որոնք հանգում էին հետևյալին: Եթե Ղուրանում չեին գտնում այս կամ այն հարցի պատասխանը, նախ դիմում էին «նախադեպերի» սկզբունքին, այսինքն որպես օրինակ վերցնում էին մարզարեի վարմունքը նմանատիպ պայմաններում, կամ դիմում էին ավանդությանը՝ «սուննային»: Եթե կրորդ, դիմում էին Մադինայի հին ավանդություններին (որոնցից ոչ թիչ չափով օգտվում և կիրառության մեջ էր դնում նաև ինքը՝ Մուհամմադը): Եվ վերջապես եր-

բորդ, դատավորը դիմում էր արդարություն իրազործելու իր սեփական զգացմանը կամ պատկերացմանը («ռայ»):

Այսպիսով, արդեն իսլամի վաղ շրջանում դրսնորվեցին երկու հակասական սկզբունքներ: Մի կողմից օրենքի առաջադրած հրահանգների օգտագործումը, մյուս կողմից հարցի մտահայեցողական բնույթի վերլուծությունը:

Հայտնի իրողություն է, որ արաբական լայն նվաճումների շրջանում, 632-751 թթ. Սերձավոր ու Միջին Արևելյան, Կենտրոնական Ասիխյի և Հյուսիսային Աֆրիկայի բոլոր նվաճված երկրներում արաբները հանդիպեցին արդեն ձևավորված վաղ ավատական հասարակության, ավելի բարդ տնտեսությամբ, սոցիալական հարաբերություններով և մշակույթով, քան իին արաբական հասարակությունն էր: Հետևաբար այդ երկրներում արաբները բախվեցին մի շարք իրողությունների հետ, որոնց վերաբերյալ Ղուրանը պատասխան չուներ: Եվ քանի որ այն ժամանակ արաբների մոտ հստակ տարբերակում գոյություն չուներ կրոնական համայնքի ու պետության, կրոնի և քաղաքականության, կրոնական օրենքի և պետական իրավունքի միջև, ապա կյանքի բոլոր պահանջների նկատմամբ տեսակետները արաբները ձգուում էին հիմնել կրոնի հեղինակության վրա: Ըստ այնմ, հենց այդ ժամանակներում էլ սկսեցին վկայակոչել Սուհամմադ մարզարեի ենթադրյալ խոսքերն ու արարքները, որոնք իբր թէ եղել են նրա կյանքի ընթացքում: Հենց այդ ձևով աստիճանաբար ձևավորվեց մուսուլմանական ավանդույթը՝ սուննան, որի լրիվ անվանումն է «սուննաթ ռասուլ Ալլահ»՝ Ալլահի մարզարեի սուննա:

Արդ, ի՞նչ բան է սուննան: Արաբերեն սուննա (աս-սուննա) բառը սկզբնական շրջանում ունեցել է հետևյալ իմաստը «Ճանապարհ, որի ուղղությամբ անհրաժեշտ է գնալ», փոխարքական ի-

մաստով՝ «նախնիներից փոխանցված սովորույթ», այսինքն ավանդույթ: Մինչխալմական Արաբիայում սուննա հասկացության տակ ընկալվում էր նահապետական-համայնական հասարակության բարոյա-իրավական չգրված աղաթների կամ սովորութային իրավունքի հավաքածուն: Խսլամի հայտնվելուց հետո այդ հին արաբական հեթանոսական սուննան մերժվեց և աստիճանաբար սկսեց փոխարինվել նոր, մուսուլմական սուննայով: Եթե հին արաբական սուննայից ինչ որ բան անցել է նոր, մուսուլմանական սուննային, ապա դա մեկնաբանվում էր այն իմաստով, որ անձամբ ինքը՝ մարզարեն է դա պատվիրել: Սուննան դա Մուհամմադի կյանքի օրինակներն են որպես նմուշ և ուղեցույց ողջ մուսուլմանական համայնքի և յուրաքանչյուր մահմեդականի համար որպես աղբյուր որոշելու համար մարդու և համայնքի կյանքի բոլոր պրոբլեմները:

Սուննան բաղկացած է Մուհամմադի արարքներից, նրա ունեցած արտահայտություններից և նրա հավանությանը արժանացած դեպքերից:

Սուննան ընդունվում է խսլամի բոլոր հոսանքների կողմից որպես Ղուրանից հետո տեղեկությունների հաջորդ աղբյուր այն մասին, թե որ վարքագիծը կամ կարծիքը հաճո է Ալլահին: Այսպիսվ, Սուննան լրացնում է Ղուրանը:

Արաբական մեծ նվաճումներից հետո մուսուլմանական սուննայի մեջ ներմուծվել են բազմաթիվ քրիստոնեական, հրեական, զրադաշտական տարրեր, որոնք փոխառված էին հոռմեական-բյուզանդական, Սասանյան Իրանի իրավունքից, և դարձյալ այն մեկնաբանությամբ, որ իբր դրանք մարզարեից բխող կանոններ ու ավանդույթներ են:

Սուսուլմանական սուննայի զլսավոր բովանդակությունը դա իրավունքի հարցերն են: Սուննան Ղուրանից հետո իրենից ներկայացնում է տեղեկությունների երկրորդ աղբյուրը: Այն Ղուրանի հետ միաժամանակ հանդիսանում է շարիաթի և ֆիրի (մուսուլմանական օրենսդրության) զլսավոր աղբյուրներից մեկը:

Այսպիսով, մարգարեի կյանքի դրվագները, նրա գործերը և ասույթները հայտնի են որպես սուննա: Քանի որ իսլամը ընդունում է մարգարեի անմիջական շփումը Ալլահի հետ, ուստի և Սուհամմադի սեփական ասույթները համարվում են աստծո կողմից ներշնչված: Պահպանել սուննան, նշանակում էր ընդօրինակել Սուհամմադին: Ավելի ծավալուն իմաստով սուննա նշանակում էր մահմեդական օրենսդրության պրակտիկա և տեսություն: Ղուրանը և սուննան համարվում են մուսուլմանական իրավունքի երկու զլսավոր աղբյուրները կամ արմատները («ուսուլ»): Նրանց միջև հակասությունների առկայության դեպքում, մահմեդական օրենսդիրների մեծամասնության կարծիքով, անհրաժեշտ է նախապատվությունը տալ սուննային: Սուննան, ինչպես և հրեաների մոտ, փոխանցվում էր բանավոր կերպով և ծառայում էր որպես զրկած օրենքի հավելում: Ով շեղվում էր կամ հեռանում սուննայից, ընկնում էր «բիդայի» (հերձվածի) կամ «քուֆրի» (անհավատության) մեջ, այլ կերպ ասած դառնում էր հերձվածող:

Մահմեդական օրենսդիրների կողմից հայտարարվել է, որ եթե սուննան կարող է գոյություն ունենալ առանց Ղուրանի, ապա Ղուրանը չի կարող առանց սուննայի: Այստեղից էլ ուղղադավան մահմեդականները ստացել են «ահլ աս-սուննա» (սուննայի մարդիկ, ժողովուրդ) կամ «սուննիներ» անվանումը:

Բոլոր դեպքերում սուննան Ղուրանի հետ միաժամանակ մուսուլմանների կողմից ընկալվում է որպես իսլամի աստվածա-

տուր հիմք, մուսուլմանական համայնքի կյանքի կանոնների ցուցում կամ հրահանգ:

Աբբասյանների շրջանում Ղուրանի հիման վրա և շարիաթի նորմերին համապատասխան կազմվեցին «սրբազն ավանդույթների» (սուննա) վեց ժողովածուներ, որոնք հետազոտում դարձան կանոնական: Այդ ժողովածուները մինչև օրս ընդունելի են իսլամի մեջ: Ղուրանից հետո նրանց տրվում է առավել կարևոր նշանակություն:

Սուննա անվանումը պարունակում է նաև մեկ այլ իմաստ, այն է՝ «համայնքի համաձայնեցված կարծիք»: Սուհամմադի մահվանից հետո մուսուլմանների համայնքի անմիջական «շփումը» Ալլահի հետ դադարել էր, ուստի և նրա կյանքը պետք է հիմնվեր Ղուրանի և սուննայի պատվիրանների խատիվ կատարման վրա, որոնց ճիշտ մեկնաբանությունը ապահովվում էր համայնքի համաձայնեցված կարծիքի ճանապարհով, որը ներկայացվում էր առավել հեղինակավոր գիտնական-աստվածաբանների կողմից:

Ներկայումս աշխարհի մահմեդականների մեծագույն մասը (որոշ տվյալներով մինչև 90%-ը) հանդիսանում է խալամի սուննիական ուղղության հետևորդ կամ սուննիներ, որոնց ինքնանվանումն է «ահլ աս-Սուննա վա-լ-ջամա'ա»՝ («սուննայի և համայնքի համաձայնության մարդիկ»):

Բայամի շիական ուղղության հետևորդները (շիաները) ևս ընդունում են սուննան, սակայն համարում են, որ սուննիները կեղծել ու աղճատել են այն բոլոր փաստացի հիմքերը, որոնք հաստատում են Ալիի առանձնահատուկ դերը մուսուլմանական համայնքում: Հենց այդ հոդի վրա սուննիների և շիաների պայքարը ուշ միջնադարի և նոր ու նորագույն շրջանի զանազան ժամանակահատվածներում ընդունում է չափազանց սուր և անհաշտ

բնույթ: Իսլամի այդ երկու ուղղությունների միջև կռնֆլիկտածին պատճառները առավելապես պայմանավորված են ոչ այնքան կրոնական-գաղափարական, որքան քաղաքական, տնտեսական և սոցիալական գործուններով:

Սուննաների մասին մենք տեղեկանում ենք այսպես կոչված «հաղիսների» միջոցով («հաղիս», հոգն. «ահաղիս», «նորույթ», «տեղեկություն», «պատմություն»): Հաղիսները դրանք մարզարեի ասույթներն են, նրա հրահանգները, մարզարեի մասին պատմությունները, որոնք գրի են առնվել և փոխանցվել ինչպես իր ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերուղների կողմից:

Թեև հաղիսները չեն հանդիսանում Ղուրանի հայտնությունների բաղկացուցիչ մասերը, սակայն այնուամենայնիվ նրանք կենսականորեն կարևոր են իսլամը կատարելապես հասկանալու և ընկալելու համար: Հաղիսները համարվում են Ղուրանից հետո իրավունքի երկրորդ աղբյուրը, նրա վրա է հիմնված սուննան:

Այս կամ այն հանդիսից քաղվում են իրավական կամ ծիսական հարցերի վերաբերյալ հանձնարարականներ, ծիսական մաքրության կանոններ, սննդի վերաբերյալ կարգադրություններ, առօրյա կյանքում և կենցաղում բարոյականության և վարքագծի նորմեր: Հաղիսներում պատմվում է Մուհամմադի արարքների մասին, ինչպես էր նա ուտում, խմում, հազեվում, կատարում իր կրոնական պարտականությունները, ինչպես էր վերաբերվում նորադարձ մահմեդականների և անհավատների նկատմամբ և այլն: Առկա էն նաև պատմական բնույթի հաղիսներ. նրանք բովանդակում են Մուհամմադի կամ նրա գինակից սահիբների և այլն կենսագրություններից մանրամասնություններ: Այդ հաղիսների հիմքի վրա VIII-IX դարերում կազմվում էն այսպես կոչված «արշավանքների գորքեր» («քոթուք ալ-մաղազի») Մուհամմադի և նրա

զինակիցների արշավանքների մասին, որոնք իրենցից ներկայացնում էին արաքերեն լեզվով վաղ պատմական գրականության հատուկ ժանր:

Դիմելով հաղիսներին, կարելի է հետևել, թե ինչպես էին արտացոլվում նրանցում օրվա քաղաքական շահերը: Այսպես, երբ խալիֆները զզացին թյուրքական ժողովուրդների դիմադրության ուժը, հորինվեց մի ավանդույթ, որի հետևյալ բառերը դրվեցին Սուհամմադ մարզարեի շրթներին: «Հանգիստ քողեք թյուրքերին, քանի դեռ նրանք հանգիստ են թողնում ձեզ»: Իսկ երբ 1055 թ. թյուրք-սելջուկները գրավեցին Բաղդադը և իրենց ենթարկեցին աբբասյան խալիֆներին, հայտնվեց մարզարեի նոր հաղիս: որտեղ Ալլահը ասում էր. Արևելքում ես ունեմ զորքեր, որոնց անվանում են թյուրքեր, երբ ես զայրանում եմ որևէ ժողովրդի դեմ, ուղարկում եմ այդ զորքերին»:

Հաղիսներում կարելի է գտնել նաև տեղեկություններ տարբեր ժամանակներում տեղի ունեցած զյուղացիների և արհեստավորների լայն զանգվածների ապստամբությունների և հուզումների, օրվա իշխանություններից դգործության շարժումների մասին և այլն: Այդ առթիվ IX դարի սկզբին ստեղծված հաղիսներից մեկում կարդում ենք. «Ինչպես եք դուք ձեզ պահելու այն դեպքում, երբ Լմիրը լինի ինչպես առյուծ, դատավորը ինչպես բուրյու տված գայլ, վաճառականը ինչպես զոմոացող շուն, իսկ ուղղադավանը նրանց միջև ինչպես վախեցած զառնուկը ոչխարի հոտի մեջ, որը իր համար ոչ մի տեղ չի գտնում ապաստան: Ինչպիսի՞ն կլինի զառնուկի վիճակը առյուծի, գայլի և շան միջև»:

Հայտնի իսլամագետ Գոլդցիերը բերում է Սուհամմադին վերագրվող մի գեղեցիկ հաղիս. «Միիր աղքատներին, միշտ նայիր նրանց, ովքեր ցածր են բեզանից և մի նայիր նրանց, ովքեր բե-

զանից բարձր են. ոչ մեկից ոչ մի բան մի խնդրիք. պահպանիր հավատարմությունը քո հարազատներին, եթե նույնիսկ նրանք թեզ դառնություն են պատճառել. միշտ ասա Ճշմարիտ խոսք, որքան ել որ այն դառն լինի. թույլ մի տուր թեզ զայթակղեցնել վիրավորանքներով աստծո ճանապարհից շեղվելու համար»:

Հաղիսները հաշվում էին հազարներով: Գոյություն ունեն հսկայական թվով հաղիսների հավաքածուներ, որոնք դարձել են մուսուլմանական աշխարհի համալսարաններում և դպրոցներում ուսումնասիրվող առարկա: Չափազանց կարևոր է իմանալ, ինչպես և երբ է գրի առնվել այս կամ այն հաղիսը, քանի որ մեծ է մտացածին ասույթների հայտնվելու հնարավորությունը:

Հաղիսը անպայման բաղկացած է երկու մասինց. տերստից («մաթն») և տերստից առաջ դրված այն անձանց անուններից, ովք հաղորդել է այն, և ում հաղորդել են («խնադ», այսինքն հիմք, հենարան): Ննում եղել են մարդիկ, որոնք անզիր իմացել են հաղիսները: Դրանք մեծ մասամբ եղել են ազգությամբ իրանցիներ: Առհասարակ պետք է նշել, որ աստվածաբանական գիտությունների մեջ իրանցիների խաղացած դերը չափազանց մեծ է եղել:

Հաղիսների առաջին ժողովածուները կոչվել են «խնադ», իսկ ավելի ուշ կազմվածները՝ «մուսաննաֆ»:

Արաբական խալիֆայության նվաճողական արշավանքների ժամանակ խւլամը շփումների մեջ է մտել օտարերկրյա զաղափարների և կառույցների հետ: Դա անխուսափելիորեն առաջ է բերել սոցիալական էվոլյուցիա և ավանդույթներ հավաքողները աստիճանաբար թույլ էին տալիս «անմեղ սուտ». նրանք հատկապես արդիականացնում էին որոշ ավանդույթներ, որպեսզի դրանք ներդաշնակ դարձնեն իրենց ժամանակի իրավական պահանջներին: Հաղիսների այդ էվոլյուցիան տեղի էր ունենում ոչ ա-

ուանց նվաճված ժողովուրդների կրոնների ազդեցության: Բալա-
մազետները հանդիսներում բացահայտել են քրիստոնեական Ա-
վետարանի և անհավաստի, կեղծ (ապոկրիֆ) գրվածքների, իին
հրեական և հելլենիստական գաղափարների արտացոլումներ, ո-
րոնք դրված են Մուհամմադի շրթներին:

Կյանքը գնում էր առաջ, օրենսդիրների առջև դնելով հար-
ցեր, որոնք նախատեսված չէին Դուրանի և կանոնական սուննայի
կողմից: Ուստի դրանց լուծման համար առաջ բաշվեցին մուսու-
մանական իրավունքի ևս երկու աղբյուրներ (կամ արմատներ)՝
«իջման» (համաձայնություն, կռնաենաուս) և «Կիյասը» (համեմա-
տություն, եզրահանգում ըստ գուգադրության՝ անալոգիայի):

Իջման դա հեղինակավոր աստվածաբան-իրավագետների (ֆարիհների) հավաքական կարծիքն է: Այդ աղբյուրը կիրառվում
էր այն դեպքում, եթե ոչ Դուրանը, ոչ հաղիսները (սուննան) չէին
տալիս ծագած հարցերի պատասխանը:

«Կիյասի» մեթոդը դարձել էր մուսուլմանական իրավունքի
չորրորդ աղբյուրը: Իրավաբանական հարցեր լուծելիս, սակայն
այդ մեթոդը հուսալի չէր, քանի որ այն թույլ է տալիս կամայակա-
նորեն եզրակացության հանգել այս կամ այն գործի վերաբերյալ:
Օրինակ, ցանկանալով լուծել այն հարցը, թե կարող է արդյոք ա-
մուսնական տարիքի չհասած աղջիկը ամուսնանալ, ֆարիհները
հաճախ քերում էին Մուհամմադ մարզարեի անալոգիան, որը
կնության էր վերցրել իննամյա աղջկան: Եվ դա բավական էր, որ
արդարացվի անշափահասի ամուսնությունը:

Նորամուծությունների հիմնավորման համար նույնպես հո-
րինվել են հաղիսներ և դրվել Մուհամմադ մարզարեի շրթներին:

Այսպիսով, հաղիսները և ծառայում էին որպես վաղ իսլա-
մի պատմության վերաբերյալ աղբյուրներից մեկը, ընդ որում այն-

պիսի աղբյուր, որը պահանջում է խիստ քննադատական մոտեցում:

Ինչպես նշվել է վերևում, հաղիսների հավաքումն ու պահպանումը սկզբնական շրջանում տեղի էր ունենում բանավոր կերպով, հիշողությամբ: Ավելի ուշ հաղիսները սկսեցին զրի առնվել մազաղաբների վրա: Հաղիսների պրոֆեսիոնալ հավաքողներին ու գիտակներին անվանում էին մուհադիսներ: Եվրոպացի իսլամագետները նրանց անվանում են ավանդապահներ:

Հաղիսների մեծ մասը պատմական առումով հավաստի չեն, բացի հաղիսների այն մասից, որոնք վերաբերում են Սուհամմադի և սահաբների (մարզարեի զինակիցների աշակերտների) կենսագրությանը: Բայց դա չի նշանակում, որ հաղիսները որպես պատմական աղբյուր ոչ մի արժեք չունեն: Հաղիսները, որոնք մեծ մասամբ շարադրված են VII դարի երկրորդ կեսից մինչև IX դարի վերջը, արտացոլում են խալիֆայության երկրներում սոցիալական հարաբերություններն ու պատմական տեղաշարժերը, ինչպես նաև նշված շրջանում ձևավորվող իրավական հայեցակետը:

Խալամի օրենսդրական հիմունքներն ընդունված է անվանել «ֆիրհ» (արաբերեն «հասկանալ», «խորը հասկացություն» կամ «զիտելիք»): Ֆիրհը դա Դուրանին և հաղիսներին համապատասխանող կանոնների մի հավաքածու է, որոնք որոշում են մահմեդականի վարքագիծը առօրյա կյանքի բոլոր դրսնորումներում: Ֆիրհի կանոնները կոչված են կարգավորել մահմեդականի արտաքին տեսանելի վարքագիծը, նրա կողմից պարտավորությունների անմիջական կատարումը, մինչդեռ այսպես կոչված «թա-

սավվուֆը» կոչված է որոշել հավատացյալի կյանքի հոգեկան դրսերումները: Օրինակ, աղոթքներ անելու կարգը, ճիշտ լվացում կատարելը, Մեքքայի կողմը դեմքով շրջվելը, աղոթքի համար ժամանակի որոշումը, ռարա ‘աթների կարգը՝ այս բոլորը գտնվում է ֆիրի տնօրինության ներքո, այն դեպքում, երբ մտադրությունը, կենտրոնացվածությունը, ոգու մաքրումը և այլն գտնվում են թասավվուֆի իրավասության ներքո: Ֆիրի, այսպիսով, հետևում է պատվիրանների ճիշտ ու անբասիր կատարմանը, իսկ թասավվուֆը կոչված է չափել ողին, հավատացյալի հնագանդության ու անկեղծության չափը: Ֆիրի նաև սոցիալական նորմերի խւամական կոմպլեքսն է: Այն հանդիսանում է շարիաթի բաղկացուցիչ մասը:

Մուսուլմանական իրավագիտությունը ձևավորվել է Սիրիայում և Իրաքում հիջրեթի երկրորդ դարում իրավունքի բրիտանական դպրոցների հետ շփման հետևանքով: Իսլամական աշխարհում գոյություն են ունեցել բազմաթիվ իրավական հարցերի գծով ուղղություններ կամ դպրոցներ, որոնք միևնույն օրենքին տվել են այլազան մեկնաբանություններ: Այդ հողի վրա իրավագետների շրջանում ի հայտ են եկել հակասական միտումներ: Նրանց մի մասը հենվում էր հաղիսների վրա, մյուսները պարզելով շատ ավանդությունների ոչ հավաստիությունը և հակասականությունը, որոնում էին նոր իրավական հիմքեր: Այդ բոլորի հետևանքով VIII դարի երկրորդ կեսից սկսած և IX դարում «ուղղադավան» («սուննիական») իսլամի մեջ ձևավորվեցին մի քանի կրոնական-իրավական «դպրոցներ» կամ ուղղություններ, որոնք կոչվում են «մազհար» (հոգն. «մազահիք», բառացիորեն «ճանապարհ», «գործողության ձև», «մեթոդ»): Սուննիական իսլամի շրջանակներում VIII դարից մինչև IX դարն ընկած շրջանում

ծնունդ առան մեկ տասնյակ այդպիսի դպրոցներ կամ ուղղություններ: Մինչև ներկա ժամանակները իրենց ազդեցությունը պահպանել են նրանցից չորսը: Գոյություն ունեն մահմեդական իրավագիտության կամ իրավունքի չորս հիմնական դպրոցներ, որոնք ընդգրկել են ողջ «ուղղադավան» սուննիական աշխարհը: Խոլամական կրոնի մեջ բոլոր իրավական նորմերը խարսխված են Ղուրանի և սուննայի վրա: Հենց այդ երկու աղբյուրների շրջանակներում գործել են և մեր օրերում է գործում են վերոհիշյալ չորս մազհարները: Մազհարի թարգմանությունը աղանդ բառով լուրջ սիսալ է հանդիսանում: Աղանդի տակ պետք է հասկանալ այնպիսի կրոնական խումբը, որն անջատված է տիրապետող կրոնական կառույցից կամ համայնքից, նրա հետ խզում է իր կապերը, նրա նկատմամբ որդեգրում է թշնամական հարաբերություններ և գնում է իր կատարելապես ինքնուրույն ճանապարհով: Մինչեռ կարելի էր պատկանել տարբեր մազհարների, բայց այնուամենայնիվ մնալ միևնույն «ուղղադավան» սուննիական համայնքի անդամ:

Իսլամի այդ չորս իրավական համակարգերն են.

1. Մալիքիական մազհարը: Նրա հիմնադիրը Մադինայի իմամ Մալիք իբն Անասն է (708/715-795 թ.): Նա կազմել է մի ժողովածու, որը կոչվում է «մուվաթթա» («մարրված արահետ»): Այն իրենից ներկայացնում է ուղղադավան սուննիների սկզբունքներից բխող օրենքների համակարգում (կողիֆիկացում):

Մալիքը իր առջև խնդիր էր դրել ստեղծելու իրավական մի համակարգ, որն անմիջականորեն հիմնված լիներ հաղիսների վրա: Նրա աշխատությունը արտացոլում է VIII դարի Մադինայի գիտնական-իրավագետների տեսակետները: Անշուշտ Մալիքի հիմնական աղբյուրը Ղուրանն է, իսկ ապա Մուհամմադի և նրա

զինակիցների սուննան, սակայն անհրաժեշտության դեպքում նա դրանց համակցում է Մաղինայի սովորական (սովորութային) իրավունքը: Նա գտնում է, որ թեև հաղիսները անպայման պետք է ծառայեն որպես հիմք, սակայն նրանք կարող են ենթարկվել փոփոխության, եթե հակասության մեջ մտնեն հասարակական շահերի հետ («իսրայէլակի սկզբունքը»): Անհրաժեշտության դեպքում նա դիմում է նաև մեկ այլ սկզբունքի՝ յուրաքանչյուր կոնկրետ հարցի կապակցությամբ Մաղինայի գիտնական-իրավագետների համաձայնեցված կարծիքին («իշմա», այսինքն *consensus doctorum*): Այլ կերպ ասած, Մալիքը հետևում է ավանդույթին, սակայն հնարավոր ու թույլատրելի է համարում նաև անհատական մեկնարանությունը («ույյ») այն չափով, որ չափով որ այն վնաս չի հասցնում հասարակական շահերին:

Առհասարակ մալիքիական մազհարի հետևորդները աչքի են ընկնում իրենց անզիջում նվիրվածությամբ ավանդույթներին. դրանք համարելով նախնական և անաղարտ վիճակում պահպանված տեղեկությունների աղբյուր: Մալիքիականները մերժում են Ղուրանի բանական-հայեցողական մեկնարանությունը: Ճիշտ է, նրանք ընդունում են տրամարանական եզրակացությունների և «կիյասի»՝ համանմանության (անալոգիայի) կիրառումը, սակայն ավելի սահմանափակ շրջանակներում, քան հանաֆիական դպրոցի հետևորդները:

Մի խորով, մալիքիական մազհարի հետևորդները գտնում են, որ Սուլահմադ մարզարեի կենանության օրոր եղած նորմերը պետք է անաղարտ կերպով պահպանվեն, ինչպես նաև հաշվի առնվեն Ղուրանի և սուննայի նորմերը, պետք է պահպանվի Մաղինա քաղաքի սովորական իրավունքը («աղաք», «ուրֆ»), անհրաժեշտ է առաջնորդվել «իշմայով» («համաձայնություն», *consensus*,

կարծիքների համաձայնեցում) և պետք է շանտեսվի առանձին անհատական կարծիքը («ույ»):

Մալիքիական մազհաբը բացի Հիջազից ու Մաղինայից արդեն IX դարում տարածվեց նաև Վերին Եգիպտոսում, Հյուսիսային Աֆրիկայում (Սաղրիք), արաբական Խսզանիայում, Սուլանում: Իրանում և Կենտրոնական Ասիայում մալիքների մազհաբը համարյա ոչ մի դեր չկը խաղում:

Ներկայում մալիքիական մազհաբը տիրապետող է Մաղրիքի երկրներում (Ալժիր, Թունիս, Սարոկլո, Լիբիա), Արևմտյան Աֆրիկայում, տարածված է նաև Սուլանում, Իրաքում, Սիրիայում, Եգիպտոսում և մի շարք այլ երկրներում:

2. Հանաֆիական մազհաբ: Նրա հիմնադիրն է մուսուլմանական-աստվածաբան ֆարիկիներից ամենանշանավորներից մեկը՝ իմամ ան Նո ՛ւման Աբու Հանիֆան (մոտավորապես 696-767 թթ.): Ծնվել է Քուֆայում իրանական մավալիներից սերող մետարսի հարուստ վաճառականի ընտանիքում: Քուֆայում Աբու Հանիֆան ապրել է իր կյանքի մեծ մասը և այնտեղ դասախոսություններ էր կարդում ֆիրկի վերաբերյալ: Իր համակարգը նա աշակերտներին էր շարադրում բանավոր ձևով: Հանաֆիական մազհաբի առանձնահատկությունը կայանում է հետևյալում. նրանք Ռուրանն ընդունում են ամբողջությամբ ու անվերապահ կերպով որպես իրավունքի աղբյուր. սուննան ընդունվում է որպես անկախ աղբյուր, սակայն միայն հաղիսների խնամքով ընտրությունից հետո: Աբու Հանիֆան և նրա ստեղծած ուղղությունը ավելի մեծ տեղ էին տալիս ռային (առողջ դատողության վրա հիմնված անձնական կարծիքին և կիյասին՝ (համեմատության և գուգադրության հիմքի վրա գերակշիռ դատողությանը): Անորոշ և վիճելի հարցերի կապակցությամբ հանաֆիական մազհաբի կողմնակից-

ները առաջնորդվում էին մուսուլմանական համայնքի համար օգտակարության չափանիշով: Այլ կերպ ասած, երկու հնարավոր տրամաբանական եղրակացություններից այն ընտրելու սկզբունքին, որն առավել օգտակար ու հարմար էր համայնքի (պետության համար): Հանաֆիականները շանում էին շարիաթի խիստ շրջանակները հարմարեցնել կյանքի գործնական պահանջներին:

Հանաֆիական մազհաբը մյուսներից տարբերվում է նաև նրանով, որ թույլ է տալիս բացի կրոնական իրավունքից լայնորեն օգտագործել նաև աշխարհիկ իրավունքը, այսինքն մինչև խլամի հաստատումը ձևավորված տեղական սովորական (սովորութային) իրավունքը, որը հայտնի է «աղաթ» կամ «ուրֆ» անվան տակ: Ըստրիփ դրա, հանաֆիական իրավունքը հանդիսանում է առավել ճկուն և առավել հարմար աշխարհիկ իշխանության համար: Այդ իրավունքը առանձնակի հաճույքով ընդունում էին քոչվորները, քանի որ դրանով նրանք կարող էին պահպանել իրենց հին նահապետական սովորույթները՝ աղաթները: Հենց այդ պատճառով թյուրքական ժողովուրդները՝ սելջուկները, ավելի ուշ Օսմանյան կայսրությունը, գերադասեցին հանաֆիական իրավունքը:

Հանաֆիական մազհաբը մուսուլմանական աշխարհում ամենատարածվածն էր շնորհիվ իր համեմատական ազատականության և այն բանի, որ այդ դպրոցի հետևորդ Օսմանյան կայսրությունը ողջ մահմեդական աշխարհում գրավում էր առաջնային և կարևորագույն դեր: Ըստ որում Օսմանյան կայսրությունում հանաֆիական մազհաբը համարվում էր պետական կարգավիճակ: Բոլոր կազիները՝ հոգեոր դատավորները և մուֆթին, ինչպես նաև իրավախորհրդատունները կարող էին իրենց անձնական համոզունքներով հարել սուննիական ցանկացած մազհարի, բայց

դատել և կայացնել իրավաբանական վճիռներ՝ ֆեթվաներ, պարտավոր էին կատարել համաձայն հանաֆիական իրավունքի:

Ներկայումս հանաֆիները տիրապետում են հավատացյալ մահմեդական սուննիների միջավայրում բոլոր թյուրքական երկրներում (բացի Աղրբեջանից), արևելյում ույղուրներից սկսած մինչև արևմուտքում թուրքերը: Հանաֆիական մազհարի հետևորդներ են նաև Չինաստանի, Հնդկաստանի, Պակիստանի, Սիրիայի սուննի մահմեդականները: Հանաֆիական մազհարի հետևորդներ կան նաև Եգիպտոսում, Ինդոնեզիայում, Օուսաստանում, Բուլղարիայում և Բալկանների այլ պավոնական երկրներում:

3. Շաֆիական մազհար: Այս մազհարի հիմնադիրը իմամ Աբու Աբդուլլահ Մուհամմադ իբն Ինքիս աշ-Շաֆին է (767-820 թթ.), որը ծնվել է Պաղեստինում, գործել է Սիրիայում, իսկ ապա Եգիպտոսում: Նա ուսուլ ալ-Փիրիի՝ արմատների մեթոդոլոգիայի հիմնադիրն է, որի շնորհիվ հնարավոր է դարձել տալ մազհարների ճշգրիտ սահմանումները՝ նրանց արմատների և աղբյուրների տեսակետից: Նա իր այդ ուշագրավ ուսումնաժողուրյունը կատարել է «Ռիսալա» («տրակտատ», «ուղերձ») կոչված հետազոտությունում:

Շաֆիականների իրավունքի համակարգը գրավում է յուրահատուկ միջին կամ կոմպրոմիսային դիրք հանաֆիական և մալյիրիական մազհարների միջև, բայց ավելի մոտ է Վերջինին: Տրամաբանական եզրահանգումն ու կիյասը՝ անալոգիայի մեթոդը շաֆիականները ևս կիրառում են, սակայն շանում են հստակ որոշել նրանց գործողության շառավիղը:

Շաֆիականները հավանություն չեն տալիս այսպես կոչված «իսթիհան» սկզբունքի կիրառմանը, համարելով, որ այն չափից

ավելի մեծ հնարավորություններ է տրամադրում սուբյեկտիվ կարծիքի համար: Դրա փոխարեն շաֆիականները կիյասին դիմելիս օգտագործում են իրենց կողմից առաջ քաշված «իսրիսիաբի» (արար. «ինչ որ հայտնի բանի հետ կապի որոնում») մեթոդը: Այդ սկզբունքից հետագայում սկսեցին օգտվել նաև հանաֆիականները, սակայն ավելի սահմանափակ շրջանակներում:

Շաֆիական մազհարը մեծ տեղ է հատկացնում «իջմային» ու մամայի (իսլամական համայնքի) հավաքական կարծիքին, սակայն Շաֆիականների կողմից մալիքիական մազհարից փոխառված է վճիռ կայացնելու սկզբունքը ելնելով հասարակական շահից կամ օգտավետությունից («ալ-իսրիալահ»): Այդ մեթոդը հնարավորություն է տալիս որոշումներ կայացնել ինչպես ազատ դատողության, այնպես էլ սովորույթի (ուրֆ) նորմերի հիման վրա:

Աշ-Շաֆին գտնում էր, որ իր ուսմունքի սկզբունքները խարսխված են Ղուրանի և սուննայի վրա և որ նրանք իրավունքի միասնական աղբյուր են, սակայն սուննան լոկ ծառայում է որպես Ղուրանի հավելում: Նրա կարծիքով իջման (կոնսենսուսի սկզբունքը) նույնպես ծառայում է որպես Ղուրանի և սուննայի հավելում:

Շաֆիականները ժխտում են ռայի (անձնական կարծիքի) սկզբունքը: Նրանք թեև ընդունում են կիյասի (դատողություն ըստ անալոգիայի) սկզբունքը, սակայն գտնում են, որ կիյասը անհրաժեշտ է կիրառել միայն այն դեպքերում, եթե այս կամ այն հարցի վերաբերյալ ոչ Ղուրանում, ոչ սուննայում և ոչ էլ իջմայում հիշատակություն չկա:

Այսպիսով, ըստ շաֆիական մազհարի, իրավունքի կամ իրավագիտության (ուսուվ ալ-ֆիքի) հիմքերը կարելի են դասավորել

հետևյալ կարգով ըստ նրանց նշանակության. Ղուրան, սուննա, իջմա և կիյաս, իսկ ռայր չէր հաշվում որպես կայուն հիմք:

Հանաֆիականից հետո շաֆիական մազհարք ամենատարածվածն է: Այն տարածում է գոտել Արաբական Միացյալ Էմիրություններում, Եգիպտոսում, Պաղեստինում, Պակիստանում, Բահրեյնում, Հորդանանում, Արևելյան և Հարավային Աֆրիկայում, Ինդոնեզիայում (հիմնականում Ճավայում, Սումաթրայում, Կալիմանթանում), Սիրիայում և Հարավային Արաբիայում, Դաղստանի և Աղրբեջանի լեզգիների շրջանում, Մալայզիայում, Բրունեյում, Իրաքում, Հնդկաստանում և Լիբանանում: Շաֆիական մազհարքի հետևորդները կազմում են Իրանի և Եմենի սուննիների հիմնական զանգվածը:

4. Հանբայիական մազհարք: Այս մազհարքի հիմնադիր է համարվում իմամ Ահմադ իբն Հանբալը (ծնվել է Բաղդադում 780 թ., մահացել 855 թ.): Հանբալիների հետևորդները համարվում են ամենամոլեռան մահմեդականները: Հանբայիական մազհարքը խւամի սուրբ գիրը՝ Ղուրանը, իսլամական դոգմաները, հաղիսները և այլն ընդունում է գուտ անաղարտ վիճակում, այսինքն, ինչպես նրանք հայտնվել ու ձևավորվել են իսլամի ծագման շրջանում: Հենց իր՝ մազհարքի հիմնադիր Հանբալի կրոնական և իրավական հայցըները դուրս չեն գալիս զաղափարների փակ շրջանակներից: Նեղմտությունը, սահմանափակությունը և անհանդուրժողականությունը կրոնի գործերում ամեն մի «նորույթի» նկատմամբ, տառակերությունը և Ղուրանի ու հաղիսների ցանկացած ազատ ու բանական մեկնաբանման մերժումը հանբալիների համակարգի բնորոշ գծերն են հանդիսանում: Հանբալիները կտրականապես թույլ չեն տալիս կրոնի մեջ կարծիքների ազատ արտահայտման թեկութ նվազագույն դրսեորում, աչքի են ընկ-

նում շարիաթի նորմերը և մուսուլմանական ծիսակատարություններն անշեղորեն կատարելու անզիջում դիրքերում:

Հանբալիական մազհաբը կտրուկ հանդես է գալիս IX-X դարերում խլամի մեջ տարածված (մասամբ քրիստոնեության ազդեցության ներքո) սրբերի կուլտի և նրանց դամբարանները կատարվող ուխտագնացության դեմ: Դրա մեջ հանբալիները տեսնում են միաստվածության համար վտանգավոր «նորամուծություն», որը գոյություն չի ունեցել նախասկզբնական խլամում: Իրն Հանբալը պնդում էր, որ խլամը պետք է մարրվի Սուհամմադ մարգարեի սուննային դիմելու ճանապարհով, մերժում էր խլամի մեջ նորամուծությունները (բիդա), դատապարտում խլամական հասարակության մեջ կոնֆլիկտների ծագումը:

Իրն Հանբալի սկզբունքի համաձայն, օրենքի աղբյուր պետք է լինի միայն սրբազն ավանդույթը: Նա կասկածի տակ էր դնում հաղիսների հավաստիությունը:

Հանբալիական դպրոցը վերածվել է մազհաբի միայն XII դարում:

Հանբալիական մազհաբի սկզբունքների հիման վրա կիսանահապետական Նաջում XVIII դարում ձևավորվեց վահաբիականությունը կամ վահաբիների շարժումը:

Իրն Հանբալը ռայը (անձնական կարծիքը) ընդունելի էր համարում միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

X-XV դարերի միջև ընկած շրջանում հանբալիական մազհաբը լայն տարածում գտավ ողջ մահմեդական աշխարհում: Այն հատկապես տարածված էր Հիջազում, Նաջում, Սիրիայում, Սիցազետքում (այս երկու երկրներում մինչև սելջուկների կողմից հանաֆիական մազհաբի տարածվելը): XIV դարում այն կրկին վերածնունդ ապրեց Սիրիայում: Հանբալիները մեծ թիվ են կազ-

մում նաև Իրանում: Արաք պատմիչ Սուլադդասին (X դ.) հանրայիների մասին հիշատակում է Սպահանում, Շեյում և այլ քաղաքներում:

Մեր օրերում հանրավական մազհարի տարածումը սահմանափակվում է հիմնականում Սառույան Արաբիայով և աննշան չափով Սիրիայով ու Եգիպտոսով:

Հանրավական դպրոցը հայտնի է իր առանձնահատուկ դաժանությամբ պատիճներ որոշելիս:

Ինչպես նշվել է վերևում, իսլամի այս չորս մազհարներին հետևում են սուննիները կամ ուղղադավան մահմեդականները: Ի դեպ, սուննիական իսլամը այդ բոլոր չորս համակարգերը համարում է հավասար, գոներով, որ նրանց բնորոշ են լոկ ոչ եական տարրերությունները («իիթիլաֆ ալ-մազահիբ»): Այստեղից հետևում է, որ յուրաքանչյուր սուննի մահմեդական ազատորեն կարող է փոխել իր մազհարը: Սակայն պետք է նշել, որ այդպիսի խաղաղ հարաբերությունները չորս մազհարների միջև միանգամբ չեն հաստատվել: IX դարում և դրանից հետո այդ մազհարների միջև ընթանում էին կատաղի վեճեր, երբեմն վերածվելով զինված ընդհարումների:

Այդ չորս համակարգերի միտումները համառոտակի կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. մալիքները և հանրավական ավելի շատ հետևում են օրենքի տարին, իսկ հանափիներն ու շաֆիները ավելի մեծ նշանակություն են տալիս օրենքի ոգուն: Իսլամի սուննիական ուղղությունը դավանող այն երկրներում, որտեղ իրավունքի նորմերը խարսխված են շարիաթի սկզբունքների վրա, գույքային, ժառանգական և քրեական իրավունքը, փաստարանության ինստիտուտը, երդում տալու կանոններն ու ձևերը, երդումնային խոստումները, երաշխիքային հարցերը և այլն մշակ-

ված են սուննիական ուղղության վերոհիշյալ չորս իրավական դպրոցների վրա:

Բացի վերոհիշյալ չորս մազհաքներից, գոյություն են ունեցել նաև այլ մազհաքներ, որոնք սակայն անհետացել են և այժմ գոյություն չունեն:

* * *

Դուրանում չի խոսվում այն մասին, թե ինչպես պետք է կառուցվի մուսուլմանական պետությունը: Այնտեղ չի հիշատակվում նաև խալիֆի մասին որպես մուսուլմանական պետության ղեկավարի: Խալիֆի աստիճանը, որպես Մուհամմադի տեղակալի, ստեղծվել է այն ժամանակ, երբ Երիտասարդ արաբական պետության տիրապետող վերնախավը կարիք է զգացել կենտրոնացնելու կառավարման համակարգը, որպեսզի կարողանա պահպանել իշխանությունը արաբական բնույթինական զանգվածների, հողագործների և քաղաքային բնակչության նկատմամբ և այդ զանգվածներին ուղղի դեպի բյուզանդական և իրանական հողերի նվաճումը: Սկզբնական շրջանում հստակ պատկերացում գոյություն չուներ, թե ինչպիսին է լինելու խալիֆի պարտականությունների շրջանակը: Գոյություն չուներ նաև խալիֆի ընտրության որոշակի կարգ: Արաբական վաղ ֆեոդալական պետության զարգացման հետ զուգահեռ այդ խնդիրը սկսեց աստիճանաբար ձևավորվելու կյանքի կոչվել:

Խալիֆի ձեռքերում ի սկզբանե կենտրոնացվեց ինչպես կրոնական իշխանությունը (իմամություն), այնպես էլ քաղաքական (Էմիրություն):

Մուսուլմանական ֆարիհները մի քանի հարյուրամյակների ընթացքում աստիճանաբար մշակում էին խալիֆների կրոնական

ու աշխարհիկ իշխանությունների տեսությունը, անկասկած աշխատելով այն բխեցնել Ղուրանի հրահանգներից: Որպես այդ տեսության հիմք Ղուրանից վերցված էր հետևյալ արտահայտությունը. «Հավատացյալներ հնազանդվեցեք Ալլահին, ենթարկվեցեք նրա մարզարեին՝ Մուհամմադին և ձեր միջի իշխանություն կրողներին»: Ղուրանի մեկնաբանները «իշխանության կրողների» տակ հասկանում էին իմամ-խալիֆին, շարիաթի գիտակ ֆարիհներին, կազիներին, հրամանատարներին և այլն:

Սուննիական պետական իրավունքի գծով ամենահեղինակավոր աշխատանք էր համարվում շաֆիական մազհարի օրենսգետ Աբու-լ-Շասան Ալի իրն Սուհամմադի (974-1058) «Կառավարման օրենքները» կամ «Սուլթանական օրենքները» («Ալ-ահրամ աս-սուլթանիյա») աշխատությունը, որտեղ խալիֆայության տեսությունը շարադրված է առավել ավարտուն տեսքով:

Պատերազմը ոչ մահմեդական պետությունների հետ, կամ «հավատի համար սրբազն պատերազմը» դիտվում էր որպես խալիֆի զիսավոր պարտականություններից մեկը: «Հանուն հավատի» պատերազմի հետ միաժամանակ մուսուլմանական իրավունքը նախատեսում է նաև ներքին պատերազմներ (արար. «խուրութ ալ-մուսալիխ»), որի տակ հասկացվում է պատերազմ «խոռվարարների» դեմ:

Ինչ վերաբերում է մուսուլմանների միջև պատերազմներին, ապա մուսուլմանական իրավունքը չէր նախատեսում այդպիսի հնարավորություն, քանի որ աստվածապետական պետությունը սկզբունքորեն ենթադրում էր միայն միասնական համամուլմանական պետության գոյություն: Սակայն գործնականում մուսուլմանական պետությունների միջև պատերազմներն արդեն IX-X դարերում դարձել էին սովորական երևոյթ:

* * *

Շարիաթ բառը ծագում է (արաբերեն «շարիա», «շարա'ա») «օրենքներ հրապարակել» բառից: Դա մուսուլմանական օրենսդրությունն է, կամ մահմեդական օրենքների սխատեմավորված հավաքածուն՝ հիմնված Դուրանի և սուննայի վրա: Շարիաթ բառացի նշանակում է հատուկ ճանապարհ, որով պետք է զնան մուսուլմանները: Շարիաթի մեջ խլամի տեսանկյունից լուսաբանվում են ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական պրոբլեմները: Նրանում մեկ միասնական համակարգի մեջ են ընդգրկված այնպիսի օրենքներ, որոնք կարգավորում են տնտեսական կյանքը, բարոյականության և էթիկայի նորմերը, մահմեդական ծեսերն ու տոռները, հավատացյալների վարքագիծը և ողջ մահմեդական համայնքի սպարելակերպը: Շարիաթում մանրամասն շարադրվում են արգելքները, թվարկվում են թույլատրելի արարքները և այլն: Շարիաթն ու նրա օրենքները, ըստ մահմեդական օրենսդիրների սկզբունքի, պետք է ընդգրկեն մուսուլմանի կյանքն ու գործունեությունը օրորոցից սկսած մինչև գերեզման: Շարիաթը կանոնակարգում է օրենսդրական իրավունքը, ընտանեկան-ամուսնական, կենցաղային հարաբերությունները: Նրանով առաջնորդվում են մուսուլմանական շարիաթական դատարաններում:

Շարիաթը ստեղծել են մի քանի հարյուրամյակների ընթացքում, VII դարից մինչև XII դարը ընկած շրջանում: Շարիաթական դատարաններից բացի մուսուլմանական երկրներում գոյություն ունեին և ներկայում էլ գործում են նաև աշխարհիկ դատարաններ: Մի շարք մուսուլմանական երկրներում սահմանադրությունը մշակելիս որպես հիմք են ընդունել շարիաթը (օրինակ, Իրանի

Իսլամական Հանրապետությունում, Քուվեյթում, Կատարում, Բահրեյնում և այլն):

Շարիաթը դա վարքագծի խնամքով մշակված օրենսգիրքն է, որի մեջ շարադրված են ընտանեկան և հասարակական կյանքի բարոյական օրենքները, զանազան արգելքներն ու թույլատրված կանոնները: Շարիաթի նորմերը բավականին հաճախ ենթարկվում են տարբեր տեսակի փոփոխությունների, կապված ժամանակի ու հասարակության հետ:

Մուսուլմանի վարքը որոշվում է հինգ տեսակներով, որոնք են. «Փարդ» կամ «վաշիր», դա այն է, որը ենթակա է պարտադիր և անվերապահ կատարման, օրինակ, իսլամի հինգ հիմնայունների պահպանումը. «հարամ»՝ դա բացարձակ արգելքի ինչ որ բան է, օրինակ, ամուսնական դավաճանությունը կամ խոզի մսի օգտագործումը. «մանղութ» կամ «մուստախաբ»՝ թույլատրված, բայց ոչ պարտադիր գործողությունները, օրինակ լրացուցիչ աղոթքների կատարում. «մարրուհ», շարգելված, բայց և չխրախուսվող գործողություններ, օրինակ, ապահարզան տալը. և «մուրա»՝ գործողություններ, որոնց կապակցությամբ գոյություն չունեն հստակ ցուցումներ, ուստի թողնվում են յուրաքանչյուր մահմեդականի խղճի դատին և առողջ դատողությանը:

Ժամանակակից կյանքի պրոբլեմների մեծ մասը ընկնում է մուրա կատեգորիայի տակ: Առհասարակ այն բոլորը, ինչ արգելված չէ, իսլամի մեջ հանդիսանում է թույլատրելի, բնականաբար, բանական սահմաններում և իսլամական սկզբունքների ու անձնական խղճի հետ ներդաշնակության մեջ:

Իսլամի մեջ հավատացյալի կյանքի յուրաքանչյուր օրն ու ժամը, նրա ամեն մի քայլն ու արարքը խստիվ կանոնակարգված է: Օրինակ, շարիաթում ասվում է, թե ինչպես պետք է վեր կենալ

անկողնուց և աղոթել, լվացվել, ուտել, ինչպես պետք է վերաբեր-
վել ընտանիքի անդամների նկատմամբ, ինչպես գործարքներ
կնքել, որսի ժամանակ թոշուններ սպանել և այլն: Այդ նույն նպա-
տակով կազմվել են հատուկ ժողովածուներ, որտեղ ուսուցա-
վում են հավատացյալների վարքագծի վերաբերյալ սկզբունքներ:
Այդ ժողովածուներում մոռացության մատնված չեն նույնիսկ մար-
դու կյանքի ինտիմ կողմը:

Շարիաթական գրքերում ասվում է, որ մուսուլմանը ամեն
ինչ պետք է անի «հանուն Ալլահի»: Որպես օրինակ բերվում է
մազհաբներից մեկի հիմնադիր Ահմադ իբն-Զանբալի օրինակը,
որն իբր թե ձմերուկ չեր ուտում լոկ այն պատճառվ, որ Ղուրա-
նում և սուննայում տեղեկություն չեր գտնում այն մասին, թե արդ-
յոք Սուհամմադ մարզարեն երբեկցէ կերել է ձմերուկ, թե ոչ:

Անտարակույս իսլամը ուժգին ազդեցություն է գործել մահ-
մեդական հասարակության տարբեր կողմերի վրա: Նույնիսկ մեր
օրերում իսլամական երկրներում մեծ թվով մարդիկ անվերապա-
հորեն կատարում են կրոնի կողմից նախատեսված բոլոր հանձ-
նարարականները, և իբր անում են այն, ինչ ցանկանում է Ալլահը
(«մաշա 'ալլա», կամ հաճո է Ալլահին («ին շա 'ալլա»):

Շարիաթը ստեղծվել է ոչ միանգամից, քանի դեռ Սուհամ-
մադը կենդանի էր, ինչն ինքն էլ միաժամանակ հանդիսանում էր
և՝ դատավոր և՝ օրենսդիր: Իրավական քազմաթիվ նորմեր, որոնք
մտել են Ղուրանի սուրաների մեջ, մշակվել են նրա կողմից: Սա-
կայն Սուհամմադը բնականաբար չեր կարող նախատեսել այն
բոլոր իրավական կազուները, որոնք հանդիպում են հասարա-
կության, պետության և անհատի կյանքում: Նրա մահվանից հետո
շատ շուտ պարզվեց, որ Ղուրանի պատվիրանները բավարար չեն
բոլոր իրավական հարցերի լուծման համար: Եթե որևէց հարցի

պատասխանը չին գտնում Ղուրանում, այնժամ դիմում էին նախադեպին, այսինքն ստեղծված վիճակից ելք էին որոնում դիմելով մարզարեի կատարած քայլերին կամ գործողություններին նման իրադրությունների ժամանակ, կամ պարզապես առաջնորդվում էին նրա առանձին ասույթներով: Այդ բոլոր օրինակելի որոշումները, որոնք պահպանվել էին տարբեր ավանդություններում, գրի էին առնվել VIII-IX դարերում: Հենց այդ ճանապարհով, ինչպես նշվել է վերևում, ծնունդ առավ հաղիսների, այսինքն Մուհամմադի վերաբերյալ ավանդությունների, նրա կատարած գործերի, ընդունած որոշումների և հայտարարությունների մասին ժողովածուն:

Շարիաթը ներառում է նաև սովորական (սովորութական) իրավունքի՝ աղաթի նորմերը, որից վճիռներ կայացնելիս, հաճախ օգտվել է նաև Մուհամմադը:

Այսպիսով՝ Ղուրանը, սուննան (Մուհամմադի ասույթները և գործերը), բիյասը (անալոգիաներ կամ նախադեպեր), իջման (խոշոր իրավագետների և աստվածաբանների համաձայնեցված կարծիքը), ֆեթվաները (քարձրագոյն հոգևոր անձանց իրավաբանական եզրակացությունները), աղաթը (սովորույթները) շարիաթի աղբյուրներն են և բաղկացուցիչ մասերը: Սակայն զլսավոր աղբյուրներ են համարվում Ղուրանը և սուննան: Ընդ որում, մնացած բոլոր աղբյուրները չպետք է հակասեն դրանց:

Շարիաթը առաջնորդվում է «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքով, որն արաբերեն կոչվում է «կիսաս»: Շարիաթը խրախուսում է նաև արյան վրիժառությունը: Ղուրանում այդ մասին ասվում է. «Ո՛վ հավատացյալներ, սպանության համար ձեզ վրեժիննդրություն է պատվիրված, ազատի տեղ ազատ, և ծառայի տեղ ծառա, և իգականի տեղ իգական» (2:173):

Ճիշտ է, թափած արյան դիմաց կարելի է վճարել վիրա՝ արյան զին սպանվածի ազգականներին: Շարիաթը հանգամանորեն մշակել է նման տուգանքների չափը նաև հաշմելու դեպքի համար:

Հանցագործությունների համար շարիաթական պատիժները պահպանել են միջնադարին հատուկ դաժան պայմանները: Օրինակ, Ղուրանում ասվում է. «Եվ արու գողին և եգ գողին՝ երկուսի էլ ձեռները կտրեցեք ի պատիժ իրանց արածի իբրև խրատ Աստծո կողմանե» (5:42): «Շնացող կնկան և շնացող մարդուն՝ ամեն մեկին հարյուր զավազան զարկե՛ք իբրև Աստծո դատաստան... և հավատացյալներից մի խումբ ներկա լինի նրանց այդ պատժին» (24:2):

Բազմաթիվ հանցագործությունների համար իսլամը նախատեսում է մահապատիժ. օրինակ, իսլամից հրաժարվելու, ավագակության, կանխամտածված սպանության և այլն. մահապատժի ձևերը ևս՝ զլյատում, քառատում, քարծեծ, կենդանի թաղել, ջրի մեջ խեղեկ և այլն նույնպես զալիս են միջնադարից: Հստ եռթյան շարիաթը հանդիսանում է կրոնի ներխուժման միջոց հավատացյալների ամենօրյա կյանքի և կենցաղի լայն շրջանակները: Մահմեդական երկրներում նույնիսկ այնպիսի ակտերը, ինչպես առք ու վաճառքի, հողերի ու տների վարձակալության, պարտքով փող վերցնելու և այլն պայմանագրերը կնքվում են հոգևորական դատավորների՝ կադիների մոտ, որոնք առաջնորդվում են շարիաթական կանոններով: Շնորհիվ դրա, կրոնի ազդեցությունը հասարակական և մասնավոր կյանքի վրա իսլամական երկրներում չափազանց ուժեղ է:

Արդյոք, ի վիճակի՝ է Մերձավոր Արևելքում 14 դար առաջ սահմանված օրենքը լուծել ժամանակակից քաղաքակրթության

բոլոր բարդ խնդիրները: Կարո՞՞ն է մարդն իմանալ, արդյոք, լավ է թե վատ հեռուստացույց նայելը, ոոք երածշտության կատարելն ու լսելը և այլն: Խսլամական աշխարհում հեղինակավոր մարդիկ, զինվելով մտածողության ու դատողության ժամանակակից մեթոդներով, որոշում են, թե գործողությունների որ տեսակն ու ձևն է մուսուլմանների համար ընդունելի այս կամ այն կոնկրետ դեպքերում և արդյոք այն համապատասխանում է Ղուրանի և հաղիսների ոգուն, թե ոչ: Նման եղանակով մշակված որոշումները կոչվում են «փջմա» կամ համաձայնություն, իսկ մուսուլմանական իրավական սկզբունքների մշակումը ընդունված է անվանել «փջրի հաղ»: Սակայն եթե նույնիսկ համաձայնության հիմքի վրա օրենսդրության հարցերով գրադարձ մարդիկ միաձայն արտահայտվել են հօգուտ այս կամ այն օրենքի, որը հակասում է Ղուրանի և սուննայի սկզբունքներին, օրենքը կմերժվի «Ճշմարիտ մուսուլմանների» կամ առանձին երկրներում պետական մարմինների կողմից որպես հակաշարիաթական օրենք:

Իշման մշակվում է խսլամական իրավունքի ճանաչված զիտակների՝ «ուլամայի» (արար. ուլամա (ուլեմներ), զիտնականներ, եզակի թիվ ալիմ) կողեկտիվ որոշման հիման վրա: Սակայն, ի դեպ, նրանց որոշումները ևս պարտադիր չեն համարվում կատարման համար, քանի որ այդ որոշումների հիմքում ընկած է մարդկային կարծիքը: Յանկացած իշման, որը մշակվել է հին շրջանում, մարզաբեկ մերձավորագույն հետևորդ և զինակից առաջին խալիֆների կողմից, ընդունվում են որպես պարտադիր կատարման ենթակա:

Շարիաթի շիական խմբագրության տարբերությունները, որպես կանոն, չունեն էական և սկզբունքային բնույթ, թեև նրանց միջև կան որոշ տարբերություններ: Այսպես, ի տարբերություն

սուննիների, շիաները օրինական են դարձրել «սիղե» կոչված ժամանակավոր ամուսնությունները: Շիական շարիաթում նաև պարունակվում է պաշտոնական հրահանգ այն մասին, որ շիաները պարտավոր են ուստացնացություն կատարել խալիֆ Ալիի, նրա որդի Հուսեյնի և իմամ Ռեզայի գերեզմաններին: Իսլամի այդ երկու ռազմությունների կրոնական ծիսակատարությունների միջև ևս կան որոշակի տարբերություններ:

Սուննիների և շիաների տեսակետները տարբերվում են նաև այն հարցի կապակցությամբ, թե ում է թույլատրված մեկնարանել շարիաթական իրավունքը: Շիաները գտնում են, որ ներկայում ապրող աստվածաբանները, որոնք հայտնի են «մուօթեհիդներ» անունով, իրավասու են մեկնարանել «Աստվածային օրենքը» անցյալի աստվածաբանների հետ համահավասար: Նրանք նաև գտնում են, որ աշխարհի հոգևոր կառավարման իրավունքը ժամանակին դրված է եղել Մուհամմադ մարգարեի աղջկա՝ Ֆաթիմայի սերունդների վրա և այդ իմամներին թույլատրված է եղել ազատորեն մշակել իշթիհայ:

Դարերի ընթացքում ձևավորվել է նաև իսլամի քրեական և քաղաքացիական իրավունքը:

Համաձայն Ֆիքիի, իրավախախտումների համար կարող է պատասխանատու լինել միայն շափահաս, հոգեպես առողջ մարդը: Անշափահասները և հոգեկան հիվանդները պատասխանատվություն չեն կրում, կամ կրում են սահմանափակ պատասխանատվություն:

Մինչխամական Արարիայում արյան վրիժառության պարտականությունը ընկնում էր սպանվածի ողջ ցեղի վրա, որը պարտավոր էր սպանվածի արյան համար վրեժ լուծել սպանողի տոհմից կամ ցեղից: Բայց սպանողի ցեղը վրիժառությանը պատասխա-

նում էր վրիժառությամբ: Ուստի մեկ սպանությունը իր հետևեից քերում էր երկու կողմերից սպանությունների մի ամբողջ շարան: Մուհամմադը սահմանափակել է արյան վրիժառության իրավունքը. նրա սահմանած կարգի համաձայն, արյան վրիժառության իրավունքը ընկնում է միայն սպանողի վրա և ոչ թե նրա ազգականների, հարազատների կամ տոհմի ու ցեղի: Եթե սպանվածի ընտանիքը (արդեն ոչ թե ցեղը կամ տոհմը) ցանկանում է արյան վրիժառության փոխարեն որպես հատուցում բավարարվել «կիսասով», այսինքն սպանվածի «արյան գինը» («դիա») ստանալով, ապա դիայի վճարման պարտավորության երաշխավորումը ընկնում է միայն սպանողի ընտանիքի վրա:

Ընդունելով և ճանաչելով արյան վրիժառության սահմանափակ իրավունքը, Ղուրանն այնուամենայնիվ սպանվածների հարազատներին պատվիրում է ներել մարդասպանին, քանի որ «ներումը հաճո է աստծուն»: Ղուրանում այդ առթիվ ասվում է. «Եթե դու ինձ վրա բարձրացրել ես քո ձեռքը, որպեսզի սպանես ինձ, ապա իմ ձեռքը չեմ բարձրացնի թեզ վրա, որպեսզի սպանեմ թեզ, քանի որ ես վախենում եմ աստծուց, աշխարհների տիրակալից»: Ներման այդ գաղափարով ֆիրհում արդարացվում է արյան վրիժառության փոխարինումը «դիայով» կամ «վիրայով», այսինքն «արյան գինի» վճարումով:

Կին արարածի սպանության համար վճարվում է միայն լրիվ արյան գնի կեսը: Խվամական քրեական իրավունքը խիստ պատիճներ է սահմանում գողության, կողոպուտի, ավազակության և այլ հանցանքների համար: Ֆիրհը հավատուրացությունը («ոյիդյա») որակում է որպես չափազանց ծանր հանցագործություն: Հավատուրացը («մուրթադր») ոչ միայն դադարում է մուտումանական համայնքի անդամ լինելուց, այլև զրկվում է բոլոր բա-

դաբացիական իրավունքներից. նրա ամուսնությունը չեղյալ է հայտարարվում, իսկ ունեցվածքը բռնազրավվում է հօգուտ պետության: Հավատուրացը պետք է բանտում նախնական կալանքի ենթարկվի: Շաֆիական մազհարը գտնում է, որ հավատուրացին պետք է երեք օր տրամադրել, որի ընթացքում նրան հնարավորություն է տրվում ապաշխարել և դրանով իսկ խուսափել մահապատճից: Մինչդեռ մալիքիական մազհարը դա անհրաժեշտ չի համարում:

Որոշ ֆարիհներ գտնում էին, որ անհրաժեշտ է տարբերակել այն հավատուրացներին, որոնք ծնվել և դաստիարակվել են մուսուլմանական ընտանիքում և նրանց, որոնք մինչև իսլամն ընդունելը եղել են հուդայական և կամ քրիստոնյա: Վերջիններիս մոտ իսլամի հավատուրացությունը դիտվում է որպես իրենց նախկին հավատքին վերադառնալու փորձ: Նրանց նկատմամբ ֆարիհները հնարավոր էին համարում դրսնորելու ներողամտություն, նրանց հնարավորություն տալով, որ նրանք ապաշխարեն և խնդրեն ներողամտություն: Եթե հավատուրացը հրաժարվում է ապաշխարել («խթիթարա»), նա պետք է մահապատճի ենթարկվի: Հանաֆիական մազհարը գտնում է, որ հավատուրացության համար միայն տղամարդիկ են ենթակա մահապատճի, կանանց համար այն պետք է փոխարինվի բանտարկությամբ այնքան ժամանակ, մինչև որ հավատուրացը ապաշխարի իր մեղքը: Մինչդեռ շաֆիականները և մալիքիականները հավատուրացության համար մահվան են դատապարտում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց:

Հավատուրացների հետ համահավասար, իսլամական օրենքը պատճի է ենթարկում նաև բացահայտ անաստվածներին (աթեկատներին):

Ֆիրիլ խիստ պատիժներ է սահմանում նաև «խոռվարարների» («մուֆսիդ») համար: Խոռվարար է ճանաչվում այն անձը, որը շուրանալով խվամը, միաժամանակ հրաժարվում է կատարել շարիաթի պահանջները. օրինակ, չի վճարում հարկերը, կամ չի ենթարկվում օրինական խալիֆին և կամ տեղական կառավարչին: Նման անձինք, եթե ժամանակին չեն ապաշխարում, ենթակա են մահապատժի, իսկ նրանց ունեցվածքը բռնազրավում է: Խոռվարարները զրկվում են մուսուլմանական ծեսով թաղվելու կրոնական իրավունքից: Ի դեպ, Աբու Հանիֆան խալիֆի իշխանության նկատմամբ անհնազանդներին դիտում եր որպես իսլամի ուացողներ:

Եթե մուսուլմանական պետության դեմ զինված ապստամբությամբ կամ հերձվածողների շարժմամբ բռնված են ամբողջ նահանգներ, ապա նրանց դեմ պետք է ուղարկվեն զորքեր: Եթե ապստամբները իսլամը բացահայտ ուրացողներ են («մուրթադդ») կամ հերետիկոսներ, ապա պատերազմը նրանց դեմ պետք է վարվի ճիշտ այնպես, ինչպես «անհավատների» դեմ, այսինքն նրանց կարելի է սպանել, մահապատժի ենթարկել, իսկ նրանց կանանց և երեխաներին քշել ստրկության, նրանց պատկանող ունեցվածքը վերածել ուազմական ավարի և երկիրն ավերել:

Եթե մուսուլմանական պետության դեմ ապստամբել են ամբողջ նահանգների և երկրամասերի զիմմիները (օրինակ, հայ և վրացի քրիստոնյաների ապստամբությունները խալիֆայության դեմ VIII-IX դարերում, Եզիդիտոսում քրիստոնյա-դպտիների ապստամբությունը խալիֆ Մամունի ժամանակ և այլն), ապա նրանց դեմ ուղարկված զորքերը պետք է գործեին այնպես, ինչպես «անհավատների» և հավատուրացների դեմ:

Աստվածանարգությունը, աստվածամերժությունը և մարդարեների անարգումը պատճենում էր այն նույն կերպ, ինչ հավատուրացությունը, սակայն այն տարբերությամբ, որ այդ դեպքում չի թույլատրվում մեղավորին խրատիչ հորդոր անել, քանի որ նման հանցագործությունը ներման ենթակա չէ: Նշված դեպքում պատճի են ենթակա ոչ միայն մուտքմանները, այլև «անհավատները»՝ զիմմիները և հեթանոսները: Նման գործով դատավճիռ կայացելու համար պահանջվում է, որ դատարանի առջև վկայություն տան երկու մահմեղական վկաներ:

Շարիաթի ընտանեկան և ամուսնական իրավունքը պահպանել է մինչխալամական Արարիայի նահապետական-ցեղային կենցաղի մնացուկները: Այդպիսի մնացուկ է հանդիսանում փեսացուի (կամ նրա ծնողների) պարտականությունը ամուսնական պայմանագիրը կնքելու ժամանակ հարսնացուին «մահր» (զյսագին) վճարելը: Մահրի չափը կարող է որոշվել կամ փոխադարձ համաձայնությամբ, կամ այն չափով, որչափով որ մահր են ստացել հարսի ընտանիքի աղջիկներն ու կանայք մարդու գնալիս («մահր ըստ օրինակի», արաբերեն «մահր ալ-միալ»): Մահրի չափերը կարող են լինել շատ բազմազան, կախված փեսացուի և նրա ընտանիքի ունեցվածքային դրությունից: Սակայն աղջկա համար վճարվող մահրը սովորաբար պետք է լինի ավելի բարձր, քան այն կնոջ համար, որը մեկ կամ մի քանի անգամ ամուսնացած է եղել: Մահրը դառնում է հարսի, և ոչ թե նրա ընտանիքի սեփականությունը:

Որպեսզի ամուսնությունը հաշվվի օրինական («նիքահ»), երկու կողմերն ել պետք է լինեն մահմեղական: Միայն ըստ հանաժիական իրավունքի, տղամարդը կարող է իր համար օրինական կին վերցնել քրիստոնյայի կամ հրեայի (բայց ոչ զրադաշտա-

կանի և հեթանոսի) առանց նրա հավատքը փոխելու. մյուս մազ-հաբները, մասնավորապես շաֆիականը, թույլ չեն տալիս նման ամուսնությունը: «Եւ կռապաշտի հետ մի ամուսնանար մինչեւ որ հաւատան: Մի հաւատացեալ աղախին լավ է քան մի կռապաշտ կին, թեև սա ձեզ յափշտակէ իր գեղեցկութեամբ» (2:220).- աս-վում է Ղուրանում: Մուսուլման կինը, բոլոր մազհաբների ընդհա-նուր կարծիքով, չի կարող ամուսնանալ ոչ զիմմիի, և ոչ էլ առավել ևս հեթանոսի հետ:

Ամուսնություններն արգելված են մինչև արյունակցական ազգակցության երրորդ աստիճանը («Նիսրա»): Երկու եղբայրներ չեն կարող ամուսնանալ երկու հարազատ քույրերի հետ. մեկ տղամարդը չի կարող ամուսնանալ երկու քույրերի հետ ոչ միա-ժամանակ և ոչ էլ հաջորդաբար: Տղամարդը չի կարող կնության վերցնել այնպիսի կնոջ, որի մոր, աղջկա, կամ քրոջ հետ նա եղել է ամուսնության կամ կապի մեջ:

Բոլոր մազհաբների ընդհանուր կարծիքով, ազատ տղա-մարդը չի կարող միաժամանակ ունենալ չորսից ավելի օրինա-կան կին (բայց նա կարող է ցանկացած թվով ունենալ հարձեր): Սակայն կանանցից որևէ մեկի հետ ապահարզանից հետո կարող է նրա փոխարեն վերցնել մի նոր կին: Կինը ամուսնու մահվանից կամ նրա հետ ապահարզանից հետո կարող է կրկին ամուսնա-նալ. ընդ որում հետևողականորեն կնքվող ամուսնությունների թիվը չի սահմանափակվում:

Տեսականորեն ֆիրհը չի թույլտրում հարկադրանքի ներք օրինական ամուսնությունը. ինչպես պատանին, այնպես էլ աղջի-կը պետք է տան ամուսնության վերաբերյալ իրենց համաձայ-նությունը: Սակայն անշափահաս աղջիկը կարող է հոր կամ պա-պի կողմից ամուսնացվել (մարդու տրվել) առանց իր համաձայ-

նության: Դա տարածված երևույթ էր, քանի որ աղջկա ամուսնությունները սովորաբար տեղի էին ունենում 13-15 տարեկան հասակում, իսկ երբեմն նույնիսկ 9 տարեկան հասակում: Ամուսնությունները հաճախ տեղի էին ունենում փեսացուի և հարսնացուի ծնողների միջև ձեռք բերվող պայմանավորվածության համաձայն: Նման դեպքում փեսացուն և հարսնացուն առաջին անգամ իրար էին տեսնում նշանդրերի ժամանակ: Բոլոր մազհարենքի ընդհանուր կարծիքով, չափահաս կինը, այրի կինը կամ ապարհարզան ստացածը նոր ամուսնության դեպքում պետք է հստակորեն հայտնի իր համաձայնությունը և ազգականներից և ոչ մեկը իրավունք չունի նրան պարտադրել, որ նա տվյալ մարդու հետ ամուսնանա իր կամքին հակառակ:

Ֆարիհիները խորհուրդ են տալիս (թեև չեն պարտադրում), որ հնարավորության դեպքում ամուսնությունը տեղի ունենայնպիսի մարդկանց միջև, որոնք տարիքային առումով, հասարակական դիրքով, միջոցների առկայությամբ համապատասխանում են իրար: Օրինական ամուսնությունները այն կանանց հետ, որոնք նախկինում դատապարտվել են ամուսնական անհավատարմության համար, չին թույլատրվում:

Օրինական ամուսնությունը բոլոր դեպքերում պահանջում է կնքել գրավոր պայմանագիր, որում ապագա ամուսինները պետք է հաստատեն իրենց համաձայնությունը: Պայմանագիրը պետք է կնքվի վկաների ներկայությամբ և ավելի հաճախ մոտակա մզկիթի կազիի և իմամի ներկայությամբ, ընդ որում իմամը Ղուրանից կարդում է սուրա և աղոթք: Ամուսնությունը կարող է կնքվել տանը կամ մզկիթում: Հետագա հարսանեկան արարողությունները և խնջույքը արդեն հիմնված են ոչ թե ֆիքի վրա,

այլ տարբեր մուսուլմանական երկրների կենցաղային սովորույթների վրա:

Շարիաթը պարտավորեցնում է կնոջը հնազանդ լինել իր ամուսնուն: Սակայն ամուսնու իշխանությունը տարածվում է միայն կնոջ անձի և ոչ թե նրա ունեցվածքի վրա: Առավելագույն իրավունքը խստիվ իրագործում է ամուսինների ունեցվածքի տարբերակվածության սկզբունքը: Ամուսինը իրավունք չունի տնօրինելու իր կնոջ ոչ շարժական և ոչ էլ անշարժ գույքը: Ընտանիքը և տունը պահելու, ինչպես նաև երեխաններին դաստիարակելու ուղղությամբ բոլոր ծախսերը ընկած են բացառապես տղամարդու վրա:

Եթե մեկն ունի երկու, երեք, կամ չորս (օրինական) կին, ապա նրանցից յուրաքանչյուրին ամուսինը պարտավոր է տրամադրել առանձին կացարան և առհասարակ նրա համար ստեղծել այնպիսի կենցաղային պայմաններ, որոնք ոչնչով չեն զիջում կնոջ հոր տան եղած պայմաններին (դա վերաբերում է ոչ միայն կացարանի պայմաններին, այլև սննդին, հազնելիքին և այլն): Կինը կարող է իր հավատարմատար մարդկանց միջոցով իր ունեցվածքի վերաբերյալ կնքել առնտրական, վարձակալական կամ այլ պայմանագրեր: Ամուսինը պարտավոր է միատեսակ ուշադրության արժանացնել իր բոլոր կանանց:

Անշուշտ նման պայմանների դեպքում բազմակնությունը հասանելի էր միայն երեելի և հարուստ մարդկանց համար: Ուստի մուսուլմանների մեծ մասը (զյուղացիները, աշխատավորները) որպես կանոն բոլոր ժամանակներում բավարարվել են մեկ կին ունենալով:

Ֆիրհով սահմանված է, որ մուսուլմանների կացարանը պետք է բաժանված լինի երկու առանձին բաժինների՝ տղամարդ-

կանց և կանանց բաժինների: Կանանց բաժնում բացի ամուսնուց, գավակներից և մերձակա ազգականներից ոչ ոք իրավունք չուներ մուտք գործել: Սակայն այդ կարգը գործնականում չէր գործում զյուղացիների և քաղաքային շրավորության համար: Հավասարապես կանանց այն պարտավորությունը, որ տանից դուրս գալուց պետք է շորով ծածկելին գլուխը, պահպանվում էր միայն քաղաքներում և երբեք չէր կիրառվում զյուղական վայրերում (դաշտերում աշխատող հողագործների) և բոչվոր կանանց շրջանում:

Ապահարզանը, ինչպես նշվել է Վերևում, մուտքմանների մոտ շատ հեշտ է: Տղամարդ ամուսինը կարող է ցանկացած ժամանակ, եթե նույնիսկ կինը ոչ մի մեղք չի գործել, նրան ապահարզան տալ, ընդ որում նրան թողնելով իր տված մահրը, և կամ եթե այն լրիվ վճարված չէր, ամբողջապես վճարելով մնացած գումարը: Այդպիսի ապարհազանը կոչվում է «թալար» (բառացիորեն «[կնոջը] բաց թողնել»): Որպեսզի ապահարզանը ձեռք բերի օրինական ուժ, ամուսինը երեք անգամ պետք է ասի թալարի բանաձեր: Կենցաղում հաճախ է պատահում, որ ամուսինը բորբոքված ժամանակ կնոջը տալով ապահարզան, հետագայում զղում է: Այդ դեպքում ֆիրեր իրավունք է տալիս նախկին ամուսիններին կրկին միանալ միայն այն պայմանով, որ կինը նախապես ամուսնանա ուրիշ մարդու հետ, վերջինս նրան տա ապահարզան: Գործնական կյանքում սովորաբար պայմանավորվում են ինչ-որ մեկի հետ (ավելի հաճախ հեռավոր ազգականի կամ ամուսնու ընկերոց հետ), որպեսզի նա իր վրա վերցնի (երբեմն նրան գումար վճարելով) այդպիսի միջանկյալ ամուսնու պարտականությունը և հենց հաջորդ օրը ազատի կնոջը նրա հետ կեղծ ամուսնություն կերելուց հետո: Այդպիսի միջանկյալ ամուսինը կոչվում է թույլատրող («մուխալլի»):

Կինը կարող է դատարանի միջոցով, իր բողոքի համաձայն ստանալ ապահարզան, եթե ամուսինը նրա նկատմամբ չի կատարում իր պարտականությունները (նրա համար չի ստեղծում կենցաղի և ապրուստի բավարար պայմաններ և այլն), կամ նրա հետ չի ունենում շփումներ, և կամ եթե նա հեռացել է տանից: Այդպիսի ապահարզանը կոչվում է «ֆասխ» (բառացի խզում): Նրա հետևանքները նույնն են, ինչ որ «թալաք» տիպի ապահարզանինը:

Ամուսնալուծված կինը կրկին կարող է ամուսնանալ չորս ամիս 10 օր հետո: Սպասման այդ շրջանը կոչվում է «փողա»: Այն նպատակ ունի պարզելու, թե կինը արդյոք հղի չէ իր նախկին ամուսնուց: Դա կատարվում է երեխայի հայրությունը որոշելու համար: Եթե պարզվի, որ կինը հղի է, նա չի կարող կրկին ամուսնալ ծննդաբերությունից հետո 40 օրվանից ավելի վաղ:

Համաձայն ֆիքի, երեխաները օրինական են համարվում, եթե ծնվել են օրինական ամուսնության մեջ գտնվող ծնողներից: Անօրինական են համարվում այն երեխաները («հարամ-զաղե»), որոնք ծնվել են ծնողների անօրինական կապերի շնորհիվ:

Երեխաներին պահելը և նրանց դաստիարակությունը հոր պարտականությունն է, թեև աղջիկները մինչև ամուսնանալը, իսկ տղաները մինչև նրանց թլպատումը մնում են մոր հսկողության տակ՝ կանանց հարկաբաժնում: Ծնողների ապահարզանի դեպքում փոքրահասակ երեխաները (տղաները մինչև յոթ տարեկան, աղջիկները մինչև հասունության հասնելը) մնում են մոր մոտ: Այնուհետև նրանք, հանաֆիական իրավունքի համաձայն, պետք է վերադառնան հոր մոտ (եթե նա կամավոր չի համաձայնվի նրանց թողնելու մոր մոտ), իսկ ըստ շաֆիիական իրավունքի, հասունության հասած երեխաները կարող են իրենք ընտրել, թե ցանկա-

նում են ապրել հո՞ր, թե մոր հետ: Բոլոր դեպքերում մյուս ծնողն իրավունք ունի տեսակցելու երեխաներին:

Ժառանգության իրավունքը ըստ ֆիրի աշքի է ընկնում իր բարդությամբ ու խճճվածությամբ: Տղաները աղջիկների համեմատ ստանում են կրկնակի բաժին: Եթե հանգուցյալն ունեցել է մի բանի կին, ապա նրանք բոլորը միասին ստանում են ժառանգության այն մասը, որը կարող էր հասնել միակ կնոջը:

Վաշխառությունը իալամի մեջ դիտվում է որպես կաշառակերության և անաշխատ եկամտի նման մի բան և դատապարտվում է Ղուրանի կողմից: Ֆաքիիները անօրինական են ճանաչում վաշխառության («ոիբա») հետ կապված պարտավորությունները: Արգելված է նաև այն ամենը, ինչ կապված է խարեւության, խարդախության և սպեկույացիայի հետ: Գործնական կյանքում, սակայն, նմանատիպ արգելվները և հատկապես վաշխառությունը միշտ շրջանցվել են տարբեր հնարքների օգնությամբ:

Ինչպես նշվել է վերևում, զիմմի էին համարվում այն այլադապանները և նրանց կրոնական համայնքները, որոնք մուտքմանների կողմից իրենց երկրները նվաճելու ժամանակ պարտավորվել էին ենթարկվել մուտքմանական պետությունը և վճարել այլադապանների համար սահմանված հարկերը՝ շնչահարկ (զլսահարկ) «ջիզյա», ինչպես նաև հողային հարկ՝ «խարաջ»: Զիմմիների այդ կարգավիճակը իրավական առումով կարգավորելու համար մուտքմանական պետությունը նրանց հետ կնքում է պայմանագիր («արդ ազ-զիմմա»), որը բառացի նշանակում է «պայմանագիր «պաշտպանության» կամ «հովանավորության» մասին: Նման պայմանագրի հիման վրա զիմմիները ճանաչվում են որպես մարդիկ, որոնք գտնվում են մուտքմանական պետության պաշտպանության ներքո: Դա նրանց թույլ է տալիս դավանել

իրենց հավատքը և կատարել իրենց կրոնական կարգն ու ծեսերը (ի դեպ, որոշ սահմանափակումներով) և երաշխավորում է նրանց անձի ազատությունը և ունեցվածքի անվտանգությունը:

Համաձայն ֆիրիի, զիմմիները իրենցից ներկայացնում են փակ համայնքներ, որոնց շփումներն ու կապերը մուսուլմանների հետ կրում են սահմանափակ բնույթ: Զիմմիների համայնքները օգտվում են որոշակի ինքնավարությունից իրենց կրոնական օրենքների հիման վրա և կառավարվում են իրենց հոգևոր առաջնորդների կողմից. քրիստոնյաները՝ տեղական եպիսկոպոսի («ուսքութ») կամ միտրոպոլիտ («մաթրան»), պատրիարքի («քատորկ»), հրեաները՝ տեղի ռաբբիի («խարիր»), զրադաշտականները՝ մոբեղի կողմից:

Զիմմիների համայնքի այդ հոգևոր առաջնորդները ներկայացնում են իրենց համայնքների (կամ եկեղեցիների) շահերը մուսուլմանական իշխանությունների հանդեպ, ունեին դատի և դատաստանի իրավունք իրենց համայնքների անդամների նկատմամբ, ինչպես նաև իրենց համայնքի դպրոցների, կրթական հաստատությունների և այլն նկատմամբ հսկողության իրավունք: Նրանք իրավասու էին նաև պատժի ենթարկել հերետիկոսներին և իրենց կրոնից հավատուրացների նկատմամբ (եթե իհարկե դրանք այն մարդիկ չեն, որոնք հրաժարվելով իրենց դավանարից ցանկանում են ընդունել իսլամը): Նրանք ունեին որոշակի անձնական բնույթի արտոնություններ: Դատի ու դատաստանի իրավունք և այլն:

Հոգևոր անձանց՝ քրիստոնյաների մոտ եպիսկոպոսներին, հրեաների մոտ ռաբբիններին իրավունքներ փոխանցելը բխում էր այն տեսությունից, համաձայն որի շարիաթը միայն մուսուլմանների օրէնքն էր, հետևաբար զիմմիները պետք է դատվեին իրենց

կրոնների օրենքների համաձայն: Շնորհիվ դրա, միջնադարում քրիստոնյա եպիսկոպոսները (ինչպես և ռաբբիները) արաբական խալիֆայությունում օգտվում էին այնպիսի վարչական-դատական իրավունքներից, ինչպիսիք նրանք չունեին Բյուզանդիայում և այլ քրիստոնյա պետություններում:

Եթե մահմեդականի և քրիստոնյայի, կամ մահմեդականի ու հուղայականի միջն ծագում էր վեճ, ապա նրանք պետք է դատվեին մուսուլմանական կազիի մոտ և ըստ մահմեդական իրավունքի:

Մուսուլմանական պետության հետ զիմմիների կնքած պայմանագիրը չեղյալ էր համարվում այն ժամանակ, եթե զիմմին հրապարակվ, մուսուլման-վկաների ներկայությամբ, վիրավորական արտահայտություններ թույլ տար Մուհամմադի և խլամական կրոնի վերաբերյալ: Բացի այդ, զիմմիների կողմից պայմանագիրը խախտված էր համարվում երեք դեպքում. 1. ջիզյան և խարազը չմուծելու դեպքում, 2. եթե զիմմին հարվածի մուսուլմանին, 3. եթե զիմմին ամուսնանա կամ կապի մեջ մտնի մահմեդական կնոջ հետ: Նման դեպքերում զիմմին կարող էր մահվան դատապարտվել: Զիմմիների զանգվածային հրաժարումը խարազը մուծելուց կամ իշխանություններին հնագանդվելուց դիտվում էր որպես պայմանագրի հավաքական խախտում: Այդ դեպքում նրանց դեմ ուղարկվում էին զորքեր կամ կամավոր-դագիներ («հավատի համար մարտիկներ» «անհավատների դեմ «սրբազն պատերազմ» (ջիհադ) մղելու համար:

Իսլամի առաջին երկու դարերի ընթացքում զիմմիների համար իրավական սահմանափակումները մեծ չէին: Սակայն հետազոտում հայտնվեցին բազմաթիվ մեծ ու փոքր սահմանափակումներ:

Զիմմիները, բացի ջիզյայի և խարաջի մուծումից պարտավոր էին իրենց տանը ընդունել ճանապարհորդող մուսուլմաններին, ամեն անգամ երեք օրով, նրանց տրամադրելով կացարան, սնունդ և կեր ձիերի համար: Զիմմիները զենք կրելու իրավունք չունեին, շարիաթական հոգևոր դատարաններում իրավունք չունեին հանդես գալու որպես վկաներ: Տեսականորեն նրանք չպետք է լինեին հողի սեփականատերեր, այլ կարող էին լինել միայն այն օգտագործողներ: Զիմմիները չեն կարող դառնալ արհեստավորական համբարությունների անդամ: Նրանք չեն կարող մտնել որոշ (բայց ոչ բոլոր) առևտրական ընկերությունների մեջ:

Զիմմիները պետք է իրենց զգեստների վրա կրեին տարբերանշաններ: Աղյուսների վկայությամբ, օրինակ, XI դարից սկսած Իրանում զիմմիները կրում էին հատուկ կաշվե գոտի՝ գուննար, իսկ հրեաները իրենց զգեստների վրա պարտադիր կարգով պետք է կրեին երկու կարկատան՝ կրծքի և մեջքի վրա, որոնք գույնով տարբերվելու էին զգեստից: Մուսուլմանների հետ հանդիպելու դեպքում զիմմիները պետք է իջնեին ջորուց կամ ավանակից և ճանապարհը զիջեին մահմեդականին: Զիմմիների ընտանեկան կյանքը պետք է լիներ անաղմուկ և համեստ, նրանց տները չպետք է լինեին մուսուլմանների տներից բարձր և հարուստ:

Ղուրանը հրահանգում է, որ զիմմիները շնչահարկը վճարեն «իրենց ձեռով, որպեսզի նվաստանան», շեշտելու համար իրենց հայտակությունը մուսուլմաններին: Զիմմիները, լինեին քրիստոնյա թե հրեա, պետք է ներկայանային դիվան և անձամբ, և ոչ թե երրորդ անձի միջոցով, եմիրին, այսինքն դիվանի պետին, վճարեին զիջեի գումարը. դրանից հետո եմիրը բոունցքով հարվածում էր նրա վզակոթին, ասելով. «Վճարիր հարկը, ով միաս-

նական աստծո թշնամի», որից հետո դիվանի ծառայողը հապշտապ պետք է վրնդեր զիմմիին: Սակայն նման կարգը գործնականում կիրառվում էր ոչ հաճախակի: Իրանում այդպիսի պրակտիկա ընդհանրապես չի եղել:

Մահմեդական աշխարհը իսլամի ծագման ժամանակաշրջանից (VII դար) ընդհուպ մինչև XIX դարի վերջը, ըստ Էռլյան շարիաթից բացի չի ունեցել այլ օրենսդրական համակարգեր:

Դասական բնույթի մահմեդական պետության մեջ կրոնական (այսինքն իսլամական) իշխանությունը և պետական իշխանությունը միմյանցից անջատված չեն: Այդ պատճառով շարիաթում չի ըննարկվում նրանց ինքնուրույն գոյության հարցը: Առհասարակ իսլամի մեջ ոչ մի տեղ չկա աշխարհիկ և հոգևոր ֆունկցիաների գործառույթների հստակ բաժանում: Հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, ինչպես նաև կրոնը և պետությունը անբաժան են միմյանցից: Իսլամի նորմերի համաձայն, այն իշխանությունը, որը օրինականացված չէ շարիաթով, համարվում է օրենքից դուրս: Իրանի Իսլամական հանրապետությունում շարիաթն ընկած է պետական օրենսդրության հիմքում: Այդ նույնը նաև Սաուդյան Արաբիայում է:

Իսլամական դոգմատիկան օրենսդրության միակ աղբյուր է ճանաչում աստվածային կամքը: Այսինքն օրենքներ ընդունելու իրավունքը բացառապես պատկանում է Ալլահին: Հակառակ դեպքում եթե օրենքն ընդունված է մարդու կողմից, մարդը հավասարեցվում է Ալլահին, իսկ դա իսլամական օրենքներով հանդիսանում է «շիրը» (մեղքերից վատագույնը):

Պետք է նշել, որ մահմեդականները վաղուց անտի ստիպված էին իրաժարվել իդեալական օրենսդրության (Փիրի) բոլոր պահանջները պահպանելուց: Նրա բազմաթիվ դրույթներ արագ

հնանում էին: Բացի այդ, տեղական կառավարիչների կամքով ֆիրիը հաճախ փոխարինվում էր տեղական աշխարհիկ իրավունքով: Վերջապես իր դիրքերը հաճախ էր պահպանում սովորութական իրավունքը (աղաթ, ուրֆ):

Քանի որ իսլամը չի ունեցել ոչ մի պաշտոնական օրենսդրական մարմին օրենքներ սահմանելու համար, ուստի իրավունքը զարգանում էր ինքն իրեն և քաղաքացիական իրավագիտությունը գոյություն ուներ կրոնական իրավունքի կողքին:

Մահմեդական այն երկրներում, որոնք կառավարվում էին եվրոպացիների կողմից անխուսափելիորեն հարց էր առաջանում, օգտագործել տեղակա՞ն թե եվրոպական օրենքները: Շատ հաճախ եվրոպացիները ուժի մեջ էին թողնում տեղական օրենքները, դրանք իրենց շահերի տեսակետից համարելով ավելի նպատակահարմար:

* * *

Իսլամական իրավունքը ճանաչում է «անհավատներ» (արաբ. քաֆիր, հոգն. քաֆիրան կամ քուֆքար) հասկացության տարրեր տեսակներ (կատեգորիաներ): Ինչպես նշվել է վերևում, օրինակ, մուսուլմանական օրենսդրիները առավել ներողամտորեն էին վերաբերվում «Գրքի մարդկանց» նկատմամբ: Այդպիսի «անհավատները» մուսուլմանական պետություններում կազմում էին հպատակների առանձին կատեգորիա (զիմմիներ):

Իբրև կրոնական համայնք (ումմա) արաբներն իրենց համարում էին «ուղղաղավան», իսկ մյուս ժողովուրդներին, որոնք չեին դավանում իսլամը «անհավատ»: Այլ կերպ ասած, մահմեդականներից դուրս ամբողջ մարդկությունը, առանց բացառության բյաֆիր է (այստեղից է գոյացել «զյավուր»՝ անհավատ անվանումը), որը նշանակում է նաև անաստված:

Հայտնի իրողություն է, որ արաբական նվաճումների շրջանում որպես կանոն արաբները նվաճված երկրների այլադավանքնակշուրջան նկատմամբ վարում էին կրոնական հանդուրժողական քաղաքականություն: Գիտնականները դա նախ առաջ բացատրում են նրանով, որ VII դարում արաբները գտնվում էին զարգացման մի այնպիսի մակարդակի վրա, որ կրոնական բացառիկության զգացումը դեռ խորթ էր նրանց համար: Կրոնական հանդուրժողականությունը պարունակում էր նաև քաղաքական նպատակահարմարության ենթատեսաւությունը: Բանը նրանում է, որ արաբների կողմից նվաճված մի շարք երկրներում այն ժամանակներում քրիստոնյաները կազմում էին բնակչության մեծամասնությունը: Դա ստիպում էր արաբական պետությանը նրանց նկատմամբ վարել կրոնական հանդուրժողականության քաղաքականություն, որպեսզի զիմմի հպատակները համակերպվեն խալիֆայության տիրապետության հետ և կանոնավոր կերպով վճարեն իրենց համար սահմանված հարկերն ու տուրքերը:

Օգտապաշտական քաղաքական նկատառումները ստիպեցին խալիֆայությանը զիմմիների իրավունքները տարածել նաև զրադաշտականների վրա, թեև ըստ Դուրանի հրահանգների թույլատրվում է հանդուրժողականություն միայն քրիստոնյաների, հրեաների և սաքիյացիների նկատմամբ:

Սակայն ավելի ուշ աստիճանաբար արաբների կրոնական հանդուրժողականությունը սկսեց իր տեղը զիջել նրանց կրոնական բացառիկության զգացմանը: Խալիֆ Հարուն-ար-Ռաշիդի (կառավարել է 786-809 թթ.) ժամանակներից սկսած ծայր առան այլադավանների հալածանքները: Հիշյալ խալիֆը հրամայեց քանդել ու ավերել Քյուզանդիայի հետ սահմանակից շրջանների քրիստոնեական եկեղեցիները և իրավական սահմանափակում-

ներ մտցրեց ինչպես քրիստոնյաների, այնպես էլ հրեաների ու զրադաշտականների համար:

Զիմմիների համար իրավական սահմանափակումները ել ավելի ուժեղացվեցին խալիֆ Մութավարքիլի ժամանակ (կառավարել է 847-861 թթ.): Նա արգելեց զիմմիներին ընդունել պետական ծառայության, նրանց զավակներին բույլ շտվեց սովորել մուսուլմանական դպրոցներում, ավելացրեց զինահարկը՝ ջիզիեյի շափը, զիմմիներին ստիպեց իրենց զգեստների վրա կրել տարբերանշաններ, նրանց տների դռների մոտ դնել սատանայի պատկերներ, հարկադրեց նրանց նստել միայն ջորի կամ ավանակ և ոչ թե ձի, քանդեց ու ավերեց այն եկեղեցիներն ու սինագոնները, որոնք կառուցվել էին արաբական նվաճումներից հետո:

Մուսուլմանական զանգվածների շրջանում մոլեոանդուրյունը ցայտուն կերպով սկսեց դրսնորվել X դարի սկզբներից սկսած: X դարում տեղի ունեցան քրիստոնյաների ջարդեր (Սիրիայում և Եգիպտոսում) և զրադաշտականների ջարդեր Իրանում: Իր դաժանությամբ աննախադեպ հալածանքներ քրիստոնյաների և հուդայականների նկատմամբ սանձազերծվեցին Եգիպտոսում և Սիրիայում խալիֆ ալ-Հարիմի (կառավարել է 996-1021 թթ.) ժամանակ: Նման հալածանքները Եգիպտոսում բազմից կրկնվեցին XIV դարում: Հրեական ջարդերի ալիքը տարածվեց նաև Իրանում և Իրաքում: Հատկապես հայտնի են 1289 թ. ահաւոր ջարդը Բաղդադում, ինչպես նաև Իրանում տեղի ունեցած 1295 և 1297 թթ. ջարդերը:

Մոնղոլական նվաճումներից հետո Իրան ներթափանցած բուդայականությունը մահմեդականների կողմից արգելվեց:

Զիմմիների դրությունը մուսուլմանական պետություններում տարբեր ժամանակաշրջաններում փոխվում էր մերթ դեպի

լավը, մերթ դեպի վատը՝ առավելապես կախված տնտեսական և քաղաքական պատճառներից:

Միջնադարում լայն թափով ծավալվում էին նաև մուտուլ-մանական աղանդավորների կամ հերետիկոսների նկատմամբ հալածանքները: Պատահում էին դեպքեր, որ հերետիկոս հոչակ-վածներին, աստվածուրացներին, ազատամիտ փիլիսոփաներին այրում էին խարույկների վրա: Այնուամենայնիվ այդ հալածանքները չեին կրում այնպիսի հետեղական ու համառ բնույթ, ինչ-պես օրինակ «հեթանոսների» և այլադավանների հետապնդումները Խսպանիայում և Պորտուգալիայում ինկվիզիցիայի ժամանակներում (XV դարի վերջին և XVI դարում):

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ: ԿԻՆԸ ԻՍԼԱՄԻ ՄԵջ

Ինչպես հուղայականների, այնպես էլ մահմեդական տարբեր ժողովուրդների մոտ գոյություն ունի տղաների թլպատման ծեսը (արաբերեն հիթան, թուրքերեն սյուննաթ): Իսլամի բոլոր հանձնարարականներից համայն աշխարհի մահմեդականները, որոնք նույնիսկ հոգու խորքում հավատացյալներ չեն, խստիվ և պարտադիր կարգով կատարում են այդ ծեսը: Թլպատումը խոզի մսի և ալկոհոլի արգելքի հետ միաժամանակ համարյա դարձել է խլամին պատկանելու միակ չափանիշը:

Թլպատման ծագումը գնում է մինչև խորը հնություն, մինչև նախնադարյան համայնական հասարակություն, երբ այն նշանավորում էր պատանու անցումը դեպի տոհմի ավագ տարիքային խումբը: Նման տանջալից ծեսերը (թլպատումը, ատամները ջարդելը) և այլ կարգի մարմնական վնասավաճքներ հասցնելը, որոնք կապված էին պատանիների արիության փորձարկման հետ, գոյություն է ունեցել ոչ միայն հին արաբների, այլև աֆրիկացիների, ավստրալիացիների և այլ ժողովուրդների մոտ նրանց նախնադարյան զարգացման շրջանում:

Իսլամի, ինչպես և հուղայականության մեջ, թլպատման ծեսը ավելի ուշ ժամանակներում ստացել է նոր մեկնաբանություն. այն հանդիսանում է կրոնական պատկաննելության արտարին հատկանիշ և դրանով իսկ ծառայում է մուսուլմաններին այլ դավանանքներից առանձնացնելու նպատակներին, հավատացյալ-

Ներին ներշնչում է մուսուլմանական բացառիկության մոլեուանդ գաղտնիաբներ և այլն:

Իսլամի մեջ նրա հետևորդների համար սահմանված են մի շարք արգելքներ, որոնցից առաջին հերթին պետք է հիշատակել սևնդամբերքների մի քանի տեսակների օգտագործման արգելքը, որոնցից առաջին հերթին հիշատակելի է զինու և խոզի մսի արգելքը: Արգելված է նաև որպես սնունդ զիշտիչ թոշունների, սատղած կամ խեղդված կենդանու, ոչ շարժաթական կանոններով մորթված կենդանու մսի, ինչպես նաև արյան օգտագործումը: Առհևսարակ խալամի մեջ գոյություն ունի «արգելված» («հարամ») և «քույլատրված» («հալլա») հասկացությունները: Ղուրանում նշվում է: «Ձեզ համար պիղծ լինի դիակը եւ արիւնը և խոզի միսը, եւ ինչ որ մորթեւիս Ալլահի անունից ջոկ անուն է հիշել, եւ խեղդւածը, եւ վար ինկածը եւ եղջուրահարւածը եւ գազանից պատառածը» (5:4):

Հաղիսներից մեկի մեջ ասվում է: «Գինին՝ դա մեղքի աղբյուր է: Նա, ով խմել է զինի, կորցնում է իր քանականությունը: Նա չի ճանաչում աստծուն, կամ որեւ մեկի իրավունքը, ոչ որի չի հարգում, նույնիսկ իր հարազատներին ու մերձավորներին, հեշտությամբ կատարում է վատ արարքներ: Հավատի ու քարեպաշտության ոգին լրում է նրան, զարշելիության ու արատավորության ոգին բնակություն են հաստատում նրա մեջ: Նրան անիծում ու դատապարտում են աստված, հրեշտակները, մարգարեները և ուղղադավանները: Քառասուն օր նրա աղոթքները չեն լսվելու: Ահեղ դատաստանի օրը նրա դեմքը կլինի սևացած, լեզուն բերանից կախված, թուրք հոսելու է նրա կրծքի վրա»:

Իսկ Ղուրանում ասվում է: «Գինին պիղծ է, սատանայի գործ է» (5:92):

Իսլամի մեջ գոյություն ունեն նաև «կիսաարգելքներ» որպես սննունդ մի շարք կենդանիների միսը օգտագործելու հարցում: Այսպես, շարիաթը պարսավում, բայց չի արգելում ուտել ձիու, ջորու և ավանակի միս:

Ուղղադավան սուննիական իսլամը արգելում է աստծո, մարդկանց և կենդանի արարածների պատկերումը: Դա դիտվում է որպես կոռապաշտություն: Այդ իսկ պատճառով մզկիթներում մարդկային կերպարանքով նկարներ գոյություն չունեն: Դրա փոխարեն լայնորեն կիրառվում է պատերի, այվանների, մինքարի և միհրաբի լայն զարդանկարումները: Քանի որ իսլամի մեջ արգելված է դիմանկարչությունը, ուստի իսլամական երկրներում զարգացում է ապրել միայն դրվագավորությունը (օրնամենտիկա) և գեղագրությունը: Գեղանկարչությունը որպես այդպիսին գոյություն է ունեցել միայն մանրանկարչության ձևով: Իսլամի մեջ արգելված է նաև տիկնիկներ պատրաստելը:

Խստիվ արգելված է արձանագրործությունը: Ամենուրեք, որտեղ որ լինում էին մուսուլմանական նվաճողները, նրանք ջարդում ու ոչնչացնում էին արձանները, աստվածությունների պատկերներով կերտված արձանները և այլն: Այդ բոլորը նրանց կողմից ընկալվում էր որպես կոռապաշտական ատրիբուտներ, որոնց դեմ ժամանակին անխնա պայքար էր մղում Մուհամմադ մարզպեն:

Մուսուլմանական աստվածաբանները արդարացնում էին մարդու և այլ արարածների պատկերման արգելքը նրանով, որ միայն Ալլահը կարող է արարել հակներ: Ընդ որում նրանք վկայակոչում էին Ղուրանի այն այաթը, որտեղ ասվում է. «Աստվածն է, որ ձեզ ձեւակերպում է արգանդներումն ինչպես որ կամ պատկերում է» (3:5): Իսկ նա, ով կերտում է արձաններ կամ պատկերում է

մարդկանց, այն մյուս աշխարհում տիրոջ կողմից հարցման է ենթարկվելու. «ըստ ստեղծածների հոգիները ո՞ւր են»: Եվ այն անձը, որը կփորձի Արարջի իրավունքները խլել, կենթարկվի դժոխքի հավերժ տանջանքներին»:

Ճիշտ է, ներկայումս խլամի այդ արգելը չի պահպանվում. սակայն մահմեղական երկրներում դիմանկարչության, արձանագործության, քանդակագործության, ժանրային գեղանկարչության հետ մնալը նշված բնազավառներում եվրոպական արվեստի նվաճումներից պայմանավորված է հենց խլամի արգելքով:

Բարոյականության մուսուլմանական վարքականոնը հիմնականում իր մեջ ընդգրկում է այն բարոյական նորմերն ու հասկացությունները, որոնք հայտնի են բոլոր ժողովուրդներին: Նրանց հիմնական մասը փոխառված է համամարդկային բարոյականության հարուստ զինանոցից: Օրինակ, այնպիսի պատվիրաններ, ինչպիսիք են «մի սպանիր», «սուս մի խոսիր», «սիրիր մերձավորիդ», «հարզիր ծնողներիդ», «մարդուն դժբախտության մեջ մի թռղնիր» և այլն թեև խլամի քարոզիչների կողմից ներկայացվում են իբրև տիպիկ մուսուլմանական և Ալլահի կողմից սահմանված, սակայն իրականում ունեն երկրային ծագում և կյանքի են կոչվել մարդկանց երկրային պահանջմունքների հետևանքով:

Այն պատվիրաններից, որոնք մտել են խլամի բարոյական կողերսի մեջ, առկա են նաև զուտ մուսուլմանական բնույթի պատվիրաններ. «եղիր աստվածավախ», «մի մոռացիր ահեղ դատաստանի օրվա մասին», «երկրպագիր Ալլահին, նրա հրեշտակներին և մարզարեին», «վախսեցիր մեղրից», «աղոթիր», «աղոթքը և ծումը լավագույնն են բոլոր առաքինություններից», «զապիր զոռոգությունը, եղիր հեզ», «հնագանդվիր իշխանություններին և այս աշխարհի ուժեղներին, քանի որ նրանք աստվածատուր են»:

Կրոնի դոգմաների պահպանումը հոչակվում է որպես մահմետականի բարոյական պարտականություն: Այսպիսով, մուսուլմանական բարոյականության ողջ համակարգը ծառայում է մարդկանց մոտ ձևավորելու համար կրոնական աշխարհայացք:

Իսլամական բարոյական նորմերի յուրաքանչյուր խախտում ենթակա է պատճի: Այսպես, ոգելից խմիչք օգտագործելու համար շարիաթը սահմանում է մտրակի քառասուն հարվածներ: Իսլամի ծեսերի և դոգմաների խախտումը ևս համարվում է: անբարոյական արարք և խստիվ պատժվում է: Մի շարք իսլամական երկրներում, որտեղ կրոնը պետական ու հասարակական կյանքում ունի կարենոր դիրքեր, օրինակ, Սաուդյան Արաբիայում, Իրանի Իսլամական Հանրապետությունում, Պակիստանում, Աֆղանստանում և այլն, մահմեդական բարոյականության նորմերի պահպանումը վերահսկվում է ոչ միայն հասարակական կարծիքի կողմից, այլև այսպես կոչված «բարքերի ոստիկանության» և առհասարակ ոստիկանական մարմինների կողմից: Ռամադան ամսին կարգի պահպանները ուղղեք են կազմակերպում սրճարաններում, ուստորաններում, կինոթատրոններում և հասարակական այլ վայրերում: Բոլոր նրանց, ովքեր խախտել են ծովապահությունը, բերման են ենթարկում ոստիկանական բաժանմունքներ:

Մուսուլմանական պատկերացումների համաձայն, բարձրագույն բարոյական նպատակը դա աստծո սերն ու ողորմածությունը ձեռք բերելն է: Ոչ ոք իրավունք չունի պրավտելու, թե ինչու ոմանց նկատմամբ աստված բարեհոգի է, առատաձեռն, իսկ մյուսների նկատմամբ ոչ: Այլահը պետք է սիրելի լինի իր հավատարիմ հպատակների համար և՝ նրա «զայրույթի և՝ զբանատության» ժամանակ:

Աստծոն նկատմամբ մոլեզին սիրով տարված մուսուլմաններին ասում են, որ մարդը պետք է անխռով երջանկություն զգա Ալլահի ցանկացած որոշման ժամանակ. «Դժբախտությունը պետք է ուրախացնի մարդուն ճիշտ այնպես, ինչպես և երջանկությունը, քանի որ մահկանացուն չգիտի դրանցից որն ինչ է, աստծո գործն է այդ մասին դատել»:

Հավատացյալների համոզմամբ, աստվածային պատիմը, որի տակ հասկացվում է ամեն մի անհաջողությունը և դժբախտությունը, մարդու զլիին է թափվում անսպասելիորեն և երբեք հետարափոք չէ իմանալ Ալլահի զայրույթի իսկական պատճառը: Չարիքը, անբարո արարքները, որոնք մթագնում են հասարակության կյանքը, իսլամը, ինչպես և առհասարակ մյուս կրոնները, բացառապես վերագրում են մարդկանց բարոյապես անկատար լինելուն:

Գովելի և աստվածահաճո գործ է համարվում, եթե մահմեդական համայնքի անդամները ներում են միմյանց հասցված վիրավորանքը:

Իսլամի մեջ սեռերի փոխհարաբերության հարցում խոշոր ազդեցություն են ունեցել նահապետական տոհմական կարգերից եկած հասկացությունները: Իսլամը կնոշը դիտում է որպես հնագանդ արարած, որին Ալլահը ստեղծել է տղամարդուն հաճույքներ պատճառելու համար: Ղուրանում ասվում է. «Զեր կնիկները արտ են ձեզ համար, ուրեմն մտէ՛ք ձեր արտը որ կողմից որ ուզում եք» (2:112): Իսլամը տղամարդուն և կնոշը դնում է անհավասար վիճակի մեջ (4:38), տղամարդուն դասելով կնոշից բարձր: Ըստ Ղուրանի, կինը՝ Եվան, արարվել է Ադամի մարմնից նրան հաճույք պատճառելու համար, և արժանիրով ցածր է նրանից:

Սակայն դրա հետ միաժամանակ Ղուրանում ընդունվում է կնոշ մարդկային և քաղաքացիական իրավունքները: Առհասարակ Ղուրանում կան բազմաթիվ հիշատակումներ կանանց մասին: Նրանց է նվիրված մի ամբողջ սուրա, որը կոչվում է «Կանայք»: Այն բաղկացած է 175 այգիներից:

Սուհամմադ մարզարեին են վերագրվում կանանց մասին հետևյալ ասույթները. «կանայք հարազատ քույրեր են տղամարդկանց համար», «աշխարհը վայելը է, իսկ նրա լավագույն վայելը բարեպաշտ կինն է»: «Աղամի որդին երեք երջանկություն ունի, դրանք են՝ բարեպաշտ կինը, լավ տունը և լավ հեծյալ կենդանին»:

Երկու կանանց Ղուրանը համարում է կատարելություն. նրանցից մեկը եզիպտական փարավոնի կին Ազիյան է, մյուսը՝ Ճիսուսի մայր Մարիան (Մարիամը): Տետագայում իսլամը այդ սրբազն համարվող կանանց թվին ավելացրել է նաև մարզարեի առաջին կնոջը՝ Խաղիջային, «ուղղաղավանների մայր» հորջորջված Այիշային և մարզարեի դուստր ու Ալի իբն Թալիբի կնոջը՝ Ֆաթիմային: Էլ ավելի ուշ սրբերի դասին են դասվել նաև մի շարք այլ կանայք, օրինակ, շիաների ութերորդ իմամ Ալի Ռիզայի քույրը, որի Մաշհադ քաղաքում գտնվող դամբարանը հանդիսանում է ուխտատեղի:

Իսլամը դատապարտել ու ոչնչացրել է մինչխալամական Արաբիայում ջահիլիայի շրջանում գոյություն ունեցած բարբարութական սովորույթը, եթե նորածին աղջիկներին համարելով «ավելորդ բերան», սպանում էին, կենդանի-կենդանի թաղում, կամ զոհ մատուցում իրենց կուռքերին: Ղուրանը հավանություն չի տալիս նաև այն բանին, որ ծնողների համար դուստր ծնվելիս սովորաբար նրանք դրսեորում են դժգոհություն (16:60): Այն արգելում է նաև երեխաների սպանությունը աղքատության վախի պատճառով (17:39):

ԻՍԼԱՄԻ ՄԵԶ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄՆԵՐԻ: ՏԱՐԲԵՐ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ, ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՂԱՍԴՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Մարդկության պատմության մեջ գոյություն ունեցած բոլոր կրոնները, այդ թվում նաև իսլամը, անշուշտ, չեր կարող քարացած ու անփոփոխ մնալ: Քանի դեռ իսլամի մարզարեն՝ Սուհամմադը կենդանի էր, պատմությունը չի արձանագրել որևէ լուրջ փորձ նորաստեղծ կրոնի մեջ նորամուծություններ մտցնելու ուղղությամբ: Սակայն նրա մահվանից անմիջապես հետո դրսևորվեցին կրոնական պառակտման առաջին նշանները, որոնց սերմսացանները հանդիսացան Արաբիայի տարբեր վայրերում հայտնված կեղծ մարզարենները: Ծնունդ առան նաև խոռվահույզ շարժումներ, որոնց հիմքում ընկած էին խորը տարածայնությունները գերազույն իշխանության էռության վերաբերյալ: Այդ բոլորի հետևանքով իսլամը դադարեց միատարր հոսանք լինելուց և աստիճանաբար ձևավորվեց մուսուլմանական հերձվածողականությունն ու աղանդավորությունը: Նման շարժումներից առաջինը խարիզմատիկանությունն է կամ խարիզմատիկը, որի ծագման դրդապատճառներին անդրադարձել ենք վերևում:

ԽԱՐԻԶՄԻՆԵՐ ԵՎ ԽԱՐԻԶՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խարիզմիների հերձվածը կամ աղանդը իսլամի պատմության մեջ առաջին աղանդն էր: Նրանց գաղափարախոսությունը իր զլխավոր զծերով ձևավորվել է VII դարի վերջին: Ինչպես նշվել է

վերևում, դժողո և հիասթափված լինելով Ալիից, որը բանակցությունների մեջ մտավ Մուավիայի հետ «դրսեորելով թուլություն», մահմեդականների մի մասը, որը նախկինում պաշտպանում էր Ալիին հեռացավ նրանից, որի պատճառով էլ նրանք կոչվեցին «խարիզմիներ» («դուրս եկածներ», «խոտորվածներ», «շեղվածներ»): Նրանց կարգախոսն էր «չկա այլ վճիռ Ալլահի վճոից բացի»: Սրանից բխում էր երկու կարևոր կանխադրույթ. առաջին՝ մահմեդականներին կարող է դեկավարել միայն մեծ կամքի տեր և բարեպաշտությամբ օժտված մարդը և երկրորդ՝ մահվան մեղք կատարած մարդը պետք է վտարվի իսլամական համայնքից՝ ումմայից որպես անհավատ: Այսպիսով խարիզմիները խորությամբ էին ընկալել Ղուրանի մեջ արծարձվող այն սկզբունքը, ըստ որի իսլամական համայնքում մարդու դիրքը որոշող միակ չափանիշը պետք է հանդիսանա բարեպաշտությունը: Նրանք անհատի և պետության բարոյականությունը համարում էին միասնական: Ումմայի կառավարումը պետք է պատկանի լավագույններին, հասարակության մեջ մարդու դիրքը որոշվում է նրա վարքագծով. ամեն ինչին անտարբեր զանգվածները հեթանոսներից ավելի լավը չեն. Խարիզմիների ուսմունքի ընդունումից հրաժարումը պետք է հանգեցնի տվյալ անձի վտարմանը համայնքից. այդ հրաժարումը իրավունք է տալիս (արդարացնում է) տվյալ մարդու սպանությունը: Մարդու ծագումը ոչ մի դեր չի խաղում:

Քիչ ավելի ուշ խարիզմիները հրապարակեցին իսլամի մեջ արաբների և ոչ արաբների բարոյական և հետևաբար, բաղարական իրավահավասարության իրենց սկզբունքը: Դրա հետևանքով նրանց շարքերը համալրվեցին մեծ թվով ոչ արաբներով, որոնք օգտվելով դրանից, առաջ քաշեցին իրենց սեփական պահանջները: Այսպիսով, խարիզմիների ուսմունքի հիմնական դրույթը բոլոր

մահմեղականների իրավահավասարության ճանաչումն էր: Իսլամական համայնքի ներսում ևս պետք է լինի կատարյալ հավասարություն:

Նվաճված վայրերի հողերը պետք է պատկանեն իսլամական համայնքին (կամ որ միևնույնն է պետությանը): Սակայն նվաճված երկրներում «ուղղադավանները» պետք է տիրապետող լինեն «զիմմիների» նկատմամբ և առհասարակ բոլոր նրանց նկատմամբ, ովքեր պարտավոր են վճարել զիսահարկ (ջիզի) և հողային հարկ (խարաշ):

Խարիզիները բացարձակացնում էին խալիֆի ընտրության սկզբունքը: Առհասարակ նրանց ուսմունքը խալիֆայության-իմամության վերաբերյալ կտրուկ կերպով տարբերվում է ինչպես ուղղադավան (սուննիական), այնպես էլ շիական խալիֆից: Խարիզիները գտնում էին, որ իմամ-խալիֆը, այսինքն կրոնական համայնքի-պետության հոգենոր և քաղաքական դեկավարը պետք է լինի ընտրովի, ընդ որում ընտրություններին մասնակցելու իրավունք պետք է ունենան բոլոր հավատացյալները, անկախ իրենց ծագումից: Իմամ-խալիֆի պաշտոնում կարող է ընտրվել ոչ միայն կուրայշ տոհմի ներկայացուցիչը, ինչպես գտնում էին սուննիները, այլ ցանկացած ոք, նույնիսկ սևամորք ստրուկը, եթե նա արժանի է դրան: Իմամ-խալիֆի կոչմանը խարիզիները չէին վերադրում և ոչ մի սրբազն նշանակություն: Նրանց համար նա հավատի ուսուցիչ էլ չէր, և ոչ էլ տիրակալ, այլ միայն «ուղղադավանների» համայնքի լիազորված անձ, ուզմական առաջնորդ և համայնքի շահերի պաշտպան:

Համայնքն է ընտրում նրան և նա էլ կարող է պաշտոնագուրի անել, նույնիսկ դատել և մահապատժի ենթարկել նրան, եթե նա վատ կառավարի, դառնա բռնակալ, կամ հօգուտ իր անձ-

նական շահերի դավաճանի համայնքի շահերին: Խարիչիների կարծքով օրինական է միայն ընտրովի խալիքը, մերժելի և անընդունելի է գերազույն իշխանության ժառանգականության սկզբունքը: Խալիքայությունը չի կարող լինել որևէ մի առանձին ընտանիքի ստացվածքը, սեփականությունը: Խարիչիները գտնում էին, որ ամեն մի տեղական համայնք, եթե այն կտրված է մյուսներից, իր համար կարող է ընտրել իմաս-խալիք. այսպիսով, տարբեր վայրերում կարող էին լինել մի քանի իմասներ: Հենց այդ պատճառով էլ խարիչիական շարժումների բոլոր առաջնորդները կոչվում էին «ուղղադավանների» իմասներ, խալիքներ, էմիրներ և նրանցից ոչ մեկը կուրայշ տոհմից չեր:

Այսպիսով, խարիչիները ըստ եռթյան ընդունում էին, որ սուվերեն իշխանությունը պատկանում է հավատացյալների համայնքին, իսկ խալիքը հանդիսանում է միայն նրա գործադիր մարմինը, որը պատասխանատու է համայնքի առջև:

Խարիչիները օրինական էին համարում առաջին երկու խալիքներին՝ Աբու Բաքրին և Օմարին և չին ընդունում Օսմանին: Նրանց կարծիքով Ալին օրինական խալիք էր մինչև այն պահը, եթե նա «չբավարարվելով աստծո դատաստանով՝ համաձայնվեց Մուավիայի հետ վեճը լուծել բանակցությունների միջոցով»:

Խարիչիները չին ճանաչում օմայան, իսկ հետազոյում արքայան խալիքներին, ինչպես նաև չին ընդունում Ալիի սերնդի ժառանգական իմամաթթ: Կրոնական ուսմունքից բխող նրանց բաղարական եղբակացությունը հանգում էր հետևյալին. կեղծ իմամները, անօրինական խալիքները, որոնք հեռացել են «աստվածային գրից»՝ Դուրանից, հայտնվել են «մեծ մեղքի» վիճակում, հետևաբար դադարել են ուղղադավան լինելուց և դարձել են ան-

հավատ, հավատուրաց: Ուստի նրանց ոչ միայն չի կարելի ենթարկվել, այլև անհրաժեշտ է «սրբազն պատերազմ» մղել նրանց դեմ: Բոլոր նրանց, որոնք այդ պատերազմի ընթացքում կընկնեն խարիջիների ձեռքը, պետք է սպանել որպես հավատուրացների:

Խարիջիները հանդիսանում էին խւամական հողային ազնվականության և խոշոր մասնավոր հողատիրության անհաշտ թշնամիներ: Ակզբունքորեն նրանք համայնքի ներսում սոցիալական անհավասարության հակառակորդներ էին: Մի խումբ խարիջիներ նոյնիսկ գտնում էին, որ խւամն ընդունած ստրուկները պետք է տեղնուտեղը ազատազրվեն ստրկությունից, որ մահմեդականը չի կարող ստրուկ լինել:

Թեև խարիջները իրենց համարում էին սուննայի հավատարիմ հետևորդներ, սակայն չէին ընդունում Ղուրանի անձեռակերտ լինելու գաղափարը: Հանդես գալով որպես խւամի պուրիտաններ, խարիջիներից ոմանք նոյնիսկ ժիտում և չէին ընդունում Ղուրանի 12-րդ սուրան, դա հիմնավորելով նրանով, որ այն չափազանց «բաց» և թեթևութիւն է: Նրանում պատմվում է Հովսեփի և Եգիպտոսի սիրո մասին, մի թեմա, որն ավելի ուշ դարձել էր պարսիկ և թուրք բանաստեղծների սիրված թեմաներից մեկը:

Ի տարբերություն ուղղաղավանների, որոնց համար աղոթքից առաջ մարմինը մաքրելու պահանջը պարտադիր էր, խարիջիները պահանջում էին դրա հետ մեկտեղ պարտադիր կերպով կատարել խղճի մաքրություն: Նրանք նաև գտնում էին, որ հավատը առանց գործերի ընդունելի չէ: Ծայրահեղական հայացքների տեր խարիջիների կարծիքով, նա, ով թույլ է տվել մահվան մեղք դադարում է ուղղաղավան լինելուց և դառնում է անհավատ, հավասարապես և այն անձը, որը կասկածանքով է վերաբերում իր

հավատի ճշմարտացիության նկատմամբ: Այդպիսի մարդը իր ընտանիքի հետ պետք է ոչնչացվի:

Խարիզիները չեն ընդունում ուխտագնացությունները, բացի Մեքքա կատարվող ուխտագնացությունից: Նրանք մերժում են նաև սրբերի կուլտը: Սակայն նրանց մոտ աստիճանաբար ձևավորվեց խարիզի-նահատակների կուլտը: Խարիզիները աշքի են ընկնում պահքի, աղոթքների, ծիսակատարությունների խստիվ կատարմամբ և բարոյականության հարցերում խստությամբ: Դատապարտում և անընդունելի են համարում ամեն տեսակի շքեղությունն ու պերճանքը, արգելում են երաժշտությունը, ծխախոտի և ոգելից խմիչքների օգտագործումը:

Մեկ սխալ բայլ մարդուն կարող է օտարել մահմեղական համայնքից, որին նա վերստին կարող է վերադառնալ միայն հրապարակային ապաշխարանքից և համայնքի օգտին ջերմեռանդ և փութաջան գործունեությունից հետո:

Այսպիսով VII-IX դարերում խարիզիները մի հոսանք են, որոնք արտահայտում են իր ժամանակի համար արմատական բաղարական հայացքներ: Կրոնը խարիզիների համար առաջին հերթին ծառայում էր որպես իրենց բաղարական ուսմունքի հիմնավորման միջոց:

Խարիզիների աղանդը, սակայն միասնական չէ: Արաք պատմիշ Թաքարին իր տարեգրության մեջ գրում է, որ Օմայան Յազիդ I խալիֆի մահվանից հետո (683 թ.) խարիզիները բաժանվեցին մի քանի առանձին մանր աղանդների, ինչպիսիք են աղրաբիթների, սուֆրիթների (սուֆրիյա), իբադիթների (իբադիյա, արադիյա), բայխասիթների (բայխասիյա), նաջայիթների, վարիֆիյա և այլ աղանդների: Տարբեր աղբյուրներում հիշատակվում են խարիզիների 20 առանձին ուղղություններ և հոսանքներ: Դրան-

ցից ամենածայրահեղներն ու անհաշտները ազրաքիթներն եին: Սրանք կրոնական մոլեռանդներ եին, որոնք ոչնչացնում եին այն բոլոր ոչ մահմեղականներին, որոնք հրաժարվում եին ընդունել իրենց դավանանքը:

Ազրաքիթների աղանդի կամ խմբավորման հիմնադիր է համարվում Նաֆի իրն ալ-Ազրաքը, որն ըստ որոշ տվյալների, եղել է մի դարբին հույնի գավակ, որն արաբների կողմից գերության է քշվել և ստրկացվել, իսկ հետագայում ազատվել գերությունից: Նա ծայրահեղության հասցրեց կրոնական սպանության՝ «իսթի՛րադի» սկզբունքը, գտնելով, որ այն պետք է կիրառել ոչ միայն խարիզմիների թշնամիների, այլև պասիվ խարիզմիների նկատմամբ, որոնք «սրբազն պատերազմի», այսինքն խարիզմական ապատամբությունների ժամանակ չեն մասնակցել դրանց և մնացել են տանը: Ուստի Իրն ալ-Ազրաքը իր հետևորդներից պահանջում էր. 1. խզել բոլոր տեսակի կապերը «սունը մնացածների» հետ, 2. հավատուրաց համարել բոլոր նրանց, ով չի անցել ապատամբական ձամբարի կողմը, 3. ձամբարի կողմը անցած բոլոր անձանց ենթարկել հավատքի կայունության խստիվ փորձարկման (արաք. «միխնա»): Նա հրահանգում էր, որ հավատի թշնամիների դեմ պատերազմում թույլատրվում է սպանել ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց և երեխաներին:

Խարիզմի-ազրաքիթները որպես կանոն խիզախ մարտիկներ եին: Նրանք պատրաստ եին իրենց կյանքը տալու հանուն իրենց գործի, հավատացած լինելով, որ որպես իրենց արյան հասուցում իրենք արժանանալու են դրախտի հավետ երանությանը: Խարիզմի-ազրաքիթների գինված պայքարի բնորոշ առանձնահատկությունը դա այդ պայքարում կանանց ակտիվ մասնակցությունն էր: Մեզ է հասել տեղեկություն այն մասին, որ Իրաքի օմայան տեղա-

պահ Ութեղուցակի իրն Զիյադը, որը խարիզիների կատաղի հալածիչ էր, ազրաքիթ կանանց մարտական ներշնչանքը սառեցնելու համար հրամայել էր, որ մարտի դաշտում ընկած կանանց դիակները մերկացնեն և այդ վիճակում թողնեն ճակատամարտի դաշտում:

Ազրաքիթները խալիֆայության համար վերածվեցին լուրջ սպառնալիքի, երբ Իրանի հարավում ստեղծեցին ինքնուրույն պետություն։ Միայն VII դարի վերջին խալիֆայության գորքերին հաջողվեց ոչնչացնել այդ պետությունը։

Ուշագրավ է նշել, որ ազրաքիթների մոլեուանդ անհանդուրժողականությունը բոլոր մուսուլմանների նկատմամբ, ովքեր չեն պատկանում իրենց աղանդին, զուգակցվում եր լայն հանդուրժողականության հետ դեպի հրեաներն ու քրիստոնյաները։ Ազրաքիթները գտնում էին, որ նրանք չեն դավաճանել իրենց մարզաքններին՝ Մովսեսին և Քրիստոսին, ուստի և հավատուրացների սպանության սկզբունքը նրանց վրա չի տարածվում։ Ազրաքիթների որոշ առաջնորդներ նույնիսկ գտնում էին, որ անհրաժեշտ է խարիզիների հետ իրավահավասար համարել այն հրեաներին ու քրիստոնյաներին, որոնք կհամաձայնվեին Մուհամմադին ընդունել որպես մարզաք հետևյալ վերապահությամբ։ «Մուհամմադը մարզաք է արաբների և ոչ մեզ համար»։

Օմայանների ժամանակ չնայած նրան, որ խալիֆ Մուավիան կառավարում էր «Երկաթե ձեռով», մի շարք վայրերում (-Քուֆայում, Բասրայում և այլն) ազրաքիթները բարձրացրին հուծկու խոռվություններ, որոնք սակայն խեղդվեցին արյան մեջ։ Իրաքում և Իրանում խարիզի-ազրաքիթների ամենախոշոր ապստամբությունը, որն ուղղված էր օմայան խալիֆ Աբդ ալ-Մալիկի և հավասարապես շիաների դեմ տևեց 13 տարի (684-697 թթ.): Ազրա-

թիթների ապստամբությունների ժամանակ նրանց էին միանում մեծ թվով պարսիկներ, հատկապես զյուղացիներ, որոնք հանդես էին զալիս իրենց հարստահարողների՝ արար հողատերերի դեմ: Իսկ վերջիններս ազրաքիթներին համարում էին «խուժադուժ ամբոխ»: Պարտության դեպքում ազրաքիթները թարնվում էին Իրանի լեռնային շրջաններում:

Սուֆիթների աղանդը աշքի չեր ընկնում իր ծայրահեղականությամբ, ինչպես ազրաքիթներն էին: Նրանք, օրինակ, հնարավոր էին համարում այլ ուղղությունների ու հոսանքների պատկանող մահմեղականների դեմ պատերազմի ժամանակավոր դադարեցումը, զգուշության նկատառումներով կիրառում էին իրենց հավատքը թարցնելու մեթոդը («թարիյա»), անթույլատրելի էին համարում ոչ մահմեղական «անհավատների» երեխանների սպանությանը: Բարոյականության հարցերում նույնպես նրանք այնքան կտրուկ չէին, ինչպես ազրաքիթները: Վերջին օմայանների շրջանում սուֆրիթները տարածվեցին ողջ իսլամական աշխարհով մեկ:

Այսպիսով, սուֆրիթները հանդիսանում էին խարիզիականության ավելի ուշ շրջանի չափավոր ուղղության ներկայացուցիչներ:

Խարիզիական աղանդներից առավել չափավորը իբաղիթների աղանդն էր: Նրանք դեմ էին ազրաքիթների ծայրահեղ մոլեռանդությանը, հատկապես նրանց այն սկզբունքին, որ անհրաժեշտ է անպայման սպանել բոլոր ոչ խարիզիներին որպես հավատուրացների: Օմայան խալիֆայության նկատմամբ իբաղիթները չէին որդեգրում այնպիսի անհաշու դիրքորոշում, ինչպես ազրաքիթները, թեև այդ խալիֆայությունը համարում էին անօրինական:

Հետազայում իբաղիթների միասնականությունը խաթարվեց քաղաքական և կրոնական սուր տարածայնությունների պատճառով: Այդ ուղղության հետևորդների համեմատաբար փոքրաթիվ համայնքները հաստատվեցին Հյուսիսային Աֆրիկայի (Մադրիդի) երկրներում, Զանգիբարում, Օմանում, Մասլաթում և այլն: Ողջ VIII դարի ընթացքում խարիչիները դեռևս մնում էին որպես խոշոր քաղաքական ուժ: Նրանց կենտրոնները գտնվում էին Աֆրիկայի բերբերական շրջաններում, Իրանում (Խորասան, Սիսրան, Խուզիսրան): Անհանգիստ ու խոռվահույզ խարիչիները մշտապես բարձրացնում էին ապստամբություններ ու խոռվություններ:

Ներկայումս իբաղիթներ կան Հյուսիսային Աֆրիկայի արաբախոս երկրներում (Ալժիր, Թունիս, Մարոկկո, Լիբիա): Նրանք կրոնական մեծամասնություն են կազմում Օմանում:

ՇԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՇԻՒԶՈՒ)

Խալիֆ Օսմանի կառավարման շրջանում սոցիալական անհավասարության աճը, ազնվականական դասին լայն իրավունքներ ու արտոնություններ շնորհելու քաղաքականությունը արար զանգվածների մոտ առաջ էր բերել խիստ դժգոհություն: Այդ ծայրահեղ դժգոհության ենթահողի վրա ձևավորվեց Սուհամմադ մարգարեի փեսա, նրա դատեր Ֆաթիմայի ամուսին Ալի իրն Թալիբի կողմանակիցների մի խմբավորում կամ կուսակցություն, որն անվանեցին շիաթ Ալի, այսինքն «Ալիի կուսակցություն»: Այստեղից էլ ծնունդ առավ շիաներ և շիականություն անվանումը:

Դեռևս առաջին խալիֆ ընտրելու ժամանակ որպես խալիֆայության նկատմամբ Ալիի իրավունքների կողմնակիցներ հանդես եկան երեք անձինք. Աբու Զարր ալ-Գիֆարին, Միրզադ իրն ալ-Ասվադը և պարսիկ Սալման ալ-Ֆարիխին: Սակայն նրանց կարծիքի հետ հաշվի չնստեցին: Չնայած այդ անհաջողությանը, ձեռք բերվեց նաև դրական մի երևույթ: Դա այն էր, որ արաբական հասարակության ստորին խավերին ընդորված համընդհանուր դգոհությունը Ալիի անունը դարձրեց վերին աստիճանի հանրահայտ: Տեսն այդ ժամանակ Աբու Զարրը (մահացել է 653 թ.) դարձավ «Ալիի կուսակցության» («Հիաթ Ալի») կամ շիաների խակական կազմակերպիչը: Դամասկոսում խալիֆի տեղապահ Մուավիի ներկայությամբ Աբու Զարրը բուռն քարոզություն էր մղում կառավարող վերնախավի հոռի բարքերի, նրանց կենցաղի պերճանքի ու շքեղության, ազահության դեմ և հայտարարում էր, որ իմամաթի իրավունքը պատկանում է մարզարեի ընտանիքին, այսինքն Ալիին և Ֆարիխայից ծնված նրա որդիներ Հասանին (ծնվել է 624 կամ 625 թ.) և Հուսեյնին (ծնվել է 625 կամ 626 թ.):

Միջնադարյան կրոնագետ-փիլիսոփա Ալ-Շահրասթանին (1071-1153 թթ.) հետևյալ կերպ է ձևակերպում շիականության եռությունը. «Շիաները դա նրանք են, որոնք Մուհամմադ մարզարեի փեսայի՝ Ալիի կողմից են, ճանաչելով նրա բացառիկ իրավունքը իմամի և խալիֆի աստիճանի նկատմամբ»: Շիաները գտնում են, որ իմամաթի նկատմամբ իրավունքը չի կարող պատկանել որևէ մեկին, բացի Ալիի և Ֆարիխայի սերունդներից, քանի որ Մուհամմադը չի ունեցել արական սերի ժառանգորդներ: Նրանք նաև համարում են, որ իմամության վերաբերյալ իրավունքը կախում ունի ոչ թե այս կամ այն անձի անձնական պիտանիությունից, այլ ժառանգականության սկզբունքից: Իմամը չի կա-

ոռղ մահմեղական համայնքի կողմից ընտրվել (ինչպես կարծում են սուննիները), նա իմաս է հանդիսանում իր ժառանգական արժանիքի շնորհիվ, որի իրավուքը չի կարող փոխանցվել այլ անձի կամ հանձնվել համայնքին:

Այսպիսով, շիականությունը ծնունդ է առել զահածառանգության հարցի կապակցությամբ արաբների շրջանում գոյություն ունեցող քաղաքական տարածայնությունների հետևանքով: Շիաների և սուննիների միջև հիմնական տարածայնությունը կայանում է նրանում, որ ի հակակշիռ սուննիների, որոնք չեն ընդունում խալիֆայության ժառանգականության սկզբունքը և Մուհամմադի օրինական ժառանգորդներ են համարում առաջին երեք խալիֆներին (Աբու Բաքր, Օմար և Օսման), որոնք սերված չեն մարզարեից, շիաները հանդես են զայիս որպես խալիֆայության ժառանգականության սկզբունքի կողմնակիցներ և մարզարեի օրինական ժառանգորդ են համարում նրա ազգական և փեսա Ալիին, ինչպես նաև նրա որդիներին ու ժառանգներին:

Անկասկած շիականության բազան բաղաքանության մեջ հանդիսանում է լեզվահիմքը: Շիականությունը հանդես էր զայիս որպես ընդումադիր մի ուսմունք, որը բողոքում է «անօրինական» խալիֆների դեմ:

Իմամաթի զաղափարը հանդիսանում է շիականության անկյունարարը: Դա դոգմա է զերազույն իշխանության մասին: Դրա հիմքում ընկած է այն զաղափարը, որ խալամական համայնքը՝ ումման անընդմեջ կերպով կառավարվում է աստծո կողմից: Իմամմաթը, այսինքն զերազույն իշխանությունը որոշված է աստծո կողմից և չի կարող լինել ընտրվի: Շիաները խսկական իմամներ համարում են Ալիին և նրա 11 հետևորդներին:

Ալիին Մուհամմադ մարզարեի օրինական ժառանգորդ ճանաչելու շիաների փաստարկը հենվում էր նաև հետևյալ ավանդության վրա. իբր իր վերջին ուխտագնացության ժամանակ մարզարեն Ղաղիր ալ-Խումմա լճակի մոտ բազմաթիվ հետեւրդների ներկայությամբ Ալիին հայտարարել է իր ժառանգորդ, ասելով. «Ով ինձ կճանաչի որպես իր տեր, նա պետք է Ալիին ևս ճանաչի որպես իր տեր»: Շիաները մեղադրում են խալիֆ Օսմանին, որ նրա հրամանով Ղուրանի տեքստից հանվել է «երկու լուսատուներ» սուրահը և այլ սուրահներից մի քանի այարներ, որոնցում շարադրվում են մահմեդական համայնքում Ալիի հատուկ իրավունքների մասին:

Աստիճանաբար շիաները վերածվեցին կրոնական մի առանձին հոսանքի և խալամի խոշոր ճյուղերից մեկի, որը հակադրվեց սպաշտոնական կամ «ուղղավաղան» խալամին, որի հետեւրդները հանդես էին գալիս որպես խալիֆների ընտրովիության կողմնակիցներ: Դրանց հետազայում անվանեցին սուննիներ կամ «սուննայի և համայնքի մարդիկ» (ահլ աս-սուննա վա-լ-միլլա): Սուննիները գերազույն իշխանության հարցերում չեն ճանաչում Ալիի և նրա ժառանգորդների իրավունքը «իմամության», այսինքն խալամական համայնքի գերազույն իշխանության նկատմամբ, գտնելով, որ համայնքի ղեկավարի՝ խալիֆի ընտրության գործում պետք է մասնակցություն ունենա ողջ մուսուլմանական համայնքը:

Իսլամի մեջ առավել մեծաթիվ հետևորդներ ունեցող ուղղությունը՝ սուննիականությունը որպես ուղղաղավան հոսանք վերջնականապես ձևավորվել է X դարում: Ներկայումս սուննիները կազմում են մահմեդական երկրների բնակչության շախչախիչ մեծամասնությունը:

Շիական կրոնական դոկտրինի հիմնադիրն է համարվում Աբդալլահ իբն Սաքան, որը ապրել ու գործել է խալիֆ Օսմանի ժամանակ: Հատ ավանդության, Իբն Սաքան խողամն ընդունած եւ մենցի հրեա էր, որը քաջ ծանոթ էր ինչպես հուդայականության ու քրիստոնեության, այնպես էլ խալամի դրույթներին և սփրում էր զիտակ մարդկանց հետ կրոնական-աստվածաբանական վեճերի բռնվել: Իբն Սաքան ստեղծեց ուսմունք Մուհամմադ մարզարեի «գալստյան մասին («ռաջա»): Ինչպես Հիսուսը պետք է վերադառնա,- ասում էր Իբն Սաքան,- այդ նույն կերպ վերադառնալու է նաև Մուհամմադը: Իբն Սաքան ասում էր, որ նախկին մեծ մարզարեներից յուրաքանչյուրն ունեցել է օգնական կամ իր կողմից լիազորված անձ (արաբերեն «վասի»). Մովսեսի օգնականն է եղել Ահարոնը, Երեմիայինը՝ Վարուխը, Հիսուսինը՝ Պետրոս Առաքյալը: Մուհամմադ մարզարեի մոտ այդպիսի վասի չէր կարող լինել որևէ այլ ոք, բացի Ալիից:

Աբդալլահ իբն Սաքան հանդիսանում էր ծայրահեղ շիականների նախորդը: Նա շրավարարվելով լոկ Ալիի իրավունքների պաշտպանությամբ, հասնում էր համարյա մինչև նրա աստվածացումը: Ալին իր մահվանից հետո վերածվեց առասպելական հերոսի: Շիաների համար, որոնք նրան պաշտում էին համարյա թե Մուհամմադից ավել, Ալին ոչ միայն իմամ էր, այլ նաև սուրբ, հերոս, իւլամի փառապանծ ասպետ: Շիականությունն ունի արաքական և ոչ թե իրանական ծագում:

XIX դարի որոշ հետազոտողներ գտնում էին, որ իբր շիականությունը պարսիկների կողմից ստեղծված կրոնական ուղղություն է կամ հոսանք, իսլամի զադափարների մի յուրահատուկ իրանական ընկալում ու իմաստավորում, «իրանական ոգու ռեակցիա արաբիզմի դեմ»: Մի խումբ զիտնականներ նույնիսկ

սուննիական խլամը համարել են «արաբական ռասայի կրոն», իսկ շիական խլամը՝ որպես «իրանական ռասայի կրոն»: Նման մեկնաբանությունը այսպէս կոչված «ռասայական կրոնների» գոյության արգասիք էր, որը ժամանակին լայն տարածում էր գտել արևմտաեվրոպական գիտնականների շրջանում: Իրականում պատմության մեջ զոյություն չեն ունեցել ռասայական կրոններ և այդ բանը համոզիչ փաստերով ցույց է տրվել խլամագետ-գիտնականների կողմից:

Այսպիսով շիականության իրանական ծագման մասին վարկածը ճիշտ չէ, և ներկայումս այն կատարելապէս հերքված է:

Հետազայում շիականության զանազան հոսանքները տարածվեցին ինչպէս Իրանում, այնպէս էլ արաբական միջավայրում, իսկ ապա նաև թյուրքական միջավայրում, իսկ սուննիական խլամը և՝ արաբական, և՝ իրանական և՝ թյուրքական միջավայրում:

Եթե առաջին շիաները բացառապէս արաբներ էին, ապա օմայանների ժամանակ շիականությունն ընդունեցին նաև մեծ թվով ոչ արաբներ, հատկապէս Իրանում և Իրաքում: Այդ նոր շիաները՝ մավալինները («հաճախորդներ»), ցանկանում էին ազատվել արաբական ցեղերի ստրկացուցիչ կախումից և ստանալ արաբների հետ հավասար իրավունքներ: Հենց դա էլ նրանց խոստանում էին շիաները: Շիականության մեջ իրենց արտացոլումն են գտել նաև արաբների նկատմամբ Իրանի ավատական ազնվականության անջատողական ձգումները: Որպես սուննիականության նկատմամբ ընդդմադիր շարժում, շիականությունը կրոնական գունավորում է հաղորդել նաև այն ընդարձակ մշակութային շարժմանը, որը տեղի ունեցավ Իրանում և հայտնի է «Շուռության» անունով:

Х-XI դարերում Եզիպտոսում և այլ վայրերում, որտեղ հաստատվեց Ֆարփիմյան խալիֆների իշխանությունը, շիականությունը ստացավ պետական կրոնի կարգավիճակ: Իրանում շիականությունը տարածվեց հատկապես VIII դարում և ընդհուպ մինչև XVI դարի սկիզբը, երբ ստեղծվեց Սեֆևյան աստվածապետական պետությունը, Իրանի բնակչության կեսից ավելին դավանում էր իսլամի սուննիական ուղղությունը: Այն պետական կարգավիճակ ունեցող դավանանք էր Իրանի համարյա բոլոր ֆեռդալական պետություններում: X-XVI դարերի ընթացքում, Իրանում տարածված էր ինչպես սուննիականությունը, այնպես էլ շիականությունը: Սակայն մինչև XVI դ. սկիզբը Իրանի պաշտոնական կրոնն էր համարվում սուննիական ուղղաղավան իսլամը: Սեֆյան պետության հիմնադիր շահ Խամաջիլ I-ը Իրանի պետական կրոն հոչակեց 12 իմամների վերաբերյալ շիական ուսմունքը կամ շիականությունը, որն առ այսօր հանդիսանում է Իրանի պետական-պաշտոնական կրոնը: Երբ Սեֆյանների ժամանակ շիականությունը հոչակվեց պետական կրոն (1502 թ.), իսլամի այդ ուղղությունը ծառայում էր որպես բազմաթիվ ընդդիմադիր շարժումների գաղափարախոսություն: Այն սուր ծայրով ուղղված էր նաև սուննիականությունը դավանող Օսմանյան կայսրության դեմ, որը հանդէս էր գալիս որպես Սեֆյան Իրանի տարածաշրջանային ախոյան: Բոլոր դեպքերում սուննիականությունը մուսուլմանական երկրների մեծ մասում միշտ էլ եղել է գերակշռող ու տիրապետող: Իսլամական երկրների մեծ մասում շիաները հանդիսանում էին փոքրամասնություն: Սակայն հաճախ այդ փոքրամասնությունը հանդէս էր գալիս որպես վերին աստիճանի եռանդուն, ակտիվ, գործունյա և միանգամայն կենսունակ կողմ:

Սուննիականության և շիականության միջև եղած տարբերությունները բնավ չեն նշանակում, որ շիաները չեն ընդունում մարզարեի սուննան: Նրա մեջ շիաներն ընդունում են միայն այն հաղիսները, որոնցում խոսվում է Ալիի մասին: Ի տարբերություն սուննայի, շիաները կազմեցին իրենց հուշերը Մուհամմադ մարզարեի և Ալիի մասին և դրանք անվանեցին «ախբարներ» (հոգն. «խարար», բառացի «տեղեկություն»):

Այսպիսով, թեև շիական սուննան չի համընկնում սուննիականի հետ, սակայն կան ոչ թիշ թվով հաղիսներ, որոնք ընդունվում են ինչպես սուննիների, այնպես էլ շիաների կողմից:

Քանի որ շիական ուսմունքը ձևավորվում ու մշակվում էր իսլամի սուննիական ուղղության տիրապետության պայմաններում, եթե ամեն մի այլախոհություն դաժանորեն հետապնդվում ու հալածվում էր, շիականության մի շարք աղանդների մեջ լայն տարածում գտավ «թարիյա» (արաբ. բառացիորեն «զգուշություն», «խոհեմություն») հասկացությունը: Այն թույլ էր տալիս թարցնել իր խսկական կրոնական և քաղաքական համոզմունքները, եթե դրանց բացահայտումը իրենից վտանգ ներկայացներ: Շիան, ըստ թարիյայի սկզբունքի, կարող էր նույնիսկ տալ կեղծ երդում իր թշնամուն, որը չէր դիտվում որպես երդմնադրժություն և հանցանք: Երբեք հայտնի չէր լինում, թե շիականության հետևորդը արդյոք արտահայտում է իր խսկական տեսակետը, թե նրա համար ստեղծված վիճակի ազդեցության տակ օգտվում է թարիյայից:

Ճիշտ չէ շիականությունը համարել իսլամի աղանդ: Իրականում այն հանդիսանում է խսկական կրոնի երկու հիմնական ուղղություններից կամ ճյուղերից մեկը:

Խալիֆ Ալիի որդիներ Հասանի և Հուսեյնի մահվանից հետո շիաների շրջանում տեղի ունեցավ առաջին լուրջ պառակտումը:

Արդեն VIII դարում շիականությունը դադարեց միատարր հոսանք հանդիսանալուց, բաժանվելով չափավոր և ծայրահեղ ճյուղավորումների: Քայսանինները, զեյդիթները և իմամինները կարող են դասվել չափավոր շիաների շարքը: Ծայրահեղ շիական ուղղությունների հետևորդներ են հանդիսանում, օրինակ, իսմայիլիները, ալավիները, զազաները և այլն:

Ինչպես չափավոր, այնպես էլ ծայրահեղ շիաների շրջանում գոյություն ունի այսպես կոչված «թաքնված իմամի» մասին ուսմունքը: Նրա կությունը կայանում է հետևյալում. Ալիի ժառանգորդների ուղիղ գիծը ընդհատվում է 12-րդ իմամով: Շիա-իմամիների այդ վերջին տասներկուերրորդ իմամը՝ Մոհամմադ ալ-Մահդին դեռ երեխա ժամանակ՝ 6-9 տարեկան հասակում խորհրդավոր կերպով չքացել է: Անհետացած այդ իմամը իր գտնվում է «թաքնվածության» («դայրի») վիճակում, սակայն անտեսանելի կերպով ներկա է այս աշխարհում, ուստի նրան անվանում են «սպասվող» իմամ: Ահեղ դատաստանի օրը նա կվերադառնա, որպեսզի երկրի վրա հաստատի արդարության թագավորություն: Շիաների մոտ իմամ Մահդիի հայտնվելու վերաբերյալ հավատը ստացել է զլսավոր դոզմաներից մեկի նշանակություն: Դժվար չէ նկատել, որ շիաները Մահդիին վերագրում են մեսիական առարկելություն:

Շիա-իմամիների կրոնա-քաղաքական խմբավորումը գտնում էր, որ իմամության իրավունքը բացառապես պատկանում է Ալիի ցեղից 12 իմամներին: Այստեղից էլ նրանց սկսեցին կոչել «խնաաշարիյա», այսինքն տասներկու իմամների երկրպագուներ:

Շիաները պետական իրավունքի սկզբունքներից մեկն են համարում իմամաթի՝ բարձրագույն հոգևոր իշխանության

սկզբունքը: Նրանց շրջանում տարածում է գտել նահատակության կուլտը: Նրանք առանձնապես մեծ հարզանք են տածում երրորդ իմամի՝ Ալիի որդիի Հուսեյինի նկատմամբ, որը մարտիրոսական մահով զոհվել է սուննիների ղեմ մղված ճակատամարտում:

Մերքա և Մադինա կատարվող ընդհանուր մուսուլմանական ուստագնացությունից զատ շիաները հաջ են կատարում նաև իրենց նահատակների թաղման վայրերը, որոնք գտնվում են Իրարում (Նաջաֆ, Քերբելա, Քազեմեյն, Սամարրա) և Իրանում (Մաշհադ): Բացի նշված վայրերից շիաների սրբավայրեր են հանդիսանում նաև իմամների ժառանգորդների շիրիմ-դամբարանները (այսպես կոչված «իմամզադեները»): Դրանցից հատկապես պաշտելի են համարվում ութերորդ իմամ Ալի Ռիզայի քրոջ Ֆաթիմայի դամբարանը Ղում քաղաքում և Երկլորդ իմամ Շասանի ժառանգորդ Աբդ ալ-Ազիմի դամբարանը Թեհրանի արվարձան Շահ Աբդ ալ-Ազիմում: Ալիների ընտանիքի շիրմավայրերի վրա կառուցված են շքեղ դամբարաններ, որոնց կից նաև մզկիթներ:

Շիա-իմամականների հավատալիքների շրջանակի կենտրոնում է գտնվում Ալիի և նրա ժառանգորդ-իմամների կուլտը: Շահադայի՝ հավատող հանգանակի վերաբերյալ մուսուլմանական բանաձեխն՝ «Զկա աստվածություն Ալլահից բացի և Մուհամմադը նրա մարգարեն է» իմամականներն ավելացնում են «Բակ Ալին՝ աստծո մերձավորագույն սուրբն է և նրա տեղապահը»:

Սուննիական քաղաքացիական իրավունքի համեմատ շիական քաղաքացիական իրավունքի առավել եական առանձնահատկությունն է վերջինիս կողմից ժամանակավոր ամուսնության ընդունումը: Արաբ-հեթանոսների մոտ ջահիլիայի շրջանում այդպիսի ամուսնություն գոյություն է ունեցել մինչխալամական շրջանում, սակայն համաձայն ավանդության, վերացվել ու ար-

գելվել է կամ Մուհամմադ մարզարեի, կամ խալիֆ Օմարի կողմից:

Իսլամի շիական ուղղության կողմից թույլատրված ժամանակավոր ամուսնությունը, որը արաբների մոտ կոչվում է «մութա» (արար. քառացիորեն «օգտվելու առարկա»), իսկ պարսիկների մոտ «սիղա» («սիղե») գործնականում այն տղամարդու կողմից կարող է կնքվել (անկասկած կողմերի ցանկությամբ) մեկ օրից մինչև 99 լրանային տարի ժամկետով: Սիղե ամուսնությունը ըստ էության հանդիսանում է օրինականացված կենակցություն (կոնքուրինատ): Այն հարմար է տղամարդկանց համար, քանի որ տղամարդկանց վրա չի դնում այն պարտականությունները, որոնք նրանք պարտավոր են կատարել օրինական կանանց նկատմամբ:

Սիղե ձևով ամուսնանում են կամ աղքատները, որոնք միջոցներ չունեն պատշաճ ձևով պահելու օրինական կնոջը, կամ շատ հարուստները և ազնվազարմ մարդիկ. վերջինների համար ամուսնության այդ ձևը մի միջոց է շրջանցելու օրենքը, որն արգելում է ունենալ չորսից ավելի կին: Սիղե կարգավիճակով կին կարելի է միաժամանակ ունենալ թեկուզ մի քանի տասնյակ: Սիղե պայմանագրի երկարատև ժամկետը (մինչև 99 տարի) այդպիսի կանանց իրենց ամբողջ կյանքում ամրագրում է տվյալ տղամարդու հետ, մինչդեռ այդ ամուսնությունը դույզն ինչ չափով չի կապում ամուսնուն. Վերջինս կարող է ցանկացած ժամանակ «քաց թռինել» իր սիղե կնոջը, նրան «նվիրելով» պարտավորության մեջացած ժամանակը:

Հարկ է նշել, որ ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս, իսլամի մեջ երկու ուղղությունների կամ հոսանքների՝ սուննիականության և շիականության առկայությունը հաճախ օգտագործ-

վում է թե՝ մուսուլմանական երկրների ներսում, և՝ թե արտաքին հարաբերություններում ազգային երկպառակություններ և արյունալի պատերազմներ հրահրելու համար:

ՍՈՒՖԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուֆիականությունը դա խլամական միստիցիզմն է: Միստիցիզմի տակ սովորաբար հասկացվում է առանձնահատուկ կրոնական աշխարհայացք, որը ենթադրում է աստծո հետ մարդու անմիջական շփում (կամ նույնիսկ միավորում), այսպես կոչված «ներքին պայծառացման», «հափշտակվածության» («էրստագ») միջոցով: Միստիկական հոսանքները, ինչպես նաև միստիցիզմով հագեցված փիլիսոփայական համակարգերը, հատկապես ավատատիրական դարաշրջանում հանդես են զայխ տարբեր կրոնների թաղանթի ներքո: Միստիկական հոսանքները համարյա միշտ կապված են ճգնավորության և «աշխարհից հրաժարվելու» զաղափարի վրա: Մուսուլմանական երկրներում միստիկական շարժումը հայտնի է սուֆիականություն ընդհանուր անվան տակ: Խլամազետների գերակշիռ կարծիքով «սուֆիականություն» տերմինը (արաբերեն «թասաֆֆուֆ») ծագում է սուֆ՝ «բուրդ», «կոպիտ բրդյա զգեստ» բառից: Տեսակետ կա նաև այն մասին, որ սուֆիականությունը ծագել է հունարեն «սուփոս» («խմաստություն») բառից: Ումանք կարծում են, որ նրա ծագումը արաբերեն «սաֆա» արմատից է, որը նշանակում է «մարրություն»:

Որպես սուֆիականության հոմանիշ ընդունված է նաև «թարիք» (արաբերեն բառացի «Ճանապարհ», «միստիկական ուղի») տերմինը, մուսուլմանական ճգնավորները, խլապես, հազ-

նում էին կոշտ բրդե հազուստներ, դրանով իսկ ցանկանալով անջրակտվել հասարակությունից: Ըստ որոշ տվյալների, նրանք այդ սովորույթը փոխառել էին ճգնավորական կյանք վարող բրիստոնյաներից:

Սուֆիականությունը ծնունդ է առել իսլամական հողի վրա: Առաջին սուֆիական համայնքները ստեղծվել են IX դարի սկզբին: Նրա մեջ կենտրոնական զաղափարը աստծո միասնությունն է և մարդու անձնական շփումը աստծո հետ: Չափազանցություն չի լինի ասելու, որ սուֆիականությունը նույնքան հին է, որքան իսլամը: Համենայն դեպք արդեն հիջրեթի առաջին դարի վերջին, այսինքն VIII դարի սկզբին, սուֆիականության մասին կարելի է խոսել որպես իսլամի ներսում առանձին հոսանքի մասին:

IX-X դարերում սուֆիականությունը Իրանում գտավ չափազանց մեծ տարածում, սակայն արդեն այդ ժամանակ միասնական սուֆիականություն այլևս չկար: Սուֆիականության տակ այժմ սկսում էին հասկանալ մուսուլմանական միստիցիզմի տարբեր հոսանքները:

Սուֆիականության գլխավոր բովանդակությունը նրա գոյության վաղ շրջանում դա ճգնավորությունն ու անապատականությունն էր, «փախուստն աշխարհից» և միաժամանակ ձոխ ու շվայտ կյանքի, որկրամոլության, աննպատակ գոյության դատապարտումը: Այստեղից ծնունդ է առել աղքատության կուլտը որպես իդեալական վիճակ «հոգու փրկության» համար: Արդեն վաղ սուֆի-ճգնավորների համար բնորոշ էր կամավոր աղքատության քարոզը: Այդ կապակցությամբ ծնունդ առավ «թափաքքուլի» (արար. «հույս», «ապավինություն») վերաբերյալ ուսմունքը, որի եռությունը կայանում էր նրանում, որ ամբողջապես հոյսը բնիկով աստծո վրա, իոդ չտանել սնունդ ու գոյության միջոցներ ձեռք բե-

բելու համար: Իրենց կամավոր աղքատության մատնած անապատական-ճգնավորները (որոնց հետազայում կոչեցին ֆարիբներ կամ դերվիշներ) հետևում էին հետևյալ կարգին. ողորմություն հավաքել միայն մեկ օրվա համար, քանի որ սնունդ հավաքելը դրանից ավել օրերի համար համարվում էր թափաքրու սկզբունքի խախտում: «Վերին աստիճանի հատկանշական է,- գրում է խալամագետ Ի. Գոլցիերը,- որ Աստվածաշնչի խոսքերը երկնային թռչունների մասին, որոնք ոչ ցանում են, ոչ հնձում և բերքը չեն կուտակում ամբարներում, սակայն երկնային հայրը կերակրում է նրանց, համարյա բառացիորեն բերվում է թափաքրու ուսմունքի հետևրդների կողմից և կենտրոնական տեղ է գրավում այդ ուսմունքի մեջ»: Սուֆի-դերվիշների գաղափարախոսության համաձայն հարստությունը հանդիսանում է ամեն տեսակի մեղքի հիմք, դա մի վիճակ է, որն արգելք է հանդիսանում «փրկության» համար:

Իրենց կամավոր աղքատության մատնած ֆարիբները և դերվիշները չունեին անձնական սեփականություն, թափառում էին տարբեր վայրերում և կամ ապրում դերվիշների համար նախատեսված կացարաններում կամ մենաստաններում, որոնք ունեն տարբեր անվանումներ՝ պարսիկների մոտ նրանք կոչվում էին «խանագա», թյուրքերի մոտ «թերիյե», իսկ արաբների մոտ «զավիյա», որ բառացի նշանակում է անկյուն, խուց: Դերվիշական այդ կացարաններում առկա էր հատուկ կանոնադրություն. երիտասարդ մարդիկ գտնվում էին տարեց ուսուցիչ-դաստիարակների դեկավարության տակ, որոնք սովորաբար հանդիսանում էին կացարանի գլխավորը և կոչվում էին «շեյխ» կամ «փիր»: Նա հանդիսանում էր «մուրժիդ» (արաբ. «դեկավար», «դաստիարակ» կամ «ուսթադ» (պարսկերեն «ուսուցիչ»), իսկ նրան ենթակա նորեկը,

բը հանդես էր գալիս որպես «աշակերտ» կոչվում է «մուրիդ» (արաբ. «փնտրող, որոնող», «աշակերտ»): Շեյխ-մուրշիդի զիսավորությամբ մուրիդը պետք է անցներ ճգնավորական և հայեցողական կյանքի երկար ճանապարհ «կատարելության հասնելու համար»:

Որոշակի ժամկետ անցնելուց հետո մուրիդը ընդունվում էր դերվիշական եղբայրության՝ «թարիքաթի» մեջ: Ըստ որում, շեյխը իր աշակերտին հազցնում էր դերվիշական զգեստ, որն այնուհետև սուֆին կրում էր իր ողջ կյանքի ընթացքում: Նրա կապը իր շեյխ-ուսուցչի հետ պահպանվում էր ողջ կյանքի ընթացքում: Սուրիդը, երաժարվելով իր «ես»-ից, ամբողջովին իրեն տալիս էր շեյխ-մուրշիդի կամրին, հանձինս նրա տեսնելով աստծոն ներկայացնեցին: Մարինները պարբերաբար խոստովանում էին իրենց մեղքերը (նաև մտովի) շեյխի առջև և կատարում էին մեղքերի թողություն («թառութա»):

Բացի այն դերվիշներից, որոնք մշտական կամ տևական ժամանակ ապրում էին դերվիշական կացարաններում, կային մեծ թվով թափառող դերվիշներ, որոնք այդ կացարաններում ապաստան էին գտնում միայն ձմռանը: Գարունը բացվելուն պես շեյխը դիմելով նրանց ասում էր. «Գարունը եկավ, ծառերը ծածկվել են տերևներով, ժամանակն է, որ դուք գնաք, թափառեք ամբողջ աշխարհով մեկ»: Ողորմություն խնդրելը թափառող դերվիշների համար համարվում էր օրինաչափ և միանգամայն օգտակար իրենց հոգեկան աճի համար:

Ինչպես և քրիստոնեական ու բուդդայական տաճարներում, դերվիշական խանազաններում կամավոր ինքնախոշտանգումները համարվում էին կատարելության հասնելու կարևորագույն միջոց:

Ճգնավորությունը, ժումկալությունը, աղքատությունը և այլն սուֆիների համար ինքնանպատակ չեր: Այն մի միջոց էր զգայական աշխարհից իրենց կապվածությունը ձերբազատելու: Իր մարդկային բնականոն ցանկություններից ազատվելու, իր սեփական «Ես»-ի նկատմամբ սիրուց հրաժարվելու և դրանով իսկ իրեն պատրաստելու համար ըմբռշխնելու արարչի հետ անձնական շփման «քաղցրավուն պահերը»: Սուֆին պետք է չսպասեր «այն աշխարհում» պարզեների, նրա սերը «ընկերոց» (իմա՝ աստծո) նկատմամբ պետք է լիներ կատարելապես անշահախնդիր:

Սուֆիների ուսմունքի մեջ առկա է «չորս հանգրվանների» վերաբերյալ սկզբունքը: Դրանք են. «հոոյս», «համբերություն», «քաղցրարվածություն» և «ապավինություն»: Այդ սկզբունքների կիրառումը գործնական կյանքում նպաստում էր իսլամի մեջ ճակատագրապաշտության զարգացմանը:

Սուֆիականության տարբեր ճյուղավորումներում ձևավորվեց ուսմունք «հոգեկան կատարելության» աստիճանների վերաբերյալ: Դրանք համարվում էին մի տեսակ աստիճանների համակարգ Ալլահին մերձենելու համար: Այդ աստիճանների (հանգրվանների) թիվը սուֆիականության տարբեր համակարգերում տարբեր են: Ավելի հաճախ հաշվվում են չորս աստիճան. առաջին նախապատրաստական աստիճանը շարիաթն է, այսինքն կյանքի բոլոր հանգամանքներում հավատի սկզբունքներին հետևելը: Երկրորդ աստիճանը դա սուֆիների ուղու վրա մուտք գործելն է: Այն կոչվում է «Քարիքաթ» («Ճանապարհ»): Աշակերտը իր համար ընտրում է հոգևոր դաստիարակի և կատարելապես ձերբազատվում իր կամրից «Ես»-ից, բոլոր հարցերում ենթարկվելով իր ուսուցչին: Այս էտապում մուրիդը մուրշիդի կամ «իր շեյխի ձեռքում պետք է լինի ճիշտ այնպիսին, ինչպիսին որ հանդիսանում է դիա-

կը մեռել լվացողի ձեռքում». այսպիսին է սուֆիական օրենքը թարիքաթի աստիճանում գտնվող սուֆիի համար:

Երրորդ աստիճանը դա «մարիֆաթն» է («իմաստությունը»), որի ընթացքում սուֆին պետք է հասնի աստվածային ճշմարտության «ընկալմանը» կամ «պայծառացում» ձեռք բերելուն: Այս աստիճանում աշակերտը դառնում է արիֆ, այսինքն «ճանաչած», «փմացած»: Նա իրավունք է ձեռք բերում դառնալու այն սուփիներին «ուղղություն տվող», որոնք դեռ գտնվում են ցածր աստիճաններում: Այսինքն սուփին իր շեյխի թույլտվությամբ ինքը կարող էր դառնալ մուրշիդ-դաստիարակ նորեկների համար: Երրորդ աստիճանում հրաժարվելով աշխարհիկ կյանքից, պետք է ճգնավորությամբ, ներքին աղոթքի, մշտապես աստծո անունները արտաքրեկողվ, իրեն քաղցի մատնելով, հրաժարվելով զգայական ցանկություններից և այլ կարգի «ինքնակատարելազործման» ու էրստացի ճանապարհով հասու լինել աստծուն: Այդ աստիճանում, համաձայն սուփիական պահանջներին, մուրիդը բարձրանում է կյանքից վեր, նա ստանում է բարին ու չարը հասկանալու շնորհ, նրա համար իբր հավասար են դառնում բարին ու չարը, բարոյականն ու անբարոյականը:

Սուփիականության չորրորդ բարձրագույն աստիճանը «հաղիղաթն» է (արաբ. «ճշմարտություն»), որը բնորոշվում է Ալլահի հետ միաձուլման և աշխարհիկ կյանքի ամեն ինչի նկատմամբ հետաքրքրության լրիվ կորստով: Այս աստիճանին կարող են հասնել միայն ոչ մեծ թվով սուփիներ: Հաղիղաթի աստիճանին հասածը իբր սկսում է զգալ, որ իր մեջ եղած ամեն աշխարհիկը մարել է, որ ինքը այլևս կորցրել է սեփական «ես»-ը, որն «անհետացել է աստծո մեջ»: Սուփիականության մեջ գոյություն ունի «Փանա» (արաբ. «շքացում», «հանգչում», «կործանում») հասկացությունը, այ-

սինքն սուֆիի կողմից կատարելության հասնելը, եթք նա, իր մեջ ճնշելով անձնական կամքը, երկրային ցանկությունները և մարդուն բնորոշ հատկանիշները («սիֆաթ»), և դրանով խոկ ազատվելով զգայական աշխարհի ընկալումից, հասնում է միստիկական կատարելության և ի վիճակի է դառնում շփվելու «Միասնականի», այսինքն աստծո հետ: Այսպիսով, բարձրագույն աստիճանի հասած սուֆին հրաժարվում է մարդկային անհատականությունից և ընկդմվում է նիրվանայի մեջ:

«Գիտությունների լույս» («Նուր ալ-ուլում») սուֆիական գրքում, որը վերագրվում է X-XI դարերի խորասանյան սուֆիականության ներկայացուցիչներից մեկին՝ Աբու-լ-Հասան Շարաբանիին, բարձրագույն աստիճանի հասած սուֆիի իդեալը ներկայացվում է հետևյալ կերպ: «Շեյխը հարցրեց մի ուս սուֆիի ո՞ւմ եք դուք անվանում դերվիշ»: Նա պատասխանում է. «Նրան, որը աշխարհի մասին ոչ մի տեղեկություն չունի»: Շեյխն ասում է, «դա այդպես չէ, դերվիշը նա է, որի սրտում գոյություն չունի որևէ մոտագրություն: Նա խոսում է, սակայն նրա ասածների մեջ խոսք չկա, նա տեսնում է, բայց չունի տեսողություն, նա լսում է, բայց չունի լսողություն, նա ուտում է, բայց նրա մոտ բացակայում է կերածի համը, նրա մոտ չկա ոչ շարժում, ոչ հանգիստ, ոչ տիրություն, ոչ ուրախություն: Դա է դերվիշը»:

Սուֆիականության մեջ մեծ դեր են խաղում ծիսական արարողությունները, նրանք, օրինակ, ավելացնում էին իրենց աղորքների թիվը, կատարում էին լրացուցիչ ծումապահություններ, կրծատում իրենց սնունդը և կատարում այլ կարգի սահմանափակումներ: Ուշագրավ է նշել, որ սուֆիների հեռացումը ավանդական աղորքներից շատ ավանդապաշտների կողմից սուֆիականությունը դիտվել է որպես հերձված:

Սուֆիական-դերվիշական մի շարք միաբանություններում նրանց ծխական արարողությունները ուղեկցվում են երաժշտությամբ ու պարերով, որոնք կրում են մոլեգին բնույթ: Հայտնի է այսպես կոչված «պտտվող դերվիշներ» երևույթը, երբ սուֆի-դերվիշները միապահադ երաժշտության ներքո ժամերով անընդհատ պտտվում են, երստազի մեջ ընկած: «Պտտվող դերվիշները» անջնջելի տպավորություն են քողել Հանս Քրիստիան Անդերսենի վրա, որը նրանց տեսել է Ստամբուլում և նկարել նրանց: Պայծառատեսության վիճակում «Ալլահին մերձենալու» հարցում սուֆիներին առհասարակ օգնում է մարմնի տարրեր ձեփի շարժումները, հատուկ ոիթմը կամ երաժշտական նվազակցությունը, ինչպես նաև թմրադեղերից պատրաստված խմիչքները:

Չիքը՝ դերվիշների պարը կամ սուֆիական պտտումները կարելի է անվանել մեղիստացիայի ամենահին և ամենահզոր տեխնիկաներից մեկը: Դերվիշների պարի խորհրդանշական իմաստի հիմքում ընկած է արևի, լուսի և աստղերի շարժման ընդօրինակումը, որոնք գտնվում են հավերժ պտույտի մեջ: Մեր օրերում ևս Իրանում, Թուրքիայում և իսլամական շատ երկրներում կարելի է տեսնել սուֆի-դերվիշների իսկական պարեր: Թուրքիայում, օրինակ, Կոնիա քաղաքում, տարին մեկ անգամ, դեկտեմբերի 9-ից մինչև 13-ը դերվիշները հավաքվում են XIII դարի սուֆի քանատեղի Զելալեդդին Ռումիի գերեզմանի մոտ և կատարում արարողություններ, այդ թվում նաև պարեր:

XII դարում սուֆիականությունը ուղղադավան իսլամի կողմից ճանաչվեց որպես հավատի օրինական մաս:

Սուֆիականությունը XI-XV դարերի միջև ընկած շրջանում հզոր ազդեցություն է գործել պարսկական պոեզիայի վրա: XIV դարից հետո սուֆիական զաղափարախոսությունը թեև շարու-

նակում էր լայն տարածում ունենալ Իրանում և առհասարակ իսլամական երկրներում, սակայն այդ շրջանում նա արդեն վերասերվել էր, իսկ նրա հետևորդների մեծագույն մասը, հատկապես այսպես կոչված «քափառող դերվիշները» իրենց սոցիալական վիճակով այլևս ոչնչով չեին տարբերվում ապահասակարգայնացված սումավեն-պրոլետարներից՝ «այյարներից», որոնք ավելի ու ավելի էին վերածվում պրոֆեսիոնալ մուրացկանների, որոնք ոչ մի առնչություն չունեին սուֆիական զաղափարների, իսկ հաճախ նաև որևէ հավատքի հետ: Սուֆիականության անկման և քայլայման ցայտուն դրսերումներից մեկը հանդիսացավ նաև այն, որ նրա մի շարք միաբանություններ վերածվեցին յուրահատուկ տեսակի ռազմա-ասպետական միաբանությունների, որոնք «հոգեկան կատարելազործման» սուֆիական զաղափարները փոխարինելով ջիհադի ծայրահեղ մոլեռանդության հասնող զաղափարներով, «սրբազն պատերազմի» անվան տակ կազմակերպում էին մշտական կողպտչական արշավանքներ դեպի «անհավատների երկրները» (Վրաստան, Հյուսիսային Կովկաս, Ռուսիա, կալմիրների երկիրը, Հնդկաստան և այլն): Դրա ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ սեֆերյան շիական միաբանությունը, որը մշտապես պատերազմների մեջ էր հարուստ ռազմական ավար և գերիստրուկներ ձեռք բերելու նպատակով:

Սուֆիականությունը որպես ուսմունք գոյություն ունի նաև մեր օրերում:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԸ (ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ)

Տարբեր ժողովուրդների մոտ տոմարը կամ օրացույցները տարբեր են: Յուրաքանչյուր պետություն այդ հարցի առնչությամբ կատարում է ընտրություն, առաջնորդվելով այս կամ այն քաղաքական կամ կրոնական սկզբունքներով: Այսպէս, օրինակ, հռոմեացիները իրենց տոմարը սկսում էին կայսրության առաջին քաղաքի հիմնադրման օրվանից. հնդիկները ժամանակի հաշվարկը կատարում էին Մեծ մողոլների արքայատան հիմնադիր Աբրահի գահակալության օրվանից (1550 թ.): Էին Ռուսիայում օգտագործվում էր Աշխարհի արարչագործության օրվանից սկսվող օրացույցը, որը Պյոտր I 1699 թ. դեկտեմբերի 20-ի հրամանագրով փոխարինվեց մի նոր օրացույցով, որը ժամանակի հաշվարկը կատարում էր Քրիստոսի Ծննդյան օրվանից: Նման օրինակները բազմաթիվ են:

Մուսուլմանական աշխարհում լայնորեն տարածված է այսպէս կոչված լուսնային օրացույցը: Մահմեդականները իրենց թվագրությունը սկսում են Մուհամմադ մարգարեկի Մերրայից Մայիսա կատարած տեղափոխությունից սկսած (արար. «հիջրա»), որը տեղի է ունեցել 622 թվականին:

Մուսուլմանական երկրներում տարածում ունի նաև արևային օրացույցը («միլադի»): Որպեսզի արևային տոմարը տեղափոխվի լուսնայինի և հակառակը, գոյություն ունեն հատուկ բանաձևեր:

Մուսուլմանական օրացույցով տարին սկսվում է մուհա-
րամ ամսի 1-ից: Տարին բաժանվում է 12 ամիսների, որոնք կրում
են հետևյալ անվանումները՝.

առաջին ամիսը –մուհարրամ

երկրորդ ամիսը – սաֆար

երրորդ ամիսը – ռաբի-ուլ-ավվալ

չորրորդ ամիսը – ռաբի ուլ-ախիր (կամ երկրորդ ռաբի)

հինգերորդ ամիսը – ջումադ-ուլ-ավվալ (կամ ջումադի ա-
ռաջինը)

վեցերորդ ամիսը – ջումադ-ուլ-ախիր (կամ ջումադի երկ-
րորդը)

յոթերորդ ամիսը – ռաջար

ութերորդ ամիսը – շաարան

իններորդ սրբազն ամիսը ռամադան (պարսկերենով), ռա-
մազան (թյուրքերենով)

տասներորդ ամիսը – շավվալ

տասնմեկերորդ ամիսը – գուլ-քաադա

տասներկուերորդ ամիսը – գուլ-հիջա:

Քանի որ լուսինը շարժվում է շափազանց բարդ հետագծով,
ուստի աստղաբաշխական նորալուսինը ոչ միշտ է նշանակում
հիջրայի ամիսներից որևէ մեկի սկիզբը: Ինչպես է որոշվում լուս-
նային ամսի սկիզբը. մուսուլմանական որոշ երկրներում այդ
հարցը որոշում են տվյալ վայրում լուսնի երևալու սկզբունքով
(ամսվա սկիզբը պետք է համարվի այն օրը, երբ նորալուսնից հե-
տո նորաբաց լուսնի մանգաղը նշանակվի է դառնում արևի մայրա-
մուտից հետո: Իսկ մի շաբթ մուսուլմանական երկրներում վերո-
հիշյալ հարցը վճռվում է հեղինակավոր անձանց վկայությամբ):

Ժամանակակից Իրանում հիմնականում օգտագործվում են երեք օրացույցներ, արևային հիջրայի իրանական օրացույցը, լուսնային հիջրայի մահմեդական օրացույցը և Գրիգորյան օրացույցը: Մինչև 1925 թ. շահական արքունիքում տարածված էր նաև կենդանական ցիկլի լուսնային արևային օրացույցը:

Իրանում պաշտոնական օրացույցը՝ դա արևային հիջրայի օրացույցն է: Այն օգտագործվում է Երկրի քաղաքացիական և պետական կյանքի բոլոր բնագավառներում: Լուսնային հիջրայի օրացույցից առավելապես օգտվում է մահմեդական հոգևորականությունը: Գրիգորյան օրացույցը տարածված է Իրանի քրիստոնյան բնակչության շրջանում, ինչպես նաև արևմտաեվրոպական լեզուներով հրատարակություններում:

Ներկայումս օգտագործվող արևային հիջրայի օրացույցը օգտագործման մեջ է մտցվել 1925 թ. իրանական խորհրդարանի՝ Մեջլիսի ընդունած հրամանագրով: Դա այսպես կոչված Ֆարսի-յե Շամսի (արևային-պարսկական) օրացույցն է, որը ինչպես նշվեց, հանդիսանում է իրանական պետության պաշտոնական օրացույցը: Հստ այդ օրացույցի, նոր տարին սկսվում է օրերի զարնանային հավասարեցման առաջին օրը (մարտի 21-ին): Հասարակ տարին ունի 365 օր, նահանջ տարին՝ 366: Տարին բաղկացած է 12 ամիսներից, առաջին վեց ամիսներն ունեն 31-ական օր, հետևյալ հինգ ամիսները՝ 30-ական օր և վերջին ամիսը հասարակ տարվա ընթացքում ունի 29 օր, իսկ նահանջ տարում՝ 30 օր: Տարին սկսվում է զարնանային զիշերահավասարման օրվանից: Ավելի հաճախ այդ օրը լինում է մարտի 21-ը, իսկ առանձին տարիներին՝ մարտի 20-ը կամ 22-ը: Այդ օրը հանդիսավորապես նշվում է մուսուլմանական նոր տարին կամ նովրուզը:

Արևային հիջրայի ժամանակակից իրանական օրացույցի
ամիսների անվանումը հետևյալն է՝

1. Փարվարդին
2. օրդիքեհեշթ
3. Խորդադ
4. Թիր
5. Մորդադ
6. Չահրիվար
7. Մեհր
8. Աբան
9. Ազար
10. Դեյ
11. Բահման
12. Էսֆանդ

Արևային հիջրայի իրանական արևային օրացույցի ամիսները բաղկացած են յոթօրյա շաբաթից, որը սկսվում է շաբաթ օրվանից: Շաբաթվա պաշտոնական ոչ աշխատանքային օրեր են համարվում հինգշաբթին և ուրբաթը: Ուրբաթը (յառամ ալ-Զումա) կամ «Ժողովի օր» համարվում է շաբաթվա ամենաօրինյալ օրը, քանի որ ըստ ավանդության, Սուհամմադը և նրա փեսա Ալին ծնվել են հենց ուրբաթ օրը:

Ուրբաթ օրը (ինչպես քրիստոնյաների մոտ կիրակին, հրեաների մոտ շաբաթը) անպայման պետք է օգտագործվի որպես հանգստյան օր: Այդ օրը որպես կանոն մուսուլմանները հաճախում են մզկիթներ, որտեղ հանդիսավոր կերպով տեղի է ունենալ հասարակական աղոթք:

Շաբաթվա օրերի անվանումը Իրանում՝
Շաբաթ – Չամքե

կիրակի - եր-շամբե
երկուշաբթի - դո-շամբե
երեքշաբթի - սե-շամբե
չորեքշաբթի - չահար շամբե
հինգշաբթի - փանջ-շամբե
ուրբաթ - ջոմ'ե:

Ներկայում բոլոր մահմեղական տոները և սպո օրերը Իրանում նշվում են լուսնային հիջրեթի օրացույցով: Այդ օրացույցով են հաճախ որոշվում նաև այն իրադարձությունները, որոնք կապված են անցյալում մահմեղական երկրների և կազմակերպությունների գործունեության հետ: Պարսկական միջնադարյան պատմագրության մեջ ևս թվականները նշվում են ըստ այդ օրացույցի:

Դետք է նշել, որ իրանական լուսնային հիջրեթը մասնակիորեն տարբերվում է արաբական լուսնային հիջրեթից:

ԻՍԼԱՄԻ ՄԵԶ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԵՐԸ

Ինչպես բոլոր կրոններում, իսլամի մեջ ևս գոյություն ունեն բազմաթիվ տոներ, որոնք հանդիսանում են մուսուլմանական կուլտի կարևոր բաղկացուցիչ մասերը: Մուսուլմանական տոների կարևոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք որպես կանոն նշվում են ըստ լուսնային օրացույցի: Նրա հաշվարկը տարվում է 622 թ. հուլիսի 15-ի օրվանից, եթե ըստ ավանդության, Մուհամմադ մարզարեն Մեքքայից տեղափոխվեց Սաուդինա:

Մուսուլմանական զլսավոր տոներն են.

1. Իդ ալ-ֆիթրը կամ Իդ աս-սաղիբը, որը Իրանում անվանվում է Եյղ-ե ֆեթր, թյուրքալեզու ժողովուրդների մոտ Օրուշ-բայրամ կամ Ռուրազա բայրամ, հաճախ նաև Քյուչյուք բայրամ: Այն իրենով նշանավորում է սրբազն Ռամադան ամսի ավարտը: Նշվում է Ռամադան ամսվա ծոմը ավարտվելուց հետո երերօյա տոնակատարությամբ: Իդ ալ-ֆիթրը կոչվում է փոքր տոն ի հակակշիռ մեծ տոնի կամ զոհաբերության տոնի: Այդ տոնի խորհուրդն այն է, որ Բարձրյալը ռամադան ամսին իր մարգարեին բացահայտեց Ղուրանի հայտնությունը: Իդ ալ-Ֆիթրը հար և նման է քրիստոնեական քաթարիզման տոնին:

Ռամադանը մուսուլմանների համար հանդիսանում է տարվա մեջ ամենակարևոր ամիսը: Այդ ողջ ամսվա ընթացքում խսամը դավանող անձը մարրում է իր հոգին ու մարմինը, օրվա լուսավոր ժամերին հրամարվելով ընդունել ուստելիք, ջուր և այլն: Այդ տոնի համար սահմանված պայմանները կամ կանոնակարգը պարտադիր է բոլոր չափահաս և առողջ մուսուլմանների համար:

Երերօյա տոնակատարության ժամանակ մահմեդականները հագնում են իրենց ունեցած զեղեցիկ զգեստները, շնորհավորում են միմյանց, զնում են հյուր, նվերներ են մատուցում միմյանց: Իդ ալ-ֆիթր տոնի ժամանակ յուրաքանչյուր անձ պետք է մզկիթներում կամ այսպես կոչված «նամազզահներում» (աղոթավայրերում) դառնա ընդհանուր աղոթքի մասնակից:

2. Իդ ալ Աղիա ալ Մուրարաք (պարսիկների մոտ Իդ ալ-բարի, թուրքերի մոտ Կուրրան (Ղուրրան բայրամ): Դա զոհաբերության տոնն է և կոչվում է Մեծ տոն: Ինչպես և Իդ ալ-ֆիթրը, նշվում է երեք օրվա ընթացքում: Զոհաբերության խորհուրդը կապվում է խալամի մեջ փոխակերպված Արքահամ մարգարեի մասին բիբլիական լեզենդի հետ: Համաձայն Ղուրանի, Զաքրիլ

(Զիբրի) հրեշտակը քնի մեջ հայտնվել է Իբրահիմին (Աբրահամին) և նրան փոխանցել Ալլահի հրամանը, որպեսզի նա զոհաբերի իր առաջնեկ Խսմայիլին: Բարձրյալի կամքին հնագանդ, Իբրահիմը մեկնում է Մինա հովիտը (այն վայրը, որտեղ այժմ գտնվում է Մերրան) Տիրոց հրամանը կատարելու համար: Սակայն այդպիսի ահավոր զոհաբերությունը հանդիսանում է լոկ հավատի փորձություն և Ալլահը Իբրահիմի որդուն փոխարինում է զոհաբերության զանոնուզը: Ի հիշատակ այդ իրադարձության, յուրաքանչյուր ուղղաղավան մահմեդական պարտավոր է Բարձրյալին զոհ մատուցել:

Զոհաբերության օրվա տոնը սկսվում է վաղ առավոտից: Այն նշվում է վերին աստիճանի հանդիսավոր կերպով և մեծ ուրախության ու բերկրանքի մքնոլորտում: Այդ օրերին ընկերներն ու մոտիկ ազգականները հավաքվում են միասին, ամենուրեք քաղաքորում է ուրախության և համընհանուր միասնության ու համերաշխության ողին մուսուլմանական եղբայրության՝ ուսմայի շրջանակներում: Տոնակատարության օրերին հավատացյալները այցելում են իրենց հարազատների գերեզմանները, աղոթում են նրանց հոգու հանգստության համար, աղքատներին բաժանում են ողորմություն:

Մուսուլմանական այդ երկու զիսավոր տոնները՝ Իդ ալ-Ֆիրը ըլ և Իդ ալ-ադհան մեծ հանդիսավորությամբ նշում են աշխարհի բոլոր մուսուլմանները նաև մեր օրերում:

Ռամադան ամսվա 27-րդ օրը նշվում է հատուկ տոնակատարությամբ, որը կոչվում է Պատգամների օր:

Աստիճանաբար մուսուլմանների մոտ ընդունվել են նաև երկրորդական նշանակության տոներ: Դրանցից են. Մյաուլիդ (Մավլիդ) ալ-Նաբին, որը Մուհամմադ մարզարեի ծննդյան օրն է

(ոարդի ուլ-ավկալ ամսի 12-րդ օրը): Դա բոլոր մահմեղականների համար մեծ տոն է: Մինչև օրս Մուհամմադի ծննդյան ստույգ օրը հայտնի չէ և վեճի առարկա է հանդիսանում, ուստի մուտքման-ները որոշել են այդ օրը ինչ որ ձևով հարմարեցնել մարզարեի մահվան օրվա հետ, որը ստույգ հայտնի է:

Ուշագրավ է նշել, որ մուտքմանական ավանդույթի համաձայն ծննդյան օրերը սովորաբար շատ համեստ են նշում, եթե ընդհանրապես նշում են, իսկ մարդու մահվան օրը նշվում է շատ հանդիսավոր կերպով, որպես մի հիշարժան օր, որից սկսվում է մարդու «հաւերժական» կյանքը:

Միրաջ (Լայլաթ ալ Խորաս ուա ալ Միրաջ): Այս տոնը նշվում է ուշագր ամսի 27-ին, Մուհամմադի Մեքրայից Երուսաղեմ (Ղոդյ) կատարած երազային ուղևորության և երկինք՝ Ալլահի մոտ բարձրանալու (միրաջ) ավանդույթի կապակցությամբ:

Խոլամական մյուս տոններից հիշատակության արժանի են նաև Մուհամմադ մարզարեի առաքելության սկզբի և նախասահմանման զիշերվա (արար. լայլաթ ալ-կադր) տոնները: Ավանդության համաձայն, նախասահմանման զիշերը երկնքից Մուհամմադին է ուղարկվել Ղուրանը: Իբր այդ նույն զիշերը երկնքում որոշվում է յուրաքանչյուր մարդու ճակատագիրը: Հավատացյալները այլ զիշերը չեն քնում, ողջ զիշերը անցկացնելով մզկիթում, աղոթելով ու Ղուրան ընթերցելով:

Շիաների կրոնական տոնների մեծամասնությունը վերաբերում է համախամական տոնների թվին: Սակայն կան նաև այն-պիսիները, որոնք տոնվում են միայն շիաների կողմից: Այլ կերպ ասած, վերջիններս ունեն նաև իրենց առանձնահատուկ տոնները: Շիաների հիմնական կրոնական տոնները հետևյալներն են. ուարի ալ-ավկալի 12-ը՝ Մուհամմադ մարզարեի ծննդյան օրը, ուաջարի

27-ը՝ մաք’աս՝ Սուհամմադի իր մարգարեական առաքելությամբ հանդես գալու օրը, ուաջարի 13-ը՝ իմամ Ալիի ծննդյան օրը. շաբանի 3-ը՝ իմամ Հուսեյինի ծննդյան օրը. շաբանի 15-ը՝ 12-րդ իմամ Մահմետի ծննդյան օրը, շավկալի 1-ը՝ ֆիքր տոնը (զոհաբերության օր հօգուտ ընչագուրկների). զու-լ-քաադայի 11-ը՝ իմամ Ռեզայի ծննդյան օրը. զու-լ-հիջջայի 10-ը՝ զոհ մատուցելու տոնը («էյդ-է դորբան»). զու-լ-հիջջայի 18-ը՝ Ղաղիբրում տոնը, ի նշանավորումն այն օրվա, երբ նոյնանուն վայրում, ըստ ավանդության, Սուհամմադը իր ժառանգորդ անվանեց Ալի իրն Արի Թալիբին: Շիաները նշում են նաև Հասանի սպո օրերը (սաֆարի 28-ին), Հուսեյինի մահվան քառասունը (սաֆարի 20-ին), Ալիի մահացու վիրավորվելու և մահվան օրը (ուամադանի 19-ին և 21-ին), վեցերորդ իմամ Զաֆար աս-Մահիդի մահվան օրը (շավկալի 1-ին):

Շիաների համար սպո օրերն ունեն առանձնահատուկ նշանակություն: Նրանց համար ամենակարևոր սպո օրերն են «աշուրայի» օրերը. դրանք շիա նահատակների և առաջին հերթին իմամ Հուսեյինի հիշատակի օրերն են: Սպո այդ օրերը տեղի են ունենում մուհարրամ ամսի 1-ից մինչև 10-ը: Սուհարրամի առաջին օրերից բոլոր բնակավայրերում ստեղծվում են այսպես կոչված «աշուրախաններ». դրանք սև խոշոր վրաններ են, որոնց ներսում դրվում են դատարկ դագաղներ: Այդ վրաններում երեկոները խմբերգային ձևով երգում են սպո երգեր («մարսիյե») ի հիշտակ Հուսեյինի և շիա նահատակների: Սուհարրամի իններորդ օրը երեկոյան («թասուա») ամեն մի քաղամասի ներկայացուցիչները (որպես կանոն սև վերնաշապիկներ հազած երիտասարդներն ու պատանիները) առանձին շարքերով սկսում են քայլարշավ փողոցներում: Նախկին ժամանակներում երթի մասնակիցները իրենց ենթարկում էին կամավոր ինքնախոշտանգման, իսկ մեր օրերում իրենց հարվածում են թերև այսումինե շղթաներով, որոնք

ցավ չեն պատճառում: Խոշոր թափորների երթերի ժամանակ, որնք ուղեկցվում են թմբուկների զարկերով, մասնակիցները խմբովին լալագին արտաքերում են «Չահ Հուսեյին, վայ Հուսեյին», որը աղավաղված ձևով հայտնի է «Չահսեյ-Վահսեյ» անունով: Այդ ընթացքում կրոնական եքատազր հասնում է իր զագարնակետին:

Սուհարրամի տասներորդ օրը բոլոր շարասյունները դրոշներով և թմբուկների հարվածների ուղեկցությամբ շարժվում են դեպի քաղաքի կենտրոն: Այդ օրը հատուկ թատերախումբը հավատացյալների առջև ներկայացնում է կրոնական դրամա շիաների կոտորածի, իմամ Հուսեյինի և նրա մանկահասակ երեխաների սպանության մասին: Այդ թատերականացված միստերիաների («Քաւզիյե») տերսութերը կազմվել են սեֆյանների շրջանում:

Իրանում աշուրայի բոլոր օրերը համարվում են ոչ աշխատանքային: Այդ օրերին ռայիտոն և հեռուստատեսությունը համարյա շուրջօրյա հաղորդումներ են տալիս կրոնական թեմաներով: Աշուրայի օրերին շիա ուխտագնացներն այցելում են շիաների սրբազն քաղաքներ Քերբելա, Նաջաֆ, Սամարրա, Քազեմեյն (Իրաքում), Մաշհադ, Ղում (Իրան):

Աշուրայի օրերին ծերերը արգելում են երիտասարդներին ժպտալ, զիվարձանալ և այլն: Դա համարվում է մեծ մեղք: Զի թույլատրվում կատարել որեիցն ուրախ արարողություն՝ նշել ծնունդը, կատարել հարսանիք և այլն: Որոշ կրոնամոլ շիաներ այդ օրերը անց են կացնում անընդհատ աղործելով և ծովապահությամբ:

Առհասարակ նահատակության զաղափարը շատ ուժեղ է շիականության մեջ:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

XIX դարի սկզբին փիլիսոփայության պատմության վերաբերյալ իր դասախոսություններում գերմանացի հանճարեղ փիլիսոփա Հեգելը նշել է, որ «իսլամը արդեն վաղուց հեռացել է համաշխարհային պատմական ասպարեզից և կրկին վերադարձել է իր արևելյան անշարժությանը»։ Սակայն մեր ժամանակներում աշխարհում տեղի ունեցող զարգացումները ցույց տվեցին, որ այդ մեծ մտածող սխալվել էր։ XX դարի կեսերից սկսած հալամն ունեցավ բոտք վերներաց զարգացում։ Այսօր այդ կրոնը կայուն կերպով ազդում է քաղաքականության վրա, չնայած այն հանգամանքին, որ հասարակական կյանքի աշխարհիկացման համաշխարհային գործընթացը այլևս դարձել է անշրջելի։ Ներկայումս ոչ ոք չի կարող ԺՄՄ-ը, որ իսլամը դարձել է ակտիվ քաղաքական գործոն, այդ թվում նաև միջազգային հարաբերություններում։

Սակայն զլորակիզացման մեր դարաշրջանում հարց է առաջանում, արդյոք իսլամական աշխարհն ունի՞ որոշակի ռազմավարություն՝ դիմակայելու համար XXI դարի մարտահրավերներին։ Մահմեդական ժողովուրդներն արդյոք համաձայն են իսլամական աշխարհում օտար արժեքների ներդրմանը, ընդ որում այն դեպքում, եթե արևմտյան և արևելյան արժեքային համակարգերի միջև կան հակայական տարբերություններ։ Արդյոք իսլամական աշխարհը պետք է զարգանա սեփական՝ զուտ իսլամական ուղիղվ, թե՝ ընդունի զարգացման արևմտյան ձևերը։ Ի վերջո արդյոք իսլամական երկրները պետք է անջրաբեռվեն մնացած աշխարհից, թե ընթանան արևմուտքի հետ ինտեգրման ճանապարհով։ Մրանք հարցեր են, որոնք առ այսօր մահմեդական երկրների մի զգակի մասի քաղաքական վերնախավի կողմից դեռ

հստակեցված չեն: Սակայն արդեն շատերի մոտ է զնալով ամրակայլում այն զիտակցությունը, որ իսլամը, ինչպես և ցանկացած կրոնական ուսմունք, քարացած երևույթ չէ, որ աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց անհրաժեշտ է, որ հաշվի առնվեն նոր իրողությունները: Որ չպետք է կուրորեն հետևել արդեն հնացած կարծրատիպերին, այլ պետք է ձգտել փոփոխությունների, հակված լինել փոխազդումների և այլն: Որ միայն չափավորության ելակետից ընտրված իսլամական սկզբունքները կարող են ընդառաջ գնալ ժամանակի հրամայականին: Այս տեսակետի հետևորդները կողմ են զիտակցված հավատքին, ասել է թե իսլամական սկզբունքների ազատ մեկնությանը: Սակայն առայժմ դժվար է ասել, թե որքանով նշված մոտեցումը ուղենիշ կդառնա խայտարդելու մահմեդական աշխարհի համար:

Գաղտնիք չէ, որ ներկայումս բազմաթիվ արևմտյան հետազոտողների կարծիքով իսլամական աշխարհի և արևմուտքի միջև առկա է խորը առճակատում և նրանք իբր անխուսափելիորեն գնում են դեպի բախում: Հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու-Յորքում տեղի ունեցած ահաբեկչությունը շատերին բերեց այն համոզման, որ իսլամը արևմուտքի գոյության համար կարող է դառնալ ռազմավարական սպառնալիք՝ ինչպիսին Խորհրդային Միությունն էր սառը պատերազմի տարիներին: Հայտնի է, որ դեռևս XX դարի 90-ական թվականներին ամերիկացի հետազոտող Սեմյուլ Հանդինզտոնը առաջինն էր, որ առաջ էր քաշել քաղաքակրթությունների բախման տեսությունը: Ընդ որում, նա իսլամը համարում էր միջազգային հանրության անվտանգությանը սպառնացող հզոր գործոն: Նրա կարծիքով իսլամարատության հիմնական առանձնահատկություններից մեկը կինի քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների բախումը: Անկախ Հանդինզտոնի «մարզարեւությունից», այսօր լուրջ խոսակ-

ցություններ են գնում քրիստոնեության ու խլամի անհամատելի-լիության մասին: Մի բան սակայն հստակ է, որ ներկայում աշխարհում տեղի են ունենում վիթխարի չափերի հասնող երկրարադարական գործնթացներ, որոնք անմիջականորեն շոշափում են նաև խլամի տարածման հիմնական գոտիները: Թեև առայժմ վաղ է խոսել մահմեդականների «քրիստոնեական աշխարհի» արժեքներին զլրբալ դիմակայության մասին, սակայն միանգումայն ակնառու է, որ այդ դիմակայությունն ու առձկատումը հիմնականում սրվում է մահմեդական հանրության արմատական մասի շնորհիվ: Տիրապետելով հսկայական տնտեսական, ֆինանսական ու ռազմական ռեսուրսների, խլամական ծայրահեղականները մարտահրավեր են նետել Մերձավոր ու Միջին Արևելյի տարածաշրջանի մի շարք խլամական պետությունների իշխող ընտրանուն, գուցե և համաշխարհային խաղաղությանն ու կայունությանը: Ներկայում աշխարհի տարբեր մասերում արդեն ձևավորվել է աճող բազմամակարդակ անկայունության գոտի, ապակայունացնող գործնթացներում խլամիստական կազմակերպությունների, շարժումների, խմբավորումների ակտիվ ներգրավմամբ: Այդ ապակայունացնող ակտիվության դրսնորումներն են ահաբեկչական գործողությունները, մեծ ու փոքր խոռվությունները, անջատողական շարժումները, ռազմական հակամարտություններն ու նույնիսկ լայնամասշտար պատերազմները:

Ներկայում լայն տարածում գտած խլամական արմատականությունը հանդիսանում է հակառակ ռեակցիա ժամանակակից աշխարհում ընթացող աշխարհիկության գործնթացներին: Այն փորձում է վերականգնել կրոնական համակարգերի դերը հասարակությունում: Վերադարձը դեպի արմատներ, այդ թվում նաև կրոնական ակունքներ, բնորոշ է զգնաժամի մեջ գտնվող և ելքեր փնտրող հասարակություններին: Խլամական երկրներում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները, գործազրկությունն ու

անկայունությունը, տնտեսության լճացումը, և այլ գործոններ, այս բոլորը ծնունդ է տալիս արմատական խվամին, որը քարոզում է, որ կրոնը կտա մահմեղականներին մտահոգող բոլոր հարցերի պատասխանները: Արմատականները խվամական ակունքներին վերադարձ համարում են նաև ներկա աշխարհի պրոբլեմների լուծման լավագույն ուղին, կամ ճգնաժամն ու անկումը հաղթահարելու լավագույն միջոցը:

Խվամական արմատականները չեն ընդունում և ժխտում են արևմտյան արժեքային համակարգը: Նրանք գտնում են, որ արևմուտքի «անհավատները» մահմեղականներից հափշտակել են աշխարհի և իրենց կյանքի կառուցման հարցերում որոշումներ ընդունելու իրավունքը: Առկա է մի ընդհանուր օրինաշափություն՝ որտեղ արմատավորվում է ֆունդամենտալիզմը, այնտեղ ծնունդ է առնում ահարեկշությունը: Ծայրահեղական արմատական խվամը կոչ է անում տոտալ պատերազմ վարել «անհավատ» կամ «խաչակիր» արևմուտքի դեմ, նպատակ ունենալով փոխել աշխարհում գործող ուժերի հավասարակշությունը:

Այդ բոլորով հանդերձ, անկասկած չի կարելի խվամը համարել ահարեկշական կրոն, ինչպես անում են արևմուտքի մի շարք շրջաններ: Դա կարող է մեծագույն վնաս հասցնել աշխարհի ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերություններին:

Քաղաքակրթությունների երկխոսություն, ահա այն ճանապարհը, որը մարդկությանը կարող է տանել դեպի կայունություն, խաղաղություն և հուսալի ապագա: Մենք հավատում ենք, որ աշխարհի բրիստոնյա և մուսուլմանական ժողովուրդները ընդունակ են միավորելու իրենց ջանքերը այդ նպատակին հասնելու համար: Գրիչ վերցնելով, սույն աշխատության հեղինակը հենց հետապնդել է մի գերագույն նպատակ՝ կատարել թեկուզ մի չնչին բայլ այդ մեծ նպատակի ճանապարհին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ	5
ԱՐԱԲԱԿԱՆ ԹԵՐԱԿՈՎԻՆ ԻՍԼԱՄԻ ՀԱՅՐԵՆԻՔ: ՆՐԱ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ	13
ԱԶԳԱԲԱՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
ԱՐԱԲՆԵՐԻ ԿՐՈՆԸ ՄԻԼԵՎ	37
ԻՍԼԱՄԻ ԸՆԴՈՒՆՈՒԾ	45
ՄԵՋԱԿԱՐԱԿԱՆ ՄԵԶ	54
ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵՒ	67
ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԻՍԼԱՄԻ ԾԱԳՈՒՄԸ	108
ՄԱՐԳԱՐԵՒ ՀԻՋՐԱՆ	108
ՄԵՋԱԿԱՐԱԿԱՆ ՀԵՏ ԱՌԱԿԱՆԱՄԱՆ ՍՐՈՒԾ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ: ԲԱԴՐ ՀՈՎՃՈՒՄ	135
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱԿԱՆԱՄԱՐԸԸ:	145
ԱՌԱԿԱՆՈՒԾ ՄԵՋՔԱՅԻ ԵՎ ՄԱԴԻՆԱՅԻ ՄԻՋԵՎ	173
ՀԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:	197
ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՄԱՀԸ	205
ԲԱՐԵՊԱՏԸ ԽԱԼԻՖՆԵՐԸ	250
ԻՍԼԱՄԻ ՊԱՇՏԱՍՈՒՐԸ, ԴԱՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԵՍԸ (ԾԻՍԱԿԱՐԳԸ)	281
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՈՒՄՍԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՀԱՎԱՏ ԱՌ ԱԼԱՀԸ: ԻՍԼԱՄԻ ՄԵԶ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ, ՀՈԳՈՒ ԱՆՍԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱԽՏԻ ՈՒ ԴԺՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ	297
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՄՈՒՐՐ ԳԻՐՔԸ՝ ՂՈՒՐԱՆԸ	305
ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ: ԿԻՆԸ ԻՍԼԱՄԻ ՄԵԶ	352

ԻՍԼԱՄԻ ՄԵԶ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄՆԵՐԸ: ՏԱՐԲԵՐ	
ՀՈՍԱՆՔՆԵՐԻ, ՈՒՂՂՈԽԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՂԱՆԴՆԵՐԻ	
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ.....	359
ԽԱՐԻՋՆԵՐ ԵՎ ԽԱՐԻՋԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	359
ՇԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՇԻԽՈՒ)	368
ՍՈՒՖԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	379
ՀԱՎԵԼՎԱԾ. ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԸ	
(ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ).....	388
ԻՍԼԱՄԻ ՄԵԶ ԸՆԴՈՒՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԵՐԸ	392
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.....	398

ՎԱՀԱՆ ԲԱՅՐՈՒՐԴՅԱՆ
ԻՍԼԱՄ

Համակարգչային շարվածքն ու ձևավորումը՝ Ն. Բարթիկյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 18.01.2016 թ.
Տպարանակը՝ 120 օրինակ:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА

INSTITUTE OF ORIENTAL STUDIES
INSTITUTE OF HISTORY OF NAS OF NAS RA

(4000 ր.)

ԳԱԱ Դիմեարար Գիտ. Գրադ.



FL0397569

A 101393